

Հարի Բուկուր-Մարկու

Ֆիլիպ Ֆլուրի

Տղող Տագարև (խմբ.)

**Մենեջմենթը պաշտպանության ոլորտում.**

**Անդամություն**

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնվի կենտրոնը հիմնադրվել է 2000 թ.: Ներկայումս նրան անդամակցում է 58 պետություն, ներառյալ՝ Հայաստանը, որը կազմակերպության խորհրդին միացել է 2002 թ. նոյեմբերի 14-ին:

**Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության  
Ժնևի կենտրոն**

(ԶՈՒԺՎ)  
[www.dcaf.ch](http://www.dcaf.ch)

**«Անվտանգության և պաշտպանության  
մեջմենք» մատենաշար**

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնը անվտանգության ոլորտի կառավարման և բարեփոխման տիրույթներում գործող առաջատար կազմակերպություններից մեկն է աշխարհում: ԶՈՒԺՎ կենտրոնը խորհրդատվական և գործնական աջակցություն է տրամադրում՝ ի նպաստ անվտանգության ոլորտի արդյունավետ ժողովրդավարական կառավարման:

Անվտանգության և պաշտպանության ոլորտներում մեջմենքին առնչվող հրապարակումների շարքը ներկայացնում է անվտանգության և պաշտպանության ռազմավարության ձևավորման և իրականացման սկզբունքներն ու դիրքորոշումները, հայեցակարգային հետազոտության արդյունքները, անդրադառնում է նաև անվտանգության համակարգի կազմակերպությունների, կազմակերպական գործընթացների և ռեսուրսների փոխակերպման և կառավարման ոլորտներում կուտակված լավագույն փորձի օրինակներին:

Այն նախատեսված է, ի թիվս այլոց, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների, անվտանգության և պաշտպանական համակարգերի մասնագետների, ինչպես նաև անվտանգության և պաշտպանության ինստիտուտներն ավելի բարիանցիկ, հաշվետու, արդյունավետ և գործուն դարձնելու նպատակին ծառայող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար:

Գլխավոր խմբագիր՝ ԶՈՒԺՎ լիիրավ ավագ գլուխաստող դ-ր Տողոր Տագարի:

**ՄԵՆԵԶՄԵՆԹԸ  
ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ՆԵՐԱԾՈՒՅԹ**

Հարի Բուկուր-Մարկու  
Ֆիլիպ Ֆլուրի  
Տողոր Տագարև (իսմբ.)

Հարի Բուկուր-Մարկո, Ֆիլիպ Ֆլուրի, Տողոր Տագարև (խմբ.), *Մենեջմենտը-բը պաշտպանության ոլորտում. ներածություն* (Ժնև, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոն, 2009 թ.):  
**«Անվտանգության և պաշտպանության մենեջմենթ» մատենաշար, թիվ 1**

© Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոն, 2009 թ.

Գործադիր հրատարակիչ՝ Procon Ltd., <[www.procon.bg](http://www.procon.bg)>  
Կազմի ձևավորումը՝ Խրիստո Բիզնաշկիի

ISBN 978-92-9222-089-1

ISBN 978-954-90121-9-4

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	7
Ֆիլիպ Ֆլուրի	
Ներածություն .....	8
Հարի Բուկուր-Մարկու	
Պետական կառավարում, մենեջմենթ, հրամանատարություն, առաջնորդություն. պաշտպանության մենեջմենթի ուսումնասիրությունների հենքի ստեղծում .....	23
Վալերի Ռատչև	
Պաշտպանության պլանավորում. պաշտպանության մենեջմենթի առանցքային գործընթացներ .....	63
Տողոր Տագարն	
Զինված ուժերի ծրագրահեն զարգացման ներածություն .....	99
Տողոր Տագարն	
Ֆինանսների կառավարում .....	120
Գերդ Ֆրորաք	
Մարդուժի մենեջմենթ .....	163
Ջեր Թրեյնիք	
Զեռքբերման մենեջմենթ .....	206
Էնթոնի Լորենս	
Թափանցիկությունը պաշտպանության մենեջմենթում. ....	250
Ուիլեմ Ֆ. վան Էքելեն	
Հեղինակների մասին .....	277

## **Գ-ծապատկերների ցանկ**

Առաջնորդության և մենեջմենթի միջև հիմնական տարբերությունները.....	50
Պաշտպանական քաղաքականության առնչվող որոշումների ընդունման համակարգային մոտեցում.....	57
Պաշտպանության մենեջմենթի ներքին և արտաքին համատեքստ.....	61
Պաշտպանության պլանավորման հիմնական քաղաքիչներ.....	67
Պլանավորման ժամկետների, ծրագրերի և դրանց իրականացման փոխկազմակեցվածությունը.....	70
«Զինված ուժերի ապագա կառուցվածքի» մոդելի՝ որպես զինված ուժերի զարգացման նպատակի փոփոխում.....	72
Պաշտպանության նպատակների սահմանում.....	76
Կարողությունները որպես պաշտպանական քաղաքականության «միջոցներ».....	83
Նպատակների և անհրաժեշտ կարողությունների կապակցում պլանավորման սցենարների միջոցով.....	84
Կարողությունների կապակցում կոնկրետ խնդիրների հետ.....	87
Զինուժի կիրառման այլընտրանքային ծրագրերի ստեղծում և գնահատում.....	89
Ուազմավարական գարգացման մոդելն ըստ Բարտլեթի.....	90
Ուժերի կառուցվածքը, ոխսերի և բյուջեի մակարդակները.....	92
Ոխսերի կառավարման հիմնական մոդել.....	94
Զինուժի ապագա կառուցվածքին անցնելու հետ կապված ոխսերի և կարողությունների դինամիկան.....	95
Պաշտպանական ծրագրի նպատակադրումը.....	107
ԱՄՆ բանակի վերակազմավորումն ըստ 2004-2009 թթ. ծրագրի.....	113
Պաշտպանական ծրագրը՝ մրցակցող պահանջարկների զուման միջոց.....	114
Պաշտպանության ռեսուրսների կառավարում.....	123
«Հանրային նոր էկոնոմիկան» և դրա տարրերի փոխկազմակեցվածությունը.....	132
Ծախսերի հաշվառում և տեղեկատվական հոսքեր.....	143
Տվյալների փոխանցման օրինակ.....	145
Ուազմական մարդութիւն մենեջմենթի սխեմա.....	165
Մարդի ենթադրական պատկեր.....	179
Կայուն հավասարակշռության վիճակի ենթադրական բաշխումները.....	180

## **Աղյուսակների ցանկ**

Մենեջմենթի դերն ու նշանակությունը պաշտպանության համակարգի տարբեր կազմակերպական մակարդակներում .....	13
--	----

# ՆԱԽԱԲԱՆ

## Ֆիլիպ Ֆլուրի

ԶՈՒԺՎ փոխտնօրեն

Անվտանգության ոլորտի բարեփոխումների մշտական կարևորումն առաջ է բերել նաև պաշտպանության մենեջմենթի մատչելի ներածության պահանջարկ:

Հրապարակումների շարքի սույն հատորը ԶՈՒԺՎ-ի և Էստոնիայի պաշտպանության նախարարության միջև ծավալված համագործակցության արգասիքն է: Կուզենայի շնորհակալություն հայտնել ԶՈՒԺՎ լիիրավ ավագ գիտաշխատողներ դ-ր Բուկուր-Մարկուին և դ-ր Տագարլին՝ այս գեղակազմ հատորյակի խմբագրմանն առնչվող մանրակրկիտ աշխատանքի համար, ինչպես նաև մասնագիտական լրջագույն փորձառության արգասիք հանդիսացող հոդվածների բոլոր հեղինակներին՝ նրանց տրամադրած ժամանակի և ջանքերի համար:

Կուզենայի շնորհակալություն հայտնել նաև ներկայումս Էստոնիայի արտաքին գործերի նախարարությունում աշխատող պ-ն Լաուրի Լինդստրեմին, որի աջակցությամբ հնարավոր եղավ ֆինանսական միջոցներ հայթայթել սույն գրքի հրատարակման համար:

Ժնև, հունվար, 2009 թ.

# Ներածություն

## Հարի Բուկուր-Մարկու

Պաշտպանության ոլորտի մենեջմենթը (այսուհետ՝ պաշտպանության մենեջմենթ) պատմականորեն ոչ այնքան վաղուց է երևան եկել որպես պաշտպանության բնագավառում հետաքրքրություն ներկայացնող նյութ: Առավելագույնը իհնոց տասնամյակ է անցել այն ժամանակից, երբ մի շարք արևմտյան պետություններում սկսեց շրջանառվել պաշտպանական համակարգի կառավարման (մենեջմենթի) հասկացությունը լուծելու համար այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ֆինանսական կամ մարդկային ռեսուրսների տեղաբաշխումը, համբնդղորկուն մոտեցմանը ռազմավարական կամ գործառնական հիմնախնդիրների լուծումը կամ բիզնեսին հատուկ գործիքների օգտագործումը պաշտպանական համակարգի դեկավարման համար: Նման ձեռնարկումը պահանջում է քարձրագույն որակ պաշտպանության ինստիտուտի բոլոր մակարդակներում և նրա յուրաքանչյուր ստորաբաժնման շրջանակում: Դրան հասնելու երաշխավորված եղանակներից մեկը պլանավորման, կազմակերպման, դեկավարման և վերահսկման կառավարչական գործառույթների կիրառումն է պաշտպանական համակարգի կազմակերպության այն սեզմենտների և միջոցառումների նկատմամբ, որոնք կարող են նպաստել զինված ուժերի գործառնական կատարողական առավելագույնի հասցնելուն:

Կառավարչական լուծումներ պահանջող հիմնախնդիրները համանաման են եվլուսատլանտյան ողջ տարածքում, անկախ առանձին վերցրած պետության կարգավիճակից, լինի դա Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) անդամ թե գործընկեր: Այդ խնդիրներից մի քանիսը տասնամյակների պատմություն ունեն, սակայն օրախնդիր են դարձել մոտավորապես վերջին տասնինության ավագանությունը: Դրանց թվում են Սառը պատերազմի ավարտից հետո «խաղաղության դիվիզնենդների» արդյունքում առաջացած զինծառայողների և պաշտպանության ոլորտի ծախսերի կրճատումները, ինչպես նաև ավելի շարժունակ, սեփական երկրի ռազմակայաններից մեծ հեռավորության վրա գործարկվող, հետևաբար ավելի երկարաժամկետ աջակցություն պահանջող զինուժի անհրաժեշտության մեծացումը:

Այս և նմանատիպ այլ խնդիրների նկատմամբ կառավարչական նոտեցումների կիրառումը քննելիս հարկ է, որ դրանք հանդես գան պաշտպանության ոլորտի կարգավիճակի, նաև ընդհանուրապես պաշտպանական համակարգի գործունեության արդյունքի և մասնավորապես պաշտպանության ուժերի հետ կապված հանրային շահերի ընդհանուր համատեքստում։ Սա հույժ կարևոր նախապայման է, քանզի միանգամայն անհավանական է, որ հանրային միջոցների հաշվին ֆինանսավորվող ցանկացած կազմակերպություն, այդ թվում պաշտպանական համակարգի կառույցները, երբևէ արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլեր ծեռամբկեն սեփական նախաձեռնությամբ, եթե չինեն խթանիչ գործոնները կամ համապատասխան արտաքին ճնշումը։ Այս դիտարկումն ընդունելու պարագայում պաշտպանության մենեջմենթի նկատմամբ ցանկացած տեսական դիրքորոշում պետք է խարսխված լինի պաշտպանության և զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության հենքի վրա։

## **Պաշտպանության մենեջմենթի սահմանումը**

«Պաշտպանության մենեջմենթի»՝ համընդհանուր հավանության արժանացած սահմանում չկա. այն պարզապես արտացոլում է հետևյալ գաղափարը՝ պաշտպանական կազմակերպությունները պետք է ապահովեն պաշտպանական քաղաքականության իրագործումը և այդ ընթացքում մշակեն պատշաճ ու կայուն պլանավորման մեխանիզմներ, ապահովման համակարգեր և ենթակառուցվածք։

Ավելի քան կես դար առաջ պաշտպանությունն ընկալվում էր որպես ժողովրդի անունից հանդես եկող ժողովրդավարական իշխանության ստեղծած հանրօգուտ արտադրամք։ Մոտավորապես նոյն ժամանակ գիտական հանրությունն այն եղահանգման եկավ, որ պետական իշխանություններն իրենց խոկ բնույթի բերումով հանրօգուտ արտադրանքի անարդյունավետ ստեղծողներ են։ Ապա ծագեց հետևյալ հարցը՝ ինչպես՞ կարող է պետական իշխանությունն ավելի արդյունավետ պաշտպանություն ապահովել, և պատասխանը, ի մասնավորի, այսպիսին էր պաշտպանության համակարգում կառավարչական սկզբունքների ներմուծմամբ։ Կառավարումը (այսուհետ՝ մենեջմենթ), իր հերթին, կարող է ներկայացվել որպես տվյալ կազմակերպության գործունեությունն ուղղորդող գիտություն կամ կուռ համակարգ, որի միջոցով կազմակերպությունը գործուն և արդյունավետ կերպով հետամուտ է լինում որոշակի պայմաններում իր նպատակների իրագործմանը պլանավորման, դեկավարման և վերահսկողության գործառույթների պատշաճ իրականացմամբ։

Պաշտպանական համակարգի արդյունացումը մեկ այլ կարևորագույն մարտահրավեր է, որն առնվազն մեկ տասնամյակ շարունակում է ծառացած մնալ եվրաատլանտյան համայնքի կառավարությունների առջև։ Որոշ պետությունների ուշադրության կենտրոնում է նրանց զինուժի վերակազմավորումը՝ 21-րդ դարում անվտանգության առնչվող նոր մարտահրա-

Վերներին ավելի արդյունավետ արձագանքելու նպատակով, մինչդեռ մյուս ներք պաշտպանության ողջ բնագավառի վերափոխման առավել հավակնու ծրագրեր են մշակում՝ նպատակ ունենալով ստեղծելու պաշտպանական նոր ինստիտուտներ. դա հատկապես վերաբերում է այն պետություններին, որոնք համեմատաբար վերջերս են անցում կատարել կոնունիատականից ժողովրդավարական կարգերի կամ դեռևս այդ անցման եզրափակիչ փուլերում են գտնվում: Այս բոլոր պետությունները ուազմավարական արդյունքներ են ակնկալում անվտանգության և պաշտպանության ոլորտի բարեփոխումներից իրավամբ համարելով, որ նշված բարեփոխումների հաջողությունը կնպաստի իրենց ինտեգրմանը եվրաատլանտյան համայնքում և իրենց ժողովուրդների անվտանգության ու բարօրության ամրապնդմանը:

Նշված ուազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է սահմանափակ պետական միջոցների առավել ճիշտ բաշխում, այդ ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում, ինչպես նաև կառավարության ծրագրերի, այդ բվում՝ պաշտպանությանն առնչվող ծրագրերի ավելի տեսանելի և վերահսկելի արդյունք: Գնալով մեծանում է այն պետությունների թիվը, որտեղ պետական վարչարարությունն աստիճանաբար փոխարինում է հանրության անունից իրականացվող բավականին կարծրացած, մեծապես բյուրկրատական աշխատառնը հանրային հատվածի շատ ավելի ճկուն և հաշվետու մենեջմենթով: Այս դեպքում հարց է ծագում, թե ինչպես կարող են կառավարություններն ավելի արդյունավետ «պաշտպանություն ստեղծել»: Պատասխանը մասամբ հետևյալն է՝ հարկ է առաջադիմ կառավարչական գործելակերպը պաշտպանական համակարգ ներմուծել գործարարության ոլորտից, որ ակնկալվող արդյունքների իրականացումը նրանցային միջավայրում կարևորագույն նշանակություն ունի ցանկացած կազմակերպության գոյատևման համար:

Գործընկերության բնագավառում ՆԱՏՕ-ԵԱԳԻ<sup>1</sup>-ի «Գործընկերության գործողությունների ծրագիր պաշտպանական ինստիտուտների կայացման ուղղությամբ» (Գ.Գ.-ՊԻԿ) համագործակցության նախաձեռնությունը կարող է լավ օրինակ ծառայել այն առումով, թե ինչպես կարելի է զուգորդել առանձին պետության պաշտպանական համակարգի կառույցներն առավել արդյունավետ դարձնելուն միտված բարեփոխումների մղումները նման ծրագրին աջակցելու իմաստով միջազգային հանրության հետաքրքրվածության հետ: Այս նախաձեռնության մի մասն ուղղակիրքն վերաբերում է պաշտպանության մենեջմենթի հասկացությանը: Գ.Գ.-ՊԻԿ փաստաթղթում նշված նպատակներից մեկը՝ հիմքերորդը, պաշտպանական ինստիտուտների կառուցման գործին հետամուտ պետություններին կոչ է անում «մշակել արդյունավետ և բարսնցիկ միջոցներ՝ կատարելագործելու պաշտպանության նախարա-

<sup>1</sup> ՆԱՏՕ-ԵԱԳԻ՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն-Եվրաատլանտյան գործընկերության խորհուրդ: Այս Խորհրդում ներկայացված են ինչպես Պայմանագրի անդամները, այնպես էլ գործընկերները:

բությունների, պաշտպանության խնդիրների համար պատասխանատու գործակալությունների և համապատասխան ուժային կառույցների մեջմեջը, այդ թվում նաև՝ միջզերատեսչական համագործակցությունը խթանող ընթացակարգեր», իսկ իններորդ նպատակն անդրադառնում է պաշտպանության ոլորտի ծախսերի կառավարմանը»<sup>2</sup>:

Մենքմեջի իմաստով պլանավորումը տարբերվում է ռազմական գործառնությունների (օպերացիաների) պլանավորումից, այդուհանդերձ այն ևս ուղղակիորեն ներգործում է զինուժի զարգացման կամ հիմնական ռազմական տեխնիկայի զնումների վրա: Կառավարչական պլանավորումը նախատեսում է թե՛ համապատասխան ռազմավարությամբ հաստատված հիմնանապատակների կարևորում և թե՛ այդ նպատակներին հասնելու ճկունություն: Բացի այդ, մենքմեջի իմաստով կազմակերպչական աշխատանքը հետաձուտ է կարծրացած կառույցներին ճկունություն հաղորդելուն՝ այդ կառույցների վերակազմավորման փոխարեն դրանցում տեղի ունեցող աշխատանքային գործընթացներն ըստ պատշաճի կազմակերպելու միջոցով: Իր հերթին, դեկավարումը նշանակում է ինչպես պատասխանատվության ստանձնում, այնպես էլ որոշումների ընդունման գործընթացի տարբերի պատվիրակում, ինչը տարբերվում է զինված ուժերում վաղուց հաստատված ենթակայության շղայից: Հսկողության հիմնական իմաստը հանգեցվում է զարգացումների վերահսկմանը, նաև միջամտությանը, երբ առաջանում է աշխատակազմին դեպի ընտրված նպատակների տիրույթ վերադարձնելու անհրաժեշտություն:

Սյուս կողմից՝ պաշտպանության մենքմեջը չի փոխարինում և չի էլ կարող փոխարինել պաշտպանական կազմակերպության ռազմական գործողությունների պլանավորման և անցկացման կամ մարտական պատրաստականության ապահովման յորահատուկ գործընթացները: Սակայն պաշտպանության մենքմեջը ի գորու է պաշտպանական կազմակերպություններում աշխատող մարդկանց միավորել նրանց առջև դրված խնդիրների լուծմանն ուղղված պատրաստության շրջանակում՝ պաշտպանության նպատակների և առաքելության առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տեխնիկայի և աջակցության ապահովմամբ:

## **Ո՞րն է պաշտպանության մենքմեջի տեղը պաշտպանության ոլորտում**

Մենքմեջը պաշտպանության ոլորտում՝ որպես ինստիտուցիոնալ գործընթաց, գտնվում է պաշտպանական քաղաքականության ձևավորման և զինված ուժերի փաստացի օպերատիվ կառավարման միջակայքում: Այն կոչված է ներառելու գործունեության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ պաշտ-

<sup>2</sup> ՆԱՏՕ-ի հիմքական տեքստեր՝ «Գործընկերության գործողությունների ծրագիր պաշտպանական ինստիտուտների կայացման ուղղությամբ» (ԳԳԾ-ՊԲՎ) (Բրյուսել, 7 հունիսի, 2004 թ.), տե՛ս ս հետևյալ ինտերնետային հասցեում՝ [www.nato.int/docu/basictxt/b040607e.htm](http://www.nato.int/docu/basictxt/b040607e.htm).

պանական ռեսուրսների կառավարումը, մարդկային ռեսուրսների կառավարումը, ձեռքբերումների կառավարումը: Ընդ որում՝ պաշտպանական քաղաքանության իրականացման ընթացքում հավանական է, որ այդ ընթացքին ներհատուկ անորոշությունը պահանջի ավելի մեծ ճկունություն և համապատասխան որոշումների կայացում, կարող են ծառանալ նաև պատշաճ վերլուծություն և համարժեք լուծումներ պահանջող անսպասելի խնդիրներ:

Ժամանակի ընթացքում տարբեր պետություններում ներմուծվել և փորձարկվել են կառավարչական համակարգեր պլանավորման, արդյունավետության և հաշվետվողականության սկզբունքներին դրանց համապատասխանությունը պարզելու իմաստով: Մասնավորապես, հատուկ հանրային հատվածի համար մշակված լինելով կամ փոխառվելով գործարար ոլորտի պրակտիկայից, *Պրաճավորման, ծրագրավորման, բյուջետավորման համակարգը* (*ՊՃՎՀ*), *Գործունեության կառավարման համակարգը* (*ԳԿՎՀ*) կամ *Որակի համընդհանուր կառավարումը* (*ՈՀԿՎ*) թե՛ հաջողությունների և թե՛ ձախողումների փորձ են ունեցել, և պաշտպանության մենեջմենթին վերաբերող ցանկացած աշխատության մեջ ինաստ ունի քննադատական վերլուծության ենթարկել դրանք: Հարկ է հատուկ շեշտել, որ ընդհանրապես պաշտպանության մենեջմենթի նկատմամբ և ոչ մի տեսական մոտեցում չի նախատեսում մենեջմենթի որևէ կրնկրեալ համակարգ կամ մենեջմենթի փիլիսոփայություն: Իր պաշտպանական համակարգի բարեփոխման անհրաժեշտությունն իսկապես կարևորող ցանկացած պետության համար առանցքային նշանակություն ունի այն հանգանանքի ընտումը, որ մենեջմենթի մշակույթը տվյալ ոլորտ ներմուծելը թերևս ավելի կարևոր է, քան կառավարչական այն գործիքները, որոնք տվյալ պետությունը նախատեսում է օգտագործել:

Թե՛ տեսության և թե՛ գործնական փորձառության հիման վրա կարելի է եզրակացնել, որ գոյություն ունեն սուկ երկու կառավարչական մոտեցումներ, որոնք փոխբացառող չեն: Մեկը կարելի է նկարագրել որպես հիմնախնդիրների վերհանում և դրանց լուծումների մշակում, իսկ մյուսը կապված է աշխատանքներու ավելի լավ կատարելուն ուղղված լուծումների որոնման հետ:

Պաշտպանության մենեջմենթը հստակություն է մտցնում գործունեության այն ոլորտներում, որոնք աչքի են ընկնում ընտրված նպատակներին հասնելու ուղղությունում կամ ծառացող խնդիրների վերհանման ու լուծման հետ կապված նշանակալի անորոշությամբ՝ թույլ տալով, որ մյուս ոլորտները շարունակեն իրենց քննականուն գործառությունները: Աղյուսակ 1-ը ներկայացնում է պաշտպանության նախարարություններում մենեջմենթի տարրեր մակարդակները՝ համեմատելով դրանք կազմակերպչական գործունեության մեջ կարևոր համարվող երկու այլ ոլորտների՝ քաղաքականության ձևակորման և պահանավորման հետ:

Գոյություն ունի պաշտպանության ռազմավարական մենեջմենթը, որը հենց այն տիրույթն է, որը վերհանվում են ռազմավարական հիմնախնդիրները, և վերլուծվում, հաստատվում ու իրագործվում են ռազմավարական լուծում-

Աերը: Կյանքը լի է նման իմանախնդիրների օրինակներով: Ուազմավարության իմաստով առավել կարևորները, որպես կանոն, կապված են «որքա՞նն է բավարար համարվում» հարցի տարրեր ասպեկտների վերլուծության հետ: Պաշտպանության մենեջմենթն ի գորու է առավել հետևողական լուծումներ առաջարկելու «գե՞նը, թե՞ կարագ» կարգի երկընտրանքներում (երբ խոսքը հանրային մյուս բարիքների համեմատ պաշտպանական ծախսերի նպատակահարմարության, ինչպես նաև պետական միջոցների օպտիմալ տեղաբաշխման մասին է), կամ եթե քննարկվում են պաշտպանական հզորության առումով պետության ինքնարավորյունը այլ գործընկերների կամ դաշնակիցների հետ համատեղ ստանձնած պարտավորությունների դեպքում, և ինքնիշխանության ընդունելի համարվող պատվիրակումը:

Կա նաև գործառնական մենեջմենթ, որն անդրադառնում է պաշտպանության առնչվող կոնկրետ գործունեության հարցերին, հատկապես զինված ուժերի մակարդակում, բայց նաև ընդհանուր հարցերին՝ կապված, օրինակ, աշխատումի կամ լոգիստիկայի հետ: Եվ գոյություն ունի, իհարկե, ընթացիկ մակարդակում պաշտպանության մենեջմենթը, որը գործ ունի պաշտպանական համակարգի ցանկացած սպայական կամ զինվորական միավորում առօրեական խնդիրների և դրանց լուծումների հետ:

Ակնկալվում է, որ մենեջմենթի նշված տեսակները կտարբերակվեն ըստ դրանց մակարդակների, առնվազն մեխանիզմների և ընթացակարգերի իմաստով, մինչդեռ կառավարչական գործիքները կմնան նույնը (դրանք մշակված են եղել անկախ դրանց կիրառման մակարդակից): Գործնականում, այս մակարդակներն ավելի շուտ կարելի է բնութագրել ոչ թե կիրառվող մեխանիզմներով, այլ կառավարչական գործառույթների բնույթով:

## Աղյուսակ 1. Մենեջմենթի դերն ու նշանակությունը պաշտպանության համակարգի տարրեր կազմակերպական մակարդակներում

Մակարդակ	Քաղաքականություն	Պլանավորում	Մենեջմենթ
Ուազմավարական	Ազգային անվտանգության ռազմավարություն	Պաշտպանության պլանավորման ուղենիշ	<ul style="list-style-type: none"> <li>• ինչպես իրազործելու ազատ պահպանությունն ու ծրագրերը</li> </ul>
	Ուազմավարական պաշտպանության հայեցակարգ	Ուազմավարական կարողությունների ծրագրի	<ul style="list-style-type: none"> <li>• վերհանել և լուծել ռազմավարական խնդիրները</li> </ul>

Գործառնական	Ուղղմական ստրատեգիա Գործադիր քաղաքականություն (այսինքն՝ աշխատական ստուգային, գնումների, հանրային կապեր) Համատեղ ծառայության (ցանաքային, օդային, ծովային ուժերի) հայեցակարգեր	Ուղղմական ստրատեգիա Կարողությունների զարգացման ծրագրեր Գնումների ծրագրեր Ուսուցողական ծրագրեր	• ինչպես իրագործել գործառնական քաղաքականությունը, ուղղմավարությունն ու հայեցակարգերը • վերհանել և լուծել գործառնական խնդիրները
Ընթացիկ	Լիազորությունների սահմանում Կազմակերպության առաքելության ձևակերպում Աշխատանքային ստանդարտ ընթացակարգեր (ԱՍՀ) Պաշտոնի նկարագրեր	Աշխատանքի պլանավորում Վարժանքների պլանավորում Դաշտային օպերացիաների պլանավորում	• ինչպես իրագործել կազմակերպությունն ու ընթացիկ ծրագրերը • վերհանել և լուծել ընթացիկ խնդիրները

## Պաշտպանության արդյունավետ մեջմնաբին ներկայացվող կազմակերպչական պահանջներ

Բոլոր այն համակարգերում, որտեղ պաշտպանության մեջմնաբինը ձևավորվել է որպես պաշտպանական ոլորտի արդյունավետության ապահովման հայեցակարգային և գործնական մոտեցում, այն զուգորդվել է վիրխարի ակնկալիքների հետ, սակայն և լուրջ մտահոգությունների տեղիք է տվել: Տարբեր պետությունների փորձը ցույց է տալիս, որ մի շարք փայլուն պաշտպանական նախաձեռնություններ իրենց իրականացումից տարիներ անց անհաջողության են մատնվել: Ընդհանուր առմամբ, պաշտպանության առանցքային ոլորտներում արդյունավետության ցուցանիշներն այժմ էլ միատեսակ չեն: Ժամանակ առ ժամանակ պետական իշխանություններն ստիպված են եղել վերադառնալ նախնական սկզբունքներին և նոր մոտեցումներ մշակել պաշտպանության ոլորտի պետական ծախսերի պատշաճ արդյունավետությունն ապահովելու համար: Նրանք ստիպված են նաև նոր գործողություններ ներառել իրենց օրակարգերում՝ հետամուտ լինելով վերափոխումների առաջիկա ուղղությունների, ինչպես նաև պաշտպանության բնագավառում կիրառվելիք

մենեղմների հիմնարար հասկացությունների առավելագույն հատակեցմանը:

Ինչպես արդյունավետության ապահովմանը միտված լինելու, այնպես էլ հիմնականում խնդիրների լուծման կողմնորոշմամբ գործելու դեպքում պաշտպանության մենեղմնենքը որոշակի պայմաններ է առաջադրում որոշումների կայացման և իրականացման առկա համակարգերի համար: Այդ պայմանների բվում կարելի է նշել վերահսկողությունը, հաշվետվողականությունը, ներառականությունը, օրինականությունը, բարոյականությունը և շատ ավելին: Նման պայմանների բացակայության բոլոր դեպքերում հարկ է համապատասխան քայլեր ճեղնարկել որանց ստեղծման ուղղությամբ: Այստեղ մի երկրներանք է առաջանում: պատշաճ պայմանների ստեղծումը պաշտպանության մենեղմնենքի կառուցվածքի մի մա՞սն է, թե՝ այն մեկ այլ տիրույթի բաղադրիչ է, օրինակ պաշտպանության ինստիտուցիոնալացման կամ պաշտպանության պլանավորման: Պատասխանն ակնհայտ է պատշաճ պայմանների ստեղծումն իր բնույթով մենեղմնենքին չի առնչվում, քանի որ մենեղմնենքն ավելի շատ քաղաքականության իրականացման և լուծումների որոնման հետ գործ ունի, այլ ոչ պահանջների սահմանման:

Բուն պաշտպանական ոլորտի մակարդակում հարկ է նկատի ունենալ մի շաբթ կազմակերպչական պահանջներ, որպեսզի հնարավոր լինի բավարար իիմքեր ստեղծել կառավարչական գործիքների և պրակտիկայի ներդրմանն ուղղված ցանկացած նախաձեռնության հաջողության համար: Այդ կարգի կառավարչական գործիքների և պրակտիկայի մշակման և ներդրման պարագայում հաջողության հասնելու համար պաշտպանական գերատեսչությունները պետք է բավարարեն երկու պայմաններ պետք է պետական իշխանության ընդհանուր կառավարչական համակարգի մաս կազմեն և ապահովեն պաշտպանական համակարգի աշխատակազմից առանձնացված կազմակերպական կառուցվածքը: Այլ կերպ ասած պաշտպանության նախարարությունը պետք է որդեգրի կառավարչական նույն այն փիլիսոփայությունը, որն ընդունված է ազգային կառավարության կողմից, անգամ այն դեպքում, եթե պաշտպանության ոլորտն առանձնահատուկ է դարձնում այս նախարարությունը կառավարության բոլոր մյուս գերատեսչությունների համեմատ: Սա կարելու է այն իմաստով, որ անհրաժեշտ է պատշաճ երկխոսություն ապահովել կառավարության բոլոր մակարդակներում քաղաքականություն մշակողների հետ և խթանել ուսումնավարական ծրագրերի իրականացման համար պահանջվող միջոցների ներհոսքը: Եվրաատլանտյան համայնքին անդրադառնալով՝ կարող ենք այնպիսի կառավարությունների օրինակներ տեսնել, որոնք իրենց պաշտպանական գերատեսչություններին հատուկ ուշադրություն են դարձրել մենեղմնենքի տարրեր տեսակների ներմուծման ընթացքում, օրինակ՝ ծրագրերի և երկարաժամկետ պլանավորման հիման վրա միջոցների հատկացումների ժամանակ:

- Այդուհանդերձ, կան նաև այնպիսի կառավարություններ, որոնք ձգտել են իրենց երկրի պաշտպանության նախարարությունը գերծ պահելու

պետական կառավարման ոլորտում մենեջմենթի նոր մոտեցումների ներդրման փուլին բնորոշ փորձություններից: Անկախ ներդրման փուլերից՝ բոլոր այս նախարարությունները, ի վերջո, անհրաժեշտաբար պետք է ընդունեն կառավարչական նույն փիլիսոփայությունը: Սա նշանակում է կառավարչական գործունեության մեջ ընդգրկված ողջ աշխատակազմի պատրաստություն, կառավարչական սկզբունքների և ընթացակարգերի ինստիտուցիոնալացում, ինչպես նաև կազմակերպչական փորձի ձեռքբերում պլանավորման առնվազն մեկ շրջափուլի ընթացքում նախքան մենեջմենթի համակարգը նեղողված համարելը:

Ինչ վերաբերում է քաղաքացիական և զինվորական դեկավարությունների և նրանց աշխատակազմերի սահմանազատմանը, ապա այս պայմանը մեծապես կարևոր է, եթե նկատի ունենամք, որ մենեջմենթը կազմակերպչական խթան է, այլ ոչ զինուժի օպերատիվ կառավարման արդեն իսկ հաստատված ընթացակարգերին փոխարինող միջոց: Այսինքն՝ մենեջմենթը կլինի քաղաքացիական դեկավարների առաջնային պարտականությունը, իսկ զինվորական հրամանատարությունը կպահպանի իր ընթացիկ գործառույթները և չի վերածվի կառավարիչների (մենեջերների): Նշված տարանջատումն այստեղ ներկայացվում է զուտ տեսական նպատակներով: Իրականում կարող ենք նկատել, որ պաշտպանության մենեջմենթում քաղաքացիական և զինվորական դեկավարությունների սահմանազիջը հստակ չէ, հատկապես ռազմավարության նակարդակում: Եթե պաշտպանության մենեջմենթի առանցքային խնդիրը լինի պաշտպանական կազմակերպության ընտրված քաղաքականության հիմնանպատակների և խնդիրների իրականացման արդյունավետությունն ապահովող ջանքերի խթանումը, ապա ռազմական օպերացիաների կազմակերպումից զատ բոլոր մյուս հարցերը կհայտնվեին պաշտպանության մենեջմենթի պատասխանատվության տիրույթում, անկախ նրանից՝ քաղաքացիական են, թե զինվորական:

Պաշտպանության մենեջմենթի ինստիտուցիոնալացումը կրում է յուրաքանչյոր պետության կամ պաշտպանության ոլորտի առանձնահատկության տեղական դրոշմը: Որոշ պետություններ նախընտրում են պաշտպանության մենեջմենթի վարչությունների կամ խորհուրդների ձևաչափը սեփական առաքելությունների և սահմանված լիազորությունների շրջանակով, մինչդեռ կան պետություններ, որոնք ինստիտուցիոնալ տարանջատում չեն սահմանում կազմակերպական կառուցվածքների և մենեջմենթի առջև դրված խնդիրների միջև<sup>3</sup>: Այս բաժնում մենք անդրադառնում ենք միայն ինստիտուցիոնալաց-

<sup>3</sup> Մի քանի օրինակ. Միացյալ Թագավորությունում գործում է Պաշտպանության խորհուրդը, որը նախագահում է Պաշտպանության պետական քարտուղարը, և որի կազմում ընդգրկված են բարձրագույն քաղաքացիական և զինվորական պաշտոններ զբաղեցնող անձինք: Խորհուրդը ծառայում է որպես պաշտպանության հարցերով որոշումներ ընդունող գերագույն մարմն: Այստեղ պաշտպանության մենեջմենթի պատասխանատվությունը դրված է Պաշտպանության մենեջմենթի վարչության

ման պահանջներին կամ սկզբունքներին՝ մի կողմ թողնելով համապատասխան կառուցվածքներն ու գործառույթները:

Պաշտպանության նախարարության արդյունավետ կառավարմանը ներկայացվում են, ի թիվս այլոց, հետևյալ հիմնական կազմակերպչական պահանջները (վստահաբար գոյություն ունեն քննության արժանի բազմաթիվ այլ ասպեկտներ, սակայն դրանք աչքի չեն ընկնում մենեցմնենքի առումով նույնափակ յուրահատկությամբ, ինչպես սոորոք թերվածները):

- Կազմակերպչական և ինստիտուցիոնալ բոլոր միջոցառումների օրինականություն,
  - Պատշաճ մեխանիզմներ և ընթացակարգեր կառավարչական որոշումների կայացման և վերահսկողության համար,
  - Հաշվետվողականության առնչվող կարգավորումներ,
  - Բոլոր մասնակիցների ներգրավում կառավարչական որոշումների իրականացման փուլերում:

Օրինականությունը ինստիտուցիոնալ կարևորագույն պայմաններից մեկն է ցանկացած կազմակերպության համար: Այն նույնքան կարևոր է նաև պաշտպանական համակարգի կազմակերպությունների համար: Ենթադրվում է, որ պաշտպանության ոլորտ ցանկացած կառավարչական համակարգ ներուժություն գուգահեռ կամ դրանից առաջ պետք է կատարվեն համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք պետք է պարունակեն կազմակերպական կառուցվածքներն ու դրանց կառավարչական հատկանիւթյունները կանոնակարգող դրույթները: Բոլոր այն դեպքերում, եթե ներգրավված է հանրային ոլորտը, հատկապես անվտանգության և պաշտպանության համակարգերի պարագայում, հատակրեն ձևակերպված իրավական նորմերը չարաշահումներից և կոռուպցիայից պաշտպանվածության զգացողություն են ապահովում, միաժամանակ նաև պատասխանատվություն են սահմանում ինչպես զինվորական, այնպես էլքաղաքացիական դեկավարների որոշումնե-

ქარა, იყენ ნახავაჟის ტექსტის მიზანით და გადასცვის მიზანით. ეს ტექსტი მოიცავს უკავშირებელ დოკუმენტების გადასცვის მიზანით. ეს ტექსტი მოიცავს უკავშირებელ დოკუმენტების გადასცვის მიზანით.

թիև և գործողությունների համար:

Ավելին որոշումների կայացման օրեսնդրորեն սահմանված համակարգը քաղաքականության իրականացման ընթացքում ձևավորություն ցուցաբերելու հնարավորություն է ընձեռում: Կառավարության ներտում և, մասնավորապես պաշտպանության ոլորտում, քաղաքականության մշակման և իրականացման ցանկացած արդյունավետ մեխանիզմ պետք է նախատեսվ զափշների և հակալիշտների համակարգ՝ միաժամանակ ապահովելով, որ տվյալ քաղաքականությունը համահունչ լինի պետության գերագույն նպատակներին ու շահերին, և որ այն լիովին ըմբռնվի ու արդյունավետորեն իրականացվի համապատասխան կազմակերպությունների կողմից: Այնուամենայնիվ, իրականացման փուլը երբեք ուղիղ գծով չի ընթանում: Ստադրությունների մի մասը կարող է լիովին շհասկացվել, մյուսները գույք իրատեսական չինեն, իսկ մի քանիսի անհրաժեշտությունն իրականացման ընթացքում կարող է ուղղակի վերանակ՝ հարավունիշ արտաքին կամ ներքին պայմանների բերումով:

Ամբողջովին բյուրոկրատական և կոչտ համակարգում ցանկացած նման դեպքում հարկ կլինի վերտառին անդրադառնալ քաղաքականության մշակման գործընթացին և ներգրավել ամենաբարձր մակարդակներում որոշումներ կայացնողներին, ինչը, ըստ էության, հաճախ հավասարագոր է քաղաքականությունն ընդիանրապես չիրականացնելուն: Եթե ոչ բոլոր դեպքերում, ապա մեծ մասամբ նման իրավիճակները հանգեցնում են այն սահմանափակ ռեսուրսների լուրջ վատնման, որոնք արդեն հատկացվել են այդ կարգի ձախողված քաղաքականության իրականացման համար: Եթե համակարգն իրավական տեսանկյունից հնարավորություն է ընձեռում կատարելու քաղաքականության իրականացման ընթացքը շտկող կառավարչական գործողություններ, ապա անհրաժեշտ չի լինի վերադառնալ քաղաքականության մշակման փուլ, եթե, իհարկե, նպատակները մնում են նոյնը: Կառավարիչներն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կլրեն առաջարրված նպատակների իրականացման համար՝ միաժամանակ օգտագործելով հաստատված քաղաքականության իրականացման նպատակով պատշաճ ուղիներ ընտրելու իրենց հայեցողական լիազորությունները: Նախատեսվում է նաև, որ կազմակերպական աստիճանակարգության բոլոր մակարդակներում քաղծառայողների բոլոր պաշտոնները պետք է ունենան իրավաբանորեն հստակ սահմանված կառավարիչներ:

Պաշտպանության ոլորտում արդյունավետ և գործուն մենեջմենթի ապահովման համար կարևոր է, որ որոշումների կայացման և վերահսկողության համապատասխան մեխանիզմներն ու ընթացակարգերը լիովին կանոնակարգված լինեն: Պաշտպանության իմաստով որպես վերահսկման այն համակարգերն են առավել կարևոր, որոնք գնահատում են գործունեության արդյունավետությունը ռազմավարական մակարդակում, այսինքն՝ ապահովում են ռազմավարական նպատակների և խնդիրների համապատասխանությունը պաշտպանական կոնկրետ արդյունքներին, ինչպիսիք են, օրինակ, զինված ու-

Ժերի կառուցվածքն ու հնարավորությունները: Վերահսկողության մեխանիզմները, սակայն, պետք է ստեղծվեն բոլոր մակարդակներում: Գործառնական մակարդակի և հատկապես՝ ընթացիկ (առօրյա գործունեության) մակարդակի պարագայում նշված ինստիտուցիոնալացումը նշանակում է վերահսկողական լիազորությունների սահմանում պաշտոնների նկարագրերում և աշխատանքային ստանդարտ ընթացակարգերի մշակում դեկավար պաշտոններ գրադեցնող քաղաքացիական կամ գինվորական անձանց համար: Այդ լիազորությունները պետք է կապված լինեն համապատասխան մակարդակում մշակված՝ որպեսի մերժական պատշաճ մեխանիզմների կամ համակարգերի հետ:

Վերահսկողության մեխանիզմների կանոնակարգումը նախատեսում է նաև պաշտպանական կազմակերպության մեջ տեղեկատվության վերընթաց և վայրընթաց հոսքի հետ կապված ընթացակարգերի ներմուծում, քանզի իրական որևէ վերահսկողություն չի կարող արդյունավետ լինել քաղաքականության իրականացմանն առնչվող կոնկրետ ասպեկտների և նվաճումների մասին համարժեք իմացության բացակայության պայմաններում: Վերահսկողության այս մեխանիզմները պետք է պատասխաններ տան, օրինակ, հետևյալ հարցերին.

- Արդյո՞ք գինվորականների համար լիովին հասկանալի է որդեգրված քաղաքականությունը:
- Ինչպե՞ս է իրականացվում այդ քաղաքականությունը:
- Որո՞նք են լինելու քաղաքականության իրականացման արդյունքները:

Նշված հարցերի պատասխանները հարկ է ստանալ համապատասխան գործիքների կիրառման միջոցով: Նման գործիքների ընտրության հնարավոր տարրերակ կարող են լինել արտոնման գործիքները (կատարողական փաստաթոթերի՝ ռազմավարական ծրագրերի, համալիր սկզբունքների, հայեցակարգերի կամ կանոնակարգերի հաստատում, բյուջեի կատարման շրջանակում միջոցների հատկացման հաստատում, ընթացակարգերի, ծրագրերի վերահսկողության և այլնի հաստատում) և ստուգման գործիքները (տեսական մոդելներ, սիմուլյացիաներ, փորձարկումներ, ստուգարքային վարժանքներ, տեսչական ստուգումներ, հարցումներ և հարցազրույցներ, վերլուծություններ և արդյունքների ամփոփումներ, առողիտ և այլն): Ինստիտուցիոնալացման միջոցով այս գործիքները, համապատասխան հրահանգների հետ մեկտեղ, պետք է տրամադրվեն պաշտպանական կազմակերպության համապատասխան պաշտոնյաներին:

Հաշվետվողականություննը նույնական պետք է կանոնակարգվի: Մենեջմենթի ինաստով՝ լիարժեք ինստիտուցիոնալացման ենթակա հիմնական վերահսկողական մեխանիզմ պետք է դառնա բազմակողմանի հաշվետվությունների համակարգը: Այդպիսի համակարգն ի զորու կիխնի բացահայտելու քաղաքականության և ռազմավարության իրականացմանն ուղղված ծրագրերի և գործողությունների մասնակի և վերջնական արդյունքները: Բացի դրանցից՝ ինստիտուցիոնալացումը պահանջում է պաշտպանական կառույցների ներսում և դրանց միջև հաշվետվություններին վերաբերող դրույթների և կանոնակարգե-

թի առկայություն, ինչպես նաև թե՝ աստիճանակարգային և թե՝ միևնույն մակարդակի կառույցների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում։ Հաշվետվության նշված բնույթի համակարգը, իհարկե, ոչ մի դեպքում դուրս չի մղելու առողջությ դասական համակարգերը։

Աշխատակիցների առավելագույն ներգրավվածությունը (ներառականություն)՝ որպես ինստիտուցիոնալացման պահանջ, կապված է աշխատակիցների կազմակերպական փոխարարելությունների հետ։ Սենեժմենքի տեսանկյունից հարկ է խրախուսել աշխատակազմի մասնակցությունը քաղաքանության իրականացման բոլոր գործընթացներում։ Այս պահանջը պետք է արտահայտվի կազմակերպական կանոնակարգերի տեսքով, օրինակ՝ նման մասնակցությունն ուղղորդող և ոյուրացնող աշխատանքային ստանդարտ ընթացակարգի միջոցով։

Պաշտպանության մենեջմենքի ինստիտուցիոնալացման առավել կարևոր հատկանիշը կառավարչական գործիքների կիրառումն է ընտրված հիմնանապատակների իրականացման կազմակերպչական արդյունավետությունը խթանելու և պաշտպանական քաղաքականության իրականացման ընթացքում քացահայտված խնդիրների լավագույն լուծումներ գտնելու նպատակով։ Կիրառական գիտություն լինելով մենեջմենքն իր գորանոցում ունի գործիքների լայն ընտրանի սկսած ընդհանուր փիլիստիվայությունից մինչև փոքր խնդիրների լուծման համար նախատեսված մաքենատիկական մերողներ։ Այդ գործիքներն ամբողջությամբ կամ գոնեն մեծ մասամբ հարմար են պաշտպանական կազմակերպությունների մենեջմենքում գործածվելու ինաստով։

Այն, թե ինչպիսի գործիքներ է կիրառում այս կամ այն պաշտպանական կազմակերպությունը, կարող է պայմանավորված լինել թե՝ արտաքին և թե՝ ներքին որոշումներով։ Այդուհանդերձ, տրամարանական է համարվում, որ պաշտպանության ոլորտում ընդունվի միևնույն հիմնական կառավարչական համակարգը, որը գործում է կառավարման ընդհանուր մակարդակում։ Ինչպես արդեն նշվել է, այդ կարգի կառավարչական փիլիստիվայության կամ մենեջմենքի ընդհանուր համակարգերի օրինակներ կարող են լինել *Որակի համընդհանուր կառավարումը*, *Գործունեության կառավարման* և *Պլանավորման*, *ծրագրավորման*, *բյուջետավորման* համակարգերի գործարկումը։ Այս համընդհանուր կառավարչական փիլիստիվայության շրջանակում պաշտպանության նախարարությունը կարող է որոշել, թե որ հիմնական գործիքներն է նպատակահարմար գործածել տարբեր պաշտպանական կազմակերպություններում։ Այդպիսի գործիքներ են *Հավասարակշիռ ցուցանիշների քարտը*, *Հենանիշների վերլուծությունը* և *Գործունեության ընթացքի վերակառուցումը*։

Պաշտպանության մենեջմենքում կիրառվող գործիքների և մեխանիզմների կանոնակարգումը կարևոր է մի քանի պատճառով։ Նախևառաջ՝ հատակ կարգավորումները ծառայում են նպատակի ընդհանրության սկզբունքին։ Կազմակերպության բոլոր անդամներն այդ դեպքում «միևնույն լեզուն են գործածում» և ավելի քիչ ժամանակ ու ջանք են ծախսում մյուսների ասածն ու

արածը հասկանալու համար: Երկրորդ՝ պաշտպանական ոլորտում համընդհանուր, միասնական գործիքների և մեխանիզմների առկայությունը դյուրացնում է պատրաստությունը և կազմակերպական փորձառության յուրացումը:

Առանձնակի կարգավորում չպահանջող ոլորտ է «տեխնիկական» գործիքների (օրինակ սխեմաների, գծապատկերների, հաշվիչների, ժամանակացույցների, «մտագրոհների» և այլն) կիրառումը: Պաշտպանական կազմակերպության մեջ գործող ստորաբաժանումները պետք է բավականաչափ անկախ լինեն՝ ընտրելու, թե մենեցմենքի նշված գործիքներից որոնք են ցանկանում կիրառել և ինչպիսի խնդիրների լուծման համար:

## Այս գրքի մասին

Պաշտպանության մենեցմենքի տեսական և գործնական ասպեկտներից որո՞նք պետք է առավելապես հետաքրքրեն քաղաքացիական և զինվորական դեկավարներին և նրանց աշխատակազմերին, խորհրդատուններին և խորհրդականներին, տվյալ ոլորտն ուսումնասիրող գիտնականներին, փորձագետներին և ուսանողներին այն պետություններում, որոնք նախատեսում են պաշտպանության համակարգի նկատմամբ կառավարչական (մենեցերական) մոտեցում ներմուծել: Չնայած որ վերջին տարիներին զնալով աճում է պետական հատվածի մենեցմենքին վերաբերող հրապարակումների թիվը, այժմ էլ պաշտպանության մենեցմենքին առնչվող բավարար գրականություն չկա, իսկ եղած հրապարակումները հատվածաբար են անդրադառնում փոփոխական նշանակություն ունեցող թեմաների լայն տիրույթին՝ դրանով իսկ չնպաստելով բուն նյութի ամրողական լմբրունմանը:

Ընդհանուր ներածության տեսքով ներկայացվող այս տեքստը պաշտպանության մենեցմենքի թեմայի շուրջ հետազա քննարկումների ծավալան հենք ստեղծելու նպատակ ունի: Առաջին գիտում առաջարկվում է պաշտպանության մենեցմենքի նախամասն տեսական նկարագրություն, և քննարկում է նրա տեղը քաղաքականության մշակման, մենեցմենքի, վարչարարության, օպերատիվ կառավարման և դեկավարման վերաբերյալ գոյություն ունեցող փոխվացնող և ինչ-որ առումով մրցակցող հասկացությունների շարքում: Երկրորդ գլուխն անդրադառնում է պաշտպանության պլանավորմանը որպես պաշտպանության մենեցմենքի առանցքային գործընթացի, ընթերցողին ներկայացնելով պլանավորման բարդ գործընթացը, դրա հետ կապված հիմնական մարտահրավերները, ինչպես նաև այն գործիքներն ու մեխանիզմները, որոնք կարող են օգտակար լինել նշված գործընթացի արդյունավետության ապահովման համար: Գրքի երրորդ՝ զինումի ծրագրահեն զարգացման հիմունքներին անդրադառն գլուխը ցույց է տալիս, թե ինչպես են օգտագործվում ծրագրերը ուսումնական նպատակները ռեսուրսների տեղաբաշխման որոշումների հետ կապված ելու համար: Գրքի չորրորդ գլուխն անդրադառնում է ֆինանսների կառավարման ոլորտին: Այստեղ ներկայացվում և վերլուծվում են պաշտպանության համակարգում ֆինանսների կառավար-

ման առանցքային հարցերը: Հինգերորդ գլխում քննության է առնվում ազգային անվտանգության համատեքստում ներկայացվող աշխատումի կառավարման բարդ համակարգը: Այս գլխում բազմակողմանիորեն վերլուծվում են նաև պաշտպանության ոլորտի մարդկային ռեսուրսների պահանջարկն ու առաջարկը: Վեցերորդ գլուխը նվիրված է ձեռքբերումների մենեջմենթին և համապատասխան պահանջների որոշարկման առաձնահատկություններին, պաշտպանության նպատակով սպառավիճության բարդ համակարգերի, այլ սարքավորումների և ծառայությունների ձեռքբերման և օգտագործման հարցերին: Եզրափակիչ գլուխն անդրադառնում է պաշտպանության քաղաքականության ձևակերպման և դրա իրականացման կառավարման համար անհրաժեշտ օրենսդրական հենքին. այստեղ շեշտադրվում է պետական միջոցների նպատակային օգտագործման ապահովման ուղղված առաջադեմ փորձը:

Հուսով ենք, որ այս գիրքն արժեքավոր ներդրում կունենա պաշտպանության արդյունավետության և նպատակայնության հիմնարար ասպեկտների հստակեցմանը հետամուտ եղող անհատների աշխատանքում: Նպատակ ունենալով արտացոլելու այս ոլորտում ձևավորված առավել արդիական տեսակետները՝ հեղինակները նյութի բազմակողմանի վերլուծություններ են առաջարկում ընթերցողի ուշադրությանը ելնելով թե՛ տեսական, թե՛ գործնական դիտանիւններից: Նրանք ներկայացնում և գնահատում են պաշտպանության նկատմամբ կառավարչական մոտեցման փոփոխությունների հիմքում ընկած հիմնական սկզբունքներն ու տեսությունները, ինչպես նաև առաջարկու այն փորձը, որ կուտակվել է առանձին ոլորտներում, ինչպիսիք են կազմակերպական մենեջմենթը, պլանավորումը, աշխատումը, ձեռքբերումները, գնումները և ֆինանսները: Դեռևս կոնկրետ դերակատարումների և փոփոքրությունների հստակեցման կարիք կա մի կողմից պաշտպանության մենեջմենթը, իսկ մյուս կողմից պաշտպանության առնչվող այլ տիրույթների, օրինակ պաշտպանության ինստիտուցիոնալացման, ժողովրդավարական վերահսկողության, քաղաքականության և ռազմավարության, նաև պաշտպանության պլանավորման ասպարեզում:

Կարծում ենք, որ այս գիրքը կնպաստի այն հիմնական պահանջների ըմբռնմանը, որոնք պետությունները պետք է քննության առնեն նախքան կառավարչական մոտեցումների կիրառումը պաշտպանության ոլորտում, նաև այն կոնկրետ հարցերի ըմբռնմանը, որոնք կապված են պաշտպանական կազմակերպության գործունեության տարրեր ոլորտներում կամ ստորարածանումներում պաշտպանության մենեջմենթի պրակտիկային անցնելու հետ:

## Գլուխ 1

# Պետական կառավարում, մենեջմենթ, հրամանատարություն, առաջնորդություն. պաշտպանության մենեջմենթի ուսումնասիրությունների հենքի ստեղծում

## Վալերի Ռատչև

### Ներածություն

Ժամանակից պաշտպանական կառույցի հիմքում ընկած է նախընտրելի նպատակները և խնդիրներն արդյունավետորեն, բարենպաստ ժողովրդավարական միջավայրում որոշարկելու և իրազործելու նրա կարողությունը: Այդպիսի պաշտպանական կառույցներն արդյունավետ են գործում, այսինքն՝ իրենց աշխատանքում արդյունքի են հասնում: Դրամբ նաև տնտեսող են, այսինքն՝ կարողանում են ցանկալի արդյունքին հասնել առանց ուսուրսների վատնման, էներգիայի և ֆինանսական միջոցների նվազագույն ծախսերով: Նմանատիպ պաշտպանական կառույցների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը հիմք են ծառայում պաշտպանության ոլորտում կայացվող որոշումների և կառույցի գործունեության իրավես քաղաքացիական վերահսկողության համար:

Ժամանակակից պաշտպանական կազմակերպության այս ասպեկտները հավասարապես կարևոր են: Դրանցից յուրաքանչյուրն ինքնատիպ է և միանգամայն անհրաժեշտ՝ պաշտպանության ոլորտում նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի հասնելու ինաստով: Որոշ չափով կարող է հնարավոր լինել, թերևս, դրանցից մեկի կամ մյուսի թերացումները փոխվացնել մյուսով, սակայն երկարաժամկետ կտրվածքով միայն նշված ասպեկտների լավ մշակված և մշտական ուշադրության արժանացող համադրումը կարող է ապահովել կայուն, արդյունավետ և տնտեսող պաշտպանական կառույց-

ների առկայություն, որոնք բավարարում են հանրության ակնկալիքներն ու նպաստում ժողովրդավարական ինստիտուտների համախմբմանը:

Ժամանակակից պաշտպանական կառույցի առջև այժմ ծառացած մարտահրավերն այս կերպ կարելի է ձևակերպել՝ նոր հավասարակշռություն հաստատել զինված ուժերի առջև դրված խնդիրների և առկա միջոցների միջև, որպեսզի հնարավոր լինի ստեղծել առկա միջոցների բերունվ հնարավորինս արդյունավետ զինված ուժեր օպերացիաների անցկացման և կապիտալ ներդրումների կատարման իմաստով: Ուետուսների շեշտակի սահմանափակության և փոփոխվող ռազմավարական գերակայությունների այս ժամանակաշրջանում զնալով աճում է պաշտպանության վրա ծախսվող միջոցներից առավելագույն օգուտ քաղելու անհրաժեշտությունը: Հենց դա է պաշտպանության մենեջմենթի հիմնական խնդիրը:

Անշուշտ, արդյունավետության և նպատակայնության պահանջները միայն պաշտպանական կազմակերպություններին չեն վերաբերում: Յանկացած ձեռնարկություն կամ գործարարությամբ գրադարձ սուբյեկտ պետք է արդյունավետ և խնայող լինի, եթե ցանկանում է հաջողության հասնել կամ նոյնիսկ պահպանել իր գոյությունը: Այնուամենայնիվ, հնարավոր չէ պաշտպանական կազմակերպությունները կառավարել ճիշտ այնպես, ինչպես զուտ ձեռնարկատիրական սուբյեկտի դեպքում: Պետության պաշտպանությունը լրջագույն, իսկ որոշ դեպքերում կենսական նշանակություն ունի ցանկացած երկրի համար: Այն հաճախ մեծապես ներգրծում է քաղաքական, սոցիալական, երկրի զարգացման և պետության կայացման գործընթացների վրա և կառավարվում է այնպես, ինչպես կգործեր շահույթ ստանալու կողմնորշմանը գործող կորպորացիան:

Հետևաբար այս գլուխը պարզաբանում է, թե ինչ է պաշտպանության կառավարումը, այն ինչով է տարբերվում մենեջմենթից և հրամանատարությունից, և որն է ռազմավարական առաջնորդության դերը: Դրանից ելնելով՝ իմաստ ունի պարզել, թե պաշտպանական կառույցների գործունեության որ ոլորտները հնարավոր կլինի զգալիորեն բարելավել ժամանակակից գործարարության պրակտիկայի օգտագործմամբ: Արդյունքում կներկայացվի պաշտպանության մենեջմենթի նշանակությունը՝ կառավարման այդ համակարգը համեմատելով ավանդական ռազմավարչարարության կամ վարչարամայական մոտեցումների հետ:

Այս գլխում քննակ նպատակ չի դրված գովարանելու պաշտպանության մենեջմենթի որևէ կոնկրետ նորել: Փոխարենը համապատասխան հեմք է ստեղծվում հաջորդ գլուխներում պաշտպանության մենեջմենթին վերաբերող հիմնական հարցերի նանրամասն ուսումնասիրման համար: Այստեղ ներկայացված թեմաներն ու հարցերը հիմնված են այն երկրների տվյալների և դիտարկումների վրա, որոնք ստեղծում, բարեփոխում կամ փոխակերպում են իրենց պաշտպանական կառույցները, ապա, առանց մանրամասն վերլուծությունների, նկարագրում են այն հիմնական խնդիրները, որոնք պետք է

նկատի առնեն պաշտպանական կառույցների գործունեության քննարկման, պլանավորման, մշակման և իրականացման գործընթացների մասնակիցները: Այդպիսով՝ այս գլուխը որոշակի կողմնորոշում է ապահովում քաղաքականություն կերտող այն անձանց համար, ովքեր ցանկանում են պարզել, թե ինչպես կարելի է պաշտպանական կառույցը գարգացնել որպես հանրորեն ընդունելի ծախսերի դիմաց համարժեք պաշտպանություն իրականացնող, ազգային և միջազգային անվտանգության արդյունավետ ժողովրդավարական հենասյուն:

## Հայեցակարգային կողմնորոշում

Պաշտպանական կառույցի գործարկման եղանակը բացատրելու նպատակով կիրառվում են մի շարք եզրույթներ (տերմիններ)՝ «կառավարություն» (պետական իշխանություն), «քաղաքական ուղղորդում», «կառավարում», «մենեջմենթ», «հանրային փաշարարություն», «ուազմավարական առաջնորդություն», «հրամանատարություն և վերահսկում» (զինուժի օպերատիվ կառավարում) և այլն: Առօրյա գործածության մեջ և պաշտոնական փաստաթրեթերում այս եզրույթները հաճախ ընկալվում են որպես հոմանիշներ: Իրականում, սակայն, դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է ընդհանուր ազգային համատեքսուում կամ պաշտպանական կառույցի կոնկրետ տիրույթում կիրառելի հայեցակարգային յուրահատուկ տեսանկյուն և մոտեցում: Ավելին՝ կազմակերպության կառույցների կայացման ոլորտում դրանք հաճախ դիտվում են որպես «արևմտյան» ծագում (և դիրքորոշում) ունեցող հասկացություններ, որոնք բոլորովին վերջերս են հայտնվել այլ պետությունների օրակարգում: Չընդհանրացնելով հանդերձ՝ կարելի է ասել, որ դրանք տարբեր չափով են հարաբերակցվում քաղաքական տարատեսակ համակարգերին, պետական կազմակերպություններին և պաշտպանական կառույցներին: Հարկ է նաև նշել, որ դրանք կարող են հաջողորդյանք կիրառվել տվյալ երկրի պատմական գարգացումը, մշակույթը, տնտեսական և սոցիալական հասունությունը, ինչպես նաև ռազմավարական միջավայրը նկարագրելու համար:

Ազգային պաշտպանական կառույցի ստեղծմանը, բարեփոխմանը կամ փոխակերպմանն ուղղված աշխատանքը պահանջում է պատշաճ ընդգրկունությանք և խորությամբ բնութագրվող ներդաշնակ հայեցակարգի մշակում, որը ճիշտ ուղղորդման հնարավորություն կատեղծի սահմանված քաղաքականության շրջանակում առաջադրված դերերն ու գործառույթներն արդյունավետորեն կատարող կազմակերպության կառույցման համար: Այլ երկրների փորձի հիման վրա քաղված դասերը կարող են օգտակար լինել, սակայն առանձին վերցրած երկրի քաղաքական գարգացմանք է պայմանավորվում նրա պաշտպանական կառույցի առանձնահատկությունը: Բացի այդ, թեև պաշտպանական կազմակերպության կառույցման, գարգացման և փոխակերպման հետ կապված առանցքային խնդիրները մեծամասմբ ընդհանրական են բոլոր երկրների համար և որպես այդպիսին պետք է քննության առնվեն ցանկացած

ժողովրդավարական պետության կողմից, երկրների միջև եղած տարբերությունները «պատմության, տարածաշրջանային անվտանգության և ինստիտուցիոնալ կառույցների իմաստով կարող են այնքան նշանակալի լինել, որ ավելի հին ու «հասուն» ժողովրդավարությունների փորձը հաճախ լիովին կիրառելի չինի ժողովրդավարական նոր պետությունների համար»<sup>4</sup>:

Պաշտպանական կառույցները չեն կարող զարգանալ տվյալ երկրի քաղաքական, վարչական և մշակութային իրողություններից անջատ: Որոշակիորեն առանձնահատուկ որորտ լինելով՝ պաշտպանությունը չի կարող գործել որպես տրամարանականության, արդյունավետության և նպատակայնության առանձին կողյակ պետական այն միջավայրում, որի պետական կառավարման մյուս կառույցները խորապես բյուրոկրատացված են: Նրա զարգացումը, բարեփոխումը կամ փոխակերպումը կարող են խթան հանդիսանալ կառավարման ազգային համակարգի արդիականացման համար, ինչպես դա եղավ ՆԱՏՕ-ին անդամագրվելու պատրաստվող բազմաթիվ արևելաեվրոպական պետություններում: Պաշտպանական կառույցի հիմնարար հայեցակարգում պետք է արտացոլված լինեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ վարչարարության ազգային մշակույթն ու ավանդույթները, կառավարչական կարողությունների առկայությունը քաղաքական, մակրոկազմակերպական և կատարողական մակարդակներում, մասնավոր գործարարության միջավայրը, կրթության և մասնագիտական ուսուցման հնարավորությունները, ինչպես նաև արմատական նորարարությունն ու բազմակողմանի փոփոխություններն ընդունելու պատրաստ հասարակությունը:

Միևնույն ժամանակ, ժողովրդավարական հասարակություններում ազգային պաշտպանությունն ավանդաբար արտաքին ռազմական սպառնալիքներին դիմակայելու կողմնորոշվածություն ունի: Տվյալ երկրի շուրջ ստեղծված ռազմավարական միջավայրի կանխատեսելիությունը ևս ներազրում է նրա պաշտպանության կոնկրետ հայեցակարգի մշակման վրա: Պետության ռազմական կառույցների ենթակայության շղթան, պաշտպանության ոլորտում որոշումների կայացման գործընթացը, ռեսուրսների տեղաբաշխման ընթացակարգերը և պաշտպանական կարիքների համար հատկացվող բյուջետային միջոցների ծավալը, ինչպես նաև գինված ուժերի կազմակերպական կառուցվածքն ու տեղակայումը հիմնականում ռազմական սպառնալիքի ընկալման ազգային (հասարարական, քաղաքական, պաշտպանական) արտադրյալն են: Պաշտպանության կազմակերպման և պաշտպանական կառույցների զարգացման հայեցակարգն ուղղակիորեն կապված է ընկալվող սպառնալիքի մակարդակի հետ: Եթե այդ սպառնալիքի աստիճանը բարձր է, որոշումների կայացման գործընթացը կրճատվում է, և նվազում է նրա թափան-

<sup>4</sup> Thomas C. Bruneau and Richard B. Goetze Jr., “Ministries of Defense and Democratic Control,” in *Who Guards the Guardians and How: Democratic Civil-Military Relations*, ed. Thomas C. Bruneau and Scott D. Tollefson (Austin, TX: University of Texas Press, 2008), 71-98; quote on pp. 71-72.

ցիկուրյան աստիճանը, պաշտպանական կառույցները դառնում են ավելի «ռազմականացված», իսկ քաղաքացիական ոլորտի դերը մարգինալացվում է: Մյուս կողմից, եթե երկրին «հաջողվել է» գտնվել ռազմավարական կայուն միջավայրում, հատկապես եթե այն խոշոր և հուսալի դաշինքի նաև է կազմում, պաշտպանական կառույցը պակաս «քացարիկ» և առավել բափանցիկ է լինում և առանձնապես չի տարբերվում պետական այլ կառույցներից:

Այդուհանդերձ, պաշտպանական համակարգի կառույցների ինտենսիվ գարգացման կամ դրա լուրջ կազմակերպական փոփոխությունների դեպքում դժվար է հստակեցնել քննարկվող նյութը առանց տարբեր եզրույթներով ներկայացվող հասկացությունները նախապես որոշարկելու: Ստորև քննության կառնենք մի շարք հիմնական եզրույթներ և նրանց հետ կապված հասկացություններ «պետական իշխանություն» (կառավարություն) և «կառավարում», «մենեջմենթ» և «պաշտպանության մենեջմենթ», «հանրային վարչարարություն», «հրամանատարություն» և «վերահսկում» (զինված ուժերի կառավարման օպերատիվ համակարգ), «առաջնորդություն»:

## «Պետական իշխանություն» և «կառավարում»

«Պետական իշխանություն» (կառավարություն) և «կառավարում» հասկացությունները տարբերվում են իրենց բովանդակությամբ և թիրախավորմամբ. դրանք նաև պատճական տարբեր հիմքեր ունեն: Ինչպես պարզաբնում է հեղինակավոր «Կառավարման կանադական ինստիտուտը»,

բավականին տարածված միտում է՝ գործածել «կառավարումը» որպես «պետական իշխանության» հոմանիշ: Եզրույթների այս շփոքումը կարող է անցանկալի հետևանքներ ունենալ: Այդպիսով պետական քաղաքականության խնդիրը, որի առանձքում է «կառավարման» հիմնախնդիրը, ներկայացվում է ընդամենքը որպես «պետական իշխանության» խնդիր. արդյունքում առաջանում է այն եզրահանգումը, որ դրա «շտկման» պատասխանատվությունն ի սկզբանե կառավարության վրա է դրված<sup>5</sup>:

«Կառավարություն» (government) բառարմատը թե՛ հունարենում և թե՛ լատիներենում «ղեկավարել» իմաստն ունի: «Կառավարություն» և «կառավարում» հասկացությունների միջև տարբերությունն ի հայտ է զայխ քաղաքագիտական երկու հիմնական հարցերի պատասխաններում՝ ո՞վ պետք է կառավարի, և որքա՞ն խիստ պետք է լինի կառավարման վարչական հսկողությունը: Նաև՝ ինչպես այսուր է բաշխվի քաղաքական գործադիր իշխանությունը թե՛ պետական իշխանության (կառավարության) մարմինների միջև, թե՛ հասարակության մեջ:

<sup>5</sup> Սույն խնդիրին վերաբերող նյութերն առկա են «Կառավարման ինստիտուտի» (IOG) վեբկայքում՝ [www.iog.ca](http://www.iog.ca). Կոնկրետ այս մեջբերության արված է հետևյալ աշխատությունից՝ John Graham, Bruce Amos, and Tim Plumptre, *Governance Principles for Protected Areas in the 21<sup>st</sup> Century*, IOG Policy Brief No. 15 (Ottawa: IOG, August 2003), 2, որն առկա է <http://www.iog.ca/publications/policybrief15.pdf> կայքէջում:

«Ո՞վ է կառավարում» հարցադրմամբ պայմանավորված՝ պատմականութեն ձևավորվել են պետության կառավարման հետևյալ ձևերը՝ անարխիա (ոչ ոք չի կառավարում), բռնապետություն (միանձնյա իշխանություն), ազնվապետություն (փոքրամասնության իշխանություն), ժողովրդավարություն (մեծամասնության իշխանություն) և միարանություն (համընդիանուր իշխանություն): Ժողովրդավարությունը պետական իշխանության ձևերից միայն մեկն է: Արքահամ Լինքոլնն այն բնութագրել է որպես «կառավարություն, որն ստեղծված է ժողովրդի կողմից, ժողովրդի մասնակցությամբ և հանուն ժողովով»: Հին հույն փիլիսոփա Արիստոտելս ասում էր. «Պետական իշխանության ճշմարիտ ձևերն են ... նրանք, որոնցում կառավարում են մեկը, մի քանիսը կամ շատերը ելնելով համընդիանուր շահերից»<sup>6</sup>: Ժողովրդավարական իշխանությունը խարսխված է հանրային նպատակների վրա այն դեպքում, եթե բուն կառավարությունը պետք է հանդես գա որպես ժողովրդի ծառա, այլ ոչ նրա տիրակալ, քանի որ իրական ժողովրդավարության հզորությունը պայմանավորված է որոշակի հիմնարար իրավունքներով և ազատություններով: Ժողովրդավարության հաջողությունը երաշխավորվում է այդ իրավունքների և ազատությունների պաշտպանվածությամբ: Ժողովրդավարության իմաստը հավասարությունն է: Մենք առանձնանաշում ենք ազատական ժողովրդավարական իշխանությունը՝ ելնելով Ալեքսիս դը Թոքվիլի և այլոց դասական համարվող այն սահմանումնից, ըստ որի՝ ազատականությունը ազատություն է նշանակում: Առանց մանրամասների մեջ ընկենելու մենք ընդունում ենք այն թեզը, որ 21-րդ դարի մերօրյա հասարակությունները ազատականությունից գործիք ժողովրդավարական համակարգերի ձևավորման փոխարեն նախընտրություն են ստեղծել արդյունավետ ազատական ժողովրդավարություններ<sup>7</sup>:

Ժողովրդավարական համակարգում պետական իշխանության գորեղության պահանջվող մակարդակը բնորոշվում է այն իրողության ըմբռնմամբ, ըստ որի՝ կառավարությունները պետք է գործեն որոշակի սահմանափակումների շրջանակում, այլ ոչ թե բույլ լինեն: Մենատիրական (ավտորիխուր) մտածելակերպով անձինք քուլության դրսերում են համարում քաղաքական գործընթացների և որոշումների կայացման ընթացքում ցուցաբերվող քափանցիկությունը, քանավեճն ու ընդդիմախոսությունը, հաշվետվողականությունն ու նշանակալի հանրային հակողության և վերահսկողության առկայությունը: Ըստ Էության, հենց դրանք են ցանկացած ժողովրդավարության հիմքը կազմող ուժեղ կողմները: Ժողովրդավարության պայմաններում կառավարման համակարգի հզորության առանցքային բարարիչներն են այն ոլորտները, որոնցում այդ համակարգը պահպանում է իշխանության մենաշնորհը: Ժողովրդավարության հասունության աստիճանով և շուկայական տնտեսության

<sup>6</sup> “Aristotle: from The Politics,” c. 340 BCE, Book III, in *Internet Ancient History Sourcebook*, [www.fordham.edu/halsall/ancient/aristotle-politics1.html](http://www.fordham.edu/halsall/ancient/aristotle-politics1.html).

<sup>7</sup> Այս թեզը լիովին հիմնավորված է հետևյալ աշխատության մեջ՝ Giovanni Sartori, *The Theory of Democracy Revisited* (Chatham, NJ: Chatham House Publishers, 1987).

գարզացածության մակարդակով պայմանավորված՝ դրանք կարող են ներառել, ի թիվս այլոց, բնական պաշարների, հողի, ճանապարհների և արտաքին քաղաքականության մենաշնորհը: Ուզմական և մահարեր այլ ուժի կիրառման լիազորությունը պետք է մշտապես գտնվի միմյանց ժողովրդավարական իշխանության ձեռքերում: Այստեղից հետևություն՝ պետական անվտանգության ոլորտից դուրս չպետք է լինեն ռազմական, ռազմականացված, ռատիկանական կամ հետախուզական կազմակերպություններ: Այդ կարգի բոլոր կազմակերպությունները պետք է ներառված լինեն որոշումների կայացման ընդհանուր քաղաքական գործընթացում, որի արդյունավետությունն ու ժողովրդավարական ուղղվածությունը երաշխավորվում է քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներով:

Չսպիշների և հակակշիռների արդյունավետ համակարգի առկայությունը ցանկացած ժողովրդավարության կարևորագույն բնութագրիներից մեկն է: Այն նպատակ ունի ապահովելու քաղաքական իշխանության քավարար չափով բաշխվածությունն ու ապակենտրոնացումը հնարավոր մոնոպոլիզացումից խուսափելու, ինչպես նաև մարդկանց պետական իշխանության վերահսկման առավելագույն հնարավորություն տալու համար: Չսպիշների և հակակշիռների կիրառումն իշխանության լիազորությունների տարանջատման միջոցով, ըստ էության, ավելի շուտ կապված է պարտականություններն ու պարտավորությունները կիսելու, քան լիազորությունների իրական քաժանման հետ: Այս դրույթի ընկալումը չափազանց կարևոր է պաշտպանական քաղաքականության ձևավորմանն ու իրազործմանն առնչվող մեխանիզմների պատշաճ մշակման համար<sup>8</sup>: Այդպիսի միջավայրում իշխանության յուրաքանչյուր կենտրոնի ուժը պայմանավորված է ոչ քենա հրամանների արձակմաբ, այլ հիմնավորումների ապահովման և համոզելու կարողությամբ: Համակարգը հաճախ կարող է դանդաղաշարժ, բարդ և անգամ անարդյունավետ լինել, սակայն այն կարևոր պաշտպանություն կերաշխավորի որևէ առանձին սուրյեկտի կողմից իշխանության հնարավոր չարաշահման դեմ, խնդիր, որի լուծմանը պետք է հետամուտ լինի յուրաքանչյուր ժողովրդավարական իշխանություն:

Սկսած դասական պետական իշխանությունից և վերջացրած ժամանակակից ներկայացուցական (հանրապետական) կառավարման համակարգով՝ պետությունը դիտարկվել է որպես քաղաքական ընտրության միջոցով հսկողություն իրականացնելու հնարավորություն ունեցող քաղաքական հասարակություն: Կենտրոնական կառավարությունը, ըստ այլմ, բնութագրվում է որպես ազգային (պետական) տարածքի նկատմամբ հսկողություն և կա-

<sup>8</sup> «Պաշտպանական քաղաքականություն» հասկացության սահմանման և պաշտպանության մենեջմենթին նրա առնչակցության վերաբերյալ տե՛ս Todor Tagarev, “The Art of Shaping Defense Policy: Scope, Components, Relationships (but no Algorithms),” *Connections: The Quarterly Journal* 5, no. 1 (Spring-Summer 2006): 15-34, <https://consortium.pims.org/the-art-of-shaping-defense-policy-scope-components-relationships-but-no-algorithms>.

նոնակարգում իրականացնող գլխավոր սուրյեկտ: Այդ լիազորության բերումով կառավարությունն օժտված է նշված տարածքի և ազգային շահերի պաշտպանության կարողություններով՝ ուստական ուժի (առանձին վերցրած կամ այլ միջոցների գուգորդմամբ) և ազգային շահերն իր տարածքից դուրս պաշտպանելու հնարավորությամբ (ինքնուրույնաբար կամ դաշնակիցների հետ)՝ մեկ այլ ռազմական ուժի կողմից դրանց սպառնացող վտանգի դեպքում:

Այն փաստը, որ Վերջին տարիներին ժամանակակից ժողովրդավարական պետություններին դասական իմաստով պատերազմի մեջ ներքաշելու հավանականությունը նվազել է, չի նշանակում, որ այս դերակատարումն այլևս կորցրել է իր նշանակությունը, կամ որ կառավարությունը (գործադիր իշխանությունը) քաղաքականություն սահմանելու և իրականացնելու լիազորություն և պատասխանատվություն ունեցող միակ կենտրոնն է:

«Կառավարում» հասկացությունը վերջերս է սկսել լայնորեն կիրառվել: Պետական կառավարման սահմանումների պակաս չի զգացվում<sup>9</sup>: Ըստ Փոլ Հրասիքի՝ պետական կառավարման համակարգը սովորաբար ընկալվում է որպես այլընտրանք՝ կենտրոնական (գորեն) «կառավարության», այսինքն՝ պետության կողմից հսկողության նկատմամբ: Նա առանձնացնում է «կառավարման» հինգ տարբերակ՝ տարատեսակ քաղաքական, միջազգային, գործարարական և սոցիալական ոլորտներում<sup>10</sup>:

Կորպորատիվ կառավարում, որը հիմնված է մի կողմից՝ մեծապես զանազնվող բաժնետերեր ունեցող, իսկ մյուս կողմից՝ մասնագիտական գործուն մենեշներ իրականացնող խոշոր, ազդեցիկ ընկերությունների առկայության վրա: Նրա նպատակն է ապահովել գործադիր կառավարիչների աշխատանքի բափանցիկությունն ու հաշվետվողականությունը և կանխել ընկերությունների վերածումը մենատիրությունների այն միջավայրում, որը ժողովրդավարությունն է լեզիտիմության առաջնային աղբյուրը:

Հանրային կառավարում, որը հիմնված է ավանդական պետական վարչարարության և սպասարկման գործառույթների սեփականաշնորհման վրա: Այն նպատակ ունի ներմուծելու հանրային ծառայությունների մի նոր մոդել, որը տարբերվում է աստիճանակարգային հսկողության տակ և քաղաքական սկզբունքներով ընտրված պաշտոնյաների առջև անմիջական հաշվետվողականության պայմաններում գործող հանրային վարչարարության մոդելից:

Սոցիալական կառավարում, որը ձևավորվում է «ըրելյայն»՝ որպես ցանցային կառավարման նոր տեսակ, և ներառում է այնպիսի դերակատարների, ինչպիսիք են՝ արհմիությունները, գործարարների ասոցիացիաները, ՀԿ-ները և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչները՝ հետամուտ լինելով պետական մակարդակով համաձայնեցված սոցիալական նոր պայմանագ-

<sup>9</sup> Joan Carkery, ed., *Governance: Concepts and Applications* (Brussels: IIAS Working Group, International Institute for Administrative Studies, 1999), 368–371.

<sup>10</sup> Paul Hirst, “Democracy and Governance,” in *Debating Governance: Authority, Steering, and Democracy*, ed. Jon Pierre (Oxford: Oxford University Press, 2000), 13–35.

թերի ստեղծմանը:

Սիցազգային կառավարումը կիրառում է «կառավարում առանց կառավարույրյան» հայեցակարգը միջազգային հարաբերությունների և վարչակարգերի ոլորտում: Այն հիմնվում է լայն ճանաչում գուած այն փաստի վրա, որ համամոլորակային և միջազգային հիմնախնդիրներից շատերը, օրինակ գլոբալ տարացումը, միջազգային առևտուրը, սպառազինությունների կրծառումը և բազմաթիվ ոլորտներին վերաբերող միջազգային չափանիշները, չեն կարող լուծվել առանձին պետության կողմից: Կառավարման միջազգայնացումը, որը միջավետական համաձայնագրերի հիման վրա իրականացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի, Առևտրի համաշխարհային կազմակերպության ների կողմից, ինչպես նաև մասնավոր դերակատարների գործողությունները և «պետության նահանջը» խթանող Մեծ ուժնեալի կողմից, լրջագույն հարցեր է բարձրացնում այն մասին, թե ո՞վ և ինչպես է վերահսկում այս միջազգային վերպետական սուբյեկտներին, և արդյոք նրանք չեն սահմանափակում ժողովրդավարության ուժն ու ներգործությունը:

Արդյունավետ կառավարումը՝ որպես հայեցակարգ, նախ հաստատվեց տնտեսական և սոցիալական զարգացման ոլորտում: Լայն աջակցություն ստանալով արևմտյան երկրներում և միջազգային այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը, որոնք այն ընկալում են որպես վարկավորման իրենց ծրագրերի իրականացման տնտեսական և սոցիալ-քաղաքական նախապայմանների համակարգ, «արդյունավետ կառավարումը» խարսխված է այն ընկալման վրա, որ անհնար է ունենալ արդյունավետ տնտեսական մենեջմենը և կայուն սոցիալական միջազգայր՝ առանց ժողովրդավարական և շուկայական սկզբունքների լիարժեք գործադրման: Հայեցակարգը ելնում է այն իրողությունից, որ «զարգացում» ասելով չի կարելի սահմանափակվել լոկ շուկաների ստեղծմամբ, ներդրումների և կուռ մակրոտնտեսական ծրագրերի խրանմամբ. անհրաժեշտարար պետք է ներառվեն և զնահատվեն նաև պետական ու սոցիալական ինստիտուտները, օրենքներն ու կանոնակարգերը, մարդկային ու քաղաքացիական արժեքները: Այդպիսով՝ «արդյունավետ կառավարում» հասկացությունը նշանակում է մասնավոր տնտեսական գործունեության համար նպաստավոր, արդյունավետ քաղաքական հանակարգի առկայություն, այսինքն՝ կայուն վարչակարգեր (քեկուզե ոչ ժողովրդավարական), օրենքի գերակայություն, արդյունավետ պետական վարչարարություն և (իրական) քաղաքացիական հասարակություն: Որպես ռազմավարություն՝ այն հետամուտ է ձևավորելու ազատական սոցիալական համակառույցի մի տարրերակ, ուր առկա է հստակ տարանջատում այնության սահմանափակ լիազորությունների և, որքանով որ հնարավոր է, ինքնակառավարվող հասարակության և շուկայական տնտեսության միջև: «Արդյունավետ կառավարման» սկզբունքների սահմանումը բավականին բարդ է, հաճախ տեղի է տալիս մոտեցում-

ների հակասականության, տակայն գոյություն ունի սկզբունքների մի ցանկ, որի շուրջ կարող է ընդհանուր համաձայնություն ձեռք բերվել, անգամ ազատական ժողովրդավարություններից դուրս գտնվող կողմերի շրջանում: Նման համաձայնության համար հիմք է ծառայել մասնավորապես, միջազգային իրավունքի և մարդու իրավունքների ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի շրջանակում իրականացված նշանակալի աշխատանքը<sup>11</sup>:

- Մասնակցություն. բոլոր կանանց և տղամարդկանց՝ ձայնը պետք է լսելի լինի որոշումների կայացման գործընթացում՝ ուղղակիորեն կամ օրինական հիմունքներով նրանց ներկայացնող միջնորդական կառույցների միջոցով: Այդ կարգի լայն մասնակցության հիմքում են դրված միավորվելու և խոսքի ազատությունը, ինչպես նաև կառուցդյական մասնակցության հնարավորությունները:
- Կոնսենսուսի (համաձայնության) հասնելու կողմնորշում. տարբեր շահերի առկայության պայմաններում արդյունավետ կառավարումը ձգտում է հարթելու այդ տարբերությունները և հասնելու լայն կոնսենսուսի տվյալ խմբի համար առավել ընդունելի շահերի ապահովման վերաբերյալ, ինչպես նաև, նման հնարավորության դեպքում՝ համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի շուրջ:
- Ռազմավարական տեսլական. առաջնորդները և հանրությունը պետք է արդյունավետ կառավարման և մարդկային զարգացման լայն, երկարաժամկետ տեսլական ունենան, ինչպես նաև գիտակցեն, թե ինչ է անհրաժեշտ այդպիսի զարգացման համար: Այդ տեսլականը նաև խարսխված է պատմական, մշակութային և սցիալական խնդիրների ընկալման վրա:
- Ծկունություն. համապատասխան ինստիտուցիոնալ կառույցները ձգտում են սպասարկելու բոլոր շահագրգիռ կողմերի շահերին և, համապատասխանաբար, համարժեք ընթացակարգեր կիրառելու:
- Արդյունավետություն և նպատակայնություն. գործընթացներն ու կառույցներն այնպիսի արդյունքներ են ապահովում, որոնք համապատասխանում են առկա պահանջներին՝ միաժամանակ երաշխավորելով ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը:
- Հաշվետվողականություն. կառավարությունում, մասնավոր հատվածում և քաղաքացիական հասարակության կազմակերպություններում որոշում կայացնողները հաշվեսուուն հանրության, ինչպես նաև ինստիտուցիոնալ դաշտի շահագրգիռ կողմերի առջև: Այս հաշվետվողականությունը կարող է տարբերվել ըստ կոնկրետ կազմակերպության և

<sup>11</sup> ՍԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), «Կառավարում և կայուն մարդկային զարգացում» (1997 թ.): Փոքր փոփոխություններով՝ այս սկզբունքները տեղ են գտել ՄԱԶԾ-ի բազմաթիվ այլ փաստաթղթերում: Տե՛ս օրինակ UNDP and Governance: Experiences and Lessons Learned, <http://mirror.undp.org/magnet/docs/gov/Lessons1.htm>.

կախված նրանից, թե ընդունվող որոշումները ներքի՞ն, թե՞ արտաքին բնույթի են:

- Թափանցիկություն. սա հիմնված է տեղեկատվության ազատ հոսքի սկզբունքի վրա: Գործընթացները, կառույցները և տեղեկատվությունը պետք է անխափանորեն հասանելի լինեն շահագրգիռ անձանց համար, և պետք է ապահովի բավարար տեղեկատվություն դրանց գործունեությունը հասկանալու և վերահսկելու համար:
- Իրավահավասարություն. և տղամարդիկ, և կանայք պետք է հնարավորություն ունենան բարելավելու կամ պաշտպանելու իրենց բարորությունը:
- Օրենքի գերակայություն. իրավական նորմերը, հատկապես մարդու իրավունքներին վերաբերող օրենսդրությունը, պետք է լինեն արդարացի և հավասարապես պարտադիր բոլորի համար:

Ինչպես արդեն նշվել է, պաշտպանական քաղաքականությունը ձևավորվում և իրականացվում է ոչ միայն բուն պաշտպանական կազմակերպության կողմից, այլև պետության և հասարակության բազմաթիվ այլ սուբյեկտների մասնակցությամբ: Հետևաբար կառավարման հարցը կարելի է քննել երկու հարթություններում:

Պետական նակարդակում կառավարումը պայմանավորված է նրանով, թե ինչպես կարող են այլ սուբյեկտները, օրինակ՝ պետական կառույցները, տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, գրղծարար շրջանակները դեռևակատարում ունենալ պաշտպանական քաղաքականությանն առնչվող որոշումների կայացման և իրականացման գործընթացներում, մասնավորապես այն դեպքերում, եթե այդ որոշումները մեծապես հետաքրքրում են հանրությանը:

Պաշտպանական կառույցի նակարդակում խնդիրը քննելիս կարելի է խոսել «կազմակերպության տիրույթում» իրականացվող ինստիտուցիոնալ կառավարման կամ կառավարման մասին: Այստեղ ներառվում են պաշտպանական գերատեսչության գործունեության այն տեսակները, որոնց առնչությամբ այն սովորաբար հաշվետու է կառավարությանը, երկրի նախագահին (եթե վերջինն նաև հանդես է գալիս որպես զինված ուժերի գերազույն հրամանատար) և խորհրդարանին (կամ «սնորենների վարչությանը»):

«Կառավարում» հասկացությանը վերաբերող քննարկումն ամփոփելով՝ կարող ենք ընդունել հետևյալ սահմանումը, որն ընդհանուր առմամբ ունիվերսալ է համարվում, այսինքն՝ կիրառելի է կառավարման վերոնշյալ 5 տեսակներից յուրաքանչյուրի դեպքում:

Կառավարումն այն կառույցների, գործընթացների և ավանդույթների միջև փոխգործողությունն է, որոնք բնորդում են իշխանության և պատասխանատվության կիրառման, որոշումների կայացման և դրանց վրա բաղաքացիների կամ այլ շահագրգիռ կողմերի ներգործության եղանակները: Ընդհանուր առմամբ, այն վերաբերում է իշխանությանը,

հարաբերություններին և հաշվետվողականությանը՝ ով է ներազդում, ով է որոշում, և ինչպես է ապահովում որոշում կայացնողների հաշվետվողականությունը<sup>12</sup>:

## Մենեջմենքը և «պաշտպանության մենեջմենքը»

«Մենեջմենք» եզրույթը պատմականորեն գործածվել և գործածվում է միշտ տարբեր իմաստներով: Այն կարող է վերաբերել այն բազմաթիվ որոշումներին, որոնք անհրաժեշտ է ընդունել արտադրական բարդ գործընթացի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության, պետական գործակալության կամ տեղական ինքնակառավարման մարմնի դեկավարման համար: Այս դեպքում գործ ունենք որոշ իմաստով նկարագրական մոտեցման հետ, որի օգնությամբ մենեջմենքը մեկնարանվում է որպես գործընթաց, և ներկայացվում են կառավարիչների ու վերադասների գործառույթները: Մյուս կողմից՝ մենեջմենքը ոմանց կողմից կարող է կիրառվել հնարավորինս կարճ ժամկետներում և սակայ ռեսուրսներով որոշակի մասնավոր նպատակի իրականացման համար մարդկանց ուղղորդելու նպատակով: «Մենեջմենք» եզրույթը կարող ենք գործածել նաև գիտական ուսմունքի համատեքստում, որտեղ ի մի են բերված քաղաքական, տնտեսական, սոցիոլոգիական, հոգեբանական կամ մարդաբանական տեսության և փիլիսոփայության վրա հիմնված մոտեցումները, որպեսզի հնարավոր լինի համակարգված մոտեցում (տեսություն) մշակել «գիտականորեն» հիմնավորված գործողությունների (ռազմավարության, քաղաքականության), համապատասխան կազմակերպության ստեղծման և գործարկման, ինչպես նաև այդ համապատասխան կազմակերպության ներուժի և հատկացված (սահմանափակ) ռեսուրսների օգտագործման միջոցով կոմկրետ նպատակներին հասնելու եղանակների վերաբերյալ:

Ժամանակակից մենեջմենքը իր արմատներով սերտորեն կապված է թե՝ վարչարարության, թե՝ գործարարության հետ. կարևոր է հաշվի առնել այս հանգամանքը, եթե հարկ է լինում մենեջմենքի սկզբունքներն ու պրակտիկան հարմարեցնել հանրային, մասնավոր կամ անհատական գործունեության այլ ոլորտներին: Մենեջմենքի «հայրեր» համարվող Հենրի Ֆայոլը, Մաքս Վերերը և Չեսըրը Բերնարդն իրենց տեսությունները կառուցել են ամբողջությամբ վերցրած կազմակերպությունների շուրջ, մինչդեռ մյուսների, օրինակ՝ Ֆրեդերիկ Վ. Թեյլորի, Գանքի, Լիլիան և Ֆրանկ Գիլբրեթների ուշադրության կենտրոնում է եղել արտադրողականության բարձրացումը<sup>13</sup>: Մենեջմենքին վերաբերող այս վաղ ուսումնասիրությունների երկու ուղղություններն ել ներառում են հետազոտական և կիրառական աշխատանք. դրանց միջոցով ձևավորվեց այսպես կոչված վարչարարական տեսությունն ու գիտական մենեջմենք՝ որպես մենեջմենքի դասական տեսության հենք: Վարչարարական տեսությունը

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Frederick W. Taylor, *Principles of Scientific Management* (New York, NY: Harper & Brothers, 1911).

հիմնական շեշտը դնում էր մենեջմենքի գործառույթների վրա և փորձում էր կազմակերպչական գործունեության ռացիոնալացման համար ուղենիշ ծառայող ընդգրկուն վարչարարական սկզբունքներ ստեղծել: Թեյլորը և նրա հետևողները, մյուս կողմից, պնդում էին, որ հնարավոր է գիտականորեն վերլուծել առանձին աշխատակիցների կատարած աշխատանքը՝ էներգիայի և ռեսուրսների նվազագույն ներդրմանը առավելագույն արդյունք ապահովող ընթացակարգերի հայտնաբերման նպատակով:

Զարգացնելով մենեջմենքին առնչվող դասական տեսակետները՝ ժամանակակից տեսությունները միտված են հաշվի առնելու մերօրյա կազմակերպական միջավայրերի սրբնաց փոփոխվող բնույթը և օգնում են ավելի լավ ըմբռնելու այն:

Հստ հանգամանքների տեսության՝ որոշում կայացնելիս կառավարիչները պետք է նկատի ունենան առկա իրադրության բոլոր ասպեկտները և գործեն՝ այն հանգամանքները հաշվի առնելով, որոնք էապես ներգործում են տվյալ իրադրության վրա: Հստ էության՝ այս մոտեցումը կարող ենք անվանել «գործել ըստ հանգամանքների»: Օրինակ՝ ղեկավարման կամ մենեջմենքի լավագույն ոճի սահմանմանն ուղղված ջանքերը կարող են, ի վերջո, հանգեցնել հետևյալ եզրակացությանը՝ լավագույն ոճը կախված է կոնկրետ իրավիճակից: Չորքը մարտի տանող առաջնորդի դեպքում առավել արդյունավետ ոճը կարող է միապետականը լինել: Խսկ հիմնադանոցի կամ համալսարանի ղեկավարի պարագայում նպատակահարմար կարող է համարվել առաջնորդության ավելի մասնակցային և գործընկերային ոճը:

Համակարգերի տեսությունը նշանակալի ազդեցություն է ունեցել մենեջմենքի՝ որպես գիտության, և կազմակերպությունների էության ընկալման վրա: «Համակարգ» ասելով՝ հասկացվում է ընդհանուր նպատակին հասնելու համար ի մի բերված առանձին բաղադրիչների ամբողջություն: Համակարգի մեկ բաղադրիչի փոխարինման կամ վերացման դեպքում փոխվում է նաև ողջ համակարգի բնույթը: Համակարգը կարելի է դիտարկել որպես մի կառույց, որն ունի իր մուտքերը (բաղադրիչներ), գործընթացները, ելքերը (արտադրյաններ) և արդյունքները: Համակարգերն ապահովում են այս չորս ասպեկտների փոխկապակցվածությունը և հետադարձ կապը: Առանձին կազմակերպության դեպքում մուտքերի հատվածը ռեսուրսներ է պարունակում, օրինակ հումք, ֆինանսական միջոցներ, տեխնոլոգիաներ, մարդիկ: Այս մուտքերը կամ բաղադրիչներն անցնում են պլանավորման, կազմակերպման, խթանման և վերահսկման որոշակի փուլերով՝ ժառայեցվելով կազմակերպական նպատակների իրականացմանը: Ելքերը հանդես են գալիս արտադրանքի, օրինակ կարողությունների և հնարավորությունների տեսքով: Արդյունք կարող է լինել կյանքի որակի կամ ազգային անվտանգության մակարդակի բարձրացումը: Հետադարձ կապի օրինակ կարող են ծառայել հաճախորդներից ստացված տեղեկությունները կամ պետության կողմից երաշխատավորվող անվտանգության հանրային ընկալումը: Այս ընդհանուր շրջանակը կիրառելի է ցանկացած

համակարգի, այդ թվում՝ կազմակերպության ենթահամակարգերի (վարչությունների, ծրագրերի և այլնի) դեպքում:

Քարդության տեսությունը շեշտում է, որ հաճախ կազմակերպության ներսում տեղի ունեցող իրադարձությունները և դրա արտաքին միջավայրը շեն կարող լիովին վերահսկվել քանի որ ժամանակի ընթացքում համակարգերն ավելի բարդ են դառնում: Զարգացմանը զուգահեռ դրանք նաև ավելի անկայուն են դառնում (կամ խոցելի աղետավի հետևանքների հանգեցնող հնարավոր ազդեցությունների առումով), և հետևաբար պետք է լրացուցիչ ջանքեր գործադրվեն այդ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ: Այդ լրացուցիչ ջանքերի գործադրման ընթացքում կազմակերպության կայունության ավահովման համար նոր կառույցների անհրաժեշտություն է ծագում: Այս միտումը պահպանվում է մինչև համակարգի տրոհումը, միացումը մեկ այլ բարդ համակարգի հետ կամ նրա վերջնական փլուզումը:

Այս գորի նախատակներից ելնելով՝ մենեջմենթը կարելի է դիտարկել որպես առանձին կազմակերպության շրջանակում պլանավորման, կազմակերպման և աշխատումի ապահովման, դեկսվարման և վերահսկման համակարգված գործընթաց, որն ուղղված է որոշակի ընդհանուր (ինստիտուցիոնալ) նախատակի հասնելուն: Գիտական մեթոդ լինելով՝ այն միաժամանակ մարդկանց գործացման և կազմակերպությունն ավելի արդյունավետ ու նպատակադրված դարձնելու արվեստ է, որը կոչված է ապահովելու ավելի լավ արդյունք, քան հնարավոր կյիներ առանց մենեջմենթի և կառավարիչների (նախարարների, տնօրինների, հրամանատարների): Ըստ այդմ՝ մենեջմենթը չորս հիմնայուներն են պլանավորումը, կազմակերպումն ու աշխատակազմի ապահովումը, դեկսվարումն ու առաջնորդումը, մշտադիտարկումն ու հսկողությունը: Այս գործառույթներն ունիվերսալ են, անկախ նրանից՝ կառավարիչը կոչկեղենի խանո՞ւթ է դեկսվարում, կազմակերպության ստորաբաժանո՞ւմ, թե՞ ուազմաօդային ուժերի ավիացիոն թե:

Պլանավորումը կազմակերպության առջև դրված հիմնանպատակին հասնելու համար անհրաժեշտ խնդիրների ընտրությունն ու հաջորդական որոշարկումն է: Կարող են կազմվել ռազմավարական, երկարաժամկետ կամ կարճաժամկետ, ընդհանուր կամ իրավիճակային ծրագրեր: Ծրագիրը կոչված է պարզաբանելու նպատակն ու մոտեցումները (ռազմավարությունը, քաղաքականությունը, սկզբունքները) և հիմք է ծառայում գործունեության կազմակերպմանը և աշխատակազմի ապահովմանը վերաբերող որոշումների համար:

«Կազմակերպում» և «աշխատակազմի ապահովում» ասելով՝ հասկանում ենք կազմակերպության ստորաբաժանումների կամ անդամների կողմից կատարվելիք գործառույթների, հանձնարարությունների և պարտականությունների պատվիրակում և համակարգում, ինչպես նաև սահմանված ժամկետներում առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ ուժությունների բաշխում նրանց միջև: Այստեղ ներառվում է նաև աշխատակազմի

նեղուավման, ընտրության, պատրաստության, տեղակայման և կարողությունների զարգացման գործընթացը ըստ սահմանված գործառույթների և պարտականությունների: Աշխատակազմի որակն ու դրա կազմակերպման եղանակներն են բնորոշում դեկավարման ոճը:

Դեկավարումն ու առաջնորդումը կապված են ընդիհանուր նպատակին հասնելու ճանապարհին աշխատակազմի խթանման, ուղղորդման և ներազդման գործընթացի հետ: Դեկավարումը պահանջում է կազմակերպչական ունակությունների և հմտությունների առկայություն, ինչպես նաև առաջնորդելու կարողություն, որոնք անհրաժեշտ են բարենպաստ աշխատանքային նիշավայրի ստեղծման միջոցով հետևորդներին խթանելու համար: Պարբերական մշտադիտարկման և վերահսկողության հետ գուգորդվելով՝ դեկավարումը կարող է արդյունավետ լինել ընդիհանուր նպատակին հասնելու ողջ ընթացքում:

Մշտադիտարկումը և հսկողությունն այն գործողություններն են, որոնց միջոցով կառավարիչը (հրամանատարը) ապահովում է իր ենթակայության ներքո գտնվող բոլոր ստորաբաժանումների համակարգված ուղղորդումը դեպի նախանշված նպատակի իրականացում: Այլ կերպ ասած՝ հսկողության միջոցով ապահովում է հետևյալը. եթե առաջարկված նպատակի իրագործման առունով մի ստորաբաժանման հաջողությունը կախված է մեկ այլ ստորաբաժանման կողմից որոշակի գործողություն կատարելուց, ապա այդ գործողությունը պետք է կատարվի:

Մենեջմենքի այս հիմնական հայեցակարգային դիրքորոշումները, տեսարյունները, սկզբունքներն ու գործառույթները կիրառելի են նաև պաշտպանական կազմակերպության համար: Ակնհայտ է, որ «պաշտպանության մենեջմենք» հասկացությունը խարսխված է այն ընդունման վրա, որ պաշտպանական կազմակերպությունը, ինչպես և ցանկացած այլ պետական գերատեսչություն կամ խոշոր մասնավոր ընկերություն, բարդ, մեծածավալ և բազմաշերտ կառույց է:

Յուրաքանչյուր խոշոր կազմակերպության դեպքում անհրաժեշտ է պլանավորում, որն իրականացնում է կառավարիչը: Վերջինս է որոշում կայացնում, թե ինչպես պետք է գործի այդ կազմակերպությունը, և (կամ) ինչ պետք է անի իր ստորաբաժանումը սահմանված ժամանակահատվածում: Այսինքն՝ կառավարիչը սահմանում է այն նպատակները, որոնց իրականացմանն ինքը պետք է ձգտի իր բոլոր ենթականների հետ միասին: Արտադրական և ուղամական պլանավորման միջև, սակայն, մի մեծ տարբերություն կա. հնարավոր պատերազմի կապակցությամբ կազմվող բոլոր ռազմական ծրագրերը պայմանական են, համենայն դեպքում խաղաղության պայմաններում, և ուղղված են այն խնդիրների իրականացմանը, որոնք պետք է լուծվեն միայն հնարավոր պատերազմի ժամանակ: Մյուս կողմից՝ արտադրական պլանավորում իրականացնող նախապատրաստվում է իրական այն գործառնություններին, որոնք հաստատապես տեղի են ունենալու առաջիկա տարում կամ, ասենք, մեկ-երկու տարի անց: Պատերազմի դեպքում ընդիհանուր պատրաստակա-

նույշյանն ուղղված պաշտպանական պլանավորումն ավելի մոտ է արտադրական պլանավորմանը, քանի որ նպատակ ունի զինվորներին պատրաստելու և ճիշտ հարաբերակցությամբ նյութական ռեսուրսներ ապահովելու, թեև սա արվում է հնարավոր պատերազմի հաշվարկով:

Յուրաքանչյուր կառավարչի վրա դրված է նրա կազմակերպության կայացման, պահպանման, գործունեության ճիշտ կազմակերպման և աշխատակազմի ապահովման պարտականությունը: Կառավարիչն է որոշում, թե որն է ռեսուրսների տնտեսապես առավել ճիշտ համադրումը, որը բոլոր կտա հաջորդությամբ իրականացնել ծրագրային նպատակները: Նույնը վերաբերում է նաև զինվորական հրամանատարի տեսլականին և օպերացիաների հայեցակարգին: Երկուսն էլ առաջադրված նպատակի իրագործմանն ուղղված այս աշխատանքը կատարում են իրենց ենթակայության ներք գտնվող անհատների և ստորաբաժանումների հսկողությունն ապահովելու համար:

Կառավարիչներն ու հրամանատարները տարբեր հմտությունների և գործիքների կիրառմամբ ղեկավարում և առաջնորդում են իրենց ենթականերին՝ նպատակ ունենալով մեծացնելու նրանց շահագրգուվածությունը, ֆիզիկական և հոգեբանական համախմբումը մարտական առաջադրանքի ընթացքում դրանք ինքնազնության մակարդակի հասցնելու համար: Կիրառվող գործիքները, ըստ Էության, միանգամայն տարբեր են, սակայն նույնն է նպատակին հասնելու առումով դրանց ազդեցությունը:

Գործունեության մշտադիտարկումը և հսկողությունը կառավարչին և հրամանատարին թույլ են տալիս ճիշտ գնահատել սեփական որոշումների արդյունավետությունն ու նպատակայնությունը և պատշաճ շտկումներ կատարել սկզբնական ծրագրերում: Անկախ հսկողության ստրատեգիայի տեսակից շուկայական թե բյուրոկրատական, այն պետք է և կառավարիչներին, և հրամանատարներին ճշգրիտ, բարձ և հուսալի տեղեկատվություն տրամադրի նպատակային գործունեության առաջընթացի, ինչպես նաև ներքին և արտաքին միջավայրում տեղի ունեցող այն փոփոխությունների մասին, որոնց առնչությամբ կարող է առաջանալ ծրագրային շտկումների կատարման կամ միանգամայն նոր ռազմավարության մշակման անհրաժեշտություն:

Այնուամենայնիվ, պաշտպանական կազմակերպությանը բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, հետևաբար գործարարության ոլորտի ընդհանուր գործելակերպի և վարչարարական մեթոդների ներմուծման ցանկացած ծրագիր պետք է նախապես լրջորեն վերլուծվի: Մենք չենք ձգտում արիեստական հիմնավորումներ գտնելու պաշտպանությունը դրանք առանձնահատուկ ոլորտ դիտարկելու համար: Միաժամանակ, պաշտպանության մենեցմենքի յուրահատուկ հայեցակարգը չի կարող և չպետք է տարանցատվի ազգային ժողովրդավարական միջավայրում գործող պետական և մասնավոր այլ կազմակերպությունների կառավարման դիրքորոշումներից:

Ի թիվս այլ գործուների՝ քաղաքացիական և զինվորական սույրեկտների միջև փոխհարաբերություններով է պայմանավորված պաշտպանական

քաղաքականության ձևավորման և պաշտպանության մենեջմենթի տարրերությունը հանրային ոլորտի այլ հայեցակարգերի և մենեջմենթի այլ կայացած մոդելների համեմատ: Հավանական է, որ երկրի քաղաքացիական-զինվորական հարաբերությունների կոնկրետ մոդելը լուրջ ազդեցություն ունենա պաշտպանական կազմակերպության և նրա դեկավարման, մենեջմենթի կամ կառավարման օպերատիվ համակարգի վրա: Ուզմական ոլորտի յուրահատուկ բնույթը կամ, ըստ Սամուել Հանրինգըքի բնորոշման, դրա «գործառությին հրամայականը» երեմն դիտարկվում է որպես այլ տեսությունների, օրինակ՝ մենեջմենթի, վարչարարության, առաջնորդության և այլ մերորարանությունների սկզբունքների և գործելակերպի կիրառումը խոչընդոտող գործուն: Պետական կառավարման, վարչարարության և մենեջմենթի մի շարք հեղինակավոր հետազոտողներ նշում են, որ արագ զարգացող ուսմունքներից փոխառված ժամանակակից հայեցակարգերի կիրառումը պաշտպանական քաղաքականության ոլորտում «...հաճախ ցանկալի արդյունք չի ապահովում»<sup>14</sup>:

Ոչչարդ Քոնն այն եզրահանգմանն է գալիս, որ ուզմական ոլորտի նկատմամբ քաղաքացիական հսկողությունն այսօր երկու հիմնախնդիր ունի լուծելու. քաղաքացիական հզոր վերահսկման փորձ և արտաքին սպառնալիքներից պաշտպանվելուն միտված ռազմական կառույցներ ունեցող հասուն ժողովրդավարությունների համար փորձաքար պետք է դիտվի այն, թե որքանով են քաղաքացիական ուժերն ունակ գերակա դերակատարում ունենալու պաշտպանական քաղաքականության և որոշումների կայացման ոլորտներում: Բոլոր այն դեպքերում, երբ զինվորականությունը մեծ հեղինակություն է վայելում, տիրապետում է վարչարարության ազդեցիկ հմտություններին, համարում է, որ սահմանված նպատակների իրագործման իր կարողությունները վտանգված են, կամ չի վստահում քաղաքացիական առաջնորդներին, քաղաքացիական գործիչները կարող են լուրջ խոչընդոտների առջև հայտնվել<sup>15</sup>:

Մյուս կողմից՝ ժողովրդական կառավարության և քաղաքացիական հսկողության լուրջ փորձ չունեցող նոր կամ զարգացող ժողովրդավարությունների առջև ծառանում է Է՛լ ավելի մեծ մարտահրավեր ապահովել, որ զինվորականությունը չփորձի տապալել ընտրված կառավարությունը կամ քաղաքացիական հասարակության լիազորություններն անտեսել: Ըստ այդմ՝ հիմնական պահանջն այսպես կարելի է ձևակերպել՝ ձևավորել քաղաքացիական հսկողության ավանդույթ, ստեղծել ռազմական կառույցի ներսում քաղաքական չեզոքության հուսայի համակարգ և հետևողականորեն կանխել կամ բացառել զինվորականների կողմից քաղաքական կյանքին միջամտելու ցանկացած հնարավորություն:

<sup>14</sup> Jason Dempsey, Jay Parker, and Thomas Sherlock, “Introduction to Civil-Military Symposium: Public Administration and Management,” *Public Administration and Management* 10, no. 2 (2005): 57-60.

<sup>15</sup> Richard H. Kohn, “An Essay on Civilian Control of the Military,” *American Diplomacy* 2, no. 1 (1997), [www.unc.edu/depts/diplomat/AD\\_Issues/amdipl\\_3/kohn.html](http://www.unc.edu/depts/diplomat/AD_Issues/amdipl_3/kohn.html).

Ո. Չոնը նաև պնդում է, որ ժամանակակից պաշտպանական կառույցի ձևավորման խնդիր պետք է համարել ազգային անվտանգության քաղաքականության ձևավորման և իրավործման գործընթացների նկատմամբ քաղաքացիական հսկողության համակարգի հաստատումն ու պահպանումը: Նոր ժողովրդավարություններում այս մարտահրավերն էլ ավելի մեծ է. ռազմական ոլորտի նկատմամբ իրենց գերակա ազդեցությունն ապահովելու ձգտող քաղաքացիական սուբյեկտները կարող են ենթարկվել զինվորականների շրջանում անհնազանդության հարուցման, իսկ հանրության աջակցության բացակայության պարագայում՝ անզամ ռազմական միջամտության ռիսկերին:

Քաղաքացիական համակարգի հայեցակարգերը, տեսությունները և գործելակերպը պաշտպանության ոլորտ ներմուծելու հետ կապված դժվարությունները պայմանավորված են այն փասով, որ պատերազմը, ինչպես նշել է Կլաուզելիցը, և ինչպես վերջին շրջանում հաստատվել է Հարավսլավիայում, Աֆղանստանում, Իրաքում և Չեչնիայում իրականացված ռազմական գործողությունների փորձով, «իր իսկ քերականությունն ունի»: Ժամանակակից և նորակազմ հասարակություններին հաջողվել է խորապես ըմբռնել ազգային անվտանգության քաղաքականությանն առնչվող որոշումների կայացման խնդիրները և քաղաքական մոտեցումներ մշակել այդ ասպարեզում, որտեղ պաշտպանության/ռազմական քաղաքականության հարցերը դիտարկվում են որպես անվտանգության քաղաքականության հիմնական քաղադրիչ<sup>16</sup>: Դրանք ներառում են վարչարարությունն ու կազմակերպչական աշխատանքը (պաշտպանական գերատեսչության ստեղծում), իրավական հենքի ստեղծումը (պաշտպանության մասին օրենքներ և իրավական նորմեր), խորհրդարանական հսկողությունը (պաշտպանության հարցերով հանձնախմբի ստեղծում), քափանցիկությունն ու հաշվետվողականությունը հանրության առջև (պաշտպանությանն առնչվող խնդիրների վրա քաղաքացիական հասարակության ներգործության հնարավորությունների ընդլայնում), պաշտպանական կառույցներում քաղաքացիական ներկայացուցիչների նշանակումը և այլն: Նման միջավայրում ազգային անվտանգության և պաշտպանության շահերի ձևակերպման, հաղորդակցման և ռազմավարական հավասարակշռման, գործառույթների բաշխման ու ընդհանուր ռեսուրսների հատկացման (ըստ սահմանված նպատակների և անվտանգության համակարգի կազմակերպությունների) պատասխանատվությունն ամբողջովին դրվում է քաղաքացիական հատվածի քաղաքական առաջնորդների վրա չվերածվելով անիրազեկ զինվորականության ինքնուրույն գործունեության տիրույթի:

Այսպիսի դերակատարում ստանձնելով՝ քաղաքացիական առաջնորդներն օգտագործում են հետևյալ մոտեցումները՝ «քաղաքական ուղղորդում», «վարչական և կազմակերպական մենեջմենք», «ռազմավարական և քաղաքական առաջնորդություն», «ռեսուրսների կառավարում», «հետադրամ կապ

<sup>16</sup> Այդուհանդեռձ, շատ փոքրաթիվ քացառություններով, ասվածը չի վերաբերում անվտանգության քաղաքականության այլ քաղադրիչների:

և հսկողություն» և այլն: Նույն հանգամանքներում զինվորականները գործածում են այս կարգի հասկացություններ՝ «շտաբների աշխատանք» (որը տարբերվում է «վարչական աշխատանքից»), «կառավարման օպերատիվ համակարգ» (որը տարբերվում է «հետադարձ կապից») և «զինվորական էքիլա և առաջնորդություն» (որը չի համընկնում սոցիալական բարոյական սկզբունքների և բազմակարծության վրա խարսխված քաղաքական առաջնորդության հետ): Այսպիսի զուգորդման հիմնավիճակներում է տալիս Փիթեր Ֆիվերը. «Ուազմական-քաղաքացիական փոխհարաբերություններում առկա է հետևյալ հիմնախնդիրը՝ ընդհանուր հայտարարի բերել այն զինվորականներին, ովքեր բավականաշափ հզոր են քաղաքացիական դեկավարության ցանկացած առաջադրանքը կատարելու համար, և այն զինվորականներին, ովքեր բավականաշափ վերահսկելի են քաղաքացիական դեկավարության կողմից և կատարում են միայն վերջինիս կողմից լիազորված գործողությունները»<sup>17</sup>: Պաշտպանական կազմակերպությունը (պետության կամ կառավարության տեսանկյունից), նրա քաղաքական ուղղորդումն ու գործառնական մենեջմենքը, ազգային ռազմական աստիճանակարգությունը, ինչպես նաև պաշտպանական կառույցի դեկավարությունը պետք է արտացոլեն այս առանձնահատկությունները, որպեսզի հնարավոր լինի կանխել քաղաքացիական անձանց և զինվորականների միջև առկա հարաբերությունների աղճատումը և դրանց վերածումը միմյանց շիանդութող և հակադիր երկու խմբերի: Բոլոր դեպքերում, քաղաքացիական-զինվորական փոխհարաբերությունների առանցքային նշանակության գիտակցումը հույժ կարևոր է պաշտպանական կառույցների կազմակրման և կառավարման համար:

Վերոնշյալլ նկատի ունենալով՝ հարկ է պարզաբանել, թե ինչ պետք է անի պաշտպանության «նախարարությունը» (կամ «վարչությունը»): Այն երկրներում, որտեղ իշխանությունը ձևավորվում է ազատ ընտրությունների միջոցով, պաշտպանական կառույցը հանդես է գալիս նախնառաջ որպես պետական կառավարման մարմին, որի միջոցով ընտրված պաշտոնյաներն ուղղորդում են, հրահանգներ և կարգադրություններ են տալիս պետության զինված ուժերին: Երկրորդ, այն նաև օպերատիվ շտաբի գործառույթ է իրականացնում, ուր վերը նշված ուղղորդումն ու հրահանգները վերածվում են գործառնական ծրագրերի և ֆինանսավորմանը, մարդկային և նյութական ռեսուրսներին, օրենսդրությանը, ինչպես նաև ապահովման այլ ձևերին վերաբերող համապատասխան պահանջների: Ի վերջո, նախարարությունը պետք է նաև հանդես գա որպես ազգային անվտանգության ողջ հանակարգի «վենտրոնական վարչարար» և լրջորեն գրադարձ զինված ուժերի աշխատակազմի, ֆինանսների, տնտեսական ապահովման, զնումների, մասնագիտական պատրաստության, սոցիալական աջակցության և ենթակառուցվածքների հարցերով:

**Հաշվի** առնելով այս բոլոր գործառույթները՝ անհրաժեշտ է ունենալ

<sup>17</sup> Peter D. Feaver, The Civil-Military Problematique: Huntington, Janowitz, and the Question of Civilian Control, *Armed Forces and Society* 23, no. 2 (Winter 1996): 149-178.

պաշտպանական գերատեսչության կազմակերպման և ղեկավարման պատշաճ հայեցակարգ: Գոյություն ունեն երեք առանձին ոլորտներ՝ քաղաքական ուղղորդում, գերատեսչության գործառնական կառավարում և մնացած այն ամենը, ինչ կարելի է բնորոշել իբրև պաշտպանության մենեջմենթի ոլորտ: Երեքն էլ պետք է փոխհամաձայնեցված գործեն, սակայն պահանջում են հայեցակարգային առանձին մշակումներ, միանգամայն տարբեր մասնագիտական հնտություններ, առաջնորդական կարողություններ և համապատասխան թիմեր, ինչպես նաև հիմնված են տարբեր կանոնակարգերի և գործնական լուծումների վրա: Անհնար է այս երեք հիմնական գործառույթներն իրականացնել միևնույն հայեցակարգային և ընթացակարգային համակարգի օգտագործմանը: Պետության համար արդյունավետ, բափանցիկ և վերահսկելի պաշտպանական գերատեսչություն ստեղծելու խնդիրն առաջին հերթին պահանջում է այդ առանձին ոլորտներից յուրաքանչյուրի գործունեության արդյունավետ կազմակերպում և հայեցակարգային հիմնավորում:

Որպէս փորձագետներ առաջարկել են պաշտպանական կառույցը դիտարկել որպես «խոչըն գործարար կազմակերպություն», որն ամբողջովին հնարավոր է ղեկավարել այնպես, ինչպես բիզնեսի դեպքում: Հարցին հայեցակարգային տեսանկյունից մոտենալու դեպքում սա նշանակում է «պաշտպանության համընդհանուր մենեջմենթի հայեցակարգի» ներմուծում՝ գործառության հատկանիշներով կազմակորված արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների համապատասխան հայեցակարգերի և գործելակերպի հիման վրա:

Հստ էության, քաղաքական, սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական տեսանկյունից «պաշտպանության արտադրանքի» մանրամասն վերլուծությունն օգտակար նախադեպեր չի ապահովում: Պաշտպանության արտադրանք են ոչ միայն գինված ուժերի մարտունակությունը<sup>18</sup>, այլև հանրային և քաղաքական անվտանգության ընկալումը, երկրի միջազգային կարգավիճակը, պետության ընդհանուր բնույթը ու նրա հարաբերություններն այլ պետությունների հետ, ժողովրդավարության և ժողովրդավարական կառավարման հավաքական ընկալումը և այլն: Այս բոլոր տարատեսակ պահանջների կատարումը նախատեսում է պաշտպանական կազմակերպության և նրա գործունեության նկատմամբ համալիր, բայց և տարբերակված մոտեցում: Կարելի է հետևյալ եզրակացությունն անել. թեև ժամանակակից մենեջմենթի տեսություններն ու գործնական մոտեցումները կարող են օգտակար լինել պաշտպանական կառույցների կազմակերպման և դրանց գործունեության գնահատմանն առնչվող ընդհանուր պարզաբանման և ուղենիշների մշակման ընթացքում, մենեջմենթի կոնկրետ մեթոդների կիրառումը պետք է սահմանափակվի քաղաքական ղեկավարման և մարտական գործողությունների կառավարման տիրույթից դուրս գտնվող ոլորտներով, ինչպիսիք են մարդկային ռեսուրսների կառավարումը, ֆինանսների կառավարումը, սպառագինության

<sup>18</sup> Todor Tagarev, “Methodology for Defence and Force Planning,” in *Methodology and Scenarios for Defence Planning* (Sofia: Military Publishing House, 2007): 179-207.

համակարգերի կենսական շրջափուլի մենեջմենթը, նյութական ապահովման և սպասարկման մենեջմենթը, ուղղական օբյեկտների և անշարժ գույքի մենեջմենթը, ինչպես նաև ծրագրերի և ռխսկերի կառավարումը։ Առաջադեմ մենեջմենթի գուգորդված ներդրումը կենսական նշանակություն ունի պաշտպանական համակարգի փոխակերպմանն ուղղված նախաձեռնությունների հաջող իրականացման համար։

## Հանրային վարչարարություն

«Հանրային վարչարարություն» հասկացության հիմնական հատկանիշը կառավարման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունն է։ Հանրահայտ է, որ քաղաքացիական հասարակությունը կարող է գոյություն ունենալ միմիայն ազատական ժողովրդավարական քաղաքական միջավայրում։ Հետևաբար «հանրային վարչարարություն» հասկացության կիրառումը դրա սկզբնական տեսքով հնարավոր է լոկ այն դեպքում, եթե առկա է քաղաքացիական հասարակություն, որը քավականաշավի հասուն է և համախմբված և ունի պետական իշխանության և կառավարման գործընթացի վրա ներգործելու համապատասխան կամք և կարողություն։ Մյուս կողմից հարկ է, որ իշխող ուժը քավականաշավի հասուն լինի և քաջ գիտակցի, որ քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը մեծացնում է պետական իշխանության հզորությունն ու կայունությունը և չի խարարում նրա գործունեությունը։ Այսպես կոչված առաջադեմ մտածողության հիմնադիրներից մեկը՝ Միացյալ Նահանգների 28-րդ նախագահ Վուլֆը Վիլսոնը, առաջադրել է կառավարության կողմից որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների մասնակցության պատշաճ մակարդակի հարցը 1887 թ. գրված և «Վարչարարության ուսումնասիրություն» վերմագրված իր հոդվածում։ Ահա թե ինչպես է նա ձևակերպել խնդիրը։ «Ի՞նչ չափով պետք է հանրային կարծիքը հաշվի առնվի հանրային վարչարարության իրականացման ընթացքում»։ Իր հսկ պատասխանն այսպիսին էր՝ հանրային կարծիքը պետք է հանդիս զա հեղինակավոր, ազդեցիկ քննադատի դերում։ Վիլսոնը կասկածի տակ չէր առնում հանրության վարչախմբի վրա ներգործելու իրավունքը։ Ավելի շուտ, հարց էր դրվում նշված գործընթացներում հանրային մասնակցության ապահովման կոնկրետ եղանակների մասին։

Ժամանակակից սոցիոլոգիայի հիմնադիրը համարվող Մաքս Վեբերը, վերլուծելով վարչական բյուրոկրատիայի դրսուրումները, նկարագրել է կազմակերպական այդ ձևի իդեալական տարրերակը։ Ըստ Վեբերի վարչական համակարգը (բյուրոկրատիան) հիմնված է իրավասության հաստատագրված (ֆիքսված) շրջանակների, պաշտոնեական աստիճանակարգության և լիազորությունների սահմանված մակարդակների սկզբունքների վրա։ Վարչական համակարգի կառուցվածքը պետք է մշտական լինի և ունենա հետևյալ հատկանիշները պաշտոնեական առաջքաշում ըստ վաստակի, ապահով պաշտոնավարում, բրգածն կառուցվածք, համապատասխան լիազորություն-

ներ վերադաս պաշտոններում և հատակ կանոնների համակարգ: Ըստ Վերերի վարչական համակարգում նախատեսվում է, որ անհատն իր աշխատանքի արդյունքներով բրգածն կառույցի ստորին հատվածից աստիճանաբար բարձրանում է դեպի նրա գագար այդ ընթացքում ստանալով լրացուցիչ լիազորություններ և ավելի մեծ վարձատրություն: Բյուրոկրատիայի վերաբերյալ Վերերի տեսությունն այսօր էլ այժմեական է: Այդուհանդերձ, քննադատության է արժանացել նրա «միանձնյա դեկապարնան» հայեցակարգը (բոլոր հրահանգները զալիս են ամենավերևում գտնվող մեկ անձից):<sup>19</sup>

Հայունի գիտնական և գորո Փիթեր Ֆ. Դրուքերը կարծում է, որ հանրային վարչարության հայեցակարգը սերում է մենեջմենթից<sup>20</sup>: Ըստ նրա՝ Մեծ դեպարտամենտաց վրդովմունքն ուղղվեց գործարար շրջանակների այն բոլոր կառավարիչների դեմ, ովքեր չկարողացան հաղթահարել սրբնաց զարգացող արդյունաբերության մարտահրավերները և թույլ տվեցին, որ տեղի ունենա համընդհանուր բացասական հետևանքներ առաջացրած տնտեսական և սոցիալական աղետ: Հանրային կառավարման և ծառայությունների ոլորտի կառավարիչների հանդեպ բացասական վերաբերմունքից խուսափելու նպատակով նրանք տարանջատվեցին վարկարեկված գործարար կառավարիչներից, ինչն արվեց հանրային վարչարության հայեցակարգի ներմուծման միջոցով<sup>21</sup>: Այս նոր ուսմունքի հիմնանպատակներից մեկը եղել է հանրային հատվածի կառավարման հատակ տարբերակումը թե՝ քաղաքական և թե՝ գործարարական պրակտիկայից:

Ըստ Էության, գիտնականներն իրենց ուշադրությունը ավանդաբար սեռում են հանրային վարչարարության այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են կազմակերպման ձևերի դասական տեսությունը, Վիլսոնի նկարագրած «քաղաքականություն» ընդդեմ վարչարարության» հակադրությունը, ֆեդերալիզմը և աշխատակազմի մենեջմենթը: Վերջին շրջանում հանրային վարչարության դաշտն էլ ավելի է ընդլայնվել ընդգրկելով ժամանակակից մի շարք

<sup>19</sup> Ըստ Լյութեր Գուլիքի՝ ենթակայության շրթայի համակարգում ենթակա օրակների կողմից վերահսկվող աշխատանքի բաժանումը մեկն է ավելի մեծ արդյունավետություն ապահովելու եղանակներից: Նա կարծում է, որ «աշխատանքի բաժանումը գործունեության կազմակերպման հիմքն է, կազմակերպման բուն իմաստը»: Զերալդ Գարվին համարում է, որ դասական կազմակերպական տեսության առանցքային հարցը կազմակերպության ներսում լիազորությունների և մասնագիտական գիտելիքների բաշխությունը: Ըստ Էության, ժամանակակից գրականության զգալի մասն անդրադառնում է մի կողմից՝ մեկ առանձին դեկապարի ձեռքբերում լիազորությունները կենտրոնացնելու, իսկ մյուս կողմից՝ այդ լիազորությունների հորիզոնական բաշխման (և դրա հետ կապված ռիսկերի) առավելություններին: Տե՛ս Gerald Garvey, ed., *Public Administration: The Profession and the Practice* (New York, NY: St. Martin's Press, 1997).

<sup>20</sup> Փաստորեն, մարդկաւթյունը հետաքրքրություն է ցուցաբերել այսօր որպես *հանրային վարչարություն* հայտնի ոլորտի նկատմամբ ավելի վաղ, քան կհայտնվեր Պլատոնի «Հանրապետությունը», որում նա անդրադառնում է կառավարման վարչարարական խնդիրներին:

<sup>21</sup> Peter F. Drucker, *Management Challenges for the 21<sup>st</sup> Century* (London: Butterworth-Heinemann, 1999).

թեմաներ՝ քաղաքականության վերլուծություն, տնտեսագիտություն հանրային կառավարիչների համար, շահագրգուման տեսություն, առաջնորդություն, էրիկա, որոշումների կայացման տեսություն, հակասությունների կառավարում, արդյունավետություն և նպատակայնություն, բյուջետավորում, հաշվետվողականություն հանրության առջև և նրա շահերի ներկայացում, միջկառավարական հարաբերություններ և մարդկային ռեսուրսների կառավարում։ Այն փաստը, որ հանրային վարչարարությունը հիմնվում է հոգեբանության, տնտեսագիտության, քաղաքագիտության, կազմակերպման ձևերի տեսության և վարչական իրավունքի կարգի մի շարք տեսությունների վրա, վկայում է հետևյալի մասին՝ «կառավարման միակ և լավագույն եղանակ չկա»։ Ասկածը չի նշանակում, թե հանրային վարչարարությանն առնչվող հարցերն ու պատասխաններն այլևս օրինադիր չեն։ Այսօր դրանք նույնքան կարևոր են, որպան հարյուր տարի առաջ։

Քաղաքացիական հասարակության շահերից ելնելով՝ քաղաքական կառավարման և վարչական մարմինների գործունեության կազմակերպման տարրերակումը հանդիսանում է գալիս որպես հանրային վարչարարության լայնութեան տարածված ժամանակակից հայեցակարգերի և պրակտիկայի հիմնական բաղադրիչ։ Վերջերս լույս տեսած գրքում Էնթոնի Բերտելին և Լորենս Լինն ամփոփում են հանրային վարչարարությանը վերաբերող հիմնական աշխատություններում տեղ գտած փորձն ու տեսական վերլուծությունները և եզրակացնում, որ «դրանք վեր են հանում պրոֆեսիոնալ հիմնավորումների մի գործընթաց, որը հետամուս է ուսումնասիրելու ժողովրդավարական արժեքների փոխկապակցվածությունը, չվերահսկվող, քաղաքականապես կոռումպացված և անպատճախանատու բյուրոկրատիայից բխող վտանգները, օրենսդրական ոլորտի կոռումպացվածությունը, վարչական համակարգի հանրային վերահսկման տպավորության ստեղծումը, ինչպես նաև այն դժվարությունները, որոնք կապված են սահմանադրորեն ընդունելի եղանակով լիազորություններն ու հսկողությունը հավասարակշռելու ունակ օրենսդիր և գործադիր կառույցների ստեղծման հետ»<sup>22</sup>։

«Ղաղաքականություն-վարչարարություն» հակադրումը դրված է հանրային վարչարարության շուրջ հայեցակարգային և տեսական բանավեճի հիմքում։ Այս հակադրման համար ելակետային է այն ըմբռնումը, որ քաղաքականությունն ու վարչարարությունը տարրեր նպատակներ են հետապնդում։ Գոյություն ունի հստակ տարանջատում հասարակության կողմից կառավարումն իրականացնելու լիազորություն ստացած քաղաքական գործիչների և մասնագիտական հիմքով ձևավորված վարչական համակարգի միջև։ Վերջինս, եթե ոչ իրավական, ապա գոնեն գործնական ոլորտում երկակի դերակատարում ունի՝ աջակցել կառավարման մարմիններին դրանց ալարտականությունների կատարման հարցում և, միաժամանակ, պաշտպանել հասա-

<sup>22</sup> Anthony M. Bertelli and Laurence E. Lynn, Jr., *Madison's Managers: Public Administration and the Constitution* (Baltimore, MD: Johns Hopkins University Press, 2006).

րակության շահերը քաղաքական կամայապաշտությունից: Կառավարում իրականացնելու նպատակով ընտրված քաղաքական գործիչների հիմնական նպատակը կապված է գողափարների գեներացման, հանրային նշանակություն ունեցող նպատակների սահմանման և դրանց իրականացումն ապահովող ռեսուրսների, գործունեության և օրենսդրության վերաբերյալ որոշումների կայացման հետ: Հանրային վարչարարների նպատակը կարելի է բնորոշել հետևյալ կերպ՝ ապահովել անկողմնակալ մասնագիտական աջակցություն քաղաքական որոշումների մշակման և իրազործման համար: Տարբերակման այս ընդունումից ենթելով՝ «վարչարարությունը բուն քաղաքականության շրջանակներից դուրս է գտնվում»<sup>23</sup>: Այս երկու անկյունաքարային ոլորտների հարաբերակցության տեսակետից քաղաքական գործիչները պետք է հանրային վարչարարությունը կազմակերպեն և ուղղորդեն առավելագույնս քաղաքական եղանակով ու չափով: Մյուս կողմից՝ վարչական դեկավարները պետք է հանդիս գան որպես իրենց առանձին ոլորտների փորձագետներ՝ պահպանելով իրենց մասնագիտական գործունեության անկողմնակալությունը, քաղաքական ոլորտի ուղղահայց դեկավարման շղթայից սահմանազատված մասնագիտական աստիճանակարգությունը, բայց և գտնվելով քաղաքական հսկողության և դեկավարության ներքո<sup>24</sup>:

Պաշտպանական կառույցներում կիրառվելիս հանրային վարչարարության հայեցակարգը պետք է արտացոլի հետևյալ իրողությունը. քաղաքական և վարչական գործիչների հետ մեկտեղ խաղի մեջ է մտնում նաև պրոֆեսիոնալ գիմփլուսականների կորպուսը: Հենց այս երեք կողմերն են ձևավորում պաշտպանական կազմակերպության «խրոխս եռանկյունին»: Ամենավերելում գտնվող քաղաքական (ընտրովի) առաջնորդների տեղը տրամարանական է թվում, սակայն նույնիսկ դա է կասկածի տակ առնվում, ինչպես վկայում է մի շաբթ երկրների փորձը: Այդ երկրներում կիրառվում է ռազմական կազմակերպության վերին օդակի «պրոտական տեսակը». այստեղ «գլխավոր շտաբը» գտնվում է ուղղակիորեն կամ գոնե ոչ պաշտոնապես պետության դեկավարի, այլ ոչ պաշտպանության նախարարի ենթակայության տակ: Պետական վարչարարության դերակատարումն այս մողելի դեպքում ևս կարող է կասկածի տակ առնվել այն հիմքով, որ ենթադրաբար ոչ թե վարչական համակարգը, այլ հենց գլխավոր շտաբն ունի պաշտպանական ոլորտում անհրաժեշտ մասնագիտական որակավորումներ: Գլխավոր շտաբը շահագրգուված է լինելու քաղաքական գործիչներին պաշտպանական ոլորտին առնչվող խորհրդատվություն ներկայացնող միակ սուբյեկտը և հաշվետու լինելու պետական աստիճանակարգության հնարավորինս քիչ բվով մակարդակներին

<sup>23</sup> Tansu Demir and Ronald C. Nyhan, “The Politics-Administration Dichotomy: An Empirical Search for Correspondence between Theory and Practice,” *Public Administration Review* 68, no. 1 (January–February 2008): 81–96.

<sup>24</sup> Gary Miller, “Above Politics: Credible Commitment and Efficiency in the Design of Public Agencies,” *Journal of Public Administration Research and Theory* 10, no. 2 (2000): 289–328, cited by Tansu Demir and Ronald Nyhan, նույն տեղում:

(առնվազն՝ հաշվետու չինելու պաշտպանության վարչակազմի առջև): Նման գուգահեռականությունն անխուսափելի է անգամ այն դեպքում, եթե պաշտպանության նախարարն ի պաշտոնն վերահսկում է բաձրագույն գինվորական դեկավարությանը: Այս հանգամանքն առաջացնում է բազում խնդիրներ՝ կապված թե՝ քաղաքացիական-գինվորական հարաբերությունների, թե՝ պաշտպանական կառույցի արդյունավետության հետ: Դրանցից առավել կարևորներն են՝

- Քարձրաստիճան գինվորական պաշտոնյաների և պաշտպանության նախարարի գերակայությունների միջև հավասարակշռության հաստատման համար անհրաժեշտ ներքին մեխանիզմների բացակայությունը (համաձայնության չգալու պարագայում վերջնական որոշումը կայացնում է վարչապետը կամ երկրի նախագահը),
- Մասնագիտական փորձագիտության միակ աղբյուր լինելը («ո՞վ է բարձրագույն գինվորական դեկավարությունից ավելի լավ տիրապետում պաշտպանության առնչվող հարցերին») և, ըստ այդմ, այլընտանիքային տեսակետների բացակայությունը,
- Արդյունավետ քաղաքացիական հսկողության սահմանափակ կարողություն (գործնականում միայն անձանք նախարարը կարող է հսկողություն իրականացնել),
- Աշխատողներով գերծանրաբեռնված շտաբները՝ հաճախ միմյանց կրկնող կառույցներով և գործառույթներով,
- Մենեջմենքի արդիական մեթոդների և մոտեցումների կիրառման անհնարինությունը (գլխավոր շտաբը որպես ուսումնական շտաբ է գործում, անգամ եթե զուտ վարչական գործառույթներ է իրականացնում):

Կազմակերպական այլընտրանքային լուծում կարող է լինել այսպես կոչված «պաշտպանության ինտեգրված նախարարության» հայեցակարգի կիրառումը: Այն հիմնվում է հետևյալ ենթադրության վրա. խաղաղության և պատերազմի ժամանակաշրջանում որպես գինված ուժերի ուսումնավարական հրամանատար է հանդես գալիս քաղաքական պաշտոնյան, որպես կանոն՝ երկրի նախագահը և (կամ) պաշտպանության նախարարը, այլ ոչ բարձրաստիճան գինվորականը: Զինվորական բարձրաստիճան դեկավարի դերը կապված է լիազորված քաղաքական գործիչներին նաև ազգային խորհրդատվություն տրամադրելու և գինված ուժերի համակարգում նրանց որոշումների իրագործումը կազմակերպելու հետ, այսինքն՝ այդ դեկավարին անմիջական հրամանատարական լիազորություն չի վերապահված: Այս դեպքում գինվորական շտաբը գործում է որպես «միացյալ շտաբ», և ապահովվում է ներքին հավասարակշռություն երկու բարձրագույն պրոֆեսիոնալ պաշտոնների՝ գլխավոր գինվորական դեկավարի և գլխավոր քաղաքացիական դեկավարի լիազորությունների հավասարեցման միջոցով: Քաղաքացիական և գինվորական դեկավարության տեսակետները չհամընկնելու դեպքում իրավարարի (արքիտրի) դերում հանդես է գալիս պաշտպանության նախարարը:

Քարձրագույն մակարդակի պաշտպանական կազմակերպությունն ինտեգրված կառուցվածք ունի քաղաքացիական և գինվորական աշխատակազմով վարչություններն արտահայտում են միասնական տեսակետներ և ապահովում կոնսենսուսի վրա հիմնված խորհրդատվություն:

Անեն դեպքում, առկա է ընտրված քաղաքական առաջնորդների և պրոֆեսիոնալ քաղաքացիական ու գինվորական վարչարարների միջև տարրերակում մտցնելու հիմնական հարցը՝ արդյոք կարո՞ղ է մասնագիտական անձնակազմը քաղաքական գործիչներին օգնել պաշտպանական քաղաքականության ձևակերպման և իրականացման հարցերում՝ չվտանգելով նպատակայնության սկզբունքի վրա կառուցված իրենց կառավարչական ինքնությունը։ Վարչարարության համակարգի պրոֆեսիոնալ պաշտոնյաները և գինվորական բարձրագույն դեկանալ պարունական և վարչական քաղաքական համակարգում: Դրանք գործում են քաղաքական և վարչական աշխարհների (իսկ պաշտպանության դեպքում՝ գումարած գինվորական հրամանատարության) հատման կետում և բնորոշում են ն' այն, թե ինչպես է ժողովրդավարությունը գործում հօգուտ հանրային շահերի, և՝ պաշտպանության համակարգին հատկացված սահմանափակ ազգային ռեսուրսների պայմաններում պաշտպանական քաղաքականության արդյունավետությունը «պաշտպանության արտադրանքի» ապահովման հարցում։ Զնայած նրան, որ այդ կառավարիչներն ու հրամանատարները ցանկանում են ուղղակի իրենց աշխատանքն անել, նրանք չեն կարող անտեսել այն իրողությունը, որ իրենց դերակատարման բերումով հայտնվում են ուշադրության կենտրոնում։ Մշտապես դիտարկվում են նրանց գործառությունները, պարտականություններն ու նշանակությունն այն ընթացքում, եթե շարունակում են բավարարել էլ ավելի բարդ միջավայրում գործող ընտրված պաշտոնյաների կարիքները<sup>25</sup>:

Քաղաքական և վարչական գործառությունների միջև հակասությունների հանգույցալուծման նպատակով որոշ պետություններ քաղաքական ներկայացնություններ են նշանակում երկրի պաշտպանության նախարարության վարչական կառուցվում։ Որպես կանոն այս պաշտոնները տրվում են պաշտպանական քաղաքականության մշակման և իրականացման համար կարևորագույն նշանակություն ունեցող ստորարաժանումների տնօրեններին կամ պետքին։ Սովորաբար այդ պաշտոնները հստակորեն սահմանված են նորմատիվ փաստաթղթերում։ Դա անհրաժեշտ է անել ժամանակի ընթացքում պաշտպանության վարչարության քաղաքականացման փորձերից խուսափելու նպատակով։ Որոշ դեպքերում իրավական ակտով սահմանվում է, թե նախարարը քանի աշխատակից կարող է նշանակել՝ քաղաքական սկզբունքներից ելնելով։ Մի շարք երկրների կառավարություններ հանգել են այն եզրակա-

<sup>25</sup> Հարցեր, որոնք առաջադրել է Կանգասի համալսարանի հանրային վարչապարության ամբիոնի պրոֆեսոր և քաղաքապետ Ջոն Նայլանդյանը. “Reflections of a ‘Pracademic’ on the Logic of Politics and Administration,” *Public Administration Review* 54, no. 6 (November-December 1994): 531-536.

ցույքանը, որ անհրաժեշտ է ճկում նոտեցում ցուցաբերել, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են միջազգային ռազմական համագործակցույթունը, պաշտպանական քաղաքականությունն ու պահանջորդումը և ուսումների կառավարումը: Քաղաքական սկզբունքների հիմքով նշանակված բոլոր աշխատակիցներն իրենց պաշտոնն ստանձնում են նախարարի հետ միասին և կարող են աշխատանքից ազատվել վերջինիս պաշտոնավարման ավարտին՝ անկախ աշխատանքային իրավունքների հետ կապված խնդիրներից: Ամեն դեպքում, «քաղաքական պաշտոններում նշանակումների» ներմուծումը հստակ օրենսդրական կանոնակարգում է պահանջում:

## Պաջնորդություն

Պաշտպանական կառույցը, թերևս, միակն է բոլոր կառավարական գործակալությունների շարքում, որի արդյունավետությունը որոշակիորեն կախված է նրա դեկավարի առաջնորդական որակներից: Պաշտպանության մենեջմենթի համբողքուն հայեցակարգի մշակմանը պատրաստվելիս շատ կարևոր է հասկանալ մենեջմենթի և առաջնորդության միջև եղած տարրերությունը: Պաշտպանության ոլորտը դեկավարող հզոր և խարիզմատիկ առաջնորդի օգնությամբ հնարավոր է հաղթահարել մենեջմենթի թերացուների զգալի մասը, ինչը հազվադեպ է պատահում շահույթ հետապնդող խոշոր կազմակերպությունների դեպքում: Առաջնորդներն ունակ են վերափոխելու և կազմակերպությունները, և մարդկանց: Ինչպես նշում է Մայքլ Մքորին մենեջմենթն այն գործառույթն է, որը հարկ է իրականացնել ցանկացած գործարար ձեռնարկությունները, մինչդեռ առաջնորդությունը դեկավարի և դեկավարվողների միջև այն փոխհարաբերությունն է, որը կարող է ապահովել կազմակերպության լուրջ ակտիվացում<sup>26</sup>:

Հստ մերկայիս դիրքորոշումների կառավարիչները, ըստ Էության, վարչարարներ են. նրանք ծրագրեր են կազմում, բյուջեներ են մշակում, վերահսկում են կազմակերպության գործունեությունը և գնահատում են առաջընթացը: Յուրաքանչյուր խոշոր կազմակերպությունում մենեջմենթի գործառույթի փաստացի իրականացնողները տարրեր մակարդակներում գործող մի շարք կառավարիչներն են. քնակ անհրաժեշտ չէ, որ բոլոր գործառույթներն իրականացնեն միևնույն մարդկիկ: Ասել է թե կառավարիչների թիմը առավել շափով, քան նրանցից որևէ մեկն անհատապես, չափազանց կարևոր է կազմակերպության հաջողությունն ապահովելու համար: Ավելին որոշ գործառույթներ կարող են իրականացվել ողջ թիմի (վարչության, քամինի, արտադրության ստորաբաժանման) կողմից, մինչդեռ մյուսները հնարավոր է պատվիրակել առանձին կառավարիչներին այդպիսով թիմին հնարավորություն ընձեռելով անելու այն, ինչ առաջնային է համարվում, օրինակ նախագծողների խումբը կարող է վարչարարությունը պատվիրակել որևէ կառավարչի: Այս համատեքստում կառավարիչը հանդես է գալիս որպես առաջնորդ միայն

<sup>26</sup> Michael Maccoby, Understanding the Difference between Management and Leadership, *Research Technology Management* 43, no. 1 (January–February 2000): 57–59.

այն իմաստով, որ մարդիկ պարտավոր են հետևել որոշակի գործառույթին վերաբերող նրա ցուցումներին:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ	ՄԵՆԵԶՄԵՆԹ
Առաջնորդումը համախմբող փոխհարաբերություն է:	Կառավարիչների ղեկավարումը հանգեցվում է սուլ նրանց ցուցումներին հետևելու պարտադրանքին:
Առաջնորդները խանդավառություն և նվիրում են արթնացնում մարդկանց «կազմակերպման» ընթացքում:	Կառավարիչը մարդկանց ղեկավարման գործությունը կարգավորում է կիրառում:
Առաջնորդների մտածելակերպը նորարարական է:	Կառավարիչների մտածելակերպը միտված է ցուցանիշների բարելավմանը:
Առաջնորդները հետևում են իրենց ինտուիցիային, ինչը կարող է ավելի շահեկան լինել պաշտպանական կառույցի համար:	Կառավարիչները գործում են «ըստ կանոնադրության» և հետևում են կառույցի պաշտոնական ընթացակարգերին:
Կազմակերպությունները հաճախ ավելի նվիրված են առաջնորդին, քան կառավարչին:	Եթե նոր առաջնորդը փոփոխությունների օգտին է հանդես գալիս, կարող են ծագել հակասություններ ավանդական կառավարիչների հետ:
Առաջնորդին հետևում են:	Կառավարիչը վերահսկում է:
Առաջնորդը համոզված է, որ կազմակերպությունը կարող է ավելի լավ աշխատել:	Կառավարիչը գիտի, թե ինչպես է գործում կազմակերպության յուրաքանչյուր օղակը:

#### Գծապատկեր 1. Առաջնորդության և մենեզմենթի միջև հիմնական տարրերությունները

Պաշտպանության ոլորտում առաջնորդությունը ռազմավարական նշանակություն ունի: Դրա դերը չի սահմանափակվում ազգային պաշտպանական համակարգի, զինված ուժերի և աշխատակազմի ապագայի ճշմարիտ տեղական կառուցելով, հուսալի ռազմավարություն մշակելով, այդ ռազմավարության իրազործումն ապահովող համարժեք ղեկավարմամբ և կազմակերպությունն անհրաժեշտ ռեսուրսներով համալրելով: Այստեղ կարևոր է նաև ընդունակությունների վերհանումը (այն մարդկանց, ովքեր ունակ են ստանձնելու առանձքային պարտականությունները), արդյունավետ և նորարարական գործունեություն ծավալելու համար այդ անհատների խթանումը, կառավարչական բոլոր գործառույթներն իրականացնելու ընթացքում կազմակերպության առաջնորդումը և, ընդհանրապես, վստահության և համոզվածության մթնոլորտի ձևավորումը:

## Կառավարման օպերատիվ համակարգ

Կառավարման օպերատիվ համակարգը (command and control) գործիք և մեխանիզմ է, որը կոնկրետ արտադրանք կամ արժեք(ներ) է ստեղծում (օրինակ՝ ռազմական գործողության իրականացման համար): Կառավարման օպերատիվ համակարգը նախատեսում է մի շարք սուբյեկտների (անհատների և միավորների) ջանքերի և ռեսուրսների կենտրոնացում այս կամ հանձնարարության, խնդրի կամ նպատակի իրականացման վրա: Այս խնասով՝ կառավարման օպերատիվ համակարգը հայեցակարգային մակարդակում կարող է համարվել մենեջմենթի ևս մեկ հոմանիշ: Նմանությունը տեսանելի է հատկապես այն դեպքում, եթե մենեջմենթը մեկնաբանվում է որոշումների կայացման ընդհանուր գործընթացի առանձին մոդելի միջոցով:

ՆԱՏՕ-ի բառարանում «կառավարում» (command) սահմանված է որպես «զինված ուժերի ղեկավարման, համակարգման և հսկողության համար զինված ուժերի անհատ պաշտոնյային տրված լիազորություններ», որոնց մեջ նկատի են առնվում նաև օպերացիաների անցկացման հետ կապված իրամանների կատարման համապատասխան պարտականություններն ու գործողությունները:<sup>27</sup> Նոյն կարգով՝ ԱՍՄ-ի «Պաշտպանության ղեկարտամենուի ռազմական և հարակից տերմինների բառարանը» սահմանում է «կառավարման օպերատիվ համակարգը» որպես «պատշաճ կարգով նշանակված իրամանատարի կողմից իշխանության գործադրում և նրան վստահված և նրա ենթակայության տակ գտնվող ուժերի ղեկավարում՝ առաջարկված նպատակների իրականացման նպատակով....»<sup>28</sup>:

Այդուհանդերձ, տարբեր երկրների զինված ուժերը կառավարման օպերատիվ համակարգի (C2) գործարկման յուրատեսակ փորձառություն ունեն:<sup>29</sup> Ըստ այդմ ոլորտի մասնագետները խորհուրդ չեն տախս պատճենել ՆԱՏՕ-ի, ԱՍՄ-ի կամ որևէ այլ երկրի ընդունած սահմանումը կամ մոդելը, այլ ուշադրությունը կենտրոնացնել կառավարման օպերատիվ համակարգի նկատմամբ կոնկրետ դիրքորոշման էռույն և ներուժի գնահատման վրա հետամուտ լինելով սեփական երկրի իրողություններին առավելագույն համապատասխանող կառուցվածքի ստեղծմանը: Դեյվիդ Ս. Ալբերթը և Ուշարդ Է. Հեյզը կառավարման օպերատիվ համակարգի վիլյուգիսայությունը հենց այս մոտեցմանը են ներկայացնում:<sup>30</sup> Նրանք այս համակարգը բացատրում են ունիվերսալ կի-

<sup>27</sup> *NATO Glossary of Terms and Definitions*, AAP-6(2008) (NATO Standardization Agency, 1 April 2008).

<sup>28</sup> *Department of Defense Dictionary of Military and Associated Terms*, Joint Publication 1-02 (Washington, D.C.: Joint Chiefs of Staff, 12 April 2001, as amended through 30 May 2008).

<sup>29</sup> Կառավարման օպերատիվ համակարգի ԱՍՄ-ի և այլ հայեցակարգերի ու մոդելների գարզացմամբ հետաքրքրվող ընթերցողները կարող են օգտակար տեղեկություններ քաղել *Command and Control Research Program*-ի վեբկայքից՝ [www.dodccrp.org](http://www.dodccrp.org).

<sup>30</sup> David S. Alberts and Richard E. Hayes, *Understanding Command and Control* (Washington, D.C.: Center for Advanced Concepts and Technology, 2006).

բառության տեսանկյունից և սահմանում են կառավարման օպերատիվ համակարգի հետևյալ կարևորագույն գործառույթները.

- Նպատակադրման սահմանում: Օպերատիվ կառավարման տեսանկյունից՝ նպատակադրումը կարելի է սահմանել որպես «օպերացիայի նպատակի և ցանկալի վերջնական իրավիճակի հակիրճ պատկեր»: Այն կարող է նաև ներառել հրամանատարի կողմից հակառակ կողմի հրամանատարի նպատակադրման գնահատումը, ինչպես նաև այն վերլուծությունը, թե որտեղ և ինչ չափով են ոխսկերն ընդունելի օպերացիայի ընթացքում»<sup>31</sup>: Այս սահմանման մեջ «հրամանատար» հասկացությունը չի սահմանափակվում կառավարման կոնկրետ մակարդակով կամ դրանից բխող հրամանատարի քաղաքացիական կամ զինվորական կարգավիճակով: Համարժեք նպատակադրում ունենալը ինքնին բավարար չէ. հրամանատարը պետք է կարողանա նաև հստակորեն արտահայտել այն, որպեսզի շտարի անձնակազմի և (կամ) մարտական ստորաբաժնումների հրամանատարները լիովին ըմբռնեն և կիսեն նրա դիրքորոշումը: Նպատակադրումը նաև պետք է համապատասխանի ազգային անվտանգության կամ ազգային պաշտպանության ընդհանուր ռազմավարությանը:
- Պարտականությունների, պատասխանատվության և փոխհարաբերությունների սահմանում: Կառավարման օպերատիվ համակարգի մասին ավանդական պատկերացումները ենթադրում են նախապես որոշարկված և մեծ մասամբ հաստատագրված աստիճանակարգային հարաբերությունների առկայություն: Սակայն ո՞չ աստիճանակարգության առկայությունը, ո՞չ էլ հարաբերությունների և նշանակումների հաստատում բնույթը չի կարող անվերապահորեն ընդունվել: Պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերություններն ինքնակազմակերպման արդյունք կարող են լինել, և ժամանակի ընթացքում կամ հանգանակների բերումով հնարավոր է նաև դրանց փոփոխությունը: Պարտականությունների, պատասխանատվության և փոխհարաբերությունների սահմանումն անհրաժեշտ է վարքագծային որոշակի տեսակների սատարման, խթանման կամ սահմանափակման համար: Ցանցակներուն մարտական գործողությունների կարգի ժամանակակից հայեցակարգերում նման վարքագծային տեսակներից մեկն է համագործակցությունը: Դեյվիդ Ալբերտսը և Ռիչարդ Հեյզը նշում են, որ պաշտպանական կառույցի որակի, այսինքն պարտականությունների, պատասխանատվության և փոխհարաբերությունների որոշակի համադրմանը և ըստ անհրաժեշտության՝ դրանց փոփոխմանը առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործառույթներ իրականացնելու կարողության համալիր գնահատումը պետք է հաշվի առնի նաև հետևյալ գործունները՝<sup>1)</sup> պարտականու-

<sup>31</sup>

*Department of Defense Dictionary of Military and Associated Terms.*

թյունների բաշխման ամբողջականությունը (արդյոք սահմանված են բոլոր անհրաժեշտ պարտականություններն ու պատասխանատվությունը), 2) փոխգործողության համար անհրաժեշտ հարաբերությունների առկայությունը, և 3) արդյոք ենթականները գիտե՞ն և հասկանո՞ւմ են, թե իրենցից ինչ է ակնկալվում (իրենց պարտականությունների կատարման իմաստով): Կարևոր է նաև գնահատել այն ողբաները, որտեղ առկա են գործառույթների կրկնօրինակում կամ, հակառակը, բացքողումները<sup>32</sup>:

- Կանոնների և սահմանափակումների հաստատում: Կառավարման օվերատիվ համակարգում պետք է հաստատվեն մի շարք հաստատագրված և փոփոխական կանոններ, նաև սահմանափակումներ: Հաստատում պետք է լինեն այն կանոններն ու սահմանափակումները, որոնք արտացոլում են երկրի պաշտպանական կառույցի յուրահատուկ մշակութային, սոցիալական և վարքագծային ավանդույթներն ու սովորույթները: Մինչդեռ փոփոխական են նրանք, որոնք արտացոլում են պաշտպանական հիմնայինների, միջավայրի, կարողությունների, գաղափարախոսության և ներգրավման կանոնների ճկունության զարգացումը: Ընդունված կանոններն ու սահմանափակումներն ընդունելու, ընդունելու և դրանց հետևելու աստիճանով է պայմանավորված կառավարման օվերատիվ համակարգի որակի կարևորագույն ցուցանիշներից մեկը:
- Իրավիճակի և առաջնքացի մշտադիտարկում և գնահատում: Պաշտպանական գործունեության կազմակերպման սկզբունքներից մեկը կապված է հետազայում՝ պատշաճ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանք կատարելուց հետո, իրականացման ենթակա ծրագրերի նախնական մշակման հետ: Ելակետային պայմանների և նախապատրաստական աշխատանքի ողջ համալիրը կարող է փոփոխվել: Այսպիսով՝ կառավարման օվերատիվ համակարգի անբաժան մասն է փոփոխությունները գնահատելու և համապատասխան ճգրտումներ նոցնելու կարողությունը: Կառավարման օվերատիվ համակարգի նկատմամբ ցանկացած դիրքորոշման պարագայում մշտադիտարկումն ու գնահատումը պետք է վերաբերեն ողջ իրադրությանը, դրա հնարավոր զարգացումներին, ինչպես նաև առաջդրանքների պլանավորման, նախապատրաստման և կատարման ընթանուր գործընթացին:
- Ոգեշնչում, խթանում և վատահության ձևավորում: Որպես կանոն՝ առաջնորդությանն առնչվող այս երեք փոխկապակցված գործառույթները սահմանում են հետևյալը՝ 1) որքանով են առանձին մասնակիցները ցանկանում ներդրում ունենալ ընդհանուր գործին, և 2) ինչպիսին է ձևավորված փոխագործողությունների բնույթը: Մասնակիցների

<sup>32</sup>

Alberts and Hayes, *Understanding Command and Control*, 41.

ոգեշնչման, խթանման կարողության և միմյանց հանդեպ վստահության ձևավորման արդյունքները և աստիճանը, ինչպես նաև արտադրանքի և ծառայությունների ապահովումը կարող են ներազբել տեղեկատվական, ճանաչողական և սոցիալական տիրույթներում տեղի ունեցող գործողությունների վրա: Վստահության օբյեկտները տարբեր են, դրանց շարքում կարող են լինել անհատները, կազմակերպություններն ու տեղեկատվական կենտրոնները, նաև առաջարկվող սարքավորումներն ու համակարգերը<sup>33</sup>:

- **Պատրաստություն և ուսուցում:** Կառավարման ցանկացած օպերատիվ համակարգ պարտադիր պահանջ է առաջադրում ուսուցման և պատրաստության արդյունքում ձեռք բերվող գիտելիքների և հմտությունների վերաբերյալ: Սա, իհարկե, չի նշանակում, որ նորագույն ուսումնական տեխնոլոգիաների ներմուծման դեպքում հարկ է ինժեներական կրթություն ապահովել բոլոր գիննորների համար:
- **Մատակարարում:** Ուսուրաների ապահովումը վճռորոշ է նպատակադրման իրատեսականության և կազմակերպչական միջոցառումների համարթեքության գնահատման համար: Չափ դեպքերում ռեսուրսների տեղաբաշխման և օգտագործման արդյունավետության աստիճանից է կախված, թե արդյոք հաջողությամբ կիրականացվի առաջադրված նպատակը: Ուսուրաների ապահովումը պետք է դիտարկվի ինչպես բուն կազմակերպության և նրա առջև դրված խնդիրների, այնպես էլ կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացումների տեսանկյունից: Պաշտպանական կազմակերպության երկարաժամկետ հեռանկարը կապված է պաշտպանական կարողությունների զարգացման հետ: Մատակարարումն առաջադրված խնդիրների համատեքստում գրեթե միշտ կարճաժամկետ ուղղվածություն ունի և կապված է առկա ռեսուրսների տեղաբաշխման և օպերացիաների կայուն բնույթի ապահովման հետ:

Դեյվիդ Ալբերթը և Ռիչարդ Հեյզը մատնանշում են, որ այս առանցքային գործառությները վերաբերում են ցանկացած պաշտպանական կառույցի կամ առաքելության կառավարման օպերատիվ համակարգին: Այդ գործառությները կարող են իրականացվել շատ տարբեր եղանակներով: Տարբերությունները պայմանավորված են նրանով, թե ինչպես են սահմանված լիազորություններն ու հարաբերությունները, ինչպես են բաշխված որոշումների կայացման իրավունքները, ինչպիսին են համապատասխան գրողներացների բնույթը, տեղեկատվական հոսքերը և իրազեկության տարածման կառուցվածքը: Այս գործառությների իրականացման կարգի որոշարկումը բնութագրում է կառավարման օպերատիվ համակարգի այս կամ այն մոդելի յուրահատկությունը:

<sup>33</sup> Նույն տեղում, 43-44:

## Պաշտպանության մենեջմենթի հայեցակարգի շուրջ

Պաշտպանական կառույցի մենեջմենթի ներդաշնակ հայեցակարգի մշակումը սերտորեն կապված է հետևյալ հարցի հետ՝ որքանո՞վ է յուրահատուկ ազգային պաշտպանության համակարգը, եթե այն համեմատելու լինենք այլ ազգային քաղաքացիական կառույցների հետ։ Այս հարցի տարատեսակ պատասխանները կարելի են գտնել բազում տեսական աշխատություններում և գործնական օրինակներում՝ «միանգամայն եզակի է», «ուարբերվում է միայն որոշ առումներով», «չի տարբերվում»։ Եթե շեշտադրվում է հասարակությունների քաղաքական կազմակերպման ժողովրդավարական ձեր, ապա պատասխանները կախված կլինեն տվյալ հասարակության մեջ ազատականության մակարդակից։ Այս երեք տարբերակները զանազանվում են և ակնհայտորեն, և ներքին բովանդակությամբ։

Սուածին՝ «միանգամայն եզակի է» պատասխանը կարող է նշանակել պաշտպանության ոլորտի լիակատար տարանջատում ազգային քաղաքացիական ծառայության համակարգից՝ նկատի ունենալով իրավական կարգավիճակը, կանոնակարգերը, մարդու և քաղաքացու իրավունքները, ոչ ուսումնական հատվածների կազմակերպումը, ռեսուրսների տեղաբաշխման ընթացակարգերը, քափանցիկությունն ու հաշվետվողականությունը։

Երկրորդ «տարբերվում է միայն որոշ առումներով» տարբերակը նշանակում է, որ տվյալ հասարակությունը և պետությունն ունեն ազգային անվտանգության համընդգրկուն գործիքակազմ, որը որպես համակարգ նախատեսված է քավարաբեկու անվտանգության վերաբերյալ հանրային պահանջարկը։ Հետևաբար պաշտպանության ոլորտը պետք է տարբերակվի քաղաքացիական այլ կառույցներից միայն բացառիկ իրավիճակներում կամ դեպքերում։

Երրորդ «չի տարբերվում» տարբերակը սովորաբար ի հայտ է գալիս հասուն ազատական ժողովրդավարություններում, որտեղ լավ զարգացած հասարակությանը հաջողվել է սահմանել անվտանգության ոլորտի կառույցների օրեկտիվ և սուբյեկտիվ լիարժեք վերահսկողության ու պատասխանատվության մեխանիզմներ։ Հզոր և արդյունավետ քաղաքացիական հակողությունն ապահովում է պետական կառույցների, այդ բվում՝ ազգային պաշտպանության համակարգի հավասար կարգավիճակը։

Թանու Դեմիրը և Ո-ննալ Նիհանն իրենց վերջին ուսումնասիրության մեջ եզրահանգում են, որ քաղաքականության և վարչարարության միջև եղած հակասությունները շարունակում են ներազել հանրային վարչարարության վրա հիմնականում այն պատճառով, որ վարչական դեկավարներից շատերն առաջվա պես հետևում են իրենց լիազորությունների անկողմնակալության սկզբունքներին՝ սեփական անկախությունը քաղաքական միջամտություններից պաշտպանելու նպատակով<sup>34</sup>։ Սա առանձնապես կարևոր է պաշտ-

<sup>34</sup>

Demir and Nyhan, The Politics-Administration Dichotomy: An Empirical Search for

պանության ոլորտում, որտեղ զինված ուժերի տարանջատումը քաղաքականությունից մեծ նշանակություն ունի ոչ միայն բուն կազմակերպության, այլև առավել մեծ չափով՝ հասարակության համար: Անեն դեպքում, ժամանակակից պաշտպանական կառույցի գարզացմանը զուգահեռ, անհրաժեշտ է ուղիներ գտնել բուլացնելու համար այն հարաբերությունների լարվածությունը, որոնք առկա են պաշտպանության երեք հիմնական, իրենց հստակ նպատակներն ունեցող, ֆունկցիոնալ ոլորտների քաղաքականության, վարչարարության և հրամանատարության միջև: Անհրաժեշտ է հստակորեն տարանջատել քաղաքական գործիչների, կառավարիչների և հրամանատարների լիազորություններն ու աշխատանքը միաժամանակ ապահովելով բուն կազմակերպության միասնականությունը և կազմակերպչական բոլոր գործընթացների համակարգումը: Սա լուրջ խնդիր է, և յուրաքանչյուր երկիր յուրովի է լուծում այն՝ ենթելով իր իսկ պատմական ավանդույթներից, սոցիալական գարզացման մակարդակից և վարչարարության մշակույթից:

### **Սոցիալական համակարգերին առնչվող դիրքորոշում**


Պաշտպանության նախարարությունը խոշոր, բարդ կառուցվածք ունեցող կազմակերպություն է՝ անկախ պետության զինված ուժերի մարտական և թվական կազմից: Հարուր Լիվիթն այս կարգի կազմակերպությունները բնորոշում է որպես «փոխկապակցված համակարգերի գործուն համալիր», որը նախատեսված է բարդ գործառույթներ կատարելու համար»<sup>35</sup>: Արդիական պաշտպանական կառույցի էռթյան ընկալումն սկսվում է այն իրողության գիտակցումից, որ ազգային պաշտպանությունը որպես պետության/կառավարության քաղաքական և սոցիալական գործառույթ, իրականացվում է սոցիալական համակարգերի համատեքստում: Անկախ ազգային պաշտպանության ոլորտին առնչվող որոշումների նախագծերի տեղեկատվական և վերլուծական հիմնավորվածությունից դրանց վերջնական տարրերակը հիմնված է լինում արտաքին քաղաքականության նկատառումների, ներքին քաղաքականության, միջկառավարական կապերի, հանրային-մասնավոր հարաբերությունների և անգամ անհատների վարքագծի վրա: Անցյալի գաղափարախոսական և ուսումնակարական դիմակայության ավարտի, ինչպես նաև գլոբալացման ու տեղեկատվության սրընթաց տարածման պայմաններում քաղաքական և սոցիալական միջավայրը շատ արագ և տարրեր ուղղություններով է փոխվում: Ժամանակակից հանրային հարաբերությունները բարդ են, տարաբնույթ և հարափոխիւն: Մերօրյա պաշտպանության մենեջմենթը և բարդ է, տարաբնույթ և հարափոխիւն: Պաշտպանության կառավարման էռթյունը բացատրելու համար օգտակար է այն սահմանել գործառնական տեսամյունից՝ ի՞նչ է այն, ի՞նչ նպատակներ է հետապնդում, և դրանցից ինչ-

Correspondence between Theory and Practice, 81.

<sup>35</sup> Harold J. Leavitt, *Managerial Psychology: An Introduction to Individuals, Pairs, and Groups in Organizations* (Chicago, IL: The University of Chicago Press, 1972), Chapter 24.

պե՞ս են շահում հասարակությունը և հենց ինքը՝ պաշտպանական կազմակերպությունը:

Այս տրամաբանությունից և մենեջմենթի տեսության հիմունքներից ելնելով՝ իմաստ ունի դիտարկել պաշտպանության մենեջմենթի արտաքին և ներքին համատերստերը՝ որպես սոցիալական բնույթի փոխգործակցող համակարգեր<sup>36</sup>: Ակնհայտ է, որ պաշտպանական կառույցը գտնվում է առավել ընդգրկուն սոցիալական համակարգերի շարքում՝ տվյալ երկիրը ներառող միջազգային քաղաքական և ազգային սոցիալական համակարգերում: Երկուսն էլ հստակ, շատ դեպքերում չափազանց տարբեր «ներդրում» ունեն պաշտպանության մենեջմենթում (Գծապատկեր 2)<sup>37</sup>:



## Գծապատկեր 2. Պաշտպանական քաղաքականության առնչվող որոշումների ընդունման համակարգային մոտեցում

Սիրազարյան համակարգն իր ազդեցությունն է ունենում արտաքին սպառնալիքի վերաբերյալ որոշակի պատկերացումների տարածման, դիվանագիտական հնարքների, ռազմական տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև դաշինքների, ժամանակավոր կոալիցիաների ստեղծման և այլ ձեռնարկների միջոցով: Սիրազարյան համակարգը բազմաբնույթ է, և դրա ներսում, որպես կանոն, զգայի հակասություններ կարող են լինել: Այդուհանդերձ, դրա առավել ազդեցիկ անդամներն օգտագործում են իրենց անմիջական կապերը կամ միջազգային նորմերն ու կազմակերպությունները՝ այդ հակասությունները միջուկային, էկոլոգիական, մարդկային կամ առևտրային ոլորտ-

<sup>36</sup> Կարճ ասած՝ սոցիալական համակարգը քաղկացած է երկու կամ ավելի սոցիալապես նշանակալի դերակատարներից, որոնք ընդհանուր նպատակին հասնելու համար տարատեսակ փոխգործողությունների մեջ են մտնում:

<sup>37</sup> Ներկայացված գծապատկերի համար հիմք ծառայած սխեման տե՛ս հետևյալ աշխատության մեջ Richard Norton, “Policy Making and Process: A Guide to Case Analysis,” in *Case Studies in Policy Making*, ed. Hayat Alvi-Aziz and Stephen F. Knott, 11th edition (Newport, RI: Naval War College Press, 2008).

ներում առավելագույնս մեղմելու նպատակով: Ոմանց համար «ժողովրդավարական հանրություն» հասկացությունը կարող է արիեստական բվալ, սակայն այն բացատրում է ընդհանուր արժեքներ և սպառնալիքների ընկալումներ ունեցող, հակամարտությունների կանխման, զսպման և հանգուցալուծման ուղղությամբ ջանքեր գործադրող կառավարությունների քաղաքականությունը (այդ բվում՝ պաշտպանական): Թեև միջազգային համակարգում գերակի նշանակություն ունի պետությունների գործելակերպը, ազգային պաշտպանության քաղաքականության վրա միջազգային ազդեցությունը պայմանավորված է նաև միջազգային անվտանգության և պաշտպանության կազմակերպությունների և սոցիալական (օր. «Ամերիկական բնակչություն», «Գրինվիչ») կամ գործարարական դաշտը ներկայացնող ոչ կառավարական դերակատարների ներգործությամբ:

Ազգային համակարգը սահմանում է պաշտպանական կառույցի դերն ու նպատակները, նրա ռազմավարությունը և կազմակերպական կառուցվածքը, նաև ապահովում է նրան առկա ռեսուրսներով՝ ելեկով հիմնականում անվտանգության/վտանգվածության հանրային ընկալումից: Անվտանգության պակաս մշտապես զգացող հասարակությունները կասկածամիտ, դյուրագրգիռ են և արմատականության դրսերումներ ունեն իրենց սոցիալական և քաղաքական վարքագծում: Ընդհանուր առմանք, նրանք հակված են ավելի մեծ չափով սահմանափակելու քաղաքացիական և ժողովրդավարական ազատությունները, իսկ կանոնակարգման, պաշտպանական բյուջեների և լայնամասշտար վերակազմավորման ու արտակարգ միջոցառումների վերաբերյալ արմատական որոշումները համեմատարար ավելի հեշտ են ընդունվում: Բուն պաշտպանական կառույցը պետք է ունակ լինի հավասարակշռելու այս բոլոր ազդեցությունները օգտագործելով իր փորձագիտական կարողությունները և ապահովելով այնպիսի արտադրյալներ, որոնք կհամապատասխանեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային համակարգերի՝ տվյալ հանգամանքներում դրանց տրամարանականությանը և համարժեքությանն առնչվող ակնկալիքներին: Կազմակերպական կառուցվածքն այս գործնարացում կարևոր նշանակություն ունի, սակայն էլ ավելի վճռորոշ է վարչարարության մշակութի, կազմակերպական վարքագծի և կառույցում աշխատող մարդկանց ազդեցությունը: Այս իմաստով՝ ոչ մի պաշտպանական գերատեսչություն, անգամ հասուն ժողովրդավարական հասարակություններում, նման չէ մեկ ուրիշին: Ավելի կրնկրես պաշտպանության համակարգի այն կառավարիչը, որը չի տեսնում կազմակերպության կանոնակարգերի հետևում կանգնած նարդկանց, կարող է համարվել «ձախողումների ապահովման գործակալ»:

Ասվածն ամփոփելով՝ կարելի է նշել, որ միջազգային և ազգային քաղաքական համակարգերը համալիր, շարունակական ռազմավարական և իրավիճակային ազդեցություն են գործում պաշտպանական քաղաքականությանն առնչվող որոշումների կայացման գործնարացի վրա: Դրանք կարող են դիտարկվել նաև որպես ազգային «պաշտպանության արտադրյալի» «հաճա-

խորդներ»: Պաշտպանական քաղաքականության ձևավորման առումով մեծապես կարևոր են միջազգային անվտանգության միջավայրը, երկրի արտաքին քաղաքականության և անվտանգության նկարագիրը, կառավարության պաշտպանական քաղաքականության իրականացման ընթացքը և այդ քաղաքականության ձևավորման և իրականացման տարբեր մասնակիցների դերակատարումները:

Պաշտպանական կառույցը կարող է դիտարկվել որպես յուրահատուկ սոցիալական համակարգ: Նրան հասուն են ողջ հասարակությանը բնորոշ բոլոր հատկանիշները, ինչպիսիք են, օրինակ, ավանդույթները, մշակույթը, զարգացման դինամիկան, ներքին հարաբերությունները, նաև ամրողատիրությունից դեպի ժողովրդավարություն անցնելու հետ կապված քաղաքական փոխակերպման առանձնահատկությունները: Պաշտպանական կառույցը ստեղծում են մարդիկ՝ եկեղեց իրենց յուրահատուկ մշակույթից, շահերից և գերակայություններից, որոնք տարբեր են ոչ միայն տարբեր երկրներում, այլև որոշակի «պատմական պահի», անհատական ծրագրերի կամ նպատակների բերումով<sup>38</sup>:

Պաշտպանական կազմակերպությունն ունի յուրահատուկ կառուցվածք և գործում է (շատ դեպքերում) եզակի նորմերի, կանոնակարգերի և ընթացակարգերի հիման վրա՝ հասարակության կողմից տրամադրվող ֆինանսական, նյութական, մարդկային և տեղեկատվական ռեսուրսները «պաշտպանության արտադրյալի» փոխակերպելու նպատակով: Այս ամենը կազմում է պաշտպանության մենեջմենթի ներքին համատեքստը: Դրա առանձնահատկությունն այն է, որ պաշտպանությանն առնչվող առավել կարևոր որոշումների կայացումը չի սահմանափակվում պաշտպանության նախարարության կամ նույնիսկ կառավարության շրջանակներով:

Երկրի դեկավարը և, հատկապես, իշխանության օրենսդիր ճյուղը որոշակի դեր են խաղում, որը շատ դեպքերում արտացոլում է ոչ միայն պաշտպանությանն առնչվող խնդիրների տրամաբանությունը, այլև երկրի քաղաքական իշխանության քաշխման պատկերը և հավասարակշռվածությունը: Այս բոլորը ներկայացնում են պաշտպանության ոլորտի մենեջմենթի առանձնահատկությունը՝ նրա հիմքում ընկած քաղաքացիական-զինվորական դերակատարություն ունեն պաշտպանության մենեջմենթում, և հենց այդ հանգամանքով է պայմանավորվում պաշտպանության համակարգի տարբերությունը ցանկացած այլ պետական կառույցից:

Քաղաքական իշխանության ազգային կենտրոնների շահերի ձևակերպումը, ռազմավարական հավասարակշռությունը և պաշտպանությունն ամրողացնվի մտնում են քաղաքացիական առաջնորդների պարտականությունների ցանկացած այլ պետական կառույցից:


<sup>38</sup> Thomas C. Bruneau, *Ministries of Defense and Democratic Civil-Military Relations*, Faculty research papers (Monterey, CA: Center for Civil-Military Relations, Naval Postgraduate School, 2001).

մեջ, իսկ որպես իրականացնողներ հանդես են գալիս զինվորականները: Սա որոշակիորեն հող է ստեղծում դիմակայության համար: Նման դիմակայությունը մշտապես առկա է և «քննական» է համարվում ժողովրդավարական հասարակության մեջ, և հենց դրա հաղթահարմանն է ծառայեցվում պաշտպանության համակարգի կառավարումը առաջնորդության կարողությունների և մենեջմենթի հմտությունների գործադրմամբ: Այստեղ հարկ է հասուն շեշտել, որ միայն այս համատեքստում ազգային պաշտպանության համակարգի կառավարման համար գույտ գործարարական մենեջմենթի պրակտիկայի կիրառումը հանգեցնում է ճախողումների: Նույն ճակատազրիմ են արժանանում նաև պլանավորման և բյուջետավորման ամբողջովին բյուրոկրատացված ընթացակարգերի կիրառման նախաձեռնությունները, որոնք անտեսում են գործարարության ղլորտում մենեջմենթի նորարարական ձեռքբերումները:

Մի խոսքով՝ պաշտպանական քաղաքականության ձևակորման վրա առավել կարևոր ներքին ազդեցություն են գործում պաշտպանական կառույցն իր մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսներով, ազգային ռազմական զաղափարախոսությունը և քաղաքացիական-զինվորական հարաբերությունների հասունության աստիճանը:

### **Պաշտպանության մենեջմենթի համընդիանուր համատեքստ**

Պաշտպանության մենեջմենթը որպես պաշտպանական կառույցի ձևակորման ռացիոնալ գործիք օգտագործելու նպատակով հարկ է, որ քարեվոխման կամ փոխակերպման գործընթացները հիմնված լինեն հետևյալ ընթունման վրա. այդ գործընթացների բոլոր մասնակիցները՝ քաղաքական գործիչները, կառավարիչները և հրամանատարները, գործում են յուրահատուկ արտաքին և ներքին համատեքստերում: Կարևոր է, որ քաղաքական գործիչները, կառավարիչները և հրամանատարները ճիշտ ընթունեն, թե ինչպես են այդ համատեքստային առանձնահատկությունները ներգործում պաշտպանական կառույցի զարգացման և նրա գործունեության վրա: Պաշտպանական քաղաքականության ձևակորման, իրականացման և գնահատման ողջ ընթացքը բնորոշում է պաշտպանական կառույցի արտաքին և ներքին համատեքստերի ամբողջականությունը (Գծապատկեր 3):



**Գ-ԺԱՊԱՏԿԵՐ 3. Պաշտպանության մենեջմենթի ներքին և արտաքին համատեքստ**

Սոցիալական համատեքստում պաշտպանության համակարգի արտադրյալը («պրոդուկտը»), որպես կանոն, անվտանգության և պաշտպանության ուժության ուժության մարտունակության վերաբերյալ հանրային և սոցիալական ընկալումն է, որը կարող է օգտագործվել կառավարության կողմից տարրեր եղանակներով և նպատակներով: «Պաշտպանության արտադրյալի» գնահատումը մենեցմենքի յուրահատուկ խնդիրներից է: Բազմաթիվ շահագործությունների առկայությունը նախատեսում է գնահատման տարատեսակ մոտեցումներ. այն, ինչ ընդունելի է պաշտպանության նախարարի կողմից, կարող է շրավարաբել զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների պահանջները, այն, ինչ գոհացնում է զինվորականությանը, գուցեն ընդունելի չինի հասարակության համար, և այլն:

Բիզնեսի մենքմենքի տեսանկյունից՝ պաշտպանության «արտադրանք» գնահատումը բարդանում է նաև «մրցակիցների» կամ «շուկայական փորձարկման» բացակայության պատճառով։ Այդպես է նույնիսկ ծառայությունների ռազմական համակարգի ներսում։ Այն փաստը, որ յուրաքանչյուր ռազմական ծառայություն՝ ցանքային զորքերը, ռազմածովային նավատորմը կամ ռազմաօդային ուժերը, ունի իր առանձնահատուկ կարողությունները, գաղափարախոսությունը, մշակույթը և ավանդույթները, դիմակայության և մեկ առիթ է ստեղծում, և առաջնորդները պետք է այն հարթելու ուղիներ գտնեն իմնականում մենքմենքի մերժարանության կիրառման միջոցով։ Ավելի լայն համատեքստում կազմակերպության արտադրյալների և միջազ-

գային արտադրյալների միջև հավակնութ հարաբերությունների բերումով բարդանում է ազգային անվտանգության օգտին անվտանգության ոլորտի գործակալությունների ներդրման բնութագրումը: Սա մի ոլորտ է, որտեղ ընկալումներն ու գաղափարախոսությունը կարող են նույնքան կարևոր լինել, որքան փաստացի տվյալները, արտադրյալների գնահատումը բարդանում է սոցիալական, քաղաքական, միջազգային և հոգեբանական գործոնների բերումով:

## Եզրակացություն

Պաշտպանության մենեջմենքն ունի գործուն մեթոդների և գործիքների հարուստ գինանց, որը, ի թիվս այլոց, ներառում է գործառնական, համակարգային և կառուցվածքային վերլուծություններ, պլանավորում և ծրագրերի մշակում, ծրագրերի կառավարում, մոդելավորում և վերարտադրում, այլընտրանքային մոտեցումների ձևավորում, գործունեության և նրա կատարողական ցուցանիշների բարեկավման գնահատում, ռիսկերի գնահատում, որոնք գործադրվում են պաշտպանական քաղաքականության ձևավորման և իրականացման տարբեր ոլորտներում: Այն հանդես է գալիս որպես պաշտպանական համակարգի փոխակերպմանն ուղղված աշխատանքի արդյունավետությունն ապահովող գլխավոր գործիք:

Այսպիսով՝ այս գլխում վերլուծության ենթարկվեցին կառավարման, մենեջմենքի, վարչարարության, առաջնորդության և հրամանատարության միջև եղած հայեցակարգային տարրերությունները, ինչպես նաև բոլոր մյուս պետական կառույցների և գործարարական կազմակերպությունների շարքում պաշտպանական կազմակերպության մենեջմենքն առանձնահատուկ դարձնելու առումով քաղաքացիական և զինվորական հարաբերությունների դերը: Այս գլխում առաջարկված է պաշտպանության մենեջմենքի մանրակրկիտ ուսումնասիրությունների, ինչպես նաև պաշտպանության մենեջմենքի որոշակի մեխանիզմների և ընդհանրապես՝ պաշտպանական կառույցի կատարելագործման ուղիների քննարկման պատշաճ համատեքստ:

Հաջորդ գլուխներում ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում պաշտպանության մենեջմենքի մի շարք թեմաների մանրամասն ուսումնասիրությունը:

## Գլուխ 2

# Պաշտպանության պլանավորում. պաշտպանության մեջեցմենքի առանցքային գործընթացներ

## Տողոր Տազարն

### Ներածություն

Գործընկեր Երկրների, ինչպես նաև ՆԱՏՕ-ին վերջերս անդամագրված երկրների խորհրդարաններից և պաշտպանության կառույցներից շատերը հիմա էլ ստիպված են գործ ունենալ որոշակի խնդիրների հետ կապված «պաշտպանական քաղաքականություն» հասկացության, քաղաքականության և պլանավորման միջև հարաբերությունների, պաշտպանական կարողությունների հայեցակարգի, պլանավորման և բյուջետավորման փոխկապվածության, զինուժի զարգացման և տեխնոլոգիական արդիականացման կապի և հանրային հնչեղություն ունեցող և ծախսատար այլ հարցերի հետ։ Թերևս դա զարմանալի չէ, քանի որ ի տարբերություն ՆԱՏՕ-ի՝ Վարչավյան պայմանագրին միացած երկրներում պաշտպանական քաղաքականության մշակումն ու պլանավորումն ամբողջովին կենտրոնացված էին։ Վարչավյան պայմանագրի երկրները, բացառությամբ Ռուսաստանի, պաշտպանական քաղաքականության ու պլանավորմանը վերաբերող շատ սահմանափակ գիտելիքներ և փորձառություն ունեին կամ չունեին ընդհանրապես։

Բացի այդ, 1990-ականներին նախկին Վարչավյան պայմանագրի և ԽՍՀՄ երկրների պաշտպանական կազմակերպությունները դեռևս ոչ հասուն և, ընդհանուր առմամբ, թույլ ժողովրդավարական ինստիտուտների մի փոքր մասն էին կազմում։ Անզամ անկում ապրող տնտեսությունների ազդեցության տակ գտնվելով և ակնհայտ թշնամու բացակայության պայմաններում՝ քաղաքական և զինվորական բարձրաստիճան դեկավարները նախընտրելի էին համարում

մակերեսային փոփոխությունները՝ հավատարիմ մնալով ժառանգված ուժային կառույցներին և զինուժի զարգացման մոդելներին։ Նման գործելակերպի արդյունքներից մեկն այն էր, որ ՆԱՏՕ-ին անդամագրվելու ժամանակ նոր անդամներից շատ քերը հնարավորություն ունեին փոքրիշատե նշանակալի ներդրում ապահովելու Դաշինքի կարողությունների ընդլայնման իմաստով<sup>39</sup>։

Վերոնշյալը հաշվի առնելով այս գլխում քննարկվում է պաշտպանական քաղաքականության հասկացությունը և պաշտպանության ժողովրդավարական կառավարման համար երկարաժամկետ պլանավորման և զինուժի զարգացման ծրագրերի բափանցիկության կարևորությունը։ Այնուհետև վերլուծվում են ժամանակային տարրեր կտրվածքով կատարվող պլանավորումը և համապատասխան գործընթացների փոխկապվածությունը այդպիսով հիմնավորելով, թե ինչու և ինչպես է պաշտպանության պլանավորումը դառնում պաշտպանության մենեջմենթի առանցքային գործընթացներից մեկը։ Երրորդ այս գլոխիր հակիրճ ներկայացնում է պաշտպանության պլանավորման հնարավոր այլընտրանքային մոտեցումները։ Չորրորդ մասն անդրադառնում է պաշտպանական քաղաքականության նպատակների և զինուժի կառուցվածքի փոխկապակցման շրջանակային մոդելին և ներկայացնում է ռիսկերի պլանավորման նշանակությունը։ Եզրափակիչ մասում տեղ է գտել ազգային պաշտպանության ոլորտում պլանավորման գործընթացի համատեքստի հակիրճ նկարագիրը։ Լս մեկ անգամ շեշտադրվում է պաշտպանական կազմակերպության ժողովրդավարական հաշվետվողականության, արդյունավետության և նպատակայնության հետ կապված որոշումների կայացման բափանցիկության կարևորությունը։

Այս գլխում արձարձիղ հարցերը կարևոր են ոչ միայն ՆԱՏՕ-ին անդամակցության ձգտող և արդեն անդամագրված գործընկեր երկրների համար։ Կարծում ենք, որ պաշտպանության ժողովրդավարական կառավարման դժվարին ուղին բռնած ցանկացած երկրի քաղաքացիական և զինվորական փորձագետներին ևս օգտակար կիրակի մի կողմից անվտանգության ոլորտում առկա մարտահրավերների և պաշտպանության պլանավորման քաղաքականության նպատակների, իսկ մյուս կողմից պաշտպանության պլանավորման և ռեսուրսների կառավարման մեխանիզմների միջև եղած փոխկապակցվածության մասին ավելի լավ պատկերացում կազմելը։ Պատճառներից մեկը, օրինակ, այն է, որ պաշտպանության այս կամ այն նախարարությունում «կատարյալ» հաշվապահական համակարգի և բափանցիկ ֆինանսական ընթացակարգերի գործարկումն իրականում նշանակություն չունի, եթե այն շարունակում է զարգացնել մի ուժային կառույց, որը չի համապատասխանում երկրի անվտանգությանն առնչվող իրադրությանը, նրա քաղաքական նպատակներին և ռազմավարությանը։

<sup>39</sup> Տե՛ս, օրինակ, Jeffrey Simon, “The New NATO Members: Will They Contribute?” Strategic Forum 160 (Washington, D.C.: National Defense University, April 1999), <http://handle.dtic.mil/100.2/ADA394521>.

## Պաշտպանության պլանավորում՝ պաշտպանական քաղաքականության անբաժան մաս

Ոչ ՆԱՏՕ-ի *Տերմինների և սահմանումների բառարանում*<sup>40</sup> և ոչ էլ Պաշտպանության դեպարտամենտի ուսումնական և հարակից տերմինների բառարանում<sup>41</sup> չի առաջարկվում «պաշտպանական քաղաքականություն» հասկացության սահմանումը: Պաշտպանության դեպարտամենտի բառարանում ազգային քաղաքականությունը սահմանված է որպես «պետության առջև դրված նպատակների իրագործմանն ուղղված միջոցառումների և ուղենիշների համալիր ծրագիր՝ ընդունված կառավարության կողմից ազգային մակարդակում»:

Քաղաքականության (քաղաքական գծի իմաստով) լայնորեն տարածված սահմանումների շարքում Ուեբստերի բառարանում տեղ գտած հետևյալ երկու սահմանումներն են, որ առավել ընդունելի են մեր հյութը քննարկելիս.

1. Ներկայում կամ ապագայում որոշումների ուղղորդմանն ու որոշարկմանն ուղղված գործողությունների որոշակի կորս կամ մեթոդ, որն ընտրված է առկա այլընտրանքային տարրերակների թվից և ելնելով գոյություն ունեցող իրադրությունից:
2. Բարձր մակարդակի համընդիմանուր ծրագիր, որն ընդգրկում է ընդհանուր նպատակներն ու ընդունելի ընթացակարգերը հատկապես պետական կառավարման տիրույթում<sup>42</sup>:

Պաշտպանական քաղաքականությանն առնչվող քննարկման համար պատշաճ ելակետն է հետևյալ պարզաբանումը՝ այդ հասկացությունը բազմակողմանիորեն ներառում է վերջնանպատակը (ի՞նչ է պետք իրագործել), ուղիները (ինչպե՞ս ենք նոտադիր գործել) և միջոցները (ի՞նչ պետք է ունենամք, որ հասնենք վերջնանպատակին):

Պաշտպանական և ուսումնական հարցերի համատեքստում առկա երկու կոնկրետ խնդիրներ բնորոշում են

1. թե ինչպես կարելի է օգտագործել առկա միջոցներն ընտրված վերջնանպատակին հասնելու համար, օրինակ՝ երկրի դեմ ուղղված ուսումնական ուսնականության պարագայում, և
2. այն միջոցները, որոնք զինված ուժերին բոլոր կուտան արդյունավետունը պիմականական հարաբերականության մարտահրավերներին:

Սուսաջին խնդիրը ներառում է ուսումնական և օպերատիվ պլանավորու-

<sup>40</sup> *NATO Glossary of Terms and Definitions*, NATO Standardization Agreement AAP-6 (approved up to April 2008), [www.nato.int/docu/stanag/aap006/aap-6-2008.pdf](http://www.nato.int/docu/stanag/aap006/aap-6-2008.pdf).

<sup>41</sup> *Department of Defense Dictionary of Military and Associated Terms*, Joint Publication 1-02 (Washington, D.C.: Department of Defense, 12 April 2001, as amended through 30 May 2008), [www.dtic.mil/doctrine/jel/new\\_pubs/jp1\\_02.pdf](http://www.dtic.mil/doctrine/jel/new_pubs/jp1_02.pdf).

<sup>42</sup> *Webster's Ninth New Collegiate Dictionary* (Springfield, Mass.: Merriam Webster Inc., 1991). Emphasis added.

մը (ինչպես ընդհանուր, այնպես էլ արտակարգ իրավիճակներում), ինչպես նաև մարտական իրավիճակում զորքերի ղեկավարումը: Այն հաճախ բնորոշվում է «զինուժի կիրառում» արտահայտությամբ: Երկրորդը պաշտպանական քաղաքականության հիմնական խնդիրն է, և հենց դրան է անդրադառնում այս գլուխը:

Քազմաթիվ ընթերցողների համար ակնհայտ լինելով հանդերձ այն դրույթը, որ պաշտպանական քաղաքականությունն ընդգրկում է և վերջնապատակի, և՝ դրան հասնելու միջոցների սահմանումը, ոչ միշտ է հետորդն ընկալվում և ընդունվում, մասնավորապես՝ հետխորհրդային երկրներում: Պատճառներից մեկը կապված է լեզվի հետ<sup>43</sup>: Մի շարք լեզուներում կա ընդամենը մեկ բառ «քաղաքականություն» (*politica*), որը գործածվում է թե՝ «գործողությունների հաստատված կուրս» (*policy*), թե՝ «քաղաքական գործունեություն» (*politics*) հմաստով և սերտորեն կապված է «քաղաքական» ենթատերսուի հետ<sup>44</sup>: Հետևաբար տարածված է այն ընկալումը, թե պաշտպանական քաղաքականությունը (հայեցակարգը) քաղաքական գործիչների ոլորտին է վերաբերում, մինչդեռ այս հասկացությունը ներ իմաստով ընկալվում է որպես վերջնանապատակի իրագործմանը ծառայող որոշումներ, այսինքն՝ որպես այն նպատակների սահմանում, որոնք պետք է իրագործեն զինված ուժերը:

Մյուս կողմից՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ ընդհանուր առնամբ հետամբողջատիրական երկրների քաղաքական գործիչներն ու նրանց քաղաքացիական աշխատակիցները բավականին սուր գիտելիքներ ունեն ռազմական ոլորտի գործունեության մասին, հաճախ որպես հիմք է ընդունվում այն կարծիքը, որ պահանջնությունները սահմանելու, թե ինչպիսին պետք է լինեն զինված ուժերը, որպեսզի հնարավոր լինի իրագործել նախատեսված գործիչների որոշմանք, ընկալվում է նաև որպես «քաղաքականության իրականացում»): Այսպես, ըստ խորհրդային տերմինարանության, այդ գործընթացը նույնացվում է զինված ուժերի «կառուցման» հետ: Հետխորհրդային երկրներում պաշտպանական քաղաքականության հասկացությունը հաճախ ներկայացվում է որպես «ռազմական քաղաքականություն»:


Պաշտպանության պլանավորման, մասնավորապես՝ պաշտպանության երկարաժամկետ պլանավորման նպատակը հետևյալն է՝ որոշարկել այն միջոցները, ներառյալ զինված ուժերի ապագա կառուցվածքը (ԶՈՒԿ), որոնք պաշտպանական կառույցներին թույլ կտան արդյունավետորեն դիմակայել

<sup>43</sup> Անշուշտ, սա ամենակարսոր պատճառը չէ: Ի թիվս այլոց՝ քաղաքացիական փորձագետների պակասը, քաղաքացիական զինվորական հարաբերությունների ավանդաբար հաստատված և գերիշխող մողելները և զաղտնիության ավանդույթը ևս նպաստում են պաշտպանական հայեցակարգերի, պլանավորման և կոնկրետ ծրագրերի անթափանցությանն ու անարդյունավետությանը: Տե՛ս և Daniel Nelson, “Beyond Defense Planning,” in *Transparency in Defence Policy, Military Budgeting and Procurement*, ed. Todor Tagarev (Sofia: Geneva Centre for DCAF and George C. Marshall-Bulgaria, 2002).

<sup>44</sup> Օրինակ՝ պլանական և ռումանական լեզուներում:

ապագայում հնարավոր մարտահրավերներին: Այսպիսով՝ պաշտպանության երկարաժամկետ պլանավորումը պետք է դիտարկել որպես պաշտպանական բաղադրականության անբաժան բաղադրիչ:

Չինված ուժերը և նրանց յուրահատուկ կարողություններն ի զորու են կարևոր դերակատարում ունենալու պաշտպանական քաղաքականության նպատակների իրականացման գործում: Բացի այդ, պաշտպանության պլանավորումը ներառում է սպառազինության պլանավորումը, լոգիստիկան (տեխնիկական ապահովումը), կառավարումը, հսկողությունը և կապի միջոցները (C3), ռեսուրսների պլանավորումը, քաղաքացիական-զինվորական պլանավորումն արտակարգ իրավիճակների համար և, որոշ դեպքերում, միջուկային պլանավորումը<sup>45</sup>: Այս «ալլանավորման ոլորտներից» մի քանիսը կապված են զինված ուժերի մարտունակության առանձնահատուկ բաղադրիչների հետ: Հետևաբար, զինուժի պլանավորումը դիտվում է որպես պաշտպանության պլանավորման առանցքային գործընթաց, որը ներդաշնակեցնում է պլանավորման բոլոր մյուս ոլորտները (Գծապատկեր 1)<sup>46</sup>:



#### **Գծապատկեր 1. Պաշտպանության պլանավորման հիմնական բաղադրիչներ**

<sup>45</sup> Պլանավորման այս առանձին ասպեկտներն ավանդական են ՆԱՏՕ-ի համար: Գոյություն ունեն նաև մի շարք այլ հարակից ճյուղեր, որոնք սերտորեն կապված են պաշտպանության պլանավորման գործընթացի հետ հակաօդային պաշտպանության պլանավորում, ստանդարտացում, հետախուզություն, օպերացիաների պլանավորում և զինուժի հավաքագրման պլանավորում: See u “The Defence Planning Process: What Does It Mean in Practice?” (updated 15 June 2007), [www.nato.int/issues/dpp/practice.html](http://www.nato.int/issues/dpp/practice.html).

<sup>46</sup> *NATO Consultation, Command and Control Agency – Overview, Presentation (October 2004).*

Այս գլխի հաջորդ հատվածում բացատրվում է, թե ինչո՞ւ է պաշտպանության պլանավորումը համարվում պաշտպանության մենեջմենթի առանցքային գործընթաց, և ինչպես է այն ծառայեցվում պաշտպանության մենեջմենթի բոլոր մյուս գործառույթների ուղղորդմանը:

## **Պաշտպանության պլանավորման ժամանակային ասպեկտներ**

Պաշտպանության մենեջմենթի կայացած համակարգերի մեծ մասում կարելի է առանձնացնել պլանավորման երեք ժամանակային ասպեկտներ՝ դրանց համապատասխան գործընթացների հետ միասին:

- Երկարաժամկետ պլանավորում,
- Միջնաժամկետ պլանավորում, հաճախ բնութագրվում է որպես ծրագրավորում,
- Կարճաժամկետ պլանավորում:

Պաշտպանության երկարաժամկետ պլանավորման դեպքում պլանավորման համապատասխան բաժինները վերլուծում են անվտանգության միջավայրի զարգացման միտումները, այդ թվում՝ ռիսկերն ու նարտահրավերները, դաշինքների դերն ու դրանց քաղաքականությունը, ինչպես նաև անվտանգության ու պաշտպանության առնչվող ռազմավարությունները: Այս միտումների վերլուծության հիմնան վրա պլանավորում իրականացնողները ձգուում են կանխատեսելու պաշտպանության համակարգի կարիքները: Նրանք գնահատում են տեխնոլոգիաների զարգացման ուղղությունները և նորագույն տեխնոլոգիաների հնարավոր դերակատարությունը զինված ուժերի օգտագործման արդիական մոտեցումներում<sup>47</sup>: Այդ հիմքով նրանք սահմանում են զինուժի ապագա կառուցվածքը և նրա հիմնական հատկանիշները (օր.՝ ռազմական ջոկերի և գումարտակների, ռազմաօդային էսկադրաների և ռազմածովային նավախմբերի թվաքանակը): Զինված ուժերի այս կառուցվածքը երբեմն սահմանվում է որպես «հեռանկարային», սակայն ֆրանչիայում, օրինակ, կիրառվում է զինված ուժերի «մողել» եզրույթը ապագայի որոշակի տարրա համար:

Որպես կանոն՝ պլանավորում իրականացնողները պետք է նաև սահմանեն զինված ուժերի ներկայիս կառուցվածքից ապագայում նախատեսվող կառուցվածքին անցում կատարելու հիմնական քայլերը: Ինչպես զինված ուժերի ապագա կառուցվածքը, այնպես էլ դրան անցնելու գործընթացը պետք է

<sup>47</sup> Սա հայտնի է նաև որպես «օպերացիաների հայեցակարգեր»: Օրինակ՝ զիտնականների և պրակտիկ աշխատողների ուշադրությունն այսօր սկսված է երկու նոր՝ «օպերացիաների նկատմամբ արդյունքահեն մոտեցում» և «ցանցակենտրոն օպերացիաներ» հայեցակարգերի վրա: Մանրամասն տվյալները տես Edward A. Smith, *Complexity, Networking, and Effects-Based Approaches to Operations* (Washington, D.C.: Center for Advanced Concepts and Technology, 2006), [www.dodccrp.org/files/Smith\\_Complexity.pdf](http://www.dodccrp.org/files/Smith_Complexity.pdf) կայքէջում և համապատասխան հղումներում:

իրատեսական լինեն, այսինքն՝ որոշում կայացնողներն ու պլանավորողները պետք է լիովին վստահ լինեն, որ հնարավոր կինի զինված ուժերի կառուցվածքն ու անցումային փուլն անխափանորեն իրականացնել ակնկալվող ֆինանսական, տեխնոլոգիական, ժողովրդագրական և այլ կարևորագույն սահմանափակումների պայմաններում:

Այս դեպքում «Երկարաժամկետ» ասելով՝ հասկացվում է, որ պլանավորման ժամանակային ծածկույթը գերազանցում է զինուժի ապագա կառուցվածքի կարողությունների զարգացման համար անհրաժեշտ ժամանակը: Սովորաբար նկատի է առնվտում տասից տասնինգ տարվա ժամանակահատվածը, հատկապես այն դեպքերում, երբ երկիրը նպատակ ունի ձեռք բերելու սպառազինման «պատրաստի» համակարգեր, այսինքն՝ այնպիսիք, որոնք մշակվել են մեկ որիշի կողմից և հասանելի են շուկայում<sup>48</sup>:

Մի շարք երկրներ փորձում են ավելի հեռու նայել և էլ ավելի երկար ժամանակամիջոցների պլանավորում են ապահովում: Որպես կանոն ավելի լայն ժամանակային ծածկույթ է կիրառվում,

ա) երբ քաղաքականություն մշակողներն ու պլանավորողներն ուսումնասիրում են արտաքին քաղաքականության և անվտանգության ռազմավարությունները, օրինակ՝ փորձելով վերլուծել, թե 2050 թ.-ին աշխարհն ինչպիսին է լինելու, նաև երբ խոսքը դաշինքների, հարևանների և այլ երկրների հետ հարաբերությունների ձևավորման մասին է և այլն, և (կամ)

բ) երբ տվյալ երկիրը տեխնոլոգիական բարձր հավակնություններ ունի և ցանկանում է հանդես գալ որպես նոր, հեռանկարային տեխնոլոգիաների (որոնք 25 կամ 30 տարի անց կվերածվեն սպառազինության նոր համակարգերի) զարգացման առաջատար<sup>49</sup>:

Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար կարելի է զինված ուժերի կառուցվածքի պատկերը ներկայացնել ըստ դրա ապագա պարամետրերի կամ ժամանակային տարածության մեջ: Պոտենցիալ պարամետրերի բվում են՝ կարողությունների մակարդակները, որոշակի տեսակի զինվորական ստորաբաժանումների քանակը, անձնակազմի թվաքանակը, սպառազինության իիմնական համակարգերը, պատրաստության մակարդակները, զինամքերի, պահեստամասերի և վառելիքի ու քանայութերի պաշարները և այլն: Այս դեպքում զինված ուժերի զարգացումը հնարավոր կլինի ներկայացնել որպես հետազիծ:


Զինված ուժերի ապագա մոդելը, որը Գծապատկեր 2-ում ներկայացված օրինակում վերմագրված է «ԶՈՒ 2020 թ.», սահմանում է պարամետրերի տա-

<sup>48</sup> Անհրաժեշտ չէ, որ սպառազինման այս համակարգերը փաստացի տեղակայված լինեն տվյալ երկրի զինված ուժերում երկարաժամկետ պլանավորման իրականացման ժամանակ, սակայն ենթադրվում է, որ սպառազինման համակարգը մշակումների եզրափակիչ փուլում է և հասանելի կլինի այն պահին, երբ երկիրը դրա ձեռքբերման մասին որոշում կայացնի:

<sup>49</sup> Որպես կանոն նույն կարգի հավակնություններ են լինում նաև երկրի ռազմաարդյունաբերական համակարգում:

րածությունը և ծառայում է առաջիկա տարիներին զինված ուժերի զարգացման ուղղությունների որոշարկմանը:

Ի մասնավորի այն ուղղություն է միջնաժամկետ պլանավորման գործընթացը: Միջնաժամկետ պլանավորման հիմնական նպատակն է՝ երաշխավորել, որ պաշտպանության մենեջմենթի փաստացի գործողությունները, օրինակ վերակազմավորումը, հավաքագրումը, գնումները, մարտական պատրաստությունը, դրամական միջոցների ծախսերը և այլն, ծառայեցվեն պաշտպանական քաղաքականության նպատակների իրականացման և ապագայում համապատասխան զինված ուժեր ունենալու գործիք: Միջնաժամկետ պլանավորման ժամանակային ծածկույթը սովորաբար չորսից ութ տարի է: Այդ ժամանակահատվածում հնարավոր է զարգացնել կամ գոնե որակական փոփոխության ենթարկել զինված ուժերի կարողությունները:



#### Գծապատկեր 2. Պլանավորման ժամկետների, ծրագրերի և դրանց իրականացման փոխկապվածությունը

Համապատասխան պլանը հաճախ կոչվում է նաև «ծրագիր», իսկ միջնաժամկետ պլանավորման գործընթացը՝ «ծրագրավորում»: Որոշումների կայացման և մենեջմենթի այլ նպատակների սպասարկման համար ծրագիրն ունենում է լավ մշակված աստիճանակարգային կառուցվածք և ներառում է պաշտպանության հիմնական ծրագրերը, ենթածրագրերը և այլն<sup>50</sup>: ՆUSO-ի

<sup>50</sup> Մանրամասն տեղեկատվությունը տե՛ս Todor Tagarev, “Introduction to Program-based Defense Resource Management,” *Connections: The Quarterly Journal* 5, no. 1 (Spring-Summer 2006): 55-69, <https://consortium.pims.org/introduction-to-program-based-defense->

անդամ երկրներից շատերն իրենց պաշտպանական ծրագրերի համար պլանավորման վեցամյա ժամկետ են ընտրում:

Եթե պաշտպանության երկարաժամկետ պլանավորնան դեպքում հաճախարարելի են համարվում այն տարբերակները, որոնք տեսականորեն կարող են որևէ ընդհանրություն չունենալ զինված ուժերի ներկայիս կառուցվածքի հետ, ապա միջնաժամկետ պլանավորման ժամանակ պլանավորողները պետք է շատ հստակորեն ցույց տան, թե ինչպես է ապահովվելու անցումը զինված ուժերի ներկայիս կառուցվածքից զինուժի ապագա մողելին (տե՛ս Գծապատկեր 2-ը): Բացի այդ, ռեսուրսների սրույթունն ավելի մեծ կարևորություն է ստանում. միջնաժամկետ ծրագիրը, հատկապես առաջին տարիների առումով, մշակվում է ակնկալվող ռեսուրսների շրջանակում և, մասնավորապես, պաշտպանությանն ուղղվող բյուջետային միջոցների կանխատեսմանը խիստ համապատասխան: Կարճաժամկետ պլանավորումը կոչված է մանրամասնելու միջնաժամկետ ծրագրի առաջին մեկ կամ երկու տարվա անելիքները, հաճախ՝ կարողությունների բաղադրիչին վերաբերող ծրագրերի (հավաքագրման, ուսուցման, մարտական պատրաստության, գնումների, շնորհարության և այլ ծրագրերի) և համապատասխան բյուջեի միջոցով<sup>51</sup>: Այդպիսով դրանք մշակվում են կանխատեսվող բյուջետային միջոցների սահմաններում:

Եթե պաշտպանության ծրագրերը մշակվում են նշված եղանակով, և դրանք հետևողականորեն կատարվում են, պաշտպանության մեջնօնքների բոլոր գործողությունները, համակարգված լինելով, հանգեցնում են անվտանգության և պաշտպանական բաղադրականության նպատակների իրականացման: Սակայն անգամ այդպիսի դեպքերում շնախատեսված հանգամանքներն ու միջավայրի փոփոխությունները կարճաժամկետ ծրագրերի շեղումների պատճառ են դառնում: Արդյունքում զինուժի գարգացման փաստացի հետագիծ լավագույն է կարճաժամկետ ծրագրով նախատեսված հետագիծ:


Պաշտպանության պլանավորման բազմաթիվ համակարգերում այս կարգի անորոշության հարցը լուծվում է միջնաժամկետ պլանավորման պարբերական շտկումների մեխանիզմի միջոցով: Նոր կարճաժամկետ ծրագրեր են մշակվում տարին կամ երկու տարին մեկ՝ համաձայնեցվելով հետագա կարճաժամկետ պլանավորման և իրականացման բուն գործընթացների հետ, ինչը թույլ է տալիս զինուժի գարգացումը տանել զինված ուժերի ապագա մողելի ընտրված ուղղությամբ (տե՛ս Գծապատկեր 2-ը):

Զինված ուժերի գարգացման վրա ներազդող միջավայրի որակական

#### resource-management-0.

<sup>51</sup> Պաշտպանության պլանավորման և բյուջեի կառավարման կայացած համակարգեր ունեցող երկրները հաճախ օգտագործում են երկամյա ծրագրեր: Այս մոտեցումը համապատասխանում է նաև պաշտպանության ծրագրավորման երկամյա բոլորաշրջանին, ինչպես ԱՄՆ-ում: Վերջերս Միայնակ թագավորությունում ներմուծվել է քառամյա բյուջետային բոլորաշրջանը, որում նախատեսված են հատուկ ընթացակարգեր բյուջետային այս երկարատև ժամանակաշրջանում հնարավոր չնախատեսված ծախսերի ներառման վերաբերյալ:

Գոփիոխությունները, օրինակ՝ նոր սպառնալիքի ի հայտ գալը, որևէ դաշինքի միանալը, նորագոյն տեխնոլոգիաների ազդեցությունը, ամբողջովին պայմանագրային հիմունքներով զինծառայության համակարգին անցնելը, կառավարության քաղաքական գերակայությունների նշանակալի գոփիոխումը և այլն, կարող են զինված ուժերի ապագա մոդելը դարձնել ուսումնավարական հանգամանքներին անհամապատասխան (կամ) ֆինանսավես անիրազորելիք: Նման դեպքերում պաշտպանության պլանավորման կուր մեխանիզմներ ունեցող երկրներն անհապաղ հաճան են առնում նոր երկարաժամկետ պլանավորման գործընթացի իրականացումը, հաճախ՝ «պաշտպանության ուսումնավարական վերանայման» նախաձեռնության շրջանակներում: Երկարաժամկետ պլանավորման այս նոր շրջափուլում մշակվում է զինված ուժերի նոր ապագա մոդել, օր. «ԶՈՒ 2025 թ.», որը և օգտագործվում է միջնաժամկետ պլանավորման և պաշտպանության մենեջմենթի բոլոր այլ գործընթացների ուղղորդման համար (տե՛ս Գծապատկեր 3-ը):



**Գծապատկեր 3. «Զինված ուժերի ապագա կառուցվածքի» մոդելի՝ որպես զինված ուժերի զարգացման նպատակի գոփիոխում**

Զինված ուժերի կառուցվածքի մշակմանը կարելի է մոտենալ տարբեր տեսանկյուններից՝ կախված ազդեցություն ունեցող հիմնական գործուներից: Հաջորդիվ հավիրճ ներկայացվում են պաշտպանության պլանավորման նկատմամբ հիմնական այլընտրանքային մոտեցումները:

## Այլբնտրանքային մոտեցումներ պաշտպանության երկարաժամկետ պլանավորման նկատմամբ

Պաշտպանության պլանավորմանն անդրադարձող առավել հեղինակավոր աղբյուրներից երկուսը ներկայացնում են պաշտպանության պլանավորման մոտեցումների համանման դասակարգումներ: 2004 թ. «Ռազմավարություն և զինուժի պլանավորում» հրապարակման մեջ Բարբերը, Հոլմենը և Սոնզը առաջարկում են ինը այլբնտրանքային մոտեցում<sup>52</sup>:

*Վարրներաց մոտեցման դեպքում շահերը, նպատակները և ռազմավարությունն են հանդես գալիս որպես զինուժի վերաբերյալ որոշումների խթանիչ:*

*Վերընթաց մոտեցման պարագայում շեշտադրվում է գոյություն ունեցող պաշտպանական կարողությունների և սպառազինության հարակից համակարգերի կատարելագործումը, որն առաջին հերթին ուղղված է ընթացիկ օպերացիաների և գործառնական ծրագրերի պահանջների բավարարմանը:*

*Մշենարների վրա հիմնված մոտեցման դեպքում պլանավորողները մշակում են մի շարք հնարավոր իրավիճակներ, որոնցից յուրաքանչյուրը նախատեսում է զինված ուժերի գործարկման որոշակի պայմաններ: Այնուհետև այդ սցենարներն օգտագործվում են հիմնանպատակների իրականացմանը և համապատասխան կարողություններին առնչվող պահանջների կատարմանն ուղղված խնդիրների սահմանման համար:*

*Սպառնալիքների և խոցելիության գնահատման վրա հիմնված, սերտորեն կապված և փոխվացնող երկու մոտեցումների դեպքում պլանավորողները առաջացած խնդրի լուծման ուղիներ են փնտրում, երբ բացահայտվում են ինչպես սպառնալիքը, այնպես էլ խոցելիությունն այդ սպառնալիքի նկատմամբ: Կարողությունների հետ կապված պահանջներն այս դեպքում սահմանվում են՝ սեփական կարողությունները համեմատելով հավանական հակառակորդի կարողությունների հետ:*

*Մոտեցումներից մեկը՝ առանցքային հնարավորություններն ու խնդիրները, գործառության հիմք ունի: Այս մոտեցման դեպքում սեփական և բարեկամական ուժերի կարողություններին ներկայացվող պահանջները սահմանվում են սցենարներից, սպառնալիքներից կամ խոցելիության ընկալումներից անկախ: Փոխարենը դրանք սահմանվում են որպես առանցքային հնարավորություններ՝ կապված, օրինակ, ցանկացած իրավիճակում օդային տարածքում գերիշխելու հետ: Ապա ըստ այդ առանցքային հնարավորությունների՝ մշակվում են մարտական կարողությունների ապահովման լնիդանուր պահանջները և դրանց ենթատեսակները խաղաղության, արտակարգ իրավիճակների և պատերազմական պայմաններում:*

*Կարողությունների վրա հիմնված մոտեցումը նույնականացնում է գոր-*

<sup>52</sup> Henry C. Bartlett, G. Paul Holman, Jr., and Timothy E. Somes, “The Art of Strategy and Force Planning,” in *Strategy and Force Planning*, 4th ed. (Newport, R.I.: Naval War College Press, 2004), 17-33.

ծառութային վերլուծության հետ: Ապագայում ակնկալվող օպերացիաների ընթացքում իրականացվելիք գործառույթներն ու առաջադրանքները փոխակերպվում են կարողություններին առաջադրվող պահանջների: Այնուհետև պլանավորում իրականացնողները վերլուծում են, թե զինված ուժերի որ ստորաբաժնումներն ի գորու կինեն արդյունավետորեն և տնտեսապես հիմնավորված եղանակով ապահովելու նշված կարողությունները:

*Ռիսկերից ապահովագրման միջոցով պլանավորողները ձգտում են նվազագույնին հասցնելու հնարավոր ռիսկերը, որոնք կապված են թե՛ ներկայում և թե՛ երեսուն տարի անց կամ ավելի ուշ ցանկացած խնդիրների լուծման համար զորքերը նախապատրաստելու հետ: Ըստ որում, սահմանված պահանջները պետք է ապահովեն հավասարակշռության և ճկունության անհրաժեշտ մակարդակը ամենատարբեր մարտահրավերներին դիմակայելու ընթացքում, և զարմանալի չե, որ դրանց կատարումը կապված է չափազանց մեծ ծախսերի հետ: Պատմականորեն ամենաթարմ օրինակը Խորհրդային Միության քաղաքական գիծն է 1970-ականներին և 1980-ականներին, որը և նպատեց նրա փլուզմանը:*

*Հաջորդ մոտեցման դեպքում պլանավորողները հետամուտ են լինում օպերացիոն և ուղղմավարական գերիշխանության հասնել տեխնոլոգիաների միջոցով: Այս մոտեցումը խարսխված է այն համոզմունքի վրա, որ գիտելիքները, ստեղծագործական և նորարարական մոտեցումները նպաստում են առավել արդյունավետ համակարգերի և, համապատասխանաբար, շոշափելի ուղղման առավելության ապահովմանը:*

*Եվ վերջապես, պաշտպանության պլանավորման նկատմամբ ֆիսկալային մոտեցման դեպքում զինված ուժերի կառուցվածքի վերաբերյալ որոշումները պայմանավորվում են բյուջետային սահմանափակումներով:*

*Հեղինակավոր երկրորդ աղբյուրը՝ ՆԱՏՕ-ի գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների կազմակերպության կողմից հրատարակված «Պաշտպանության երկարաժամկետ պլանավորման ձեռնարկը», պաշտպանության պլանավորման նկատմամբ հնարավոր մոտեցումների փորձինչ տարբեր համակարգ է առաջարկում, որը ներկայացված է եռաստիճան կառուցվածքի տեսքով՝ ըստ վերլուծության կոնկրետ նպատակի:*

*Եթե հիմնական շեշտը դրվում է պլանավորման գործընթացի վրա, վերլուծաբաններն այն տարածատում են ըստ վարընթաց և ռեսուրսների սղությամբ պայմանավորված պլանավորման տեսակների:*

*Նայած թե ինչն է գերիշխում՝ նոր տեխնոլոգիաներին առնչվող լավատեսություններ, թե՞ հակառակը՝ պատմականորեն ապացուցված փաստերից ելնելու նախընտրությունը, փորձառու պլանավորողները կիրառում են չորս հնարավոր մոտեցումներ՝*

- տեխնոլոգիական լավատեսություն,
- խուսափում ռիսկերից,
- աճողական պլանավորում,

- պատմական փորձի կարևորում:

Այս մոտեցումներից վերջին երեքը ենում են փորձված հայեցակարգեցից, զինուժի գոյություն ունեցող կառուցվածքից և կարողություններից և միտված են արդյունավետության և ծախսերի նպատակայնության աճողական (աստիճանական) ավելացման գործելակերպին: Որոշ հանգամանքներում դրանք կարող են մեկնաբանվել որպես վերոնշյալ վերընթաց մոտեցման տարբերակներ:

Ի հայտ են գալիս լրացուցիչ երեք մոտեցումներ, երբ ապագա զինուժի պոտենցիալ գործունեության գնահատման համար որպես հիմք են ծառայում գործառույթները կամ կոնկրետ սցենարները: Դրանք են՝ կարողությունների վրա հիմնված պլանավորումը, սցենարների վրա հիմնված պլանավորումը և սպառնալիքների վրա հիմնված պլանավորումը: Այս մոտեցումներից յուրաքանչյուրն իր առավելություններն ու թերություններն ունի և հազվադեպ է կիրառվում «մաքուր» տեսքով, մյուսներից անջատ: Գործնականում պաշտպանության պլանավորման մոտեցումը կարող է համարել հիմնական այլընտրանքների երկու կամ ավելի հատկանիշներ:


Ըստ «Պաշտպանության երկարաժամկետ պլանավորման ձեռնարկի»՝ պաշտպանության պլանավորման կայացած, հասուն համակարգերում ներկայում գերիշխում է երկու մոտեցում: Մեկը ուսուրամատրիկ գործոնը հաշվի առնող պլանավորումն է (սա ուսուրամատրիկ սահմանափակությամբ պայմանավորված պլանավորման ավելի մեղմ տեսակն է), մյուսը՝ սցենարների վրա հիմնված պլանավորումը<sup>53</sup>: 2003 թ.-ին Ձեռնարկի հրապարակումից ի վեր գործադրվող ջանքերն ուղղված են կարողությունների զարգացման կողմնորոշում ունեցող պաշտպանության պլանավորման խթանմանը և օպերացիաների նոր հայեցակարգերի, մասնավորապես՝ օպերացիաների նկատմամբ արդյունահեն մոտեցման ներդրմանը: Այն նաև միտված է մեծացնելու ռազմավարության ձևավորման և պլանավորման մեխանիզմների ճկունությունը և անվտանգության միջավայրի փոփոխություններին դրանց պատշաճ արձագանքման հնարավորությունները:

## **Հայեցակարգային նպատակների կապակցումը զինուժի կառուցվածքի հետ**

Վարընթաց մոտեցումների դեպքում պաշտպանական քաղաքականության ձևավորումը բխում է պետության կամ դաշինքի արժեքների և շահերի, անվտանգության ռազմավարության և պետական իշխանության այլ գործիքների շարքում զինված ուժերի դերակատարման կայացման և խթանման ցանկությունից, քանի որ դրանք բոլորն էլ ներագրում են պաշտպանության նպատակների սահմանման վրա (ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 4-ում):

<sup>53</sup> Handbook on Long Term Defence Planning, RTO Technical Report 69 (Paris: NATO Research and Technology Organization, April 2003), 4, [www.rta.nato.int/pubs/rdp.asp?RDP=RTO-TR-069](http://www.rta.nato.int/pubs/rdp.asp?RDP=RTO-TR-069).

Պաշտպանության նպատակները, իրենց հերթին, հաճախ արտացոլվում են պաշտպանության խնդիրներում կամ զինված ուժերի հնարավոր դերերում և պաշտպանական հավակնությունների մակարդակներում:



**Գծապատկեր 4. Պաշտպանության նպատակների սահմանում**

### **Անվտանգության միջավայրի վերլուծություն**

Անվտանգության նպատակները, ռազմավարությունը և պաշտպանության նպատակները պայմանավորված են անվտանգության միջավայրի մասնակրկիտ վերլուծությամբ սահմանված արժեքներով, շահերով, անվտանգությանն առնչվող մարտահրավերներով, ռիսկերով և սպառնալիքներով։ Ներկա դրությամբ առկա վերլուծություններն առանձնանշում են հետևյալ աղբյուրներից ընկալվող սպառնալիքները։

- միջազգային ահարեկչություն,
- զանգվածային ոչնչացման գենքի տարածում և առաքման միջոցներ,
- ծախողված կամ անկում ապրող պետություններ,
- կազմակերպված հանցախմբեր,

ինչպես նաև դրանց տարատեսակ համադրումներ:

Այլ վտանգներ կարող են առաջանալ ազգամիջան հարաբերությունների լարվածության, ազգային, կրոնական և մշակութային այլ արժեքների նկատմանք ոչ հարգալից վերաբերմունքի, անհանդորժության և քսենֆորփայի, ժողովրդագրական ճնշումների և շրջակա միջավայրի աղճատման հետևանքով:

Անցումային փուլում գտնվող երկրների առջև ծառանում են զինված ուժերում (և անվտանգության ոլորտի այլ կազմակերպություններում) քաղաքացիական հասարակության նկատմամբ հաշվետվողականության բացակայության, պաշտպանության համակարգի ցածր տնտեսական արդյունավետության, զինուժի խոշոր, անարդյունավետ կառուցվածքների պահպանման և անցյալից ժառանգած և, այդպիսով, առանձնապես բարդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ կառավարչական կարողությունների բացակայության հարցերը: Օրինակ՝ Հարավարևելյան Եվրոպայի (ՀԱԵ) երկրները «Համատեղ զնահատման գեկույցում» որպես առանձնահատուկ մարտահրավեր են որպես [«պաշտպանական համակարգի】 բարեփոխումների ճախողումը և [Եվրաստանույան] ինտեգրման գործընթացների խոշնդուսումը, [որոնք] կարող են բացասական հետևանքներ ունենալ տարածաշրջանային և միջազգային անվտանգության համար»<sup>54</sup>:

Նկատի ունենալով անվտանգության միջավայրի վերլուծությունը՝ հատկապես կարեոր է հստակորեն հայտարարել ռիսկերի և սպառնալիքների բացակայության մասին, առանձնապես նրանց, որ մինչև վերջերս լուրջ ազդեցություն էին գրձում պաշտպանական քաղաքականության վրա: Հարավարևելյան Եվրոպայի վերոնշյալ զնահատման օրինակում այդ երկրները համաձայնության են եկել առ այն, որ «ներկայիս և տեսանելի ապագայի քաղաքական իրադրության առումով բացակայում է ՀԱԵ պետությունների միջև ուղղական ազրեսիայի վտանգը»<sup>55</sup>:

## Անվտանգության նպատակներ

Երկրի անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականության նպատակները կապված են անվտանգությանը վերաբերող գոյություն ունեցող և կանխատեսելի մարտահրավերների, վտանգների և սպառնալիքների հետ և արտացոլում են պետության արժեքներն ու շահերը, ինչպես նաև անվտանգության միջազգային ասպարեզում այդ երկրի հավակնությունները:

Օրինակ՝ ԱՄՆ-ի 2002 թ. Ազգային անվտանգության ռազմավարության նպատակն է «Նպաստել, որ աշխարհը ոչ միայն ավելի անվտանգ, այլև ավելի լավը դառնա»: Դրան հասնելու համար այն սահմանել է հետևյալ հիմնանպատակները կամ «անվտանգության նպատակները».

<sup>54</sup> South East Europe Common Assessment Paper on Regional Security Challenges and Opportunities – SEECAP (Budapest, May 2001), para 16 g, <http://www.forost.ungarisches-institut.de/pdf/20010530-1.pdf>.

<sup>55</sup> Նույն տեղում, para 15.

- Քաղաքական և տնտեսական ազատություն,
- Խաղաղ հարաբերություններ այլ պետությունների հետ,
- Հարգալից վերաբերմունք մարդու արժանապատվության նկատմամբ<sup>56</sup>:

Բացի այդ, ԱՄՆ-ի Ազգային անվտանգության ռազմավարությունը հետևյալ կերպ է սահմանում անվտանգությանն ու պաշտպանությանը վերաբերող չորս «ռազմավարական նպատակները» հավատարիմ մնալով ռազմավարության ոգուն ու տառին:

- Պաշտպանել Սիացյալ Նահանգներն անմիջական հարձակումից,
- Ապահովել ռազմավարական հասանելիությունը և պահպանել գործողությունների ազատությունը գլոբալ իմաստով,
- Ամրապնել դաշինքներն ու գործընկերությունները,
- Ստեղծել անվտանգության բարենպաստ պայմանները<sup>57</sup>:

## **Անվտանգության ռազմավարություն**

Անվտանգության պատշաճ ռազմավարությունն ապահովում է պետական իշխանության դիվանագիտական, տնտեսական, ռազմական և այլ գործիքների կիրառման հստակ, իրատեսական և արդյունավետ հայեցակարգ, որը նախատեսված է անվտանգության նպատակների իրականացման համար: Ենելով անվտանգությանն առնչվող ոլուկերի և սպառնապիքների գնահատումից, ավանդական ուժեղ կողմերից, սեփական և հակառակորդի խոցելի կողմերի և վերիանված հնարավորությունների գնահատումից՝ անվտանգության ռազմավարությունը կարող է նախատեսել իշխանության գործիքների բվում զինված ուժերի տարատեսակ դերակատարումներ, որոնք հաճախ բնորոշվում են որպես զինված ուժերի առջև դրված խնդիրներ:

## **Պաշտպանության խնդիրներ և հիմնանպատակներ**

Բուլղարիայի 2002 թ. «Պաշտպանության սպիտակ գելույցը» սահմանում է զինված ուժերի հետևյալ խնդիրները.

- Ազգային անվտանգության ամրապնդում խաղաղ ժամանակ,
- Խաղաղության և անվտանգության ամրապնդում ողջ աշխարհում,
- Մասնակցություն երկրի պաշտպանությանը<sup>58</sup>.

Սիացյալ Թագավորությունն իր «պաշտպանության նպատակները»

<sup>56</sup> *The National Security Strategy of the United States of America* (Washington, D.C.: The White House, September 2002), 1, <http://merln.ndu.edu/whitepapers/USnss2002.pdf>.

<sup>57</sup> *The National Defense Strategy of the United States of America* (Washington, D.C.: Department of Defense, March 2005), iv, details on pp. 6-7, [www.globalsecurity.org/military/library/policy/dod/nds-usa\\_mar2005.htm](http://www.globalsecurity.org/military/library/policy/dod/nds-usa_mar2005.htm).

<sup>58</sup> *White Paper on Defence* (Sofia: Ministry of Defence, 2002), 27, <http://merln.ndu.edu/whitepapers/BulgariaEnglish.pdf>. Այս փաստաթուղթն ընդունվել է նախքան Պրահայի 2002 թ. զազայաժողովում Բուլղարիայի կողմից Դաշինքին միանալու ՆԱՏՕ-ի հրավեր ստանալը:

սահմանում է հետևյալ կերպ.

*Ապահովել Միացյալ Թագավորության և Անդրծովյան Տարածքների բնակչության անվտանգությունը՝ կազմակերպելով նրանց պաշտպանությունը, այդ բայց՝ ահաբեկչությունից, և հանդես գալ որպես հանուն բարօրության գործող ուժ՝ ամրապնդելով խաղաղությունն ու կայունությունը ողջ աշխարհում՝<sup>59</sup>:*

ԱՄՆ-ին վերաբերող ավելի վաղ բերված օրինակում զինված ուժերի առջև խնդիր է դրվում նպաստել անվտանգության նպատակների իրականացմանը չորս հիմնական եղանակով (ԱՄՆ-ի ազգային պաշտպանության ուազնավարության համապատասխան բաժնի վերնագիրն ընդգծում է պաշտպանության որպես անվտանգության քաղաքականության իրականացման գործիքի դերը. դրանք կարելի է բնութագրել որպես «պաշտպանության նպատակներ»).

- Հավատարիմ լինել դաշնակիցներին և բարեկամ երկրներին,
- Չսպել հնարավոր հակառակորդներին,
- Հակագրել ազրեսիային և դիմագրավել ճնշումները,
- Պարտության մատնել հակառակորդներին<sup>60</sup>:

## Պաշտպանական հավակնություններ

Պաշտպանական հավակնությունների միջոցով քաղաքականություն մշակողներն ու պլանավորում կատարողները պաշտպանության նպատակները դարձնում են ավելի շոշափելի և չափելի: Այդ հավակնություններն ապահովում են պետական իշխանության ակնկալիքների իրաստեսական և կոնկրետ ձևակերպումներ, ակնկալիքներ, որոնք առնչվում են զինված ուժերի դերին, այն օպերացիաներին, որոնք զինված ուժերը պետք է ի զորու լինեն իրագործելու սեփական ուժերով կամ այլ ուսումնական միավորների կամ անվտանգության ոլորտի կազմակերպությունների հետ համատեղ, անձնակազմի որակական հատկանիշներին, զինված ուժերի տեխնոլոգիական հագեցվածության մակարդակին, պաշտպանական արդյունաբերության դերին և այլն<sup>61</sup>:

Օրինակ՝ ուսումնական օպերացիաների առնչությամբ «հավակնությունների մակարդակը» սահմանում է այն օպերացիաների թվաքանակը, ընդգրկումը և բնույթը, որոնք պետք է երկիրը կամ երկրների դաշինքը կարողանա անցկացնել<sup>62</sup>: Դրա հետ կապված է նաև «օպերացիաների տեմպ» հասկացությունը: Այն վերաբերում է ուսումնական ուժի կողմից ըստ իր կարողությունների ստանձնած մարտական խնդիրների թվաքանակին և ծավալին և հաշվի է առնում այդ օպերացիաների բարդությունն ու տևողությունը: Օպերացիաների

<sup>59</sup> [www.hm-treasury.gov.uk/d/sr04\\_psa\\_ch9.pdf](http://www.hm-treasury.gov.uk/d/sr04_psa_ch9.pdf)

<sup>60</sup> *The National Defense Strategy of the United States of America*, iv, details on pp.7-9.

<sup>61</sup> Ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար ընթերցողը կարող է օգտվել հետևյալ բաց աղյուրից՝ Todor Tagarev and Valeri Ratchev, *Bulgarian Defence Policy and Force Development 2018* (Sofia: Military Publishing House, 2008).

<sup>62</sup> *The Defence Planning Process [of NATO]*, [www.nato.int/issues/dpp/index.html](http://www.nato.int/issues/dpp/index.html).

բարձր տեմպը նախատեսում է զորքերի խոշոր ստորաբաժանումների շարունակական և մեծաքանակ տեղաբաշխումներ ռազմական գործողությունների ամենատարրեր տեղանքներում<sup>63</sup>:

ՆԱՏՕ-ի հոչակած հավակնությունների մակարդակը, օրինակ, նախատեսում էր Դաշինքի տարածքից դուրս երեք խոշոր համատեղ օպերացիաներ միաժամանակ անցկացնելու կարողություն<sup>64</sup>: Պաշտպանության նախարարների 2006 թ. ուղենիշներում ՆԱՏՕ-ն հավակնությունների նոր մակարդակ է սահմանել «ի զորու լինել ավելի մեծ թվով և ավելի փոքր ծավալի օպերացիաներ անցկացնելու, ... քան նախկինում» միաժամանակ պահպաններով «ավելի լայնամասշտար օպերացիաների անցկացման կարողությունը»<sup>65</sup>:

2010 թ. դրույյամբ Եվրոպական Միության (ԵՄ) անդամ պետությունները հանդես եկան հետևյալ հաճանառությամբ՝ «արձագանքել օպերատիվ և վճռական գործողություններով՝ կիրառելով լիովին համաձայնեցված նոտեցում Եվրոպական Միության մասին պայմանագրով նախատեսված՝ հակամարտությունների կառավարման միջոցառումների ողջ սպեկտրի նկատմամբ: Սա վերաբերում է նաև մարդասիրական և փրկարարական միջոցառումներին, խաղաղարար նախաձեռնություններին, հակամարտությունների կարգավորմանն ուղղված ռազմական օպերացիաներին, այդ թվում խաղաղության հաստատմանը: Ինչպես նշված է Եվրոպայի անվտանգության ռազմավարության մեջ, կարող են կիրառվել նաև զինաքաղաքանի համատեղ օպերացիաներ, ահաբեկության դեմ պայքարում և անվտանգության համակարգի բարեփոխման հարցում երրորդ երկրներին ցուցաբերվող աջակցության ծրագրեր»<sup>66</sup>:

Նոյն այդ կարգով, առանձին երկրի «հավակնությունների մակարդակը» ռազմական տեսանկյունից սահմանվում է որպես այս օպերացիաների թվաքանակ, ծավալ և բնույթ, որոնք այդ երկիրը պետք է կարողանա իրականացնել սեփական ուժերով կամ կոալիցիայի կամ դաշինքի մաս կազմելով:

Միացյալ Թագավորությունն իր ներկայիս «Պաշտպանության սպահուականություն» սահմանադրությունը սահմանել է հավակնությունների հետևյալ մակարդակները.

- Աջակցել երեք միաժամանակյա օպերացիաների անցկացմանը, որոն-

<sup>63</sup> *A Role of Pride and Influence in the World: Defence, Canada's International Policy Statement* (Minister of National Defence, 2005), 7.

<sup>64</sup> Տե՛ս, օրինակ, Michèle A. Flournoy, CSIS, “Defense Integration in Europe: Enhancing Europe’s Defense Capabilities for New Missions” (զեկույցը ներկայացվել է “Clingendael Security and Conflict Programme” աշխատաժողովում, “Enhancing European Military Capabilities within the EU and NATO,” The Hague, December 14-15, 2005), notes to slide #17, [www.clingendael.nl/cscp/events/20051214/Flournoy.ppt](http://www.clingendael.nl/cscp/events/20051214/Flournoy.ppt).

<sup>65</sup> “NATO Sets New Level of Ambition for Operations,” *NATO Update* (8 June 2008), [www.nato.int/docu/update/2006/06-june/e0608b.htm](http://www.nato.int/docu/update/2006/06-june/e0608b.htm).

<sup>66</sup> «2010 թ. գերազույն նպատակ», հաստատվել է Հնդկանուր հարցերի և արտաքին հարաբերությունների խորհրդի կողմից 2004 թ. մայիսի 17-ին և վավերացվել Եվրոպայի խորհրդի կողմից 2004 թ. հունիսի 17-18-ին, տես <http://ue.eu.int/uedocs/cmsUpload/2010%20Headline%20Goal.pdf>, (շեշտադրության ավելացված է հեղինակի կողմից):

- ցից մեկը կայուն խաղաղության ավահովման օպերացիա է,
- Մեփական ուժերով անցկացնել սահմանափակ թվով օպերացիաներ,
  - Փոքրից միջին մասշտաբի կուալիցիոն օպերացիաներում հանդես գալ որպես առաջատար կամ հիմնական պետություն,
  - Պահպանել Եվրոպայում, Միջերկրականի և Պարսից ծոցի տարածաշրջաններում վահօրոք նախապատրաստված լայնամասշտար օպերացիաների անցկացման կարողությունը<sup>67</sup>:

Այս հավակնություններից երկրորդն ու երրորդը պահանջում են ունենալ տարատեսակ զինվորական ստորաբաժանումներ, որոնք կարող են լայնորեն մասնակցել ծովային, ցամաքային, օդային, նյութատեխնիկական ապահովման, հետախուզական և փրկարարական հատուկ օպերացիաներին:

Ֆրանսիան նույնպես իր 2003-2008 թթ. ծրագրային օրենքում միանգամայն հատակորեն սահմանում է իր պաշտպանական հավակնությունները՝ հոչակելով, որ երկիրը

- պարտավոր է ապահովել որոշումների և գործողությունների ինքնուրույնությունը ..., այդ թվում հարկ եղած դեպքում միայնակ գործելու կարողությունը (օր. ինքնիշխան տարածքների պաշտպանությունը երաշխավորելու և ... Աֆրիկայում, ինչպես նաև Սերձավոր Արևելում իր պաշտպանական համաձայնագրերի պահանջները կատարելու նպատակով),
- պետք է ունենա համաեվրոպական օպերացիայում որպես առաջատար համեմու գալու կարողություն և բավարար ռազմական հնարավորություններ բազմաբնույթ ռազմական գործողություններում, հատկապես բարձր ինտենսիվության օպերացիաներում մասնակցելու համար, և
- պետք է ունենա «անհրաժեշտ տեխնոլոգիական մակարդակ՝ պահանջվող ժամանակաշրջանի ողջ ընթացքում միջուկային գենքի տարածումը զարգելու, նոր սպառնալիքներից պաշտպանվելու համար նախատեսված ռեսուրսներ ապահովելու և արդյունաբերական հենքի պահպանումը երաշխավորելու նպատակով ...» իմնական պաշտպանական համակարգերի ձևավորման համար<sup>68</sup>:

Ֆրանսիայի ծրագրային օրենքում ամրագրված է նաև, որ հավակնությունների այս մակարդակն ապահովելու համար ֆրանսիան մտադիր է մեծացնել զինվորական անձնակազմի թվաքանակը և պաշտպանական ծախսերի ծավալը: Ծրագրի մանրանասն նկարագրում է բյուջեի կառուցվածքը և այն նպատակները, որոնք պետք է իրագործվեն գործող և պահեստային

<sup>67</sup> *Delivering Security in a Changing World*, Defence White Paper, volume I (London: Presented to Parliament by the Secretary of State for Defence, December 2004), [www.mod.uk/NR/rdonlyres/147C7A19-8554-4DAE-9F88-6FBAD2D973F9/0/cm6269\\_future\\_capabilities.pdf](http://www.mod.uk/NR/rdonlyres/147C7A19-8554-4DAE-9F88-6FBAD2D973F9/0/cm6269_future_capabilities.pdf).

<sup>68</sup> 2003-2008 թթ. Ռազմական ծրագիր, Օրինագիծ, Ֆրանսիա, ոչ պաշտոնական թարգմանություն (2002 թ.), 4-5, [www.info-france-usa.org/atoz/mindefa.pdf](http://www.info-france-usa.org/atoz/mindefa.pdf).

անձնակազմի ներգրավման, զինծառայողների կարգավիճակի բարելավման և զինված ուժերի արդիականացման ոլորտներում:

Կանադան համարում է, որ իր զինված ուժերը միջազգային ասպարեզում կարող են ներգրավել հականարտությունների կարգավորման օվերացիաների ողջ սպեկտրում, սակայն մեծամասամբ՝ կուպիցիայի կամ դաշինքի կազմում: Կանադական զինված ուժերը չունեն միջազգային նպատակների իրականացումն ինքնուրույնարար ապահովելու կարողություն, ըստ այդմ՝ դրանք ի զորու չեն միայնակ հանդես գալու կամ նույնիսկ առաջատար դեր ստանձնելու, ասենք, 1999 թ. Կոստվոյի օվերացիայի մասշտարի գործողություններում: Կանադան հավակնում է ունենալ «ուսկտիկավես ինքնարարավ ստորաբաժնումներ» (SBU), որոնք կարող են ինտենզիվ ՀՀ ամատեղ ուժերի փաթեթներում: SBU-ին ներկայացվող նվազագույն պահանջ է համարվում առնվազն «միջին ինտենսիվության օվերացիաներ» անցկացնելու կարողությունը<sup>69</sup>:

Ըվերիան միջազգային համատեքստում պետք է կարողանա «ղեկավարել և մասնակցել միաժամանակ երկու լայնամասշտար միջազգային օվերացիաների, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է ամբողջ գումարտակի մակարդակով կատարվող տեղաբաշխում, ինչպես նաև երեք ավելի փոքրածավալ օվերացիաների: Նրա զինված ուժերը պետք է կարողանան նախաձեռնել որոշակի օվերացիաներ՝ մասնակցելու հայտն ստանալուց կարծ ժամանակ անց, և պահպանել իրենց մասնակցությունն այլ՝ ավելի տևական օվերացիաներում: Ըվերական զինված ուժերը պետք է հնարավորություն ունենան հաջողությամբ լուծելու իրենց առջև դրված՝ հակամարտության կառավարման ցանկացած խնդիր՝ սկսած վստահության ամրապնդման, հակամարտության կանխման, մարդասիրական և խաղաղարար խնդիրներից մինչև խաղաղության պարտադրման միջոցառումները»<sup>70</sup>:

Բուլղարիան 1999 թ. իր Ռազմական հայեցակարգում հստակորեն արտահայտել է երկրի պաշտպանական հավակնությունները: Այդ ժամանակ Բուլղարիան հայտարարեց ՆԱՏՕ-ին անդամագրվելու իր մտադրությունների և ծրագրերի մասին, սակայն նման հեռանկար դեռևս չկար: ՆԱՏՕ-ի պայմանագրի մասին 5-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների բացակայության և հարևան Կոստվոյի՝ դեռևս ամենաթեժ փուլում գտնվող հակամարտության պայմաններում բաղադրական գործիչները չեն բացառում երկրի դեմ ուղղված ազրեսիայի հնարավորությունը: Հետևաբար, ըստ հռչակված հավակնությունների, երկիրը պետք է ի զորու լիներ սեփական ուժերով պաշտպանելու իր տարածքն ու բնակչությանը: Կարևոր էր այն, որ Ռազմական հայեցակարգը, լինելով խորհրդարանի հավանությանն արժանացած պաշտոնական

<sup>69</sup> *Capability Based Planning for the Department of National Defence and the Canadian Forces* (Canada: Department of National Defence, May 2002), 14-15, [www.vcds.forces.gc.ca/dgsp/00native/rep-pub/j-cbpManualPdf\\_e.asp](http://www.vcds.forces.gc.ca/dgsp/00native/rep-pub/j-cbpManualPdf_e.asp).

<sup>70</sup> *Our Future Defence: The Focus of Swedish Defence Policy 2005–2007*, Swedish Government Bill 2004/05:5, 14, (շեշտադրումը հեղինակին է), [www.sweden.gov.se/content/1/c6/03/21/19/224a4b3c.pdf](http://www.sweden.gov.se/content/1/c6/03/21/19/224a4b3c.pdf).

փաստաթուղթ, հայտարարում էր ռազմական գործողությունների մեկ ասպարեզում հնարավոր ազրեսիայի պարամետրերի մասին, այն դեպքում, եթե նախագուշացումից հետո պատրաստվելու բավարար ժամանակ ունենա, և չինի ազրեսորի ուժերի լիակատար մոբիլիզացում<sup>71</sup>:

### **Պաշտպանության նպատակներից գեղի կարողություններ**

Ի վերջո, կարևոր են ոչ թե բուն զինված ուժերը, այլ պաշտպանության նպատակների հետ կապված այն կարողությունները, որ դրանք ունեն կամ կունենան (տե՛ս Գծապատկեր 5-ը): Ավելին՝ թեև կարողությունների մեծ մասն ապահովում է զինված ուժերի կազմավորումների միջոցով (Գծապատկեր 5-ում նշված են «F» տառով), լինում են դեպքեր, երբ անհրաժեշտ կարողություններ են ապահովում այլ կազմակերպություններ, օրինակ՝ ոչ զինվորական հետախուզական ծառայությունները, ոստիկանությունը, առարող ընկերությունները, քաղաքացիական ավիացիան և այլն:

**Պաշտպանության խնդիրներ,  
հավակնությունների մակարդակներ**

**Կարողություններ**

**F<sub>1</sub>**

**O<sub>1</sub>**

**Գծապատկեր 5. Կարողությունները որպես պաշտպանական քաղաքականության «միջոցներ»**

Կարողություններն այստեղ սահմանվում են հետևյալ կերպ՝


«Ուսուրաների և հնարավորությունների համադրմամբ պայմանավորված ունակություն, որը ծառայեցվում է որոշակի պայմաններում և գործունեության կոնկրետ չափանիշների հիման վրա այս կամ այն առաջադրանքի կատարման չափելի արդյունքի ապահովմանը»<sup>72</sup>:

Հետևաբար նպատակների և կարողությունների միջև կապն ուղիղ չէ: Նպատակների իրազրդման համար անհրաժեշտ կարողությունների սահմանումը կախված է այն կոնկրետ իրավիճակներից կամ սցենարներից, որոն-

<sup>71</sup> *Military Doctrine of the Republic of Bulgaria*, Approved by the National Assembly in 1999, amended in 2002, [www.mod.bg/en/doc\\_konc.html#](http://www.mod.bg/en/doc_konc.html#).

<sup>72</sup> Այլընտրանքային սահմանութերին ծանոթանալու համար տե՛ս *Defence Capability Development Manual* (Canberra: Defence Publishing Service, Department of Defence, 2006), 4, [www.defence.gov.au/publications/dcdm.pdf](http://www.defence.gov.au/publications/dcdm.pdf).

ցում կարող է հարկ լինել օգտագործել զինված ուժերը, և հաշվի է առնում դրանց օգտագործման եղանակները (տե՛ս Գծապատկեր 6-ը):



**Գծապատկեր 6. Նպատակների և անհրաժեշտ կարողությունների կապակցում պլանավորման սցենարների միջոցով**

### Պլանավորման սցենարներ

Պաշտպանական քաղաքականության մշակման և պլանավորման ժամանակ սցենարներն օգտագործվում են որպես կանխատեսվող իրավիճակներ, որոնք ներկայացվում են իրադրության և օպերատիվ պարամետրերի տեսանկյունից: Պլանավորման սցենարները նպատակ չեն հետապնդում կանխատեսելու ապագա իրավիճակներն ու դրանց արդյունքները: Նրանք, ավելի շուտ, օգտագործվում են զինված ուժերի կառուցվածքի և պաշտպանության ծրագրերի որոշարկման ընթացքում: Այդ սցենարները ծառայում են մի շարք նպատակների:

Նախ՝ սցենարներն ապահովում են հնարավոր խնդիրների ընդհանրական նկարագիր՝ ելեկտրական այն մարտահրավերներից կամ սպառնալիքներից, որոնք կարող են ի հայտ գալ առաջիկա 10-20 տարում, այսինքն այն ժամանակահատվածում, որը սովորաբար անհրաժեշտ է զինուժի կառուցվածքի վերաձևան, սպառագինության համապատասխան համակարգերի նշակման և տեղակայման համար: Երկրորդ՝ սցենարներն առաջարկում են որոշակի ենթադրություններ, որոնք վերաբերում են նպատակների և հավակնությունների ծավալին՝ առկա մարտահրավերների և սպառնալիքների համեմատ: Երրորդ՝ դրանք պլանավորողների կողմից օգտագործվում են որպես մի գործիք, որի միջոցով սահմանվում են օպերացիաների անցկացման համար անհրաժեշտ կարողությունները, նաև ծառայում են որպես յուրահատուկ փոր-

ձարաշու՝ առաջարկված օպերատիվ հայեցակարգերի, կարողության կամ համակարգի պահանջների և հիմնական նպատակներին դրանց համապատասխանության գնահատման համար<sup>73</sup>:

Քաղաքականություն մշակողներն ու պլանավորում կատարողները պետք է բազմաթիվ սցենարներ հաշվի առնեն, որպեսզի կարողանան հավոր պատշաճի գնահատել ռազմական խնդիրների բարդ բնույթը և ընտրել սցենարների համապատասխան խումբ: Սցենարների այդ խումբը պետք է արտացոլի պաշտպանական քաղաքականության մեջ ուրվագծված անվտանգության մարտահրավերները: Ընտրված սցենարները, միասին վերցրած, պետք է ընդգրկեն ռազմական առաքելությունների, խնդիրների, օպերացիաների, ինչպես նաև նպատակների և շահերի ամբողջ սպեկտրը: Վերջապես, ընտրված բոլոր սցենարները պետք է իրատեսական լինեն, որպեսզի ընդունելի լինեն դրանց վրա հիմնված վերլուծությունն ու ծրագրերը<sup>74</sup>:

Իր պաշտպանական քաղաքականության ձևավորման և պլանավորման ընթացքում ՆԱՏՕ-ն մշակում է պաշտպանության պլանավորման մոտ 30 ընդհանուր սցենար՝ սկսած ոչ մարտական պայմաններում իրականացվող տարիհանման օպերացիայից և վերջացրած լայնամասշտար պատերազմական գործողություններում պարտադրված մասնակցությամբ. այնուհետև այդ սցենարներն օգտագործվում են անհրաժեշտ կարողությունների գնահատման համար<sup>75</sup>:

Եվրոպայի պաշտպանությանն առնչվող «Սպիտակ գեկույցի» հայտում աշխատանքային անկախ մի խումբ ներկայացրել է հետևյալ հինգ ռազմավարական սցենարները.

1. Խաղաղության պաշտպանության լայնածավալ օպերացիա,
2. Բարձր ինտենսիվության մարդասիրական օպերացիա,
3. Տարածաշրջանային պատերազմ հանուն Եվրոպայի ռազմավարական շահերի պաշտպանության,
4. Զանգվածային ոչնչացման գենքի (ՉՈՒԶ) կիրառում նախատեսող հարձակման կանխում,
5. Հայրենիքի պաշտպանություն<sup>76</sup>:

Անդադարնանք առանձին պետության օրինակին: Կանադան օգտվել է հետևյալ ընդհանուր սցենարների համադրությացից:

<sup>73</sup> Սանրահաման տեղեկությունների համար տե՛ս *European Defence: A Proposal for a White Paper, Report of an independent Task Force* (Paris: EU Institute for Security Studies, May 2004), 67-70, [www.iss.europa.eu/uploads/media/wp2004.pdf](http://www.iss.europa.eu/uploads/media/wp2004.pdf), և *Handbook on Long Term Defence Planning*.

<sup>74</sup> Սցենարների ընտրությունը չափազանց կարևոր է: Պլանավորման մանրամասների և համընդգրկուն սցենարների անհրաժեշտությունը կարող է հանգեցնել որոշակի լարվածության, եթե դեկավարներն ու պլանավորում իրականացնողները սահմանափակ վերլուծական կարողություններ ունեն:

<sup>75</sup> Flournoy, “Defense Integration in Europe: Enhancing Europe’s Defense Capabilities for New Missions.”

<sup>76</sup> *European Defence: A Proposal for a White Paper*, 71-98.

1. Փրկարար-որոնողական օպերացիաներ Կանադայում,
2. Աղետների հետևանքների վերացում Կանադայում,
3. Սիջազգային նարդասիրական օժանդակություն,
4. Կանադայի տարածքի և մերձակա շրջանների հսկողություն/վերահսկում,
5. Օտարերկրյա տարածքներից կանադացիների տարիանում,
6. Խաղաղության պաշտպանության օպերացիաներ (խաղաղաբարություն),
7. Աջակցություն քաղաքացիական իշխանության/իրավապահ մարմիններին,
8. Պետության ինքնիշխանության/երկրի շահերի ապահովում,
9. Խաղաղության պաշտպանության օպերացիաներ (խաղաղության պարտադրում),
9. ա. Զախողված պետության տարբերակ,
- 10.Հյուսիսային Ամերիկայի պաշտպանություն,
10. ա. ճառագայթակտիվ վարակնան տարբերակ,
10. բ. Կիրերհարձակնան տարբերակ,
- 11.Հավաքական պաշտպանություն<sup>77</sup>:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է նշել հետևյալը. սցենարներն օգտագործվում են օպերատիվ պլանավորման նկատառումներով և պահանջվող կարողությունների հիմնավորման նպատակով:

Վերջին շրջանում, նպատակ ունենալով ավելի արդյունավետ և նպատակային գործել անվտանգության իրադրության և տեխնոլոգիական միջավայրի անորոշության ու անկանխատեսելիության պայմաններում, պաշտպանության պլանավորում իրականացնող մասնագետներն սկսել են կիրառել պլանավորման առավել զարգացած, սցենարների երկու մակարդակ ունեցող մոդելներ: Այդ մակարդակներից մեկը ներկայացնում է զինված ուժերի պոտենցիալ ներգրավում նախատեսող իրավիճակները (վերոնշյալ տեսակների սցենարներ), իսկ մյուսը նկարագրում է պաշտպանական քաղաքականության ուղղությունների մշակման հնարավոր համատեքստերը կամ «այլընտրանքային ապագան»<sup>78</sup>:


### **Նպատակներ, խնդիրներ և անհրաժեշտ կարողություններ**

Կարողությունն ընդհանուր առմամբ սահմանվում է որպես որոշակի առա-

<sup>77</sup> *Descriptions – Departmental Force Planning Scenarios* (Canada: Department of National Defence, May 2005), [www.vcds.forces.gc.ca/dgsp/pubs/rep-pub/dda/scen/intro\\_e.asp](http://www.vcds.forces.gc.ca/dgsp/pubs/rep-pub/dda/scen/intro_e.asp).

<sup>78</sup> Անցանց օրինակների համար տե՛ս Brian Nichiporuk, *Alternative Futures and Army Force Planning* (Santa Monica, CA: RAND Arroyo Center, 2005), [http://www.rand.org/pubs/monographs/2005/RAND\\_MG219.pdf](http://www.rand.org/pubs/monographs/2005/RAND_MG219.pdf); and Valeri Ratchev, “Context Scenarios in Long-term Defense Planning,” *Information & Security: An International Journal* 23, no. 1 (2008): 62-72, <http://infosec.procon.bg/v23/Ratchev.pdf>.

Զադրանք կատարելու ունակություն: Հետևաբար պլանավորման սցենարներու օգտագործվում են օպերացիաների ընթացքում իրականացվելիք առաջադրանքների կազմի սահմանման նպատակով: Նկատի ունենալով խնդիրների միանշանակ ըլքոնման անհրաժեշտությունը, ըստ սցենարի, կատարման ենթակա յուրաքանչյուր առաջադրանք սահմանվում է համապատասխան եղույթի միջոցով՝ առաջադրանքների ընդհանուր ցանկում կամ առաջադրանքների գրացուցակում (ինչը ներկայացված է Գծապատկեր 7-ում):



**Գ-ԺԱՊԱՏԿԵՐ 7. Կարողությունների կապակցում կոնկրետ խնդիրների հետ**

Օրինակ՝ Կանադայի պաշտպանական քաղաքականությունը մշակողները և պլանավորման նախագետներն օգտվում են, ի թիվս այլ փաստաթղթերի, «կարողությունների պլանավորման... ընդհանուր տերմինների ժողովածու» համարվող «Կանադայի մասնակցությանը օպերատիվ խնդիրների ցանկից»<sup>79</sup>: ԱՄՆ-ի զինված ուժերի պլանավորման համակարգում յուրաքանչյուր ռազմական նպատակի վերուժության արդյունքների հիման վրա կազմ-

<sup>79</sup> *Capability Based Planning for the Department of National Defence and the Canadian Forces*, 19.

Վոլ խնդիրների խումբը հիշատակվում է որպես «Նպատակի իրազործմանն առնչվող խնդիրների ցանկ»:

Փաստորեն, հնարավոր չեն խնդիրները սահմանել զինված ուժերի գործարկման հատակ հայեցակարգի կամ «Գործառնական հայեցակարգի» շրջանակից դուրս: Փոխակերպումների ընթացիկ նախաձեռնություններում մեծապես կարևորվում է «արդյունահետ մոտեցումը օպերացիաների նկատմամբ». այն դիտվում է որպես գործառնական (օպերացիաների) հայեցակարգի ձևակորման հիմնական գործոն: Այդ մոտեցման պարագայում կարողությունները հատակորեն կապակցվում են ցանկալի արդյունքների և գործառնական նպատակների հետ:


Նպատակի իրազործմանն առնչվող խնդիրների ցանկերում սահմանվում են կարողությունների այն տեսակները, որոնք անհրաժեշտ են առաջադրված խնդիրները լուծելու (կամ ցանկալի արդյունքին հասնելու) համար: Մերողաբանական մեկ այլ գործիք, որը հիշատակվում է որպես «կարողությունների տարանջատում», ընդհանուր ուղենիշ է ծառայում պաշտպանության պլանավորման բոլոր մասնագետների համար և նույնականացնելու համար և պահպանության մենեջմենթի մի շարք միջոցառումներում (տես՝ Գ-ծապատկեր 7-ը): Ի վերջո, պլանավորողները սահմանում են առաջադրված խնդիրների լուծման (կամ «կարողությունների նպատակների» իրականացման) համար անհրաժեշտ կարողությունների մակարդակները:

### **Զինուժի կառուցվածքային կազմակերպում**

Յուրաքանչյուր սցենարում պլանավորման մասնագետները մշակում են զինուժի գործարկման մի քանի այլընտրանքային առաջարկներ (մոդելներ), որոնք կապահովեն գործառնական հայեցակարգի իրականացման և նախակային խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարողություններ, ապա գնահատում են յուրաքանչյուր այլընտրանքի ծախսային հիմնավորվածությունը:

Պլանավորման կայացած համակարգերում պլանավորման մասնագետներն օգտվում են ընդհանրական միավորների կամ մոդուլների պահոցից և ծախսային գործոնների ընդհանուր ցանկից (Գ-ծապատկեր 8):

**Պլանավորման սցենար տ**



**Գծապատկեր 8. Զինուժի կիրառման այլընտրանքային ծրագրերի ստեղծում և գնահատում**

Մեթոդաբանական այդպիսի գործիքների կիրառումը զգալիորեն մեծացնում է պլանավորման գործնաթացի արդյունավետությունը: Զինուժի կիրառման առաջարկների մշակման համար առանցքային նշանակություն ունի անբողջացնող (ինտեգրող) հայեցակարգը: Այդպիսի հայեցակարգի օրինակներ են ԵՄ Սարտական խումբը, Կանադական Տակտիկական ինքնարար ստորարածանումը, Զոկերի կամ գումարտակների տակտիկական խումբը, Նյաստակիմ առնչվող կարողությունների փարեկը և այլն: Թե ինչ կարգի անբողջացնող հայեցակարգ են օգտագործում առանձին երկրի կամ դաշինքի պաշտպանության պլանավորման մասնագետները, կախված է պաշտպանական հավակնությունների կոնկրետ մակարդակից:


Նկատի ունենալով պլանավորման երկու կամ ավելի սցենարների միաժամանակ կամ գրեթե միաժամանակ իրականացնան հնարավորությունը, ինչպես նաև օպերացիայի ընթացքում գորքերի փոխատեղման (ռոտացիայի) ապահովման անհրաժեշտությունը՝ պլանավորում իրականացնող մասնագետներն անբողջականացնում են առանձին սցենարների համար մշակված՝ զինուժի կիրառման ոչ ծախսատար փարեկները զինված ուժերի միասնական կառուցվածքի շրջանակում:

Պլանավորման գարգացման համակարգերում ոլորտի մասնագետները մանրակրկիտ գնահատման և վերլուծության են ենթարկում մի շարք ստորաբաժանումների բազմաֆունկցիոնալությունը և տարատեսակ կարողությունների համադրման առավելությունները: Այդ դեպքում պլանավորողները չեն ձգտում բարեկավելու կարողությունների համակազմը (կարողությունների մակարդակները կամ դրանց առնչվող գինումի փաթեթները) մեկ առանձին սցենարի շրջանակում, այլ վիրուծում են ապահովել, որ կարողությունների տեսականին բավարար լինի ընտրված բոլոր հավանական սցենարների պարագայում:

### **Առաջադրված խնդիրների, գինումի կառուցվածքի և ֆինանսական սահմանափակումների փոխհամաձայնեցում**

Պաշտպանական քաղաքականության ձևավորման և պլանավորման ասպարեզում գործում է հետևյալ կանոնը՝ պահանջարկը մշտապես գերազանցում է ռեսուրսների առկայությունը: Հետևաբար քաղաքականություն կերտողներն ու պլանավորողները լուրջ ջանքեր են գործադրում հիմնանպատակների, ռազմավարության և առկա միջոցների հավասարակշռման ուղղությամբ, ընդ որում՝ ռիսկերն են այստեղ ծառայում որպես հավասարակշռող գործոն:

Ռազմավարական գարգացման տրամաբանական մոդելում ակնկալվում է, որ պլանավորման մասնագետները պետք է անվտանգության և պաշտպանության նպատակները, ռազմավարությունը, առկա միջոցներն ու պլանավորման ռիսկերը դիտարկեն որպես փոփոխական արժեքներ, մինչև չգտնվի օպտիմալ հավասարակշռման տարրերակը<sup>80</sup>: Ակնհայտ է, որ հավասարակշիռ քաղաքականության որոնումը կատարվում է անվտանգության ներկա և կանխատեսվող իրավիճակներում՝ հաշվի առնելով ռեսուրսների հնարավոր սահմանափակումները (Գծապատկեր 9):



**Գծապատկեր 9. Ռազմավարական գարգացման մոդելն ըստ Բարտլետի**

<sup>80</sup> Հայտնի է որպես Բարտլետի մոդել, նկարագրված է հետևյալ աշխատության մեջ՝ Bartlett, Holman, and Somes, “The Art of Strategy and Force Planning,” 18–23.

Հետևաբար իրատեսական պաշտպանական քաղաքականությունը հիմնվում է հետևյալ իրողության ըմբռնման վրա՝ անհնար է անվտանգություն երաշխավորել բոլոր հնարավոր սպառնալիքների դեպքում: Փոխարենը այն ելնում է ոխսկերի կառավարման մոտեցումից: Քաղաքականություն կերտողներն ու պլանավորման մասնագետներն առանձնացնում են համապատասխան ոխսկերի հետևյալ չորս տեսակները.


- **Գործառնական ոխսկեր՝ կապված զինված ուժերի ներկայիս կառուցվածքի հետ, որի միջոցով, հարկ եղած դեպքում, ընտրված ռազմավարությունը հաջողությամբ կարող է իրականացվել մարդկային, նյութական, ֆինանսական և ռազմավարական ընդունելի գնով:**
- **Պաշտպանության պլանավորման կամ ապագա մարտահրավերների ոխսկեր՝ կապված ապագայում հնարավոր քաղմազան մարտահրավերների պարագայում ռազմական նպատակները հաջողությամբ իրագործելու կարողությունների հետ:**
- **Իրականացմանն առնչվող կամ զինուժի մեջնօքների ոխսկեր՝ կապված զինուժի կառուցվածքին վերաբերող որոշումների և զինուժի զարգացման ծրագրերի իրագործման հետ: Այստեղ առաջնային են զինվորական և քաղաքացիական անձնակազմի հավաքագրումը, ուսուցումն ու պահպանումը, զինուժի տեխնիկական համալրումը և մարտական պատրաստության պատշաճ մակարդակի ապահովումը:**
- **Ինստիտուցիոնալ ոխսկեր՝ կապված հրամանատարության, մեջնօքների և գործարարական նոր գործելակերպների արդյունավետ կիրառման հետ:**<sup>81</sup>

Ոխսկերի երկրորդ կատեգորիան հատկապես կարևոր է պաշտպանության երկարաժամկետ պլանավորման որոշումներ կայացնելիս: Պաշտպանության պլանավորման ոխսկը չափում է այս կամ այն ռազմական գործողության կամ կազմակերպված այլ բռնությունների և ուժերի կիրառման բերումով առաջացած անբարենպաստ արդյունքի ազդեցությամբ կամ հետևանքով: Ըստ այդմ ոխսկի չափը հավանականային է: Այն պայմանավորված է այս կամ այն իրադարձության տեղի ունենալու հավանականությամբ, ինչպես նաև դրա տեղի ունենալու և զինուժի որոշակի կառուցվածքի կամ կարողությունների առկայության դեպքում կանխատեսվող հետևանքներով:

Չինված ուժերի ցանկացած տեսակի կառուցվածք կապված է ոխսկերի որոշակի մակարդակի հետ: Գծապատկեր 10-ում ցույց է տրվում զինված ուժերի՝ քննության ենթարկվող երկու կառուցվածքների տարրերությունը: Չինված ուժերի Կառուցվածք 1-ը կապված է Ոխսկ 1-ի հետ, և այն հնարավոր կլինի ապահովել և պահպանել այն դեպքում, եթե առկա է Բյուջե 1-ը: Եթե ԶՈՒ կա-

<sup>81</sup> *The National Defense Strategy of the United States of America*, 11. ԱՄՆ-ի պաշտպանական ռազմավարությունը սահմանում է (1) գործառնական, (2) ապագայի մարտահրավերների հետ կապված, (3) զինուժի կառավարման և (4) կազմակերպական (ինստիտուցիոնալ) ոխսկեր:

ոուցվածք 1-ը «անհրաժեշտ» է համարվում, պաշտպանության պլանավորում կատարողները, հաճախ առանց վարանման, ընդունելի են համարում համապատասխան Ռիսկ 1-ը: Իսկ այն դեպքում, եթե պլանավորողներն ստիպված են «փրատեսական» ԶՈՒ կառուցվածքի տարրերակ գտնել, այսինքն՝ այնպիսի կառուցվածք, որը հնարավոր կլինի ստեղծել և պահպանել ակնկալվող բյուջեի սահմաններում (Բյուջե 2-ի մակարդակ Գծապատկեր 10-ում), ապա նրանք ծրագրեր են կազմում Ռիսկ 2-ի հետ կապված ԶՈՒ կառուցվածքի վերաբերյալ:



**Գծապատկեր 10. Ուժերի կառուցվածքը, ռիսկերի և բյուջեի մակարդակները**

- Գործնականում կարիքների, այսինքն՝ պահանջվող պաշտպանական կարողությունների և ռեսուրսների սահմանափակության միջև առկա անհամապատասխանությունն անխուսափելի է: Դրա արդյունքում գոյանում է չփինանավորված կարողությունների հետ կապված բացթողում: Ի՞նչ է հնարավոր անել այդ բացթողումը լրացնելու համար: Գերմանիայի Զորգ Ս. Մարշալի Կենտրոնի Սիջազգային անվտանգության ուսումնավիրությունների քոլեջի դասախոս դր- Զեք Թրեդենիքն առաջարկում է մի շարք հնարավոր լուծումներ. տպավորություն ստեղծել, որ բացթողում գոյություն չունի:
- Վերանայել ազգային անվտանգության և (կամ) ռազմական ստրատեգիան:
- Վերանայել զինված ուժերի պահանջվող կառուցվածքը:
- Վերանայել պաշտպանության ոլորտի համար ռեսուրսների հատկացումը:

- Ներմուծել ծախսերի կրճատման հետ կապված բարեփոխումներ:
- Փոխակերպել զինված ուժերը<sup>82</sup>:

Այսպիսով՝ տարրերակներից մեկը հետևյալն է՝ զինուժի առավել լավ կառուցվածք գտնել Բյուջե 2-ի սահմաններում, այսինքն՝ ապահովել կարողությունների այլ համադրում, ռեսուրսների ավելի խնայողական օգտագործում, որպեսզի հնարավոր լինի նվազեցնել համապատասխան ՈՒԽ 2-ը: Սակայն դա ոչ միշտ է հնարավոր անել: Մեկ այլ տարրերակ՝ վերանայել զինված ուժերի գործողությունների եղանակները: Երրորդ տարրերակ՝ վերազնահատել անվտանգության ռազմավարությունը, օրինակ՝ քննել որևէ դաշինքի միանալու հնարավորությունը, ակտիվացնել անվտանգության առնչվող համագործակցությունը, հարևան պետությունների հետ վստահության մքնողրտի ստեղծման միջոցառումներ իրականացնել և այլն: Չորրորդ տարրերակ կարող է լինել պաշտպանության համար ավելի մեծ ֆինանսական միջոցների ապահովումը, ինչը հնարավորություն կընձեռի մեծացնելու նաև զինված ուժերի կազմը և (կամ) մարտական պատրաստությունը: Հինգերորդ՝ կարելի է որոշում ընդունել անվտանգության նպատակների և հավակնությունների մակարդակների փոփոխման վերաբերյալ: Եվ վերջապես, եթե սպառված են բոլոր մյուս հնարավորությունները, ստիպված ընդունել պլանավորված ԳՈՒ կառուցվածքի հետ կապված ոխսկերի մակարդակը:

Չինուժի կառուցվածքի վերաբերյալ այս կամ այն առաջարկը կարող է ընդունվել, եթե այն ֆինանսապես իրավորելի է, և եթե ընդունելի են նաև դրա հետ կապված ոխսկերդ, այսինքն որոշակի անբարենպաստ իրավիճակի ստեղծման հավանականությունը փոքր է, կամ դրա արդյունքում երևան եկած հետևանքները գնահատվում են որպես ոչ նշանակալի:

ՈՒԽի գնահատման համար օգտագործվում են առկա փորձի վերլուծությունը, մոդելավորումներն ու մասնագիտական եզրակացությունները: Յանկացած մոտեցման դեպքում պլանավորման ոխսկերն ընդունելու (կամ չընդունելու) որոշումը, ի վերջո, մեծապես կախված է որոշում կայացնողի անհատականությունից: Ունաճը հակված են խուսափելու ոխսկերից, մինչդեռ մյուսներն ավելի հանդուրժող են հնարավոր ոխսկերի նկատմամբ: Այսպիսով՝ անգամ որոշումների կայացման ռացիոնալ համակարգում ոխսկերի կառավարման ռազմավարությունը որոշակիորեն սուբյեկտիվ բնույթ ունի:

Ընդհանուր առմամբ, ոխսկայնության գնահատումը պետք է լինի որոշումների կայացման և մրցակցող պահանջարկների միջև առաջնահերթության սահմանման գործընթացի պարտադիր բաղադրիչը: ՈՒԽկերի կառավարման պատկերավոր մոդել է ներկայացված Գծապատկեր 11-ում<sup>83</sup>: ՈՒԽկային գոր-

<sup>82</sup> Jack Treddenick, "Transparency and Efficiency in Defence Planning and Spending" (paper presented at the PfP Consortium Security Sector Reform Conference, Garmisch-Partenkirchen, George C. Marshall Center, 13 December 2005).

<sup>83</sup> Հաստվածաբար մեջբերված է հետևյալ աղյուրից՝ *Integrated Strategic Risk Management (ISRM) in Defence* (Canada: Department of National Defence, 2003), [www.vcds.forces.gc.ca/dgsp/pubs/rep-pub/dda/cosstrat/isrm/intro\\_e.asp](http://www.vcds.forces.gc.ca/dgsp/pubs/rep-pub/dda/cosstrat/isrm/intro_e.asp).

ծոնների գնահատումները, ի թիվս այլ մեթոդների, կարելի է օգտագործել կազմակերպության աստիճանակարգային մակարդակների միջև ոխսկերի կառավարման պարտականությունները բաշխելու նպատակով:

### Գնահատված բացասական աղղեցություն

Նշանակալի

Պահանջվում է նշանակալի կառավարում	Պետք է կառավարվեն և մշտադիտարկվեն ոխսկերը	Անհրաժեշտ է կառավարման լրջագույն աշխատանք
Կարող է իմաստ ունենալ ոխսկի ընդունումը, սակայն մշտադիտարկման ապահովմանը	Նշանակահարմար է կառավարման ջանքեր գործադրել	Անհրաժեշտ է կառավարման ջանքեր գործադրել
Ոխսկերի ընդունում	Ընդունել, սակայն մշտադիտարկել ոխսկերը	Կառավարել և մշտադիտարկել ոխսկերը

Ցածր

Սիջին

Բարձր

### Հավանականություն

### Գծապատկեր 11. Ոխսկերի կառավարման հիմնական մոդել

### Հիմնական անցումային քայլերի սահմանումը

Սահմանելով ապագայում զինված ուժերի մի կառուցվածք, որն ընդունելի, ֆինանսապես իրազործելի և հսմարժեք է ապագայում հնարավոր ուղղության ապագական պայմաններին, պլանավորողները համեմատում են առկա և ապագայում նախատեսվող կարողությունները, վերհանում են բացրողումները և ավելորդ տարրերը, ապա սահմանում են ապագայի ԶՈՒ կառուցվածքին անցնելու ուղենիշները: Այդ ուղենիշների թվում կարող են լինել հետևյալները.

- պարտադիր զինվորական ծառայության վերացում,
- զինվորական ստորաբաժանման կազմավորում կամ լուծարում,
- ստորաբաժանման ներգրավում այս կամ այն օպերացիայում կամ մշտական պատրաստության ուժերում, օր. ՆԱՏՕ-ի օպերատիվ խմբում կամ Արագ արձագանքման եվրոպական ուժերում, և (կամ)
- սպառազինության նոր պլատֆորմի ներմուծում և (կամ) եղածի լիարժեք օպերատիվ կարողության ապահովում և այլն:

Փոխակերպումն ինքնին պետք է ֆինանսապես իրազործելի լինի և հիմնվի անցումային ռազմավարության կամ առնվազն մրցակցող պահանջարկների օպերացիաներում մասնակցության կամ նոր կարողությունների ձևավորման, տեխնոլոգիական արդիականացման կամ մարդումին առնչվող ներդրումների և այլ կարիքների, առաջնահերթությունների սահմանման վրա:

Նպատակահարմար է նաև գնահատել պլանավորման ռիսկերը փոխակերպման գործընթացի սահմանված փուլերում և աջակցել որոշումների կայացմանը հանապատասխան վիզուալ միջոցներով։ Տարբեր գույներով ներկայացվում են «քավարար կարողությունները», «ավելցուկային կարողությունները», «փոքր բացքողումները» և «կարևոր բացքողումները» (տե՛ս Գծապատկեր 12-ը)<sup>84</sup>:

Կարողությունների ոլորտներ		Կարողությունների բաղադրիչներ		Պլանավորման սցենարներ				
				Սցեն.1	Սցեն.2	Սցեն.3	...	Սցեն. n
Կարողություն			1.1					
			1.2					
Կարողությունների ոլորտներ		Կարողությունների բաղադրիչներ		Պլանավորման սցենարներ				
				Սցեն.1	Սցեն.2	Սցեն.3	...	Սցեն. n
Կարողություն			1.1					
			1.2					
Կարողությունների ոլորտներ		Կարողությունների բաղադրիչներ		Պլանավորման սցենարներ				
				Սցեն.1	Սցեն.2	Սցեն.3	...	Սցեն. n
Կարողություն			1.1					
			1.2					
			1.3					
Կարողություն			2.1					
			2.2					
			2.3					
	...	...						

**Գծապատկեր 12. Զինուժի ապագա կառուցվածքին անցնելու հետկապված ռիսկերի և կարողությունների դինամիկան**

## Եզրակացություն

Պաշտպանության պլանավորմանը վերաբերող այսօրինակ հակիրճ ներածության սահմաններում հնարավոր չենթայացնել նյութն իր բոլոր մանրամասներով կամ անդրադառնալ կարևոր նշանակություն ունեցող բոլոր հարցերին։ Կան ևս երկու լրացուցիչ խնդիրներ, որոնք հատկապես կարևոր են պաշտպանական քաղաքականություն մշակող և պլանավորող մասնագետների համար։

Սուաջին խնդիրը կապված է պլանավորման գործընթացի համատեքստի հետ։ Պաշտպանական կառույցի դեպքում պաշտպանության պլանավորումը համընդգրկուն գործընթաց է, որը ներառում է բոլոր անհրաժեշտ կարողությունները, այդ թվում սպառագինության համակարգերն ու կառավարման օպերատիվ համակարգը (C2), ինչպես նաև հանապատասխան ռեսուրսները և զինված ուժերին շահնշանությունների կողմից տրամադրվող կարողությունները։ Այդուհանդերձ, այդ գործընթացը չի կարող տեղի

<sup>84</sup> Guide to Capability-Based Planning, TR-JSA-TP3-2-2004 (The Technical Cooperation Program, Joint Systems and Analysis Group, Technical Panel 3, MORS Workshop, October 2004), [www.mors.org/meetings/cbp/read/TP-3\\_CBP.pdf](http://www.mors.org/meetings/cbp/read/TP-3_CBP.pdf).

ունենալ այլ կարևոր գործոններից մեկուսացված:

Ազգային պաշտպանության պլանավորման գործընթացի և որոշումների վրա հսկայական ազդեցություն կարող են ունենալ երեք համատեքստեր՝ միջազգայինը, անվտանգության ոլորտինը և բյուջետայինը: Որոշ իմաստով, ազգային պաշտպանության պլանավորումը կարող է սերտորեն կապված լինել դաշնակից երկրների պաշտպանության պլանավորման (օր. ՆԱՏՕ-ի և Եվրոպական Միության պաշտպանության պլանավորման) համապատասխան գործընթացների, ինչպես նաև ազգային անվտանգության ոլորտում գործող կազմակերպությունների միջև դերերի և կարողությունների բաշխման սահմանան և պետական բյուջեի վերաբերյալ որոշումների նախագծման, քննարկման և կայացման գործընթացների հետ<sup>85</sup>:

Երկրորդ խնդիրը, որը կապված է դաշնակցային գործունեության և անվտանգության ոլորտի պլանավորման հետ, վերաբերում է մասնագիտացմանը: Միջազգային անվտանգության ներկայիս միջավայրում երկրներից շատերին չի հաջողվում հաղթահարել զինված ուժերի հավասարակշռված, բայց և տնտեսապես հիմնավորված կառուցվածքի պահպանմանն առնչվող մարտահրավերը<sup>86</sup>: Զինված ուժերի հավասարակշռված կառուցվածքի պահպանման փորձերը զինուժի կրծատման պայմաններում հանգեցնում են առանձին բաղադրիչների հետ կապված ծախսերի սրբնաց աճին: Մյուս կողմից՝ անտեսաված որոշ կարողությունների հետ կապված մասնագիտացմանը կարող է արժեքավոր նապաստ բերել հավաքական անվտանգությանը: Ազգային անվտանգության ոլորտում կարողությունների գծով մասնագիտացման որոշումները կարող են նաև նկատելիորեն բարձրացնել դրանց ծավալային արդյունավետությունը:

Մասնագիտացման վերաբերյալ որոշումներն ընդունվում են գոյություն ունեցող ուժեղ կողմերի, ավանդույթների, տեխնոլոգիական և պաշտպանական արդյունաբերության հավակնությունների հիման վրա և անխոսափելիորեն հանգեցնում են պաշտպանական կարողությունների որոշակի համակարգի ստեղծմանը:

Ամփոփենք. գոյություն չունի մեկ միասնական ալգորիթմ՝ սցենարների վրա հիմնված և կարողությունների զնահատմանը միտված պաշտպանության պլանավորման կիրառման համար: Այդուհանդերձ, պաշտպանության արդյունավետ հայեցակարգերը խարսխված են զինված ուժերի ստեղծման և դրանց զարգացման ծրագրերի նկատմամբ հետևյալ կարգավորված նոտեցումների վրա, որոնց ընորոշ են նիշ շարք ընդհանուր քայլեր:

<sup>85</sup> Todor Tagarev, “Capabilities-Based Planning for Security Sector Transformation,” Lecture to NATO Advanced Studies Institute (Bansko, Bulgaria, 10-18 April 2007); under publication in vol. 24 of *Information & Security: An International Journal*, <http://infosec.procon.bg>.

<sup>86</sup> Տե՛ս, օրինակ *European Defence Integration: Bridging the Gap between Strategy and Capabilities*, Conference Report (Brussels: Center for Strategic and International Studies in cooperation with the New Defence Agenda, October 2005); Ugurhan G. Berkok, “Specialization in Defence Forces,” *Defence and Peace Economics* 16, no. 3 (June 2005): 191-204.

- Պաշտպանության խնդիրների, հիմնանպատակների և հավակնությունների սահմանում,
- Այն պայմանական սցենարների կամ պայմանների քննարկում և համաձայնեցում, որոնցում այդ հիմնանպատակները պետք է իրականացվեն (հաճախ ներառելով համապատասխան օպերատիվ հայեցակարգերի մշակումը և «գործողությունների կուրսի» ընտրությունը),
- Սցենարի միջոցառումների տարանջատում՝ ըստ առանձին առաջադրանքների, և «նպատակի իրականացմանն առնչվող խնդիրների ցանկերի» սահմանում (խնդիրները հաճախ ընտրվում են խնդիրների ընդհանուր ցանկերից),
- Խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարողությունների սահմանում: Այս բայլը ներառում է մի շարք ենթաքայլեր, ընդ որում՝ վերջին երկուար կատարվում են փոխկապակցված:
  - Կարողությունների անհրաժեշտ տեսակների սահմանում,
  - Պլանավորման ռիսկերի գնահատում,
  - Տևականապես հիմնավորված զինուժի այնպիսի փաթեթի ստեղծում, որը կապահովի ընդունելի ռիսկերի պայմաններում խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարողությունների մակարդակներ,
- Կանխատեսվող բոլոր հիմնանպատակներին և սցենարներին համապատասխանող ՇՈՒ կառուցվածքի ձևավորում:

Այս բոլոր բայլերը կարելի է կատարել տարբեր եղանակներով: Այստեղ կարևոր պաշտպանության պլանավորման և թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքների նկատմամբ տրամաբանական, համակարգված մուտեցման ապահովումն է: Այս գլխում ներկայացված պաշտպանական քաղաքականության ձևավորման և պլանավորման կայացած մեխանիզմներ ունեցող ժողովրդավարական հասարակությունների փորձառության օրինակները կարող են օգտակար լինել այն երկրներում, որոնք հետամուտ են իրենց զինված ուժերի հետագա զարգացման արդյունավետ և տնտեսապես հիմնավորված կառավարմանը:

## **Լրացուցիչ գրականություն**

Henry C. Bartlett, G. Paul Holman, Jr., and Timothy E. Somes, “The Art of Strategy and Force Planning,” in *Strategy and Force Planning*, 4th edition (Newport, R.I.: Naval War College Press, 2004), 17-33.

*Handbook on Long Term Defence Planning*, RTO Technical Report 69 (Paris: NATO Research and Technology Organization, April 2003), [www.rta.nato.int/pubs/rdp.asp?RDP=RTO-TR-069](http://www.rta.nato.int/pubs/rdp.asp?RDP=RTO-TR-069).

*Guide to Capability-Based Planning*, TR-JSA-TP3-2-2004 (The Technical Cooperation Program, Joint Systems and Analysis Group, Technical Panel 3, MORS Workshop, October 2004), [www.mors.org/meetings/cbp/read/TP-3\\_CBP.pdf](http://www.mors.org/meetings/cbp/read/TP-3_CBP.pdf).

Todor Tagarev, “The Art of Shaping Defense Policy: Scope, Components, Relationships (but no Algorithms),” *Connections: The Quarterly Journal* 5, no. 1 (Spring-Summer 2006): 15-34, <https://consortium.pims.org/the-art-of-shaping-defense-policy-scope-components-relationships-but-no-algorithms>.

## Գլուխ 3

# Զինված ուժերի ծրագրահեն զարգացման ներածություն

## Տողոր Տագարև

### Ներածություն

Պաշտպանության երկարաժամկետ պլանավորման գործընթացը, ինչպես ներկայացվեց Գլուխ 2-ում, նախատեսված է պաշտպանության համակարգի այն պահանջները սահմանելու համար, որոնք վերաբերում են զինուժի համայնքի կարողություններին, ինչպես նաև այդ կարողությունների իրավես հասանելի մակարդակին և զինված ուժերի համապատասխան կառույցի հիմնական հատկանիշներին։ Այն միտված է նաև զինված ուժերի ապագա կառուցվածքին անցում կատարելու ռազմավարության մշակմանը։ Նշված ռազմավարությունը սահմանում է առաջնահերթություններ և ներկայացնում է ապագա կարողություններին հասնելու ընդհանուր նոտեցումը։

Տարատեսակ պատճառներով երկարաժամկետ պլանավորման ընթացքում ընդունվող որոշումները չեն կարող անմիջականորեն վերածվել ռեսուրսների կարծաժամկետ բաշխմանն առնչվող որոշումների, օրինակ պաշտպանական բյուջեին, նորակոչչիների տարեկան հավաքագրման, գնումների տարեկան կամ կիսամյակային ծրագրերին, ուսուցման ու պատրաստության մակարդակներին վերաբերող որոշումների։

Հիմնական պատճառներից մեկը հետևյալն է՝ երկարաժամկետ պլանավորման ժամանակային ընդգրկումը սովորաբար 10-ից 15 տարի է, և չնայած որ համապատասխան որոշումները հիմնվում են ռեսուրսների առկայության վրա<sup>87</sup>, դրանք ոչ միշտ են ենում ռեսուրսների սահմանափակությունից, մինչդեռ կարծաժամկետ ծրագրերը պետք է հիմնվեն ծախսերի մանրակրկիտ հաշվարկների վրա և «տեղավորվեն» պաշտպանական բյուջեի ակնկալվող

<sup>87</sup> Այսինքն՝ ապագայի ԶՈՒ կառուցվածքն ընդհանուր առմամբ իրատեսական և ֆինանսապես հիմնավորված է ընկալվում։

սահմաններում: Մեկ այլ պատճառ՝ պաշտպանության երկարաժամկետ պլանավորման և համապատասխան կարճաժամկետ ծրագրերի վրա աշխատելու միջակայքում կարող են տեղի ունենալ զինուժի զարգացման պայմանների փոփոխությունները: Նման փոփոխությունների շարքում կարելի է նշել կանխատեսված և փաստացի օպերատիվ միջոցառումների միջև տարրերությունները, սպառազինության որոշակի համակարգի գնման ձգձգումները, անձնակազմի պահմանման ծախսերի, գնաճի մակարդակի, վառելիքի գնի, գնումների հետ կապված ծախսերի և այլնի նախնական կանխատեսումների և իրական տվյալների միջև շերտումները: Այս ներածական մասում որպես երրորդ պատճառ իմաստ ունի նշել հետևյալ հանգամանքը զինուժի զարգացման որոշումները կայացվում են մի շարք տարատեսակ կազմակերպական գործընթացների արդյունքում, երբեմն նաև տարրեր լիազոր մարմինների կողմից: Օրինակ՝ պաշտպանության երկարաժամկետ պլանավորման արդյունքները կարող են հաստատվել կառավարության կողմից երեքից հինգ տարին մեկ, մինչդեռ երկրի խորհրդարանն ամեն տարի է որոշումներ ընդունում պաշտպանության ուղղվող բյուջեի վերաբերյալ և կարող է ճշումներ մտցնել մինչ այդ շնախատեսված կարիքների առնչությամբ<sup>88</sup>: Բացի այդ, եթե պաշտպանության երկարաժամկետ պլանավորումը կարողությունների հետ կապված կողմնորոշում ունի, ապա պաշտպանության առանձին կարճաժամկետ ծրագրերը սովորաբար գործ ունեն ռեսուրսների որոշակի տեսակի (դրամական միջոցների, մարտական տեխնիկայի, շնուրյունների և այլն) օգտագործման, ըստ այրմ՝ պաշտպանական կարողությունների այս կամ այն բաղադրիչի զարգացման հետ: Հետևաբար գործնականում բոլոր պաշտպանական կառույցները որևէ «մեխանիզմ» են կիրառում՝ համակարգելու կարողությունների բոլոր բաղադրիչների զարգացումը և կապակցելու պաշտպանական ռեսուրսների օգտագործումը պաշտպանական քաղաքականության նպատակների և երկարաժամկետ ծրագրերի հետ:

Կա երկու տարրեր մոտեցում պաշտպանական կարճաժամկետ ծրագրերի համակարգման և պաշտպանական քաղաքականության նպատակների իրագործմանը դրանց ուղղելու նկատմամբ: Սուածին դեպքում պաշտպանական ռեսուրսների կառավարիչները, ովքեր հաճախ հանդես են զայս որպես բյուջետային միջոցները տնօրինողներ, համաձայնեցնում են իրենց ծրագրերը, ինչպես նաև այդ ծրագրերի իրագործման հիմնական գործողությունները պաշտպանական կազմակերպության հորիզոնական կառույցների այն դեկավարների հետ, ովքեր պատասխանատու են զինուժի կարողությունների զարգացման համար: Միացյալ Թագավորության պաշտպանական համակարգում նրանց անվանում են «կարողությունների կառավարիչներ»: Պաշտպանական ծրագրերն ու ծրագրերի մշակման գործընթացը երկրորդ մոտեցման հիմքում են դրված: Պաշտպանական ծրագրերն օգտագործվում են կարճաժամկետ ծրա-

<sup>88</sup> Դրա մի օրինակն է բնական աղետի հետևանքների մեղմացմանն ուղղվող ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը:

գրերը և քաղաքականության նպատակները փոխվագակցելու և, միաժամանակ, կարողությունների բոլոր բաղադրիչների համակարգված զարգացումն ապահովելու համար:

Այս գլուխն անդրադառնում է պաշտպանական ծրագրերի և ծրագրերի մշակման գործընթացի օգտագործման հետ կապված հիմնական խնդիրներին: Ծրագրերի կառավարման ընդհանուր հարցերի գործառությային կառուցվածքի, դեկավարության տեսլականի հետ գործունեության համաձայնեցման, նպատակների և խնդիրների, ժամանակի և ծախսերի կառավարման, առաջնորդության, հաշվետվողականության և այլ սկզբունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ընթերցողը կարող է ստանալ մի շաբթ հրապարակումներից և առցանց ռեսուրսներից<sup>89</sup>: Այս գլխում հատուկ շեշտադրվում է զինուժի ծրագրահեն զարգացման մեկ կոնկրետ կողմ՝ ծրագրերի կառուցվածքը, որը հատկապես կարևոր է զինուժի զարգացման գործընթացը կարողությունների դաշտ ուղղելու հմաստով:

Այստեղ վերլուծվում են զինուժի ծրագրահեն զարգացման այն մոտեցման սկզբունքներն ու պրակտիկան, որը, ինչպես ցույց կտանք ստորև, համարժեք է պաշտպանական ռեսուրսների ծրագրահեն մենեջմենթին: Այս բաժինն ուրիշագույն է ծրագրերի և դրանց մշակման անհրաժեշտության նկատառումները, ցույց է տալիս, թե ինչպիսին պես է լինի արդյունավետ ծրագրային որոշումը, և որքանով է այն կախված ծրագրի կառուցվածքից, ապա անդրադառնում է ծրագրերի կառավարման գործընթացի հիմնական բաղադրիչներին և դրանց փոխվավածությանը: Եզրափակիչ մասում տեղ է գտել անցումային փուլում գտնվող երկրների զինուժի ծրագրահեն զարգացման արդյունավետ մշակման և իրականացման ընթացքում առաջացող հիմնական դժվարությունների հակիրճ վերլուծությունը:

## Հիմնավորում

Պետությունները ֆինանսական միջոցներ են ծախսում իրենց զինված ուժերի վրա նպատակ ունենալով ապահովելու ռիսկերի և սպառնալիքների որոշակի տեսակների հետ կապված իրենց անվտանգությունը և իրենց դաշնակիցների ու քաղաքացիների անվտանգությունը: Սակայն կարևոր են ոչ թե բուն զինված ուժերը, այլ նրանց համապատասխան կարողությունները, որոնք ապահովում են երկրի անվտանգության քաղաքականության իրականացումը:

Հետևաբար զինուժի կառավարման համակարգերի և պրակտիկայի զնահատում կատարելիս համապատասխան մասնագետը փորձում է հարաբերակցել, օրինակ, ռեսուրսների տեղաբաշխումը ռազմավարական քաղաքա-

<sup>89</sup> Տե՛ս, օրինակ, James T. Brown, *The Handbook of Program Management* (McGraw-Hill, 2007) աշխատությունը և հղումները հետևյալ կայքում՝ *Project Management Institute*, [www.pmi.org](http://www.pmi.org), մասնավորապես՝ դրա 2006թ. *The Standard for Program Management, and Program Management Professional*, [www.programmes.org](http://www.programmes.org).

կանության որոշումների հետ: Սովորաբար այն հարցն է ծագում, թե ինչքանով է ռեսուրսների տեղաբաշխումը նպաստում երկրի անվտանգության և պաշտպանական քաղաքականության նպատակների իրականացմանը: Այստեղ առանձին խնդիր է ռեսուրսների կառավարման «արտադրյալներին ուղղված կողմնորոշումը», այսինքն՝ այն, թե ինչպես է պաշտպանական ռեսուրսների օգտագործումն ապահովում երկրի անվտանգության և պաշտպանական քաղաքականության իրականացման համար պահանջվող «արտադրյալը»: Պաշտպանության պլանավորման ասպարեզում մոտավորապես վերջին տասը տարում տեղի ունեցած զարգացումների արդյունքում համընդիմուր ճանաչում է գտել այն փաստը, որ պաշտպանական գերատեսչության հիմնական «արտադրյալը» նրա կարողություններն են:

Բացի այդ, պաշտպանության պլանավորման և զինուժի մենեջմենթի արդյունավետ համակարգերում ռեսուրսների հատկացումը նախատեսված է ապահովելու, որ կարողությունների ողջ տեսականին համաշխարհեն բաշխված լինի զինված ուժերի համար սահմանված բոլոր հիմնախնդիրների միջև, կարողությունները զարգացվեն և պահպանվեն արդյունավետ, ֆինանսավես հիմնավորված եղանակով, պլանավորման ոխակերը հավոր պատշաճի գնահատվեն, իսկ ոխակային գործոններն ամբողջովին ներառվեն ռեսուրսներին առնչվող որոշումների կայացման գործընթացում: Պաշտպանության ռեսուրսների կառավարման համար հարկ է հաշվի առնել նաև երեք լրացուցիչ չափանիշներ՝ թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ճկունությունը: Դրանց մասին կիսումի այս գլխի երկրորդ մասում:

Ակնհայտ է, որ պաշտպանական ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծման ուղին մեկը չէ: ՆԱՏՕ-ի անդամներից և գործընկեր երկրներից շատերը, հաշվի առնելով ԱՄՆ-ի կուտակած փորձը, սկսած վաղ 1960-ականներից՝ կիրառում են ռեսուրսների կառավարման այնպիսի համակարգեր, որոնցում մշակված պլանները կապակցված են բյուջեների հետ՝ ծրագրերի միջոցով<sup>90</sup>:

Այսպիսով՝ ծրագրերի կիրառման միջոցով պաշտպանական գերատեսչությունները հետամուտ են լինում քաղաքականության մեջ առաջարրված պահանջների և բյուջեների կապակցմանը: Երկրորդ՝ ծրագրերը նախատեսում են ապագայի պաշտպանական և զինված ուժերի կառուցվածքներին վերաբերող և սովորաբար ավելի երկարաժամկետ (10, 15 կամ ավելի տարվա հեռահար նպատակների հետ կապված) փաստաթղթեր հանդիսացող պլանները կամ տեսլական վերածել կարճաժամկետ միջոցառումների բյուջեների ձևավորման, գնումների, ուսուցման և այլնի: Կարևոր է այն, որ պաշտպանա-

<sup>90</sup> ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղարի աշխատակազմի [www.dod.mil/comptroller/icenter/budget/ ppbsint.htm](http://www.dod.mil/comptroller/icenter/budget/ ppbsint.htm) վեբ-կայքում ներկայացված են ԱՄՆ-ի Պլանավորման, ծրագրավորման, բյուջետավորման և իրականացման համակարգի (PPBES) պատմական ակնարկը և ներկայիս զարգացումների մասին տեղեկատվությունը: PPBES-ի հիմքական տեքստը Charles J. Hitch and Roland N. McKean, *The Economics of Defense in the Nuclear Age* (Cambridge, MA: Harvard University Press, 1960).

կան ծրագրերի շնորհիվ ռազմավարական քաղաքականության և բյուջեների, երկարաժամկետ տեսլականի և կարճաժամկետ ծրագրերի միջև կապերն ավելի բափանցիկ են դառնում, այսինքն՝ հստակորեն ընկալելի որոշում կայացնողների և բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի համար:

Պաշտպանական ծրագրերը մենեշմենթի կարևոր գործիքներ են: Պլանավորման ընթացքում ունեցած առանցքային դերի հետ մեկտեղ դրանք նպաստում են իրականացնան ողջ գործընթացի լրջագույն վերահսկողության անցկացմանը, քանի որ պաշտպանական ծրագրերի կարգավիճակի վերաբերյալ քարման տեղեկատվություն առանձարկում է կարողանում են իրատեսորեն զնահատել պաշտպանության ոլորտի բարեփոխումներին և փոխակերպմանն ուղղված աշխատանքի արդյունավետությունը, իսկ անհրաժեշտության դեպքում ճշգրտող քայլեր ձեռնարկել: Բացի այդ, պաշտպանական ծրագրերի մասին տեղեկատվությունը դյուրացնում է իշխանության օրենսդիր ճյուղի և նրա մասնագիտացված կազմակերպությունների, օր. ազգային առողջութորական մարմնի կողմից հսկողությունն ու առողջութը:

## Ի՞նչ է «պաշտպանական ծրագիրը»

Այսօր տարածված է այն ընկալումը, որ պաշտպանական գերատեսչության հիմնական պրոդրուկտը կամ «արտադրյալը» նրա ունեցած կարողություններն են, որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են գործադրվել երկրի և դաշինքի անվտանգության քաղաքականության իրականացումն ապահովող առաջարկանքների կատարման նպատակով:

Նախ ցանկացած տեսակի կարողության ձևավորումը պահանջում է հայեցակարգի, կազմակերպական կառույցների, աշխատակազմի, սպառագինության համակարգերի, ենթակառուցվածքի, ուսուցման և այլ ասպեկտների լրջորեն համակարգված զարգացում:

Երկրորդ՝ պաշտպանական կարողությունների զարգացումը, աննշան բացառություններով, երկարատև գործընթաց է: Օրինակ, եթե երկիրը կործանիչների և ոմքարկուների զարգացած ավիացիա չունի, սակայն ցանկանում է համապատասխան կարողություն ձևավորել քարձը ճշգրտության հրթիւային հեռահար հարվածների համար, ամենայն հավանականությամբ շուրջ տասը տարի կապահանջվի նման որոշում ընդունելու պահից մինչև այդ կարողությունը հնարավոր լինի գործադրել<sup>91</sup>:

Երրորդ՝ նոր կարողությունների զարգացումը կարող է բավականին ծախսատար լինել: Ընթացիկ քաղաքական գծից տարբերվող կարողությունների պահպանումը ևս մեծ ծախսեր կարող է պահանջել:

Չորրորդ՝ պաշտպանական գերատեսչությունը տարատեսակ կարիքներ ունի, և ապագա օպերացիաների համար նախատեսված կարողությունների

<sup>91</sup> Նոյնիսկ այն դեպքում, եթե որևէ մեկն արդեն իսկ արտադրում է առաջարված պահանջներին համապատասխանող օդանավ:

զարգացումը դրանցից միայն մեկն է: Ընդհանրապես, որոշումներն այս մասին, թե որ կարողությունները պետք է զարգացնել, ինչ մակարդակի հասնելու համար և ինչ ժամկետներում, կայացվում են ավելի լայն համատեքստում՝ հաշվի առնելով նաև հետևյալ գործուները:

- լնաբացիկ օպերացիաների կարիքներ,
- երկարաժամկետ ներդրումներ, օր. գիտության և տեխնոլոգիաների, ուսումնական գործընկերությունների զարգացման ոլորտներում, և
- ժառանգված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտություն:

Այդ իսկ պատճառով պաշտպանության արդյունավետ մենեջմենքը հիմնվում է ծրագրերի, այդ թվում զինված ուժերի կարողությունների ծրագրահեն զարգացման վրա: Նախքան զինուժի ծրագրահեն զարգացման խնդիրն անդրադառնալը հարկ է ավելի հստակ ներկայացնել, թե ինչ է նշանակում «կարողություն» եզրույթը:

## **Կարողությունների մոդելներ**

«Կարողությունը» որոշ իմաստով վերացական հասկացություն է: Առօրեական գործածության մեջ այն նշանակում է ինչ-որ բան լինելու, անելու կամ ինչ-որ բանի վրա ներգործելու ունակություն: Պահանափորման միջավայրում անհրաժեշտ է կարողությունների ընդհանուր շրջանակ կամ մոդել, որը բոլորին հասկանալի կարգով ընդորկում է կարողությունների բոլոր բաղադրիչները:

Պաշտպանության պլանավորման ավատրակացի մասնագետները «կարողությունը» սահմանում են որպես

Որոշակի միջավայրում և կոնկրետ ժամանակամիջոցում ցանկալի օպերատիվ արդյունքի հասնելու և այդ արդյունքը որոշակի ժամանակ պահպանելու ուժ<sup>92</sup>:

ԱՄՆ-ում երկրի տարածքային անվտանգության ներկայացուցիչները հետևյալ սահմանումն են կիրառում.

Կարողությունը միջոց է՝ որոշակի պայմաններում և ըստ կատարողական որոշակի չափանիշների կրիստիկական նշանակություն ունեցող մեկ կամ ավելի լառաջաղականը(ներ) կատարելու համար<sup>93</sup>:

Կարողությունը հնարավոր է ապահովել ամենատարբեր եղանակներով: Սի շարք երկրներ մշակել են ստանդարտ նշողելներ, որոնք նկարագրում են համակարգերի կարողության ասպեկտները.

- Կանադայում կարողության բաղադրիչների կառուցվածքը հայտնի է որպես ԱՀԵՀՏՏ (PRICIE)<sup>94</sup>, որը նշանակում է

<sup>92</sup> *Defence Capability Development Manual* (Canberra, Department of Defence, 2006), 5, [www.defence.gov.au/publications/dcdm.pdf](http://www.defence.gov.au/publications/dcdm.pdf).

<sup>93</sup> *National Preparedness Guidance*, Homeland Security Presidential Directive 8 (Department of Homeland Security, April 2005), 6-7.

<sup>94</sup> Կոչվում է նաև «կարողությունների գործառության բաղադրիչներ»: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս՝ *Capability Based Planning for the Department of National Defence and the Canadian Forces* (Canada: Department of National Defence, May 2002), 24-27, [www.vcds.forces.gc.ca/dgsp/00native/rep-pub/j-cbpManualPdf\\_e.asp](http://www.vcds.forces.gc.ca/dgsp/00native/rep-pub/j-cbpManualPdf_e.asp) (20 January 2006).

- **Աշխատակազմ,**
- **Հետազատում և զարգացում/Օպերատիվ հաշվարկներ,**
- **Ենթակառուցվածք և կազմակերպում,**
- **Հայեցակարգեր, սկզբունքներ և կոլեկտիվ պատրաստություն,**
- **SS ենթակառուցվածք,**
- **Սարքավորումներ, պաշարներ և ծառայություններ:**
- **Պլանավորմանը գրադպող ավատրավիացի մասնագետներն օգտագործում են ուր խմբից բաղկացած կառուցվածք, որը կոչվում է «Կարողության իմնարար բաղադրիչներ» կամ ԿՀԲ (FIC)<sup>95</sup>: Դրանք են՝
 
  - Կազմակերպումը,
  - Աշխատակազմը,
  - Կոլեկտիվ ուսուցումը,
  - Հիմնական համակարգերը,
  - Մատակարարումները,
  - Ծինությունները,
  - Ապահովումը,
  - Հրամանատարությունն ու մենեջմենթը:**
- **ԱՄՆ-ի պլանավորողները կիրառում են ԱԿՊԶԱՄ (DOTMLP)<sup>96</sup> կոչվող կառուցվածքը՝**
  - **Ակզրունքներ,**
  - **Կազմակերպում,**
  - **Պատրաստություն և ուսուցում,**
  - **Զինամքերք,**
  - **Առաջնորդություն,**
  - **Մարդիկ:**

Փոխակերպման հարցերով ՆԱՏՕ-ի հրամանատարության (ACT) ստեղծման և զինված ուժերի պլանավորման գործընթացներում ՆԱՏՕ-ի դերի մեծացման պայմաններում կարելի է կանխատեսել, որ ACT-ի կարողությունների մոդելը, հնարավոր է որոշ ոչ մեծ փոփոխություններով, իր տեղը կգտնի

<sup>95</sup> *Guide to Capability-Based Planning*, TR-JSA-TP3-2-2004 (The Technical Cooperation Program, Joint Systems and Analysis Group, Technical Panel 3, MORS Workshop, October 2004), 7, footnote 4, [www.mors.org/meetings/cbp/read/TP-3\\_CBP.pdf](http://www.mors.org/meetings/cbp/read/TP-3_CBP.pdf).

<sup>96</sup> Նոյն տեղում, 7, տողատակի ծանոթություն 6: Այս կառուցվածքի կիրառությունը լայնորեն տարածված է ԱՄՆ-ի ցամաքային զորքերի պլանավորման մասնագետների շրջանում (տե՛ս *How the Army Runs*, 10, 38-42), իսկ վերջերս ռազմաօդային և ռազմածովային ուժերը, ինչպես նաև միացյալ կազմակերպությունները (այդ դեպքում ավելանում է «Ծինություններ» համացությունը DOTMPL-F) նոյնպես օգտակար են համարում այն գործառության կարիքներն ու բացթողությունները վերլուծելու և կազմակերպական կառուցվածքի միջոցով լուծումներ գտնելու համար: Տե՛ս և, օրինակ, Ted Warner, “DOD’s Ongoing Efforts to Implement Capabilities-Based Planning,” *Monterey Strategy Seminar* on Capabilities-Based Defense Planning: Building a 21<sup>st</sup> Century Force (Monterey, CA: Center for Contemporary Conflict and the Cebrowski Institute for Information Innovation and Superiority, September 2004).

բազմաթիվ երկրների պլանավորման համակարգերում: ՆԱՏՕ-ի այդ կառուցվածքը հայտնի է որպես ՄԿՈՒԶԱՍԸՓ (DOTMLPFI)<sup>97</sup>, որը հետևյալ հասկացությունների հավավումն է.

- **Սկզբունքներ,**
- **Կազմակերպում,**
- **Ռատուցում,**
- **Զինամքերք,**
- **Առաջնորդություն,**
- **Աշխատավազմ,**
- **Շինություններ,**
- **Փոխհամատեղելիություն:**

Թեև կիրառվող մոդելները կարող են տարբեր լինել, դրանցից յուրաքանչյուրը նախատեսված է ապահովելու կարողությունների բաղադրիչների համապատասխանությունը, կայունությունը և հավասարակշռվածությունը, իսկ ցանկացած կարողության զարգացում պահանջում է նաև մարդկային, նյութատեխնիկական, գաղափարախոսական, կառուցվածքային և ռատուցողական բաղադրիչների զարգացում: Այդպիսի զարգացում են ապահովում ծրագրերը:

## **Պաշտպանական ծրագրեր**

Պաշտպանական ծրագրի նպատակը ռեսուրսների առկա սահմանափակության պայմաններում պաշտպանության նպատակների իրազործումն է: «Պաշտպանական ծրագիրը» կարելի է սահմանել հետևյալ կերպ.


*Արդյունքներին հասնելու, այսինքն՝ կարողություններ ստեղծելու և պահպանելու նպատակով առկա և ակնկալվող ռեսուրսների (մարդկային, նյութատեխնիկական, ֆինանսական և այլ) օգտագործման համալիր պլան*<sup>98</sup>:

Պաշտպանական ծրագրի առաջնային գործառույթը ռեսուրսների վերաբերյալ որոշումների կայացմանն աջակցելն է, ռեսուրսների կապակցումն արտադրյալի (արողությունի) հետ (Գծապատկեր 1) և արտադրյալով պայմանավորված քաղաքականություն և պլանավորում ապահովելը: Խոսքը սովորաբար կարճաժամկետ ծրագրի մասին է, որն ընդգրկում է առաջիկա չորսից ուր տարին: Քանի որ ՆԱՏՕ-ն իր պաշտպանության պլանավորման և վերանայման գործընթացներում, այսինքն՝ *Պաշտպանության պլանավորման հարցաշարի տեսքով ներկայացվող հաշվետվությունների ձևաչափով գինված ուժերին առաջարկված հիմնանապատակների մեծ մասի դեպքում, վեցամյա ժամկետ է կիրառում, ուստի ՆԱՏՕ-ի անդամ երկրներից և Դաշինքի անդա-*

<sup>97</sup> Տե՛ս, օրինակ, Admiral Sir Mark Stanhope, (then) Acting Supreme Allied Commander Transformation, Briefing to the Conference of National Armaments Directors /CNAD/ (26 October 2005), [www.act.nato.int/multimedia/speeches/2005/051026asactcnad.html](http://www.act.nato.int/multimedia/speeches/2005/051026asactcnad.html).

<sup>98</sup> Աղապացված է ըստ ՊՆ պաշտոնական փաստաթղթի, *Concept for Planning, Programming, and Budgeting in the Ministry of Defence and the Armed Forces* (Sofia: Military Publ. House, 2001), 14-15:

մակցության թեկնածուներից շատերը նույնապես պլանավորման վեցամյա ծրագրեր են կիրառում: Բացի ռեսուրսների և նախատեսված արդյունքների փոխկապակցումից՝ ծրագիրը նպատակ ունի կապակցելու նաև երկարաժամկետ պլանները բյուջեին և այլ կարճաժամկետ ծրագրերին:



#### Գծապատկեր 1. Պաշտպանական ծրագրի նպատակադրումը

## Ծրագրի կառուցվածքը

Պաշտպանական ծրագիրն աստիճանակարգային կառուցվածք ունի: Այն բաղկացած է լինում առանձին ծրագրերից, ենթածրագրերից և այլն: Պաշտպանության ռեսուրսների ծրագրահեն կառավարման ներդրմանը հետամուտ երկրներին խորհուրդ է տրվում ծրագրի կառուցվածքի մշակման ընթացքում դեկալարվել ստորև ներկայացված մի քանի առանցքային սկզբունքներով.

- Ծրագրերը պետք է հնարավորություն ընձեռն որքան հնարավոր է հստակորեն հարաբերակցելու ծախսերը «արտադրյալի», այսինքն կարողությունների հետ (սեւ նաև Գծապատկեր 1-ը):
- Այն պետք է համընդգրկուն լինի.
  - Ծրագրերի շրջանակներից դուրս ոչինչ չի կարող արվել, և որևէ գումար չի կարող ծախսվել,
  - Այն պետք է հաշվի առնի պաշտպանության վրա ծախսվելիք բոլոր ֆինանսական միջոցները (ՊՆ բյուջեն, այլ նախարարությունների բյուջեները, երկողմ ծրագրերը, ՆԱՏՕ-ի ներդրումը, աջակցության միջոցները և այլն),
  - Վերջնական որոշումները պետք է կայացվեն բոլոր ծրագրերի վերաբերյալ միաժամանակ՝ օբյեկտիվորեն վերլուծելով հնարավոր փոխազդականության տարրերակները:
- Այն պետք է ծրագրերի կառավարիչների միջև պարտականությունների իրատեսական բաշխում ապահովի (ծրագրերի կառավարիչները պետք է շահագործված լինեն՝ ծրագրերը պատշաճ մշակելու և արդյունավետ իրականացնելու):
- Այն պետք է կառավարելի լինի (ծրագրերի կառուցվածքն ու ընթացակարգերը պետք է բույլատրեն ռեսուրսների հատկացման ժամանակ

հնարավոր այլընտրանքային լուծումների վերհանումը և օբյեկտիվ գնահատումը<sup>99</sup>:

Զինված ուժերի զարգացման ծրագրերը նման համընդգրկուն ծրագրի գեր մի մասն են կազմում, և զինուժի զարգացմանն առնչվող որոշումները ևս հանդես են գալիս համապարփակ ծրագրային որոշումների կազմում:

Այս պահանջներից առաջինն ապահովելու նախատակով Կանադայի ազգային պաշտպանության նախարարությունը կիրառում է այնպիսի ծրագրային կառուցվածք, որում առանձին ծրագրերն ուղղակիորեն կոչվում են «կարողությունների զարգացման ծրագրեր»։ Կանադացի ալանավորողներն աշխատում են հինգ նման ծրագրերի վրա, որոնք միասին վերցրած՝ «ընդգրկում են Կանադայում պաշտպանական գործունեության բոլոր հիմնարար ասպեկտները, և դա անում են կարողությունների զարգացման պլանավորման բոլոր տարրերը համախմբելով պարզ, սակայն ոչ պարզունակ համակարգի շրջանակում»<sup>100</sup>։ Ահա կարողությունների զարգացման այդ հինգ ծրագրերը.

1. Կառավարման օպերատիվ համակարգ,
2. Օպերացիաների անցկացում,
3. Զինուժի պահպանում,
4. Զինուժի գեներացում,
5. Կորպորատիվ քաղաքականություն և ռազմավարություն:

Զինված ուժերի ծրագրահեն մենեջմենթի համակարգի զարգացման ընթացքում Ուկրաինայի պաշտպանության գերատեսչության պաշտոնյաները քննության են առնում հետևյալ տասնչորս ենթածրագրերից բաղկացած ծրագրի հնարավոր կառուցվածքը.

1. Կարողություններ խաղաղարար օպերացիաների անցկացման համար,
2. Արագ արձագանքում,
3. Երկրի տարածքի պաշտպանություն,
4. Պաշտպանական ներուժի խթանման ուղղված կարողություններ (հավաքագրում և պահեստայիններ),
5. Կառավարում, հսկողություն և կապի միջոցներ (ռազմավարական և օպերատիվ C3),
6. Կենտրոնացված նյութատեխնիկական ապահովում,
7. Պաշտպանության և զինված ուժերի մենեջմենթ (ՊՆ, զիսավոր շտար և օժանդակող ստորաբաժանումներ),
8. Մասնակցություն օպերացիաներին (երկրից դրւու և նրա ներսում),
9. Գիտահետազոտական աշխատանք և մշակումներ,
10. Ուսուցում, պատրաստություն և հավաքագրում,

<sup>99</sup> Todor Tagarev, “Introduction to Program-based Defense Resource Management,” *Connections: The Quarterly Journal*, 5, no. 1 (Spring-Summer 2006): 55-69. Հոդվածը հրապարակվել է նաև ռուսերեն և ուկրաիներեն:

<sup>100</sup> *Capability Based Planning for the Department of National Defence and the Canadian Forces*, 4-5.

11. Բուժսպասարկում (այդ թվում՝ վերականգնողական և առողջարանային բուժում),
12. Բնակարանների ապահովում,
13. Սոցիալական հարմարում (աղապտացիա),
14. Ավելցուկային սպառազինման համակարգերի, սարքավորումների, զինամթերքի և ենթակառուցվածքի օգտագործում:

Այս երկու ծրագրային կառուցվածքները դրսեւորում են նմանատիպ մոտեցում (կանխատեսվող) «ընթացիկ օպերացիաների» (տես կանադական ծրագրային կառուցվածքի # 2-ը և ուկրաինականի # 8-ը), կառավարման օպերատիկ համակարգի կարողությունների (համապատասխանաբար ծրագրեր # 2 և # 5) և մենեջմենների կենտրոնացված գործառույթների (համապատասխանաբար ծրագրեր # 5 և # 7) նկատմամբ<sup>101</sup>: Ի տարրերություն կանադական ծրագրային կառուցվածքի՝ Ուկրաինայի ծրագրային կառուցվածքի նախագիծը հստակորեն թվարկում է «ապազային միտված» ներդրումներին (ծրագիր # 9), ժառանգված հիմնախնդիրների լուծմանը (ծրագիր # 14 և մասամբ՝ ծրագիր # 13) և «կյանքի որակի» հետ կապված հարցերին (ծրագիր # 12 և մեծամասամբ՝ ծրագիր # 11) առնչվող պահանջները:

Ինչպես կանադական, այնպես էլ ուկրաինական (դեռևս նախագծի տեսքով) ծրագրային կառուցվածքները կարողությունների զարգացման կողմնորոշում ունեն: Այլ երկրներում կիրառվում են առաջին հերթին և զգալի չափով պաշտպանական գերատեսչության կազմակերպական կառուցվածքն արտացոլող ծրագրային կառուցվածքներ:

Այսպես, ԱՄՆ-ի «Գալիք տարիների պաշտպանական ծրագիրը» (ԳՏՊԾ, FYDP) կազմված է հետևյալ տասնմեկ հիմնական պաշտպանական ենթածրագրերից:

- Ծրագիր 1. Ռազմավարական նշանակության զինված ուժեր,
- Ծրագիր 2. Ընդհանուր նշանակության զինված ուժեր,
- Ծրագիր 3. Հաղորդակցության միջոցներ, հետախուզություն և տիեզերք,
- Ծրագիր 4. Շարժունակություն (օդային և ծովային փոխադրումներ),
- Ծրագիր 5. Զինված ուժերի պահետային գործեր,
- Ծրագիր 6. Գիտահետազոտական աշխատանք և մշակումներ,
- Ծրագիր 7. Կենտրոնացված մատակարարումներ և սպասարկում,
- Ծրագիր 8. Ուսուցում, առողջապահական և աշխատակազմի սպասարկման այլ գործունեություն,
- Ծրագիր 9. Վարչարարություն և հարակից միջոցառումներ,
- Ծրագիր 10. Աջակցություն այլ պետություններին,
- Ծրագիր 11. Հատուկ օպերացիաների ուժեր<sup>102</sup>:

<sup>101</sup> Այս նմանություններն ի հայտ են եկել հետահայաց կարգով: Ուկրաինական ծրագրի կառուցվածքի վշակման ժամանակ մասնագետները չեն օգտվել կանադական կառուցվածքին վերաբերող տեղեկատվություններից:

<sup>102</sup> How The Army Runs: A Senior Leader Reference Handbook, 25th edition 2005-2006 (Carlisle Barracks, PA: U.S. Army War College, 2005), 147, [www.carlisle.army.mil/USAWC/](http://www.carlisle.army.mil/USAWC/)

Բուլղարիայի փորձն ապահովում է կազմակերպական ուղղվածության ծրագրային կառուցվածքի և մեկ օրինակ.

Ծրագիր 1. Ցանաքային զորքեր,

Ծրագիր 2. Ռազմաօդային ուժեր,

Ծրագիր 3. Նավատորմ,

Ծրագիր 4. Կենտրոնական իրամանատարություն և աջակցություն,

Ծրագիր 5. Փոխհամատեղելիություն և մասնակցություն բազմազգ ստորաբաժնումների կազմում,

Ծրագիր 6. Կրթություն և որակավորում,

Ծրագիր 7. Անվտանգություն. ռազմական ուստիկանություն և հակահետախուզություն,

Ծրագիր 8. Անվտանգություն համագործակցության և ինտեգրման միջոցով,

Ծրագիր 9. Կյանքի որակ,

Ծրագիր 10. Գիտահետազոտական աշխատանք և մշակումներ,

Ծրագիր 11. Վարչական մենեջմենթ,

Ծրագիր 12. C4ISR համակարգեր (իրամանատարություն, հսկողություն, կապ, համակարգչային ցանցեր, հետախուզություն, վերահսկում, դիտարկում),

Ծրագիր 13. Ռազմական տեղեկատվություն (հետախուզություն)<sup>103</sup>:

Կարողություններին առնչվող կողմնորոշում ունեցող ծրագրային կառուցվածքը որոշում կայացնողներին օգնում է ավելի լավ ընթացելու ռեսուրսների վերաբերյալ նրանց որոշումների հայեցակարգային հետևանքները: Այդուհանդեռն, եթե ծրագրային կառուցվածքի առաջին մակարդակին բնորոշ է հիմնականում կազմակերպական կողմնորոշում, անհրաժեշտ է ներառել լրացուցիչ միջոցառումներ, որպեսզի ապահովի պաշտպանության ռեսուրսների կառավարման արդյունահեն կողմնորոշումը՝ օգտվելով, օրինակ, Միացյալ Թագավորության «կարողությունների գարգացման կառավարիչների» ինստիտուցիոնալացման փորձից:

## Ծրագրեր՝ որպես հաղորդակցման լեզու

Առաջին մակարդակի բոլոր ծրագրերի ամբողջությունը ձևավորում է «Պաշտպանական ծրագիր» հասկացությունը<sup>104</sup>: Առանձին ծրագրերը, որոնք, ըստ էության, պաշտպանական ծրագրի բաղկացուցիչ ենթածրագրերն են, հանդես են զայիս որպես քննարկումների և հաղորդակցման բառապաշտիքի հիմնական տարրեր բարձրաստիճան գործադիր դեկազրների մակարդակներում (պաշտպանության նախարարությունում, պաշտպանության և ֆինանսների նախարարությունների միջև, Նախարարների խորհրդում), գոր-

dclm/html/figureshd.htm (24 April 2006).

<sup>103</sup> *Concept for Planning, Programming, and Budgeting in Bulgaria's Ministry of Defence and the Armed Forces* (Sofia: Ministry of Defence, 2001).

<sup>104</sup> Առավել հայտնի սահմանումը ԱՄՆ-ի «Գալիք տարիների պաշտպանական ծրագիրն» է (ԳՏՊԾ, FYDP):

ծաղիք և օրենսդիր մարմինների միջն, ինչպես նաև խորհրդարանում՝ պաշտպանական քաղաքականության և պաշտպանությանը հատկացվող բյուջեի քննարկումների ժամանակ:

Համապատասխան ղործուների մասնագետները մշակում են ծրագրեր և ծրագրերի այլնութրանքային տարրերակներ: Կարողության զարգացման արդյունավետ ծրագրի մշակման, ինչպես նաև այդ ծրագրի ծախսային մասը կազմելու, այլնութրանքային ծրագրեր մշակելու և համեմատելու համար պահանջվում են նշանակալի փորձառություն և մասնագիտական գիտելիքներ:

Սյու կողմից՝ ինչպես կառավարության, այնպես էլ խորհրդարանի նակարգակներում որոշումներ կայացնողները որպես պաշտպանական քաղաքականության ձևավորման անկյունաքարեր կիրառում են առանձին ծրագրեր և ծրագրերի այլնութրանքային տարրերակներ: Ծիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուրս բառեր է գործածում՝ նախադասություն կազմելու համար<sup>105</sup>, որոշում կայացնողներն ել օգտագործում են ներուժ, այլնութրանքային ծրագրերը պաշտպանական համային նպատակներին լավագույնս համապատասխանող կառույցից տարրերակն ստեղծելու համար<sup>106</sup>: Պաշտպանության պլանավորման առաջադիմ համակարգերում այս խնդիրը հայտնի է որպես «կարողությունների բրապանակի» ստեղծում:

Օրինակ՝ 2003 թ.-ին՝ պաշտպանության բյուջեի առաջարկված նախագծի քննարկման ժամանակ, ԱՄՆ-ի Կոնգրեսը որոշում ընդունեց ցածր հզորության միջուկային գեների կամ «մինի ռումբերի» հայեցակարգի մշակման ծրագիրը չփնտանսավորելու նասին: Հայեցակարգային (և քաղաքական) նկատառումներից ելնելով՝ Ներկայացուցիչների Պալատի անդամները որոշեցին, որ այդ ծրագիրը չի համապատասխանում սահմանված նպատակներին և օրենսդրական պահանջներին, և այդ հիմքով ծրագիրը մերժվեց: Ծրագրը կրում էր 6 միլիոն ԱՄՆ դոլարի «գնապիտակ», սակայն Պենտագոնն այդպես էլ չստացավ այդ գումարը<sup>107</sup>:

<sup>105</sup> Պատկերավոր ասած՝ ծրագրերն ու ծրագրերի այլնութրանքները կարելի է դիտարկել որպես տարրեր չափերի և ձևի այլուսներ, որոնցից պաշտպանական քաղաքականություն կերտողները պետք է ծիշտ ընտրություն կատարեն՝ նախատեսված գումարով որակյալ շենք կառուցելու համար:

<sup>106</sup> Այդպիսի կառուցվածքները ևս ենթակա են տարատեսակ սահմանափակումների ազդեցության, ընդ որում՝ հիմնական սահմանափակումներից մեկը բյուջետային հատկացումների հաստատված մակարդակն է:

<sup>107</sup> Ավելի ճիշտ 2004 թ. պաշտպանության բյուջեի օրինագիծը նախատեսում էր փոքր հզորության (5 կիլոտոննայից պակաս) միջուկային զինատեսակների գիտակետագործական նախագծերը, բայց ոչ՝ նմանատիպ միջուկային զինատեսակների համակարգի մշակումներն ու արտադրությունը: Բացի այդ, 2004 թ. պաշտպանության բյուջեի օրինագիծը մի դրույթ էր պարունակում, ըստ որի՝ Նախազահ Բուշը չի կարող առանց Կոնգրեսի համաձայնության ցուցում տալ նոր սերնդի մարտավարական միջուկային զինատեսակների լայնածավալ մշակումներ կատարելու մասին: Տե՛ս Merle D. Kellerhals, “Congress Agrees to Let Pentagon Study Low-Yield Nuclear Weapons,” Washington File, 23 May 2003, [www.iwar.org.uk/news-archive/2003/05-23-2.htm](http://www.iwar.org.uk/news-archive/2003/05-23-2.htm). Լրացուցիչ տեղեկատվությունն էներկայացված հետևյալ աղյուրի Justine Wang, “Congressional

Համեմատության կարգով նշենք, որ միայն ռեսուրսներին (կամ Գծապատկեր 1-ի ներդրումների հատվածին) վերաբերող քննարկումը չի կարող համարվել պաշտպանական քաղաքականության խնդիրների քննարկում: Համապատասխանաբար, պաշտպանության բյուջեին վերաբերող որոշումը, որը ձևակերպված է բացառապես բյուջետային կատեգորիաների (վերնագրերի, հատկացումների, պարբերությունների և այլնի) լեզվով, չի կարող հանդես գալ որպես ռեսուրսների բաշխմանը վերաբերող բափանցիկ որոշում<sup>108</sup>:

Նախորդ օրինակում, եթե Կոնգրեսը միայն բյուջեի վերաբերյալ որոշում կայացներ, Պենսագրնը որևէ խնդիր չի ունենա մինի-ռումբերի մշակումների վրա 6 միլիոն ԱՄՆ դոլար ծախսելու հետ կապված՝ 401 միլիարդ դոլարի ընդհանուր բյուջեի պայմաններում<sup>109</sup>:

Եվս մեկ օրինակ կարող է ծառայել ԱՄՆ-ի օրենսդիրների որոշումը 2003 թ.-ի համեմատ ցամաքային զորքերի 2004 թ. բյուջեն գրեթե 20 միլիարդ ԱՄՆ դոլարով, իսկ զինվորների թիվը մոտավորապես 30.000-ով ավելացնելու մասին: Հարկ է նշել, որ այս որոշումները, համապատասխանելով ընթացիկ գործողությունների պահանջներին, իհմնված էին 2004-2009 թթ. ծրագրի վրա: Առաջարկված ծրագիրը նախատեսում էր որոշակի կարողությունների ձևավորում և, միաժամանակ, Սառը պատերազմի հետ կապված մի շարք ավելի ավանդական կարողությունների մի մասի վերացում: Գծապատկեր 2-ում ներկայացված են այդ վերակազմավորումներին վերաբերող մանրամասները<sup>110</sup>: Այսպիսով՝ բյուջեի և անձնակազմի մակարդակները սահմանվել էին ըստ այն կարողություններին վերաբերող որոշումների, որոնք անհրաժեշտ են համարվել անվտանգության և պաշտպանության նպատակների իրազործնան համար:


---

Bills Passed Support Bush Agenda for New Nuclear Weapons” (Nuclear Age Peace Foundation, 9 December 2003), [www.wagingpeace.org/articles/2003/12/09\\_wang\\_congressional-bills.htm](http://www.wagingpeace.org/articles/2003/12/09_wang_congressional-bills.htm).

<sup>108</sup> Այստեղ «Քափանցիկ» բառը նշանակում է «միանգամայն հասկանալի», այսինքն՝ որոշում կայացնողները լիովին ըմբռնում են իրենց որոշումների հետևանքները որպեսն թե բացասական:

<sup>109</sup> Նույն կերպ են գործում ՆԱՏՕ-ի նոր անդամներից և գործընկեր երկրներից շատերի օրենսդիրները:

<sup>110</sup> Building Army Capabilities, Draft Working Paper, prepared on behalf of President Bush (28 January 2004), [www.comw.org/qdr/fulltext/0401armstructbrief.ppt](http://www.comw.org/qdr/fulltext/0401armstructbrief.ppt).



Գծապատկեր 2. ԱՄՆ բանակի վերակազմավորումն ըստ 2004-2009 թթ. ծրագրի

## Զինուժի զարգացման և պաշտպանական ռեսուրսների կառավարման գործընթաց

Ուսուրաներին վերաբերող որոշումները կայացվում են մի գործընթացի շրջանակում, որն ինքնին պետք է քափանցիկ լինի որոշում կայացնողների համար, որպեսզի, օրինակ, հնարավոր լինի հեշտությամբ դիտարկել ողջ շրջան՝ սկսած ազգային անվտանգության նպատակներից, պաշտպանության ոլորտի խնդիրներից մինչև հարկադարձների վճարած գումարները: Ուսուրաների կառավարման գործընթացի նկատմամբ առաջարկվող պահանջների շարքում այս ներածական մասը հակիրճ անդրադառնում է երեք հիմնական ասպեկտների:

- Ինչպես ստեղծել ռեսուրսների սղության պայմաններում ֆինանսապես իրատեսական ծրագրեր:
- Ինչպես վարվել անորոշության առկայության պայմաններում:
- Ինչպես աջակցել պաշտպանության նախարարության քաղաքացիական առաջնորդներին, նրանց վերապահված զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության լիազորությունների և պարտականությունների իրականացման ընթացքում:


**Ծրագրային որոշումը՝ որպես ուղենիշ բյուջեի, գնումների և այլ կարճաժամկետ ծրագրերի իրականացման ճանապարհին**

Ամենից հաճախ պահանջվող կարողություններին կամ ընդհանրապես պաշտպանության պահանջներին վերաբերող որոշումները հիմնված են ռեսուրսային իրազեկության վրա, այսինքն՝ դրանք ընդհանուր առմանք իրատեսական են գնահատվում, սակայն պարտադիր չեն, որ ռեսուրսներով սահմանափակված լինեն. դրանք պետք է տեղափոխվեն պաշտպանական բյուջեի կանխատեսումների մեջ: Ծրագրային որոշումներ կայացնելիս յուրաքանչյուր գալիք տարվա համար պաշտպանական ծրագրի ծախսերը չեն գերազան-

ցում համապատասխան տարվա համար կազմված բյուջեն՝<sup>111</sup>:

Պաշտպանական ծրագրերի կազմման արդյունավետ մեխանիզմի առկայությունը կարևոր է այդ գործընթացը որոշում կայացնողների համար թափանցիկ դարձնելու իմաստով: Եթե դա տեղի է ունենում, որոշում կայացնող բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են ծրագրային որոշումների վրա, իսկ հաստատված պաշտպանական ծրագիրը, ըստ էության, հանդես է գալիս որպես միակ հեղինակավոր աղբյուր բոլոր հետագա կարճաժամկետ ծրագրերի, այդ թվում՝ պաշտպանական բյուջեի, գնումների ծրագրերի և այլնի համար:

Այստեղ կարևոր է հիշել ծրագրավորման վերոնշյալ սկզբունքները: Պաշտպանական ծրագիրը պետք է լինի համընդգրկուն. ծրագրերի շրջանակներից դուրս ոչինչ չի կարող արվել, և որևէ գումար չի կարող ծախսվել, չետք է լինեն ռեսուրսների օգտագործման գուգահեռ պլանավորման գործընթացներ, և ծրագրային բոլոր որոշումները (ծրագրային բարձրագույն մակարդակով) պետք է կայացվեն որոշումների ընդունման գործընթացի մեջ կետում: Միայն այդպես կարելի է երաշխավորել, որ պաշտպանական ծրագիրը լինի ֆինանսավես իրազրոցելի, և ծրագրավորումը հանդես գա բոլոր մրցակցող պահանջների զույգի դերում (ցույց է տրված Գծապատկեր 3-ում): Եվ այսպես, ռեսուրսների կառավարման գործընթացի նշված ասպեկտի անհավան կիրառումը երաշխավորում է բոլոր կարճաժամկետ ծրագրերի (1) ֆինանսական իրազրոցելիությունը և (2) հետևողականությունը:



### Գծապատկեր 3. Պաշտպանական ծրագիրը՝ մրցակցող պահանջարկների գուման միջոց

<sup>111</sup> Հաճախ այս պահանջը խստորեն պարտադրվում է միայն պաշտպանական ծրագրի առաջին երակու կամ երեք տարվա ընթացքում:

## Անորոշության խնդիրը

Պաշտպանական ծրագրերը և ընդհանրապէս ծրագրերը մշակվում են որոշակի ենթադրությունների և կանխատեսումների հիման վրա և հետազայտում իրականացվում են փոփոխվող միջավայրի պայմաններում: Արդյունքում՝ հազվադեպ է լինում, որ որևէ ծրագիր կամ պլան իրականացվի և նախանձված արդյունքների հասնի ճիշտ այն տեսքով, որը նախատեսված էր: Դրա պատճառների թվում կարող են լինել չնախատեսված օպերացիայի անցկացմանը հետամուտ լինելու կամ դրան մասնակցելու անհրաժեշտությունը, տեսական իրավիճակի, օր. գնաճի մակարդակի, արժույթի փոխարժեքի և այլ գործոնների փոփոխությունները, եկանուտների կամ սոցիալական ապահովության քաղաքականությանն առնչվող փոփոխությունները, հավաքագրման սահմանված ծավալն ապահովելու անկարողությունը, գնումներին առնչվող գործընթացների ձգձգումը և այլն:

Նմանատիպ անորոշության հետ գործ ունենալու արդյունավետ եղանակ կարելի է համարել փուլային ծրագրավորումը, որի դեպքում նոր ծրագրերը մշակվում են երկայն հաճախականությամբ<sup>112</sup> կամ, անորոշության ավելի բարձր մակարդակի դեպքում՝ ամեն տարի<sup>113</sup>: ՆԱՏՕ-ի անդամ երկրների գզայի մասն է օգտագործում նման փուլային պլանավորման մեխանիզմները: Ակնհայտ բացառություն է Ֆրանսիան, որտեղ ծրագիրը հաստատագրված վեցամյա ժամկետով հաստատվում է օրենքով: Դա իրականացվելուց հետո օրենսդրություն կողմից հաստատվում է հաջորդ վեցամյա ծրագիրը: Ուկրաինան ներկայում փորձում է նմանատիպ մոտեցում ցուցաբերել, թեև գործ ունի անորոշության գալիքուն ավելի բարձր մակարդակների հետ:

Որոշ դեպքերում անորոշության աստիճանը կարող է նույնիսկ ավելի բարձր լինել, օր. գնաճի չափազանց բարձր, երբեմն էլ անկանխատեսելի մակարդակի, պլանավորման փորձի պակասի և ծրագրերի ոչ պատշաճ իրականացման (օրինակ՝ ծրագրում չնախատեսված սպառազինության համակարգի ձեռքբերման հետ կապված) և այլ հանգամանքների բերումով: Նման դեպքերում անհրաժեշտ է լինում վերանայել և փոփոխել ծրագրային որոշումները բյուջեի պլանավորման և իրականացման փուլում: Այս մեխանիզմը երբեմն կոչվում է «նախածրագրավորություն»: Ֆինանսական տարվա ընթացքում, եթե, իհարկե, օրենքով նման հնարավորություն ընձեռվում է, կարելի է վերաբաշխել բյուջետային միջոցները պաշտպանական տարբեր ծրագրերի միջև: Այս երկու մեխանիզմներն էլ պահպանում են պաշտպանական ռեսուրսների կառավարման ճկունությունը՝ պահպանելով թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները:

Զինված ուժերի զարգացման միջավայրի այլ՝ որակական փոփոխու-

<sup>112</sup> Օրինակ՝ U.S. DoD *Planning, Programming, Budgeting, and Execution System* (PPBES)-ում:

<sup>113</sup> Բուլղարիայի Պաշտպանության ռեսուրսների միասնական կառավարման համակարգը կարող է դրա օրինակը լինել:

թյունները՝ նոր սպառնալիքի երևան գալը, պաշտպանական դաշինքի կազմավորումը կամ անդամակցումը, արմատական փոփոխությունների հանգեցնող տեխնոլոգիաների ստեղծումը, նոր քաղաքական ուժի իշխանության գալը և այլն, հնարավոր չէ հաղթահարել պաշտպանական ռեսուրսների կառավարման ավանդական մեխանիզմների միջոցով: Նշված կարգի անորոշությունը հաշվի առնելու համար երկրները հետամուտ պիտի լինեն բազմակրոնմանի, խորքային վերլուծությանը, որը երբեմն հանդիս է զայիս «Պաշտպանության ռազմավարական վերանայում» (ՊՈՎ, SDR)<sup>114</sup> անվան տակ. այն օգնում է որոշումներ կայացնելու գինված ուժերի նոր, ապագա կառուցվածքների վերաբերյալ<sup>115</sup>: Հստ էության դա առաջիկա մոտավորապես 15 տարիների ընթացքում գինված ուժերի կառուցվածքի տեղական է, որն ուղենիշ է ծառայում գինուժի զարգացման ծրագրերի մշակման համար:

## **Վերին օղակի քաղաքացիական առաջնորդների մասնակցությունը**

Պաշտպանության ռեսուրսների ծրագրահեն կառավարման համակարգը ներառում է առնվազն հետևյալ քայլերը.

1. Ծրագրային ոլղեմիշների նախապատրաստում,
2. Ծրագրերի և ծրագրերի այլընտրանքային տարրերակների մշակում,
3. Ծրագրերի վերանայում, որի արդյունքում՝ պաշտպանական ծրագրին առնչվող որոշման կայացում,
4. Բյուջեի պլանավորում,
5. Բյուջեի կատարում,
6. Հաշվետվություն,
7. Առլիփություն:

Ծրագրերի մշակումը (քայլ 2) մասնագիտական գործունեություն է. այն պահանջում է համապատասխան ոլորտին վերաբերող մասնագիտական խոր գիտելիքների և փորձառության առկայություն: Պաշտպանության բյուջեի նախագծի մշակումը (քայլ 4) պետք է խստորեն համապատասխանի ծրագրի վերանայման արդյունքում կայացված նախարարական որոշումներին: Հետևաբար բյուջեի պլանավորումը, որպես կանոն, չպետք է հանգեցնի նախարարների կողմից այնպիսի ռազմավարական որոշումների ընդունմանը, որոնք որակապես տարբերվում են Զայլ 3-ում կայացված որոշումներից: Ծրագրային տեղեկատվության օգտագործումը կարող է նկատելիորեն բարձ-

<sup>114</sup> ՊՈՎ-ի (SDR) օրինակի համար տե՛ս *The Strategic Defence Review – 1998 (CM3999)*, Presented to Parliament by the Secretary of State for Defence by Command of Her Majesty (London, Ministry of Defence, July 1998), [www.mod.uk/NR/rdonlyres/65F3D7AC-4340-4119-93A2-20825848E50E/0/sdr1998\\_complete.pdf](http://www.mod.uk/NR/rdonlyres/65F3D7AC-4340-4119-93A2-20825848E50E/0/sdr1998_complete.pdf).

<sup>115</sup> Սովորաբար սահմանվում են գինված ուժերի միայն մի քանի հատկանիշները: Ֆրանսիացի պլանավորողները կիրառում են «մողել» հասկացությունը, իսկ ԱՄՆ-ի մասնագետները պարբերաբար գործածում են «տեսլական» բառը:

րացնել արդյունքների որակը բյուջեի կատարման և հաշվետվությունների ստեղծման, ինչպես նաև առողջութիւ ժամանակ (քայլեր 5, 6 և 7):

Այս բոլոր քայլերը կարևոր նշանակություն ունեն պաշտպանության ռեսուրսների արդյունավետ կառավարման համար: Այդուհանդերձ, վերին օջակի քաղաքացիական առաջնորդների, այդ բվում՝ պաշտպանության նախարարի կամ քարտողարի ուշադրությունը պետք է սկսված լինի ծրագրերի մշակումն ուղղորդելու և ծրագրերի վերանայման վրա (համապատասխանաբար քայլեր 1 և 3):

Ծրագրավորման ուղղորդումը, որը ստվորաբար ապահովում է պաշտպանության նախարարը, սահմանում է պաշտպանական հստակ նպատակները, հիմնական պահանջները, գերակայությունները, ընդհանուր բյուջեի մակարդակը և բյուջետային նախնական քվոտաները հիմնական ծրագրերից յուրաքանչյուրի համար, ապահովում է անհրաժեշտ տեղեկություններ պաշտպանության ծրագրերի ծախսային կազմի վերաբերյալ, բաշխում է պարտականությունները և սահմանում է ծրագրերի իրականացման ժամանակացույցը: Քայլ 3-ում մասնագետները գնահատում են ծրագրի կառուցվածքի ճշտությունն ու համապատասխանությունը ծրագրային ուղենիշներին, սակայն վերին օղակի առաջնորդներն են որոշում կայացնում կոնկրետ ծրագրերի և ծրագրերի այլընտրանքային տարբերակների ֆինանսավորման վերաբերյալ սահմանելով, թե որ կարողություններն են պետք զարգացնել, պահպանել կամ վերացնել<sup>116</sup>: Այդ որոշումը տեղ է գտնում համապատասխան փաստաթրում, որը հաճախ «Ծրագրային որոշումների հուշագիր» է կոչվում և, պաշտպանության նախարարի հաստատումից հետո, ծառայում է որպես պաշտպանական գերատեսչության վերին օղակի դեկավարների հայեցակարգային և բյուջետային որոշումների պաշտոնական հիմք:

Այսպիսով՝ պաշտպանության ռեսուրսների ծրագրահեն կառավարման գործնիքացը նպաստում է հաշվետվողականության և բափանցիկության սկզբունքների արդյունավետ գործարկմանը: Զինվորական և քաղաքացիական մասնագետների կողմից ծրագրերը կազմվում են ընտրված քաղաքականության ուղենիշներին համապատասխան, և նրանց առաջարկությունները պետք է լինեն բափանցիկ ու միանգամայն ըմոնելի որոշում կայացնողների համար: Որոշումների կայացումից հետո նրանք են կրում ծրագրերի իրականացման արդյունավետության պատասխանատվությունը: Մյուս կողմից՝ քաղաքացիական դեկավարները պատասխանատու են իրենց իսկ որոշումների համար, որոնք արտացոլված են թե՝ ծրագրային ուղենիշներում, թե՝ ծրագրային որոշումների հուշագրում: Բոլոր շահագրգիռ կողմերը հստակորեն ըմբռնում են որոշումների էռությունը: Վերջապես, ծրագրային ձևաչափում պար-

<sup>116</sup> Енциклархияյի պաշտպանության նախարարության փորձի հիման վրա քաղաքացիական-զինվորական փոխորդողության մանրամասները տե՛ս Todor Tagarev, *Control, Cooperation, Expertise: Civilians and the Military in Bulgarian Defence Planning Experience*, ISIS Research Reports # 14 (Sofia: Institute for Security and International Studies, 2003).

բերական զեկույցները երաշխավորում են իրականացման արդյունավետ վերահսկողություն:

## **Եզրակացություն**

Զինուժի ծրագրահեն զարգացման և պաշտպանության ռեսուրսների կառավարման սկզբունքների կիրառման ընթացքում և ՆԱՏՕ-ի նոր անդամների, և գործընկեր երկրների առջև ննանատիպ հիմնախնդիրներ են ծառանում: Զիավակնելով ներկայացնել դրանց սպառիչ ցանկը թվարկենք մի քանի հիմնական խնդիրներ:

- Պաշտպանության պլանավորման փորձի պակաս, մասնավորապես՝ աշխատանքի կազմակերպման գործընթացի մեջնեցմենքի, պաշտպանական ծրագրերի մշակման, ծրագրերի ծախսային կառուցվածքի սահմանման, ծախսերի արդյունավետության գնահատման և այլընտրանքային տարրերակների ընդհանուր վերլուծության, պլանավորման ռիսկերի գնահատման և պաշտպանության պլանավորման գործընթացում ռիսկերի կառավարման մեթոդաբանության կիրառման առումով:
- Օպերացիաների համակարգված պլանավորման այնպիսի գործընթացի բացակայություն, որը գոյություն ունեցող զինված ուժերի կառուցվածքում հաստատված օպերատիվ նպատակների իրազործման համար անհրաժեշտ կարողությունների բացքողումները վերհանող օրյեկտիվ պարամետրեր է ապահովում:
- Կազմակերպական դիմադրություն, որը հաճախ կապված է խորհրդապահության մշակույթի հետ, հատկապես՝ ռազմական հաստատությունների ներսում, բայց նաև բյուջեի պլանավորման և ֆինանսների կառավարման մասնագետների շրջանում: Հստ էության կազմակերպական դիմադրությունը կանխատեսելի է, քանի որ ռեսուրսների կառավարման նոր նորենի ներմուծումն անխուսափելիորեն հանգեցնում է «Քշխանության» կամ որոշումների կայացման լիազորությունների վերաբաշխմանը:
- Սունձնահատուկ խնդիր է «ծրագիր» եզրույթի գործածությունը: Եթե պաշտպանական գերատեսչությունը հանձն է առնում ներմուծել զինուժի ծրագրահեն զարգացման և պաշտպանության ռեսուրսների կառավարման համակարգ, այն պետք է նաև հափոր պաշտամի և սույն հողվածում նշված ինաստով գործածի այդ հասկացությունը:

Եզրափակիչ և, թերևս, ամենակարևոր հետևությունն այն է, որ իրականացման ընթացքը չի կարող հաջողված համարվել, եթե ռեսուրսների զինավոր կառավարիչը, պաշտպանության նախարարը կամ համապատասխան լիազորություն ստացած փոխնախարարը թերանում են գործել ռեսուրսների ծրագրահեն կառավարման սկզբունքներին համապատասխան:

Պաշտպանության ռեսուրսների ծրագրահեն կառավարումը պաշտպա-

նույշյան համակարգի փոխակերպման կառավարման չափազանց արդյունավետ գործիք է, որն ապահովում է որոշումների կայացման գործընթացների բափանցիկությունը, ընտրված պաշտոնյաների ժողովրդավարական վերահսկողությունն ու հաշվետվողականությունը: Այն մեկն է գոյություն ունեցող այն սակավարիկ գործիքներից, որոնք թույլ են տալիս արդյունավետորեն իրականացնել կարողությունների վրա հիմնված պլանավորում և գնահատել ծրագրերի, ենթածրագրերի և բյուջեների կատարումը:

Ի մասնավորի ծրագրավորման փուլի ներմուծումը կարևորագույն նշանակություն ունի պաշտպանական քաղաքականության և ֆինանսական միջոցների հատկացումների փոխկապակցման, «ներդրված գումարին համարժեք արդյունքի» սկզբունքով մշակվող բյուջեի երաշխավորման և, հետարարության դեպքում, զինված ուժերի արդյունավետ ժողովրդավարական վերահսկողության իմաստով: «Պաշտպանության ռեսուրսների ծրագրահեն կառավարման իրականացումը հնարավոր է մեծապես դյուրացնել, եթե երկրի խորհրդարանին տրամադրվեն պաշտպանության բյուջեի նախագիծը՝ ծրագրերի պատշաճ նկարագրի հետ մեկտեղ, և գործադիր մարմնի ծրագրահեն գործունեության հաշվետվությունները:

Ի վերջո, զինուժի ծրագրահեն զարգացումը և պաշտպանության ոլորտի ռեսուրսների կառավարումը խթանում են քաղաքացիական նասնակցությունը պաշտպանական քաղաքականության մշակման գործընթացներում և էապես նպաստում են պաշտպանական ծախսերի արդյունավետ, բափանցիկ և տնտեսապես հիմնավորված կառավարմանը:

## Գլուխ 4

# Ֆինանսների կառավարում

## Գերդ Ֆրուար

### Ներածություն

Պաշտպանության բնագավառի ֆինանսական կառավարումն ուսումնասիրելիս հարկ է նկատի ունենալ, որ այն երկրի ռեսուրսների ընդհանուր կառավարման անքաղաքական օպակներից մեկի՝ պաշտպանության բնագավառի ռեսուրսների կառավարման մի մասն է, և սույն վերլուծությունը կատարվել է՝ ելնելով այդ նկատառումից:

Ցանկացած այլ բնագավառին ուղղվող պետական հատկացումների համեմատ պաշտպանության բյուջեն առավել հետաքրքրական է քաղաքական գործիչների, հարկատուների, լրատվամիջոցների, արդյունաբերական ձեռնարկությունների և այլ տնտեսվարողների, զինված ուժերի, ուժային կառույցների և, որ նվազ կարևոր չէ, հարևան բարեկամ և ոչ բարեկամ երկրների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների համար:

Սկզբունքորեն, երկրի պաշտպանության բյուջեն պետք է ձևավորվի՝ հաշվի առնելով տվյալ երկրի անվտանգության և առկա սպառնալիքների մակարդակը, մինչդեռ իրականում, երկրի սահմանափակ ռեսուրսների պայմաններում, նշված բյուջեն ձևավորվում է՝ ելնելով առկա ռեսուրսների, այլ ոչ՝ սպառնալիքների մակարդակից: Սառը պատերազմից հետո պաշտպանության և անվտանգության գծով ծախսերի կրճատումը կամ հազվադեպ ավելացումը կառավարության բոլոր մակարդակներում որոշում կայացնողների համար վերածվեց ցուցադրական խաղի: Մի կողմից օլիգոպոլ համակարգ ունեցող երկրների համեմատ ժողովրդավարական երկրներում պաշտպանության և անվտանգության հարցերում լորրինգն այդքան ուժեղ չէ, քանի որ զինված ուժերի օգնությամբ իշխանությունը պահելու անհրաժեշտությունը վերանում է: Արդյունքում բյուջեի կամ զինված ուժերի թվաքանակի կրճատումները հաճախ ծառայում են որպես շատ տարածված քաղաքական գործիք ընտրողների ձայներ ստանալու համար: Օլիգոպոլ համակարգ ունեցող երկրներում

պաշտպանության և անվտանգության բնագավառի պետական ծախսերը իշխանությունների կողմից պահպում են գաղտնիության շղարշի տակ և ենթակա չեն հրապարակային ուսումնասիրման:

Մյուս կողմից՝ հարկ է նկատի ունենալ, որ Եվրոպայում նշանակալից փոփոխություններ են տեղի ունեցել սպառնակիքների և անվտանգության տեսանկյունից: Այդ իսկ պատճառով նշված բնագավառում բարեփոփումները խիստ անհրաժեշտ են, ընդ որում ոչ միայն պետության պաշտպանության, այլև առհասարակ անվտանգության համատեքստում:

Այսպիսով՝ պաշտպանության բյուջեի կառավարման առնչությամբ հարկ է քննության առնել երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովման հետ կապված բոլոր ֆինանսական հարցերը:

Անհրաժեշտ է երկրի քաղաքացիներին բացատրել, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգությանն ուղղված միջոցառումները, այդ թվում՝ պաշտպանությունը, իրականացվում են՝ ենթալով ողջ հասարակության շահերից, և որ առանց պետական անվտանգության հնարավոր չեն ապահովել պետության գոյությունը, ազատությունը և տնտեսության, մշակույթի հետագա զարգացումն ու պետության բարեկեցությունը: Այդ իսկ պատճառով հասարակությունը պետք է վճարի անվտանգության և պաշտպանության համար:

Անվտանգության կարիքների բավարարմանն ուղղված ծախսերի, այսինքն՝ առաջին հերքին ռազմական բյուջեի և մասնավորապես ներքին գործերի և ֆինանսների նախարարությունների և այլ գերատեսչությունների բյուջեների վերլուծությունն ու ուսումնավորությունը պետք է կատարվեն՝ հաշվի առնելով դրանց փոխկապվածությունը: Վերջինս քննության է առնվում հաջորդ բաժնում (միաժամանակ, նման վերլուծությունը բարդանում է նրանվ, որ «պաշտպանություն», «ռազմական գործունեության կառավարում» և «պաշտպանության գծով ֆինանսներ» հասկացությունները տարբեր երկներում տարբեր կերպ են մեկնաբանվում):

Այս գիխում ներկայացվում են մի շարք աղյուսակներ և մանրամասն սահմանումներ, որոնք ընթերցողին թույլ կտան հեշտորեն ըմբռնել բովանդակությունը, իսկ հետագայում նաև կծառայեն որպես «ստուգաթերթիկներ»: Գլուխը հիմնվում է ինչպես եվրոպական և ամերիկյան երկրների պետական հատվածում, հատկապես պաշտպանության բնագավառում, այնպես էլ մասնավոր հատվածում տողերիս հեղինակի կատարած հետազոտությունների և աշխատանքային փորձի վրա: Ներկայացվող լուծումները և առաջարկություններն արտացոլում են նշված հարուստ անձնական փորձը: Ընդ որում հասուն ուշադրության են արժանանում պաշտպանության բնագավառը և վերջինիս ուսուրսների կազմում հասուն նշանակություն ունեցող ֆինանսական միջոցների կառավարումը:


## Ֆինանսական կառավարումը պաշտպանության և անվտանգության բնագավառում

### Պարամետրերը, սահմանափակումները և կրիտիկական գործոնները

Սույն գլուում պաշտպանությունը դիտարկվում է որպես ազգային (ներքին) և միջազգային (արտաքին) անվտանգության տարրերից մեկը:

Գ-ծավատկեր 1-ում ցույց են տրվում պաշտպանության բնագավառի ռեստրում կառավարման տարրերի միջև փոխադարձ կապերը և նշված կառավարմանը բնորոշ կառուցվածքը: Տվյալ համատեքստում պաշտպանությունը սահմանվում է որպես «առանցքային գործընթացի» և մի շարք «հիմնական օժանդակ գործընթացների» ամբողջություն: «Կառավարող գործընթացներն» անհրաժեշտ են բոլոր այլ գործընթացների միջև համապատասխանության և շարունակական իրականացման ապահովման համար:

Մեծամասամբ, յուրաքանչյուր երկիր կիրառում է սեփական պարամետրերը, սահմանափակումները և կրիտիկական գործոնները, որոնցով իսկ պայմանավորվում է ֆինանսական կառավարման մեխանիզմը: Ինչևէ, չնայած սրան՝ ամեն երկիր պետք է որոշի այս բնագավառում ֆինանսական կառավարման քափանցիկ, հուսալի, ճկուն և արդյունավետ համակարգի ապահովման սեփական ուղիները: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը, ինչպես նաև երկրի զարգացման նակարդակը: Մյուս կողմից ֆինանսական կառավարումը պետք է երաշխավորի պաշտպանական միջոցառումների կառավարման ողջ գործընթացի տևական կայունությունը և սահմանափակ ռեստրումների արդյունավետ օգտագործումը:



#### Գծապատկեր 1. Պաշտպանության ռեսուրսների կառավարում

Հետևողականորեն խորհուրդ է տրվում իրականացնել ֆինանսական կառավարման վրա անմիջական ազդեցություն ապահովող հետևյալ ախտական միջոցառումները (եթե այդպիսիք դեռևս չեն իրականացվել)։

<b>Կառուցվածքային փոփոխությունների ոլորտներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Ընդհանուր քաղաքական հայեցակարգի մաս կազմող պաշտպանության և անվտանգության հայեցակարգ՝ միաժամանակ հաշվի առնելով առկա քաղաքական իրադրությունը։</li> <li>- Պետական կառավարում, հարկային համակարգ և հետագա իրագործում։</li> <li>- Արդյունաբերություն, առևտուր և բանկային (ֆինանսական) համակարգ։</li> </ul>
---	--

<b>Սահմանման ենթակա ոլորտ- ներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Պաշտպանության ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում (համախառն ներքին արդյունք)։</li> <li>- Պաշտպանության և անվտանգության ուժերի բիզուանակ, կառուցվածք և խնդիրներ։</li> </ul>
<b>Աջակցություն պահանջող ոլորտներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Պետական – մասնավոր գործընկերություններ։</li> <li>- Մասնավոր նախաձեռնություններ ռազմական ճեղ-նարկությունների վերապրոֆիլավորման և գնումների բնագավառում։</li> <li>- Պետական գույքի և ճեղնարկությունների մասնավորեցում։</li> </ul>
<b>Ներմուծման ենթակա ոլորտ- ներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Արտաքին և ներքին առողջութ, վերահսկողական համակարգեր հանրային հատվածում։</li> </ul>

Պաշտպանության բնագավառի ֆինանսների կառավարման վրա ուղղակի ազդեցություն ունեն ստորև նշված հանգամանքները և սահմանափակող գործուները.

- Խորհրդարանի և նրա հանձնաժողովների հստակ սահմանված խնդիրներ պաշտպանության, անվտանգության, արտաքին գործերի և այլ հարցերում,
- Ֆինանսական, բյուջետային և վարչական հարաբերությունները կարգավորող օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և ընթացակարգեր և դրանց կիրառություն,
- Հստակ սահմանումների առկայություն և պարտականությունների տարանջատում ֆինանսների և պաշտպանության կառավարման գործընթացներում,
- Միջազգային հանձնառությունների փոփոխություն և մասնակցություն պյանավորման, բյուջետավորման և վերահսկողության գործընթացներում,
- Զինված ուժերի և նրանց կառուցվածքի ընդլայնում կամ կրճատում,
- Բյուջեի կարճաժամկետ կրճատումներ (օր.՝ սպասվածից ցածր հարկային եկամուտների դեպքում),
- Զնախատեսված պետական ծախսեր՝ պայմանավորված տեխնածին և բնական աղետներով և այլ լուրջ վնասներով,
- Գնաճի մակարդակ, աշխատավարձների բարձրացումներ,
- Առկա տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապի համակարգեր,
- Մրցակցային ընթացակարգով միջազգային մրցույթների անցկացման պարտավորություն (օր.՝ համաձայն ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի կանոնակարգերի)<sup>117</sup>,

<sup>117</sup> Օրինակ՝ ՆԱՏՕ-ի «NATO-AC/4-2261» կամ ԵՄ-ի կանոնակարգեր:

- Անձնակազմի հմտություններ, վերաբերմունք և մտայնություն (աշխատանքային բարոյական պահվածք, առաջխաղացման հեռանկարներ, արիեստավարժություն, կորպորատիվ ինքնություն, համակարգային փոփոխություններ կատարելու ցանկության բացակայություն, արտոնությունների կորուստ, կոռուպցիա, էքնիկական խնդիրներ):

## **Պաշտպանության բնագավառի ֆինանսների կառավարման հետ կապված դժվարությունները և խնդիրները**

*Վարչարարություն, բյուրոկրատիա և ֆինանսական կառավարման համակարգեր*

Ցանկացած վարչարարության արդյունավետությունը և նպատակայնությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով կամ, ինչպես ընդունված է անվանել, «բյուրոկրատիայով»: Այս եզրույթը հաճախ օգտագործվում է բացասական երանգով, և սա բացատրվում է նրանով, որ վերջին տասնամյակներում կամ նոյնինսկ դարերում վարչական մարմինները համայնքի այլ անդամներին են պարտադրել իրենց սեփական հայեցողական կանոնները, օրենքները և կառավարան մեթոդները: Երբեմն բյուրոկրատիան ձեռք է բերում արտոնություններ և առավելություններ, որոնք չի ցանկանում կորցնել նոյնինսկ այն դեպքում, եթե դրանց առկայությունը խոչընդոտում է գործարար կառավարման արդյունավետությունը: Այս դեպքում հնարավոր է, որ վարչական աշխատողները, որոնց վարձատրությունը հաճախ ցածր է, սեփական ֆինանսական վիճակը բարելավվելու նպատակով հեշտորեն օգտագործեն կառավարման որոշակի ընթացակարգերը ի վեհասարակության շահերի կամ պետական միջոցների:

Ֆինանսական կառավարման արդյունավետ համակարգ ստեղծելու և բյուրոկրատական խոչընդոտությունները վերացնելու համար անհրաժեշտ է, որ օրենսդիր սահմանի գործադիր իշխանության պարտավորությունը կատարելու վարչական և կառավարման ընթացակարգերի գնահատում՝ նպատակ ունենալով.

- Փոփոխել համակարգը՝ այն համապատասխանեցնելով առկա քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակին, և ապահովել շրջապատի փոփոխություններին արձագանքող ճշգրտումների ճկունությունը,
- Ապահովել համապատասխանությունը միջազգային չափանիշներին և կանոնակարգերին<sup>118</sup>,
- Կիրառել «հանրային նոր կառավարման» կանոնները<sup>119</sup>,

<sup>118</sup> Ամենակարևորներից են Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները («IPSAS»), Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները («IAS») և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները («IFRS»):

<sup>119</sup> Կառավարման գաղափարախոսություն, որը հանրային հատվածի արդիականացման նպատակով 1980-ականներից ի վեր կիրառվում է կառավարությունների կողմից: Տե՛ս, օրինակ, [http://en.wikipedia.org/wiki/New\\_Public\\_Management](http://en.wikipedia.org/wiki/New_Public_Management):

- Զանքերը կենտրոնացնել տնտեսական նոր մեթոդների ներդրման վրա<sup>120</sup>,
- Կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS) և հաղորդակցության համակարգեր,
- Առանձին հաշվներում արտացոլել փաստացի (օրական) ծախսերի և եկամուտների մասին տեղեկատվությունը,
- Տվյալների կառավարման և հասանելիության բարելավման միջոցով դյուրացնել, պարզեցնել և արագացնել բյուջետային տեղեկատվության տրամադրումը,
- Բարելավել թափանցիկությունը, հուսալիությունը, հաշվետվողականությունը և ճկունությունը,
- Զեավորել ֆինանսական կառավարման ճկուն ու թափանցիկ կառուցվածք,
- Սահմանել և կիրառել համապատասխան անձնակազմի պատասխանատվության հստակ կանոնները՝ ներառյալ կազմակերպական բոլոր տարրերի պաշտոնեական պարտականությունները և առաքելությունները,
- Սահմանել որոշումների կայացման լիազորությունները, որոնք համապատասխանում են պաշտոնեական պարտականություններին, և խուսափել այն դեպքերից, երբ բոլորը տեղեկացված են, բայց ոչ ոք որոշում չի կայացնում,
- Ընդունել ֆինանսական հարաբերությունները կարգավորող հատակ օրենքներ, հասկանալի կանոնակարգեր և ապահովել դրանց կիրառությունը,
- Հիմնավորել յուրաքանչյուր գործարքի կարևորությունը և գնահատել տվյալ գործարքի իրականացման մեջ ընդգրկված անձնակազմի ծախսած ժամանակը, հաղորդակցության ուղիները և ունակությունները,
- Ողջ ֆինանսական համակարգում կրճատել կանխիկ միջոցների շրջանառությունը,
- Ստեղծել ներքին և արտաքին ֆինանսական վերահսկողության և առողջության մարմիններ,
- Հստակորեն սահմանել պաշտպանության նախարարության պարտականությունները և պետական այլ գերատեսչությունների, մասնավորապես ֆինանսների, էկոնոմիկայի, ներքին գործերի նախարարությունների և զանձապետարանի հետ վերջինիս փոխգործակցության կարգը, ինչպես նաև պահանջել միասնական SS համակարգերի կիրառում,

<sup>120</sup> Օրինակ՝ «քաղադրիչներ-արտադրյալ-վերջնական արդյունք» գաղափարախոսությունը: Վերահսկողությունը և այլ հարցեր հակիրճ քննության են առնվում հաջորդ ենթաքաժնում:

- Հարակից գործընթացներում ներգրավել տնտեսական հարցերով փորձառու խորհրդատուների, անձնակազմի և փորձագետների:

Որոշ երկրներում համբային ծառայություններ մատուցող, ինչպես նաև քաղաքական քաղաքացիական կազմակերպություններ ձեռք են բերում փորձ՝ ներգրավելով իրենց աշխատողներին գնահատման և փոփոխման նշված գործընթացում և ավելի լավ լուծումներ գտնելու նպատակով գործադրելով իրենց ստեղծագործական ներուժը: Հարկ է խրախուսել, որ կազմակերպության աշխատակիցները հանդես գան բարեկավմանն ուղղված առաջարկություններով, մասնավորապես՝ կապված աշխատանքային պայմանների բարեկավման կամ որակի բարձրացման ու ծախսերի խնայողության հետ: Նման մասնակցությունը դյուրացնելու համար կարևոր է ունենալ կենտրոնական մարմին կամ հիմնարկ, որի խնդիրն է կարճ ժամանակում գնահատել գաղափարները և դրանց հնարավոր իրազործումը և նյութական ու ոչ նյութական պարզեցումը տալ առաջարկություններով հանդես եկած անձանց՝ անկախ նրանց, թե տվյալ առաջարկությունները կյանքի կոչվե՞լ են, թե՞ ոչ: Հնարավոր է կիրառել պարզեցումը և շահադրդման հետևյալ միջոցները՝ խրախուսական վճարում, որոշակի տևողությամբ արձակուրդ, նյութական պարզեցում, պաշտոնական գովասանք, աշխատանքային առաջխաղացում և ուղեգրում հանգստյան տուն:

«Արևմտյան երկրների պաշտպանության բնագավառի ֆինանսական համակարգերը» մասսամբ կամ ամբողջապես ներդնելիս անցումային տնտեսություն ունեցող երկրները պետք է ցուցաբերեն զգուշավոր և քննադատական մուտքեցում: Գործընթացի սկզբնական փուլում հարկ է կատարել իրավիճակի, ուսուրսների, նպատակների և կարողությունների մանրազնին գնահատում և միայն դրանից հետո համակարգը վերափոխելու որոշում կայացնել: Երբեմն երկրներին շատ գրավիչ է թվում անհատույց աջակցության մասին առաջարկությունը, և նրանք ի վիճակի չեն կանխատեսելու դրա հետագա ֆինանսական հետևանքները: Որոշ դեպքերում առաջարկվող աջակցությունը գերազանցում է երկրի պաշտպանության ոլորտի ներուժը: Փորձը ցույց է տալիս, որ շատ հաճախ ֆինանսական կամ տեխնիկական աջակցություն ցուցաբերող երկրների առաջարկությունների իրազործումը հանգեցնում է որոշակի խնդիրների առաջացմանը, կամ էլ առաջարկված միջոցառումները հետագայում ընդունակ են:

### **Պաշտպանության խնդիրների և բյուջեի սահմանումը և սահմանափակումը**

Անկասկած, ցանկացած երկրում ուսուրսների տեղաբաշխումը գործադիր և օրենսդիր մարմինների ամենաղմդվարին առաքելությունն է: Երկրների մեծ մասի ուսուրսները սահմանափակ են, և ըստ այլմ՝ նրանց խնդիրն է բաշխել ուսուրսները (գլխավորապես դրամական միջոցները և անուղղակիրքն նաև մարդկային, նյութական և ենթակառուցվածքային ուսուրսները) այնպես, որ իրազործվեն գերակա համընդգրկուն խնդիրները, բավարարվի անհրա-

Ժեշտ պահանջարկը, ֆինանսավորվի դեֆիցիտը (պակասուրդը), և ի վերջո՝ ապահովվի ընտրողների բավարարվածությունը: Յուրաքանչյուր ֆինանսական տարի որոշում կայացնողների առջև ծառանում է երկրում ռեսուրսների բաշխման հավասարակշռության պահպանման խնդիրը: Ըստ այդմ՝ պաշտպանության բնագավառի բյուջեն պետք է կազմվի՝ հաշվի առնելով անվտանգության և պաշտպանության խնդիրների իրագործման համար սահմանափակ ռեսուրսների հավասարակշռված բաշխման անհրաժեշտությունը:

Անհրաժեշտ է տալ «պաշտպանության» և, համապատասխանաբար, «պաշտպանության խնդիրների» միասնական սահմանումը, քանի որ աշխարհում երկրների մեծ մասը կիրառում է տարբեր սահմանումներ, որոնք ձևակերպվել են՝ հաշվի առնելով սեփական պատմական և քաղաքական առանձնահատկությունները: Հատկանշական է, որ միջազգային կազմակերպությունները, օր՝ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՍԱԿ), Հյուսիսատլանտյան դաշինք կազմակերպությունը (ՆԱՏՕ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Ստոկհոլմում Խաղաղության խնդիրների հետազոտման միջազգային ինստիտուտը (ՍԽԽՀՄԻ), Համաշխարհային բանկը (ՀԲ) և Արմեյթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), որոնք իրենց աշխատանքում ևս օգտագործում են պաշտպանությանը վերաբերող տվյալներ, կիրառում են «պաշտպանության խնդիրների» և «պաշտպանության բյուջեի» տարբեր սահմանումներ: Հետևաբար նրանց հաշվետվական չափանիշները տարբեր են, ինչը որոշ խնդիրներ է առաջանում հաշվետվություններ ներկայացնող երկրների համար: Այս համատեքստում բափանցիկության և հուսալիության սկզբունքների կիրառումը բույլ է տախս բավարարել տարբեր միջազգային, ինչպես նաև ազգային պահանջները և նպաստում է վստահության ձևափորմանը ինչպես միջազգային, այնպես էլ տեղական մակարդակում: Նույնիսկ ՆԱՏՕ-ն իր Պաշտպանության ուսումնասիրման հանձնաժողովի միջոցով տարեկան կտրվածքով մանրազնին ուսումնասիրում է ՆԱՏՕ-ի բոլոր անդամ պետությունների բյուջեները, որպեսզի պարզի, թե արդյոք իր բոլոր անդամները համաշափորեն են կրում ՆԱՏՕ-ի բեռը, և դրանով իսկ երաշխավորում Հյուսիսատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածի պահանջների տևական կատարումը:

Թափանցիկությունը և հուսալիությունը բույլ են տախս հանրությանը, լրատվամիջոցներին, ազգային և միջազգային գործընկերներին ներկայացնել պաշտպանության դրամական արժեքը և ցույց տալ, որ երկրի ազատության ապահովումն անվճար չէ, այսինքն՝ այդ նպատակով արդյունավետորեն ծախսվում են պետական միջոցներ, և ծախսերը խստորեն վերահսկվում են:

Ինչևէ, բափանցիկությունը ենթակա է որոշակի սահմանափակումների՝ կապված անվտանգության խնդիրների և պաշտպանության վերաբերյալ որոշ տեղեկատվության գաղտնիության պահպանման անհրաժեշտության հետ: Պաշտպանության բյուջեի որոշ մասեր, օրինակ, վերաբերում են որոշակի գաղտնի առաքելություններին, որոնք հայտնի են միայն շատ նեղ շրջանակի

մարդկանց (օր.՝ անվտանգության և պաշտպանության հարցերով խորհրդարանական հանձնաժողովին և համապատասխան նախարարության հանգուցային պաշտոնյաներին): Այս պարագայում լուծումը կարող է լինել բյուջեին կից «Գաղտնի հավելվածի» կազմումը, այսինքն՝ համապատասխան գրմարը կարելի է «քողարկված» արտացոլել պաշտպանության բյուջեում կամ առանձին հավելվածում:

Պաշտպանության բնագավառի ֆինանսների կառավարման հետ կապված հաջորդ խնդիրը եկամուտների բաշխումն ու հատկացումն է պաշտպանության ոլորտին: Եթե պաշտպանության բնագավառի ճեղնարկություններն իրենց գործունեության արդյունքում որոշակի եկամուտներ են ստացել, ապա դրանք պետք է ուղղվեն պաշտպանության բյուջե, որովհետև տվյալ «արդյունքը» ստանալու համար նշված ճեղնարկությունները օգտագործել են իրենց սեփական ռեսուրսները: Ֆինանսական առումով սա նշանակում է, որ ծախսային հաշիվներից բացի՝ պետք է բացվեն նաև եկամտային հաշիվներ: Եթե հնարավոր չեն նախապես գնահատել եկամուտների ծավալը, ապա եկամտային հաշվի սկզբնական մնացորդը պետք է գրոյական լինի, իսկ հետագայում այնտեղ պետք է մուտքագրվեն համապատասխան տվյալները: Պետական բյուջեի համար իմնական պատասխանատուն՝ ֆինանսների նախարարությունը կամ գանձնապետարանը, ջանում է ամրագրել վերոնշյալ եկամուտներն իր հաշիվներում:

Որպես պաշտպանության բնագավառի եկամուտների աղբյուր կարող են ծառայել հետևյալ օրինակները.

- Ռազմական ստորաբաժանումն աշխատանքներ է իրականացնում ավտոճանապարհների կամ կամուրջների շինարարություն իրականացնող քաղաքացիական կազմակերպության համար,
- Պաշտպանական ստորաբաժանումը մասնակցում է մարզական միջազգային միջոցառումների անցկացմանը՝ տրամադրելով մարդկային ռեսուրսներ և տրանսպորտային միջոցներ,
- Զօտագործվող պահեստային սենյակը վարձակալությամբ տրվում է քաղաքացիական որևէ կազմակերպության,
- Ռազմական ստորաբաժանումը մասնակցում է միջազգային ռազմական առաքելությանը կամ ՄԱԿ-ի առաքելությանը:

Սկզբունքը՝ շահույթ ստանալը պաշտպանության բնագավառի նպատակը չէ: Ռազմական ստորաբաժանումների նման աշխատանքները պետք է շատ սահմանափակ լինեն և իրականացվեն բացառիկ դեպքերում: Անհրաժեշտ է վերացնել կամ նվազագույնի հասցնել որոշ արևելյան երկրներում դիտարկվող միտումը, որտեղ ռազմական ստորաբաժանումները ներգրավվում են իրենց ոչ բնորոշ գործառույթներում: Ռազմական ստորաբաժանումների գործունեությունը պետք է գլխավորապես ուղղված լինի պաշտպանության իրական խնդիրների կատարմանը, թեև խաղաղ ժամանակներում կարող են ռազմական միավորի որոշ կարողություններ օգտագործվել եկամուտ

ապահովելու նպատակով: Եթե երկակի նշանակություն ունեցող այդ կարողությունների պահանջարկը դեռևս առկա է, ապա դրանք պետք է հաշվի առնեն բյուջեի ինչպես ծախսային, այնպես էլ եկամտային հողվածների կազմման ժամանակ:

### **Տեսեսական կառավարման նոր գաղափարախոսությունը և կարգը**

Հանրային հատվածի ռեսուրսների սահմանափակությունը պարտադրում է գտնել ռեսուրսների կառավարման, պլանավորման և բյուջեի կատարման նոր մոտեցումներ: Հիմնվելով զիտական հետազոտությունների վրա՝ պետական ծառայության բնագավառի փորձագետները ջանում են գտնել նոր լուծումներ: «Նոր հանրային կառավարում» հասկացությունը պետք է սահմանի կատարողական ցուցանիշներ՝ արտահայտված արդյունքների, ծրագրերի, նախագծերի և այլնի տեսքով: «Արդյունքի» ստացման ծախսերը որոշվում են նախապես, և բյուջեի պլանավորման ժամանակ համապատասխան աշխատանքների գծով ծախսերը չպետք է գերազանցեն նշված մեծությունը:

Հանրային նոր կառավարումը հիմնվում է այսպես կոչված «ծախսերից» դեպի «միջանկյալ» կամ «վերջնական» արդյունքներին անցման գաղափարախոսության վրա, որը կիրառվում է ազատ շուկայական հարաբերություններ ունեցող երկրներում: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման և դրանով պայմանավորված լայն հնարավորությունների ի հայտ գալու հետ մեկտեղ հանրային հատվածում, այդ թվում՝ պաշտպանության բնագավառում, ներդրվում են կառավարման կանոնների և ընթացակարգերի իրականացման նոր մոտեցումներ:

Միջանկյալ և վերջնական արդյունքի պահովմանը միտված կառավարման համակարգերը սկսել են լայնորեն կիրառվել հանրային հատվածում: Դրանց ներդրմանը պայմանավորված՝ փոփոխվել կամ այլև չեն կիրառվում դեռևս միջին դարերում ծնունդ առած հին «կամերային» համակարգերը, որոնք հիմնվում են լրկ այն փաստի վրա, որ ֆինանսական տարում պետությունը որոշակի ծավալով միջոցները է ծախսում: Ակնկալվում է, որ դրամական միջոցները աճրողապես կծախսվեն տվյալ տարում, և արդյունքների նկատմամբ հսկողությունը բացակայում է:

Ինչևէ, պաշտպանության բնագավառի թափանցիկության տեսանկյունից անհրաժեշտ է պարզել, թե հատկացված միջոցների ծախսման արդյունքում ինչպիսի նպատակներ և խնդիրներ են իրագործվել: Հանրային հատվածի, այդ թվում՝ պաշտպանության բնագավառի նպատակն է միջանկյալ արդյունքների (ապրանքների քանակի) և վերջնական արդյունքների (որակի և նպատակայնության) գնահատման միջոցով վերահսկել ծախսերը:

Նման մեխանիզմը, որի նախապայմաններն են կատարողական արդյունքի և դրա չափման կարգի սահմանումը, կարելի է կիրառել հսկողության համակարգերի միջոցով:

Իսկ ի՞նչ է նշանակում «կատարողական արդյունք» (performance) հասկացությունը: Անգլերենում, ֆրանսերենում և գերմաներենում այն ունի տար-

թեր նշանակություն: Գիտական հաշվարկների վրա հիմնվող հետևյալ բանաձևը և սահմանումը կարող են կիրառվել տնտեսական, այդ թվում՝ պաշտպանության ոլորտում:

### **Կատարողական արդյունք = աշխատանք/ժամանակ ԿԱՄ**

Աշխատանքի ծավալ՝ կապված այլ չափելի գործոնների հետ

Կատարողական արդյունքն արտադրական գործընթացի կամ սպասարկման ոլորտում՝ ծառայության ցանկալի էֆեկտն է, որը հնարավոր է որոշել չափելի գործոնի կամ ապրանքի (կամ ծառայության) սահմանման միջոցով:

Պաշտպանության բնագավառում կատարողական արդյունքների և ցուցանիշների որոշումը երբեմն դժվար, բայց իրազործելի խնդիր է:

Նշված ցուցանիշները մշակվում են հետևյալ նպատակներով.

- Տարբեր սոորաբաժանումների, գործակալությունների կամ ապրանքների, գործընթացների և այլնի կատարողական արդյունքների համեմատություն,
- Հենանիշների կիրառում, այսինքն՝ համեմատական վերլուծության միջոցով լավագույն արդյունքի բացահայտում՝ հետազայում այն որպես հենանիշ կիրառելու նպատակով,
- Արժեքի կամ զնի հաշվարկում,
- Աջակցություն պլանավորման և իրականացման գործընթացներին,
- Աշխատանքների կամ ծառայությունների արտապատվիրման կամ ներպատվիրման նպատակով քաղաքացիական կազմակերպությունների արդյունքների հետ արտաքին համեմատությունների կատարում,
- Տնտեսագիտական վերլուծությունների կատարում,
- Աջակցություն ներքին և արտաքին հսկողության համակարգերին,
- Փաստացի տեղեկատվության տրամադրում կառավարման մարմիններին,
- Աջակցություն դեկավարության փոփոխման նախն որոշումների կայացման գործընթացին:

Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կազմակերպությունների փորձը վկայում է կատարողական արդյունքների ցուցանիշների և տվյալների վրա հիմնվող ժամանակակից և էֆեկտիվ ֆինանսական կառավարման առավելությունների մասին: Նշված համակարգերը հաջողությամբ կիրառվում են բազմաթիվ երկրների հանրային ծառայությունների և պաշտպանության ոլորտներում: Ինչեւ, հարկ է նշել, որ նման հիմնարար փոփոխությանը պետք է նախորդեն մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքները, և տվյալ փոփոխությունը պետք է իրականացվի քայլ առ քայլ՝ փորձի ձեռքբերման նպատակով սկսելով մի քանի «փորձնական» աշխատանքներից:

## Պետության կողմից նոր ձեռնարկությունների /գործակալությունների ստեղծում, արտապատվիրում

Ազատ շուկայական հարաբերություններ ունեցող երկրներում պետության և տարբեր ոլորտների կազմակերպությունների միջև համագործակցության շրջանակում գնալով ավելի մեծ տարածում է ստանում պաշտպանության խնդիրների և (կամ) գործառույթների իրականացման նպատակով գործակալությունների կամ ձեռնարկությունների ստեղծումը, որոնք կարող են լինել.

- Պետական,
- Պետական մասնակցությամբ (որտեղ 50 տոկոսից մի փոքր բարձր կամ ցածր բաժնեմասը պատկանում է մասնավոր անձանց),
- Մասնավոր:

### Հանրային հատված / Պաշտպանության բնագավառ

Անցում ծախսերի վրա հիմնվող բյուջեից արդյունքահեն բյուջեից

Գործընթացների, նախագծերի, նպատակների, ծրագրերի և (կամ) արդյունքների սահմանում

**Մուտքեր**

Ուսուրացներ՝

- Աշխատուժ

- Դրամական միջոցներ

- Ենթակառուցվածքներ

- Սարքավորումներ

**Արտադրյալ**

Քանակ՝

Արդյունք

**Արդյունք**

Որակ

Էֆեկտիվություն

Տվյալներ / Տեղեկատվության փոխանցում / Անեղմներ

Թափանցիկություն

Վերահսկողություն

**Բյուջեի ճկունություն**

### Գծապատկեր 2. «Նոր հանրային տնտեսություն» և դրա տարբերի փոխկապվածությունը

Նման մոտեցման կիրառման պատճառները կարող են լինել տնտեսական բնույթի կամ որպես հետևանք (կանխամտածված կամ ոչ)՝ հանգեցնել անձնակազմի քվաքանակի կրճատմանը։ Կարևոր է հասկանալ, որ համագործակցության նոր մոդելները կարող են բացասարար ազդել պաշտպանության համակարգի ֆինանսավորման և, հենարավոր է, այն գնի վրա, որը պետք է վճարվեր պաշտպանության համակարգի կազմակերպության կողմից։ Այս

մոտեցումը դիտարկելիս պետք է նախօրոր պարզել հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք ձեռնարկությունները/կազմակերպությունները պետք է հարկեր վճարեն,
- Շահույթը ո՞վ է ստանում (կառավարությո՞ւնը, թե՞ մեկ այլ շահագրգիռ մասնակից),
- Ի՞նչ նոր կարգավիճակ կստանան աշխատակիցները (զինվորներ, քաղծառայողներ), ովքեր կտեղափոխվեն նոր կազմակերպություն (օրինակ՝ քաղաքացիական կազմակերպություն),
- Ո՞վ է կատարելու կրծատումների գծով նպաստների վճարումը,
- Ո՞ւմ է ենթարկվում ձեռնարկությունը/կազմակերպությունը, և ո՞վ է որոշումներ կայացնում,
- Ի՞նչ ազդեցություն կունենան դրանք պետական և պաշտպանության ենթակառուցվածքների վրա:

Համապատասխան իիմնական տարրերակները ևս պետք է դիտարկվեն արտապատվիրման և ներպատվիրման և դրանց ֆինանսավորման տեսանկյունից:

Նախքան արտապատվիրման մասին որոշման կայացումը խորհուրդ է տրվում սկսել համապատասխան կառուցվածքային քաղաքրիչի, ծառայության և (կամ) գործառույթների օպտիմալացումը: Դրանից հետո կարելի է համեմատել ծախսերի առումով «օպտիմալացված տարրերակը» մրցույթի քաղաքացիական նաևնակիցների հայտերի հետ: Ցանկացած որոշում պետք է իիմնակի առաջարկվող լուծումների արթեքային և ծախսային պարամետրերի վրա: Միցույթի քաղաքացիական նաևնակիցների առաջարկների գնահատման մեջ պետք է հաշվի առնել այնպիսի գործոններ և ցուցանիշներ, ինչպիսիք են արդյունավետությունը, հարկերը, ապահովագրության դրույթաչափը, շահույթը, հատուկ վճարները, որոշակի ռիսկի համար վճարները, շտապ կատարման համար գանձվող վճարները և, հավանաբար, պահեստային ուժերի պահպանման ծախսերը, որոնք պաշտպանության բյուջեի համար լրացուցիչ թեր են: Սովորաբար ընկերությունները չեն ցանկանում տալ ծախսերի քացվածքը, փոխարենը ներկայացնում են դրանք մեկ ընդհանուր թվով:

Հետագայում հնարավոր է, որ քաղաքացիական որևէ ընկերություն մենաշնորհային դիրքի հասնի, ինչը կարող է պաշտպանության հատվածը կախվածության մեջ պահել, և թելադրի իր պայմանները գների և առաջարկվող ծառայությունների և արդյունքի առումով: Ծառայություններ տրամադրողն ինքը կարող է խնդիրների հանդիպել, օրինակ՝ տվյալ երկրում լարվածության սրման կամ պատերազմական գործողությունների արդյունքում կամ էլ տվյալ երկրի ասհմաններից դրւու ռազմական գործողություններին օժանդակման դեպքում: Ստորև բերվում են մի քանի օրինակներ.

- Ծառայությունները հնարավոր չեն տրամադրել համապատասխան հայտը ստանալուց անմիջապես հետո,
- Ծառայություններ մատուցող ընկերության անձնակազմը զինծառայողի կարգավիճակ չունի,

- Անհրաժեշտ տրանսպորտային միջոցները բացակայում են,
- Լրացուցիչ ռիսկերը ծածկելու նպատակով գինը բարձրանում է և այլն:

Երեւն ընկերությունները սկզբնական շրջանում ավելի ցածր գին են սահմանում և հետագայում այն աստիճանաբար բարձրացնում են:

Հարկ է նշել, որ երկրի պաշտպանության բյուջեի 60-70 տոկոսը պետության է վերադառնում ուղղակի և անողղակի հարկերի և սոցիալական վճարների տեսքով: Սա, անշուշտ, որոշումների կայացման կարևորագույն գործոններից մեկն է, որը պետք է հաշվի առնել օտարերկրյա ընկերությունների հետ պայմանագրեր կնքելիս:

Վերոնշյալ իրավիճակներում ֆինանսական կառավարիչը պետք է մտածի ֆինանսավորման նոր մեխանիզմների որոնման, կառավարության դրամավարկային քաղաքականության, ինչպես նաև օրենքների և նորմատիվային ակտերի մեջ հնարավոր փոփոխությունների կատարման մասին:

Ստորև բերվում են մի քանի հնարավոր տարրերակներ.

- Դրամական միջոցների փոխառում շուկայից (բանկային հատվածից),
- Դրամական միջոցների փոխառում այն ընկերությունից, որի հետ պայմանագրի է կնքվել,
- Լրացուցիչ դրամական միջոցների փոխառում ֆինանսների նախարարությունից կամ գանձապետարանից տոկոսագումարների վճարմամբ,
- Պահուստների ստեղծում ֆինանսական տարբա վերջում անհրաժեշտ ծախսեր կատարելու նպատակով,
- Պետական գույքի (նյութական արժեքների և ենթակառուցվածքների) վաճառք և ստացված հասույթի մուտքագրում պաշտպանության հաշվին:

Ուսուրասների սակավությունը և պետական կառավարման ապարատի և պաշտպանության ուժերի կրծատումը՝ գուգակցված նոր տնտեսական մեխանիզմների կիրառմամբ, ժամանակակից SS ներդրմամբ, մասնավոր-պետական գործընկերությունների և արտապատվերների ընդլայնմամբ, ավելի մեծ քավանցիկությամբ և միջազգային ֆինանսական ստանդարտների հետ ֆինանսական համակարգերի ներդաշնակեցմամբ, ստիպում է կառավարություններին, հանրությանը, հանրային կազմակերպություններին և պաշտպանության հատվածին փնտրել և գտնել նոր լուծումներ:

## **Պաշտպանության և անվտանգության համակարգի խնդիրները**

Այժմ վերադառնանք նախորդ գլխում բարձրացված հարցերին. ի՞նչ ենք հասկանում «պաշտպանության և (կամ) անվտանգության խնդիրներ» ասելով, և ի՞նչ է պաշտպանությունը: Այս հարցերի պատասխանները կարելի է գտնել՝ վերլուծելով պաշտպանության և անվտանգության այն խնդիրները, որ կատարում են համապատասխան նախարարությունները, ինչպես նաև դիտարկելով համապատասխան հասկացությունների գործնական կիրառման ոլորտները: Ելնելով Գերմանիայի պաշտպանության նախարարության փորձից՝ նման խնդիրների օրինակ կարող է ծառայել հետևյալը.

- *Սուանցքային խնդիրը*, օրինակ մասնակցություն ռազմական գործողություններում կամ վարժանքներում,
- *Օժանդակ խնդիրը*, օրինակ՝ նյութատեխնիկական մատակարարում, կրթություն և անձնակազմի ուսուցում,
- *Զեզոր խնդիրը*, օրինակ՝ SS-ի ներդրում, օգտագործման նպատակներով ռազմական ենթակառուցվածքների տրամադրում:

Խնդիրների կամ գործառույթների նման տարանջատումը կարող է օգնել պատասխանելու մարտական և օժանդակ ստորաբաժանումների անհրաժեշտ թվաքանակին վերաբերող հարցերին, ինչպես նաև այն հարցին, թե ո՞ր խնդիրներն են, որ կարող են իրագործվել հանրային (պաշտպանության) ծառայության քաղաքացիական անձնակազմի կողմից, և ո՞ր գործառույթներն են, որ կարելի է արտապատվերի հիման վրա փոխանցել արտաքին կառույցներին, մասնավոր-պետական կազմակերպություններին կամ քաղաքացիական հատվածի ձեռնարկություններին:

Ելնելով վերլուծության արդյունքներից՝ պաշտպանության տարբեր խնդիրների վերաբերյալ որոշումներից՝ պետք է որոշել, թե որոնք են պաշտպանության համակարգին բնորոշ խնդիրները, ուստի ո՞ր խնդիրների կատարումը պետք է ֆինանսավորվի երկրի պաշտպանության բյուջեից: Ստորև բերվում են մի քանի օրինակներ, որոնք նպատակահարմար է քննարկել վերլուծության ընթացքում.

- *Սոցիալական ապահովության և առողջապահության համակարգ*,
- *Հանգստի կազմակերպման համակարգ*՝ իր ենթակառուցվածքներով,
- *Բնակարանային շինարարություն զինծառայողների և քաղաքացիական ծառայողների համար*,
- *Խաղաղ պայմաններում տրանսպորտային սպասարկում՝ վարչարարական նախատակներով*,
- *Կենսաբոշակային համակարգ*,
- *Ապահովագրական համակարգ*,
- *Նախնական զինվորական ուսուցման համակարգ*,

- Անվտանգության քաղաքացիական կառույց,
- Քաղաքացիական պաշտպանության համակարգ,
- Ոչ ռազմական նշանակության ապրանքների արտադրություն,
- Նյութատեխնիկական մատակարարում և ծառայություններ,
- Բնական աղետների ժամանակ քաղաքացիական հատվածի կազմակերպություններին օժանդակության տրամադրում,
- Մարդկային, նյութական և ենթակառուցվածքային ռեսուրսների ռազմական փոխակերպում, զինարարակում,
- Պետական անվտանգության և հետախուզական համակարգեր:

Պետական բյուջեից ֆինանսավորվող մյուս կառույցները, որպես կանոն, ձգուում են խուսափելու իրենց բյուջեների միջոցները նման նպատակների համար օգտագործելուց:

## **Բյուջետային միջոցների հատկացումների փոփոխություններ**

Այժմ հակիրճ ուսումնասիրենք ֆինանսների պլանավորման և բյուջեի կառավարման հերթականությունը և փոխադարձ կապը այն դեպքերում, երբ պաշտպանության բյուջեի հատկացումների վերաբերյալ նախապես ընդունված որոշումները վերանայվում են, և երբ նման որոշումները վերաբերում են բյուջեի միջոցների ոչ բեղողակի, այլ անուղղակի օգտագործմանը:

Եթե, օրինակ, որոշում է կայացվում զինված ուժերի համար նախատեսված անվճար բնակարանների շինարարության դադարեցման մասին, սա նշանակում է, որ զինծառայողները պետք է ստանան ավելի բարձր աշխատավարձ, որը նրանց հնարավորություն կտա վճարելու վարձակալած բնակարանի համար: Արդյունքում՝ ֆինանսական պլաններում մեծանում են անձնակազմի պահպանման համար նախատեսված ծախսերը: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում վաճառելու բնակչության կամ սպասարկման նպատակով այն փոխանցելու դրսի կազմակերպություններին, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կատարելու անձնակազմի բնակարանային ապահովման հարցերով գրադարձ ստորաբաժանումների և կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքում: Սա, իր հերթին, կիսնգենի նշված ստորաբաժանումների և կազմակերպությունների բյուջետային ֆինանսավորման ծավալների համապատասխան փոփոխություններին:

Սխաժմանակ, կառավարությունը (համապատասխան նախարարությունը կամ գերատեսչությունը) պետք է մտածի՝ պաշտպանության բյուջեում արդյոք պե՞տք է ծախսեր նախատեսել հետևյալի համար:

- Միջազգային գործողություններ (ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող առաքելություններ, այլ խաղաղապահ գործողություններ, խաղաղության և կայունության պահպանման ուղղված գործողություններ, մարդասիրական առաքելություններ, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանն ուղղված գործողություններ և այլն),

- ուսզմական ներդրումների ֆինանսավորման համար տոկոսագումարների վճարում,
- անձնակազմի պահպանման ծախսերի մեծացում, օրինակ՝ աշխատավարձի բարձրացում և այլն,
- քաղաքացիական հատվածի կազմակերպությունների մասնակցությամբ նոր քազային տեխնոլոգիաների մշակում,
- զինված ուժերի գործունեության արդյունքում հասցված նյութական վնասի փոխհատուցում,
- սոցիալական վճարներ
  - գործող և պահեստային անձնակազմին,
  - զինուժերի ակումբներին/կազմակերպություններին,
  - զինծառայողների արտոնությունների գծով վճարումներ,
  - մարզական ենթակառուցվածքների կամ մշակույթի օբյեկտների պահպանում:

Պետությունը, այսինքն՝ քաղաքական գործիչները, բյուջեի պլանավորման մասնագետների օժանդակությամբ պետք է որոշեն, թե զինված ուժերի ո՞ր գործառույթները և խնդիրները պետք է պահպանել, և որո՞նք պետք է փոխանցել քաղաքացիական կառույցներին, մյուս նախարարություններին և գերատեսչություններին, հարևան երկրներին կամ նիշազգային կազմակերպություններին<sup>121</sup>: Սա նշանակում է, որ որոշումներ կայացնելուց առաջ պետք է դրանք մանրագնին ուսումնասիրվեն «ծախսեր-արդյունք» տեսանկյունից<sup>122</sup>:

Բացի այդ, մասնագետները կատարում են հավանական ոլուսկերի վերլուծություն և առաջարկում այլընտրանքային տարրերակներ, այդ թվում և այն դեպքերի համար, երբ իրավիճակը կարող է զարգանալ «վատրարագույն սցենարով»: Ընդ որում, պլանավորման և ֆինանսների կառավարման մասնագետները պետք է լուծեն հետևյալ խնդիրները կամ լուծման տարրերակներ նախատեսեն հետևյալ խնդիրների առաջացման դեպքում:

- Արդյունաբերական ձեռնարկությունները հնարավորություն չունեն մատակարարելու այն արտադրանքը, որի համար բյուջեից հատկացնումներ են կատարվել,
- Երկրում ռազմաարդյունաբերական առանցքային հզորությունների վերացումը կարող է հանգեցնել այլ երկրներից կախվածությանը, գործազրկության աճին և հարկային եկամուտների կորուստներին,
- Գնաճ, իրացման կամ արտադրության հետ կապված խնդիրներ,
- Ներքին մրցույթներում արտերկրի ընկերությունների մասնակցության հետ կապված պարտավորություններ,
- Տվյալների արժանահավատության ապահովում և փաստացի ծախսերի տվյալների տրամադրում,

<sup>121</sup> Որոշ գործառույթներ ժամանակավորապես կարող են կատարել երկու կամ ավելի կազմակերպություններ:

<sup>122</sup> Մանրամասն ծախսերի հաշվառման մասին տե՛ս ստորև գլխում:

- Բյուջեի կրճատում,
- Ազգային մակարդակում տվյալների կենտրոնացված հավաքագրման անբավարար մակարդակ կամ անհրաժեշտ ֆինանսական տվյալներից օգտվելու սահմանափակ հնարավորություններ,
- Բյուջեի պլանավորման և կատարման ընթացքում ձկունության բացակայություն:

## **Պաշտպանության համակարգի բյուջեի կառուցվածքը**

Պաշտպանության համակարգում ֆինանսական կառուցվածքան առանցքային հարցերից մեկը պաշտպանության բյուջեի կառուցվածքն է: Այս կամ այն պետության բյուջեի կառուցվածքը որոշվում է նրա օրենսդրությամբ և համապատասխան նորմատիվային և իրավական ակտերով և չի կարող հեշտորեն փոփոխվել նույնիսկ այն դեպքերում, երբ իրական հնարավորություն կա առավել արդյունավետ օգտագործելու պաշտպանության բյուջեի միջոցները: Որոշ դեպքերում նկատվում է առանձին կառուցվածքի կողմից լուրջ դիմադրություն, որը խոչընդոտում է անհրաժեշտ փոփոխությունների կատարման գործընթացը:

Ստորև բերվում են պաշտպանության բյուջեի կառուցվածքների առավել ընդհանրական օրինակներ՝ ըստ բյուջեի համապատասխան դասերի.

- **Կառուցվածքն ըստ ծախսերի՝ գինվորական և քաղաքացիական անձնակազմ, սպասարկում և նորոգում, գնումներ, ենթակառուցվածքներ, գիտական գործունեություն և գինտեխնիկայի նոր տեսակների մշակում, վարչարարություն,**
- **Կառուցվածքն ըստ կազմակերպական պատկանելության՝ ցանքային գորքեր, ռազմական ավիացիա, ռազմածովային ուժեր, պահուստային ուժեր, երրին անվտանգության ուժեր, երկարուղային տրանսպորտի և շինարարական ուժեր, ոստիկանություն/մերձափնյա պահպանություն, մաքսային ծառայություն,**
- **Կառուցվածք, որն ընդգրկում է բյուջետային հատկացումները և կազմակերպչական կողմերը, պաշտպանության նախարարության աշխատակազմ, ֆինանսավորման ընդհանուր պարամետրեր (այդ թվում՝ հաշվի առնելով եկամուտները), ռազմական հրամանատարություն (անձնակազմ և վարչարարություն), քաղաքացիական անձնակազմ և վարչարարություն, գինվորական, կրտնական, քժկական և սոցիալական ապահովության ծառայություններ, մթերք և հագուստ, բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռազմական տեխնիկա, հրթիռներ, ռազմական նավեր և ռազմածովային տեխնիկա, ավիացիոն տեխնիկա և տեխնիկա ռազմաօդային ուժերի համար, ռազմագիտություն, ռազմական նոր տեխնիկայի մշակումներ և փորձարկումներ, ՆԱՏՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների անդամավճարներ,**

- Կառուցվածք՝ ըստ կոնկրետ նախագծերի, գործընթացների և ապրանքների (օրինակներ). զինված ուժերի կրծատում, սոցիալական ծրագրեր, հակաօդային պաշտպանություն, ենթակառուցվածքների շինարարություն/նորոգում և բնակչության պահպանում, մերձափնյա պաշտպանություն, որոնդափրկարարական գործողություններ, պահուածային գորքի զինվորական ուսուցում, միջազգային կազմակերպությունների հանդեպ պարտավորությունների կատարում և անդամագնարներ, նոր տրանսպորտային ինքնարդուներ, նոր շտարներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապի միջոցներ,
- Խոսք կառուցվածք՝* հաճախ պաշտպանության բյուջեի կառուցվածքը վերը նշված երկու կամ ավելի տեսակի կառուցվածքների համադրումն է: Նշվածներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Անկախ կառուցվածքի տեսակից՝ պաշտպանության բյուջեի ցանկացած ընտրված կառուցվածքը պետք է ապահովի պաշտպանության համակարգի խնդիրների իրագործումը:

## Պլանավորում, ծրագրում և բյուջեի կազմում

### Հաշվետվողականություն, ճկունություն և բափանցիկություն

Հաշվետվողականությունը և բափանցիկությունը պաշտպանության համակարգի ֆինանսների արդյունավետ և ճկուն կառավարման գլխավոր գործններն են, որոնք ապահովում են հասարակության, հարկատուների, օրենսդիրների և միջազգային հանրության պահանջների բավարարումը: Սույն գլխի համատեքստում սահմանված գլխավոր նպատակներն են.

- պաշտպանության համակարգում պլանավորման, ծրագրավորման և բյուջեի կազման գործընթացների արդյունավետության բարձրացում՝ բյուջեի արժանահավատության և իրատեսականության ապահովման և դրա համար պատասխանատվության բարձրացման նպատակով,
- արժեքների և ծախսերի իրական ցուցանիշների որոշում՝ բյուջեի կանխատեսումների արժանահավատության ապահովման նպատակով,
- տնտեսական արդյունավետության սկզբունքի պահպանում՝ ծախսերի նվազեցման և արդյուավետության բարձրացման նպատակով,
- պաշտպանության և անվտանգության համակարգի հետ անմիջականորեն շկասված առանձին գործառույթների և խնդիրների կատարման փոխանցում՝ այլ ստորաբաժանումներին կամ արտաքին կազմակերպություններին՝ միաժամանակ պահպանելով ռազմական և սուվերեն բնույթի առանցքային խնդիրները (ներպատվիրում և արտապատվիրում):

Գերնանիայի փորձը բափանցիկության որոշակի օրինակ է: Պաշտպանության բյուջեի վերջնական տարրերակը՝ նույ 180-էջանց օրենքի նախա-

զծի տեսքով, հաստատվում է խորհրդարանի կողմից: Համապատասխան ֆինանսական տարվա պաշտպանության բյուջեի մասին օրենքի նախագիծը հասանելի է ցանկացած քաղաքացու, ով կարող է այն ձեռք բերել սովորական գրախանությօց: Այս եղանակով հասարակությունը հնարավորություն ունի տեղեկություններ ստանալու նշված բյուջեի կարևորագույն ցուցանիշների վերաբերյալ: Այսպիսիով իրագործվում է բափանցիկության սկզբունքը, որը ժողովրդավարության բնորոշ հատկանիշն է:

Դրա հետ մեկտեղ, բյուջեի որոշ ցուցանիշներ շարքային քաղաքացու ընկալման համար անհասանելի են առանց բյուջեի պլանավորման հարցում փորձագետի մասնագիտական պարզաբանումների: Երբեմն առանձին ցուցանիշներ ներկայացված են ոչ ճիշտ, շղարշված տեսքով, երբեմն դրանք կարող են ճշգրիտ չլինել փաստացի տվյալների բացակայության պատճառով, իսկ երբեմն էլ որոշ ցուցանիշներ ուղղակի կարող են բացակայել: Դա զգալիորեն բարդացնում է այնպիսի մասնագետների աշխատանքը, ինչպիսիք են ֆինանսական կառավարիչները, չխոսելով արդեն ոչ մասնագետ դիտորդների, օրինակ՝ լրագրողների մասին:

### **Բյուջեի պլանավորման պարբերաշրջան**

Ժողովրդավարական երկրներում կառավարությունն ու խորհրդարանը սահմանում են քաղաքական հայեցակարգեր և նպատակներ, և պատասխանատվություն են կրում բյուջեի կատարման համար: Ուստի հենց նրանք են սահմանում բյուջեի պլանավորման և ծրագրավորման պարբերաշրջանի տևողությունը: Պլանավորման գործընթացը միշտ վերաբերում է ժամանակի որոշակի հատվածին: Դա կարող է լինել ֆինանսական տարվա կամ հեռանկարային (օրինակ՝ երկու, երեք, հինգ և ավելի տարիների) պլանավորում: Այսինքն՝ խոսքը կարծածամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման մասին է: Միջնաժամկետ պլանավորումը՝ հեռանկարային երեք և ավելի տարվա համար, պլանավորման գործընթացը դարձնում է ավելի կայուն, սակայն ֆինանսավորման մակարդակում չնախատեսված փոփոխությունների դեպքում մեծացնում է խնդիրների առաջացման ռիսկը: Երկարաժամկետ պլանավորման ընթացքում հնարավոր չէ հաշվի առնել բոլոր ֆինանսական ռիսկերը, որոնք կարող են ապագայում առաջանալ, հետևաբար պլանավորված համապատասխան ցուցանիշները շատ մոտավոր են: Սովորաբար սա նշանակում է, որ նախագծի իրական արթեքը կարող է զգալիորեն գերազանցել պլանավորված մակարդակը, կամ դրա իրագործումը կարող է պահանջել պլանավորվածից ավելի շատ ժամանակ, որը ապագայում կիանցեցնի ֆինանսական կառավարման բարդացմանը:

Որոշ երկրների պաշտպանության հայեցակարգեր նախատեսում են կոնկրետ ծրագրերի և նախագծերի կամ կոնկրետ նպատակների իրականացում: Այդ նախագծերի կամ ծրագրերի բյուջեների նախնական պլանավորումը կարող է հանգեցնել նրան, որ երբ հասնի դրանց իրականացման ժամանակը,

առաջարկվող նախագիծը լավագույնը չի լինի «արդյունավետություն/արժեք» հարաբերակցության տեսանկյունից: Այդ խնդրի լուծման համար Գերմանիայում և մյուս երկրներում հետանկարային պլանավորման համակարգին զուգահեռ գոյություն ունի նաև այսպես կոչված «հնարավորությունների վերլուծության» հասուկ ընթացակարգը: Այն կիրառվում է, եթե ուսուրաները չափազանց սահմանափակ են, և անհրաժեշտ է դրանք հնարավորինս արդյունավետորեն օգտագործել պահանջների արագ փոփոխման պայմաններում, մասնավորպես՝ եթե քննարկվում է միջազգային գործողություններին մասնակցելու հարցը: Նշված ընթացակարգը նախատեսում է կարիքների արագ հատկորդություն՝ սեղմ ժամկետներում դրված նպատակներին հասնելու համար: Սակայն պլանավորման և «հնարավորությունների վերլուծության» սկզբունքների զուգահեռ կիրառումը կարող է զգալի ազդեցություն ունենալ կարճա/միջնաժամկետ պլանավորման և ֆինանսավորման գործընթացների վրա, ուստի պահանջում է լրացուցիչ ծավալուն աշխատանքներ նշված երկու զուգահեռ գործընթացների համակարգման ուղղությամբ:

## **Ծախսերի հաշվառում**

Ֆինանսական կառավարման համակարգում ամենախոցելի օդակները համարվում են արժեքային և ծախսային ցուցանիշների տվյալները: Գործնականում ֆինանսների կանխատեսման, ծրագրման, պլանավորման, ծախսերի մոտավոր պլանավորման և բյուջետային գործընթացի վերահսկողության արդյունավետությունն ու կարևորությունը հիմնականում կախված են առկա տեղեկությունների որակից և արժանահավատությունից: Նույնիսկ լավագույն համակարգերն ու ընթացակարգերը չեն կարող արդյունավետորեն կիրառվել, եթե դրանց հիմքում ընկած տեղեկությունները արժանահավատ, թափանցիկ և ճանաչելի չեն:


## **Ծախսերի հաշվառման կիրառություններ**

Մասնավոր, ինչպես նաև պետական հատվածում, այդ թվում՝ պաշտպանության ոլորտում, ծախսերի հաշվառման ռեսուրսների և ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման հիմնական նախապայմանն է: Հարկ է նշել, որ պետական/պաշտպանության ոլորտում ըմբռնվում է ծախսերի հաշվառման կարևորությունը, սակայն այս առումով այն դեռևս հետ է մնում մասնավոր հատվածի զարգացումներից:

Երբեմն նույնիսկ «ծախսեր» և «ծախսեր» եզրույթները ճիշտ չեն կիրառվում: Ընդունված սահմանման համաձայն՝ «ծախսերը» որոշակի ժամանակամիջոցում օգտագործված դրամական միջոցներն են՝ մոտավոր հաշվարկված: Ծախսերը մշտապես կապված են զումարների (կանխիկ կամ այլ տեսքով) վճարման, օգտագործման կամ բյուջետային հաշվում գրանցման հետ: Ծախսերի մասին տվյալների կիրառումն ու օգտագործումն անհրաժեշտ է հետևյալ բնագավառներում:

- Ուսուրսների կառավարում՝ ներառյալ բյուջետային և ֆինանսական պլանավորումը,
- Խորհրդարանային վերահսկողության շրջանակում հաշվետվողականություն պաշտպանության բնագավառի ծախսերի ու եկամուտների համար,
- Տեղեկատվության տրամադրում քաղաքացիներին, լրատվամիջոցներին, միջազգային համայնքին (վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների շրջանակում), առլիդորական և վերահսկողական մարմիններին, պաշտպանության նախարարությանը և պաշտպանության կառույցներին և բյուջեի համար գլխավոր պատասխանատու մարմնին, օր.` ֆինանսների նախարարությանը/գանձնապետարանին,
- Տնտեսական վերլուծություն և գնահատումներ,
- Գների հաշվարկ և ծախսերի համեմատություն՝ կապված ներպատվիրման և արտապատվիրման որոշումների հետ,
- Մասնավորեցում և պետական-մասնավոր գործընկերություններ,
- Ծախսերի կատարողականի և ակտիվների շահագործման բոլորաշրջանում կատարվող ծախսերի գնահատում,
- Ազգային և միջազգային առաքելություններում մասնակցության փոխհատուցման, համատեղ ծրագրերի իրականացման գծով ծախսերի մասնաբաժնի, ֆինանսական օգնության գումարների հաշվարկ:

Գծապատկեր 3-ում ցույց են տրվում տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական կենտրոն ունեցող պաշտպանության համակարգում տեղեկատվական հոսքերի հնարավոր ուղղությունները: Տեղեկատվության հիմնական աղբյուրը զինված ուժերի ստորաբաժանումներն ու տարբեր ծառայություններն են, մինչդեռ «հիմնական դերակատարներն» օժտված են ստացված տվյալներից օգտվելու հստակ սահմանված իրավասություններով:



#### Գծապատկեր 3. Ծախսերի հաշվառում և տեղեկատվական հոսքեր

#### Ծախսերի հաշվառման գործընթացի կազմակերպումը

Ծախսերի հաշվառում իրականացնող կազմակերպությունը կարող է կազմված լինել իրամանատարական անձնակազմից, ստորաբաժանումներից, գերատեսչություններից, տվյալների հավաքագրման ու վերլուծության կենտրոններից, հիմնարկներից և այլն: Այն իրականացնում է ծախսերի հաշվառում՝ ելեկտրոն հետևյալ նպատակներից:


- Բոլոր այն համապատասխան տվյալների հավաքագրում և վերլուծություն, որոնք անհրաժեշտ են ծախսերի էֆեկտիվ և արդյունավետ հաշվառման համար,
- Արդիականության, կարևորության, բափանցիկության, հուսախոր-

յան, տարբերակվածության և արժանահավատության առումով բարձրորակ տվյալների ապահովում,

- Տեղեկատվական հոսքերի համակարգի օպտիմալացում (տվյալների փոխանցման ուղիների կրճատում) և դրանով իսկ ժամանակի խնայողության ապահովում,
- Չկիրառվող կամ վերլուծություններում չօգտագործվող տվյալների հավաքագրումից (այլ կերպ ասած՝ «ստեղեկատվական գերեզմանոցի» առաջացումից) խուսափում,
- Տեղեկատվական կենտրոնների (տվյալների վերլուծության կենտրոնի, տվյալների շտեմարանի) ստեղծում և տվյալների հավաքագրման և վերլուծության կենտրոնացված իրականացում,
- Ծախսերի հաշվառման մեջ ներզրավված անձնակազմի ուսուցում և շահադրդում,
- Տարրեր մակարդակներում ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տվյալների արագ հասանելիության ապահովում՝ միաժամանակ պահպանելով գաղտնիության ռեժիմի պահանջները:

Համեմատաբար փոքրաթիվ զինված ուժեր ունեցող երկրներում բավար է ունենալ ծախսերի հաշվառման և վերլուծության միասնական կենտրոն: Նման կառուցվածքը թույլ է տալիս պարզեցնել ծախսերի մասին տվյալների հավաքագրման, զնահատման և վերլուծության գործընթացը: Ավելին՝ կենտրոնը կարող է ծառայել որպես չեզոք հաշվարկային կառույց, որը խորհրդարանին, կառավարության վերահսկիչ ծառայությանը և ներքին առողջության մարմնին կտրամադրի տնտեսագիտական վերլուծությունների արդյունքները:

Առավել մեծաքանակ զինված ուժեր ունեցող երկրների դեպքում կարող է ի հայտ գալ տարրեր մակարդակներում տվյալների վերլուծության տարածաշրջանային կենտրոններ ստեղծելու անհրաժեշտությունը, եթե տվյալների փոխանցումն ու վերլուծությունն իրականացվում է՝ կիրառելով ժամանակակից հաղորդակցության միջոցներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ:



#### Գծապատկեր 4. Տվյալների փոխանցման օրինակ

#### Ծախսերի հաշվառման մերողաբանությունը և ընթացակարգերը

Ծախսերը գնահատվում են իրական պատճական և էմպիրիկ ծախսերի տվյալների հիման վրա: Հետևաբար կարենոր նշանակություն ունի գերատեսչությունում բյուջեի, այդ բվում՝ նախատեսվող ծախքային ցուցանիշների և փաստացի ծախսային տվյալների միջև կապի ապահովումը: Տնտեսությունում կիրառվում են ծախսերի տարբերակման մի քանի մերողներ, որոնք պետք է ներդրվեն նաև պաշտպանության ոլորտում:

Ամբողջական ծախսեր	Մասնակի ծախսեր	Հասունական ծախսեր	
Ուղղակի ծախսեր	Անուղղակի ծախսեր		
Հաստատուն ծախսեր	Փոփոխական ծախսեր		
Գործառնական ծախսեր	Ընթացիկ ծախսեր	Պահպահման ծախսեր	Աշխատուժի հետ կապված ծախսեր
Ծախսեր՝ գումարած հաստատուն մուտքեր	Վերադիր ծախսեր	Վարչական ծախսեր	Ներդրումային ծախսեր

Նախքան վերը նշված եզրույթների օգտագործումը անհրաժեշտ է հստակ հասկանալ, թե ինչ են նշանակում դրանք և ինչ տարրերից են կազմված:

ՆԱՏՕ-Ռուսաստան հանձնաժողովի շրջանակում ՆԱՏՕ-ի տնտեսական կոմիտեն սկսել է մի նախագիծ, որն ուղղված է համապատասխան եզրույթների միասնականացմանը, սակայն այս փուլում դեռևս չի հաջողվել հասնել նախատեսված արդյունքներին<sup>123</sup>:

Ծախսերի հաշվառում իրականացնող երկրների մեծ մասում պաշտպանության համակարգի ծախսերը, որպես կանոն, հաշվառվում են ըստ երեք խմբերի:

### *Ամրողական ծախսեր*

Ամրողական ծախսերի մեջ մտնում են բոլոր տեսակի ծախսերը: Նշված ծախսերը համեմատվում են հանրային և մասնավոր հատվածների համապատասխան ծախսերի հետ՝ տնտեսական վերլուծության, գնագոյացման, պաշտպանության համակարգի կազմակերպության կողմից պետական կազմակերպությանը կամ մեկ այլ կառույցին տրամադրված կամ նատակարարված ծառայությունների և ապրանքների արժեքի գնահատման նպատակով:

### *Մասնակի ծախսեր*

Մասնակի ծախսերը կազմված են ծախսերի առանձին տեսակներից: Մասնակի ծախսերի հաշվառումը իրականացվում է հօգուտ ազգային և միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՍԱԿ-ի և պայմանագրային հիմունքներով նաև օտարերկրյա պետությունների համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների՝ հաշվարկների սլարգեցման և հարաբերություններում վատահության բարձրացման նպատակով: Որպես կանոն՝ նման մոտեցումը կիրառվում է ծառայություններ տրամադրող կողմի համար լրացուցիչ ծախսերի որոշման և հայտարարման նպատակով, օրինակ բնական աղետի հետևանքների վերացման աշխատանքներում մասնակցելիս, այլ նախարարություններին և գերատեսչություններին ավտոտրանսպորտային ծառայություններ մասուցելիս կամ այլ տեսակի օժանդակության դեպքում:

<sup>123</sup> ՆԱՏՕ-Ռուսաստան հանձնաժողովի աշխատանքային խմբի 2004 թ. Աշխատանքների պլան, Հավելված 1 «Պաշտպանության ոլորտում ֆինանսական տերմինաբանության հարցերով լեզվաբանական աշխատանքային խմբի եզրակացությունները»: Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ՝ այցելելով [www.rta.nato.int/panel.asp?panel=SAS&topic=pubs](http://www.rta.nato.int/panel.asp?panel=SAS&topic=pubs), մասնավորապես՝ *SAS-208* «Ծախսերի կառուցվածք և շահագործման ընթացքում ուսումնական տեխնիկայի պահման հետ կապված ծախսերը» հոդվածում և *SAS-054* «Կյանքի բոլորաշրջանի արժեքի հաշվարկման եղանակներ և մոդելներ»:

## Հասող ծախսեր

Հասող ծախսերի տեսակը որոշվում է դրանց նպատակային օգտագործման հիման վրա: Օրինակ շահագործման, տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծախսեր (հաշվի առնելով օգտագործված նյութերի և սարքավորման իրական ծավալները և դրանց արժեքը), գնումներ և այլն, որոնք պահանջված են նախարարությունը հետազայում կարող է օգտագործել որպես բազային ցուցանիշներ բյուջեի ծրագրման գործընթացում ապագա ծախսերի կանխատեսվող պարամետրերը որոշելիս:

Այդ ծախսերի ծավալը որոշվում է առկա փորձի հիման վրա: Դա նշանակում է, որ նախորդ տարիների միջին ցուցանիշներն օգտագործվում են որպես բազային ցուցանիշներ համապատասխան սկզբնական պարամետրերի հաշվարկման համար: Դրա հիման վրա որոշվում են նոր ծախսերը՝ հաշվի առնելով ապագա խնդիրները, պարամետրերը և մտադրությունները: Նշված ապագա ծախսերի հաշվարկը բավականին բարդ է, ուստի ծրագրման փուլում կանխատեսվող ցուցանիշները, անհրաժեշտության դեպքում, ենթարկվում են համապատասխան ճշգրտումների:

Ծախսերի տարրեր դասերի և երկրորդական ծախսերի հաշվարկների համակարգի թափանցիկության ապահովման և պարզեցման նպատակով մշակվում են հասող միասնական սխեմաներ, որտեղ հաշվի են առնվում ծախսերի տարրեր տեսակները և դրանց առանձին տարրերը: Որպես օրինակ կարելի է բերել Գերմանիայում գործող համակարգը: Հաշվառման կենտրոնը ամեն տարի հրապարակում է 160 էջից բաղկացած հաշվետվություն (որը կրկնօրինակվում է համակարգչային խտակապառակի վրա), որտեղ ներկայացվում են բոլոր ծախսերը՝ դրանց կիրառման ուղղությամբ համապատասխան ուղենիշների հետ միասին: Նման աշխատանքների արդյունավետության բարձրացման և հետադարձ կապի ապահովման նպատակով տեղեկություններից օգտվողներին խնդրում են պարբերաբար գնահատել հրապարակված տեղեկությունների որակը, հարմարության և օգտակարության աստիճանը: Ծախսերի համանման համակարգ և հրապարակված համապատասխան տվյալներ գոյություն ունեն և պահանջված համակարգում: Այդ տվյալները հետազայում օգտագործվում են որպես միասնական բազային ցուցանիշներ ֆինանսական կառավարման, կանխատեսումների, բյուջեի ծրագրավորման, ստուգման և վերահսկողության, ծախսերի արդյունավետության և տնտեսագիտական հետազոտությունների գնահատման ժամանակ: Ծախսերի հաշվառման կենտրոնը հրապարակված հաշվետվությունները համապատասխան մեկնարարանությունների և առաջարկությունների հետ միասին ուղարկում է ֆինանսների նախարարությանը, դաշնային վերահսկիչ ծառայությանը, խորհրդարանին, պահանջված ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ կառույցներին:

Ծախսերի հաշվառման գործընթացը կարող է կապված լինել որոշակի խնդիրների և դժվարությունների հետ: Մասնավորապես՝ դրանք կարող են լինել.

- Վերադիր ծախսերի գնահատում (առանձին ստորաբաժանումից մինչև պաշտպանության նախարարություն),
- Գնաճի մակարդակի և արտարժույթի փոխարժեքի հաշվառում,
- Արժեքային ցուցանիշների տարանջատումը ծախսային ցուցանիշներից,
- Հաստատուն ծախսերի անցումը փոփոխական ծախսերի և հակառակը՝ ընդհանուր ծախսերի գնահատում:

Այս և այլ խնդիրները լուծվում են ծախսերի արդյունավետ հաշվառման համակարգի կիրառման շնորհիվ: Ստորև ներկայացնում ենք մի օրինակ, որտեղ ցույց է տրվում, թե ինչպես կարելի է պահպես ծախսերի գնահատման արդյունավետության պահանջները:

Աշխատակիցների կողմից բոլոր վճարումները պետք է կատարվեն կենտրոնացված ձևով: Զափազանց կարևոր է, որ այդ վերջնահաշվարկները կատարվեն ոչ թե կանխիկ, այլ անկանխիկ ձևով՝ ֆիզիկական անձի բանկային հաշվին փոխանցման միջոցով: Այդուհանդերձ, անհրաժեշտ է, որ բոլոր վճարումների մասին տեղեկատվությունը յուրաքանչյուր գործարքից հետո անմիջապես փոխանցվի տվյալների հավաքման և վերլուծության կենտրոն: Այսպիսով՝ տվյալների վերլուծության համակարգը հնարավորություն է ստանում շատ կարճ ժամանակահատվածում տեղեկություններ տրամադրել անձնակազմի հետ կապված փաստացի ծախսերի վերաբերյալ: Ցանկացած պահին ծախսերի հաշվառման համակարգը կարող է ստանալ համապատասխան թարմ տեղեկատվություն և հաշվարկել ընթացիկ ֆինանսական ժամանակահատվածում կատարված փաստացի ծախսերը կամ կատարել հաջորդ ֆինանսական ժամանակահատվածի ծախսերի կանխատեսումներ: Այդ հաշվարկները կարող են օգտագործվել բյուջեի կատարման, ծրագրման և վերահսկման, ինչպես նաև վերը նշված այլ խնդիրների կարգավորման ընթացքում:

Արդյունավետ տեղեկատվական բազաների և շտեմարանների ստեղծման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք կարևոր միջոցառումներ, ինչպիսիք են.

- Միասնականացում (ծախսերի հաշվարկների և ընթացակարգերի),
- Կենտրոնացում (տվյալների վերլուծության կենտրոնի կողմից տվյալների կենտրոնացված հավաքագրում),
- Թարմացում (ծախսերի ամենօրյա հաշվառում և դրանց օպերատիվ փոխանցում),
- Տեղեկությունների/տվյալների փոխանցում, այդ թվում՝ առկա էլեկտրոնային փոստի միջոցներով,
- Ընդհանուր միասնական համակարգային ծրագրի օգտագործում (պաշտպանության և մյուս նախարարությունների և գերատեսչությունների կողմից),
- Անձնակազմի ուսուցում (ծախսերի գնահատման/հաշվառման համա-

կարգի կառավարման անհրաժեշտ հմտություններ տալու նպատակով),

- Բոլոր խոշոր ստորաբաժնումներում և գերատեսչություններում ծախսերի արդյունավետության համակարգի ստեղծում (նման համակարգը պետք ներդրվի աստիճանաբար՝ սկսելով ամենակարևոր ստորաբաժնումներում իրականացվող փորձնական աշխատանքներից),
- Տվյալների վարման, պաշտպանության և անվտանգության համապատասխան մակարդակի ապահովում:

### **Ծախսերի արդյունավետության հաշվարկների համակարգ**

Ծախսերի գնահատման/հաշվառման համակարգի ստեղծմանը պետք է հաջորդի ծախսերի արդյունավետության զնահատման համակարգի ներմուծումը: Ծախսերի արդյունավետության զնահատման բարդ գործընթացի ապահովման անհրաժեշտ նախապայմանն են ծախսերի զնահատման/հաշվառման գործող համակարգը և արդյունավետության և խնայողության տարբեր կողմերի փորձագիտական զնահատականները (տե՛ս Գ-ծառապատկեր 2-ը):

Նախկինում պաշտպանության համակարգի կազմակերպություններում չէին վերահսկվում օգտագործվող ռեսուրսների դրական ու քանակը: Մասնավոր հատվածում առկա հաշվառման համակարգերը նախատեսում են համապատասխան ցուցանիշների չափման և վերահսկման մեխանիզմներ: Նման համակարգի կիրառումը պաշտպանության բնագավառում նշանակում է, որ գործունեության բոլոր տեսակների, ծառայությունների, ծրագրերի, ընթացակարգերի, նախագծերի, նպատակների, գործառնությունների և խնդիրների լուծման արդյունավետությունը պետք է զնահատվի և համեմատվի դրանց արժեքի հետ: Նման զնահատման արդյունքներով մենք հնարավորություն կունենանք պատասխաննելու հետևյալ հարցին. «Արդյո՞ք կարողացանք հասնել ծախսերի արդյունավետության ցանկալի մակարդակին, և որքանո՞վ են ստացված արդյունքները տարբերվում մասնավոր հատվածի համանման ցուցանիշներից»:

Սա անհրաժեշտ է գործունեության առավել արդյունավետ և խնայութական եղանակների ներդրման կամ, անհրաժեշտության դեպքում, գործունեության որոշ տեսակները ծախսերի օպտիմալացման համար այլ կազմակերպություններին փոխանցելու նպատակով:

Ծախսերի արդյունավետության հիմնան վրա ստացված արդյունքների քանակական և որակական վերահսկողությունը հրամանատարի կամ ցանկացած մակարդակի դեկավարի համար կարող է կարևոր գործիք դառնալ այս կամ այն առաջադրանքը կատարելիս արդյունքների արդյունավետության զնահատման գործում: Հարկ է նշել, որ գործունեության որոշ տեսակների դեպքում, եթե հնարավոր չէ հաշվարկել դրանց դրամական արժեքը (սոցիալական ապահովության համակարգ, շահադրդում, զինծառայողների կամ

ուազմական տեխնիկայի մարտական պատրաստվածություն, արհեստավարժության կամ ուսուցման մակարդակ), անհրաժեշտ է ներդնել արդյունավետության ցուցանիշների գնահատման որոշակի ստանդարտներ:

Այս տեսակետից էլ անհրաժեշտ է դիտարկել շահութաբերության գնահատականը, այսինքն՝ ծախսերի և ստացված արդյունքի կամ շահույթի տարբերությունը, չնայած երբեմն դժվար է լինում տալ «տնտեսական արդյունքի» և «շահույթի» հստակ սահմանումը: Նման հասկացությունները նպատակահարմար է կիրառել պաշտպանության ոլորտում իրականացվող գնումների, ենթակառուցվածքների գարզացման, ուսումնավարժանքների համատեքստում, կամ երբ խոսքը վերաբերում է նյութական արժեքներին: Շահութաբերությունը ծախսված ռեսուրսների արդյունավետությունն է դրամական արտահայտությամբ: Մյուս դեպքերում տնտեսական արդյունքի ցուցանիշների որոշումը կատարվում է սուրյեկտիվ գնահատականների և հաշվարկների հիման վրա:

### **Տեխնիկական հնարավորությունների արդյունավետ օգտագործում**

Պաշտպանական ռեսուրսների սահմանափակության պարագայում երկրների մեծ մասում պաշտպանության համակարգի կազմակերպությունները չեն կարող ակնկալել լրացուցիչ միջոցներ, օրինակ կամ տեղեկատվական նոր համակարգերի գնման համար, որոնք անհրաժեշտ են բյուջետավորման կամ ծախսերի ընթացիկ հաշվառման գործընթացների արդիականացման համար: Ուստի այդ աշխատանքները հարկ է սկսել գոյություն ունեցող հնարավորությունների և համակարգերի վերլուծությունից, ինչպես նաև տվյալների վերլուծության նոր համակարգի աստիճանական ներդրման կամ իին համակարգի արդիականացման ուղիների դիտարկումից:

Վերջին մի քանի տարում, տեղեկատվական տեխնոլոգիաների սրբնացագացմանը համապատասխան շահուակարգը և ֆինանսական կառավարման մարմինները ներդրել են տվյալների վերլուծության բազմազան համակարգեր, և այժմ նրանց առաջ ծառացել է նշված բազմազան համակարգերի միասնականացման կամ միասնական նոր ստանդարտ համակարգով դրանց փոխարինման խնդիրը: Լավագույն լուծումը կարող էր լինել գործունեության և ֆինանսների կառավարման հարցերով գրաղվող բոլոր նախարարություններում, գերատեսչություններում և կազմակերպություններում միասնական ստանդարտ համակարգի ներդրումը: Համակարգի տեխնիկական սարքավորումը պետք է ստանդարտ լինի և մատակարարվի մասնավոր արտադրողների կողմից:

Բացի ֆինանսական հատվածից և հաշվապահական հաշվառումից՝ այդ սարքավորումը պետք է սպասարկի գործունեության մյուս ոլորտները, օրինակ նյութատեխնիկական մատակարարում, անձնակազմի կառավարում, գնումներ, ենթակառուցվածքների ստեղծում և պահպանում, ինչպես նաև վերահսկություն և վարչարարություն, ընդ որում՝ միասնական ստանդարտ

համակարգի կիրառման ոլորտի ընդլայնումը կարող է կատարվել աստիճանաբար՝ համապատասխան հնարավորությունների զարգացմանը զուգահեռ։ Հաշվի առնելով հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կողմնորոշումը՝ բացառված չէ, որ ապագայում հնարավոր կիմնի ներդնել միասնական համակարգչային ծրագիր, որն արդեն այսօր հաջողությամբ կիրառվում է մասնավոր հատվածում<sup>124</sup>։ Համեմատաբար փոքր պաշտպանական ուժերով և սահմանափակ ֆինանսական, մարդկային և հյութական ուժությունով երկրները կարող են գտնել իրենց սեփական լուծումները, օրինակ՝ ոչ բարդ տվյալների փոխանցման համար օգտագործել համացանցը կամ հեռախոսակապը։

Գյուղայուն ունեցող տեղեկատվական համակարգերը պետք է շահագործվեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կարող են սպասարկել ընթացիկ կարիքները։ Դրան զուգահեռ պետք է իրականացվի «միասնական» համակարգին աստիճանական անցում։

Նպատակահարմար է դիտարկել որոշակի (հնարավոր է՝ բավականին երկար) ժամանակահատվածում գյուղայուն ունեցող և հեռանկարային համակարգերի զուգահեռ օգտագործման հնարավորությունը՝ միաժամանակ ընդմիջելով ֆինանսական կառավարման հիմնական գործընթացները։ Դրան հասնելը դժվար է, բայց անհրաժեշտ է։

Նոր համակարգի ներդրմանը զուգահեռ անհրաժեշտ է արդիականացնել և ժամանակակից պահանջներին հարմարեցնել ֆինանսական հաշվառման համակարգի բոլոր ընթացակարգերը և կանոնները։ Այստեղ կարող է օգտակար լինել արտերկրի գինվորական փորձագետների փորձը։

## Բյուջեի կատարում

Բյուջեի կատարման հիմնական խնդիրներից մեկն այն է, որ համապատասխան ֆինանսական տարուց մեկ կամ մի քանի տարի առաջ որոշված բյուջեի ցուցանիշները վերջնական չեն և կարող են պահանջներման և համապատասխան կառույցների (օրինակ՝ ֆինանսների նախարարության, խորհրդարանի, վերահսկիչ ծառայության և այլն) հետ համաձայնեցման բավականին երկար և բարդ գործընթացում ճշգրտումների ենթարկվել։ Այդ խնդրի լուծման համար նպատակահարմար կիմներ դիտարկել խորհրդարանի կողմից բյուջեի քննարկման և հաստատման վերջնական փուլում կամ համապատասխան ֆինանսական տարվա հենց սկզբին, եթե գործողության մեջ է դրվում նոր բյուջեն, բյուջետային ցուցանիշներում փոփոխությունների կատարման հնարավորության հարցը։

Մեկ այլ տարբերակ ենթարկում է փաստացի ֆինանսական իրավիճակի վերլուծություն և խնդիրների կարգավորում, որոնք բույլ կտան բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ կիրառել ճկուն մոտեցումներ։ Օրինակ՝ հնարավոր է համապատասխան հատկացումներն ուղել բյուջեի մի

<sup>124</sup> «SAP R3»-ի, «IBM»-ի կամ համանման տիպի ծրագրեր։

հողվածից մյուսին, ընթացիկ ֆինանսական տարուց՝ հաջորդ տարվան, մի նախագծից/ծրագրից՝ մյուսին կամ մի նախարարությունից կամ գերատեսչությունից՝ մյուսին:

Նման ճկուն մոտեցումներ կարող են կիրառվել գործնականում բոլոր մակարդակների բյուջեների կատարման ժամանակ: Եթե կազմակերպության ստորաբաժանումը կարողացել է որևէ ապրանք գնելիս խնայել որոշակի գումար, ապա տվյալ ստորաբաժանումը պետք է հենարավորություն ունենա օգտագործելու այդ միջոցները մեկ այլ ապրանքի գնման կամ մեկ այլ նպատակի համար չխախտելով նախանշված սահմանաշափերը: Նման մոտեցումը բույլ կտա բարձրացնել պաշտոնատար անձանց պատասխանատվության մակարդակը՝ շահագրգորելով նրանց ավելի խելամիտ ձևով օգտագործել բյուջետային միջոցները, ինչպես նաև գիտակցել, որ խնայողությունը ձեռնոտու է ոչ միայն ամբողջ կազմակերպությանը, այլև նրա առանձին ներկայացուցիչներին: Դրա անհրաժեշտ նախապայմանը դեկավարության և նրան ենթակա ստորաբաժանումների միջև բավականին բարձր վստահությունն է. այս կամ այն ֆինանսական գործարքը չպետք է բացասարար անդրադառնա վստահության այդ մակարդակի վրա: Առանձին ստորաբաժանումների մակարդակում բյուջեի կատարման ընթացքում ճկունության դրսնորումը պետք է ենթադրի ռեսուրսների խնայողություն և արդեն իսկ առաջարկված և սեղմ նկարագրված միջոցառումների իրականացում: Որոշ երկրներ բյուջեի կատարման հարցում նման ճկուն մոտեցումներ կիրառելիս կարողացել են հասնել զգայի հաջողությունների:

Անցումային փուլում գտնվող որոշ երկրներում ֆինանսական տեղեկությունների փոխանցումը ամենաստորին մակարդակից մինչև պաշտպանության նախարարության համապատասխան վարչություն կարող է տևել 4-ից մինչև 6 ամիս: Սա նշանակում է, որ բյուջեի կատարման ֆինանսական տվյալները (այն կարենրազույն տեղեկությունները, որոնք պահանջվում են օպերատիվ ճկուն լրացների համար) նման երկար ժամանակահատվածում կորցնում են իրենց արդիականությունը և, այսպիսով, փաստորեն դառնում են անօգուտ:

Բյուջետային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման օրինակներից կարելի է նշել այսպես կոչված «դեկտեմբերյան տենդը»: Անցյալում բյուջետային ռեսուրսները հատկացվում էին որոշակի ֆինանսական տարվա կամ ժամանակահատվածի կամ էլ որոշակի նախագծի համար: Անցյալում (ինչպես և այսօր) պաշտոնատար անձանց համար դա շատ հարմար սիստեմ էր, եթե նրանք կարող էին գեկուցել որոշակի բյուջետային ժամանակահատվածի համար նախատեսված ռեսուրսների լրիվ օգտագործման մասին և այսպիսով համոզել միջոցներ հատկացնող (բյուջեն տօնորինող) կազմակերպությանը նրանում, որ ֆինանսավորման այդ մակարդակը անհրաժեշտ կինի հաջորդ բյուջետային ժամանակահատվածի համար: Ֆինանսական տարվա ավարտին (որը երկրների մեծ մասում դեկտեմբերին է) պաշտպանության համակարգի կազմակերպություններում սկսվում է «դեկտեմբերյան տենդը», եթե

մնացած ֆինանսական միջոցները արագ ծախսվում են բոլորովին անտեղի նպատակներով, որպեսզի ամբողջովին օգտագործվեն նախատեսված ռեսուրսները, և հաջորդ բյուջետային տարում խուսափեն ֆինանսավորման կրճատումից:

Ուստի ընթացիկ ֆինանսական տարվա ֆինանսավորումը հաջորդ տարվան փոխանցելը պայմաններ է ստեղծում անօգուտ ծախսերից խուսափելու համար:

## Վերահսկողություն և առողիք

### Ֆինանսական վերահսկողություն

Վերահսկողությունն ու առողիքը (հաշվետվությունների ստուգում) բյուջետային ռեսուրսների նկատմամբ ժողովրդավարական, արդյունավետ և պատասխանատու վերաբերմունքի տարրերն են և այդ առումով պետք է դիտարկվեն որպես ֆինանսական կառավարման համակարգի առանցքային բաղադրիչներ: Ֆինանսական վերահսկողության և առողիքի փոխկախվածությունն այնքան մեծ է, որ երբեմն հնարավոր չէ մի գործընթացը մյուսից տարանջատել: Ֆինանսների վերահսկողությունը պետության մեջ վերահսկողության ընդհանուր համակարգի անբաժանելի մասն է (տե՛ս Գծապատկեր 2-ը և համապատասխան մեկնարանությունները):

Պաշտպանության համակարգի կառավարման համատեքստում «առողիք» եզրույթը նշանակում է ֆինանսական ցուցանիշների արժանահավատության վերահսկողություն, հաշվապահական գրանցումներում սխալների վերացում, տնտեսության ստվերայնության և կոռուպցիայի դեմ պայքար, բյուջետային միջոցների ոչ խելամիտ օգտագործման բացառում և ֆինանսների ոլորտում սահմանված կանոնների, ընթացակարգերի և պարտավորությունների խիստ պահպանում: Այս ոլորտում վերահսկողությունը կոչված է երաշխավորելու, որ հարկադարձների փողերը ծախսվեն արդյունավետորեն և խնայողաբար՝ ընթացիկ վերահսկողության մեխանիզմների կիրառմամբ:

Ֆինանսական վերահսկողության իրականացման անհրաժեշտ պայմանները հետևյալն են.

- Հաշվետու ժամանակահատվածը (ֆինանսական տարի),
- Թափանցիկություն, ճշգրիտ հաշվապահական գրանցումներ,
- Կոնկրետացում և բացառիկություն, այսինքն՝ բյուջեում հատկացված յուրաքանչյուր գումար կարող է նույնականացվել համապատասխան հոդվածի անվանմամբ/համարով կամ համապատասխան ծրագրի խնդիրների նկարագրությամբ,
- Բոլոր նախատեսված ծախսերի և եկամուտների ամբողջական ցանկի առկայություն,
- Սիցնաժմակետ և երկարաժմակետ ծրագրմանը վերաբերող բյուջետային հոդվածների, նախատեսված ծախսերի և եկամուտների տարրերակում,

- Ֆինանսական տվյալների կարևորություն, ճշգրտություն և արժանահավատություն:

Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել ներքին և արտաքին վերահսկողության և առողջական մարմիններ: Ստորև բերվում են ֆինանսական վերահսկողության և առողջական գործընթացների կառավարման գործնականում կատարյալ սխեմաներ<sup>125</sup>:

Խորհրդարանական վերահսկողության պարբերաշրջանն սկսվում է բյուջեի կազման գործընթացից և ավարտվում կառավարության վերստուգիչ ծառայության կամ խորհրդարանի կողմից վերահսկվող համանձան այլ հաստատության կազմած բյուջեի կատարողականի ստուգման մասին վերջնական հաշվետվության ներկայացմամբ: Ստուգման արդյունքները քննարկվում են բյուջետային միջոցների օգտագործման վերահսկողության հարցերի խորհրդարանական հանձնաժողովի նիստում՝ պաշտպանության փոխնախարարի կամ ֆինանսների փոխնախարարի, բյուջետային վերահսկողության մարմնի ղեկավարի կամ զինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայությամբ: Անհրաժեշտության դեպքում խորհրդարանական հանձնաժողովը կարող է լսել բյուջետային միջոցների օգտագործման հարցերով մեկ այլ պատասխանատուի հաշվետվությունը: Եթե խորհրդարանական հանձնաժողովը բյուջեի կատարումը գնահատում է «անբավարար», ապա խորհրդարանի պատգամավորները, որպես կանոն, պահանջում են համապատասխան քայլեր ձեռնարկել իրավիճակի շտկման ուղղությամբ: Համապատասխան միջոցառումների իրագործման վերահսկողությունը կարող է իրականացվել կառավարության վերահսկողական ծառայության կողմից: Կարևոր է, որ խորհրդարանի անդամները և նրանց օգնականները տեղեկացված լինեն բյուջեի կազման կանոնների և ընթացակրագերի մասին և արդյունավետորեն իրականացնեն իրենց վերահսկողական գործառույթները: Երբեմն օրենսդրման անհրաժեշտ և համարում բավարար ժամանակ ծախսել այդ կանոնների և ընթացակրագերի ուսումնասիրման վրա, սակայն նրանք պարտավոր են կուտակել համապատասխան փորձ և ապահովել պետական միջոցների ինսայողական օգտագործում, քանի որ հենց դրամական միջոցներն են համարվում ամենակարևոր ուսուրացությունը: Նշված կարևոր գործառույթի իրականացման հարցում խորհրդարանին օժանդակելու համար կարելի է ներգրավել փորձված շտաբային սպաների (փոխզնդապետի, զնդապետի կոչմանը կամ համապատասխան որակավորում և փորձ ունեցող քաղաքացիական մասնագետների), ովքեր կարող են երկուերեք տարվա ընթացքում աշխատել խորհրդարանական հանձնաժողովների հետ, ինչպես նաև ապահովել խորհրդարանի և համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների միջև կապը: Ընդ որում, կարևոր է, որ այդ նախարարություններն ու գերատեսչությունները նշված հարցերով ակտիվորեն համագործակցեն կառավարության վերահսկողական ծառայության հետ:

<sup>125</sup> Այս սխեմաները հիմնվում են պաշտպանության համակարգի ֆինանսական վերահսկողության և առողջական ոլորտներում գերմանիայի փորձի վրա:

Հարկ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ գործընթացների վրա կարող են ազդել քաղաքական որոշումները և առանձին անձանց մտադրությունները: Մասնավորապես, որոշ շահագրգիռ կողմեր կամ խորհրդարանի ազդեցիկ անդամներ կարող են սառեցնել ստուգման գործնարար կամ շրջել այն իրենց նախընտրած ուղղությամբ: Առանձին դեպքերում ստուգման գործնարար կարող են խոչընդոտել որոշակի խմբեր (օր.՝ միջազգային, ներքին, տարածաշրջանային, լորրիստական, պաշտպանական կամ արդյունաբերական) ներկայացնող անձինք, կամ էլ այստեղ անվտանգության շահերը կարող են բախվել որևէ անձի մասնավոր շահերին: Կարևոր է հասկանալ, որ սա աշխատողներին չի ազատում որոշումներ կայացնողներին նման դեպքերի մասին տեղեկացնելու, ինչպես նաև նման գործունեության հնարավոր հետևանքների մասին նրանց նախազգուշացնելու պարտականությունից:

**Կառավարության վերահսկիչ ծառայությունն օգնում է խորհրդարանին՝ վերահսկելու բյուջետային ծախսերը և եկամուտները:**

Սահմանադրության համաձայն՝ կառավարության վերահսկիչ ծառայությունը գործում է բյուջետային հարցերով խորհրդարանական հանձնաժողովի, իսկ վերջինիս միջոցով՝ հանրային միջոցների օգտագործման վերահսկողության հարցերով հանձնաժողովի ենթակայության տակ: Այսպիսիով՝ կառավարության վերահսկիչ ծառայությունը գործում է միաժամանակ ինչպես խորհրդարանի, այնպես էլ իր սեփական անունից: Լինելով չեզոք՝ վերահսկիչ ծառայությունը հանդիս չի գալիս որպես շահագրգիռ միավոր և ունակ է բյուջետային ծախսերի, եկամուտների և կուտակումների վերահսկողության իր գործառույթներն իրականացնելու միմիայն բյուջեի բափանցիկության սկզբունքի հիման վրա: Վերահսկիչ ծառայության աշխատակիցներն ունեն դատավորների նման անկախ կարգավիճակ: Նրանք առաջարկում են նոր լուծումներ և միջոցներ, որոնք ուղղված են ռեսուրսների կառավարման գործնարար կատարելագործմանը: Մյուս կողմից՝ ռեսուրսների անտեղի վատնում թույլ տված անձանց կարող են պարտադրել փոխհատուցել պաշտոնական պարտականությունների կովիտ խախտման արդյունքում առաջացած վնասները: Այսպիսիով՝ կառավարության վերահսկիչ ծառայությունները բյուջետային և ֆինանսական բոլոր հարցերի վերահսկողության արդյունավետ գործիք են:

## **Ներքին և արտաքին առողջապահության մարմիններ**

Պաշտպանության բյուջեի վերահսկողության և կառավարման հետ կապված բոլոր սկզբունքներն ու ընթացակարգերը բավարար չափով օգտակար չեն կարող լինել այնքան ժամանակ, քանի դեռ չի վերահսկվում բյուջետավորման շրթայի վերջնական կետը՝ դրամական միջոցների անմիջական օգտագործումը: Այս վերահսկողությունն իրականացվում է բյուջետային վարչության, բազմազան ֆինանսական հաստատությունների և բյուջեի և վերահսկողության հարցերով ստորաբաժանումների, ինչպես նաև ներքին առողջապահության և ներքին առողջապահության մարմիններ:

ստուգումների մարմինների կողմից՝ այս կամ այն նախարարության ու գերատեսչության կազմակերպական կառուցվածքի բոլոր մակարդակներում:

Սա ենթադրում է ստորադաս մակարդակի (օր. գումարտակի) դրամարկային և ֆինանսական գործառնությունների բաժինների հաշվապահական գրանցումների ճշգրտության ստուգում, ինչպես նաև ավելի բարձր մակարդակում (դիվիզիաներ, խոշոր գերատեսչություններ, ուսումնական հաստատություններ, զնումների և նորոգման աշխատանքներում ներգրավված կազմակերպություններ) պետական միջոցների խնայողական օգտագործման վերահսկողություն: Այս հարցերում առողջապահությունները նույնպես ցանկալի և անհրաժեշտ են:

Պետական բյուջեի համար գիլավոր պատասխանատուն՝ ֆինանսների նախարարությունը, իրականացնում է մշտական վերահսկողություն և ստուգում՝ օժանդակելով գործադիր և օրենսդիր մարմինների բյուջետային գործունեությանը: Այդ առումով այն իրականացնում է հետևյալ պարտականությունները և նպատակները.

- Անհրաժեշտության դեպքում որոշում կայացնել բյուջեի կատարման մասնակի կամ ամբողջական դադարեցման, ֆինանսական տարվա ընթացքում ֆինանսավորման կրճատման կամ ավելացման մասին,
- Որոշում կայացնել պլանավիրված ծախսերի մակարդակը (օր. 5 մլն եվրոյով) բարձրացնելու մասին (ըստ կոնկրետ հոդվածների, ծրագրերի, նախագծերի) և այդ մասին տեղեկացնել խորհրդարանին,
- Հաստատել խոշոր շինարարական նախագծերի վերաբերյալ որոշումները,
- Հաստատել նախնական հայտերը՝ նախքան պետության կողմից միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի կամ ԵՄ-ի կամ օստարելկրյա պետությունների առջև նոր հանձնառություններ ստանձնելը,
- Շահագործություն նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ որոշումներ կայացնել բյուջեների կառուցվածքի և բյուջետային հաշիվների վրա մուտքագրվող որոշակի եկամուտների վերաբերյալ:

Եթե որևէ կազմակերպության կամ հաստատության կառուցվածքում նախատեսված են ֆինանսական վերահսկողի պաշտոնը կամ վերահսկման համապատասխան բաժինը, ապա նրանք անմիջականորեն ենթարկվում են դեկավարության այն ներկայացուցչին, ով պատասխանատու է տվյալ կազմակերպության ռեսուրսների կառավարման համար:

### **Արտաքին առողջապահության մարմիններ**

Առանձին դեպքերում, երբ, օրինակ, քննարկվում են տնտեսության ոլորտում որոշումների կայացման հարցերը, պաշտպանության ոլորտի կազմակերպությունների հետ աշխատանքներում ներգրավվում են արտաքին առողջապահության մարմինները:

դիտորներ և արտաքին առողջիւ հարցերով խորհրդատուներ: Միջազգային կազմակերպությունները, օր՝ ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ-ն, ԵՄ-ն և Համաշխարհային բանկը, ստուգում են առանձին երկրների կամ միջազգային հաստատությունների բյուջեները՝ նախքան երկրներին կամ կառույցներին որոշակի նպատակներով ֆինանսավորում տրամադրելը:

## **Վերահսկողության և առողջիւ նշանակությունը**

Ներքին և արտաքին անվտանգությունը և պաշտպանությունը ցանկացած պետության և նրա բնակչության համար առանցքային նշանակության հարցեր են: Ուստի պետությունը անվտանգության անհրաժեշտ մակարդակի երաշխավորման համար պետք է զգալի միջոցներ ծախսի: Անվտանգության և պաշտպանության ապահովման վրա ռեսուրսների օգտագործումը և դրա վերահսկումն ու առողջիւ պետք է ապահովեն հետևյալը:

- Պետության քաղաքական անվտանգության և պաշտպանության հայցակարգով նախատեսված նպատակների իրագործում,
- Երկրի անվտանգության և այլ ռորտների, օր. հասարակական կյանքի, կրթության, տնտեսության միջև հավասարակշռության ապահովում,
- Պետական բյուջեի վերահսկողություն ոչ միայն ծախսերի կատարման (միջոցների ներդրման) փուլում, այլ նաև (որն ավելի կարևոր է) արդյունքների ստացման փուլում՝ ծախսերի արդյունավետությունը պարզելու նպատակով,
- Բյուջեի առանձին հոդվածների ֆինանսավորման դադարեցում/վերականգնում կամ կրճատում/ավելացում,
- Հասարակության շահերի և գնումների արդյունավետության ապահովում՝ տնտեսական և արդյունավետ դեկավարման սկզբունքների պահպանմամբ,
- «Բյուջեի մասին» օրենքում և այլ օրենքներում ու նորմատիվային-իրավական ակտերում հստակ կանոնների և իրահանգների (այդ թվում՝ առողջիւ առումով) սահմանում,
- Պաշտպանության համակարգի բյուջեի կազմման և ռեսուրսների լնդիհանուր կառավարման գործընթացում պատասխանատվության շրջանակների հստակ սահմանում,
- Թափանցիկ, հավասարակշռված, իրատեսորեն կազմված բյուջեի ներկայացում համրությանը, խորհրդարանին, նախարարություններին, անվտանգության կառույցներին և միջազգային գործընկերներին,
- Վստահության որոշակի մակարդակի ապահովում և գործընկերների հետ համագործակցության բարեկարգում,
- Վերոնշյալ պարտականությունների և նախանշված նպատակների իրագործման համար ֆինանսական կառավարման մասնագետների ուսուցում, պատրաստում և շահադրդում:

Նշված նախապայմանների և որոշակի կառուցվածքային տարրերի (նույնիսկ ոչ բոլորի, այլ դրանց մի մասի) առկայությունը հնարավորություն է տալիս ստեղծելու ֆինանսական վերահսկողության և առողջի արդյունավետ համակարգ: Այդ գործընթացները հիմնվում են ֆինանսական կառավարչի և ղեկավարության գործունեության վրա:

### **Միջազգային նորմեր և ստանդարտներ. համագործակցություն ֆինանսական կառավարման բնագավառում**

Տարրեր երկրներ և կազմակերպություններ կիրառում են ֆինանսական կառավարման չափազանց տարրեր համակարգեր, ինչը, անշուշտ, բարդացնում է նորմերի և ստանդարտների միասնականացման գործընթացը: Նույնիսկ միևնույն երկրում նախարարություններն ու գերատեսչությունները հաճախ կիրառում են ֆինանսական կառավարման տարրեր ընթացակարգեր և գործիքներ՝ չօգնական հոգալ որոշակի համադրելի ստանդարտներ ներդնելու մասին: Շատ երկրներում պաշտպանության ոլորտի կազմակերպություններին արգելվում է փոփոխել կամ արդիականացնել ֆինանսական կառավարման համակարգը, եթե այն անհամապատասխանություն է առաջացնում պետական բյուջեի կազմման միասնական կանոններում և ընթացակարգերում:

Ի լրումն նոյնիսկ այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն, Եվրամիությունը, ԵԱՀԿ-ն և Ստոլկիոլում Խաղաղության խնդիրների հետազոտման միջազգային ինստիտուտը (ՄԻԽՀԱԻ), տարրեր կերպ են դիտարկում պաշտպանության և անվտանգության ոլորտում բյուջեի ծրագրման և կատարման գործընթացների բովանդակությանը, որը հանգեցնում է նշված կազմակերպությունների տվյալների մեկնաբանման զգալի տարրերություններին: Դա էլ, իր հերթին, մեծացնում է այն դիմուր, որ տարրեր միջազգային կազմակերպություններ կարող են օգտագործել անհամատեղելի ցուցանիշներ քաղաքական նակարդակում բյուրիմացությունների տեղիք տալով: Այստեղից էլ առաջ է գալիս ֆինանսական կառավարման ընդհանուր նորմերի և ստանդարտների ստեղծման/արդիականացման անհրաժեշտությունը:

### **ՆԱՏՕ-ի միասնական ստանդարտները**

ՆԱՏՕ-ն և մյուս միջազգային կազմակերպությունները ձգտում են ստեղծելու հաշվառման և ֆինանսների միասնական կանոններ և խրախուսում են մյուս երկրների կողմից այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին սատարումը: ՆԱՏՕ-ի անդամ շատ երկրներ, ինչպես նաև դրանում շրնդարկված երկրներ ակտիվորեն համագործակցում են ֆինանսական հարցերում: ՆԱՏՕ-ի շրջանակում ստորագրվել են համաձայնագրեր, պայմանագրեր, փոխմրցնման երկկողմ և բազմակողմ հուշագրեր (մեծ մասամբ հիմնվելով փոխազիջումների վրա), որոնք որոշակի գործունեության ոլորտներում նախատեսում են համագործակցություն և միասնական ֆինանսական ընթացակարգերի կիրառում, այդ թվում՝

- ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ուսումնավարժական տարածքների օգ-

- տագործում,
- Մասնակցություն արտերկրում անցկացվող ուսումնական ծրագրերին,
  - Նախահանգիստներում ռազմածովային ուժերի նավերի ընդունում և սպասարկում, արտակարգ իրավիճակներում օժանդակության տրամադրում և այլն<sup>126</sup>:

Նման դեպքերում մասնակից-պետությունները վճարում են միայն ծախսների մի մասը (մեծ մասամբ դրանք առանձին մասնակիցների կամ ստորաբաժանումների կարիքներն են արտացոլում):

Կարելի է բերել ֆինանսական հարցերում համագործակցության և մի քանի օրինակ: Մասնավորապես, Եվրոպական ավիացիոն խումբը (European Air Group) գրադրում է օդային համատեղ փոխադրումների հարցերով: Այն մշակել է հատուկ ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս այնպես փոփոխել տարբեր ինքնարդիոնների համար կիրառվող ցուցանիշները և հաշվարկները, որ յուրաքանչյուր մասնակից երկրի համար առավելագույնս պարզեցվի ծառայությունների արժեքի հաշվարկը՝ զերծ մնալով փոխառուցման հետ կապված բարդություններից: Օդային փոխադրումների ծառայությունների արժեքը հաշվարկվում է գործընկեր երկրներից յուրաքանչյուրի մասնակցության տեսակարար կշռին համամասն: Նշված արժեքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով միասնական ստանդարտների պահանջները, ինչը թույլ է տալիս պարզեցնել ծախսերի հաշվարկում:

Օդային փոխադրաբան օժանդակության շրջանակում երկրները վարում են մնացորդային արժեքների հաշվառում: Նշված մնացորդային մեծությունում երկրի ունեցած պարտքի մասնաբաժնը ենթակա է մարման ամեն երկու տարին մեկ անգամ: Սրանով իսկ վերանում է յուրաքանչյուր հոդվածի գծով ֆինանսավորման հայտի ներկայացման անհրաժեշտությունը:

## Միջազգային միասնական ստանդարտներ

Միջազգային այլ կազմակերպություններ և համապատասխան երկրներ և ծգություն են միասնականացնելու ֆինանսների կառավարման բնագավառի գործընթացները և կանոնները: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներն օժանդակում են այնպիսի միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (IASB) և Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (IPSASB): Այս կազմակերպությունների հիմնական խնդիրն է՝ մշակել ֆինանսական հաշվառման միջազ-

<sup>126</sup> Նման համաձայնագրերից են Գերմանիայի և Ռուսաստանի միջև կնքված փոխըմբռնման հուշագիրը, որը վերաբերում է ռազմական նավերի այցելություններին, գերմանա-ֆրանսա-լեհական եռակողմ փոխըմբռնման հուշագիրը ցամաքային գործերի ուսամսավարժական տարածքների օգտագործման վերաբերյալ, Եվրակորպուսի (Eurocorps) ստեղծման մասին բազմակողմ փոխըմբռնման հուշագիրը, ինչպես նաև Բալթյան երկրների կորպած բազմակողմ փոխըմբռնման հուշագիրը, որը վերաբերում է որոնողագրկարարական աշխատանքներին:

գային նորմեր, կանոններ և ընթացակարգեր, այդ թվում՝ պետական կազմակերպությունների և ձեռնարկությունների համար, նպատակ հետապնդելով ստեղծելու ֆինանսական, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բափանցիկ համակարգ, որը հիմնվում է համադրելի ցուցանիշների վրա: Նշված կազմակերպությունների կողմից արդեն մշակված են ֆինանսական գործունեության երեք ուղղությունների ստանդարտներն ու հրահանգները.

- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (IAS),
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (IFRS),
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (IPSAS):

Այդ ստանդարտներն արդեն խև ներդրվել են Արևմտյան Եվրոպայի և Եվրամիության մի շարք երկրներում (այդ թվում՝ պաշտպանության ոլորտի համապատասխան կազմակերպություններում):

Բացի IASB և IPSASB միջազգային կոմիտեներից՝ ֆինանսական կառավարման բնագավառում միջազգային ստանդարտների մշակմամբ և ներդրմամբ զբաղվում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Առողիտի և հավատիացման միջազգային ստանդարտների խորհուրդը (IAASB) և Հաշվապահների միջազգային ֆեդերացիան (IFAC)<sup>127</sup>: Նշված ստանդարտները մշակվում են մասնավոր հատվածում ֆինանսական կառավարման գործնական փորձի հիման վրա և բույլ են տալիս կատարել տարբեր երկրների համանման ցուցանիշների համադրում: Մասնավորապես, այդ ստանդարտները հնարավորություն են տալիս ստանալ հետևյալի համապարփակ պատկերը.

- Հաշվապահական հաշվեկշիռներ,
- Ուսուրաներ, գուտ կապիտալ, անշարժ գույք և ֆինանսական հաշվետվություններ,
- Բոլոր ակտիվների և պարտավորությունների դրամական արժեք,
- Ընդհանուր առմամբ ֆինանսական դրություն և համապատասխան միտումներ:

Համեմատաբար նոր խնդիր է հաշվապահական հաշվառման և ֆինանսների կառավարման բնագավառում «կրկնակի գրանցման» կիրառումը: Կրկնակի գրանցման համակարգը առաջացել և զարգացել է ազատ միջազգային շուկայական պայմաններում: Հեռանկարում նշված համակարգը կարող է նպաստել վերոնշյալ բնագավառներում ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների զարգացմանը, սակայն դրա համար անհրաժեշտ կլինեն հաշվապահական հաշվառման և ֆինանսական գործի գաղափարախոսության մեջ զգայի փոփոխություններ:

<sup>127</sup> Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի պաշտոնական կայքում ([www.ifac.org](http://www.ifac.org)) ներկայացվում է տեղեկատվություն սույն բաժնում նշվող բոլոր կոմիտեների և ստանդարտների մասին:

## Ֆինանսական կառավարման բնագավառում բարեփոխումների առնչությամբ առաջարկություններ

Պաշտպանության բնագավառում ֆինանսական համակարգի բարեփոխումները հնարավոր են միայն տնտեսության, հասարակության կյանքում, աշխատումի, ֆինանսական շուկայում, համրային կառավարման ոլորտում զուգահեռ համանման բարեփոխումների անցկացման, ինչպես նաև պետության անվտանգության վրա ազդող զգալի փոփոխությունների բազմակողմանի վերլուծության պայմաններում:

Կառավարությունը պետք է մշակի ֆինանսական կառավարման ընդհանուր հայեցակարգը, որը լիարժեք կարտացողի անվտանգության և պաշտպանության ոլորտում իրավիճակը՝ հաշվի առնելով հավանական սպառնալիքները: Հարկ է նշել, որ նման հեռանկարային հայեցակարգեր ունեն միայն մի քանի պետությունների կառավարությունները: Ուստի այս բնագավառում աշխատանքները մեծամասամբ չեն կրում համակարգված բնույթը և ընթանում են տարեկ ուրրություններով: Չնայած դրամ՝ յուրաքանչյուր պաշտոնատար անձ և աշխատակից պարտավոր է վերլուծել իր պարտականությունների շրջանակները՝ դրանք բարեփոխելու առումով: Ֆինանսների կառավարման գործընթացների վերլուծությունը, որն այստեղ սեղմ կերպով ներկայացվեց, կօգնի բացահայտելու էական նշանակության խնդիրները, բարեփոխումները պահանջող բույլ կողմերը և ոլորտները: Թերությունների վերացման համար անհրաժեշտ է ստեղծել բարձակարգ մասնագետներից կազմված խումբ՝ իրավիճակի վերլուծությանն ու խնդիրների շտկմանն ուղղված մասնագիտական առաջարկությունների մշակման նախատակով: Խնդրում կարող են ընդգրկվել ինչպես զինվորականներ, այնպես էլ քաղաքացիական մասնագիտություններ ունեցող անձինք, արտասահմանյան փորձագետներ և նույնիսկ գործարարության ոլորտի խորհրդատուններ:

Անհրաժեշտ է կատարել առկա խնդիրների, ընդունված ընթացակարգերի, արտոնությունների և աշխատանքային գործընթացների քննադատական վերլուծություն և կառուցդական գնահատում:

Կարևոր է, որ նշված ջանքերին աջակցեն պետության քաղաքական և զինվորական դեկավարությունը և, ընդհանուր առմամբ, պաշտպանության ոլորտի ներկայացուցիչները: Այդ աջակցությունը հնարավոր կլինի փորձագետների գործունեության բացարձակ բափանցիկության և տեղեկությունների ազատ փոխանակաման ապահովման պարագայում: Հեղինակը, հենքելով սեփական փորձի վրա, կարծում է, որ այդ աշխատանքը պետք է սկսվի նրանից, ինչ ինքն անվանում է «համոզելու քարոզարշավ»: Սա նշանակում է, որ բարեփոխումների և փոփոխությունների հաջողության համար անհրաժեշտ է մարդկանց համոզել, որ դրանք օգուտ կրեթեն կազմակերպությանը և նրա յուրաքանչյուր անդամին, օրինակ՝ Եկանուտների կայունության, աշխատանքային առաջխաղացման կամ գործազրկության ռիսկի վերացման առումով: Ընդ որում, առաջնորդող սկզբունքը պետք է լինի «Մի՛ քննադատիր անցյալը,

նայի՞ր առաջ և աշխատի՞ր հանուն ավելի լավ ապագայի»:

Քարեփոխումների ընթացքում անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել մարդկանց ստեղծագործական ներուժը՝ հաշվի առնելով, որ հենց «ստեղծական» մասնագետներն են հաճախ առաջարկում հրաշալի գաղափարներ, որոնք կարող են շափազանց օգտակար լինել քարեփոխումների իրականացման ընթացքում: Աշխատողների շահաղբանման նպատակով կարելի է կիրառել ստեղծագործական ներուժի խթանման ծրագիրը<sup>128</sup>, ինչպես նաև նյութական կամ այլ շահաղբանման միջոցներ:

Ֆինանսական կառավարման նոր մեխանիզմների ներդրման նպատակով անհրաժեշտ է հատկացնել համապատասխան միջոցներ: Որոշ կազմակերպությունների սխալն այն է, որ պարտադրում են իրենց հաստիքային աշխատակիցներին լրիվ աշխատանքային օրվա ընթացքում զբաղվել քարեփոխումների հարցերով՝ միևնույն ժամանակ շարունակելով կատարել իրենց հիմնական պաշտոնեական պարտականությունները: Ավելին՝ պահանջ է ներկայացվում քարեփոխումներն իրականացնել ցանկացած պարագայում, նոյնիսկ անհրաժեշտ ենթակառուցվածքների և նյութական ռեսուրսների բացակայության դեպքում՝ սույն հանուն որոշակի քաղաքական հաջողությունների:

Սի շարք երկրներ արդեն բացահայտել են այն խնդիրները և քոյլ կողմերը, որոնք անհրաժեշտ է վերացնել պաշտպանության համակարգում ֆինանսական կառավարման քարեփոխումների իրականացման ընթացքում: Ինչևէ, համապատասխան քարեփոխումների իրականացման համար պահանջվող ռեսուրսները շափազանց սահմանափակ են կամ բոլորվին բացակայում են: Այնուամենայնիվ, այս փաստը չի կարող արդարացնել պետության համար անհրաժեշտ քարեփոխումների իրականացման հարցում երկրի զինվորական և քաղաքական դեկավարության անգործությունը:

<sup>128</sup> Ստեղծագործական ներուժի խթանման նման ծրագրեր իրականացվում են հանրային հատվածի շատ քիչ հաստատություններում, օր. Գերմանիայի պաշտպանության նախարարությունում, Քյոլնի քաղաքապետարանում և բազմաթիվ մասնավոր ընկերություններում (օր.՝ «Siemens», «Mercedes», «BMW», «Volkswagen» և «RWE»):

## Գլուխ 5

# Մարդումի մենեջմենթ

## Չեր Թրեդենիք

### Ներածություն

*Մարդումի* (մարդկային ռեսուրսը) պետության ռազմական ներումի ամենական պաշարն է: Բյուջեն ու սպառագինության համակարգերը պետական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ արդյունավետ մարտունակության կարելի է վերածել միմիայն բարձրորակ և նպատակասլաց մարդկանց միջոցով: Ուստի մարդումի մենեջմենթը (մարդկային ռեսուրսների կառավարումը) և ավելին՝ լավ մենեջմենթը, այսինքն՝ ճիշտ մարդկանց ճիշտ ժամանակին ճիշտ աշխատանքի հանձնարարումը և նրանց շահադրդելը քրտնաջան ու խելամիտ աշխատանքի, ռազմական հաջողության հիմնական գրավականն է: Մինչդեռ այն բոլոր իրադրությունների նման, որոնք ներառում են մարդկային շահադրդման գործոնը (և հատկապես, եթե դա վերաբերում է ռազմական կյանքի յուրահատուկ հանգամանքներին), մարդումի մենեջմենթը ևս զօալի բարդություններ պարունակող մարտահրավեր է<sup>129</sup>:

Այս գլխում քննության են առվում այդ բարդությունները պայմանավորող խնդիրները: Գլուխն սկսվում է նյութի ամփոփ ուրվագծմամբ, որում առաջ է քաշվում այն դրույթը, որի համաձայն՝ ռազմական մարդումի մենեջմենթի ցան-

<sup>129</sup> Ռազմական մարդումի մենեջմենթի արդի խնդիրների բազմակողմանի քննարկման համար տես Curtis Gilroy and Cindy Williams, eds., *Service to Country: Personnel Policy and the Transformation of Western Militaries* (Cambridge, Mass.: MIT Press, 2006), and Cindy Williams, ed., *Filling the Ranks: Transforming the U.S. Military Personnel System* (Cambridge, Mass.: MIT Press, 2004): Ռազմական մարդումի մենեջմենթի տնտեսապեսության վերջին հետազոտությունների ավելի տեխնիկական ամփոփ ուրվագիծը տրված է Beth J. Asch, James R. Hosek, and John T. Warner, “New Economics of Manpower in the Post-Cold War Era,” ինչպես նաև *Handbook of Defense Economics*, Volume 2, ed. Todd Sandler and Keith Hartley (Amsterdam: Elsevier, 2007), 1076–1138 ձեռնարկներում: Ավելի վաղ ակնարկների համար տես John T. Warner and Beth J. Asch, “The Economics of Military Manpower” հետևյալ ձեռնարկում *Handbook of Defense Economics*, Volume 1, eds. Keith Hartley and Todd Sandler (Amsterdam: Elsevier, 1996), 347–398:

կացած գործընթացի գլխավոր նպատակն ուժային կառույցի ապահովումն է, որն առավել արդյունավետ կերպով կարող է լուծել պետական անվտանգության խնդիրները։ Ասվածից բխում է, որ նարդումի մենեջմենթի հիմքում պետք է դրվի շուկայատիպ մեխանիզմ, որը կգործի այնպես, որ ունակ լինի ապահովելու ռազմական մարդումի ցանցահանգ առաջարկը։ Մարդումի պահանջարկի տեսանկյունից՝ խնդիրը պետության առջև դրված հարցերը լուծելու համար պահանջվող թվաքանակների և հնտուրյունների տիրույթի խնացությունն է։ Դրանք պետք է որոշվեն զինված ուժերի զարգացման պլանավորման նման մի գործընթացի սահմաններում, որը մարդումի պահանջարկը դիտարկում է ռազմատեխնիկայի, հայեցակարգի ու ռազմական կազմակերպության վերաբերյալ որոշումների ընդունմանը գուգահեռ։ Սակայն, ի վերջո, ռազմական մարդումի պահանջարկը պայմանավորված է չորս վճռորոշ հանգամանքներով՝ միջազգային անվտանգության միջավայրի կացությամբ, այդ միջավայրում զինումի արդյունավետ գործելու ակնկալվող հնարավորություններով, մարտական տեխնոլոգիաների մակարդակով և, ինչպես միշտ, ֆինանսավորման մասշելիության հետ կապված խնդիրներով։ Այս գործոնները և դրանց ազդեցությունը մարդումի կարիքների վրա քննարկվում են սույն գլխի երրորդ և չորրորդ մասերում։


Մարդումի առաջարկի տեսանկյունից՝ խնդիրը ճիշտ թվաքանակով անհատների կամավոր հավաքագրման, մարտական պատրաստության, աստիճանաչնորհման, տեղաբաշխման և, վերջապես, զինվորական ծառայությունից արձակման ողջ կենսաշրջանի մենեջմենթն է, որը պիտի իրագործվի այնպես, որ մշտապես գոյություն ունենա առկա թվաքանակի ու հնտուրյունների սպեկտրի և ուժային կառույցի իրական պահանջարկի դինամիկ համաժամանակեցում (սինխրոնիզացիա)։ Այդ հարցը մանրամասնորեն քննարկվում է սույն գլխի հինգերորդ մասում։ Մասնավորապես, անդրադարձ է արվում այնպիսի խնդիրների, որոնք ծագում են մարդումի կառավարիչների առջև, երբ վերջիններս փորձում են կառավարել ընդհանուր առմանք բավականին կոշտ գործընթաց՝ ի դեմք ժողովրդագրական ընդհանուր պատկերի և աշխատաշուկայի փոփոխությունների։ Վեցերորդ մասում դիտարկվում են այս խնդիրների լուծման գործում կիրառվող որոշ մոտեցումներ, որոնք հիմնված են մարդումի մատակարարման գործընթացների փոփոխության վրա և միտված են դրանք ռազմական կարիքների համար ավելի ճկուն և, հետևաբար, ավելի արագ արձագանքող դարձնելուն։ Եզրափակիչ մասում շեշտվում է մարդումի մենեջմենթի բարեփոխման անհրաժեշտությունը, և ներկայացվում են այն գործոնները, որոնք պայմանավորելու են հավանական այդ փոփոխության մասշտարները և արագությունը։

## Մարդումի մենեջմենթ. ընդհանուր ակնարկ

Տեսականորեն, մարդումի մենեջմենթի նպատակը բավականին պարզ է՝ պահանջվող ուժային կառույցի գործունեությունն ապահովելու նպատակով

ցանկացած պահի պատրաստի վիճակում ունենալ զինված ուժերում պահանջված ունակությունների, փորձի, տարիքի և կոչումների համապատասխան բաշխումով և անհրաժեշտ թվաքանակով մարդ: Այստեղ ծագող բարդությունները բխում են այն հանգամանքից, որ զինված ուժերի պահանջվող կառուցվածքները մշտապես զարգանում և ձևափոխվում են՝ ի պատասխան անվտանգության միջավայրի, մարտական տեխնոլոգիաների, պետական հավակնությունների և ֆինանսական միջոցների սահմանափակումների փոփոխությունների: Մյուս կողմից մարդումի մենեջմենթի համակարգերը սովորաբար երկար ժամանակ են պահանջում ուժային կառույցի կարիքները բավարարելու նպատակով մարդումի պրոֆիլի վերածնման անհատների հավաքագրման, մարտական պատրաստության, տեղաբաշխման, աստիճանաշնորհման և զինվորական ծառայությունից արձակման համար: Ավելին՝ այս փուլերից յուրաքանչյուրում պարտադրված ենք գործ ունենալ մարդկային շահադրդման հետ կապված բարդ և խճճված հարցերի հետ:

Գծապատկեր 1-ում բերված է մարդումի մենեջմենքի զիսավոր խնդրի պատկերավոր սխեման: Ենթադրվում է, որ պետությունը միջազգային անվտանգության միջավայրի ներկայացրած սպառնալիքներին և հնարավորություններին արձագանքում է ազգային անվտանգության որոշակի ռազմավարության ձևակերպմանը:



**Գ-ծապատկեր 1. Ռազմական մարդուժի մենեջմենթի սխեման**

Որպես վերջինիս քաղաքի՝ ձևակերպվում է ռազմական այնպիսի ստրատեգիա, որն արտացոլում է պետության ունեցած պատկերացումներն ազգային անվտանգության ուղղված սպառնալիքների և հնարավորությունների հետ հաջողությամբ գործ ունենալու ունակ գինուժի տեղի և դերի մասին։ Ռազմական այդ ստրատեգիայի արդյունավետ իրականացման համար պահանջվող ուժային կառույցն իր հերթին պայմանավորում է ռազմական մարդուժի պահանջարկը թե՛ բվարանակի, թե՛ պահանջվող առանձին հմտությունների առումով։ Սակայն ուժային կառույցները և մարդկային ռեսուրսները փող արժեն, ուստի մարդուժի հարցում իրատեսական պահանջմունքներն ի վերջո կձևավորվեն պայմանավորված որքան ռազմավարական կարիքներով, նույնքան էլ, եթե ոչ ավելի, բյուջետային նկատառումներով։ Ի հավելումն ֆինանսական սահմանափակումների մարդուժի պահանջները կաշկանդված են նաև կառավարությունների և խորհրդարանների կողմից գինված ուժերի ընդհանուր բվարանակի վրա դրվող օրենսդրական և վարչական սահմանափակումներով, ինչը միշտ չէ, որ համապատասխանում է ազգային անվտանգության իրական կարիքներին։ Արդյունքում՝ ի վերջո ստեղծվելիք պահանջվող ուժային կառույցը լինելու և մշտական փոխսպառում մի կողմից ցանկալիի, մյուս կողմից՝ ֆինանսավես մատչելիի միջև։ Գործնականում այն արդյունք է մի կողմից՝ պաշտպանության նախարարության քաղաքական և բյուրոկրատական տարրերի, մյուս կողմից՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունների միևնույն պաշտոնյաների միջև շարունակական մրցակցության։

Քաղաքական գործնքացների արդյունքում պարտադրված սահմանափակումների շրջանակներում գործելիս պաշտպանության ոլորտի պլանավորողները և կառավարիչները ստիպված են ուժային կառույցին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունել և ընտրություն կատարել հատկացված ռեսուրսների տարարաշխումը տարրեր մակարդակներով իրականացնելիս։ Խոսքը մարդուժի և ռազմատեխնիկայի, զինվորական ստորաբաժանումների տարրեր տեսակների, յուրաքանչյուր ստորաբաժանման կազմում գործունեության տեսակների, և, ի վերջո, գործունեության յուրաքանչյուր տեսակում ընդգրկված անձնակազմների և ռազմատեխնիկայի տարարանույր տիպերի միջև ռեսուրսների տարարաշխումն իրականացնելու մասին է։ Կրկին նշենք, սակայն, որ ուժային կառույցներն անփոփոխ չեն։ Դրանք ռազմատեխնիկայի, հայեցակարգի և ռազմական կառույցի կազմակերպական ձևի առումներով շարունակական զարգացում են ապրում, այդ իսկ պատճառով մարդուժի պահանջարկը ներառում է դիմամիկ տարրեր։ Այսինքն՝ բվարանակների և մարդուժի պահանջվող տարատեսակների առումով գոյություն ունի ռազմական մարդուժի պահանջների զարգացման և փոփոխության ժամանակային ուժի։ Ամենաբարեխիղը և ամենազգրույց պլանավորման դեպքում անզամ համակարգային ցնցումներն անխուսափելի են։ Դրանք պայմանավորված են չնախատեսված բյուջետային փոփոխություններով, գինուժի ընդհանուր բվարանակի ամի կամ կրճատների պարտադրանքներով,

ուազմատեխնիկայի վերաբերյալ քաղաքական շարժառիթներով կայացված որոշումներով, կառույցի վերակազմակերպման, վերատեղաբաշխման կամ պարզապես աշխատանքի փոփոխություններով։ Այնուհետև, ինչը կարևոր է, մարդումի հարցում գինված ուժերի պահանջմունքների այս պահակը (portfolio) պետք է ունենա ժամանակային չափականություն, այնպիսին, որը կուրվագծի մարդումի պահանջմունքների փոփոխությունները և դրա ձևավորման/ստեղծման վերջնաժամկետների վերաբերյալ կարևորագույն ինֆորմացիան կիահորդի մարդումի մատակարարներին։ Իդեալական պայմաններում այս պետք է ունենա նաև որոշակի ներհատուկ ճկունություն չնախատեսված ցնցումների դեպքում անհրաժեշտ և անհապաղ քայլեր ձեռնարկել կարողանալու համար։ Մարդումի մենեջմենքի առաջին խոշոր խնդիրը՝ պահանջարկի կողմը (սխեմայում նշված է որպես **ՍՊ**), այս բոլոր գործոնները վերլուծելն է և այլանավորման ողջ հորիզոնով մարդումի պահանջարկի ժամանակացուցված պահակի կազմելը։ Վերջինում յուրաքանչյուր բաղադրիչ պետք է մանրամասնորեն ձևակերպված լինի ըստ ռազմական կառույցում պահանջվող հմտությունների, փորձառության, տարիքի և կոչումների։ Պարզ ասած՝ այն պետք է որոշարկի և ցուցադրի, թե կոնկրետ ո՞ր հաստիքատեղերը և ե՞րբ պետք է համալրված լինեն։

Երկրորդ խոշոր խնդիրն իրական մարդկանց տրամադրումն է։ Պահանջմունքների պահակը հագեցնել կարողանալու համար մարդումի մենեջմենքի համակարգը պետք է ունակ լինի ապահովելու այդ պահակում ներառված հմտությունների, փորձառությունների, տարիքի և կոչումների համապատասխան բաշխվածությունը։ Սա ռազմական մարդումի մենեջմենքի առաջարկի կողմի հիմնական խնդիրն է։ Գծապատկեր 1-ում այս նշված է որպես **ԱԱ** և ցույց է տրված որպես գործընթաց (շրջանակ), իսկ դրա բաղադրիչները պատկերված են աջում։ Խնդիրն այստեղ յուրաքանչյուր տարի հավաքագրվող, աստիճանաշնորհվող, որակավորվող և արձակվող անձանց թվաքանակը որոշելն է։ Իհարկե, մի շաբթ առումներով այս գործընթացը չի տարրերվում ցանկացած այլ հանրային կամ մասնավոր հաստատության կողմից սեփական մարդկային ռեսուրսների մենեջմենքում կիրառվող նմանատիպ սխեմաներից։ Գոյություն ունի, սակայն, կարևորագույն մի առանձնահատկություն։ Ի տարրերություն այլ հաստատությունների մեծագույն մասի ռազմական ոլորտը հարաբերականորեն փակ համակարգ է։ Ընդհանրապես՝ նոր անձնակազմ այն ընդունում է միայն համալրման տարրական մակարդակում, և գինվորական բարձր պաշտոնների ու կոչումների հասնելու համար անհատը պետք է անցնի ամբողջ ճանապարհը, քանի որ գինված ուժերը տարրականից բարձր մակարդակներում չեն նախատեսում այլ ոլորտներից մարդկանց ներառել (կողմնակի համալրում)։ Դա հիմնականում պատճառաբանվում է նրանվ, որ միայն այդպես կարելի է պատշաճ կերպով զարգացնել ռազմական աշխատակցության ինքնատիպ բնույթի համար անհրաժեշտ գործելակերպը, բարյականությունը և ընկերակցության զգացումը։ Նման համակարգերը

բնութագրվում են ընդունելության տարիքի խստորեն սահմանված խմբերով և առաջընթացի խիստ միօրինակ ուղիներով։ Վերջինս բնութագրվում է իրեն առաջխաղացման կամ արձակման պարտադիր սկզբունք, երբ զինծառայողը պարտավորվում է կամ ամեն կոչմամբ և պաշտոնում, կամ հեռանալ։ Զինված ուժերում այս սխեմաները գործում են ընդիւալ քոշակային տարիքի հասնելը։ Առաջխաղացման ինքնին կախված է ճշգրտորեն սահմանված առաջադրանքների կատարումից ներառյալ ուսումնառության և մարտական պատրաստության ուղենիշային փուլերով առաջընթացը, իրամանատարական պարտականությունը և նշանակման ու տեղի հաճախակի փոփոխությունների արդյունքում ճեռք բերած լայն փորձառությունը։ Ըստ Էության՝ մարդումի այսպիսի համակարգերը խթանում են անձնակազմի արագ դարձապտույտը, հատկապես ստորին մակարդակներում, ուստի հաջողությունը կառույցը պահել համեմատաբար երիտասարդ և եռանդուն։ Ավելի բարձր մակարդակներում շարունակական մասնակից (անգլ. attrition աշխատումի աստիճանական նվազում աշխատակիցների ինքնակամ հեռանալու և չփոխարինվելու միջոցով) երաշխավորում է իրամանատարական աստիճանակարգի յուրաքանչյուր մակարդակում անհրաժեշտ թվաքանակով տարիքախմբերի գոյությունը, ինչպես նաև այդ աստիճանակարգում ազատ պաշտոնների մշտական առկայությունը։ Վերջինս ավելի երիտասարդ զինծառայողներին կարող է շահագրգուել պաշտոնական առաջխաղացման համար բացվող հեռանկարներով։ Այսպիսով՝ մարդումի այսպիսի փակ համակարգերը ռազմական կազմակերպություններին մի շարք կարևոր առավելություններ են ընձեռում։ Մյուս կողմից, սակայն, հարկ է քննել, թե արդյոք դրանք ընձեռում են անհրաժեշտ ճկունություն, որը կկարողանա բավարարել մի կողմից ռազմավարական անորոշության այս դարաշրջանում ռազմական մարդումի փոփոխվող պահանջարկը, մյուս կողմից սոցիալական և տնտեսական ձևափոխվող կառույցների և փոփոխվող աշխատաշուկաների պահանջները։

## Անվտանգության միջավայրը և զինումի նշանակությունը

Սիջազգային անվտանգության միջավայրում ընթացող փոփոխություններն այլափոխում են պետությունների կողմից ռազմական ուժի կիրառման ձևերը, ուստի նրանց կարիքները ռազմական մարդումի հարցում։ Գլոբալիզացումը, որի արմատները գնում են դեպի տեղեկատվական տեխնոլոգիաներ, ձևավորել է առավել ապակենտրոն մի աշխարհ, այնպիսին, որում պետության հզորությունն ակներևաբար նվազել է Վերազգային դերակատարների համեմատությամբ, իսկ կրոնական, ինքնությունների, ցեղերի, և երիկ խմբերի քաղաքականությունը ձևափոխել է պետությունների այն համակարգը, որում միջազգային հարաբերություններն ավանդաբար գործարկվել են։ Միևնույն ժամանակ, գլոբալիզացումը բույլ զարգացած տարածաշրջանների բնակչության հնարավորությունը է տվել տեսնելու և ըմբռնելու իրենց և զարգացած աշխարհի պայմանների անհամաշավորությունը իր հերթին պարար հող

ստեղծելով նախանձի, դժգոհության, հիասքափության և ապակայունացման համար: Արդյունքում ունենք շատ ավելի բարդ, պակաս կայուն և առավել անկանխատեսելի միջազգային անվտանգության միջավայր:

Նման բարդությունների գոյությամբ հանդերձ՝ տնտեսական աճող փոխկախվածությունը մի կողմից նվազեցրել է (սակայն իսպառ չի վերացրել) խոշոր տերությունների միջև ընդհանուր պատերազմի հավանականությունը, մյուս կողմից՝ Սառը պատերազմի ավարտը, որը հանգեցրեց արքանյակ երկրների միջև լարվածության պարզման, և ԽՍՀՄ-ի կազմալուծումը, որն էլ, իր հերթին, խոշոր փոփոխություններ առաջ բերեց պետական կողմնորոշումների դաշտում, ըստ երևույթին՝ ընդլայնեցին տարածաշրջանային հակամարտությունների շրջանակը: Բացի այդ, գլոբալիզացումն ակտիվացրել է ոչ պետական սուրյեկտներին և նրանց ընձեռել այնպիսի շարժադրներ և հնարավորություններ, որոնք խաթարում են միջազգային կայունությունը ահարեւկական հարձակումների, խռովությունների և ոչ ավանդական պատերազմավարության այլ ձևերի միջոցով, այդ բայց՝ զանգվածային ոչնչացման գենքի հնարավոր կիրառությամբ: Այս նրանց նաև հնարավոր ապաստարան՝ ընձեռում այսպես կոչված ձախողված կամ ձախողվող պետություններում՝ երկրներում, որոնք գլոբալիզացման գործընթացին արդյունավետ կերպով մասնակցել չկարողանալու կամ չցանկանալու հետևանքով կորցրել են տնտեսական և քաղաքական հարակցությունը:

Ասվածի հիման վրա ձևավորվում է այս ենթադրական եզրակացությունը, որ բացառությամբ տեղական տարածքային վեճերում հակամարտության մեջ գտնվող երկրների՝ պետությունների մեծամասնության համար ավանդական իմաստով չկա արտաքին ռազմական սպառնալիք: Փոխարենը՝ առանձին պետությունների անվտանգությունն անուղղակի կապի մեջ է միջազգային ընդհանուր կայունության հետ, կայունություն, որը կարող է վտանգվել տարածաշրջանային հակամարտություններով, ձախողված կամ ձախողվող պետությունների գուտ առկայության պատճառով և գուցե անզամ այնպիսի պետությունների կողմից, որոնք շահագրգոված են միջազգային հավասարակշռության ապակայունացմամբ կամ պատսպարում են նման շահեր ունեցող ոչ պետական կազմակերպությունների: Հանուն միջազգային կայունության պահպանման և գերակայության՝ նման սպառնալիքներն անհրաժեշտ են անհապաղ վճասազերծել, ինչը պետք է իրականացվի, երբ հնարավոր է դիվանագիտական, տնտեսական և քաղաքական միջոցների կիրառությամբ, իսկ երբ անհրաժեշտ է՝ ռազմական միջամտությամբ: Բոլոր դեպքերում զինուժը դեռ ունի պահանջարկ և ընդհանուր առմամբ անվիխարինելի է անվտանգության և կայունության անմիջական պայմաններ ստեղծելու գործում, ինչն անհրաժեշտ է միջազգային մասնակցության ոչ ռազմական միջոցներն արդյունավետ դարձնելու համար: Այսպիսով՝ չնայած ռազմական ուժն անհրաժեշտ է պատերազմական գործողությունների մերօրյա տեսակներում, այն այնուամենայնիվ հազվադեպ է բավարար լինելու պետության անվտան-

գուրյան, կայունության և գործունակության հաստատման համար։ Նման օպերացիաներում ռազմական գործունեությունը պետք է հավելված և միահյուսված լինի այլ ազգային և միջազգային գործակալություններին, որոնք կարող են օգնություն ցուցաբերել և վերակառուցողական անհրաժեշտ ջանքեր գործադրել երաշխավորելու, որ ձախողված պետությունները դառնան կայուն և գործող միավորներ և այդպիսով՝ պակաս վտանգավոր լինեն միջազգային կայունության համար։

Սուավել կարեորն այն է, որ նմանատիպ ռազմական գործողությունները, որոնք ընդհանուր առմամբ ուղղակիորեն չեն վտանգում այլ պետությունների կենսական շահերը, կարիք ունեն բազմազգ մասնակցության։ Դա արվում է ոչ միայն այդ ջանքերին նվազագույնս օրինակարգություն հաղորդելու նպատակով։ Աշխարհում սակավաթիվ երկրներ կան, որոնք ցանկանում են կամ ունակ են միայնակ իրենց ուսերին նման թե՛ն Վերցնելու, առավել ևս, երբ տվյալ պետության կենսական շահերն ուղղակիորեն վտանգված չեն։ Վերջին ժամանակների պատմությունը կարծես ցույց է տալիս, որ 21-րդ դարում տիպական երկրի համար զինուժի մարտական ներզրավման ամենահավանական ձևաչափը կլինեն հենց նման բազմազգ օպերացիաները։ Եթե դա այդպես է, այս հանգանաճը նշանակալի հետևանքներ է ունենալու նարդուժի թվաքանակի և կազմի նկատմամբ առաջադրվող պահանջների վրա։ Առաջինը այդ տիպի օպերացիաներն աշխատատար են և մեծագույն ծանրաբեռնվածության են ենթարկում փոքր ու միջին երկրների զինված ուժերին արդյունավետ մասնակցություն ցուցաբերելու առումով։ Ե՛լ ավելի դժվար է լինելու այդպիսի մասնակցությունը նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներով ապահովելը։ Այս թեոր կարող է ծանր լինել հատկապես այն դեպքերում, երբ օպերացիաների մեծամասնությունը, սպասվածի համաձայն, երկարատև ընթացք ունենա պարտադրելով պետություններին ապահովել ստորաբաժանումների մշտական ռոտացիա։ Ավելին՝ այս տիպի օպերացիաներին մասնակցող զորամիավորումները պետք է լինեն արշավային, այսինքն՝ պետք է ունենա սեփական ուժերը խնդրահարույց տարածքներ փոխադրելու միջոցներ և տեղաբաշխման վայրում դրանց կայուն գործունեությունն ապահովելու կարողություն։ Տեղում լինելով՝ այս ուժերը վերապատրաստման և տեխնոլոգիական հնարավորությունների կարիք կունենան, որպեսզի կարողանան աշխատել բազմազգ ուժերի կառավարման օպերատիվ համակարգի շրջանակներում և համաձայնեցնել իրենց առնչությունները տեղական բնակչության և միջազգային գործակալությունների ողջ բույնի հետ, որոնք, ամենայն հավանականությամբ, օպերացիայի մաս են կազմելու։

Եթե կայունության վերահաստատման նման օպերացիաները գալիք տասնամյակներում դառնան միջազգային դրության նորմ (խև արդի իրողությունները կարծես թե զնում են հենց այդ ուղղությամբ), ապա զինված ուժերի կազմակերպման և մարդուժի պահանջմունքների վրա երկրորդ խոշոր սպասվող ներգործությունը ծագելու է ինքնին պատերազմի բնույթի վերաբերյալ

ապագայում մեր պատկերացումները կտրուկ վերանայելու պարտադրանքից և դրա իրագործումից: Նման տիպի ռազմական գործողություններում, որոնցում կրակումը հաճախ կարող է լինել անօգուտ և անզամ անարդյունավետ, հաջողություն գրանցելու համար հարկավոր է ոչ այնքան ջախջախել քշնամու ուժերը, որքան բնակչությանը սեփական կողմը գրավել կառավարման և միջազգային վարչեցողության այնպիսի գաղափարներով, որոնք նպաստում են ներպետական քաղաքական ամբողջականության և, ի վերջո, համաշխարհային կայունության պահպանմանը: Սա ամբողջովին կերպափոխում է ռազմական հաղորանակի բնույթի վերաբերյալ մեր ընկալումների համակարգը: Դրա հետ մեկտեղ զինվորականության դերը և գործողությունների մեթոդաբանությունը ևս պետք է անհրաժեշտարար և հիմնավորապես վերաձևակերպվեն: Կայունության վերահստատման օվերացիաներում ներգրավված զինված ստորաբաժանումները, օրինակ, պետք է կարողանան միևնույն օվերացիայի, միևնույն փոքր աշխարհագրական տարածքի սահմաններում և հաճախ անզամ՝ միևնույն օրվա ընթացքում հաջողությամբ գործ ունենալ մարտական գործողությունների, խաղաղապահ միջոցառումների և մարդասիրական օգնության տրամադրման հետ: Աշխատանքային միջավայրն այս համատեքստում կարող է արագընթաց զարգացում ապրել՝ պահանջելով, որ զինվորական փոքր ստորաբաժանումներն ունենան անհրաժեշտ մարտական պատրաստություն, ճկունություն, ճշգրիտ ինֆորմացիա և, հատկապես ղեկավարություն, որպեսզի ունակ լինեն արագ և արդյունավետորեն արձագանքնելու ննան բարդ և բազմաչափ միջավայրում շարունակ փոփոխվելու հանգանանքներին:

Չափ երկրներ հետզիետե կիամոզվեն, որ մարդումի պլանավորմանը և ռազմական կառույցի կազմակերպմանն ուղղված քայլեր կատարելիս պետք է իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնեն կայունության վերահստատման քաղմակողմ օվերացիաների վրա: Սակայն չի կարելի անտեսել այն հնարավորությունը, որ զինված ուժերը կարող են նաև պահանջվել այլ տիպի գործողություններում սկսած ներպետական մարդասիրական օժանդակությունից և պետության ինքնիշխանության պաշտպանությունից մինչև ամենավատը՝ մասնակցությունը խոշոր պատերազմին (ավանդական իմաստով): Այլ պետության կողմից եկող սպառնալիքի «վերականգնման» հնարավորությունը դրա մի օրինակ է, հատկապես եթե նկատի առնենք պետությունների հարաբերական քաղաքական, տնտեսական և ռազմական բարեկեցության ոլորտներում շարունակ ըմբացող փոփոխությունները (հատկապես տարածաշրջանային մակարդակում): Ավելի՞ մի ժամանակաշրջանում, եթք տեղեկատվական տեխնոլոգիաները և համակարգչային ցանցերը այսօրինակ վճռորոշ դեր են ծեռք բերել ոչ միայն պատերազմավարության, այլև ժամանակակից բոլոր հասարակությունների կենսագործունեության ասպարեզում, կիրեր-պատերազմները, հայրենական համակարգչային ցանցերի վրա հեռահարձակումները և վերջիններիս պաշտպանությունը զնալով վերածվում

Են ուզմական գործունեության մեկ այլ կիզակետի: Ծրջահայացությունը պահանջում է նվազագույն նախազգուշական միջոցների կիրառում՝ կապված նման բոլոր տարարնույթ հնարավորությունների հետ: Բարդությունն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը պահանջում է միմյանցից զատ տեխնոլոգիաներ և մարդումի ու սարքավորման տարրեր հարաբերակցություն: Մի մասը կարիք ունի ավելի բարձրտեխնոլոգիական սպառազինության համակարգերի, մնացյալը՝ ավելի մեծաքանակ մարդումի, սակայն երկուսն էլ խիստ որոշակորեն պահանջում են բացառիկ որակյալ զինվորական անձնակազմ:

## Ուզմական մարդումի պահանջարկը

Յուրաքանչյուր պետություն տարրեր կերպ է արձագանքելու անվտանգության վերոնշյալ նորահայտ հասկացություններին: Ուստի յուրաքանչյուրն ունենալու է սեփական առանձնակի մոտեցումը ուզմական կարողությունների ստեղծման գործում. դրա ձևավորումը կայայմանավորվի երկրի պատմական, մշակութային գործուներով, տնտեսական զարգացման մակարդակով և աշխարհագրական միջավայրով ու հարևանությամբ: Համապատասխանաբար յուրաքանչյուր երկրի կունենա զինված ուժերի թվաքանակի և կազմի որոշման սեփական մերուդարձանությունը: Մասնավոր առանձնահատկություններից անդին, սակայն, գոյություն ունեն ընդհանուր բնույթի որոշակի նկատառումներ, որոնք անկարելի են շրջանցել ուժային կառույցի ծրագրման ցանկացած գործներացում: Դրանցից ամենահիմնականն այն է, որ մարդումի մենեշմենքի ինչպիսի ուզմավարություն էլ լինի, այն պետք է հստակորեն ուղղված լինի պետության ուզմական ստրատեգիայի վերաբերյալ որոշակի պատկերացումներին, իսկ վերջինիս միջոցով՝ համաձայնեցվի պետական անվտանգության շահերի հետ: Առանց նման կապի՝ մարդումի մենեշմենքը չունի նպատակային ուղղվածություն, ուստիև իմաստ:

Պահանջվող զինված ուժերի կազմակերպության ձևը տրամաբանորեն սկիզբ է առնում երկրի անվտանգության ուզմավարությունից, որն էլ, իր հերթին, բխում է ազգային որոշակի արժեքներից և շահերից, վերջիններիս ենթադրաբար սպառնացող վտանգներից, միջազգային անվտանգության միջավայրում պետության աշխարհարարական դիրքից և ամենավճռորդը դրա միջազգային հավակնություններից: Այս հանգամանքներն են ձևավորում (կամ առնվազն պիտի ձևավորեն) այն ակնկալվող դերերը, որոնք պետության զինված ուժերը պիտի իրականացնեն: Ուստի դրանք են պահանջվող ուժի կրնչիգուրացիայի և մեծության հիմնական որոշչները: Խնդրում, սակայն, առկա են նաև այլ գործոններ: Դրանցից առաջնայինը պետության բյուջեի կրդմից ֆինանսական միջոցներ տրամադրելու կարողության հանգամանքն է՝ խնդրի մատչելիությունը: Պաշտպանության ոլորտի բյուջեն և, ինչը հավասարապես կարևոր է, դրա ծախսման եղանակը կոչտ սահմանափակումներ են դնում առաջարկվող ցանկացած ուժային կառույցի իրագործելիության վրա: Զինված ուժերի ձևավորման վրա կարող են ազդել ոչ միայն ֆինանսական սահմանա-

փակումները. ուժային ընդհանուր կառույցի առանձին բաղադրիչների թվաքանակի մանդատավորված առավելագույն թույլատրելի շափր դրա օրինակներից մեկն է: Ահա այս սահմանափակումների շրջանակներում էլ որոշարկվում է ուզումական մարդումի պահանջարկը: Առաջին հերթին հաշվի են առնվում, թե ինչպիսի և ինչ շափրի ուզումական կարողություններ է հարկավոր ունենալ, երկրորդ հերթին՝ ինչպես են ձևավորվելու այդ կարողությունները (խոսքը մարդումի և սպառազինության տարաբնույթը համակցությունների մասին է):

### **Ֆինանսական սահմանափակումներ**

Պաշտպանության բյուջեի արդյունավետ նախագծումը պահանջում է որոշակի հաշվեկշիռ հաստատել անձնակազմի, շահագործման ու տեխնիկական սպասարկման և ներդրումային ծախսերի միջև: Օրինակ՝ Եթե աշխատավարձերի բարձրացումը և անհատական մնացյալ արտոնությունները գերազանցում են պաշտպանական ընդհանուր բյուջեի աճը, դրանք պետք է համակշռվեն կամ անձնակազմի թվաքանակի կրճատմամբ, կամ ուզումատեխնիկայի և շահագործման ու տեխնիկական սպասարկման ծախսերի կրճատմամբ: Եթե անձնակազմի թվաքանակը մնում է անփոփոխ, և անձնակազմի վրա կատարվող ծախսերի ավելացման համար տեղ ստեղծելու նկատառումով բյուջեում սկսում են նվազեցվել ուզումատեխնիկայի գննան ծախսերը, ապա անձնակազմի և ուզումատեխնիկայի անհրաժեշտ տարատեսակների միջև հարաբերակցության խախտումն անխոսափելի բացասական անդրադարձ կունենա երկրի ուզումական կառույցի կարողության և կատարողունակության վրա: Հնացած ուզումատեխնիկայի պահպանումը կարող է իր հերթին ահազմացնել այս անհավասարակշռությունը, քանի որ դրա շահագործման ու տեխնիկական սպասարկման աճող ծախսերն են ավելի են նեղացնում բյուջեի հնարավորությունները նոր ուզումատեխնիկայի գննան առումով: Այսօրինակ ճնշումները պաշտպանության ոլորտի պլանավորողներից պահանջում են բարդ ընտրություններ կատարել պետության կողմից հատկացվող միջոցներն անձնակազմի, ուզումատեխնիկայի և մարտական գործողությունների ֆինանսավորման միջև բաշխելու գործում: Եթե առանց ուզումական պոտենցիալի լուրջ աղճատման բյուջեն ի վիճակի չէ կայուն կերպով սպասարկելու անձնակազմի և ուզումատեխնիկայի աճող ծախսերը, ապա հարկ է վերանայել գինված ուժերի առջև դրված այն խնդիրներն ու նպատակները, որոնց կառույցը ծրագրել է հասնել առկա ֆինանսական հնարավորությունների օգտագործմամբ: Բացաված չէ, որ կարիք լինի լրջորեն վերանայելու նաև ուժային կառույցում առանձին բաղադրիչների թվաքանակների և հմտությունների սպեկտրի ամբողջ հարաբերակցությունը, որպեսզի հնարավոր լինի դրանք ավելի լավ համապատասխանեցնել պետական բյուջեի հնարավորություններին: Այդ իսկ պատճառով մարդումի մենեջմենթը պետք է ունակ լինի կանխատեսելու նման ճնշումները և մշակի դրանց հարմարվելու անհրաժեշտ մեխանիզմներ:

## Ոչ ֆինանսական սահմանափակումներ

Ի հավելումն պաշտպանության բյուջեների պարտադրած ֆինանսական սահմանափակումների՝ նարդումի կառավարիչները և ուժային կառույցների պլանավորողները պարտավոր են աշխատել ուժային կառույցի առավելագույն ընդհանուր թվաքականի համար կառավարության կամ խորհրդարանների կողմից պարտադրված սահմաններում։ Այդ վերին սահմանների պարտադրանքն է՝ ավելի է նվազեցնում ռազմական ոլորտի պլանավորողների և կառավարիչների ունեցած ճկունությունը՝ որոշելու գինված ուժերի այնպիսի օպտիմալ կոնֆիգուրացիա, որպիսին բյուջեի առկա մակարդակը կարող է ապահովել։ Այն կարող է նաև ունենալ հակառակ ազդեցություն։ Ուժային կառույցի պլանավորողները կարող են շահագրգուված լինել կենտրոնանալու ուժի թվաքանակի վրա հետամուտ լինելով մարդումի վերին սահմանը չգերազանցելուն, մինչդեռ շատ ավելի օգտակար կարող եք լինել անձնակազմի և ռազմատեխնիկայի միջև անհրաժեշտ փոխզիջումներ անելու միջոցով ձևավորել ֆինանսավորման տվյալ մակարդակի շրջանավճերում մատչելի ամենաարդյունավետ ուժային կառույցը։ Նկարագրվածի արդյունքում ուժային կառույցները լրջագույնս աղճատվում են, քանի որ եթեն մարդումի թվաքանակը հասցվում է առավելագույնի, նոր ռազմատեխնիկայի ձեռքբերման համար նախատեսված ֆինանսական միջոցները հանգեցվում են նրան, ինչ մնում է անձնակազմի վրա կատարվող ծախսերը ծածկելուց հետո։

### Տեխնոլոգիա

Վերջին տասնամյակների ընթացքում ռազմական տեխնոլոգիաների ոլորտը լրջագույն փոփոխություններ է կրել, ինչը հատկապես տեսանելի է թե՛ տեղեկատվական տեխնոլոգիաների և ցանցային հաղորդակցության միջոցների կիրառության շարունակական աճի միտումներում, թե՛ առավել սրնիքաց, արագագործ, ճշգրիտ, մահարել և հակառակորդի համար աներևույթ սպառագինության համակարգերի մշակման և կիրառության աճող շեշտադրությամբ։ Ռազմական կառույցի կողմից այս տեխնոլոգիաների յուրացման զանքերին զուգընթաց անհրաժեշտաբար փոխվելու են այդ կառույցի համալրման, կազմակերպման և գործունեության ձևերը։ Մարդումի պլանավորման տեսանկյունից դա հիմնականում նշանակում է ուժային կառույցներում պահանջարկ ունեցող հմտությունների և փորձառությունների հարաբերակցության հաշվեկշռի շարունակական վերանայում և վերահամակցում։ Քանի որ մարդկային աշխատումը գնալով փոխարինվում է նոր տեխնոլոգիաներով, անձնակազմի թվաքանակի նվազեցումը կարող է իրականացվել առանց ռազմական կարողությունների հարցում լուրջ վնասներ կրելու։ Անշուշտ, հասկանալի է, որ դա հիմնականում կախված կլինի մարտական այն առաջարկանքների և առաքելությունների տեսակներից, որոնք գինվորական միավորումները ստիպված կլինեն կատարել ապագայում։ Առաքելությունների որոշ տեսակները իրենց ներհատուկ բնույթի պատճառով կշարունակեն գինվորական անձնակազմի

մեծ թվաքանակների կարիք ունենալ նույնիսկ այն դեպքում, եթե դրանց մասնակցող ուժերը հանդերձավորված լինեն հնարավորինս ամենաառաջատար նյութատեխնիկական միջոցներով։ Ինչևէ, անկախ զինվորական անձնակազմի թվաքանակի վրա ռազմական տեխնոլոգիաների ազդեցությունից՝ պարզ է, որ ռազմական դրուտում գիտատեխնիկական առաջընթացն աներկայորեն պահանջելու է բարելավել ռազմական նշանակության մարդումի որակական կազմը։

### **Որակական փոփոխություններ. նոր ճողելի գինվորը**

Ժամանակակից պատերազմի բնույթի փոփոխությունը, հարուցված գիտատեխնիկական առաջընթացով և միջազգային անվտանգության նիշավայրի հարափոփոխ անկայունությամբ, վճռական ազդեցություն ունի զինված ուժերի անձնակազմի որակավորումների, մարտական պատրաստության և կրթության մակարդակի հարցերում առաջարկվող պահանջների վրա։ Իրավիճակի կայունացման ցածր ինտենսիվության ռազմական գործողություններում, ինչպես նաև բարձր ինտենսիվությամբ ցանցային պատերազմավարության մեջ պահանջվող հմտությունները նշանակալիորեն կտարբերվեն նրանցից, որոնք պահանջվում էին անցյալ դարի համար բնորոշ պատերազմավարության տեսակներում։ Եթե ինչպես շատերը ենթադրում են 21-րդ դարի համար նորմ դառնան միջազգային արշավային առաքելությունները, դա կնշանակի, որ ապագայի իդեալական զինվորը ոչ միայն պիտի լինի հմտության մարտիկ, այլև ունենա վարչական ունակություններ և մշակութային քաջատեղյակություն, որպեսզի կարողանա իրականացնել հաջողակ դիվանագետի, քաղաքացիական կառավարչի և ոստիկանի պարտականություններ ևս, իսկ նշված ունակություններն էլ պետք է հաջողությամբ գուգակցի զգնության, համբերատարության և հանդուրժողականության հետ։ Սրանք այնպիսի արժանիքներ են, որոնք սովորաբար չեն ասոցացվում մարտական պայմաններում գտնվող զինվորների հետ, սակայն, այնուամենայնիվ, անհրաժեշտ են առաջին հերթին հակամարտության էպիկենտրոնում հայտնված և իր կողմնորոշումը հեշտորեն փոխող տեղական բնակչության, երկրորդ հերթին՝ կազուն լրատվամիջոցների հետ հաջող կերպով առնչություն ունենալու համար։ Իսկ վերջիններս կարող են անգամ փորք մի միջադեպ արագորեն վերածել միջազգային խոշոր քաղաքական և դիվանագիտական ճգնաժամի<sup>130</sup>։ Զինվորը պետք է նաև հմուտ լինի լեզուների իմացության մեջ՝ տիրապետի ինչպես իր տեղաբաշխման երկրի, այնպես էլ բազմազգ օպերատիվաների ընդհանուր լեզվին, սովորաբար անգլերենին։ Նա պետք է ունենա

<sup>130</sup> Այս երևույթը հանգեցրել է «ռազմավարական կապրալ» հասկացության ի հայտ գալուն, այն է ցածր կոչման զինվոր, որի գործողությունները կարող են ազդել ոչ միայն անիշխական մարտական իրավիճակի, այլև ռազմավարական ամբողջ կացության վրա։ Տե՛ս Charles C. Krulak, “The Strategic Corporal: Leadership in the Three Block War,” *Marines Magazine* 28, no. 1 (January 1999), [www.au.af.mil/au/awc/awcgate/usmc/strategic\\_corporal.htm](http://www.au.af.mil/au/awc/awcgate/usmc/strategic_corporal.htm):

նաև մարտական պատրաստության և կրթության այնպիսի մակարդակ, որը նրան բույլ կտա նախաձեռնողաբար գործել տարաբնույթ հանգամանքների լայն ընտրության պայմաններում հաճախ առանց բավարար տեղեկատվության և անգամ վերադաս դեկավարության ուղղորդման: Երիտասարդ առաջնորդների վրա հսկայական ճնշումներ և պարտականություններ կդրվեն, և նրանք անհրաժեշտաբար պիտի տիրապետեն զինվորական արժանիքներից ամենակարևորին՝ չափազանց սրբեսային և անորոշ իրավիճակներում կշռադատված որոշումներ ընդունելու և դրանց պատասխանատվությունը կրելու կարողությանը: Ուստի ակներև է, որ փորձառությունը, կշռադատված որոշումներ ընդունելու կարողությունը, նախաձեռնողականությունը և տեխնիկական գրագիտությունը ապագայում զգերակայեն իրքի առավել ցանկալի զինվորական արժանիքներ: Երիտասարդությունն ու ավյունը շարունակում են մնալ կարևոր հատկանիշներ, սակայն նրանց նշանակալիությունը, առնվազն համեմատական իմաստով, գնալով նվազելու է: Այս ամենը խոր ազդեցություն է ունենալու ուժային կառույցների բաղադրության վրա և կարող է նաև ամբողջովին այլափոխել մարդումի առաջարկի հիմնարար դիմամիլկան:

## **Ռազմական մարդումի համալրումը**

Առաջարկի տեսանկյունից՝ մարդումի մենեջմենթի խնդիրը ուժային պլանավորման համակարգի կողմից զինված ուժերի մարդկային ռեսուրսների նկատմամբ թե՛ թվաքանակի, թե՛ որակավորումների առումներով ձևակերպված պահանջների բավարարումը երաշխավորելու է: Գործնականում դա նշանակում է մանրակրկիտ կերպով համաժամանակեցնել մարդկային ռեսուրսների հոսքը՝ օգտագործելով հավաքագրման, մարտական պատրաստության, աստիճանաշնորհման, տեղաբաշխման և ազատման բարդ և փոխադրված համակարգը: Այս համաժամանակեցումը ճիշտ կառավարելու հարցում ցուցաբերած թերացումները կարող են հանգեցնել մարդումի համակարգերում հավասարակշռության լրջագույն խաթարման, ինչը ռազմական գործունեության որոշ ոլորտներում կհանգեցնի առկա թվաքանակի, հմտությունների, տարիքային և կոչումների մակարդակներում պակասուրդի ձևավորմանը, իսկ որոշ ոլորտներում ընդհակառակը ավելցուի: Թե՛ պակասուրդը և թե՛ ավելցուկը ըստ էության սակավաթիվ ռազմական կարողությունների անարդյունավետ տարարաշխությունն են, և երկուսն էլ հավասարապես կարող են վնասել պետության կողմից ռազմական նախանշված կարողություններին հասնելու ջանքերը: Ռազմական կառույցների բացառիկ փոխկախիվածության պատճառով, օրինակ, որևէ ոլորտում գոյացող պակասուրդը կարող է խափանել ռազմական ամբողջ համակարգի արդյունավետ գործունեությունը: Ավելցուկը ևս կարող է նույնանման քայլայիշ ազդեցություն ունենալ այն անձակազմի վրա կատարվող ավելորդ ծախս է, որը կարող է ավելի մեծ արդյունավետությամբ ուղղվել նոր ռազմատեխնիկայի գննանը կամ եղածի նորոգմանն ու տեխնիկական սպասարկմանը:

Մարդումի հոսքերի համաժամանակեցումը և դրա մենեջմենթը առավել խնդրահարույց են դաշնում, երբ փոփոխություն են կրում իրենք՝ ուժային կառույցները։ Համակարգը բնութագրող պատճառահետևանքային կապերի բարդությունը նշանակում է, որ պահանջնունքների անգամ ամենաաննշան փոփոխությունը կարող է համակարգում մեծ արձագանք առաջ բերել հզրանալով և լուրջ հետհարվածների ալիք ստեղծելով ուժային ամբողջ կառույցով մեկ։ Նման հանգանակներում, անհամարժեք և անբավարար տեղեկությունների իշման վրա կայացված անիրազեկ որոշումները կարող են անկանխատեսելի և մնայում հետևանքներ ունենալ։ Դիտարկենք հետևյալ օրինակը։ Դիցոք բյուջետային կամ ռազմավարական նկատառումներով պայմանավորված անիրամեշտ է կրճատել զինված ուժերի ընդիանուր թվաքանակը։ Այդ որոշումը կատարելը, սակայն, ինքնին շատ դժվար է, հատկապես եթե սեղմ ժամկետներ են պարտադրվում։ Ուստի մարդումի թվաքանակի կրճատումը կարելի է փորձել իրականացնել աստիճանաբար, ավելի պասիվ միջոցների կիրառությամբ, օրինակ օգտվելով մաղրի սովորական պարերաշրջաններից, եթե սպասներն անցնում են թռչակի կամ կամավոր իշմունքներով պաշտոնաթող են լինում, իսկ դրան զուգահեռ միտումնավոր կրճատվում է զինվորների հավաքագրման չափը։ Բայց այստեղ խնդիր է առաջանում, քանի որ այս ծևը զինվորական անձնակազմում հավասարակշռության լրջագոյն խաթարման պատճառ կարող է դառնալ անձնակազմը կծերանա, կառաջանա հնոտությունների անբավարարություն և բարձրագոյն կոչումների ավելցուկ։ Խելամիտ մենեջմենթի բացակայության դեպքում այս մոտեցման պատճառով հնոտությունների, տարիքի և կոչումների խմբերում զոյացած անհավասարակշռությունը կիանգեցնի պետության պաշտպանական ընդիանուր միջոցների տարաբաշխման լուրջ անցտությունների, և այս ամենի հետևանքների վերացումը կապահանջի տասնամյակներ<sup>131</sup>։ Բերված օրինակից պարզ է դատնում, որ զինումի թվաքանակում ննանատիպ կրճատումներ կամ հավելումներ կատարելու համար հարկավոր է կիրառել ավելի խելամիտ և կանխորոշի կառավարում, որի մերողները կընդգրկեն ոչ միայն հավաքագրման շափարաժներում փոփոխություններ կատարելուն ուղղված քայլերը, այլև վերջիններս կգուգորդվեն մարտական պատրաստության, աստիճանաշնորհման,

<sup>131</sup> Նման իրարրության մի հետաքրքիր օրինակ է բերում Վիլլանին Իտալիայի զինված ուժերի ամբողջ անձնակազմի ռեֆորմի վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ։ Ռեֆորմը սկիզբ էր առել զինված ուժերը պայմանագրային (պրոֆեսիոնալ) հիմքի տեղափոխելու մասին որոշման ընդունմամբ։ Օրենքի հաստատումից մինչև պրոֆեսիոնալ զինված ուժերի նոր կառույցի ձևադրման անցումային շրջանի համար տրվել էր 20 տարի։ Չնայած նրան, որ որոշ զինծառայողների շնորհվել էր վաղաժամ թռչակ, իսկ ուրիշներն աշխատանքի էին անցել պետական այլ ծառայություններում՝ այդ ժամանակահատվածում կամ առնվազն դրա սկզբնական փուլում, դեռ շարունակում էր նկատվել սպաների և սերժանտական կազմի զինծառայողների (ենթապահների) ավելցուկ։ Տե՛ս Domenico Villani, “Recruitment in a Period of Transformation: the Italian Experience,” հետևյալ ձեռնարկում՝ Service to Country: Personnel Policy and the Transformation of Western Militaries, ed. Curtis Gilroy and Cindy Williams (Cambridge, Mass.: MIT Press, 2006), 381-396.


տեղաբաշխման և արձակման գործակիցների փոփոխություններով, ինչը բույլ կտա հանգել արդյունարար փոփոխություններում ավելի համակշռված լուծումների: Այդ անելու համար պահաջորդ է մարդում մենեջմենթի չափազանց պատասխանատու համակարգ, այնպիսին, որն օժտված կլինի համարժեք տեղեկատվությամբ և որոշումների կայացման բավարար ճկունությամբ, որպեսզի կարողանա անհրաժեշտ ընտրությունը կատարել ճիշտ ժամանակին և արդյունավետորեն: Ավելին՝ այն պետք է ունենա նաև որոշակի գիտելիքներ մարդումի առաջարկի դիմունքների վերաբերյալ:

### **Մարդումի առաջարկի դիմանմիկան**

Գործնական տեսանկյունից՝ մարդումի համալրման իմանական խնդիր-մարտահրավերը գիտենալի է, թե մարդումի յուրաքանչյուր մասնավոր կարգի համար պլանավորման հորիզոնի յուրաքանչյուր տարում քանի մարդ պետք է հավաքագրել, քանիսին՝ մարտականորեն պատրաստել, քանիսին՝ տեղաբաշխել և քանիսին՝ արձակել, որպեսզի հնարավոր լինի ապահովել ուժային ցանկայի կառույցի կազմն ու հաջող գործունեությունը: Այս նպատակին հասնելու համար մարդումի պլանավորողները պետք է գիտենան ոչ միայն ուժային կառույցի կարիքներն ըստ ժամանակային հաստությունից, այլև որոշակի հավաստի պատկերացում ունենան մաղթի գործակիցների՝ գինումի կամ դրա որևէ մասնավոր քաղաքիչի անձնակազմի այն մասի վերաբերյալ, որը սպասումների համաձայն պետք է հեռանա ժամանակի յուրաքանչյուր տրված պահին<sup>132</sup>: Սովորական մաղթն առաջանաւ է այն անդամների արձակումից, որոնց պայմանագրային ներգրավված կամ պարտադիր գինվորական ծառայության պարտավորությունների ժամկետները լրացել են, կամ որոնք հասել են թոշակային տարիքի: Բայցևայնպես, ի տարբերություն քաղաքացիական գրադադարյան մաղթի, որ անհատները կարող են ցանկացած ժամանակ ազատորեն թողնել իրենց աշխատանքը, ռազմական մարդումի սովորական մաղթի գործակիցները կամ դրա տրամաբանական լրացումը վերաներգրավված գործակիցը, բավականին կայուն են և կանխատեսելի, հատկապես եթե նկատի առնենք, որ զինծառայողները, որպես կանոն, օրենքով պարտավորվում են ավարտին հասցնել իրենց ծառայության ժամկետները: Այնուամենայնիվ, քանի որ սովորական մաղթի գործակիցները փոփոխվելու հատկություն ունեն տարիքի, փորձառության, մարտական պատրաստության, մասնագիտական գրադադարյան խմբի և կոչումների տեսակների փոխվելուն զուգընթաց, ապա մարդումի պահանջմունքների պլանավորման գործում օգտակար լինելու համար դրանք պետք է որոշակացվեն ըստ այդ բնութագրիներից յուրաքանչյուրի: Ի հավելումն այս սովորական մաղթի կարող է գրանցվել նաև չնախատեսված մաղթ պայմանավորված մի շարք այլ հանգամանքներով՝ ներառյալ նյութական կամ ընտանե-

<sup>132</sup> Այս քաժինը մասնակիորեն հիմնված է հետևյալ հոդվածում քննարկված դրույթների վրա. A.R. Smith, "Defence Manpower Studies," *Operational Research Quarterly* 19, no. 3 (September 1968), 257-273:

կան հանգամանքների բերումով ինքնակամ հեռանալը, մասի կամ վնասվածքը, ծառայության համար ոչ պիտանի լինելու կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու հիմքերով արձակումը և այլն: Չնայած այս տիպի մաղքն ավելի դիպվածային է, քան սովորական մաղքը, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ այս ևս ունի վիճակագրական որոշ կանոնավորություն՝ հիմքեր ստեղծելով կանխատեսման որոշակի հնարավորությունների համար: Սովորական և շնախատեսված մաղքի գործակիցների վերաբերյալ լիարժեք ինֆորմացիան մարդումի արդյունավետ պլանավորման հիմքն է, ինչից հետևում է, որ անձնակազմի տվյալների պատշաճաբար մանրանասնեցված և շարունակարար բարմացվող բազաների առկայությունը կարենոր մի գործիք է մենեջմենքի համար:




#### Գծապատկեր 2. Մաղքի ենթադրական ուրվագիծը

Սիսավորելով սովորական և շնախատեսված մաղքի գործակիցները (շափը)՝ կարող ենք ստանալ մաղքի ժամանակային կտրվածքը կոչման և մասնագիտական գրադարձության յուրաքանչյուր խմբի համար, ինչը մատնանշում է, թե ինչպես է ժամանակի ընթացքում փոփոխվում աշխատակիցների ցանկն այդ կարգերից յուրաքանչյուրում: Որպես օրինակ՝ Գծապատկեր 2-ում պատկերված է 100 կանավորների համար մաղքի ենթադրական ուրվագիծը համալրման ողջ բոլորաշրջանի ընթացքում, որը ներառում է նախնական 3-ամյա ծառայությունը, հետագա հնարավոր վերաներգորակման 5-ամյա շրջափուլը, անորոշ ժամանակով ծառայության պարբերաշրջանը, բոշակային ստաժավորման 25-ամյա շրջափուլը և պարտադիր թոշակի անցնելը 55 տարեկան հասակում: Այսպիսով՝ սովո-

բական մաղքը տեղի է ունենալում ծառայության երրորդ, հինգերրորդ և երեսունյորերրորդ տարիներին: 25 տարվա ծառայության դիմաց թշչակային ստաժավորումը ևս, ըստ սպասումների, հարուցելու է ինքնակամ հեռացումների կտրուկ և աստիճանական ընդհատում ունեցող թվաքանակ: Չնախատեսված մաղքը առավելապես տեղի է ունենալու այս հիմնական շրջափուլերի միջև և զծապատկերի վրա ներկայացված է անձնակազմի թվաքանակի արժեքների նկազման միտման միջոցով. այն ավելի արագ է ընթանում ծառայության սկզբնական շրջափուլերում, աստիճանաբար դանողադրում է թշչակային ստաժավորման տարիքին մոտենալուն գործընթաց և անգամ թերևակի աճ է գրանցում պարտադիր թշչակային տարիքին մոտենալիս:

Մաղքի այս զծապատկերը նաև թույլ է տալիս որոշ դիտարկումներ կատարել հավաքագրման գործակցի նախապես ամրակայված արժեքի արդյունքում ձևավորվելիք անձնակազմի կայուն հավասարակշռության վիճակի թվաքանակների վերաբերյալ: Տվյալ վարկածային օրինակի համար Գծապատկեր 3-ից կարելի է տեսնել, որ որոշակի մասնագիտական գրադադարձության խմբում շարունակաբար տարեկան 100 կամավորների գիննվորագրումը կայուն հավասարակշռության վիճակի պարագայում ի վերջո կձևավորի 1200 գիննծառայողից բաղկացած անձնակազմ: Իսկապես, տարբեր տարիքային խմբերից 100 մարդու տարեկան արտահոսքը՝ մաղքի չափը, կոմպենսացվում է 18 տարեկան 100 կամավորների ամենամյա հավաքագրմամբ: Ըստ այդմ կայուն հավասարակշռության վիճակում տարեկան ելքի գործակիցը հավասար է 8.3 %-ի: Ծառայության տարիների բաշխվածության առումով՝ կայուն հավասարակշռության վիճակի դեպքում գիննված ուժերի տվյալ անձնակազմում կա 100 նոր և փորձառությունից գործկ կանավոր, 93՝ մեկամյա գիննառայող, 89՝ երկամյա գիննառայող և այլն: Նման կոնտինգենտի միջին տարիքը մոտավորապես 28 է:



Գծապատկեր 3. Կայուն հավասարակշռության վիճակի ենթադրական բաշխումները

Կայուն հավասարակշռության վիճակում անձնակազմի թվաքանակների համեմատությունը պլանավորված ուժային կառույցի գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ թվաքանակների կանխատեսումների հետ թույլ է տալիս գնահատել այն կարգաբերումները, որոնք պետք է հաշվի առնելն հավաքագրման, աստիճանաշնորհման, ծառայության մեջ պահելու և ծառայությունից արձակելու ծրագրերում։ Գծապատկեր 3-ն առաջադրում է նման օրինակ։ Իդեալական պայմաններում կանխատեսվող բաշխումը պետք է համընկնի ուժային կառույցի պլանավորման պահանջների հետ։ Ինչևէ, այս դեպքում տեսնում ենք, որ ծառայության 4-14 տարիների միջակայքում գոյանում է նշանակալի պակասուրդ, իսկ 17-25 միջակայքում ավելցուկ։ Այդուհանդերձ, քանի որ ռազմական նարդումի համակարգերն ընդհանրապես փակ համակարգեր են, դրանք տարրականից բարձր մակարդակներում շատ քիչ զինվորագիրներ են ընդունում, ուստի և անկարող են կողմնակի հավաքագրմանը համալրել նվազման արդյունքում առաջացած պակասուրդը։ Նախնական հավաքագրման ավելի բարձր չափը, անշուշտ, կլրացնի այս բացը, սակայն նիս դա չի կարող ինքնին վերացնել պահանջների և հնարավորությունների բազային անհամապատասխանությունը, քանի որ, իր հերթին, հետագայում առաջ է բերելու անցանկալի ավելցուկ կամ ահազնացնելու է արդեն եղածը։ Նմանապես ռազմական կառույցները պայմանագրային հիմունքներով պարտավորված են պահել ավելցուկային խմբերի անձանց։ Հարկադրական արձակման մասին որոշումներն անշուշտ կարող են օգտակար լինել նման ավելցուկից ազատվելու գործում, սակայն դրանց կիրառության չարաշահումը (ինքնին լինելով վաս մենեջմենքի ցուցիչ) կարող է ձևավորել անբարենպաստ և բարյալող մքննորդ, քանի որ նշանակում է պայմանագրի չեղարկում։ Այս պրակտիկան, իր հերթին, կարող է ավելի հեռուն գնացող հետևանքներ ունենալ զինված ուժերի կամավորների հավաքագրման/զորակոչման և ծառայության մեջ զինվորականների պահպանման գործընթացի համար ընդհանրապես։ Ուստի պակասուրդի և ավելցուկի այս տեսակները պարզապես ներդրվում են ուժային կառույց առանց մաղթի ուրվագծում հավելյալ փոփոխություններ կատարելու։ Ասվածից հետևում է, որ նարդումի առաջարկի մենեջմենքի հարակա խնդիր-մարտահրավերը խրախուսական այնպիսի կառույցների մշակումն է, որոնք կձևավորեն մաղթի արդյունավետ ուրվագիծ, որը կկարողանա ապահովել պահանջվող և կանխատեսվող ուժային բաշխվածությունների գործնական համընկնումը։ Դրան հասնելն այնքան էլ հեշտ չէ, քանի որ ինչպես վերը նշվեց մարդումի կառավարիչները պետք է հաջողությանը իրագործեն և ուժային կառույցի պլանավորման պահանջները, որոնք զնալով ինքնին ավելի փոփոխական են դառնում զինված ուժերի կողմից նորանոր տիպի գործողություններում մասնակցելու անհրաժեշտության հետևանքով, և միևնույն ժամանակ կարողանան գործ ունենալ ռազմական կարողությունների նոր տիպերի հետ։ Գծապատկեր 3-ում պատկերված օրինակի համատեքստում սա նշանակում է, որ ժամանակի ընթաց-

քում վոփոխվում և տեղաշարժվում է ինքը՝ կարիքների բաշխումը, ինչը ցույց է տալիս, որ մարդումի առաջարկի մենեջմենթը, ներքին բոլոր մարտահրավերներով հանդերձ, պետք է կարողանա նաև հաջողությամբ գործ ունենալ այսօրինակ շարժվող «քիրախի» հետ:

### **Զինված ուժերի համալրումը**

Մարդի չափի պատշաճ զնահատականների և ժամանակի յուրաքանչյուր պահի ուժային կառուցում մարդումի պահանջմունքների գործակիցների ու դրանց վոփոխության դիմաֆիլիայի առկայության պարագայում թվում է, թե իմնական մակարդակում հավաքագրման թվաքանակների գնահատումը պետք է որ բավականին պարզ խնդիր լինի<sup>133</sup>: Խսկապես, պաշտպանության նախարարությունները հավաքագրման թվաքանակների հարցում իրենց պահանջմունքները գնահատելու նպատակով լայնորեն կիրառում են բազմաբնույթ մաքենատիկական մոդելները<sup>134</sup>: Այսուհանդերձ, ինչպես արդեն ըննարկվել է, նմանատիպ կանխատեսումներն ուղղակիորեն կախված են մաղրի նախապես ընդունված չափաքանակներից, և չնայած վերջիններս իմնականում կայուն են դրանք կարող են նաև փոխվել ի պատասխան ծառայողական պայմաններում որոշակի տեղաշարժերի ներառյալ ոռջիկները և այլ արտոնությունները, կրթական հեռանկարները, զինծառայության ընթացքում տեղաբաշխումների հերթափոխի հաճախակիությունը, հատկապես եթե դրանք համեմատության մեջ են դրվում այլ տեղերում հնարավոր հեռանկարների հետ կամ ավելի ընդհանուր երկրի տցիալ-տնտեսական կացության ավելի համընդգրկուն և անկանխատեսելի փոփոխությունների արդյունքում: Որպես հետևանք հավաքագրման թվաքանակների մաքենատիկորեն գեներացվող կանխատեսումները պետք է մեկնարանվեն ռազմական մարդումի մենեջմենթի ոլորտում կուտակված փորձառության անուր հենքի վրա:

Թվաքանակի և պահանջվող որակավորումների որոշումից հետո մարդումի առաջարկի մենեջմենթի գործընթացի հաջորդ քայլը պահանջվող նոր հավաքագրումների աղբյուրի վերաբերյալ որոշման կայացումն է: Խոչը պոտենցիալ աղբյուրներ են զորակոչը (այնտեղ, որ դա գոյություն ունի) և ավելի հաճախ մարտական պատրաստություն չունեցող մարդկային ռեսուրսի հավաքագրումը կամավորության սկզբունքով: Երկու դեպքում էլ հավաքագրման

<sup>133</sup> Կայուն հավասարակշռության վիճակում զինված ուժերի զինվորագրման պահանջմունքների տարրական թվաքանության և հաշվարկի համար տես John T. Warner և Beth J. Asch, “The Economics of Military Manpower,” հետևյալ ձեռնարկում՝ *Handbook of Defense Economics*, Volume 1, ed. Keith Hartley and Todd Sandler (Amsterdam: Elsevier, 1996), 350:

<sup>134</sup> Ռազմական մարդումի պահանակումն մոդելների կիրառության համակողմանի, սակայն որոշակի վաղեմություն ունեցող ակնարկի համար տես David L. Jaquette, Gary R. Nelson, and R.J Smith, *An Analytical Review of Personnel Models in the Department of Defense*, Report prepared for Defense Advanced Research Projects Agency (Santa Monica: Rand, 1977):

ոեզերվլ գերազանցապես բաղկացած է ավագ դպրոցի շրջանավարտներից։ Հազվադեալ օգտագործվող, սակայն պոտենցիալ հավաքագրման մեկ այլ աղյուր կարող է լինել մարտական մասնակի պատրաստություն ունեցող մարդումը, որն ընդգրկում է ռազմական ծառայության համար անհրաժեշտ (սովորաբար՝ տեխնիկական կամ վարչական հմտությունների տիրապետող), սակայն մարտական պատրաստություն չունեցող անձանց, ինչպես նաև անհրաժեշտ հմտություններ ունեցող և նախկինում ռազմական ծառայություն անցած անհատներին։ Վերջին խումբը կարող է ներառել նաև նրանց, ովքեր տվյալ պահին գտնվում են ծառայության մեջ, սակայն կարող են վերապատրաստվել և փոխադրվել մասնագիտական գրադադարթյան այլ խմբեր։

Պետության կողմից գորակոչ՝ որպես մարտական պատրաստություն չունեցող մարդումի խոշոր աղյուրի օգտագործումը կախված է գործոնների լայն շրջանակից, այդ թվում՝ տվյալ երկրի մշակութային ավանդույթներից, պատմությունից և, հետապոր է, աշխարհագրական-ռազմավարական դիրքից, հատկապես եթե տարածքային պաշտպանության համար այն մորիլիցացման ենթակա մեծաքանակ ուժերի կարիք ունի։ Այդուհանդեռձ, դա կախված է նաև ծախսի առումով գորակոչային և կամավորական ուժերի համեմատական արդյունավետության վերաբերյալ առկա ընկալումներից։ Չորակոչի հիմնական և կարևորագույն առավելությունը մարդկային ռեսուրսի հուսալի ուղղերվի համեմատաբար էժան հասանելիությունն է (առնվազն ռազմական կառույցի համար)։ Կան նաև այլ ակիհայտ առավելություններ։ Օրինակ՝ այն կարող է պետականաշինության արդյունավետ գործիք լինել, հասարակությունը համախմբող դերակատարություն ունենալ, մասնավորապես՝ համատեղ գոհողության զաղափարի շահագործնամք։ Երիտասարդներին զինվորական ծառայության հետ կապված հեռանկարներին ու հետարարություններին ծանրացնելու միջոցով՝ պրոֆեսիոնալ զինութիւն ձեռքում գորակոչ նաև կարող է ծառայել որպես հավաքագրման արդյունավետ գործիք<sup>135</sup>։

Պարտադիր գորակոչը, սակայն, ունի նաև իր թերությունները։ Առաջին հերթին, գորակոչային զինծառայողները կարող են բոլորովին ողևորված չլինել ապագա ռազմական ծառայությամբ (իհարկե, միշտ չէ, որ դա այդպես է), ուստի չդառնալ բարձր արդյունավետությամբ աչքի ընկնող զինվորներ։ Մեկ այլ հանգամանք կապված է պարտադիր զինծառայության համեմատաբար կարճ ժամանակահատվածի հետ։ ամենայն հավանականությամբ, այն բավարար չէ ժամանակակից պատերազմավարության բարդությունների սպառազինության բարձրտեխնոլոգիական համակարգերի գործածության և տեխնիկական սպասարկման, զինված ուժերում ներկայումս պահանջված

<sup>135</sup> Գերհարդ Քյումմելը կարծիք է հայտնում, որ վերջին տարիներին Գերմանիայում կադրային զինծառայողների և բազմաթիվ կարձա- և երկարաժամկետ պայմանագրային զինծառայողների մոտ կեսը հավաքագրվել է գորակոչային զինծառայողներից։ Տե՛ս Gerhard Kümmerl, “An All-volunteer Force in Disguise. On the Transformation of the Armed Forces in Germany,” հետևյալ ձեռնարկում՝ *Service to Country: Personnel Policy and the Transformation of Western Militaries*.

առաքելությունների բազմազան տիպերի հետ գործ ունենալու և դրանցում անհրաժեշտ հմտություններ ու փորձառություն ձեռք բերելու համար։ Ավելին՝ զորակոչի արդյունքում առաջացող կաղըերի շարունակական դարձապոլույթը դժվարին և թանկարժեք պահանջներ է առաջ բերում մարտական պատրաստության վրա ծախսվող ռեսուրսների առումով՝ էական կասկածներ առաջացնելով զորակոչի որպես մարդումի իսկապես էժան աղբյուր լինելու վերաբերյալ պնդումների հանդեպ։ Բյուջետային առումով, սակայն, մարդումն առաջին հայացքի համեմատաբար էժան է բվում։ Բայց այստեղ մեկ այլ հանգամանք կա. բյուջեները հաշվի չեն առնում և չեն արթևրում մարդկանց հնարավորությունների իրական կորուստները և ամենից առաջ տնտեսության մնացյալ ոլորտների համար մարդկային ռեսուրսների իրական արժեքի և դրանց այլընտրանքային օգտագործման պարագան։ Այս կորուստների ողջ բեռք տանում են իրենք զորակոչային զինծառայողները։ Վերջիններս, ըստ էության, կարծես հարկ են մուծում պետությանը. դա տարրերությունն է նրա, ինչ երիտասարդները կարող էին վաստակել քաղաքացիական տնտեսության մեջ աշխատելիս, և այն, սովորաբար չափազանց ցածր, գումարների, որոնք նրանց վճարվում են որպես զորակոչային զինծառայողների<sup>136</sup>:

Զորակոչը կարող է նաև վճասակար լինել ուժային կառույցի արդյունավետ կազմակերպման համար։ Առաջ և, ըստ երևույթին, էժան աշխատումի առկայութամբ, օրինակ, զինվորական դեկավարությունը շատ քիչ դրդապատճառներ կունենա արդիականացման ոլորտությամբ քայլեր կատարելու համար և հակած կիննի որակը քանակով փոխատեղելուն։ Որպես հետևանք՝ այդ միտումը կարող է հանգեցնել բավականին մեծաքանակ և ջանքերի տեսանկյունից անարդյունավետ, աշխատատար զինված ուժերի ստեղծման, մինչեւ ժամանակակից զինուժի զարգացումն ակնհայտաբար ուղղված է դեպի առավել փոքր, արդյունավետ և շարժունակ ուժերի ստեղծումը։ Գիտակցելով հանդերձ դրա հնարավոր հասարակական նպաստը՝ ակներև է, որ զորակոչային

<sup>136</sup> Կամավոր և պարտադիր հավաքագրման ստցիալական արժողության ավելի համակողմանի համեմատությունը պետք է հաշվի առնի հարկերի չափի վրա յուրաքանչյուր ձևի ունեցած ազդեցության հարաբերությունը. Քանի որ ենթադրվում է, որ մարդումի առաջարկի կորը (կամ կամավոր զինվորագրումը) աճելու է, դա նշանակում է, որ յուրաքանչյուր նոր զինվորագրվածի վրա կատարվող սահմանային ծախսը գերազանցելու է նրան վճարվող ռոճիկը և, հետևաբար, կամավոր համալրմամբ ուժային կառույցի ընդհանուր ծախսերը և հարկային կորուստների հակագումարը աճելու են եքաղնենցիալ կերպով։ Ինչևէ, քամի որ պարտադիր հիմունքներով ծառայության դեպքում առաջարկի կորի ուրվագիծը հորիզոնական է, հավելյալ անձնակազմի ներառման սահմանային ծախսը միևնույն մակարդակի է, ինչ զորակոչային զինծառայողի ռոճիկը։ Ուստի պարտադիր հիմունքներով համալրվող զինված ուժերի ընդհանուր ծախսերը և կորուստներն աճելու են միայն գծայնորեն։ Որպես արդյունք միևնույն թվաքանակի ուժի համար հավաքագրման կամավոր հիմքը նախատեսում է ավելի բարձր հանրագումարային կորուստներ, քան պարտադիրը։ Տե՛ս Asch, Hosek, and Warner, “New Economics of Manpower in the Post-Cold War Era,” 1122.

ծառայությունն անհամատեղելի է մարտական գործողությունների իրականացման արդի պահանջների, ինչպես նաև ժամանակակից տնտեսությունների ու հասարակական իրողությունների միտումների և պարտադրանքների հետ։ Կարելի է ենթադրել, որ ռազմական մարդումի կարիքները բավարարող գերադասելի լուծումները պիտի ընթանան կամավոր զինվորագրման ուղղությամբ՝ նախատակ ունենալով կազմավորելու հմուտ, փորձառու և ծառայության ավելի երկարաժամկետ հիմունքներով գործող արհեստավարժ զինուժ։

Կամավորության կարգով զինվորագրվելու որոշումը չափազանց անճնական է և կայացվում է ավելի հեռուն գնացող մտորումների արդյունքում, քան սովորական աշխատանքի ընտրության դեպքում է։ Երիտասարդը, օրինակ, կարող է նման ընտրություն կատարել այն դեպքում, եթե էությամբ հակաված է արկածախնդրության կամ պարզապես ցանկանում է կյանքում ինչ-որ այլ բան անել նախքան քաղաքացիական զրադաշտության կամ հետազա կրթության մասին որոշում ընդունելը։ Նա կարող է տողորված լինել հայրենասիրությամբ, ռազմական կարիերայի հեղինակությամբ, զինվորական միջավայրի եղբայրության կամ ընկերակցության ոգով, իսկ որոշ դեպքերում՝ անգամ կարգավարժ կյանքի գրավիչ կողմերով։ Սակայն նման որոշումը հենված է լինելու նաև վարձատրության և հավելյալ արտոնությունների, մարտական պատրաստության, կրթական հեռանկարների, աշխատանքային պայմանների և բոշակային իրավունքների վերաբերյալ հասկանալի նկատառումների վրա։ Հաշվի առնելով զինվորական կյանքի նրբությունները՝ որոշակի հետաքրքրություն պետք է ցուցաբերվի անհատական և ընտանելիան օժանդակության ծրագրերին՝ ներառյալ զինծառայողներին բնակարանով, դպրոցական, բժշկական և հանգստի պայմաններով ապահովելու հնարավորությունները։ Զինվորագրվելու որոշումը, անշուշտ, պայմանավորվելու է նաև զինվորական ծառայության հասկանալի թերությունների կամ բարդությունների վերաբերյալ նկատառումներով՝ ներառյալ կարգապահությունը, անհատական ազատության սահմանափակումը, անհարմատությունները, տեղաբաշխման վայրի փոփոխության հաճախակիրությունը և կյանքի ու առողջության համար հնարավոր վտանգների բարձր մակարդակը։

Զինվորագրման այս առավելություններն ու թերությունները բաղդատվելու են պոտենցիալ զինվորագիրներին հասանելի այլընտրանքների հնարավորությունների նույնատիպ գործուների հետ։ Համապատասխան զրակոչային տարիքախմբում այլընտրանքը հիմնականում կամ կրթության շարունակությունն է, կամ քաղաքացիական տնտեսության մեջ վճարվող աշխատանքի անցնելը։ Տարիքային այս խնդիր համար կրթությունը շարունակելը սովորաբար կապվում է ավագ դպրոցն ավարտելու հետ։ Երիտասարդն այնուհետև կարող է կամ ընդունվել աշխատանքի, կամ շարունակել բարձրագույն ուսումը, կամ հնարավոր է անգամ՝ զինվորագրվել։ Նրանք, ովքեր ավագ դպրոց չեն ավարտում, հետազայում կամ մուտք են գործում քաղաքացիական աշխատաշուկա, կամ զինվորագրվում են։ Եվ չնայած այս խումբը պատ-

մականորեն եղել է զինվորական հավաքագրման կարևորագույն աղբյուրը, ներկայումս, հաշվի առնելով ռազմական կառուցում ուսյալ մարդումի աճող պահանջարկը, այն այլս չի կարող նատակարարել բավարար չափով որակյալ թեկնածուների: Բոլոր դեպքերում, հաշվի առնելով այն հնարավոր բարձր եկամուտը, որը բուհավարտը կարող է ունենալ տնտեսության մասնավոր ոլորտում, գրակոչային տարիքախմբի անհատների՝ գնալով աճող մի հատված, ավարտելով ավագ դպրոցը, նախապատվորյունը տալիս է կրթության ավելի բարձր աստիճանի անցնելուն, քան աշխատաշուկա մուտք գործելուն կամ զինվորագրվելուն: Կրթությունը շարունակողները միևնույն ժամանակ ձեռք են բերում այնպիսի որակափորումներ, որոնք նրանց էլ ավելի պակաս հակված են դարձնում ուսումնառությունն ավարտելու հետո զինվորագրվելու մտքին, հատկապես, եթե դրա վարձավճարը հազվադեպ է մրցունակ համալսարանավարտների տիպական եկամուտների նկատմամբ: Այս բարդությունը վերջին տարիներին սկսել է զուգակցվել ռազմական և քաղաքացիական տեխնոլոգիաների (հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների) շարունակ աճող զուգամիտմամբ, ինչի արդյունքում զինված ուժերում սկսել է պահանջարկ ձևավորվել այն միևնույն տիպի անձանց համար, ովքեր բարձր «արժեք» ունեն նաև քաղաքացիական աշխատաշուկաներում:

Ուազմական մարդումի առաջարկը, լինի այն պարտադիր զինապարտության թե կամավորության կարգով, պայմանավորված է նաև պետության բնակչության քվաքանակով և տարիքային քաշխմամբ: Բազմաթիվ երկրներ այդ բաշխումներում ներկայումս զգալի փոփոխություններ են գրանցում: Ծնելիության նվազման և կյանքի սպասվող միջին տևողության աճի հետ մեկտեղ երկրների բնակչությունները ծերանում են և որոշ դեպքերում անգամ սկսում նվազել: Մեծածավալ ներգաղթ ունեցող երկրների համար, ինչպիսիք են ԱՍՆ-ը, Կանադան և Ավստրալիան, դա պակաս կարևոր խնդիր է, սակայն մի շարք պետություններ, դրանց թվում՝ հատկապես եվրոպական երկրները, մարդկանց քվաքանակի անկում են գրանցում այն տարիքախմբերում, որոնցից սովորաբար և իրականացվում է հավաքագրումը: Եթե հաշվի առնենք նաև այն, որ այդ նվազող տարիքախմբերի մի նշանակալի հատված առողջական կամ այլ պատճառներով պիտանի չի լինելու զինծառայության համար, որ դրա անընդհատ աճող մի հատված շարունակելու է հետավարտական ուսումը, և որ տնտեսության այլ ճյուղերը մրցակցության մեջ են միևնույն որակափորումներով անձանց ներգրավելու համար, ապա քավարար քվաքանակի որակյալ անհատների հավաքագրման մարտահրավերն ակնհայտ է դառնում: Խնդիրն ավելի է բարդանում, եթե զինված ուժերը հանրության շրջանում գնալով ավելի քիչ են դիտարկվում որպես ազգային կյանքի կարևոր հաստատություն կամ, ավելի վատ՝ առանձապես բարձր պատիվ չեն վայելում:

Առաջին հայացքից կարող է բվալ, թե ժողովրդագրական տեղաշարժերի կազմը գրահավաքների հետ չափազանցված է, հատկապես եթե ժամանակակից միտումներն ուղղված են դեպի ավելի փոքրաքանակ և մասնազիտա-

ցած ուժերը, որոնցում կադրերի դարձապտույտը, ըստ երևոյթին, նշանակալի իրեն նվազելու է: Տարեկան համալրման հարցում պահանջները, հետևաբար, ևս նվազելու են կազմելով, ըստ սպասումների, համապատասխան զորակոչային տարիքախմբի շատ փոքր, հնարավոր է անգամ շարունակ փոքրացող մասը, ուստի արդյունքում նաև լինելու են հետ կառավարվող: Այս մոտեցումը, սակայն, մոլորություն է: Հենվելով գերմանական տվյալների վրա՝ քննենք մի ենթադրական իրադրություն: Պայմանով, որ համապատասխան զորակոչային տարիքախմբը կարելի է մոտարկել 15-24 տարեկանների վիճակագրական խմբին, տեսնում ենք, որ Գերմանիան անկում է գրանցելու իր նախնական զորակոչային բազայում՝ 2008 թվականի 9.4 միլիոնից ցուցանիշից 2025 թվականին հասնելով 7.6 միլիոնի, իսկ 2050 թվականին՝ 7.1 միլիոնի<sup>137</sup>: Եթե սույն պատկերացում կազմելու համար ենթադրենք, որ Գերմանիան աստիճանաբար անցում է կատարելու ամբողջապես կամավորական գինուժի՝ պահպանելով դրա ներկայիս 250,000 թվաքանակը, ապա զորացրման համար ընդունելով 10 % չափավոր գործակից (այն կարող է լինել նաև ավելի բարձր) տեսնում ենք, որ հաջող հավաքագրման իրականացման համար 2050 թվականին Գերմանիան համապատասխան զորակոչային տարիքախմբի 1000 անձի հաշվով կարիք կունենա մոտ 3.5 մարդու: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ Եվրոպայի համար ընդունելի գործակիցը 1000-ից մոտ 2-ն է<sup>138</sup>: Այդ թվով կիրառելով Գերմանիայի տարիքախմբի նկատմամբ գինուժի առավելագույն հասանելի թվաքանակի համար ստանում ենք միայն 142,000 արժեքը:

Հավաքագրման նմանօրինակ մարտահրավերը լուծելու համար անհրաժեշտ է զուգակցել այն ջանքերը, որոնք ուղղված են մի կողմից՝ ուազմական փորձառության գործում պատեհներական գինվորագիրների ոչ նյութական շահերն օգտագործելուն, մյուս կողմից՝ քաղաքացիական զբաղվածության կամ ուսման շարունակության դեպքում սպասվող ավելի բարձր վճարներն ու մնացյալ առավելությունները փոխհատուցելու ունակ բավարար վարձատրությամբ և հավելյալ առավելությունները (այդ թվում՝ հնարավոր կրթական և աշխատանքային հեռանկարները) նրանց ապահովելուն: Այլ կերպ ասած՝ գինված ուժերը պետք է ապահովեն մարդկանց կողմից իրենց որպես ցանկալի գործառությունները: Դա անելու վճռորոշ պահը երիտասարդների կողմից ավագ դպրոցն ավարտելու ժամանակահատվածն է: Այն պահից, եթե նրանք հաստատվեն իրենց քաղաքացիական աշխատանքում կամ անցնեն համալսարանական ուսումնառության, շատ քերը կամավոր գինվորագրվելու պատրաստակամություն կհայտնեն: Այս վճռորոշ պահին կամավորներին

<sup>137</sup> United States, Census Bureau, Population Division, *International Data Base*, [www.census.gov/ipc/www/idb/country/gmportal.html#DI](http://www.census.gov/ipc/www/idb/country/gmportal.html#DI):

<sup>138</sup> Rickard Sandell, “Coping with Demography in NATO Europe. Military Recruitment in Times of Population Decline,” *Service to Country: Personnel Policy and the Transformation of Western Militaries*, 78: Միայնալ Թագավորության, Նիդերլանդների և Իսպանիայի համար Սանդելլ նշում է ելքի 11-13 տոկոս գործակից:

կարելի է շահագրգռել հետաձգելու ապագա ուսումը՝ խոստումով, որ զինծառայության ավարտին նրանց կտրվի կրթական նպաստ կամ կառաջարկվի հետպայմանագրային աշխատանք հատուկ նախնական վերապատրաստմամբ և որևէ ողբերում աշխատանքային փորձառության ձեռքբերմամբ։ Կամավորներին և հատկապես սպաների թեկնածուներին, ի պատասխան ապագա ծառայության առումով նրանց հայտնած պատրաստակամության, ըստ բոլոր մողելների պետք է անմիջապես առաջարկվեն բուհական մակարդակի կրթական ծրագրեր քաղաքացիական կամ ուազմական բուհերում։ Որպես խրախուսական այլ միջոցներ կարող են դիտվել գինվորագրվելու դիմաց դրամական պարզեատրությունը, նախնական պատրաստության ավարտից հետո նշանակման ընտրության իրավունքը կամ ծառայության ցանկախ վայրի/միավորի վերաբերյալ երաշխիքների տրամադրումը։ Սակայն այնտեղ, որ ուազմական համակարգը չի վայելում հանրության լայն համակրանքը կամ նույնիսկ պատիվը, հավաքագրումը պետք է ավելի հեռուն գնացող քայլեր ձեռնարկի, քան օրավիշ վարձատրության և կրթական ծրագրերի առաջարկների սուկ մշակումն է։ Այն պետք է ուղեկցվի հանրային տեղեկատվական և գովազդային ընդարձակ արշավներով, որոնք կշեշտեն գինուժի կարևորությունը և կներկայացնեն այն ամենաշահեկան լույսի ներքո։

### **Չինված ուժերի թվաքանակի և կառուցվածքի պահպանումը**

Նախնական հավաքագրումից հետո մարդումի մենեջմենթի մյուս խոշոր խնդիրը համապատասխան թվաքանակի և որակափորումների մակարդակի պահպանման միջոցով ուժային կառույցի կայուն գործունեության ապահովումն է, ինչն առաջին հերթին նշանակում է մաղթի գործակիցների այնպիսի արդյունավետ մենեջմենթ, որի օգնությամբ կոչումների, մասնագիտական գրադադարյան, որակափորման և փորձառության յուրաքանչյուր կարգախնդրում հնարավոր կլինի խոսափել անձնակազմի թե՛ պակասուրդից և թե՛ ավելցուկից։ Մարդումի կառավարիչները պետք է իրենց ուշադրությունը շարունակ կենտրոնացնեն այնպիսի խրախուսական ուազմավարությունների մշակման և կիրառման վրա, որոնք պակասուրդի առկայության դեպքում խրանում են կառույցում գինծառայողների պահպանումը, իսկ ավելցուկի պարագայում՝ վաղաժամ արձակումը։ Իդեալական պայմաններում դրա բանալին կարող է լինել մարդումի այնպիսի մենեջմենթի համակարգը, որն ունակ է արագ և արդյունավետ կերպով միմյանց հետ հաշտեցնելու անհատի և ուազմական հաստատության շահերն ու նախապատվությունները։ Նման համակարգում ոռճիկով, վերստին գինվորագրվելու համար պարզեատրությամբ և հավելյալ արտոնություններով, այդ թվում՝ ուազմական ծառայության ոչ նյութական առավելություններով (որոնք համեմատելի են այլուր իրեն հասանելիների հետ) անհատին կարելի է շահագրգռել իր ընտրությունը կատարելու հօգուտ գինվորական ծառայության շարունակության, և դա կարելի է անել այնքան ժամանակ, որքան նրա ծառայությունները դեռ պահանջված են։ Եթե այդ ծա-

ուայությունների կարիքն այլս չինի, նրան պետք է շահագրգռել արձակվելու զինվորական ծառայությունից նյութական և այլ առավելությունների հատկացման միջոցով՝ ներառյալ աշխատանքից ազատվելու վերջնահաշվի գումարի հատկացումը։ Արդյունավետ լինելու համար նման համակարգը պետք է կառուցված լինի այնպես, որ անհատի աշխատանքային բարձր արդյունավետությունը գնահատելու և պարզեցնելու միջոցով պահպանի միայն ամենաբանիմաց անհատներին, իսկ պակաս բանիմացներին շահագրգռի կամավոր հիմունքներով հեռանալու։

Սարդի չափի կառավարումը գլխավորապես կախված է հավաքագրման հիմքերի գործող կազմակերպական ձևից։ Կառույցի մի տեսակը, օրինակ, կարող է նախատեսել զինվորագրման հաստատագրված և նորոգվող շրջափուլերի շարք, յուրաքանչյուրը երեք կամ հինգ տարով, որոնք ճգփում են սկզբնական հավաքագրումից մինչև պաշտոնաբողոքյուն։ Մեկ այլ տեսակը կարող է ունենալ նախնական զինվորագրման մեկ կամ երկու կարճ պարբերաշրջան, կրկին, օրինակ, երեք կամ հինգ տարով, որոնք հերթագայվում են այնպիսի մի ծառայաշրջանով, որում զինծառայողի հետ կնքվում է անժամկետ ծառայության պայմանագիր, որով, սակայն, նա ունի ցանկացած պահի հրաժարական տալու իրավունք (սովորաբար ծանուցման նվազագույն ժամանակից հետո): Անշուշտ, նման կառույցների խառը տեսակները ևս կարող են կողք կողքի գոյություն ունենալ։ Կառույցի անդամների մի մասը կարող է ներգրավված լինել պարբերական վերագինվորագրման մոդելում, մյուսը անդրոշ կամ «անժամկետ»։ Յուրաքանչյուր մոդելն ունի իր առավելություններն ու թերությունները թե՛ ռազմականն կառույցի և թե՛ անհատի համար։ Պարբերաբար նորոգվող պայմանագրով մոդելում, ռազմական կառույցի համար ակներև առավելությունն այն է, որ վերջինն հնարավորություն ունի զրեթե շարունակական հիմքով ձևավորելու ուժի բաշխումն ըստ տարիքի, մասնագիտական զբաղվածության, փորձառության, որակավորման, կոչման և կատարողական մակարդակի իրեն վերապահելով վերագինվորագրման հայտերի վավերացման կամ մերժման իրավունք։ Սակայն այդ առավելությունը, մյուս կողմից, կախված է պայմանագիրը նորոգելու անհատների պատրաստակամությունից։ Այնպիսի ոչ նյութական մոդելները, ինչպիսիք են հայրենասիրությունը, ընդհանուր նպատակի գիտակցությունը, խմբային համերաշխությունը, դեկավար կարողությունների գործադրման հեռանկարները կամ պարզապես ռազմական գործին կոչված լինելու զգացումը, միարժեքորեն շարունակում են կարևորագույն դեր կատարել ռազմական կարիքերան շարունակելու անհատի շահագրգռությունների ցանկում։ Այսպիսով՝ երիտասարդին ռազմական ոլորտ ներգրավելու գործում կառավարչական կարևոր գործիքներ են ինչպես վերստին զինվորագրվելու համար պարզեցները, այնպես էլ ապագա հաստիքի, ծառայության վայրի, կրթության և մարտական պատրաստության հեռանկարների վերաբերյալ փոխազդումային պայմանագրվածությունները։

Անհատի համար պարբերաբար նորոգվող պայմանագրային մոդե-

լի ակնհայտ թերությունն այն է, որ վերջինս միշտ չէ վստահ աշխատանքի ապահովության, այսինքն՝ պայմանագրի երկարաձգման հարցում: Երիտասարդների համար դա գուցելու ամենակարևորը չէ, բայց ծառայության տարիներին զուգընթաց այս գործոնն աստիճանաբար որոշակի կարևորություն է ձեռք բերում<sup>139</sup>: Աշխատանքը կորցնելու ոիսկի առկայության դեպքում հետաքրքր է այնպիսի իրավիճակ, երբ բարձր որակավորում ունեցող անհատները հրաժարվեն վերազինվորագրումից հօգուտ այլ տեղերում ավելի ապահով և երկարաժամկետ աշխատանքի: Անժամկետ մողելը չի հարուցում նման խնդիրներ: Զինծառայողների համար վերջինիս առավելությունը կանխատեսելիությունն է: Դրա առանձնակի թերությունը, սակայն, այն է, որ նման մողելը կարող է հանգեցնել ծառայության մեջ այնպիսի անհատների մնալուն, որոնց կատարողական մակարդակը ցածր է, և որոնք կարող են զինծառայությունից արձակվել միայն մեծագույն դժվարությամբ: Սիա այս գործոնների հարուցած առավելությունների և թերությունների մանրակրկիտ քննությունից էլ կախված է լինելու համալրման տեսակի ընտրությունը: Շատ ավելի օպտիմալ է բվում այնպիսի մողելը, որն առանձին անհատի համար նախատեսում է, օրինակ, երկու սկզբնական պայմանագրային շրջափուլ, որոնցից առաջինը կարճը, ստորագրվում է, դիցուք, երկու կամ երեք տարով: Այս շրջափուլի ավարտից հետո անհատներն ընտրողաբար կարող են վերաներգավոկել ավելի երկարատև երկրորդ հետամյա ծառայության մեջ, իսկ այնուհետև, կրկին ընտրողաբար անժամկետ: Այսպիսի համակարգը ռազմական կառույցին բավարար ժամանակ է հատկացնում ամենահեռանկարային անհատներին առանձնացնելու համար և միևնույն ժամանակ, անժամկետ աշխատանք առաջարկելու հնարավորություն ունենալու շնորհիվ, դյուրացնում զինված ուժերում նրանց պահելու խնդիրը: Մարդուի մենեջմենթի առումով դրա առավելությունն այն է, որ այսպիսի սկզբունքը կարող է տրամադրել անհրաժեշտ ճկունություն առկա հմտություններն ու թվաքանակները ռազմական կառույցի կարիքների հետ համապատասխանեցնելու գործում:

Վերոբերյալ ենթադրական օրինակով խուելով՝ ծառայության 1-14 տարիների կարևոր ժամանակահատվածում պակասուրդի լրացման խնդիրը կարելի է լուծել ծառայության տվյալ ժամանակահատվածում վարձատրության և այլ արտոնությունների ավելացման հաշվին: Ծառայության 15-25 տարիների միջև ընկած ժամանակահատվածում առաջացող ավելցուկը, որն ուղղա-

<sup>139</sup> Իտալիայում զինուժի պարտադիր համալրման սկզբունքից կամավորի անցնելիս սկզբնական շրջանում զգալի բարդություններ գրանցվեցին հավաքագրման հարցում՝ պայմանավորված այն մտահղությամբ, որ նախնական եռամյա ծառայաշրջանից հետո ոչ բոլոր անհատներին կարող են ռազմական կառույցում կամ կառավարական այլ գերատեսչություններում մշտական աշխատանքի երաշխիքներ տրվել: Օրենսդրական հետագա բարեփոխմամբ նախատեսվեց մշտական աշխատանք տրամադրել բոլոր այն անձանց, ովքեր սկզբնական մեկամյա կամավոր փորձաշրջանն ավարտելուց հետո ընտրության արդյունքում կփոխադրվեն երկրորդ քառամյա ծառայաշրջան: Տե՛ս Villani, “Recruitment in a Period of Transformation: The Italian Experience.”

կիորեն պայմանավորված է թոշակի իրավունք վաստակելու համար նախապես ընդունված 25-ամյա պարտադիր ծառայության շեմի գոյությամբ, կարելի է նվազեցնել կամ կրճատել այդ շեմը հասցնելով, ասենք, 15 կամ ավելի պակաս տարփա հընթացս նվազեցնելով նաև համապատասխան թոշակի չափը։ Հաջորդ՝ թոշակային տարիքի հասնելու ժամանակահատվածում զինուժի նախատեսված թվաքանակը չգերազանցելու նկատառումով՝ կարելի է կիրառել նաև ոռջիկի չափի ճշգրտման որոշակի մեխանիզմներ։ Եթե զինծառայողի թոշակը հատկացվում է պատահագրական թոշակային ֆոնդից, այլ ոչ թե տվյալ զինծառայողի կողմից կատարված կուտակային մուծումներից (այսինքն՝ իրականում վարձատրության պայմանական հետաձգման մի ձև է), ապա այն սակավ արդյունավետ կլինի ավելի երիտասարդ անհատներին կառուցում պահելու գործում, քանի որ նրանք, ի տարբերություն ավելի տարեց անձանց, ըստ երևոյթին՝ ավելի հակված են ներկայում, քանի ապագայում եկամուտ ստանալուն։ Նույնը, սակայն, չափազանց կարեոր է այն անձանց համար, ովքեր մոտենում են թոշակային իրավունքի վաստակման շեմին։ Վերջիններիս համար դա լուրջ դրդապատճառ է մինչև տվյալ շեմին հասնելը զինծառայության մեջ մնալու, իսկ այնուհետև՝ անմիջապես արձակվելու համար։ Արդյունարար իրադրության պատկերը Գծապատկեր 3-ում ներկայացված է որպես զինծառայողների թվաքանակի անընդհատության կտրուկ խախտում։ Տվյալ պարագայում մաղթի ուրվագծի կառավարման նախընտրելի լուծումը կարող է լինել թոշակի նմանատիպ տեսակի իսպառ վերացումը և առկա ֆինանսական միջոցների վերաբաշխումը՝ հօգուտ ոռնիկների ավելացման (հատկապես՝ ավելի երիտասարդների համար)։ Դա կարող է խթանել, որ երիտասարդները շարունակեն ծառայությունը, և միաժամանակ ազատ ֆինանսական միջոցներ գոյացնել թոշակի այլընտրանքային համակարգերի ձևավորման համար ներառյալ նաև կարճ ժամանակարկներացով կուտակային սխեմաները, որոնք, իրենց հերթին, ավելի քիչ են ունակ աղավաղելու մաղթի գործակիցները։

Տարիքից և ծառայության տևողությունից բացի՝ զինվորական ծառայության մեջ մնալու համար հավելյալ խթան կարող է լինել նաև անհատի կարգավիճակը՝ որպես ընտանիքի կերպարողի։ Զինծառայողի վարձատրությունը և հավելյալ արտոնությունները, օրինակ, կարող են կախված լինել անունական կարգավիճակից և ընտանիքում երեխաների թվից։ Այդ նպատակով հատկացվող հավելավճարներն ու արտոնությունները թեև ուղղակիորեն չեն առնչվում խրախուսական այն միջոցների թվին, որոնք ուղղված են զինված ուժերում նրա մնալուն և կատարողականության բարձրացմանը, այնուամենայնիվ, ընտանիքի կերպարող զինծառայողների կողմից դրանք ավելի շատ կարող են ընկալվել որպես զինծառայությունը շարունակելու լրացուցիչ դրապատճառներ, քան նրանց, ովքեր չունեն ընտանեկան պարտականություններ։ Բացի դրանից՝ հավելյալ վճարներ և արտոնություններ ստանալու շահագրգութածությունն ինքնին կարող է անհատներին դրդել ընտանիք կազմելու

կամ ավելացնելու ընտանիքի անդամների թվաքանակը։ Գումարային արդյունքը կլինի այն, որ զինված ուժերը, ի տարբերություն գործունեության մնացյալ ոլորտների, աստիճանաբար լրջորեն կծանրաբեռնվեն կախյալ անձանցով (այսինքն զինծառայողների ընտանիքների սպասարկվող անդամներով)։ Ռազմական կառույցի համար սա նշանակում է զինծառայողների ընտանիքների տեղաբաշխման նոր վայր տեղափոխության, երեխաների կրթության և ընտանիքի աջակցության այլ ծառայությունների հետ առնչվող հավելյալ ծախսեր։ Այսպիսով՝ զինծառայողների ընտանիքների աջակցության իրական ծախըն ավելին է, քան կազմում են պարզապես ընտանիքի ապահովման համար տրվող հավելավճարները։ Ընտանեկան նման հանգամանքներով զինված ուժերի ծանրաբեռնվածության ավելացումն իր հերթին կարող է խնդիրներ հարուցել կառույցի մարտական պատրաստականության առումով։ Դա նաև որոշակի իմաստով անհավասար մոտեցման տարրեր է ներմուծում ընտանիք ունեցողների և ընտանիք չունեցողների նկատմամբ։ Մյուս կողմից զինվորական կյանքի առանձինահատուկ հանգամանքներն ակնհայտորեն անհրաժեշտ են դարձնում ընտանիքի աջակցության արդյունավետ ծրագրերի առկայությունը որպես զինվորական ծառայության ներգրավման և դրանում մնալու գործում խթանիչ միջոցառումների համալիրի մի բաղադրիչ։ Հարկ է նշել, սակայն, որ աշխարհի մի շարք երկրների զինված ուժերում ընտանեկան դրությանն առնչվող նման միջոցառումներ չեն նախատեսված, քանի որ դրանցում այդօրինակ ծախսերը համարվում են չիհմնավորված։

Աջուշտ, մարդ չափը պայմանավորված է ոչ միայն վարձատրությամբ կամ սոսկ ապագա բռջակն ապահովելու նկատառումներով։ Նմանատիպ (եթե ոչ ավելի մեծ) կարևորություն ունեն արդարությանն առնչվող խնդիրները։ Իրապես դրակյալ և արհեստավարժ անհատների պահպանումը զինծառայության մեջ հնարավոր է միայն այն դեպքում, եթե աշխատանքային միջավայրում աներկրայորեն գերիշխում է արդարությունը, որի պարագայում նույն կարգավիճակն ունեցող զինծառայողներն արժանանում են հավասար վերաբերունքի, եթե խնդրո առարկա են պաշտոնեական առաջխաղացման հետանկարների, անհատական աջակցության, կարգապահական և աշխատանքային տեղաբաշխման հարցերը։ Դրան հետամուտ լինելը երբեմն շատ բարդ է, հատկապես եթե խոսքը աշխատանքային նշանակումների կամ տեղաբաշխումների մասին է, քանի որ դրանց մի մասը երբեմն կարող է ավելի հրապություն լինել, քան մնացածները։ Պարզ է, որ այն զինծառայողները, ովքեր գոփ չեն լինի իրենց նշանակման պայմաններից, պակաս շահագրգուվածություն կունենան բարձր կատարողականություն ցուցաբերելու կամ անգամ զինծառայությունը շարունակելու համար։ Ինչպես և նախորդ դեպքում, նման խնդրի նկատմամբ մոտեցումները պետք է հենվեն անհատի և ռազմական կառույցի պահանջների համապատասխանեցման վորձի վրա, ինչի իրագործման ուղիներից մեկը կարող է լինել ֆինանսական և ոչ ֆինանսական խթանների առաջարկումը (հետագա ավելի լավ նշանակման հեռանկար, ավելի երկա-

բատև արձակուրդ և այլն) պակաս գրավիչ պայմաններով ծառայության տեսակները կամավորներով համարելու նպատակով: Դա անելու ճշգրիտ ձև է աճուրդային համակարգի նմանակի ներդրումը, որը պոտենցիալ կամավորներին հնարավորություն կընձեռի նշելու ցանկալի հավելավճարը այս կամ այն դժվար լրացվող հաստիքներում ներգրավվելու համար: Համեմատելով անհատի որակավորումները և մնացյալ հանգամանքները (ծառայաշրջանի ավարտին մնացած ժամանակահատվածը և այլն) մարդումի կառավարիչները պետք է ընտրեն նրան, ով առաջարկել է նվազագույն պահանջներ: Սա առնվազն տեսականորեն պետք է բավարարի և՝ ծառայության տվյալ տեսակի, և անհատի պահանջնունքները: Այս կերպ հաշվի առնելով զինծառայողների անհատական նախապատվությունները և նրանց հնարավորություն տալով ազդելու սեփական նշանակումների և առաջիսաղացման վրա ուժային ամքողջ կառույցում լուրջ ներուժ է գոյանում զինծառայողների անհրաժեշտ թվաքանակների պահպանման և անհատական շահադրդման խրանման հետ կապված վիճակը բարելավելու համար<sup>140</sup>:

Զինվորական ծառայությունն անհատի համար գրավիչ դարձնելով հանդերձ մարդումի մենեջմենթի համակարգը պետք է անցնի համարժեք թվաքանակները պահպանելու պարզ խնդիրից անդին: Այն պետք է նաև երաշխավորի ռազմական համակարգի շահերի ապահարկման միշտ ընթացքը կարողանա համակարգում պահել պատշաճ հմտությունների տիրապետող անհրաժեշտ անձանց: Պայմանագրի նորոգումը, այսպիսով, պետք է առաջարկվի որպես արտոնություն, այլ ոչ թե իրավունք ռազմական համակարգին հատակ հնարավորություն տալով ազատվելու անարդյունավետ և անօգուտ անհատներից: Վերազինվորագրվել պետք է բույլատրվի միայն նրանց, ովքեր ցուցաբերել են բանինացություն և կատարողական բարձր նակարդակ: Ծառայողական առաջիսաղացման համակարգը ևս պետք է գործի նման հիմքով՝ ընտրելով նրանց, ովքեր ցուցաբերել են իրենց ունակությունները, անձնական որակները, ավելի բարձր կոչման համար անհրաժեշտ ներուժը, և մերժելով նրանց, ովքեր նման հատկանիշներ չեն ցուցաբերել:

## Հարացույցի փոփոխություններ. փակ համակարգի բացում

Մարդի մենեջմենթի ինչպիսի ռազմավարություններ էլ որդեգրվեն, դրանք գրաղվածության տարրեր կարգախնդերի համար պետք է կիրառվեն տարրեր, իսկ երբեմն՝ զգալիորեն տարրեր կերպով, քանի որ գոյություն ունեցող յուրաքանչյուր կարգ կարող է ունենալ մաղթի սեփական, յուրահատուկ ուրվագիծը: Մարտական գործողություններում ձեռք բերված փորձառությունը, օրինակ, ռազմական համակարգից դուրս այլընտրանքային կիրառություն

<sup>140</sup> ԱՄՆ-ի զինված ուժերը բազմից կիրառել են աճուրդային բազմաթիվ նման համակարգեր և որոշակի փորձ են կուտակել այդ ասպարեզում: Տե՛ս Donald J. Cymrot and Michael L. Hansen, “Overhauling Enlisted Careers and Compensation,” in *Filling the Ranks*, 137-142:

գրեթե չունի: Հետևաբար սպասելի է, որ մարտական գործողությունների վարման մասնագետների կողմից պայմանագիրը նորոգելու մասին որոշումները մեծապես կախված չեն լինի ռազմական և քաղաքացիական տնտեսությունների կողմից առաջարկվող եկամտի տարրերություններից: Սակայն այլ ոլորտների աշխատակիցների համար, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները, տեխնիկական անձնակազմը, օդաչուները և ճարտարագետները, որոնց հնտություններն առավել պահանջված և զնահատված են գրաղվածության այլընտրանքային ոլորտներում, սպավող եկամտի տարրերությունները կարող են բավականին ծանրակշիռ լինել պայմանագրի նորոգման վերաբերյալ որոշում կայացնելու հարցում: Ռազմական հմտություններն ունեն նաև արդյունավետության տարրեր կենսաշրջաններ: Մարտական գործողությունների իրականացման համար անհրաժեշտ հնտությունները, որոնք զգալի մասով հենվում են երիտասարդության և կորովի վրա, արդյունավետ կարող են լինել գուցե 10 կամ 15 տարի, մինչդեռ տեխնիկական ոլորտի մասնագետները, ճարտարագետներն ու բժիշկներն արդյունավետ կերպով կարող են աշխատել մի քանի տասնամյակ: Ասվածից բխում է բավականին խոր հակասություն: Մի կողմից՝ տնտեսավետ ամենացածր գնահատվող (այլընտրանքային աշխատանքի հեռանկարի իմաստով միայն) հմտություններ ունեցող անհատները ռազմական համակարգը քողնելու համար շատ քիչ դրդապատճառներ կունենան, հատկապես եթե նրանց ֆիզիկական կարողությունների բարձրակետն արդեն անցյալում է, իսկ արդյունավետությունը գնալով ընկնում է: Մյուս կողմից լավագույն այլընտրանքային հեռանկարներ ունեցողները, որոնք միաժամանակ նաև նրանք են, ում կարողություններն արդյունավետության ամենաերկար կենսաշրջանն ունեն, ուստիև ում ներդրումը ռազմական կառույցում ամենաարժեքավորն է, սակայ դրդապատճառներ կունենան մնալու համար, եթե, իհարկե, քաղաքացիական գրաղվածության համեմատ նրանց վարձատրությունը և մնացյալ արտոնությունները զգալիորեն բարձր չեն: Թոշակային կարծր համակարգը և վարձատրության ոչ ճկուն սանդղակները, այսպիսով, կարող են նվազեցնել ռազմական կառույցի կարողությունները մասնավոր ոլորտում գրավիչ այլընտրանքներ ունեցող մարդկանց համար մրցավագրում: Նմանորակ մասնագետների անհրաժեշտ թվաքանակների և ուժային ամրող կառույցում գրաղվածության հաշվեկշիռ պահպանումը պահանջում է քաղաքացիական ոլորտի համարժեք աշխատատեղերի հետ մրցակցելու ունակ ոռջիկների և այլ արտոնությունների առկայություն<sup>141</sup>: Ռազմական կառույցում վարձատրությունների և արտոնությունների միատիպ փաքեր կիրառելը, հետևաբար ընդամենը կնշանակի

<sup>141</sup> Դա կնշանակի զինծառայողների վարձատրության մակարդակներում նշանակայի տարրերակածության ներմուծումը ուղղված քաղաքացիական ոլորտի վարձատրության բազմազան սինէմանների հետ ավելի ստույգ համապատասխանության ստեղծմանը: Իր հերթին, դա բացասական ազդեցություն կարող է ունենալ զինված ուժերի անձնակազմի բարոյական կացության վրա, քանի որ համատեղ վարձատրության և համատեղ գրհողությունների սկզբունքը զինվորական բարոյականության էական բաղադրիչներից է:

քիչ պահանջված և պակաս որակյալ մասնագետների անհիմն բարձր վարձատրություն և, անշուշտ, կխորացնի անհավասարակշռությունը զբաղվածության և տարիքային կարգերում՝ խթանելով նմանների մնալը կառույցում :

Ակներևաբար, այս հակասության լուծումը ռազմական ուժերում վարձատրության և անձնակազմի կառավարման ավելի ճկուն համակարգերի ներդրումն է: Ընդհանուր առմամբ դա պահանջում է զինվորական ծառայողական մողելների ավելի մեծ տարբերակում, որը կընդգրկի հավաքագրման, մարտական պատրաստության, տեղաբաշխման, աստիճանաշնորհման և ծառայողական պայմանների ամբողջ սպեկտրը՝ այդ թվում նաև թոշակային պայմանները, վարձատրությունը և արտոնությունները: Այս առիթով պետք է նշել, որ նոյնիսկ առաջնային մակարդակում կամավորները ընդունելիս մարտական պատրաստության և վարձատրության սանդղակները պետք է որոշվեն՝ համաձայն հավաքագրվածների հմտությունների և կրթամակարդակի: Մասնագիտական զրադաշնության տարաբնույթ կատեգորիաները պետք է ունենան նշանակման տարբեր ժամկետներ, աստիճանաշնորհման տարբեր չափանիշներ և տարբեր հարկադիր թոշակային տարիք: Վարձատրության համակարգերը պետք է տարբերակվեն մասնավոր ոլորտի նմանատիպ աշխատատեղների վարձատրությունների մակարդակների համաձայն: Թոշակային սանդղակները, օրինակ, կարող են այնպես կառուցվել, որ մարտական գործողությունների իրականացման մասնագետները գերադասեն թոշակի անցնել ավելի վաղ տարիքում, քան մյուս մասնագետները:

Սիևոյն ժամանակ, ծառայողական մողելների տարբերակումը պետք է հնարավորինս մոտենա քաղաքացիական տնտեսության մեջ կիրառվող համարժեքներին: Այլ կերպ ասած՝ ռազմական համակարգում ծառայողական մողելները պետք է ավելի ուղղահայաց տարբերակում ունենան, սակայն ավելի հորիզոնական կերպով ինտեգրված լինեն պետության ընդհանուր տնտեսական համակարգում: Օրինակ՝ տեխնիկական մասնագետը և օդաչուն պետք է ունենան միագանայն տարբեր առաջնաբացի ուղի և ծառայողական պայմաններ (ինչը որոշ ինաստով այդպես էլ կա), սակայն այդ տարբերություններն այժմ պետք է արտացոլեն նաև քաղաքացիական տնտեսության մեջ նրանց համապատասխան այլնտրանքային հեռանկարները: Մարտական ստորաբաժանումների անդամների դեպքում, որոնք քաղաքացիական հատվածի զբաղվածությունների ցանկում թեկուց մոտավոր սակավարիվ համարժեքներ ունեն, ծառայողական մողելները պետք է շեշտը դնեն վճարային, աստիճանաշնորհման և թոշակային այնպիսի սիստեմների վրա, որոնք կրավարակեն կրտսեր մակարդակներում կաղըների արագ դարձապտույտի պահանջը, և միևնույն ժամանակ կիրանեն առավել բանիմաց զինծառայողների առաջխաղացումը հրամանատարական շղթայով:

Ծառայողական առաջխաղացման ուղղությունը վերաձևաման նման անհրաժեշտությունը ծագում է արդի հասարակության ժողովրդագրական, տնտեսական և ռազմավարական իրողությունների փոփոխությունից հատկապես գլորա-

լիզացման արդյունքում մարդու կենսագործունեության ոլորտում առաջացող սահուն փոփոխությունների և ապակենտրոնացման համատեքստում։ Ապակենտրոնացումը որոշակի իմաստով հակասում է կենտրոնացված աստիճանակարգի, միանձնյա ղեկավարության և ստանդարտացման վերաբերյալ ուղղմական ավանդական պատկերացումներին, սակայն մարտական գործողությունների իրականացման մերուները, հատկապես ներկայիս ցանցային օպերացիաների պայմաններում, նույնպես զարգանում են ճիշտ այդ ուղղությամբ։ Այնուամենայնիվ, ծառայողական առաջխաղացման լայնորեն տարբերակված մողելների ու վարձատրության և արտոնությունների համակարգի ներդրման անհրաժեշտությունը դժվարին մարտահրավերներ է առաջադրում ուղղմական մարդուի մենաշննիքին։ Առաջինը՝ միևնույն աստիճանակարգի համար այն զգալիորեն նաևնազիտական գրադադարության տարրեր կատեգրիաների վճարային սանդղակներում ավելի մեծ ճկունություն և տարբերակվածություն է պահանջում, քան ուղղմական կառույցներում ավանդաբար եղել է։ Նման տարբերակվածության բացակայությունը, սակայն, իր ժամանակին կարևոր նպատակի է ծառայել։ Ուղղմական կազմակերպությունները, ամբողջ շեշտը դնելով ենթակայության շղթայի (աստիճանակարգի) վրա, ըստ էության նպատակ են ունեցել ձևավորելու թիմային արդյունք ցուցաբերող կառույց։ Ուղղմական ոլորտի ներկայիս բարեփոխումները շարունակում և զարգացնում են այդ միտումը։ Մինչդեռ թիմային արդյունքի էությունը համագործակցությունն է, այլ ոչ մրցակցությունը։ Ուստի հնարավոր է, որ թիմային աշխատանք պահանջող գործունեության ոլորտում տարբերակված խթանիչ միջոցառումների ներդրումը, թեև ուղղված թիմի արդյունավետության բարելավմանը, այլ ոչ անհատական շահին, լրջորեն խարարի ներքին համագործակցությունը։

Նմանապես՝ տարբեր կարգախմբերում վճարային սանդղակների տարբերակումը կարող է հանգեցնել այնպիսի մի դրության, որի դեպքում ցածր կոչումներով նաևնազիտները, օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ օդանավերի տեխնիկական սպասարկման ոլորտներում, ստանան ավելի բարձր վարձատրություն, քան ավելի բարձր կոշմանք, սակայն տեխնիկական ավելի ցածր գիտելիքիներով նրանց վերադասները։

Այս երևույթը կարող է խնդրայութել հրամանատարական հեղինակության և պատասխանատվության ողջ էությունը, ինչի գոյությունն ու անհրաժեշտությունը ուղղմական կառույցի գործունեության անհրաժեշտ հիմքն են։ Սա հատկապես խնդրահարույց է նաև այն պատճառով, որ ի հավելումն դրա՝ ավելի բարձր վարձատրվող աշխատակիցը հաճախ կարող է պարզապես հեռանալ ուղղմական ոլորտից և հեշտորեն ավելի բարձր վարձատրվող աշխատանք գտնել։ Հարկավոր են այնպիսի մեխանիզմներ, որոնք կտարանացան վարձատրության սանդղակները զինվորական կոչումից ու հեղինակությունից առանց վերջինների բնույթը խեղաքյուրելու։ Զեռնարկությունները և բարձրագույն ուսումնական հաստատությունները լայնորեն կիրառում են

այդ գործելակերպը՝ համարելով այն բարձրորակ մասնագետներին գրավելու գործում անհրաժեշտ մենեջմենթի «արագ կողմնորոշման» մեկ այլ ցուցիչ աշխատաշուկաների գնալով աճող ճկունության այս դարաշրջանում։ Եթե զինված ուժերը չփորձեն գտնել համանան մոտեցումներ, ապա չեն կարողանա համաքայլ ընթանալ կառույցը բարձրտեխնոլոգիական ռազմատեխնիկայով հագեցնելու իրենց հավակնությունների հետ։

Ռազմական ոլորտի ծառայողական մոդելների տարրերակման և այդ մոդելները քաղաքացիական տնտեսության համարժեքների հետ մերձեցնելու վերաբերյալ որույրը հիմնովին վերափոխում է ավանդական պատկերացումները զինված ուժերի որպես փակ համակարգի վերաբերյալ։ Նման մերձեցումից մինչև փոխադարձ փոխարինելիություն մեկ քայլ է. դա կարող է նպաստել ռազմական կառույցն ավելի բաց համակարգ դարձնելուն այնպիսին, որը հնարավորություն կստեղծի քաղաքացիական և ռազմական ոլորտների միջև կաղըերի ավելի սահուն և հավասարազոր շարժի համար։ Նման համակարգում մարդումի կառավարիչներն իրավունք կրնենան լրացնելու անձնակազմի պակասուրդը՝ պահանջված որակավորումներով անհատներին հավաքագրելով անմիջապես քաղաքացիական աշխատաշուկայից։ Համապատասխանաբար՝ պետության ներքին իրավիճակի կայունության պայմաններում ծառայության մեջ գտնվող անձինք ավելի ազատ կլինեն ըստ ցանկության տեղափոխվելու քաղաքացիական աշխատանքի կամ շարունակելու իրենց ուսումը, և դա չի խանգարի հետագայում սեփական որոշմանք նրանց կրկին զինվորագրվելուն։

Նման հայեցակարգը զինված ուժերին հստակ առավելություններ է ընձեռում։ Նախ, եթե արդի մարտական գործողությունների իրականացման հարցում անհրաժեշտ բարձրտեխնոլոգիական ոլորտների որակյալ մասնագետների ձեռքբերման հարցում քաղաքացիական հատվածի հետ ինտենսիվ մրցակցությունը նախկինում ներկայացվում էր որպես ռազմական կառույցի թերություն, ապա այժմ նույն այդ մրցակցությունը կդառնա համակարգի պոտենցիալ առավելությունը։ Ռազմական և քաղաքացիական ոլորտների միջև անհրաժեշտ հմտությունների շարժի հնարավորության շնորհիվ զինված ուժերը կարող են ավելի մեծ չափով հենվել կողմնակի փոխատեղման տրամադրած առավելությունների վրա։ ‘Դա թույլ կտա արագ լրացնել որակյալ մասնագետների պակասուրդը, ինչը փակ համակարգի պարագայում տարիներ է պահանջում։ Երկրորդ զինված ուժերն այլև ստիպված չեն լինի զգայի միջոցներ ծախսել մասնագետների պատրաստության և կրթության համար ևս, քանի որ այդպիսիք շատ են գործունեության այլ, հատկապես գիտատեխնիկական և փարզական ասպարեզներում։ Անշուշտ, հաշվի առնելով քաղաքացիական արտադրության առաջատար դերը զիտահետազոտական և տեխնոլոգիական մշակումների, հատկապես էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում, որոնք այդքան անհրաժեշտ են ռազմական առկա և ապագա կարիքների համար, գերադասելի են, որ փորձագիտական

զիտելիքները ձեռք բերվեն զինված ուժերի համակարգից դուրս: Հավագոյնն է թվում, ուստի, այն սխեման, որում ծառայողական առաջնորդացի մոդելները թույլ են տալիս ուղղական ծառայության և քաղաքացիական գրադարձության միջև պարբերական անցումներ: Դա կարող է լինել անհատի նախապատվորյունները և զինված ուժերի կարիքները համաձայնեցնելու խնդրի լուծման միակ և լավագոյն տարրերակը<sup>142</sup>:

Չնայած այս տեսական առավելություններին՝ ուղղական և քաղաքացիական գրադարձության կառույցների շարունակական ինտեգրացիան դժվարին գործնական խնդիրներ է առաջ բերում, հատկապես՝ կարիքուայի մենեջմենտում և առաջնորդության հետ կապված խնդիրներում: Ցանկալի հմտությունների տեր, սակայն ուղղական փորձառություն չունեցող կանագորին ինչպես պետք է ներառել կոչումների աստիճանակարգ: Ինչպես պիտի սպան դառնա զեներալ, եթե զինվորական կարիքեան սկսել է որպես զնուապես: Է՛լ ավելի կարևոր է այն, որ աճող այս ինտեգրացիան կարծես սպառնալիորեն քայլայում է զինվորական բարոյականության և ընկերակցության այն կարևորագոյն հասկացությունները, որոնք ապահովում են մարտական գործողությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կարողությունը: Ինչպես կարող է, օրինակ, տարաքնույթ մասնագետներից բաղկացած բանակն աշխատել որպես արդյունավետ և նիասնական թիմ:

Այս խնդիրների մեծագոյն մասը, սակայն, լուծելի է: Առաջին հերթին, մասնագիտական տարրեր կարգերը պետք է ունենան զինվորական ծառայողական մոդելների տարրերակվածություն, այդ թվում՝ հավասար պայմաններով մուտքի կամ վերաներգրավվման բույլատրելիության տարրեր աստիճաններ և ձևեր: Միևնույն ժամանակ, դրանցից յուրաքանչյուրի ըեաքում պետք է նախատեսվի որոշակի նվազագոյն վերապատրաստում ուղղված նոր ընդունված և մարտական պատրաստության ցանկացած մակարդակով կանագորներին ուղղմական կառույցում զինվորական բարոյականության հետ ծանուածություն-ներկայացություն:

<sup>142</sup> Ըստ Ռուբների և Աշի՝ ավանդական մոդելում ծառայողական առաջնորդացի ձևերի կարող է նաև բացասական ազրեցություն ունենալ ուղղմական ոլորտում վարձատրության և աստիճանաշնորհման համակարգի համար: Արգելելով հավասար պայմաններով տնտեսության բարաքացիական ոլորտից մասնագետների մուտքը զինված ուժեր՝ ուղղմական գործն արդեն իսկ ընդունելության մակարդակում կապահնջի ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետների ռեգերվ, ինչը զինված ուժերի համար ապագայում կապահովի բարձրորակ մասնագետների բավարար առկայություն: Քանի որ ծառայության սկզբնական շրջանում մարդու իրական ընդունակությունները շոշափելի չեն, բարձր ունակիւթյունների տեր անհատներին աշխատանքի ներգրավելու միակ ուղին զինծառայության առաջնային փուլում վարձատրության բարձրացումն է, ինչպես նաև կամավոր զինվորագրվեցանկացողների նկատմամբ ներկայացվող պահանջների սանդրակի կատարելագործումը: Հավասար պայմաններով մուտքի հանդեպ սահմանափակությունները շատացարող կազմակերպությունների համեմատությամբ՝ այս մոդելը կարծրություն է հաղորդում ուղղմական կառույցում վարձատրության սինմաներին: Տե՛ս Beth J. Asch and John T. Warner, “A Theory of Compensation and Personnel Policy in Hierarchical Organizations with Application to the United States Military,” *Journal of Labor Economics* 19, no. 3 (July 2001): 523–562.

լուն: Այսուհետև, «ռազմաքաղաքացիական առաջխաղացման» տարրեր փուլերում նրանք պիտի մասնակցեն խմբային վերապատրաստումների, որպեսզի, որպես օպերատիվ թիմի անդամ, կարողանան ապահովել իրենց հմտությունների արդյունավետ գործարկումը: Կանոնավոր հիմքով վերառության դասընթացներ պետք է նախատեսվեն նաև ռազմական կառույց վերստին մուտք գործող անհատների համար: Դրանք ևս պետք է տարրերակվեն ըստ մասնագիտական գրադարձության կարգախմբերի: Բացի այդ, կառույցի ներսում պետք է լայնորեն ողջունելի լինեն վերանշանակումները և կադրերի շարունակական տեղափոխությունը մի գրադարձությունից մեկ այլի, քանի որ անհատին զինված ուժերում վերապատրաստման հնարավորություն ընձեռող այդօրինակ գործելակերպերը միտված են ռազմական կառույցի և անհատի նախասիրությունների համաձայնեցմանը: Հարկ է հնարավորություններ նախատեսել նաև սեփական ցանկությամբ քաղաքացիական որևէ հաստատությունում զինծառայողի՝ աշխատանքի տեղավորվելու կամ վերապատրաստում անցնելու համար: Նմանօրինակ վերարակավորումը հավելյալ առավելություններ է ընձեռում զինված ուժերի գիտելիքային քազայի ընդլայնման և, հետևաբար, նրա ճկունության բարելավման համար:

Թվում է, թե այս ամենն ավելի կնեղացնի դեպի քաղաքացիական հասվածի մարտական գործողությունների վարման մասնագետների փոխադրման հնարավորություններն ու շրջանակները: Պետք է նկատի ունենալ սակայն, որ ռազմական գործողությունների վերաբերյալ պատկերացումներն անընդիած փոխվում են: Չնայած բուն մարտական գործողություններն ակներևարար շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում, զինվրականները գնալով ավելի են ներգրավվում կայունության վերականգնման կամ հետևողների կատարության առաքելություններում, իսկ վերջիններիս բնույթը պահանջում է քաղաքացիական գերատեսչությունների հետ քայլերի համաձայնեցում և համագործակցություն: Ռազմական կառույցի համար դրա զգայի առավելությունն այն է, որ այս կերպ (թույլատրելի դարձնելով մարտական գործողությունների վարման մասնագետների կողմնակի շարժը միևնույն խնդրի շրջանակներում ներգրավված և նմանատիպ աշխատանք իրականացնող ռազմական և քաղաքացիական գերատեսչությունների միջև) նրանց հնարավորություն կընձեռվի ընդլայնելու իրենց փորձառությունը: Բացի այդ, հաշվի առնելով, որ այդ ավելի բարդ ուժային դասավորություններում օպերատիվ կառավարումը շարունակելու է մնալ մարտական գործողությունների ավազ կոչումներով մասնագետների պատասխանատվությունը՝ վերջիններիս շարժը ռազմական կառույցի և միջազգային կազմակերպությունների, մասնավոր բիզնեսի ու պետական իշխանության դեկավար պաշտոնների միջև հսկայական արդյունք կունենա նրանց կառավարչական հմտությունների գարգացման գործում:

Պահեստային ուժերը կարևոր, թերևս անգամ վճռական դեր կարող են ունենալ մարդումի այնպիսի համակարգերի ներդրման հարցում, որոնք խրախուսում են ռազմական և քաղաքացիական գրադարձությունների միաձու-

**լումը:** Անցած տասնամյակների ընթացքում բազմաթիվ պետություններում նշանակալիորեն փոխվել է պահեստային ուժերի դերը: Ավանդաբար դրանք կազմում էին այն նորիլիզացիոն հիմքը, որը գերազանցապես անհրաժեշտ է եղել երկրի տարածքային պաշտպանությունն ապահովելու համար, իսկ պրոֆեսիոնալ հիմքով ձևավորվող կանոնավոր գինված ուժերի ստորաբաժանումներն ապահովում էին մարտական պատրաստության, վարչական և հրամանատարական այն մեխանիզմները, որոնք անհրաժեշտ էին նորիլիզացիոն այս ռեզերվի կազմակերպման, համալրման և տեղաբաշխման համար: Ինչիցեւ, գլոբալիզացման արդի դարաշրջանում, երբ պետությունների մեծամասնության անվտանգությունը պայմանավորված է միջազգային կայունության մակարդակով, քիչ երկրներ են մնացել, որոնց համար տարածքային պաշտպանությունը շարունակում է մնալ ուսումնական ոլորտի մտահոգության խոշորագույն ասպարեզը: Արդյունքում՝ պահեստային ուժերը վերածվել են՝ տարաբնույթ հմտություններում մասնագիտացած անձնակազմի, այդ բվում՝ մարտական գործողությունների վարման մասնագետների ռեզերվի, որից մարդիկ հարկ եղած դեպքում կարող են հրավիրվել կանոնավոր գինված ուժեր՝ համապատասխան պակասուրդը լրացնելու նպատակով: Կան դեպքեր, երբ դա տեղի է ունենում որոշակի ստորաբաժանումների հենքի վրա, սակայն պահեստային ստորաբաժանումների և միավորների համատեղ և բարձր մակարդակով վարժանքների փորձը բացառում է նման հնարավորությունը, հատկապես մարտական միավորների դեպքում: Ինչևէ, որքան էլ տարօրինակ հնչի, ներ մասնագիտական ուղղվածության պահեստային ուժերը, որոնք ներգրավված են քաղաքացիական գրադաժության ոլորտում, կարող են չափազանց արժեքավոր ռեսուրս լինել իրական մարտական գործությունների պայմաններում<sup>143</sup>:

Պահեստային ուժերի անդամները համատեղում են քաղաքացիական գրադաժությունը ոչ լրիվ դրույքով ուսումնական գրադաժության հետ այնպես, որ կարողանան և ընդհատել իրենց քաղաքացիական մասնագիտությամբ գործունեությունը, և միևնույն ժամանակ շարունակել անդամակցել ուսումնական կառույցին: Նման անդամակցությունը թոյլ է տալիս պահպանել հիմնական մարտական պատրաստության վիճակը և շարունակաբար գտնվել գինվորական բարոյականության ու կարգապահության միջնորդությունը: Ավելին դա նրանց հնարավորություն է ընձեռում գինված ուժերի կարիքներին համապատասխան գարգացնելու սեփական որոշակի հմտությունները: Այսպիսով՝ այն անհատները, ովքեր իրենց առաջընթացի մոդելը կառուցելիս ցանկություն կունենան հերթագայելու քաղաքացիական աշխատանքը և ուսումնական ծառայությունը, որպես դրա իրագործման լավագույն միջոց կարող են տեսնել ներգրավումը պահեստային ուժերում: Պահեստային ուժերի ստորաբաժանումներն ու միավորները, ըստ այդմ, դառնում են որոշակի իմաստով փոխատեղման կայաններ,

<sup>143</sup> ԱՄՆ-ի ծովային հետևակի՝ Իրաքի տարածքում գինծառայություն անցնող անդամների հետ նամակագրությունից:

որոնք ավելի դյուրին են դարձնում մասնագետների կողմնակի մուտքն ու ելքը կանոնավոր ուժերի կազմ։ Այն կարող է նաև իրեալական մեխանիզմ լինել այնպիսի կանավորների ընտրության և հավաքագրման համար, որոնք և տիրապետում են զինված ուժերի պլանավորված կառույցին անհրաժեշտ հմտությունների, և միաժամանակ ցանկություն ու հնարավորություն ունեն ազատորեն հերթագայելու քաղաքացիական և ռազմական գրադաժության ոլորտները։ Այդպիսով՝ պահեստային ուժերը էական քաղադիչ են դաշնում մասնագիտական հմտությունների շուկայում ռազմական կառույցն ավելի մրցունակ դարձնելու և, միևնույն ժամանակ, դրանում գործող մարդումի մենեջմենթին անհրաժեշտ ճկունություն հաղորդելու հարցում։

Երբ հավաքագրման և մարտական պատրաստության ավանդական ձևերը չունեն օպերատիվության բարձր աստիճան, այլ ուղիներ կան նման ճկունության հասնելու համար։ Դրա հնարավորություններից մեկը զինվորական գործառույթների կատարման համար (հատկապես՝ վարչական և նման այլ՝ ոչ մարտական գրադաժության կարգերում) քաղաքացիական ծառայողների ներգրավումն է կարճաժամկետ կամ մշտական հիմքով։ Այս այլընտրանքի ակնհայտ առավելությունը անհրաժեշտ ունակությունների և փորձի տիրապետող անձանց ռազմական կառույցում արագորեն ներառելու հնարավորությունն է՝ պայմանով, սակայն, որ պետական ծառայության ընդունման բյուրոկրատական մեխանիզմներն արդյունավետ են գործում։ Մյուս կողմից դրա թերությունն այն է, որ այդպիսիք արագ են գտնվում միայն այն պատճառով, որ սովորաբար չեն տիրապետում անհրաժեշտ մարտական հմտությունների ու գիտելիքների և չեն կարող սեղմ ժամկետներում հարմարվել զինվորական միջավայրի պայմաններին։ Ինակե, եթե տվյալ հաստիքի համար վերոնշյալ հատկանիշներն էական չեն, ապա կարելի է այդ հաստիքն առհասարակ «քաղաքացիականացնել»։

Վերջին տարիներին լայն տարածում գտած մեկ այլ տարբերակ է արտաքին՝ քաղաքացիական ձեռնարկություններին ռազմական կազմակերպության ոչ թե առանձին հաստիքների, այլ որոշակի գործառույթների հանձնարարությունը պայմանագրային հիմքով։ Նման այլընտրանքի որոշիչ առավելությունը որոշակի օպերացիայի շրջանակներում առաջադրված խնդիրները ճիշտ ժամանակին և արդյունավետ կերպով իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և փորձի տրամադրման և օգտագործման հնարավորությունն է։ Այս կարող է նաև պակաս ծախսատար լինել ինչ-ոք ծառայությունների իրագործման համար սեփական ուժերի՝ ռազմական կամ քաղաքացիական աշխատողների ներգրավման համեմատությամբ, քանի որ կապալառու կազմակերպությունները մրցակցությունում հաղթելու և պայմանագիր ստանալու համար աշխատում են հնարավորինս իշեցնել իրենց ծառայությունների արժեքը՝ առաջարկելով նվազագույն ծախսային պայմաններ։ Մինենույն ժամանակ, նրանք սովորաբար ունակ են գործարկելու տնտեսական այնպիսի մեխանիզմներ, որոնք հասանելի չեն պետական իշխանութ-

յուններին: Ավելին՝ կապալառուները հնարավորություն ունեն նաև օգտագործելու քաղաքացիական աշխատողների ծառայություններից ավելի էժան աշխատումի աղբյուներ: Ինչևէ, երբ պահանջվող հմտություններով օժտված մասնագետների պակասը մեծ է, կամ ծառայությունները պետք է մատուցվեն կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում, կապալառուները հնարավորություն ունեն անհրաժեշտ ճկունություն ցուցաբերելու աշխատակիցների վարձատրության նկատմամբ և ունակ են վճարելու ավելին, քան դա կարող է իրեն բույլ տալ կառավարական ապարատը: Անշուշտ, կապալառուների ներգրավումը մի շարք հարցեր է բարձրացնում՝ ներառյալ պատվերի իրականացման ընթացքի վերահսկման դժվարությունները, ինչպես նաև հանգամանքների փոփոխության դեպքում՝ պայմանագրի կետերը վերանայելու հետ կապված խնդիրները: Մեկ այլ կարևոր գործոն է վստահելիության հանգամանքը, մասնավորապես այն դեպքերում, երբ վտանգավոր իրավիճակների առկայությամբ քաղաքացիական կապալառուները կարող են հրաժարվել իրենց ուղղակի պարտականությունների կատարումից, ինչի համար, ի տարրերություն զինվորականների, նրանք կարող են կրել բացառապես ֆինանսական պատասխանատվություն: Խնդիրների մյուս շրջանակը կապված է քաղաքացիական կապալառուների իրավական կարգավիճակի հետ, ինչը կարող է զգալիորեն սահմանափակել այն ծառայությունների ցանկը, որոնք այդ կազմակերպություններն իրավունք ունեն մատուցելու ի շահ զինված ուժերի և նրանց հետապնդած խնդիրների: Հաշվի առնելով այդ սահմանափակումները մարդումի մենեշնենքի հարցում որոշակի ճկունություն ապահովելու նկատառումից ելնելով, քաղաքացիական աշխատողների և կապալառուների ներգրավումը և օգտագործումը կարող են դիմուլել միայն որպես ժամանակավոր միջոց: Ավելի տևական միջոցառումները պետք է ներառեն աշխատաշուկայի աճող հոսունության շահագործման մեխանիզմներն ու մշակեն այնպիսի ուղիներ, որոնք պահեստային հզոր ռեզերվի օգտագործման միջոցով ճանապարհ են հարբում հմուտ անհատների ներգրավման համար՝ մասնագիտական ամբողջ կարերայի ընթացքում նրանց առաջարկելով քաղաքացիական և ուղղական ոլորտների միջև ազատ տեղաշարժի տարրերակների ընտրության հնարավորություն:

## Եզրակացություն

Գլոբալացումը և տեխնոլոգիական առաջընթացը հրամայական են դարձնում զինված ուժերի կազմակերպական կառուցվածքների, մարտական գործողությունների վարման մասին պատկերացումների և ռազմատեխնիկայի տեսականու բարեփոխումները: Դրանք պետք է ուղղված լինեն ժամանակակից աշխարհի հնարավոր բոլոր սպառնալիքներին արագ արձագանքելու կարողության և դրանց դիմագրավելու հարցում անհրաժեշտ ճկունության հաստատմանը: Չանչի որ մարդումն այն միջոցներից մեկն է, որոնցով պիտի կյանքի կոչվեն այդ բոլոր բարեփոխումները, կարևոր է, որ մարդումի մենեշ-

մենքը ևս դառնա հավասարապես և՛ ճկուն, և՛ արագ արձագանքող: Ուզմական համակարգերը, սակայն, իրենց բնույթով փակ են: Մեկուսի վիճակում դրանց մեծ ժամանակ է հարկավոր արտաքին հանգանակների փոփոխության ի պատասխան ինքնավերակազմակերպվելու համար: Ասվածը հատկապես վերաբերում է ռազմական կառույցի մարդկային ռեսուրսներում առաջացող պակասուրդի և ավելցուկի վերացմանը (ինչպես թվաքանակի, այնպես էլ որոշակի մասնագիտական հմտությունների առունու): Միևնույն ժամանակ, ներկայիս ժողովրդագրական շարժերը և ռազմական ու քաղաքացիական ոլորտներում հմտությունների պահանջարկի շարունակ աճող գուգամիլուումը թեժացնում են մարդումի միմյանց նման տեսակների ներգրավման հարցում քաղաքացիական և ռազմական կազմակերպությունների միջև մրցակցությունը: Այս երկու գործոնները ավանդական ռազմական մարդումի համակարգի ներքին կառուցվածքային իներտությունը և բարձրորակ մասնագետների համար տարվող արտաքին մրցակցությունը, խոշոր մարտահրավերներ են զինված ուժերի հաջող փոխակերպման իրագործման համար: Դրանք ընդգծում են ուժային մենեջմեներուն նորարարական այնպիսի մտահղացումների անհրաժեշտությունը, որոնք բույլ կտան մարդումի առաջարկն ու շարունակ փոփոխվող պահանջարկը արագ և արդյունավետ կերպով համապատասխանեցնել միմյանց:

Ուզմական ոլորտի փոփոխվող կարիքներին ի պատասխան ռազմական մարդումի կառույցների արագ արձագանքներու կարողությունն ավելացնելու համար անհրաժեշտ է հզրացնել այն խթանից միջոցառումների ցանկը, որոնց միջոցով իրագործվելու են անհատների ներգրավումը և մնալը զինված ուժերում, ինչպես նաև զինծառայությունից կամավոր հիմքով արձակվելը, եթե նրանց ծառայությունների կարիքն այլև չի գուցվում: Դա նշանակում է ստեղծել մարդումի մենեջմեների մի համակարգ, որն օժտված է բավարար ճկունությամբ, որպեսզի կարողանա ձևավորել այնպիսի խթանից պայմաններ, ինչպիսիք են ոռմիկը, բռշակային սանրդակները, կամավոր զինվորագրման և արձակման համար պարզաւորությունները: Այն պետք նախատեսի նաև առաջխաղացման խրախուսական միջոցառումներ և կրթական հնարավորություններ, որոնք իրենց հանրագումարում ունակ կլինեն հաշտեցնելու անհատի և ռազմական կառույցի շահերն ու նախապատվությունները: Դա նաև նշանակում է, որ ռազմական կառույցում վճարվող ոռմիկները և հավելյալ արտոնությունները պետք է մշտական մրցունակ լինեն մասնավոր ոլորտի ոռմիկների և արտոնությունների համանման սանրդակների հետ: Մարդումի մենեջմեների համակարգերը պետք է ավելի նորարարական դառնան այլ հարցերում լավ: Մասնավորապես, պետք է կարողանալ օգտվել աշխատաշուկաների աճող ճկունությունից և ավելի բաց դառնալ ռազմական և քաղաքացիական գրադաժությունների միջև բարձր որակավորմամբ անհատների հավասար պայմաններով տեղափոխության նկատմամբ: Նման փոխներթափականցելիությունը կարելի է ապահովել պահեստային գործերի օգնությամբ, որոնք կարող են լրջորեն խթանել մարդկային

ուսուրսների առաջարկի մենեջմենթի ճկունության աճը: Արդյունքում՝ պահեստային ուժերը դառնում են ռազմական կազմակերպության ընդհանուր բարեփոխման կարևորագույն տարրերից մեկը:

Ինչևէ, մարդումի մենեջմենթը, որքան էլ այն նորարարական լինի, երբեք չի կարող համարվել հաջող, եթե այն ամբողջովին ինտեգրված չէ պաշտպանական ոլորտի պլանավորման և բյուջետավորման գործող համակարգում, որն ապահովում է առկա ռեսուրսների և ռազմական ստրատեգիայի միջև կապը և շարունակաբար վերլուծում ու գնահատում է այդ ռեսուրսների բաշխման և օգտագործման ձևերի համապատասխանությունը ռազմական ստրատեգիայի ներկայացրած պահանջներին: Միայն այսպես է հնարավոր տրամադրնված կերպով սահմանել ռազմական մարդումի պահանջարկը ոչ միայն թվաքանակի, այլև պահանջվող հատկանիշների ողջ սպեկտրի առումով՝ ներառյալ մասնագիտական ունակությունները, տարիքը, փորձառությունը և կոչումները: Ուստի մարդումի պահանջմունքների ներհյուսված շարքի տեսքով, պետք է կատարելապես ներառված լինի պաշտպանական ոլորտի պլանավորման ընդհանուր համակարգում: Ռազմավարական մակարդակում պլանավորման ժամանակ, դիցուք ապագա 20 տարվա կտրվածքով, շեշտը պետք է դնել պլանավորման պարամետրերի ընդհանուր տիրույթը ճիշտ գնահատելու վրա: Ըստ այդմ՝ հարկ է կանխատեսել, թե ապագայի ռազմավարական միջավայրը և գիտատեխնիկական հնարավոր մշակումները ինչ ազդեցություն կունենան հետազայտման հավանաբար պահանջվելիք գինված ուժերի տարրեր տեսակների վրա: Պլանավորման տվյալ փուլում պետք է հաշվի առնել այնպիսի ընդհանուր գործուներ, ինչպիսիք են ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական միջավայրերի կանխատեսվող փոփոխությունների ազդեցությունը ապագա գինված ուժերի հավաքագրման և կազմակերպական ձևի վրա, և թե դրանց ընդառաջ ինչ փոփոխությունների անհրաժեշտություն կարող է ծագել մարդումի մենեջմենթի համակարգերում: Երկարաժամկետ պլանավորումը, դիցուք 10 կամ 15 տարվա ժամկետով, ուժային կառույցների կազմի որոշման, ինչպես նաև ռազմատեխնիկայի ձեռքբերման պլանների վերջնական ձևավորումից հետո մարդումի պահանջարկի համար բավականին ճշգրիտ և անփոփոխ արժեքներ է սահմանելու: Առաջարկի տեսանկյունից մարդումի ապագա կարիքները պետք է համեմատվեն ապագայում անձնակազմի հնարավոր պակասուրդի և ավելցուկի վերաբերյալ առկա կանխատեսումների հետ, ինչից հետո պետք է ձևակերպվեն դրանցում ծագող անհամաշխափությունների մեղմացման կամ վերացման հնարավոր մեխանիզմները: Ընթացիկ պլանավորման դեպքում, դիցուք 3-5 տարվա կտրվածքով, պետք է որոշել տվյալ կառույցի առանձին գրաղվածություններում առաջացող կարիքները, ինչից հետո մարդումի մատակարարման խնդիրն է այդ բացը լրացնելու համար համապատասխան մասնագետների փնտրտուքը: Մարդումի առաջարկի և փոփոխվող կարիքների շարունակական համապատասխանությու-

նը երաշխավորելու համար անհրաժեշտ ճկունության և արագ արձագանք-ման մակարդակի հասնելու համար հարկավոր է, որ մարդումի պլանավորման երեք փուլերը ռազմավարական, երկարաժամկետ և օպերատիվ, տարեկան հիմքով անընդհատ փոխհամաձայնեցվեն<sup>144</sup>:

Ինչպես զինվորական ոլորտի մնացյալ փոխակերպումները, այնպես էլ մարդումի մենեջմենթի բարեփոխումները անխուսափելիորեն կրախվեն այդ ուղու վրա կանգնած քաղաքական և կազմակերպական խոչընդոտների: Անշուշտ, փոփոխության ներհատուկ բնույթն է մշտապես բնական հակագուեցուրյուն առաջ բերելը, և դա օգտակար է, քանի որ փոփոխությունը հանուն փոփոխության կարող է շատ թանկ նատել և հանգեցնել անախորժ և անուղղելի հետևանքների, հատկապես երբ դա վերաբերում է ռազմական ոլորտին, որում նման հետևանքները կարող են հիրավի ավերիչ լինել: Ուստի ռազմական ոլորտում ընդհանուր բարեփոխումների և, մասնավորապես, մարդումի մենեջմենթի անհրաժեշտությունը համապատասխան դրույթների մանրակրկիտ ստուգումն ու փորձարկումն է նախքան դրանց ներդրումը համակարգ: Նման փորձարկումները ծառայում են հայտարարագրված առավելությունների ստուգմանը, բերուքյունների հայտնաբերմանը. դրանք տվյալներ են հաղորդում հնարավոր ծախսերի վերաբերյալ, լույս են սփոռում գործնական ներդրման հնարավորությունների վրա, օգնում են հայտնաբերելու չնախատեսված և անցանկալի հետևանքները և, վերջապես, առաջարկում են ծրագրի բարելավման տարբերակներ: Առավել կարևոր է, սակայն, որ փորձաշրջանի հաջող ավարտի և մարդումի մենեջմենթի նոր դրույթների վավերացման արդյունքում բարեփոխումների հանդեպ ձևափորվելու է դրական վերաբերմունք ոչ միայն այն կառույցներում և պաշտոնատար անձանց շրջանում, որոնք զբաղվում են այդ ծրագրերի ներդրմամբ և իրականացմամբ, այլև այն զինծառայողների շրջանում, ովքեր հետագայում անմիջականորեն ենթարկվելու են այդ բարեփոխումների ազդեցությանը: Ինչևէ, ի վերջո՞՝ մարդումի մենեջմենթն առավելապես ուղղված է ոչ թե ռազմական կազմակերպությանը, այլ զինծառայողներին որպես զինվորական մշակույթի կրողների: Հետևաբար մարդումի մենեջմենթի բարեփոխման ընթացքը կապայմանավորվի հասարակության մեջ մշակութային փոփոխությունների տեմպերով, այլ ոչ թե գիտատեխնիկական կամ հայեցակարգային դրույթների փոփոխություններով: Ուստի կարևոր է, որ նման փոփոխությունները ճիշտ ուղղվ ընթանան:

<sup>144</sup> Պլանավորման նման կառույցի օրինակի համար տե՛ս մարդումի մենեջմենթի ռազմավարության վերաբերյալ Կանադայի Ազգային պաշտպանության նախարարության գեկույցը. Canada, Department of National Defence, *Military HR Strategy 2020* (Ottawa: Minister of National Defence, 2002), [www.forces.gc.ca/hr](http://www.forces.gc.ca/hr):

## Գլուխ 6

# Չեռքբերման մենեջմենթ Էնթոնի Լորենս

### Ներածություն

Հինված ուժերում ճեռքբերումը մի գործընթաց է, որի միջոցով արտաքին կազմակերպություններից պատվիրված ռազմատեխնիկան և (կամ) ծառայություններն օգտագործվում են արդյունավետ ռազմական կարողությունների ստեղծման համար<sup>145</sup>: «Արտաքին կազմակերպություններ» ասելով՝ սովորաբար նկատի են ունենում ռազմարդյունաբերական ձեռնարկությունները և դրանց արտադրանքի մատակարարներին, որոնցից զինված ուժերի մատակարարման շղթան կարգավորող պայմանագրային համաձայնությունների միջոցով գննում են ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների անհրաժեշտ միավորները: «Ռազմատեխնիկա» հասկացությունն ընդհանուր առմամբ ներառում է սպառազինության համակարգերը, մարտական տեխնիկան և ռազմական նշանակության մնացյալ նյութատեխնիկական միջոցները: Բոլոր դեպքերում, ճեռքբերման գործընթացը կարող է վերաբերել նաև պաշտպանական կազմակերպության կողմից ոչ մարտական ապրանքների հայթայթմանը, ինչպիսիք են կառավարման տեղեկատվական համակարգերը կամ պաշտպանական ենթակառուցվածքի տարրերը: «Ծառայություններ» հասկացությունը նշում է ռազմական կարողությունների ստեղծման գործում անհրաժեշտ ոչ նյութական միջոցները, ինչպիսիք են, օրինակ, խորհրդատվական տարաքնույթ ծառայությունները, նյութատեխնիկական մատակարարման ապահովման, մարտական պատրաստության, վերապատրաստման և կրթական ծրագրերը: Այդպիսիք կարող են տրամադրվել արտաքին կազմակերպությունների կողմից:

<sup>145</sup> Կարողություն՝ «գործողությունների ընթացքում ցուցաբերված արդյունքը կամ ազդեցությունը, որին ռազմատեխնիկայի շահագործողները ցանկանում են հասնել»: Տե՛ս ՍԴՀ Զարգացման նախարարության պաշտպանության նախարարության Ձեռքբերությունների մենեջմենթի համակարգի բառարանը, [www.ams.mod.uk](http://www.ams.mod.uk) կայքում (U.K. MoD Acquisition Management System Glossary):

Չնայած նրան, որ «ձեռքբերում» եզրույթը ներառում է զնումների գործընթացը, որն ընդհանուր առմամբ վերաբերում է կառավարությունների կողմից արտաքին նախակարարների տրամադրած ապրանքները և ծառայություններն առնելուն, այն գործունեության շատ ավելի ընդարձակ ոլորտ է: Սպառագինության ժամանակակից համակարգերը չափազանց բարդ են և թանկարժեք, իսկ շահագրծման տեսանկյունից հաճախ բավականին երկարակյաց: Ձեռքբերման նախագծի վաղ փուլերում կայացված որոշումները և հատկապես նրանք, որոնք վերաբերում են կարիքների սահմաննանը (ձևակերպում են, թե ինչ է հարկավոր գմեն), հնարավոր է հետազայտմ զգալի և շարունակական ազդեցություն ունենան: Եթե նման ազդեցությունները չեն կանխատեսվել և հաշվի առնվել ծրագրման փուլում, ապա դրանք կարող են հանգեցնել ձեռքբերման ամբողջ նախագծի տապալմանը: Ձեռքբերումը փորձ է անում հաշվի առնել այս ամենը որդեգրելով «ամրողական կենսաշրջանի» նոտեցումը: Դրա օգնությամբ յուրաքանչյուր նախագիծ դիտարկվում է որպես մեկ ձեռնարկում, որը ծգվում է ուազմատեխնիկայի և (կամ) ծառայության կարիքների որոշումից մինչև դրանց պիտանիության ժամկետների ավարտը (օտարումը): Այսպիսով՝ ձեռքբերումը ներառում է շահագրծողի կարիքներին համապատասխանող ուազմատեխնիկայի և (կամ) ծառայության որոշում, դրա գնում, պիտանիության ժամանակահատվածի ընթացքում սպասարկման ապահովում, իսկ դրա ավարտից հետո վերջնական դուրսգրման ուղղությամբ միջոցների ձեռնարկում:

Կարևոր է ընդգծել, որ ձեռքբերման գործընթացն ուղղված է ոչ միայն շահագրծողին իրեն անհրաժեշտ ուազմատեխնիկայով և (կամ) ծառայություններով ապահովելուն, այլև պաշտպանական բյուջեի մտածված և ուսցինալ օգտագործմանը: Քանի որ այս ամենը տեղի է ունենում հարկատուների հաշվին, անհրաժեշտ է երաշխավորել հնարավորին բարձր գործակից ձեռքբերվելիք ուազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների որակ/զին հարաբերակցության հարցում: Այս պարտավորությունն ատիպում է ձեռքբերման մենեջմենտով զրաղվողներին ի հայտ բերել, մի կողմից, տվյալ շահագրծողին անհրաժեշտ կատարողական ցուցանիշների, մյուս կողմից ծրագրի արթեքի և ժամկետների հարաբերակցության առավել համակշռված տարրերակը և արդյունքում գտնել այնպիսի լուծում, որը լավագույնս կմեղմացնի այս պահանջների միջև հաճախ ծագող հակասությունները: Իրենց հերթին, դրանք պարտադրում են ձեռքբերման ամբողջ գործընթացին վերաբերող ընդհանրական պահանջներ անաշառություն, կարգապահություն և բափանցիկություն: Ավելին՝ ձեռքբերման գործընթացի մաս է կազմում նաև ոխակի գործոնը՝ վնասակար հետևանքներով հղի անակնելա իրադարձությունների հնարավորությունը: Փաստացիորեն, սպառագինության բազմաթիվ համակարգերի բարդությունը, թանկարժեքությունը, տեխնոլոգիական կատարելությունը և պիտանիության երկար ժամկետները ձեռքբերման գործընթացը դարձնում են պաշտպանական կազմակերպությունների կողմից խաղաղ ժամանակ իրա-

կանացվող ամենառիսկային ձեռնարկումներից մեկը: Այս իսկ պատճառով, խորաքափանց և համակողմանիորեն մտածված մենեջմենթի շնորհիվ գործընթացը կարող է միայն շահել: Այսպիսով՝ ձեռքբերման մենեջմենթը ներառում է կառավարչական այնպիսի մեթոդների և գործընթացների կիրարկում, որոնք ուղղված են նախազգի հաջողությանն սպառնացող ռիսկերի կրծատմանը և օգնում են երաշխավորելու, որ զինված ուժերին անհրաժեշտ կարողությունները կստացվեն ընդունելի արժեքով և պահանջված ժամանակին:

Այս գիտում քննության են առնվորմ ձեռքբերման մենեջմենթի մաս կազմող որոշակի հարցեր: Շարադրամիք լուրացքով ձեռքբերման առանձին ծրագրի մեկնարկն արտոններուն հանգեցնող որոշ գործընթացների նկարագրության շնորհիվ ձեռքբերման մենեջմենթը փոխադրվում է ավելի ընդարձակ համատեքստ: Օգտակար է տեսնել, թե ձեռքբերումային ռազմավարությունների օգնությամբ ինչպես են ընտրվում ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների գննան լավագույն տարրերակները, և թե ինչպես են այդ ընտրությունները ներկայացվում շահագրգիռ կողմերին: Հատուկ դիտարկման են ենթարկվում նաև ձեռքբերման բոլորաշրջանները՝ որպես արդեն մեկնարկած նախազգի մենեջմենթի միջոցներ:

## Ծրջանակը

Չնայած «ձեռքբերում» հասկացությունը ներառում է մի շարք ուղղություններ և խնդիրներ, այն ընդհանուր առմամբ կարելի է տարաբաժանել գործունեության հետևյալ երեք ընդարձակ ոլորտների

- Որոշել, թե ինչ ձեռք բերել,
- Որոշել, թե ինչպես ձեռք բերել,
- Զեռք բերել:

*Իմ ձեռք բերելու մասին որոշումը՝ թվացյալ շատ պարզ մի խնդիր, իրականում բնավ էլ պարզունակ չէ և ձեռքբերման ընդհանուր նախազգի հաջողության բանալին է:*

Պաշտպանական բյուջեն, որպես կանոն, լինելով հանրային ամենածախսատար ոլորտներից մեկը, այնուամենայնիվ, շատ հազվադեպ է բավարարում ռազմական հաստատության բոլոր կարիքները, ուստի գննան նախազերը պետք է ընտրվեն ըստ շրջահայաց կերպով մշակված առաջնահերթությունների սանդղակի, որպեսզի հանրագումարում կազմված պաշտպանության ոլորտի ընդհանուր ծրագիրը լինի հնարավորինս համապարփակ և համաշշումական բարձր ցուցանիշը և պաշտպանական ռեսուրսների պատշաճ օգտագործումը): Ուստի այդ նպատակներին ուղղված միջոցներն ընտրելիս մրցակցող կարիքների խորաքափանց ուսումնասիրությունն ու ստեղծագործական մոտեցման դրսերումն էական նշանակություն ունեն արդյունավետ գնում կատարելու գործում. գործառությունների այս ոլորտում ներդրումների կա-

տարումը կօգնի նվազեցնելու նախագծի ռիսկայնությունը և ավելացնելու դրա հաջող իրագործման ընդհանուր հավանականությունը<sup>146</sup>:

Որևէ ռազմատեխնիկա և (կամ) ծառայություն, ինչպես հայթայրելու մասին որոշումը, սովորաբար կայացվում է ձեռքբերման ռազմավարության մշակման միջոցով: Վերջինս պաշտոնական մի փաստարուղի է, որն արձանագրում և հիմնավորում է ընդունված տարարնույթը որոշումները: Եվ կրկին, այս փուլի կատարելագործման նպատակով ներդրված միջոցները կօգնեն նվազեցնելու ձախողման ռիսկերը և կմեծացնեն նախագծի հաջողության հնարավորությունները: Ռազմատեխնիկայի և (կամ) ծառայության փաստացի գնման, պիտանիության ընթացքում դրանց սպասարկման և այդ ժամանակահատվածից հետո վերջնական օտարման գործընթացը հաճախ տրոհվում է որոշակի փուլերի: Այս ամենն արվում է ամբողջ խնդիրն ավելի կառավարելի դարձնելու և այնպիսի կետեր նախատեսելու նպատակով, որոնցով կարելի կլինի վերանայել նախագիծը և որոշումներ կայացնել դրա ապագայի վերաբերյալ: Սա կոչվում է ձեռքբերման բոլորաշրջան:

Հարկ է նշել, որ գործունեության այս երեք ուղղությունները փոխկապակցված են միմյանց հետ, և պարտադիր չեն, որ իրականանան ժամանակագրական միևնույն հերթագայությամբ, ինչպես նշված է վերը: Ստորև կհամոզվենք, որ շատ օգտակար է ինչ գնելը պարզելուն և ճշգրտելուն ուղղված գործողությունները ներմուծել հենց ձեռքբերման բոլորաշրջան:

## Ո՞վ է ներգրավված

Ձեռքբերման գործընթացի մաս կազմող փուլերի ողջ ծավալը հաջողությամբ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է գործի դնել գիտամեթոդական տարարնույթը ուղղություններ և հմտություններ: Մեկ հոգու կամ անզան մեկ խմբի կողմից կատարվելու տեսանկյունից ձեռքբերումը սովորաբար բավականին բարդ գործ է, ուստի ընդհանուր աշխատանքը պետք է բաժանվի դերակատարների տարրեր խմբերի միջև: Դրա արդյունավետ և ճիշտ իրազերման ձևերը բազմաթիվ են: Տարրեր պաշտպանական կառույցներում սույն գործընթացը բաշխվում է տարրեր տրամաբանությամբ և տարրեր մասնակիցների միջև: Բոլոր դեպքերում, սակայն, ընդհանուր առնամբ գոյություն ունի պաշտպանության ոլորտի գնումների գործընթացում ներգրավված անձանց կամ մասնակիցների չորս խումբ:

Առաջին խմբին են պատկանում նրանք, ովքեր որոշում են ռազմատեխնիկայի և (կամ) ծառայության այս կամ այն տեսակը գնելու անհրաժեշտությունը: Կարիքների ռացիոնալ ձևակերպումը մեկ ակնքարթում չի կատարվում,

<sup>146</sup> Այս գլուում ձեռքբերման նախագիծ եղը սահմանվում է որպես այնպիսի գործողությունների շարք, որն ուղղված է նախապես համաձայն եցված աշխատանքային ցուցանիշները, արժեքը և ժամանակային սանդղակները ապահովող ռազմատեխնիկայի և կամ ծառայությունների ստացմանը: Պաշտպանական ծրագիր հասկացությունը վերաբերում է կատարված և ընթացիկ նախագծերի ողջ բազմությանը:

այն որոշակի ժամանակ է պահանջում և ձևավորվում է համապատասխան ուսումնասիրությունների շնորհիվ, որոնց արդյունքում ռազմական ոլորտի կարիքները քայլ առ քայլ հստակեցվում են և մանրակրկիտ կերպով նկարագրվում: Օրինակ՝ առաջնային փոլում ընդարձակ կերպով ձևակերպվում է հնարավոր քշնամու հիմնական մարտական տանկերը շարքից դուրս բերելու կարողության անհրաժեշտությունը: Առկա տարրերակների խոր ուսումնասիրության արդյունքում այն նեղացվում-հասցվում է լոնդոնական շարժական հրթիռային համակարգ ունենալու պահանջմունքի և, ի վերջո, ներկայացվում նման համակարգի պահանջվող գործորությունների հստակ նկարագրությունը պարունակող տեխնիկական մանրամասն հատկորշման տեսքով: Այս ժամանակահատվածի և դրա ընթացքում կատարվող ուսումնասիրությունների կառավարման և ներդրման խնդիրը, ինչն արդյունքում հանգեցնում է ռազմական կազմակերպության կարիքների ձևակերպմանը, պարտադիր չե, որ հանձնարարված լինի միայն մեկ գերատեսչության: Խնդիրի ուսումնասիրության խորացմանը զուգընթաց այն կարող է մի խճից փոխանցվել մեկ ուրիշի (տե՛ս «Ֆ՞նչ ձեռք բերել. կարիքների սահմանում» բաժինը): Այնուամենայնիվ, առաջադրանքն ինչպես ել բաշխված լինի, մասնակիցների այս խմբում առանձնահատուկ կարևորություն ունի շահագործողը՝ զինված ուժերի ներկայացուցիչը, ով պատասխանատու է պահանջմունքը մանրամասնորեն մշակելու համար: Իսկ դա պետք է այնպես կատարվի, որ լիովին համապատասխանի այն պատկերացումներին և պահանջներին, որ ունեն զնված ռազմատեխնիկան հետազայում շահագործող կամ զնված ծառայություններից օգտվող անձինք: Պարզ է, որ շահագործողն ունի մասնագիտական գիտելիքներ առ այն, թե ինչպես են ռազմական համակարգերը գործնականում կիրառվում, ուստի՝ ինչ տիպի կարողություններ են անհրաժեշտ տվյալ ռազմական առաջադրանքը կատարելու համար: Սակայն միևնույն ժամանակ (ինչպես սոորոք կհամոզվենք), դրանից անհրաժեշտարար չի բխում, թե շահագործողն այն միակ և նախընտրելի կողմն է, ով պետք է որոշի պաշտպանական կարիքները բավարարելու ունակ ռազմատեխնիկայի զնման հնարավոր լուծում-տարրերակները կամ կառավարի ձեռքբերման ողջ գործընթացը: Շահագործողների հանրույթին՝ զինված ուժերին, առաջատար դերակատարում է վերապահված հիմնականում պահանջմունքների ձևակերպման նախնական շրջանում, մինչդեռ հետագա փուլերն առավել արդյունավետորեն իրականացնում են ձեռքբերման ոլորտի մասնագետները: Վերջիններս կազմում են ներգրավված մասնակիցների երկրորդ խումբը:

**Ձեռքբերման մասնագետները** ստվրաբար պատասխանատու են ձեռքբերման նախագծի հիմնական մասի մենաշմենքի համար, այն է՝ ռազմական հաստատության կարիքները մանրամասն նշելու, մատակարարների հետ պայմանագրեր կազմելու, պահանջված ռազմատեխնիկայի և (կամ) ծառայության տրամադրումը երաշխավորելու, շահագործման ժամանակահատվածի ընթացքում սպասարկելու և պիտանիության ժամկետների ավարտից

հետո վերջնական օտարումը կազմակերպելու համար։ Քանի որ ձեռքբերման գործընթացը կարող է չափազանց բարդ լինել, նշված գործառույթների իրականացման համար բազմաթիվ պետություններ օգտակար են համարել ստեղծել հատուկ գերատեսչություններ կամ ծառայություններ, որոնց համար ձեռքբերման գործընթացը մշտական գարգացում կրող նաևնագիտացում է։ Այս մոտեցումը մի շարք առավելություններ ունի, որոնցից են ձեռքբերման գործընթացի վերաբերյալ նաևնագիտական փորձի կուտակումը և փոխանակումը։ Այն կարող է իրականանալ ինչպես անհատական, այնպես էլ կազմակերպության մակարդակով, ինչը գործադրության բույս է տախս շահագործողին կենտրոնանալ իր անմիջական պարտականությունների բուն ռազմական խնդիրների վրա։ Սակայն բացի դրանից՝ ձեռքբերման նախագծի կառավարումը պահանջում է, որ ֆինանսական պատասխանատվությունը (պետական միջոցները խելամտորեն և արյունավետորեն տնօրինելու պարտականությունը) փոխանցվի ձեռքբերման հարցերով կառավարչին և կենսագործվի տվյալ նախագծին հատկացված բյուջեի պատշաճ իրացման միջոցով։ Այս ամենից բխում է կարևորագույն մի սկզբունք՝ շահագործողի գործառույթները պետք է տարածատվեն ֆինանսական միջոցները տնօրինողի գործառույթներից։ Մրա հիմքում այն դիտարկումն է, որ շահագործողն իր առանձին կարիքների բավարարման հարցում հասկանալի պատճառներով և միանալան արդարացներեն ձգում է լավագույն տեխնիկական լուծմանը, մինչդեռ նույն այդ պաշտպանական գերատեսչության լայն շահերը (չնշելով նույնիսկ կառավարությունները, խորիրդարաններն ու հարկատուններին) պահանջում են, որ հավասարակշռված լուծում գտնվի, մի կողմից, զինված ուժերը լավագույնս ապահովելու և, մյուս կողմից, պետական միջոցները ռացիոնալ ծախսելու միջև։ Դա, իր հերթին, պարտադրում է, որ հենց ձեռքբերման կառավարիչը լինի այն առավել չեղոք դերակատարը, ուս իրավասություն կտրվի ընտրելու այն լուծումը, որը լավագույնս կվերացնի նշված երկու պահանջների միջև երբեմն առկա լարվածությունը։

Ձեռքբերումն ինքնին ներառում է միմյանցից տարբեր բազմաթիվ ենթամասնագիտացումներ կարիքների սահմանման մենեջմենթ, ծրագրի մենեջմենթ, ռիսկերի մենեջմենթ, վարչական աշխատանք, ֆինանսների մենեջմենթ, ծրագրերի կատարման և սպասարկման մենեջմենթ, որակի մենեջմենթ, անվտանգության մենեջմենթ, հուսալիության ապահովման մենեջմենթ, պայմանագրերի, իրավական և քաղաքական խնդիրների սպասարկման ուղղված գործունեություն։ Ուստի ձեռքբերման նախագծերի հաջող իրագործման նպատակով նախագծի (նույն է ձեռքբերումների) գծով կառավարիչը հաճախ կազմում է նախագծային տարբեր ոլորտների նաևնագետների խումբ, որը երբեմն անվանում են միացյալ նախագծային թիմ (IPT)։ Սույն գլխի մեծագույն մասը նվիրված է ձեռքբերումային ոլորտի այս նաևնագետների դերի և գործունեության քննարկմանը։

Մասնակիցների երրորդ խումբն այն անձինք են, ովքեր վերահսկում և

հիմնավորապես ուսումնասիրում՝ վերստուգում են ձեռքբերման նախագծերը: Սովորաբար դա պաշտպանական գերատեսչության բարձրաստիճան ղեկավարությունն է: Վերահսկում իրականացնելու պահանջը երևան է զայխ ոչ թե այն պատճառով, որ ձեռքբերման մասնագետները բանիմաց չեն, և իրենց ուղղակի պարտականությունների կատարումը նրանց վստահել չի կարելի, այլ միանգամայն այլ պատճառներով, որոնք կապված են պաշտպանության ոլորտի ընդհանուր մենեջմենթի հետ: Պաշտպանական ծրագրի մակարդակում ձեռքբերման ընդհանուր նախագիծը հարկ է նշտապես պահել անկախ վերահսկողորորյան ներքո, որպեսզի այն հնարավոր լինի շարունակար համապատասխանեցնել առաջնայնություններում ի հայտ եկող փոփոխություններին կամ վերանայել ընթացիկ ծրագրերի տարրեր փուլերի ավարտից հետո: Դա թույլ կտա նաև երաշխավորել կայուն և հետևողական շափանիշների պահպանումն ու կիրառումը ինչպես ձեռքբերումային ծրագրում, այնպես էլ արտաքին գերատեսչությունների հետ պաշտպանական հաստատության փոխհարաբերություններում: Մասնակիցների այս խումբը գործում է նաև առանձին նախագծերի մակարդակում և, ձևակերպելով դրանց նպատակներն ու վերահսկելով իրականացնումը, նախագծերի կառավարման իրավունքը պատվիրակում է ձեռքբերման կառավարչին: Վերահսկողորորյունից և վերատուգումից բացի՝ մասնակից այս խումբը հաճախ նաև ավելի լայն և կարևոր գործառույթներ ունի ձեռքբերման մենեջմենթի հաջող ընթացքն ապահովելու հարցում, մասնավորապես երաշխավորելով, որ նախագծում ներգրավված տարրեր թիմերը թե՛ ստանան իրենց հատկացված ֆինանսական միջոցները (պաշտպանական հաստատության ներսում գործելով որպես ձեռքբերման նախագծի հովանավորներ), թե՛ ապահովեն պահանջվող որակավորումներն ունեցող անհրաժեշտ անձնակազմով:

Մասնակիցների վերջին խումբը արտաքին գերատեսչություններն են, որոնք հնարավորություն ունեն մատակարարելու զննան ենթակա ռազմատեխնիկան (կամ) ծառայությունները: Սովորաբար որպես այդպիսին հանդես են զայխ մասնավոր գործարար ընկերությունները, սակայն այս խմբում կարող են նաև լինել պետական այլ գերատեսչություններ կամ անգամ այլ կառավարություններ: Նախագիծը հաջողությամբ պասակվելու ավելի մեծ հավանականություն կրունենա, եթե պաշտպանական հաստատության և վերոնշյալ արտաքին գերատեսչությունների հարաբերություններն ունենան համագործակցային, այլ ոչ թե հակամարտող բնույթ, և երկու կողմերն էլ ճանաչեն ու ճիշտ գմահատեն միմյանց կարողություններն ու սպասումները:

## Բ՞նչ ձեռք բերել. կարիքների սահմանում

Սպառագինության համակարգերը և ռազմական տեխնիկայի այլ միավորները բացառիկ բանկարժեք են, իսկ տեխնոլոգիապես հաճախ չափագանց բարդ, ուստի ձեռք բերելու համար երկար ժամանակ և մեծ ջանքեր են պահանջում: Իրանք հաշվարկված են երկարատև շահագործման հեռան-

կարով,և հաճախ կարող է այնպես պատահել, որ իրականացնեն ի սկզբանե նախագծված դերից զգալիորեն տարբերվող գործառույթներ: Ասվածը հատկապես վերաբերում է մարտական պլատֆորմներին: Բազմաթիվ երկրներ՝ շարունակում են գործածել ցամաքային, ծովային և օդային համակարգեր՝ հիմնված տասնամյակներ առաջ ձեռք բերված մարտական պլատֆորմների վրա, որոնք ներկայիս մարտական խնդիրներում օգտակար մնալու համար բազմից վերանորոգվել և արդիականացվել են: Դրա ցայտուն օրինակն է ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի B-52 ռմբակոնդիչը, որն առաջին անգամ շահագործման է հանձնվել 1955 թ., և որի նոր սերնդի հենքը գործածելի կիմնի մինչև 2040 թ. կամ գուցե ավելին<sup>147</sup>: Գնումային նախագծերում բազմաթիվ կազմակերպություններ կան ներգրավված, սակայն իրենց գործունեության մասշտարկությունից քչեր կարող են համեմատվել պաշտպանական ոլորտի ձեռքբերումների գծով մասնագետների հետ:

Այս ամենով հանդերձ՝ պաշտպանական բյուջեները բավականին սահմանափակ են: Քիչ հավանական է, որ պետության զինված ուժերը հանդերձանքով ապահովելու համար նախատեսված միջոցները բավարարեն դրա գործունեության ամբողջ ծավալն ապահովելու գործում օգտավետ բոլոր կարողությունների կամ նույնիսկ դրանց մեծ մասի ձեռքբերմանը: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է դժվարին որոշումներ կայացնել առ այն, թե պաշտպանական ծրագրում ինչն է պետք ընգրկել, ինչը ոչ, ինչը կարելի է բողնել ապագային, ինչից՝ ամբողջությամբ հրաժարվել: Նման մեկ այլ նկատառում է այն, որ երկրի պաշտպանությունը պետականորեն ֆինանսավորվող գործունեություն է, ուստի դրա ձեռքբերումային ծրագրերը զանգվածային լրատվամիջոցների, հասարակության և խորհրդարանների առանձնահատուկ ուշադրության առարկա են: Պաշտպանական ձեռքբերումները տեսանելի են նաև աշխարհին: Նման ուշադրությունը, հասկանալի է, այդպես էլ պետք է լիներ, բայց դա նշանակում է նաև, որ պաշտպանական նախագծերի հետ կապված դժվարությունները հեշտությամբ կարող են վերածվել պետական-քաղաքական բարդությունների: Այդ իսկ պատճառով էական է ոչ միայն ձեռքբերման առանձին նախագծերի արդյունավետ և մանրամասն կառավարումը և, հետևաբար, պաշտպանական ոլորտին պետության կողմից հատկացված ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսը, այլև այն, որ նախքան մեծ գումարների սպառմանն անցնելը գործադրվեն անհրաժեշտ բոլոր ջանքերը, որոնք կերաշխավորեն կոնկրետ գումարների վերաբերյալ հիմնավորված և կշռադրատված որոշումների ընդունումը: Նախագծի վաղ փուլերում գործված սխալները կարող են տարիներով մեծ հոգսեր պատճառել զինված ուժերին և ծանրաբեռնել դրանք նախատեսված նպատակներին չհամապատասխանող կամ առհասարակ անօգուտ համակարգերով: Վերջիններս կամ պարապ կմնան, կամ կարգի բերելու համար հետազայտ խոշոր ֆինանսական հատ-

<sup>147</sup> ԱՄՆ ռազմաօդային ուժերի B-52 Stratofortress ռմբակոնդիչի տեխնիկական բնութագիրը տե՛ս <http://www.af.mil/factsheets/factsheet.asp?id=83> կայքէջում:

կացումներ կպահանջեն: Ուստի շատ ավելի լավ է ի սկզբանե հավաստիացած լինել, որ ինչ պահանջվում է, այն էլ գնիում է:

Որտեղի՞ց է, որեմն, ծագում ձեռքբերման նոր նախագծերի անհրաժեշտությունը: Ուազմավարական պլանավորման փուլում մարտական խնդիրներն ու պաշտպանության ոլորտի պլանավորման հիմնադրույթները բխում են պետության պաշտպանական քաղաքականությունից և ընդհանուր գծերով ուղենչում են ռազմական կարողությունների այն մակարդակը, որին երկրի գինված ուժերն անպատճառ պետք է հասնեն: Այս խնդիրների հետագա վերլուծությունն իր հերթին հանգեցնում է այդ պոտենցիալի կայացման համար անհրաժեշտ պահանջմունքների ձևակերպմանը և դրանց բաղդատմանը ռազմական կարողությունների արդեն գոյություն ունեցող ցանկի հետ: Այս ամենի արդյունքում բացահայտվում են պետության գինված ուժերում առկա ռազմական կարողությունների պակասությունները: Ուստի կարելի է ասել, որ ձեռքբերումը գործունեության այն տեսակն է, որն արտաքին գերատեսչություններում առկա արտադրական հզորությունները և կուտակված փորձառության մյուս ձևերը կերպավորում է ներդրումների ուղղված գինված ուժերի կարողություններում բացահայտված պակասությունները լրացնելուն: Ուազմական կարողություններում պակասություններ կարող են գոյանալ մի շարք պատճառներով: Առավել կարևորներից են՝

- **Փոփոխությունները քաղաքականության մեջ:** Կարող են ի հայտ գալ մարտական նոր խնդիրներ, որոնք պահանջում են կարողությունների նոր կազմներ: Օրինակ վերջին շրջանում շեշտմ առավելացնելով դրվում է ՆԱՏՕ-ի և Եվրոպական պետությունների մասնակցությամբ արշավային գործողությունների վրա, ինչը պահանջում է, որ նրանց գինված ուժերը լինեն ավելի ծկուն, ողջ կազմի մասշտարով ավելի արագ տեղափոխող և տեղաբաշխվող, իսկ կայուն գործունեության ապահովման տեսանկյունից՝ ավելի երկարաժամկետ և կողմնակի սակավ միջամտություն պահանջող:
- **Սպառնալիքների բնույթի փոփոխությունը:** Կարող են ի հայտ գալ նոր սպառնալիքներ, կամ փոխվել արդեն գոյություն ունեցողների բնույթը: Եթե համարվի, որ այդ սպառնալիքները բավականին լուրջ են, և դրանց ակտիվորեն դիմագրավելու համար անհրաժեշտ է գինված ուժերի համապատասխան պատրաստություն և վերազինում, դա կարող է պահանջել նաև կարողությունների նոր կազմի առկայություն:
- **Տեխնոլոգիական առաջընթացը:** Գիտատեխնիկական զարգացումները կարող են ռազմական խնդիրների իրագործման ավելի նոր և արդյունավետ ուղիներ բանալի: Դրան հակառակ, սակայն, տեխնոլոգիական առաջընթացը եղած ռազմատեխնիկան հաճախ դարձնում է բարոյացել հնացած և մարտական օգտագործման համար ոչ պիտանի:
- **Հայեցակարգային փոփոխությունները:** Չնայած ռազմական հայեցակարգը սահմանվում է պետության կամ, որոշ դեպքերում, վերպե-

տական-միջազգային դաշինքների մակարդակում, զինված ուժերը կարող են զինուժի կիրառության վերաբերյալ միմյանց փորձի և մուտքումների փոխանակման արդյունքում նմանվել իրար և զարգանալ համանման ուղղություններով։ Հայեցակարգային փոփոխությունները կարող են նաև հանգեցնել ուազմական խնդիրների իրագործման նոր և ավելի լավ ուղիների առաջացման փոխարիննելով ուազմական գործունեության հին ձևերը։

Քանի որ բյուջետային սահմանափակումներն անհնարին են դարձնում կարողությունների հարցում ի հայտ եկող յուրաքանչյուր պակասության կամ նույնիսկ դրա մի փոքր մասի լրացումը, էական է, որ դրանք սառնասիրու և տրամաբանական քննության առնվեն, որպեսզի հնարավոր լինի որոշել, թե որոնք են կարևորագույն առաջնահերթությունները։ Պաշտպանական քաղաքանության և պլանավորման հիմնադրույթները կարող են լինել այս ջանքերին միտված սկզբնական քայլեր։ Սակայն հաճախ պատահում է, որ նշյալ փաստարդերի տրամադրած ցուցումները չափազանց անորոշ են, ուստի արդյունավետ և համակշռված պաշտպանական ծրագրի ձևակերպման համար հավելյալ մանրամասն վերլուծության կարիք կա։ Դա ավանդաբար արվել է ուազմատեխնիկայի տեսակների դիտարկման մակարդակում (տանկեր, ինքնարիոններ, նավեր, հրետանային միավորներ) և մի շարք դեպքերում հանգեցրել նրան, որ վավերացվեն և իրականացվեն սխալ հիմքի վրա ձևակերպված ճեռքբերումային նախագծեր։ Հաճախ ենթադրվում է, օրինակ, որ ուազմական տեխնիկայի շարքից դրւու եկած միավորը պետք է անհապաղ ավտոմատ կերպով փոխարինվի ավելի նոր մոդելով, կամ եթե հնարավոր հակառակորդները/դաշնակիցները տիրապետում են ուազմատեխնիկայի որոշակի միավորի, ապա այն պետք է անպայման ճեռք բերվի և տեղ գտնի սեփական ուազմական գույքացանկում։ Այս նկատառումները կարող են և ծշմարիտ լինել, սակայն ոչ միշտ։ Նման բնույթի ենթադրություններն ընդհանուր առնամք նեղացնում են մտածողության սահմանները և կարող են հանգեցնել զննան ենթակա ուազմատեխնիկայի և (կամ) ծառայության առումով ավելի քան անհաջող որոշումների։

Վերջին տարիների միտումները, որոնք ուղղված են ուազմական կարողությունների վրա հիմնված պլանավորման իրականացմանը, օգտակար են նաև նրանով, որ պահանջմունքների ձևակերպմամբ գրադադար անձանց ստիպում են ընդլայնել իրենց մտածողության շրջանակները և ուազմական կարողությունների պակասությունները հարթահարելուն ուղղված քայլերի փնտրություն, բացի առաջին իսկ հայացքից բացահայտ բվացող լուծումներից, դիտարկել տեխնիկական ու հայեցակարգային նոտեցումների զանազան այլ համակցություններ<sup>148</sup>։ Ուազմական կարողությունների պակասու-

<sup>148</sup> Ուազմական կարողությունների վրա հիմնված պլանավորում։ «Նմանատիպ պլանավորման արդյունքը ոչ թե կոնկրետ զինահամակարգերը և անձնակազմի համալրման աստիճանները պետք է լինեն, այլ այն առաջադրանքների

թյունների հաղթահարման ուղիները գնահատելիս պլանավորման այս ձևի հիմքում ընկած սկզբունքները, ըստ էության, ստիպում են նրանց, ովքեր ձևակերպում են ռազմական ոլորտի պահանջմունքները, դրանք բավարարելու նպատակով վերադառնալ ամենատարրական մերողներին։ Երբեք չի կարելի ենրադրել, թե սույն այն պատճառով, որ որոշակի ռազմական առաջադրանքն ավանդաբար իրականացվել է ինչ-որ մի ձևով, ապա այդ ձևը միակն է կամ լավագույնը։ Արևոտութիւն երկրների զինված ուժերում խաղաղապահ առարելությունների վրա դրված և շարունակաբար աճող շեշտը, օրինակ, հանգեցրել է կարողությունների հարցում այնպիսի պահանջմունքների ձևակերպման, ինչպիսիք են մարտական ստորաբաժանումներն արագ և երբեմն նաև երկարաժամկետ տեղաբաշխելու (դրա մեջ մտնում է նաև դրանց գործունեության ապահովումը) հնարավորությունը։ Սա, օրինակ, չենք է ինքնարերաբար հանգեցնի տրանսպորտային օդային նավատորմն արդիականացնելու կամ ընդարձակելու մասին որոշմանը, քանի որ լուծունների այլ տարրերակները կարող են ավելի հարմար լինել։ Ինքնարելութիւնը, օրինակ, կարելի է վարձակալությամբ ձեռք բերել, վարձել, զնել կամ աշխատեցնել քաղաքացիական ավիափոխադրությունների հետ լիզինգային/վարձակալական պայմանագրերի հիման վրա։ Ասվածի զիսավոր միտքն այն է, որ ռազմատեխնիկայի այս կամ այն տեսակների գննան վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ շատ կարևոր է կոշտ և ուղղուալ հաշվարկի օգնությամբ գնահատել պակասությունների հաղթահարման վերոնշյալ ուղիները։ Ներգրավելով նոյնիսկ վերլուծական մերությունը և գործիքները։ Պակաս կարևոր չէ այն, որ նման խնդիրների լուծման ավանդական ձևերը կարող են անբույատրելիորեն բանկարժեք լինել, իսկ պակասությունների հաղթահարմանն ուղղված լուծուններ փնտրելու հարցում ստեղծագործականություն ու երևակայություն դրսերելու անկարողությունը կարող են հանգեցնել նրան, որ ձեռքբերման տվյալ նախագիծը պաշտպանական ընդհանուր ծրագրի սահմաններում ստանա ավելի ցածր առաջնահերթություն, քան իրականում ունի։

Այս նկատառումների գերակշիռ մասն ինչպես հարկն է դիտարկվում է ավելի շատ պաշտպանության ոլորտի պլանավորման կամ զինված ուժերի զարգացման ծրագրերի, քան ձեռքբերման նախագծերի ընդհանուր համատեքստում, հետևաբար դրանց իրագործման մանրամասները սույն բաժնի շարադրանքի շրջանակներից դուրս են։ Այնուամենայնիվ, ինչպես վերը նշվեց, պահանջմունքների ձևակերպումը շարունակ ճշգրտվող և կատարելագործվող մի գործընթաց է, և այն որոշակի պահի պետք է փոխանցվի ձեռքբեր-

Նկարագրությունը (արտահայտված կարողությունների եզրութարանությամբ), որոնք զինված ստորաբաժանութերը պետք է կարողանան իրականացնել։ Վարողությունների ցանկը ձևակերպելուց հետո պետք է որոշվեն դրանք ներդնելու ունակ այն ֆիզիկական ուժային միավորների տարրերակները, որոնք որակ/զին հարաբերակցության տեսանկյունից առավել էժանն են և արդյունավետը։ Տե՛ս NATO Research and Technology Organisation, *Handbook on Long Term Defence Planning*, RTO-TR-069, AC/323(SAS-025)TP/41, April 2003, 4:

**ման կառավարչին:** Տարբեր պետություններ տարբեր մոտեցումներ են որդեգրել այս հարցում, թե պարտականությունների նման փոխանցումը երբ պետք է տեղի ունենա: Դա, իր հերթին, կախված է ներգրավված գերատեսչություններին վերապահված գործառույթներից, որոնք սահմանվում են օրենքի կամ սովորույթի համաձայն: Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ ժամանակակից պաշտպանական հաստատությունները գնալով ավելի քիչ են զբաղվում տեխնիկական խնդիրներով, ինչը բերում է այդ ոլորտում կուտակված փորձառության աստիճանական կորստի: Հետևաբար, երբ կարիք է առաջանում ուսումնասիրելու ձեռքբերումային բարդ նախագծերը, ապա ուսումնական կազմակերպությունները հաճախ դրանց շրջանակներում պահանջմունքների սահմանման համար անգամ դիմում են արտաքին գերատեսչությունների փորձագիտական աջակցությանը, մասնավորապես խորհրդատվական ծառայությունների տրամադրման հարցով: Քանի որ նման խնդիր խևապես կա, մի շարք պետությունների պաշտպանության նախարարություններ գործնքացի դեռ նախնական փուլերում ստեղծում են ձեռքբերման հարցերով զբաղվող հատուկ խմբեր՝ ձեռքբերումային թիմեր: Դրանք գործում են որպես պաշտպանական կազմակերպության մասնագետ-ներկայացուցիչներ՝ ապահովելով արտաքին գերատեսչություններից ծառայությունների ստացումը, իսկ ձեռքբերման բոլորաշրջանը հավելվում է «նախագծի սահմանման» առանձին փուլով:

Անկախ նրանից՝ կիրառվում է արդյոք այս սխեման, թե ոչ, հիշատակման արժանի երկու լրացուցիչ նկատառում կա: Առաջին այն է, որ չափազանց օգտակար է ձեռքբերման կառավարչին որքան հնարավոր է վաղ ներգրավել պահանջմունքների ձևակերպման ընդհանուր գործնքացում: Նա կարող է իր ծառայությունը մատուցել որպես խորհրդատվության աղբյուր այն մասին, թե շուկայում ինչ կարելի է գնել, և դրա համար ինչ է պահանջվում, ինչն իր հերթին նրան բույլ կտոր ավելի լավ հասկանալ ապագա շահագործողի մոտեցումները պահանջմունքների հարցում:

Երկրորդ նկատառումն առնչվում է այն հարցին, թե պահանջմունքների ձևակերպման գործնքացը երբ պիտի շահագործողների հանրույթից փոխանցվի ձեռքբերումային թիմին: Ըստ այդ նկատառման՝ կարևոր է, որ վերջինն իր ֆինանսական պարտականությունների կատարման ընթացքում շահագործողի սահմանած պահանջմունքներից որևէ մեկի պատճառով անհարկի սահմանափակումների չենթարկվի: Ձեռքբերման կառավարիչը (մենեջեր) պատսախանատու է արտաքին գերատեսչությունների հետ հնարավոր լավագույն գործարքն ապահովելու համար. դրա հաջող իրականացման նպատակով դեպքերի գերակշիռ մասում պահանջվում է ուսումնակայի և (կամ) ծառայությունների մատակարարների կողմից առաջարկվող մրցակից պայմանների ու հնարավորությունների քննություն, որը բույլ է տալիս գտնել կատարողական ցուցանիշների, արժեքի և ստացման ժամկետների միջև փոխզիջումային հնարավոր տարբերակները: Եթե պահանջմունքը

խիստ որոշակի է, ապա քնական է, որ հնարավոր լուծումների բազմությունը սահմանափակ կլինի, ինչը ձեռքբերման կառավարչին կհարկադրի պարզապես բացառել այն տարրերակները, որոնք այլ հանգամանքներում կարող էին միանգամայն ընդունելի լինել: Պետք է ուսցիոնալ կիրառել մոտեցում՝ որոշելու համար, թե ինչը կարող է սահմանափակել ձեռքբերման կառավարչի գործողությունները, իսկ ինչը ոչ, և այս համատեքսուում օգտակար է տարանջատել շահագործողի կարիքները տեխնիկական պահանջներից: Ընդհանուր առմամբ առաջինը սահմանում է, թե վերջնական շահագործողին ինչ է պետք (քանի որ շահագործողն է սահմանում, թե ինչ է պետք անել), իսկ վերջինը՝ թե առաջադրված արդյունքին ինչպես է պետք հասնել: Ի վերջո, անհրաժեշտաբար տեխնիկական պահանջներն են որոշիչ լինելու արտաքին գերատեսչությունների հետ պայմանագործի ստորագրման և դրանց կառավարման գործում, քանի որ այդ փաստարդիքում մանրամասնորեն նշված է լինելու, թե ինչ է պետք մատակարարել: Դա, իր հերթին, սահմանելու է այն շափանիշները, որոնց համաձայն պետք է կազմակերպվի նախագծի վերջնարդյունքում մատակարարված ապրանքների ընդունումը: Պարզ է, ուրեմն, որ եթե այդ տեխնիկական պահանջները ձևակերպվում են ամենավաղ փուլերում, ապա դրանք ձեռքբերումային նախագիծն օպտիմալ լուծման ուղղությամբ առաջնորդելու փոխարեն շեղում են այն դեպի մասնավոր տեխնիկական լուծումներ: Իսկ դա նշանակում է, որ այլ պիտանի և զուցե անգամ ավելի արդյունավետ լուծումներն առանց քննարկման պարզապես մի կողմ կնետվեն, իսկ ձեռքբերման կառավարչին արդյունքում չի կարողանա ազնվորեն ասել, թե կարողացել է հասնել գին/որակ հարաբերակցության լավագույն ցուցանիշին: Այսպիսով՝ տեխնիկական պահանջնունքների սահմանումը, լինելով ոչ թե շահագործողների հանրույթի, այլ ձեռքբերման կառավարչի պարտականությունը, պետք է բողնովի նախագծի հետագա փուլերին:

Օգտակար և պատկերավոր կարող է լինել վերոշարադրյալ հանգամանքը հետևյալ օրինակով ներկայացնելը: Դիցուք մարտի դաշտում տեղաբաշխված հետևյակային ստորաբաժանումները պետք է պաշտպանել օդային հարձակումներից: Դա ձևակերպվում է որպես զինված ուժերի կարողությունների պակասություն, և որոշվում է, որ օդային պաշտպանության անհատական շարժական համակարգը սույն պակասության վերացման լավագույն տարրերակն է: Ընդ որում, ի թիվս այլոց, շահագործողը ցանկանում է նաև երաշխիքներ ունենալ, որ տվյալ համակարգն ունակ է շարքից դուրս բերելու այն օդային թիրախները, որոնք սպառնալիք են ստեղծում զինված ուժերի տեղաբաշխման վայրում: Ասվածից բխում է շահագործողի երկու պահանջնունք՝ պաշտպանության ենթակա տարածքի մակերեսը և երաշխիքների որոշակի աստիճանը՝ կապված թիրախների՝ տրված խմբի ոչնչացման խնդիրը լուծելու հետ: Պարզ է, որ խնդրի պայմանները բավարարող բազմաթիվ տեխնիկական լուծումներ կլինեն, քանի որ ուսզանելի կառավարության տարաբնույթը գուգորդումների միջոցով կարելի է ստեղծել բազմաթիվ և բազմազան համակարգեր:

Դրանք կարող են լինել հայտնաբերման գոտիների տարրեր հեռավորություններ ունեցող ռադիոտեղորշումային համակարգեր, մահաբեր ազդեցության և հեռահարության տարրեր ցուցանիշներով հրիոներ և այլն: Եթե շահագործող փորձի մասնավորեցնել այս տեխնիկական բնութագրերը (այսինքն՝ հուշել, թե առաջադրանքն ինչպես պետք է կատարվի), ձեռքբերումային նախագիծը կարող է ընթանալ այնպիսի ուղղով և հանգել տեխնիկական այնպիսի լուծումների, որոնք պարտադիր չեն, որ ապահովեն որակ/զին հարաբերակցության հնարավորինս բարձրագույն արժեքը:

## **Կատարողական ցուցանիշների, արժեքի և ժամկետների դիտարկումը**

Վերոշարադրյալից հետևում է, որ ռազմական այս կամ այն պակասությունները հաղթահարելուն ուղղված առավել գերադասելի տեխնիկական լուծման ընտրությունը հարկ է դիտարկել որպես ձեռքբերման բուն գործընթացի մաս, իսկ ձեռքբերման կառավարչին անհրաժեշտ է շնորհել գործողությունների բավարար ազատություն, որպեսզի նա կատարան ուսումնասիրել և զնահատել հնարավոր տարրերակների համապատասխանությունը շահագործողի պահանջներին: Հաճախ սա նշանակում է ընտրություն կատարել միանգանայն տարրեր արժեքային և կատարողական ցուցանիշներ ունեցող տարրերակների միջև: Ավելին՝ հատկապես այն դեպքերում, երբ ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները սերիականորեն չեն արտադրվում և չեն կարող անմիջապես գննել, դրանց շահագործման հանձնվելու ժամկետները (նախագծի ժամկետները կամ ժամանակային սանդղակը) կարող են զգալիորեն տատանվել:

Այս երեք գործոնները (կատարողական ցուցանիշները, արժեքը և ստացման կամ շահագործման ժամկետները) սովորաբար որոշակի կախում ունեն միմյանցից: Սպասելի է, օրինակ, որ ավելի լավ կատարողական ցուցանիշներ ունեցող ռազմատեխնիկան (ինչպես օրինակ՝ մեծ արագություն զարգացնելու ունակ և անձնակազմի ֆիզիկական պաշտպանության բարձր մակարդակ ապահովող հետևակային ռազմամեթենան) ավելի բանկարժեք կլինի, քան դրա ավելի ցածր ցուցանիշներով համարժեքը: Սակայն պաշտպանական կազմակերպությունների բնական գայթակղությունը գնել հասանելի լավագույնը (և ուստի սովորաբար ամենաթանըլը), պարտադիր չեն, որ լինի ամենալավ ընտրությունը: Իրականում դա կարող է հանգեցնել անզամ ձեռքբերումային աղետի (օրինակ, երբ ռազմատեխնիկան արդեն գնված է, սակայն գոյություն չունեն այն պատշաճ կերպով սպասարկելու միջոցներ կամ հնարավորություններ): Սա, անշուշտ, կլլանի այն ռեսուրսները, որոնք կարող են պաշտպանական ծրագրում ավելի օգտակար կիրառություն գտնել: Նմանապես ամենաէժան տարրերակը, հաճախ լինելով ֆինանսական տեսակետից ամենագրավիչը, նույնպես կարող է լավագույն ընտրությունը չլինել: Կլինեն այլ հնարավոր տարրերակներ, որոնք ներդրումների փոքրաքանակ

հավելման դիմաց էական առավելություններ կընձեռեին կատարողական կամ ժամկետային ցուցանիշների առումներով: Մեկ գործոնի վրա կենտրոնանալու փոխարեն հարկ է Վերոնշյալ երեք գործոնները համապետ միմյանց հետ, որպեսզի հնարավոր լինի գտնել այն լուծումը, որը պարունակում է հնարավորինս լավագույն կատարողական ցուցանիշները, առավել մոտն է պահանջվող ժամկետներին և ընդունելի է իր արժեքով: Հնարավոր որոշումների գնահատման այս գործընթացում վերլուծական որոշակի հնտուրյուններ են անհրաժեշտ, սակայն գերադասելի լուծումը ստորաբար (քայլ ոչ միշտ) կլինի կատարողական ցուցանիշների անհրաժեշտ պահանջներին համապատասխանող տարրերակներից ամենաէժանը:

Այստեղ կարևոր է շեշտել, որ արժեքը պետք է հաշվարկել՝ նկատի առնելով ուազմատեխնիկայի պիտանիության ամրող պարբերաշրջանը: Պատմական փորձը ցույց է տալիս, որ ուազմատեխնիկայի նմուշի գուտ գննան արժեքը նրա տնօրինման ընդհանուր (այսինքն՝ հետազայտմ սպասվող) ծախսերի ընդամենը փոքր մասն է, ուստի, որպես հիմք, անբավարար է մրցակից այլընտրանքների հետ համեմատելու համար: Օրինակ՝ գննան ցածր արժեքով ուազմատեխնիկայի նմուշը կարող է հուսափ չլինել և պահանջել սպասարկման ու վերանորոգման ավելի մեծ ծախսեր, քան գննան արժեքով ավելի քանկ տարրերակը: Հետևաբար առաջինի պիտանիության պարբերաշրջանի գումարային ծախսը կլինի ավելի մեծ: Սակայն գոյություն ունեն մի շարք միջոցներ, որոնք օգնում են գննահատելու ուազմատեխնիկայի պիտանիության (կամ գործարկման) պարբերաշրջանի ծախսերը և որոշելու, թե այդ ծախսերի որ տարրերն է պետք հաշվառել ձեռքբերումային նախագծում:

Վերոնշյալ երեք գործոններից միակը, որի նկատմամբ պաշտպանական կառույցն ունի առավելագույն վերահսկողություն, կատարողական ցուցանիշներն են: Քանի որ դա ակներևաբար արժեքի վրա լրջորեն ազդող գործոններից է, ապա էական նշանակություն ունի այն, որ պահանջմունքների սահմանման հարցում պատասխանատու անձինք ուազմական ոլորտի բոլոր կարիքները գնահատեն հնարավորինս անաշառ, և որ նշված կարիքներն անկախ մարմնի կողմից հավելյալ փորձաքննության ու վերատուգման ենթարկվեն: Ինչպես նախորդ օրինակում, այնպես էլ այստեղ նախագծերի հետ անմիջապես առնչվող անձանց մոտ կարող է առաջանալ լավագույնը ձեռք բերելու բնական գայթակղություն, ինչի արդյունքում նրանք երթեմն ձգտեն անհարկի կարերելու (հաճախ՝ անզիտակցաբար) կատարողական ցուցանիշների դերը: Պաշտպանական կառույցի ընդիհանուր շահերը, ինչևէ, պահանջում են, որ ձեռք բերվեն ձևակերպված պակասությունները լրացնելու համար անհրաժեշտ և բավարար կատարողական ցուցանիշներ ունեցող ուազմատեխնիկա և (կամ) ծառայություններ, ըստ որում դա արվի առանց զգայի հավելյալ ծախսերի, որոնք կարելի կլիներ ուղղել ուազմական կազմակերպության համար առաջնահերթ այլ ծրագրերի իրականացմանը: Կատարողական ցուցանիշներն այսպիսով պետք է ենթարկվեն մանրակրկիտ և անաշառ ուսումնասի-

րության, որպեսզի հնարավոր լինի իրավես հաստատել դրանց համապատասխանությունը շահագործողի պահանջներին: Այս առաջարկները, որոնք ավելի բարձր կատարողական ցուցանիշներ են հայտարարագրում, սովորաբար նաև ավելի մեծ վաճառքի գին են ենթադրում: Պահանջնունքների ձևակերպմամբ գրաղվող անձը պետք է կարողանա ապացուցել աշխատանքային այդ հավելյալ ցուցանիշների անհրաժեշտությունը: Նախագծի վերանայման և դրանում ճշգրտումների կատարման ընթացում սա է լինելու այն կարևորագույն չափանիշներից մենքը, որի քննությամբ որոշումներ ընդունելու լիազորություն ունենող անձինք վերառութելու են մինչ այդ պահը կատարված աշխատանքը և կամ արտոններու են նախագծի շարունակումը, կամ պահանջելու են հավելյալ ուսումնասիրություն (տես ստորև «Զեռքբերման իրականացումը և բոլորաշրջանները» բաժինը): Այս հարցում անհրաժեշտ է որոշակի ողջամտություն դրսերել, սակայն արժե դիտարկել նաև որոշակի ներդրումների հնարավորությունը պահանջնունքների բացահայտման նպատակով ավելի մանրազնին ուսումնասիրությունների անցկացման գործում, որոնք, օրինակ, կիրառեն շահագործողի պահանջնունքների գնահատման ավելի ֆորմալ մեթոդարանություն կամ օպերացիոն-վերլուծական գործիքներ: Զեռքբերումային թիմը պետք է քննի, թե արդյոք արդարացված է նախագծի վաղ փուլերում նման ներդրումը, այն է բռո՞ւլ կտրա արդյոք պահանջնունքների ավելի իրատեսական սահմանումը հետագայում ավելի մեծ գումարներ տնտեսել:

Կարելի է լուծումների համակշռված այլ տարրերակներ գտնել, օրինակ, ուազմատեխնիկայի աշխատանքային տարրեր ցուցանիշների միջև փոխազդումների իրականացման արդյունքում: Այլ գործունների հետ միասին դրանք և կազմեն նախագծի արժեքի և ժամանակային շրջանակների վրա: Օրինակ կարող է ընտրության խնդիր դրվել մի կողմից ավելի հուսալի ուազմատեխնիկայի փոքր քանակի, մյուս կողմից պակաս հուսալի ուազմատեխնիկայի մեծ քանակի ձեռքբերման միջև այն դեպքում, եթե երկուսն էլ ապահովում են շահագործման առումով համեմատելի որակական ցուցանիշներ: Կրկին, հիմնական խնդիրն այն է, որ ձեռքբերումային թիմերը պետք է բավարար ազատություն ունենան տարրերակների միջև փոխազդումներն ուսումնասիրելու և առավել նախընտրելի տեխնիկական որոշումները կայացնելու համար: Նրանք չպետք է սահմանափակվեն շահագործողի կողմից տրված չափից դուրս որոշակի հատկորշմամբ կամ, այլ կերպ ասած, շահագործողի պահանջնունքների փոխարեն տեխնիկական պահանջների ձևակերպումներով: Վերը բերված օրինակում շահագործողն իրականում ավելի շատ կարիք ունի ուազմատեխնիկայի առկայության որոշակի աստիճանի, քան դրա առանձին միավորների սահմանված քանակի<sup>149</sup>:

<sup>149</sup> «Պահանջված գործառույթը տրված պայմաններում, ժամանակի տվյալ պահին կամ դրա որոշակի հատվածի ընթացքում կատարել ի վիճակի լինելու տվյալ վիճակը կարողությունը, այն դեպքում, եթե պահանջվող արտաքին միջոցները հատկացված են»: Տես North Atlantic Treaty Organisation, *NATO R&M Terminology Applicable to ARMPs*, ARMP-7 (Edition 1), July 2001, 2-1:

Եվ վերջապէս, չնայած վերը բերված քննարկման ընթացքում բազմից նշվեց, որ ձեռքբերման մասնագետները պետք է առաջատար դերակատարում ստանձնեն ուղղական կարողություններում առկա պակասությունների հաղթահարմանն ուղղված տեխնիկական լավագույն լուծումների ձևակերպման գործում, անհրաժեշտ է շեշտել, որ ձեռքբերումային թիմին չպետք է օժտել այս ոլորտում գործելու և որոշումներ ընդունելու բացարձակ և միակողմանի լիազորություններով։ Փոխազումային տարրերակները համաշխելու վերաբերյալ ամեն որոշում պետք է բացատրվի շահագործողին և համաձայնեցվի նրա հետ։ Եթե տարածայնություններ են ծագում առ այն, թե լուծումների ընտրության ընթացքում որ գործուններին պետք է առավելություն տալ, իսկ որոնց ոչ, ապա այդ հարցը պետք է ուղղորդել վերադաս նարմններին և սպասել նրանց որոշմանը։ Դա բնավ չի նշանակում, թե ձեռքբերմանը զբաղվող մասնագետների և շահագործողի փոխարարերությունները հակամարտ երանգավորում ունեն, բայց որոշ պետություններ օգտակար են համարում այս երկու հանրույթների փոխգործակցությունը կարգավորելը։ Այդ նպատակով սահմանվում է գնորդ-մատակարար հարաբերությունների մի ձևաչափ, որով շահագործողը հանդիս է գալիս գնորդի դերում, իսկ ձեռքբերման մասնագետները՝ մատակարարի։

## Նախագծի Փիճանսական մատչելիությունը

Սինչ այժմ նկարագրվել է ուսումնասիրության և վերլուծության կայուն մի գործնարաց, որը քայլ առ քայլ հանգեցնում է ձեռքբերման ենթակա «ապրանք» վերաբերյալ ավելի հիմնավոր որոշումների կայացմանը։ Ամենաբարձր մակարդակում՝ պաշտպանական ոլորտի քաղաքականությունը սահմանում է ուղղական այն հանձնարարականները, որոնց գինված ուժերը պետք է կարողանան հետամուտ լինել, ապա ուղղական կարողությունների վերլուծությունը քննության է առնում այս հանձնարարականները կյանքի կոչելու տարաբնույթ ուղիները և ընտրում դրանցից ամենաընդունելին, այնուհետև շահագործողը լայնորեն ձևակերպում է իր կարիքները ուղղատեխնիկայի և (կամ) ծառայության որոշակի տեսակի հարցում։ Այս գործնարացը, որը կրկնվում է ուղղական կարողություններում առկա պակասությունների բոլոր տիպերի համար և սահմանում դրանցից յուրաքանչյուրի առաջնահերթությունը, թույլ է տալիս կազմել գինված ուժերի զարգացման պաշտպանական երկարաժամկետ և ընդհանուր ծրագիրը։ Այն սպորտաբար նախանշվում է 10 կամ 20 տարվա կտրվածքով և ձևակերպում է մարդուժի ու ուղղատեխնիկայի հարցում այն լուծումները, որոնք ունակ են լրացնելու կարողությունների ձևակերպված պակասությունները։ Բնական է՝ ծրագիրն ավելի հստակ է սկզբնական տարիների համար, եթե ուղղական կարողությունների առդեն հավանաբար ընտրված են, և ավելի ուրվագծային՝ հետագա տարիների համար, որոնց կարիքներն ու վերջիններիս բավարարման տարրերակները դեռ պետք է վերլուծվեն իրենց ամբողջության մեջ և որոշարկվեն։ Այս նկատառումնե-

որ պարտադիր կերպով պետք է դիտարկվեն արժեքի քննությանը զուգահեռ։ Պաշտպանական ծրագրին կցվում է նաև միևնույն ժամանակահատվածի ֆինանսական պլանը, որը տվյալներ է հաղորդում ծրագրի յուրաքանչյուր կետի արժեքի վերաբերյալ։ Ինչպես վերը, այստեղ ևս արժեքային տվյալներն ավելի հստակ կլինեն նախագծի առաջիկա տարիների համար և ավելի հայեցողական՝ հետագայի համար։

Անհրաժեշտ է, որ ֆինանսական պլանը պարզորոշ կերպով ի ցույց դնի առանձին նախագծերի մատչելիությունը (ընձեռնելիությունը), այսինքն՝ այն, որ նախագծի ամբողջ կենսաշրջանի ծախըր տեղափոխվում է մարդումի և պաշտպանական ծախսերի առումով բոլոր հեռանկարային ծրագրերի ունեցած հնարավորությունների շրջանակներում։ Այլ կերպ ասած՝ դա հարմար գործիք է նախագծի՝ որպես պաշտպանական ծրագրի բաղկացուցիչ մասի գործնականությունը և հուսալիությունը չափելու համար։ Մատչելիությունը, որպես այդպիսին, չի կարող գնահատվել ձեռքբերման ոլորտի կառավարիչների կողմից, քանի որ ճրանք տեսնում են միայն սեփական նախագծերի մանրամասները (մյուս կողմից, սակայն, ճրանք ներդրումը կարող է որոշակի ելակետային տեղեկություններ հաղորդել)։ Գնահատումը պետք է կատարվի պաշտպանության ոլորտի պլանավորողների կողմից, որոնց տեսադաշտն ընդգրկում է պաշտպանական ծրագիրն իր ամբողջության մեջ։

Մատչելիությունը նախագծի այն կողմն է, որը շարունակական վերանայում է պահանջում։ Նախագծի առաջնադաշտման հետ մեկտեղ աճում է դրա կենսաշրջանի ծախըրի նախնական գնահատականների ճշգրտությունը։ Միևնույն ժամանակ, անխուսափելիորեն փոխվում է նաև պաշտպանական ծրագիրը, շեղվում են դրա առաջնահերթությունները, ինչը նշանակում է, որ նախագծերը պետք է շարունակարար հարմարեցվեն նոր համընդհանուր համատեքստին։ Սա մեկ այլ պատճառ է՝ հօգուտ նախագծերի պաշտոնական, կանոնավոր և շարունակական վերանայման, ինչը սովորաբար նախատեսված և ներառված է ձեռքբերման բոլորաշրջանում (տե՛ս ստորև՝ «Ձեռքբերման իրականացումը և բոլորաշրջանները» բաժինը)։ Իրագործվում է անկախ վերասուլողների կողմից։

Այս առիթով կարևոր է նշել նաև այն, որ ֆինանսական մատչելիությունը պետք է գնահատվի նախագծի ամբողջ կենսաշրջանի յուրաքանչյուր փուլում։ Նախագծերի ծախըր հավասարաշափ չէ՝ բաղկացած չէ յուրաքանչյուր տարվա ընթացքում ծախսվող նույնաչափ գումարներից։ Կիմնեն ծախսերի բարձրակետեր և ցածրակետեր, ու դրա հետ կապված նույնական տատանումներ ուազմական այս կամ այն կառույցի անձնակազմի համալրման կարիքներում։ Այս իսկ պատճառով հեռանկարային ֆինանսական պլանավորումը պահանջում է, որ դրա մշակողները բավարար երաշխիքներ տան առ այն, որ իրենց որոշումների հետևանքները ևս կանխատեսված են պաշտպանական ծրագրում, կամ այլ կերպ՝ նախագծի շրջանակներում գննան ենթակս ուազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների գուտ գննան արժեքի հետ կապված ծախ-

սերի կողքին նախանշված է նաև նախագծի ամբողջական ծախքը՝ կապված դրանց պիտանիության պարբերաշրջանների հետ։ Նախագծերի ֆինանսավորման այս ժամանակային տարրություններն անհրաժեշտ է կառավարել և կանոնակարգել, ինչն իր հերթին պահանջում է, որ մատչելիության գնահատականները հաշվի առնեն ոչ միայն այն՝ կա՞ն արդյոք դրանք բյուջեով, այլև այն, թե հաշվի՝ են առնվում արդյոք դրանց հեռահար հետևանքները ֆինանսական և մարդկային ռեսուրսների ապագա ընդգրկման առումներով։

Մատչելիությունը, այսպիսով, նախագծերի մեկնարկի կամ շարունակության վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացքում տրվող որոշիչ գնահատականներից մեզն է։ Այդուհանդերձ, բացի նախագծի մատչելիության մեջ համոզվելուց որոշում կայացնողները կցանկանան համոզված լինել նաև, որ այն իրատեսական է կատարման ընթացքի առումով։ Այսինքն՝ նրանք կարիք ունեն տեսնելու նաև ձեռքբերման այնպիսի ռազմավարություն, որը ծրագրի հաջող իրագործումը կդարձնի խոստումնալից։

## **Ինչպե՞ս ձեռք բերել. ձեռքբերման ռազմավարությունները**

Ձեռքբերման ռազմավարությունը նկարագրում է, թե ինչպես պետք է ձեռք բերվեն պահանջվող կարողությունները։ Այս ծառայում է նվազագույնը երեք նպատակի։ Առաջինը կամ ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների ձեռքբերման տարրեր ուղիներ, ուստի ձեռքբերման ռազմավարություն մշակելու պահանջը ձեռքբերման կառավարչին պարտադրում է դիտարկել առկա հնարավորությունների ընդարձակ տիրույթ և հիմնավորել կատարված ընտրությունը։ Այսինքն՝ ձեռքբերման կառավարիչը պետք է խորանուի լինի ձեռքբերման հարցում հնարավոր նոտեցումների վերլուծության մեջ և բաղդատի յուրաքանչյուր առանձին կարողության ձեռքբերման ուղիների առավելություններն ու թերությունները։ Մասնագիտական այս ուղղության շնորհիվ արդյունարար որոշումներն ավելի հիմնավոր քննույթ են ստանում։ Երկրորդը ձեռքբերման ռազմավարությունն ուղենիշային քննույթի տեղեկություններ է հաղորդում նախագծի տևողության վերաբերյալ, իսկ վերջինն կարող է բավականին երկարատև ընթացք ունենալ և ականատեսը լինել իր իրագործման ընթացքում դեկավար աճնանակազմի մի քանի դարձապույտների։ Երրորդը՝ ձեռքբերման ռազմավարությունը վերասուլողներին ընձեռում է բավարար ապացույցներ առ այն, որ նախագիծը պատշաճ ընթացք կունենա և, հետևաբար, արժանի է ներառվելու պաշտպանական ընդհանուր ծրագրում։ Օրինակ՝ այն կարող է ցույց տալ, որ նախագիծը պահպանում է պետական գնումների վերաբերյալ օրենսդրական բոլոր պահանջները, կարող է հասնել որակ/զին հարաբերակցության հնարավոր առավելագույն գործակցին, որ նախագծի հետ կապված ոխկերը նվազեցված են ընդունելի մակարդակի և այլն։ Բերված պատճառների լույսի ներք հասկանալի է, որ ձեռքբերման ռազմավարությունները ստանում են ընդունված կառուցվածքով պաշտոնա-

կան փաստարդի տեսք: Վերոնշյալ հանգամանքներից բացի՝ այն կարող է նաև վերստուգիչ ցանկի դեր կատարել՝ ապահովելով ձեռքբերման կառավարչի կողմից հաջող ձեռքբերման համար անհրաժեշտ բոլոր հնարավոր նկատառումների հաշվառումը:

Ձեռքբերման ռազմավարությունները պետք է կենդանի փաստարդեր լինեն: Դրանց բազմաթիվ տարրեր նախագծի առաջխաղացման հետ մեկտեղ պետք է լրացակվեն, իսկ տարրեր կողմեր տարրեր շեշտադրություն ստանան: Հետևաբար դրանք պետք է ենթակա լինեն մշտական և կանոնավոր վերանայման, արդիականացման և փոխհամաձայնեցման: Չնայած ձեռքբերման ռազմավարությունները նախագծերի տարրեր տիպերի համար տարրեր կերպ են մշակվում և տարրեր պետություններում տարրեր սկզբունքներով են բաժանվում առանձին մասերի, դրանց հիմնական գծերը շարունակում են մնալ նոյնը: Բացի նախագծին առնչվող տարրական տեղեկություններից և ձեռքբերման ռազմավարությունն ավելի լայն համատեքսուում ներկայացնող հիմնական նյութի ներածությունից դրանց մեկնակետը ձեռքբերումային թիմի կողմից գործընթացի ընդհանուր տեսականի սահմանումն է, դրա նկարագրությունն ու հիմնավորումը: Կան ռազմական կառույցի կարողությունների պակասությունները լրացնելուն ուղղված ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների ձեռքբերման տարրեր ուղիներ, և դրանցից նախընտրելին կարող է ձևակերպում ստանալ՝ միայն խնդիրը մի քանի տեսանկյունից դիտարկելու արդյունքում: Դրանք վերաբերում են հետևյալներին.

- **Կա՞ աղյուր նոր ռազմատեխնիկայի գնման անհրաժեշտություն:** Ռազմատեխնիկայի որոշ տեսակներ կարելի են ոչ թե գնել, այլ վարձակալել: Դրանց պիտանիության պարբերաշրջանի ծախրի հաշվարկը, ինչպես նաև հարցերի ավելի լայն շրջանակի հետ առնչվող մի շարք նկատառումներ կարող են բացահայտել, որ վարձակալությունն ավելի լավ պայմաններ է առաջադրում պակասությունների բավարարման երկարաժամկետ լուծումների առումով: Օրինակ մի շարք պետություններ անձնակազմի սպասարկման և խաղաղ ժամանակներում փոխադրամիջոցների ապահովման հարցը լուծելու համար ընտրել են առևտրային կազմակերպություններից մերենաներ վարձակալելու տարրերակը: Եթե անգամ այդպիսի վարձակալության հնարավորություն չկա, նոր ռազմատեխնիկայի/ծառայությունների գնումը չպետք է ինքնարտինքյան դիտարկվի որպես ռազմական կարողությունների պակասությունների հաղթահարման միակ կամ լավագույն տարրերակը: Ընծայված ռազմատեխնիկայի ընդունումն ու օգտագործումը, ինչպես նաև պետական գույքացանկից կամ արտաքին աղյուրներից ձեռք բերված միավորների վերափոխումը կամ արդիականացումը նույնքան ընդունելի միջոցներ են, որքան պատրաստի ապրանքի գնումը կամ նոր մշակումը: Ընդհանուր առմանք, սակայն, պետք է նշել, որ նման լուծումները հազվադեպ են հնարավոր, և պաշտպանական ոլոր-

տի ձեռքբերումները հիմնականում նախատեսում են նոր ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների գնում:

- **Արտադրվո՞ւմ են, արդյոր, ձեռքբերման ենթակա ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները սերիականորեն, թե՞ դրանք անհրաժեշտ է մշակել:** Ռազմական կարողությունների պակասությունների համարումը սահմանված պահանջներին լիովին համապատասխանող ռազմատեխնիկայի մշակման միջոցով որոշ առավելություններ է ընձեռում, որոնցից ամենակարևորն այն է, որ շահագործողը ստանում է ճշշտ այն, ինչի կարիքն ունի (կամ թերևս կարծում է, թե ունի): Կարող են լինել դեպքեր, երբ դա լուծման միակ հասանելի տարրերակն է: Պահանջվող տեխնոլոգիաները կարող են գոյություն չունենալ, ինչը, օրինակ, հաճախ է պատահում, երբ գիտության վերջին նվաճումներին փորձում են ռազմական կիրառություն հաղորդել: Սակայն մարտական տեխնիկայի մշակումն ընդհանուր առնամբ քանիքարժեք ու ռիսկային գործ է, և նմանատիպ նախագծերը հասանելի են քիչ թվով երկրների սովորաբար միայն նրանց, ովքեր ունեն սեփական ռազմաարդյունաբերական համալիր: Երկրների մեծագույն մասը ստիպված է ընտրություն կատարել շուկայում առևա բազմատեսակ հաճակարգերի տեսականուց, որոնք կարող են լինել ինչպես քաղաքացիական նշանակության սերիական արտադրանքներ (ՔՆԱ, COTS), այնպես էլ ռազմական (Ո-ՆԱ, MOTS): Քանի որ Ք/Ո-ՆԱ ապրանքներն ի սկզբանե մշակվել են բուն պատվիրատուների համար, դրանց ձեռքբերումը գրեթե միշտ կապված է սեփական կարիքների հարցում այս կամ այն կերպ փոխսպառումների գնացու հետ: Մյուս կողմից, սակայն, պատրաստի ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները սովորաբար ունեն շահագործման որոշակի տարեգործյուն, դրանց անսարքությունները և առաջացրած խնդիրները հիմնականում հղկված են, իսկ կատարողական ցուցանիշները տեսանելի կամ ապացուցված: Ավելին՝ դրանց մշակման ծախսերն արդեն հաշվի են առնված արժեքում, ուստի ապրանքն արդյունքում ավելի էֆան է ստացվում: Մշակման արդյունավետությունը ցուցադրած արտադրական կաղապարի առկայությունն այն ավելի «հասանելի» է դարձնում ավելի սեղմ ժամանակամիջոցում: Այս առավելությունները Ք/Ո-ՆԱ ձեռքբերումները (հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները) ավելի հրապուրիչ են դարձնում անզամ այն պետությունների համար, որոնք ավանդաբար զբաղվում են սպառազինության համակարգերի մշակմամբ, և այդորինակ մի շարք պետություններ ներկայում խրախուսում են հենց նման նախագծերը: Կարևոր է նշել, սակայն, որ անգամ Ք/Ո-ՆԱ ձեռքբերումները կարող են նախատեսել դրանց հարմարաբերման հետ կապված սահմանափակ քնույթի մշակումային աշխատանքների կատարում, ինչը ևս պետք է հաշվի

առնվի նախագծի ռիսկերի գնահատման ընթացքում: Որպես օրինակ բերենք ծառայությունների ձեռքբերումը. դրանք գրեթե միշտ կարող են համապատասխանեցվել առանձին պատվիրատուի պահանջներին, և անհրաժեշտ է որոշակի միավորից աշխատանքի իրականացում ապահովելու համար տարրեր աղբյուրներից ձեռք բերված համակարգերի (օրինակ՝ պաշտպանական բազմաթիվ համակարգերի կազմում ներառված սենսորային համակարգերի, հրագենի և զինված ստորաբաժանումների դեկավարման միջոցների) փոխհամաձայնեցումը և համատեղելիությունը:

- **Ինչպիսի՞ն է ձեռքբերման մասշտարը:** Զեռքբերման ռազմավարությունը պետք է նաև ընդիհանուր գծերով որոշի, թե ինչ է հարկավոր ձեռք բերել: Վերը նշված սենսորային համակարգերը, հրագենը և զինված ստորաբաժանումների դեկավարման միջոցները կարող են, օրինակ, դիտարկվել որպես երեք առանձին ձեռքբերումային նախագծեր: Այդ դեպքում համընդհանուր համակարգում դրանց ինտեգրացիայի պատասխանատվությունը կրնկնի ձեռքբերումային թիմի և վերջնական շահագործողի վրա: Համակարգային պլանավորման և վերլուծության արդիական մերողներում և ներկայիս լավագույն գործելակերպում ավելի ընդունված է ամբողջական համակարգի արտադրության պատասխանատվությունը հիմնական կայալառուին փոխանցելը, ով արդեն պետք է կազմակերպի ենթակապալառուների հետ պայմանագրերի կազմումը նախագծով պահանջվող տեխնիկական հատկություններին, արժեքին և ժամանակային սանդղակներին համապատասխանող տեխնիկայի և (կամ) ծառայությունների ապահովումն իրագործելու նպատակով: Զեռքբերման մասշտարների խնդրի այլ ասպեկտներից է այն նկատառումների քննարկումը, թե անհրաժեշտության դեպքում ինչ օժանդակ տարրեր կարող են ընդգրկվել նախագծում: Որպես ընդիհանուր փաթեթի բաղկացուցիչ նաև պաշտպանական բարդ համակարգ ձեռք բերելիս արժեք ձեռք բերել նաև այնպիսի օժանդակ տարրեր, ինչպիսիք են պահեստամասերը, նյութատեխնիկական ապահովման և սպասարկման միջոցները, ինչպես նաև անձնակազմի կամ, առնվազն, անձնակազմի վերապատրաստողների համար տարաբնույթ ուսումնական ծրագրերը:
- **Հնարավո՞ր է արդյոք պահանջվող ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները ձեռք բերել մի քանի մատակարարներից:** Եթե կան մեկից ավելի մատակարարներ, որոնք պատրաստ են ապահովելու պահանջվող ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները, ապա ամենաարդյունավետ տարրերակները որոշելու համար անհրաժեշտ են հավելյալ նկատառումներ արժեքի, կատարողական ցուցանիշների և ժամանակային սանդղակների համեմատություն: Միայն ձեռքբերման մրցակցային գործընթացը կարող է հանգեցնել իրավես

լավագույն տարրերակների բացահայտմանը: Մրցակցության գործնթացում շահագրգիռ կողմերին պետք է հրավիրել ներկայացնելու նախանշված պահանջների վերաբերյալ իրենց առաջարկները, ապա պետք է գնահատել դրանք և ընտրել հաղթողին (տե՛ս ստորև «Մրցակցային ձեռքբերում» բաժինը): Այս պրակտիկան բազմաթիվ երկրների պետական գնումների քաղաքականության անօտարելի տարրերից է, քանի որ այն վճռորոշ նշանակություն ունի որակ/գին հարաբերակցության հնարավոր առավելագույն արժեքն ապահովելու հարցում: Այն դեպքերում, եթե մրցակցության անցկացումն անհնար է կամ բացառված, միևնույն է՝ հարկ է ջանքեր գործադրել որակ/գին հարաբերակցության առավելագույն հնարավոր արժեքն ապահովելու համար: Օրինակ հնարավոր է շահագրգորել մրցակցությունը ենթակապայառումների միջև, նախագիծը բաժանել մի քանի փուլերի, որոնց մի մասը կարելի է անցկացնել մրցակցային հիմունքով, համապատասխան գնային համաձայնությունների օգնությամբ կապալառուին խրախուսել չքարձացնել արժեքը (տե՛ս ստորև): Այն իրավիճակներում, եթե մրցակցությունն անհնարին է, ձեռքբերումային թիմը բոլոր դեպքերում պետք է սահմանի իր հայեցողությամբ ընդունելի նվազագույն պահանջները (մասնավորապես արժեքի հարցում) և պատրաստ լինի մերժելու ցանկացած պայմանագիր, որը դրանց չի համապատասխանում:

- *Կա՞ արդյոք նմանատիպ ձեռքբերումային նախագծով հետարրակած այլ պետություններ ևս: Եթե կան ուրիշ երկրներ, որոնք նմանատիպ պահանջներ ունեն, ապա նպատակահարմաք է միջազգային ձեռքբերումային նախագծի կազմումը և իրականացումը: Սի կողմից դա նշանակում է հնարավոր գիշումների գնալ սեփական պահանջների հարցում, քանի որ դրանցից ոչ բոլորը կարող են բավարարվել, մյուս կողմից այս եղանակը ծրագրի ծախսը բաշխում է մասնակից բոլոր պետությունների միջև: Ընորիկվ մեծածավալ արտադրության ֆինանսական շահավետության՝ այս կերպ ձեռք բերված ապրանքները և (կամ) ծառայությունները ավելի ցածր արժեք կունենան:*
- *Պե՞սոք է արդյոք նշված կարողությունը ձեռք բերել միանգամից: Խնդրո առարկա ձեռքբերումը մասնատելով և տրոհելով մի քանի հաջորդական ենթանախագծերի միջև (Եվոլյուցիոն կամ փուլային ձեռքբերում) կարելի է և պակասեցնել ոլուկերը, ինչը կարևոր է հատկապես տեխնոլոգիական նշակումների կարիք ունեցող նախագծերի դեպքում, և ավելի արդյունավետորեն բաշխել նախագծի ֆինանսավորումը:*

Սիասին վերցրած՝ այս նկատառումները ձեռքբերումային թիմին թույլ են տալիս ձևակերպել ձեռքբերման տարրերակների ընդհանուր պատկերը, որն ապա կարող է հիմնավորվել և փաստագրվել տվյալ նախագծի ձեռքբերման ոպգմապարության մեջ: Կարող է որոշվել, օրինակ, ոպգմատեխնիկան ձեռք

բերել վարձակալության հիմքով և մեկ մատակարարից կամ մրցույթ հայտարարել ընտրելու առաջադիր պահանջներին առավելագույնս համապատասխանող ՔՆՍԱ ապրանքները: Այսպիսի ընդհանուր որոշման հանգելուց հետո ձեռքբերումային թիմը կարիք կունենա քննելու, թե ընտրված տարրերակն ինչպես պետք է իրազործել կրկին հիմնավորելով և ներառելով կայացված որոշումները ձեռքբերման ռազմավարության մեջ: Հնարավոր նկատառումների շրջանակը կարող է ընդգրկել՝

- Նախագծի կառուցվածքը. ինչպե՞ս է նախագիծը տարաբաժանվելու ըստ ժամանակային հատույքների, ի՞նչը պետք է իրականացնել յուրաքանչյուր փուլում, ծրագրի մեկնարկի/շարունակության վերաբերյալ վճռորդ որոշումները ե՞րբ և ո՞ր կետերում պետք է կայացվեն: Այս ամենը հաճախ պետք է իրականացնել ձեռքբերման բոլորաշրջանով նախատեսվածի համաձայն (տես ստորև «Ձեռքբերման իրականացումը և բոլորաշրջանները» բաժինը):
- Մենեջմենթի կառուցվածքը. ի՞նչ սկզբունքով պետք է կազմակերպել նախագծային թիմը ձեռքբերման մենեջմենթն արդյունավետորեն իրականացնելու համար, դրա համար ի՞նչ առանձնահատուկ հմտություններ անհրաժեշտ կլինեն և ե՞րբ, ձեռքբերումային թիմը ինչպե՞ս և ի՞նչ հաճախականությամբ պետք է փոխադրակցի նատակարարի հետ:
- Գնագոյացումը. մատակարարին ինչպե՞ս են վճարելու: Այս հարցում ընտրության երկու հիմնական տարրերակ կա՝ վճարել հաճածայնեցված գինը ռազմատեխնիկայի կամ ծառայության նախօրոք համաձայնեցված փաթեթի տրամադրման դիմաց (վճարման ֆիքսված կամ կոշտ սխեմա) կամ փոխհատուցել մատակարարի կրած ծախսերը հավելելով դրան որոշակի գումար որպես եկամուտ (վճարման «ինքնարժեք+» կամ «ծախսեր+» սխեմա)<sup>150</sup>: Ներկայումս ավելի տառածված է առաջին սխեման, հատկապես Ը/ՌՆՍ ձեռքբերումների դեպքում, քանի որ դրա առավելություններից մեկը կանխատեսելիությունն է, մյուսը գներն իշեցնելու գործում մատակարարներին խրախուսելու հնարավորությունը: Երկրորդ սխեման կարող է օգտակար լինել մեծ ռիսկեր և անկանխատեսելի այլ գործուներ պարունակող նախագծերում (սովորաբար՝ կապված տեխնոլոգիական մշակումների հետ), որոնց համար մատակարարը չի ցանկանում միայնակ պատասխանատվություն կրել: Նման հանգանաճներում օգտակար կարող են լինել նաև գնագոյացման բազմաթիվ այլ միջանկյալ տարրերակներ, որոնք նվազեցնում են նատակարարի ֆինանսական ռիս-

<sup>150</sup> Գնային կոշտ սխեման, մեկ անգամ համաձայնեցվելով, որևէ փոփոխության այլևս չի ենթարկվում: Այսպիսի պայմանագրերում հիմնական գումարը փոխհամաձայնեցվում է և կարող է փոխվել ըստ նախօրոք համաձայնեցված բանաձևի միմրայն տնտեսական պայմանների տատանումների, օրինակ՝ սղացի կամ դրամի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված:

կերը,և այդուհանդերձ՝ բավարար խթաններ են ընձեռում զները ցածր մակարդակի վրա պահելու համար<sup>151</sup>:

- Վարձավճարային սխեմաները. մատակարարը ե՞ր է վճարվելու: Զեռքբերման նախագծերի մեծ մասի երկարատև ընթացքը նշանակում է, որ հաճախ մատակարարները կարող են պահանջել վճարումները կատարել նախագծի առաջիսադաշտան հետ մեկտեղ փուլ առ փուլ, ընդիուպ դրա ավարտը: Այսիսի դեպքերում կառավարչական օգտակար հնարքներից է վճարումների կատարումը նախագծի վճռորդ փուլի հետ կապվը: Ըստ այդ՝ մատակարարը հերթական վարձավճարն ստանալու համար ստիպված պետք է լինի ցուցադրել, որ նախագիծը կարողացել է տեսանելի հաջողություններ գրանցել: Ուղենչային նման փուլերը և վճարման պայմանները պետք է ևս ձևակերպված և փաստագրված լինեն ձեռքբերման ռազմավարության մեջ:
- Սպասարկման ռազմավարությունը. ինչպես սպասարկվելու ռազմատեխնիկան իր շահագործման պիտանիության շրջանում: Նախագծի նախնական փուլերում արդյունավետ և համահավաք սպասարկման լուծումների որոշարկումը շահագործման ամքող կենսաշրջանի ծախրի հաշվարկման վճռորդ տարրերից է: Միայն դրա միջոցով է հնարավոր համոզվել, որ նախագիծն ապահովում է բարձր գործակից որակ/զին հարաբերակցության համար: Սպասարկման ռազմավարությունը պետք է հաշվի առնի և ռազմական օպերացիաների ընթացքում նյութատեխնիկական ապահովության խնդիրները, և խաղաղ պայմաններում այնպիսի ընթացիկ հարցերը, ինչպիսիք են վերանորոգումը և տեխնիկական սպասարկումը:
- Ռիսկերի կառավարումը. որո՞նք են նախագծի հիմնական ռիսկերը, և ինչպես պետք դրանք կառավարել: Ռիսկերի կառավարման պլանը ձևակերպում է տվյալ արտադրանքի հետ կապված հիմնական ռիսկերը սովորաբար գնահատելով դրանց երևան գալու հավանականությունը, իսկ առաջացման դեպքում հնարավոր ազդեցությունը, և միջոցներ է առաջ քաշում այն մեղմացնելու համար (տե՛ս ստորև՝ «Ռիսկերի կառավարում» բաժինը): Ինչպես արդեն նշվել է ձեռքբերման ռազմավարության առնչվող ընդիանուր խնդիրների համատեքստում, ռիսկերի կառավարման սույն մշակման պահանջը ձեռքբերումային թիմին պարտադրում է կանխավ մտածել, թե ինչպիսի խնդիրներ կան, որոնք կարող են վտանգել կատարողական ցուցանիշների, արժեքի և ժամանակային սանդղակների նախագծով նախատեսված արժեքները, և առաջարկել այնպիսի ուղիներ, որոնք այդպիսիք հաղթահարելու կարողություն ունեն: Օրինակ՝ կարող է առաջարկվել հավելյալ փուլեր

<sup>151</sup> Գնագոյացման խառը սխեմաները կարող են ներառել, օրինակ, ծախսերից անկախ ֆիքսված եկամուտով կամ նորմատիվ ծախսերով հաշվարկվող եկամտի բանաձևեր ընդգրկող տարբերակներ:

ներմուծել նախագիծ կամ պայմանագրում նախատեսել ոխսկերի մենեջմենթը մատակարարին փոխանցող հավելյալ կետեր և այլն: Այս ամենը պետք է արտացոլվի նաև ձեռքբերման ռազմավարության համապատասխան մասերում: Ընդհանուր առմամբ՝ նախագծի վերսուլուգողներին հետաքրքրող հիմնական կտտերից մեկն այն է, որ նախագծի ոխսկերն ընդունելի սահմաններում լինեն. դա կարող է վճռորդ նշանակություն ունենալ նախագծի շարունակությունն արտոնելու որոշման գործում:

- Պետության կողմից հատկացվող ակտիվները. նախագծի աջակցության համար պետությունից ի՞նչ ակտիվներ են պահանջվում, և ինչպես պիտի կառավարվի դրանց տրամադրումը: Չնայած նրան, որ նախագծի ռեսուրսների մեծամասնության մենեջմենթի համար պատասխանատու է մատակարարը, ձեռքբերման նախագծերի մեծամասնությունը պետական պաշտպանական հաստատությունից հատկացվող հավելյալ ռեսուրսի մշտական կարիք ունի: Օրինակ դրանք կարող են հատկացվել նախագծի մեկնարկի կամ շարունակության համար անհրաժեշտ տեղեկատվական աջակցության տեսքով, կառող է տրամադրվել արդեն գոյություն ունեցող ռազմատեխնիկա, որը հնարավոր է համակցել նոր մատակարարումներին, ենթակառուցվածքներին կամ գենքի փորձարկման հրաճարաններին: Իրենց հավաքականության մեջ դրանք կոչվում են պետականորեն հատկացվող ակտիվներ և, քանի որ մատակարարին դրանցով ապահովվելը ձեռքբերում այնին թիմի պարտականությունն է, մենեջմենթի տեսանկյունից ենթակա են հատուկ ուշադրության: Չուզահեռաբար պաշտպանական ծրագրում կարող են լինել այլ նախագծեր ևս, որոնք կապահովեն խնդրությունների նախագծով նախատեսվածի կարգի կարողություններ: Օրինակ՝ նոր նավերի ձեռքբերումը կարող է կապված լինել նավահանգիստների ենթակառուցվածքների արդիականացման մեկ այլ ծրագրի հետ: Ուստի նմանօրինակ նախագծերի հետ ցանկացած կապերը պետք է արտացոլվեն նաև ձեռքբերման ռազմավարության մեջ:
- Օֆսերային (փոխհատուցման) սինեմաները. շատ քիչ երկրներ կան, որոնք ունեն զարգացած և մեծածավալ ռազմաարդյունաբերական համալիր: Այդ է պատճառը, որ պետությունների մեծամասնությունը հարկադրված է արտաքին մատակարարներից ձեռք բերել պաշտպանական նպատակների համար նախատեսվող իր ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները: Օֆսերային սինեման պայմանավորվածության մի ձև է, որը փոխհամաժայնեցվում է գնումների մասին պայմանագրի հետ զուգահեռ և նպատակ ունի որևէ կերպ փոխհատուցելու արտաքին աղբյուրներից հարկադրաբար կատարվող ձեռքբերման հետևանքով ներքին շուկայի կրած վճասները: Մի շարք երկրներ, որպես գնումների պայմանագրի ստորագրման նախապայման, ռազմամքեր-

թի մատակարարների առջև օֆսերային պայմանավորվածություններ ձևակերպելու և ներդնելու պահանջ են դնում: Այսպիսով՝ օֆսերային առաջարկները պետք է մշակվեն և գնահատվեն ձեռքբերման հիմնական առաջարկների հետ մեկտեղ: Դրանք կարող են ընդունել տարաբնույթ ձևեր սկսած ձեռքբերման նախագծում ձեռք բերող պետության արդյունաբերական ձեռնարկությունների անմիջական մասնակցությունից (օրինակ՝ համատեղ մշակումների կամ արտոնագրված արտադրության տեսքով), մատակարարի կողմից՝ ձեռք բերող երկրի ռազմական կամ բարձրտեխնոլոգիական արդյունաբերության արտադրած այլ տիպի ռազմատեխնիկայի և ծառայությունների գնման վերաբերյալ պայմանագրերի կազմումից, ավարտած այնախի պայմանագրերով, որոնք առնչություն չունեն տվյալ նախագծով շոշափվող ոլորտների հետ (անուղղակի օֆսերային սխեմա): Ձեռքբերման նախագծի շրջանակներում օֆսերային սխեմաներ ներառելու պահանջը սպորտարար սահմանվում է պետական օրենսդրության կամ կանոնակարգերի միջոցով և այդպիսով՝ չի պատկանում ձեռքբերմային թիմի լիազորությունների շրջանակին: Նմանապես՝ այդորինակ կանոնակարգերը հաճախ նաև նատնանշում են, թե օֆսերի ինչ ձև է պահանջվում (կամ առնվազն՝ հանձնարարելի), ինչպիսին պետք է լինի դրա նվազագույն արժեքը (որը սպորտարար արտահայտվում է ձեռքբերման նախագծի ընդհանուր արժեքի տոկոսային մասով), ինչպես նաև սահմանում են չափանիշների այն խումբը, որով պիտի գնահատվեն օֆսերային նախագծերը (որպես ընդհանուր գնահատման մաս), և ընտրվեն մատակարարները: Բոլոր դեպքերում, ձեռքբերման ռազմավարությունը պետք է օֆսերային պայմանավորվածությունները ճանաչի իրեն ընդհանուր նախագծի մաս, ներկայացնի օֆսերային կամայական սխեմայի առջև դրվող պահանջները և նկարագրի, թե ինչպես պետք է կառավարել ձեռքբերման և օֆսերային նախագծերի փոխառնչությունները:

- Տարաբնույթ տեխնիկական նկատառումներ. ձեռքբերման ռազմավարության մեջ հաճախ նաև այլ՝ ավելի տեխնիկական նկատառումների կարիք կա: Դրանք կարող են ներառել նախագծի անհրաժեշտ որակի ապահովման մեխանիզմներ, շրջակա միջավայրի պաշտպանության կամ անվտանգության տարաբնույթ հարցեր, որոնց հարկ է անդրադասնալ (դրանք հաճախ պայմանավորված են պետական օրենսդրությամբ), անվտանգության նկատառումներ, կառավարչական միջոցառումներ (օրինակ՝ փորձարկման և ընդունման ռազմավարություն), որոնք անհրաժեշտ են տրված պահանջներին ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների համապատասխանությունը երաշխավորելու համար, մտավոր սեփականության պաշտպանության և դրա հետ վարվելու խնդիրներ:

Կարճ ասած՝ ձեռքբերման ռազմավարությունը պետք է բազմակողմանի մի փաստարություն լինի, որը որոշակի մասնամասնությամբ նախանշում է ձեռք-

բերման տվյալ նախագծի իրականացման ձևը: Պաշտպանական շուկան չափազանց բազմազան է, ընդգրկուն և հարափոփոխ, ուստի որկիցե նախագծի երրեմնի հաջող ընթացքն ինքնարերաբար չի երաշխավորում, որ նույն մոտեցումը հաջողության կիասնի նաև ապագայում, կամ որ մի նախագծում լավ արդյունք գրանցած մոտեցումները կարելի են հեշտությամբ տեղափոխել մեկ այլ նախագիծ: Հետևաբար կարգապահ մոտեցումը պահանջում է վերադառնալ նախնական դրույթներին և, անցյալի վիրճից համապատասխան դասեր քաղելով, ձեռքբերման առանձին ուազմավարություն մշակել յուրաքանչյուր նոր նախագծի դեպքում: Կարևոր է նաև, որ մշակվեն ճեռքբերման ուազմավարությունները (և ճեռքբերման մենեջմենթի տարրեր մոտեցումները), և դրանց պատշաճաբար հետևեն անգամ ձեռքբերման ամենափոքր նախագծերի դեպքում: Այդուհանդերձ, պարզ է, որ վերջիններիս դեպքում մասնամասնեցման աստիճանը կարող է և զգայիրեն ավելի ցածր լինել:

## Մրցակցային ձեռքբերում

Պաշտպանական ձեռքբերումներում որակ/զին հարաբերակցության հնարավոր առավելագույն արժեքին հասնելու և այն ցուցադրելու կարիքը սովորաբար պահանջում է շահագործողի պահանջները բավարարող հնարավոր լուծումները համեմատել միմյանց հետ և գերազանցելի տարրերակն ընտրել շուկայում առկա ուազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների (կամ դրանց մշակման առաջարկների) տեսականուց: Նման համեմատության իրագործման ամենաարդյունավետ, ազնիվ և բավանցիկ ձևը հայտամրցության կամ մրցակցային ձեռքբերման կազմակերպումն ու անցկացումն է: Հայտամրցությը պետական գնումների ոլորտի լայնորեն կիրառվող միջոցառումներից է: Սի շարք երկրներում այն պարտադիր է և ամրագրված է օրենսդրությամբ կամ կանոնակարգերով: Նման գործընթացը պետք է նախօրոք ծրագրվի, քանի որ այն բավականին ժամանակատար է և ճեռքբերումային թիմից որոշակի ջամփեր է պահանջում: Երբեմն այնպիսի իրավիճակներ կարող են լինել, երբ մրցակցության հնարավոր օգուտները շահամապատասխանեն դրա վրա ծախսված ժամանակին և ջանքերին: Նման իրադրությունը պետք է ոչ միայն կանխատեսվի, այլև հիմնավորվի ճեռքբերման ուազմավարության մեջ:

Ցանկացած հայտամրցությի սկիզբը հավանական մատակարարների հետ կապի հաստատումն է, սահմանված պահանջների առաջադրումը և նրանցից պատասխան առաջարկների հայցումը: Դա սովորաբար իրագործվում է հայտամրցությի մասնակցելու պաշտոնական իրավերի կամ առաջարկների հայցի առաքմանք: Փաստաթղթերի ձևաչափը կարող է տարրեր լինել, սակայն դրանք սովորաբար պիտի ներառեն համալրման ենթակա կարիքների մանրամասն տեխնիկական հատկությունը և պատասխան առաջարկի նախապատրաստման ձևի վերաբերյալ անհրաժեշտ ցուցումները (փաստաթղթերի պահանջվող բովանդակությունը և ձևաչափը, դրանց ընդունման նվազագույն պայմանները և վերջնաժամկետները): Կարիք չկա բոլոր հավանա-

կան մատակարարներին հրավիրել հայտամրցույթին մասնակցելու, սակայն ազնվության և անաշառության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է հստակորեն սահմանել նրանց ընդգրկելու հիմքերը։ Այս փուլում բարդություններից խուսափելու համար կարելի է հայտարարագրել սեփական հետաքրքրությունները և սահմանել որակավորման պատշաճ չափանիշներ։ Կարելի է անգամ կազմակերպել նախամրցութային ընտրական փուլ։ Կարենոր է նաև, որ պատասխան առաջարկներ ներկայացնելու հրավիրված յուրաքանչյուր մատակարար ձևակերպված պահանջները բավարարելու լայն կարողություններ և հնարավորություններ ունենա։ Այլ կերպ ասած՝ հայտամրցույթը պետք է լինի ազնիվ և անաշառ, այլ ոչ թե անցկացվի սուսկ մրցույթի երևութականություն ստեղծելու նպատակով և նախօրոր խև հայտնի հաղորդի սպասումով։

Հաջորդ փուլում սկսվում է հայտամրցույթի մասնակիցների առաջարկների ներկայացումը։ Այստեղ ևս փաստարդերի ձևաչափերը կարող են տարբեր լինել, սակայն ձեռքբերումային թիմը պետք է պահանջի, որ դրանք պարունակեն առնվազն նշված պահանջմունքների պակասությունների համարմանն ուղղված տեխնիկական առաջարկների ցանկը, նախագծի ենթադրվող ժամկետները և սպասվող արժեքը։ Ցանկալի և օգտակար կարող է լինել նաև այնպիսի հավելյալ տեղեկությունների առկայությունը, որոնք հիմնավորում են շահագրգիռ մասնակցի կարողությունները նախագծի պայմանները բավարարելու հարցում (օրինակ՝ ձեռնարկության անցած ուղին, հաջողությունները, անձնակազմի հիմնական անդամների որակավորումները և այլն) և ցույց են տալիս, որ նախագծի կատարումը հաջող կընթանա (դա կարող են անել այնպիսի փաստարդերը, ինչպիսիք են նախագծի նախնական պլանը, մենաշնորհի կառուցվածքը և ոչսկերի գնահատումը)։ Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հայտամրցույթների նախապատրաստումը ժամանակատար և ծախսատար գործ է, ուստի ձեռքբերումային թիմը պետք է դրա պահանջները սահմանափակի բացառապես այն հարցերի շուրջ տեղեկատվության հայցմամբ, որն օգտագործվելու է ստացված առաջարկների գնահատման ընթացքում և նպաստելու է մատակարարի ընտրությանը։ Այս փուլում մատակարարներին սովորաբար թույլատրվում է այնպիսի հարցեր ուղղել ձեռքբերումային թիմին, որոնք նպատակ ունեն հստակեցնելու հայտամրցույթում առաջարկված պահանջները։ Նման իրավիճակում մրցակցույթան արդարությունը և անաշառությունը երաշխավորելու համար կարենոր է, որ բոլոր մասնակիցներին ներկայացվող տեղեկատվությունը լինի նույնը։ Որպես ընդիհանուր կանոն՝ ձեռքբերումային թիմը պետք է համոզված լինի, որ հավասար վերաբերմունք է դրսորում բոլոր հավանական թեկնածուների հանդեպ։

Վերջնաժամկետի ավարտից հետո ձեռքբերումային թիմը և շահագրգիռ այլ կրողները պետք է վերլուծեն և գնահատեն ստացված առաջարկները։ Կրկին, անաշառության շահերից ելնելով, դա պետք է տեղի ունենա ողջամիտ պաշտոնական ձևաչափով և ընթանա կազմակերպված։ Ձեռքբերումային թիմը, անշուշտ, պետք է նախօրոր սահմանած լինի վերլուծության ո գնահատ-

ման իր չափանիշները և դրանք անաշառ կերպով կիրառի բոլոր առաջարկների պարագայում: Անաշառությունն ու անկողմնակալությունը երաշխավորելու գործում օգտակար են ձևական վերլուծության սխեմաները և թվային արժեքափորման մեթոդները: Ինչպես արդեն նշվել է, նախընտրելի լուծումը սովորաբար լինում է առաջարրված տեխնիկական պահանջները բավարարող տարրերակներից ամենաէժանը, սակայն կարող են լինել նաև բացառություններ: Օրինակ հնարավոր է, որ մատակարարներից մեկի առաջարկը մի քիչ լինի արժեքի տեսանկյունից, բայց կատարողական ցուցանիշների առումով՝ նշանակալիորեն գերազանցի ամենաէժան տարրերակի հայտարարագրած հնարավորությունները:

Անվիճելի հաղողություն որոշելուց հետո ձեռքբերումային թիմը կարող է անցնել պայմանագրի նախապատրաստմանը: Այն դեպքերում, եթե դժվար է ընտրել երկու կամ ավելի առաջարկներից մեկնումները, կարելի է «լավագույն և վերջնական» ճանաչված տարրերակների միջև նախաձեռնել մրցակցության երկրորդ փուլ՝ գնահատելով գերադասելի հայտերը միևնույն մեթոդներով, ինչ սկզբնական փուլում: Պայմանագրի հիմքում պետք է դրվեն այն առաջարկները, որոնք հաղողող ներկայացրել է մրցակցային վերջին փուլում: Անհրաժեշտության դեպքում այդ առաջարկները կարող են ճշգրտվել կամ բարեփոխվել ձեռքբերումային թիմի և մատակարարի միջև հետմրցակցային բանակցություններում: Այլ կերպ ասած՝ մատակարարը պետք է պայմանագրային հիմքով կապվի իր իսկ կողմից մրցույթին ներկայացված առաջարկների հետ: Դրանցում ոչ շատ նշանակալի փոփոխությունների իրականացման նպատակով կարելի է հետմրցութային բանակցություններ վարել հաղողություն: Ի սկզբանե առաջարկված պայմանների զգալի փոփոխությունը, սակայն, կարող է ընտրված մատակարարին հնարավորություն տալ իր առաջարկները մոտեցնելու հայտամրցույթի պայմաններին և անազնիվ կերպով առավելություն ձեռք բերելու մնացյալ մասնակիցների համեմատ: Ուստի հետմրցութային շրջանում նման բան բույլ տալ չի կարելի: Ի հավելումն մրցութային առաջարկներում մատակարարի ուրվագծած պայմանների, որոնք նկարագրում են, թե նա ինչպես պետք է բավարարի նախագծի պահանջները, պայմանագիրը պետք է պարունակի նաև պատվիրատու-մատակարար փոխահարաբերությունների տևականության կողմը կարգավորող դրույթներ: Դրանց բովանդակությունը կախված կլինի պաշտպանական կազմակերպության օրենսդրությունից: Մի շարք պետություններ մշակել են պայմանագրային դրույթների ստանդարտ համակարգ, որը կիրառվում է իրու հիմք առանձին պայմանագրերի կազմման ժամանակ<sup>152</sup>:

<sup>152</sup> Օրինակ՝ USO-ի աշխատանքային խմբի կողմից մշակվել է ռազմական ոլորտի ձեռքբերումային նախագծերի համար օգտակար պայմանագրային դրույթների համախմբ, որը կարող է հարմարեցվել առանձին պետությունների պահանջներին և նպատակներին: Տե՛ս NATO Group on Acquisition Practices (ACP-2), September 1994, [www.nato.int/structure/AC/313/intro.htm](http://www.nato.int/structure/AC/313/intro.htm):

## ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Չեղքբերնան նախագծի շրջանակներում ռիսկերի կառավարման տարաբնույթ մերողների կիրառումը նկատի է առնում և արտացոլում այն, որ կարող են ստեղծվել այնպիսի իրավիճակներ, որոնք վտանգեն նախագծի հիմնական բնութափին՝ նախատեսված կատարողական ցուցանիշներին, արժեքին և ժամանակային սանդղակներին հասնելու և դրանք ապահովել կարողանալու իրատեսականությունը, և որ նախագծի հաջողության հավանականությունը կազի, եթե այդ կամ նման հանգամանքները (դրանց հետ վարվելու հիմնական միջոցների հետ միասին) հնարավոր լինի նախօրոր կանխատեսել: Պաշտպանական նախագծերի մեծությունն ու բարդությունը դրանց առանձնակի խոցելի է դարձնում տարաբնույթ ռիսկերի առջև, ուստի ձեռքբերման ամբողջ բոլորաշրջանի ընթացքում ձեռքբերումների աստիճանական կամ փուլ առ փուլ իրականացնումը կարող է դիտվել որպես այնպիսի մոտեցում, որը նախքան ծրագիրը շարունակելու մասին որոշման կայացումը ապահովում է նախագծի ռիսկերի իջեցումը հնարավորինս ընդունելի մակարդակի:

Ռիսկերի կառավարումը նախագծի դրույթների իրագործման հետ կապված ռիսկերի վերհանումն է, կարևորության գնահատումը և դրանց հետ վարվելու ձևերի մշակումը: Պաշտպանական նախագծի ռիսկերը կարող են առաջ գալ տարբեր աղբյուրներից՝ ինչպես բուն պաշտպանական կազմակերպությունից (ներքին ռիսկ), այնպես էլ առկա կամ հնարավոր մատակարարներից ու մնացյալ արտաքին աղբյուրներից (արտաքին ռիսկ): Ներքին ռիսկի աղբյուրները կարող են կապված լինել շահագործողի պահանջմունքների փոփոխության հետ, ինչը շեղում է ռազմական առաջնահերթությունները վտանգելով նախագծի մատչելիությունը, կարող են կապ ունենալ կառավարության կազմում փոփոխությունների հետ, որոնք նախագծի իրագործելիության առումով քաղաքական վտանգներ են առաջ բերում: Արտաքին ռիսկի աղբյուրները կարող են ընդգրկել մատակարարի ֆինանսասական բարդությունները, տեխնոլոգիական ունակությունների անկատարությունը (արդյունքում՝ սահմանված հատկորոշումները բավարարելու անկարողությունը), ինչպես նաև տարադրամի փոխարժեքի տատանումները, որոնք կարող են ավելացնել նախագծի ծախսերը: Այս ռիսկերի հայտնաբերումն ու ցուցակագրումը ռիսկերի կառավարման մեջնարկային քայլն է: Նախագծին սպառնացող ռիսկերի ողջ տիրույթի հայտնաբերման գործում օգտակար մերողները կարող են ներառել, օրինակ, նմանատիպ նախագծերի հարցում նախկին փորձառության հաշվառումը, մտագրողը, իրադարձությունների գարգացման հնարավոր սցենարների վերլուծությունը, ինչպես նաև նախագծի պլանների վրա հիմնված մեթոդաբանական վերլուծությունը:

Վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրի կարևորության գնահատումը սովորաբար արվում է դրանց ծագման հավանականության և, ծագելու դեպքում, նախագծի կատարողական ցուցանիշների, արժեքի ու ժամանակային սանդղակների վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ դատողությունների

հիման վրա: Դա կարելի է անել ինչպես որակապես՝ կիրառելով, օրինակ, «քարձը», «միջին» և «ցածր» բնութագրերը, այնպես էլ քանակապես՝ թվային հաշվարկի հարմար սանդղակի միջոցով: Ոխսկը սահմանվում է որպես պատահարի հավանակության և դրա ազդեցության արտադրյալ, ինչի հաշվարկը թույլ է տալիս միմյանց հետ համեմատել այլևայլ ռիսկերը և առաջնահերթություններ սահմանել դրանցում, ընդ որում՝ ավելի բարձր ռիսկերին մենեջմենքի տեսանկյունից անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն հատկացնել: Քանակական մեռողով հաշվարկների անցկացումն ու դրանց արդյունքների իմաստավորումը միարժեքորեն ավելի հեշտ գործ է, քանի որ նախատեսում է սահմանումների ստանդարտացված համախումքը և դրա օգնությամբ ռիսկի թվայնացում: Օրինակ՝ ռիսկի հնարավոր ազդեցությունը նախագծի ժամանակային սանդղակների վրա կարելի է գնահատել 1-5 միավոր՝ կախված այն բանից, թե 1-ից մինչև 12 ամիս ընկած միջակայքում այն որքանով է ուշացնում նախագծի առաջընթացը:

Ոխսկերի հետ գործ ունենալու պյանները սովորաբար ընդունում են հնարավոր չորս ձևերից մեկը, ընդ որում՝ յուրաքանչյուր ռիսկի տեսակի համար պետք է վերլուծել և գտնել դրան համապատասխանողը<sup>153</sup>: Առաջինը՝ ռիսկերը կարող են մեղմացվել դրական միջոցառումների օգնությամբ, որոնք ուղղված են կամ ռիսկերի ի հայտ գալու հավանականության, կամ դրանց ծագման դեպքում հնարավոր ազդեցությունների նվազեցնան: Օրինակ՝ եթե ռիսկ կա, որ շահագործողի պահանջմունքները կարող են փոխվել այն բանից հետո, եթե նախագիծը մտել է պայմանագրի ստորագրման փուլ, ապա նմանատիպ ռիսկը վերլուծելու և գնահատելու պահանջն անհրաժեշտ է ներմուծել ձեռքբերման բոլորաշրջան: Եթերորդ ռիսկերը կարող են պարզապես չեղարկվել մեկ այլ պահանջն ընտրությամբ: Օրինակ՝ եթե բարձր ռիսկ կա, որ տեխնոլոգիական լուծումներն անհրաժեշտ կատարելությունը չեն ունենա, ինչի արդյունքում նախագիծը չի կարողանա ապահովել ֆինանսավորման և ժամանակային շրջանակներում նախանշված արդյունքները, ապա պետք է ընտրել այնպիսի լուծում, որը խոստանում է առավել կատարյալ տեխնոլոգիական արդյունքներ: Երրորդը՝ ռիսկերը հարկավոր է երեմն ընդունել և հաշտվել դրանց հետ: Այս տարրերակը կիրառելի է հիմնականում փոքր ռիսկերի կամ այնշափ մեծ ռիսկերի դեպքում, որ դրանց կառավարմանն ուղղված քայլերը կարող են անբույլատրելիորեն քանի և անիրատեսական լինել: Եվ վերջապես՝ ռիսկերի կառավարման գործառույթները կարելի է լիազորել մասնակից մեկ այլ կողմի: Դա կարող է լինել մատակարարը, օրինակ՝ գլխավոր կապալառուն, որն ապահովագրության միջոցով համան կառնի նախագծի հետ կապված այնպիսի ռիսկերի կառավարման իրականացումը, ինչպիսիք են ենթակապալա-

<sup>153</sup> Նշված չորս ձևերի՝ կառավարելու, խուսափելու, ընդունելու և փոխանցելու համար գոյություն ունի հարմար հապավում՝ CAAT (անգլերեն Control, Avoid, Assume, Transfer բառերից): Տե՛ս Department of Defense Defense Acquisition University, *Risk Management Guide for DoD Acquisition*, Fifth Edition (Version 2.0), June 2003, 21:

ոռւների կամ երրորդ կողմի հետ փոխարաբերությունների կարգավորման, համակարգերի միավորման աշխատանքները և այլն: Ինչեւ, պետք է նշել, որ ոխսկի փոխանցումը ստվորաբար նշանակում է հավելյալ գումարների վճարում: Եվ շնայած նրան, որ ոխսկերի կառավարումը կարելի է լիազորել մեկ այլ կողմի, ոխսկի ի հայտ գալու հետևանքների ողջ ծանրությունը, միևնույն է, ընկած կլինի պաշտպանական կազմակերպության ուսերին, քանի որ հնարավոր չի լինի ապահովել շահագործողի պահանջնունքները նախատեսված ժամանակային և արժեքային սահմաններում:

Այս գործընթացի արդյունքում էլ ստեղծվում է ոխսկի պլանը՝ ոպազմավարական մի փաստաթուղթ, որը որոշարկում է հնարավոր ոխսկերը, գնահատում և վերլուծում է դրանց լրջությունը և ուրվագծում նման հանգամանքների ի հայտ գալու դեպքում դրանց հետ վարդելու և հնարավոր հետևանքները նվազագույնի հասցնելու հիմնական ուղիները: Ոխսկի պլանը պետք է կենդանի փաստաթուղթ լինի ծրագրի առաջիսաղացմանը զուգընթաց ենթարկվելով վերանայման և արդիականացման: Ընդհանուր առմամբ նախագծի ընթացքի հետ մեկտեղ ոխսկերի մակարդակը պիտի կայուն կերպով նվազի: Միևնույն ժամանակ, ձեռքբերման ենթակա ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների բնույթի վերաբերյալ հավելյալ և ավելի մանրանասն տվյալների ի հայտ գալը անխուսափելիորեն գոյացնելու է նոր ոխսկեր:

Այս առիրով հարկ է շեշտել երկու կարևոր և վերջնական հանգամանք:

Սուաջինն այն է, որ ոխսկի որոշարկումն ու մենեջմենքը պետք է մշտապես դիտվեն դրական լույսի ներքո: Նախագծերի ներառում խնդիրներն անխուսափելի են, և որքան վաղ դրանք հայտնաբերվեն, և դրանց ազդեցությունները նվազեցնելու ուղիներ մշակվեն, այնքան ավելի մեծ կլինի նախագծի հաջողության հավանականությունը: Այսպիսով՝ կարևոր է, որ ձևավորվի այնպիսի մշակույթ, որը նախագծերի ոխսկերը ոչ թե կնույնացնի դրանց թերությունների հետ, այլ կիրախուսի ոխսկերի կառավարման իրականացումը:

Երկրորդ հանգամանքն այն է, որ ոխսկն ունի հակառակ կողմ՝ պատեհությունը: Ինչպես որ անկանխատեսելի իրադարձությունները կարող են վնասել նախագիծը, այնպես էլ կարող են հանգամանքներ ի հայտ գալ, որոնք դրական ազդեցություն կրողնեն նախագծի իրագործելիության վրա: Դրա համար անհրաժեշտ է կարողանալ ժամանակին օգտվել նման պատեհություններից: Իսկ դրանց ի հայտ գալու և դրական ազդեցությունից օգուտներ քաղելու ձևերի վերաբերյալ նախագիտելիքը ձեռքբերումային թիմին թույլ կտա նաև հասկանալ, թե ինչպես է պետք գործել նման կարճատև, սակայն պատեհ հնարավորությունների դեպքում և առավելագույն շահ ստանալ:

## Զեռքբերման իրականացումը և բոլորաշրջանները

### Ներածություն

Զեռքբերման բոլորաշրջանները ձեռքբերման ամբողջ գործընթացի կառավարման մի հարմար համակարգ են ընձեռում, որը մեկնարկում է նախագծի սկզբնավորումով և ավարտվում է նախագծի շրջանակներում ձեռք բերված բազմատեխնիկայի վերջնական դրսագրմամբ և (կամ) ստացված ծառայությունների դադարեցմամբ։ Նման մոտեցումը նախագծին օժանդակում է ամբողջ կենսաշրջանի ընթացքում կամ այլ կերպ ասած «օրորոցից մինչև զերեզման»։ Դա արվում է ընդհանուր կենսաշրջանն ավելի փոքր փուլերի հաջորդականության բաժանելու միջոցով, որոնցից յուրաքանչյուրի կառավարումն ավելի հեշտ է, քան ամբողջ նախագծինը։ Յուրաքանչյուր փուլ ներառում է ձեռքբերման որոշակի սահմանված գործընթացներ և պահանջում հստակ արդյունքներ կամ արտադրանքի առկայություն։ Պաշտպանության ոլորտում ձեռքբերման բոլորաշրջանների գործածման օրինակներ են ԱՄՆ-ի Պաշտպանական ձեռքբերումների համակարգը<sup>154</sup> և Սիացյալ Թագավորության CADMID<sup>155</sup> բոլորաշրջանը։ Պետական կամ մասնավոր ոլորտի այլ ճյուղներում ևս կարելի է գտնել բազմաթիվ նման օրինակներ։

Այսպիսով՝ ձեռքբերման բոլորաշրջանը կառավարչական մի ձևաչափ է, որը կուտակված փորձառությունը և հաստատված ամենաարդյունավետ աշխատանքային ներողները ձևական ընթացակարգերի համախումը ներառելու միջոցով ձեռքբերումային թիմին օգնում է որոշելու այն ուղիները, որոնք կինեն առավել արդյունավետը ձեռքբերման բարդ գործընթացների իրականացման համար։ Այն նաև որոշակի կարգապահություն է պարտադրում թիմին։ Դա իր հերթին երաշխավորում է, որ նախագծի հաջողության գործում ամենակարևոր և վճռորոշ դերակատարում ունեցող հարցերը կարժանանան մանրակրկիտ և բավարար վերլուծության։ Ավելին՝ ձեռքբերման բոլորաշրջանում ներառված պահանջները երաշխավորում են նախագծի ողջ ընթացքում և հատկապես դրա յուրաքանչյուր փուլի ավարտին արդյունքների ստացումը և գրանցումը, ինչը վերստուգողներին և վերադաս կառավարչական մարմնին հնարավորություն է ընձեռում գնահատելու նախագծի առաջինական մասնակի որոշելու դրա շարունակելիությունը։ Զեռքբերումների գործընթացում նմանատիպ մոտեցումների ընդհանուր նպատակը նախագծի հետ կապված ուս-

<sup>154</sup> See the United States Department of Defense Directive 5000.1, *The Defense Acquisition System*, May 12, 2003 և United States Department of Defense Instruction 5000.2, *Operation of the Defense Acquisition System*, May 12, 2003.

<sup>155</sup> Հապավումը բաղկացած է պարբերաշրջանի վեց փուլերի անվանումների համառոտությաց Մտահղացում (Concept), Գնահատում (Assessment), Ցուցադրում (Demonstration), Արտադրություն (Manufacture), Շահագործում (In-service) և Դուրսգրում (Disposal)։ Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Ձեռքբերման մենեջմենթի համակարգը նկարագրող [www.ams.mod.uk](http://www.ams.mod.uk) կայքի CADMID բաժիններում։

կերը պարզապես նվազեցնելն ու դրա հաջող իրականացումն ապահովելը, այսինքն՝ ռազմական կառույցի կարողություններում առկա պակասությունները ճիշտ ռազմատեխնիկայով, ճիշտ արժեքով և ճիշտ ժամանակին լրացնելն է։ Ամեն դեպքում պետք է նշել, որ ձեռքբերումային պարբերաշրջանով նախատեսված կառուցվածքային ձևաչափի ընձեռած օժանդակությունից անկախ՝ պաշտպանական ձեռքբերումը կա և կմնա գործարարության բարդ տեսակ, իսկ ձեռքբերման բոլորաշրջանի կազմումն ու գործարկումը պետք է միշտ դիտվեն որպես ձեռքբերման հմուտ կառավարման լրացում, այլ ոչ դրա փոխարինում։

Ձեռքբերման բոլորաշրջանները մշտապես իրենց ուշադրության ներքո են պահում նախագծի ամբողջ կենսաշրջանը։ Դա արտացոլում է այն սկզբունքը, որ պահանջվող կարողություններն ապահովող հնարավոր լուծումների երկարաժամկետ հետևանքները և մասնավորապես կենսաշրջանի ընդհանուր ծախսի վերաբերյալ նկատառումները պետք է ձեռքբերման վերաբերյալ նախնական որոշումների կայացման փուլի մաս կազմեն։ Նման ընդհանրացված մոտեցումը նշանակում է նաև, որ հաճախ կարելի է խոսսափել հետագայում հնարավոր խնդիրների առաջացումից, եթե նախապես միջոցներ ներդրվեն դրանց առաջ բերած ռիսկերի որոշարկման և հավանական հետևանքների մերժացման ուղղությամբ։ Արդի բազմաթիվ ձեռքբերումային բոլորաշրջանները, այսպիսով, հասուն ուշադրություն և նշանակալի ռեսուրսներ են հատկացնում կենսաշրջանի վաղ փուլերին, երբ վերլուծվում և գնահատվում են այն հնարավոր լուծումները, որոնք ունակ են լրացնելու ռազմական կարողություններում առկա պակասությունները։ Միացյալ Թագավորությունում ընդունված CADMID բոլորաշրջանում, օրինակ, առաջին երկու փուլերում ներդրումների համար սահմանված դրույքաչափը կազմում է նախագծով հատկացված գնումային ծախսերի մինչև 15 %-ը, որի մեծ մասը նախատեսվում է ծախսել ապահովայնացման աշխատանքների կատարման վրա<sup>156</sup>։

Ձեռքբերման ընդհանուր գործընթացը կարելի է մասնատել բազմաթիվ ձևերով և տարաբնույթ ինքնուրույն փուլերի։ Առանձին պետություններ այդ հարցում տարատեսակ մոտեցումներ են որդեգրել՝ կախված ձեռքբերման գերադասելի նախագծի բնութագրերից։ Օրինակ այն սակավարիվ երկրները, որոնք ռազմական տեխնիկա են արտադրում, ավելի մեծ հավանականությամբ այնպիսի ձեռքբերումային բոլորաշրջաններ կիրառեն, որոնցում տեխնոլոգիական մշակումների հետ կապված աշխատանքները դիտվում են որպես նախագծի առանձին փուլեր։ Դա պայմանավորված է նրանով, որ տեխնոլոգիական մշակումը բարձր ռիսկայնությամբ գործ է և մենեջմեն-

<sup>156</sup> See U.K. MoD Investment Appraisals Board Secretariat, *Smart Approvals Guidance*, Version 9.1, June 2005, ‘Main Gate’ – page 1: CADMID բոլորաշրջանի առաջին երկու փուլերն են «Մտահղացումը», որում որոշարկվում են ռազմական կարողությունների պակասությունները լրացնելով ուղղված տարբերակները, և «Գնահատումը», որի ընթացքում դրանք մանրամասն քննության են արժանանում, և ընտրվում է այն, որով նախագիծը հաջորդիվ առաջ է ընթանում։

թի տեսանկյունից լուրջ ուշադրություն է պահանջում: Պարզ է, որ այդպիսի մոտեցումներ որդեգրելու ավելի թիշ կարիք կունենա այն պետությունը, որը ձգում է պատրաստի արտադրանք գնելու, քանի որ դրա հետ կապված գիտատեխնիկական մշակումների կարիք գրեթե չկա: Ինչևէ, ձեռքբերման բոլորաշրջանի ընդհանրական և շմանավորեցված տարրերակը պետք է ներառի գործունեության չորս ընդարձակ ոլորտ, ինչը ենթադրում է նախագծի առնվազն չորս առանձին փուլ՝ ձեռքբերման ենթակա ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների ցանկի որոշում, դրանց գնում, դրանց շահագործում և, վերջապես, դրանց դուրսգրում: Վերոնշյալ բոլոր փուլերը ավելի մանրամասն կդիտարկենք ստորև:

### **Ձեռքբերման ենթակա ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների որոշումը**

Ինչպես արդեն նշվեց վերևում, ձեռքբերման ենթակա ապրանքի կամ արտադրանքի որոշումը շարունակ ճշգրտվող և կատարելագործվող մի գործնքաց է, որում ուսումնասիրվում են հասանելի բազմապիսի լուծումները, և որի իրագործման պատասխանատվությունը որոշակի մի պահի պետք է շահագործողների հանրույթից փոխանցվի ձեռքբերումային թիմին: Դա իրականացնելու պահը միանգամայն տարրեր է, սակայն ընդհանուր շահի տեսանկյունից օգտակար կարող է լինել, եթե և շահագործողները, և՝ ձեռքբերմամբ գրաղվողները այդ փոխանցումից որոշ ժամանակ առաջ և հետո աշխատեն համատեղ: Սկզբու, ինչպես վերը ևս նշվել է, շահագործողի կողմից ներկայացված ընդհանուր պահանջներին համապատասխանող ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների տեսակները վերջնականապես որոշելը ձեռքբերմամբ գրաղվող հանրույթի իրավասությունների ոլորտն է: Ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների ցանկի որոշմանն ու ձևակերպմանը հանգեցնող գործունեությունը կարող է ընդգրկել նախագծի պահանջների հաստատումը, հիմնական առաջարկների քննությունը և գերադասելի լուծման ընտրությունը: Արդյունքում՝ ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների հարցում ձևակերպված պահանջները պետք է նկարագրվեն այնպիսի մանրամասնությամբ, որպիսին անհրաժեշտ է դրանք մատակարարներին ներկայացնելու համար: Նախագծի այս փուլում կայացված որոշումներն են պայմանավորելու նախագծի ռեսուրսների նշանակալի մասի ապագա բաշխումը: Ուստի իմաստ ունի այս գործունեությունը բաժանել նախագծային երկու կամ ավելի փուլերի՝ իրենց արդյունքների գնահատումով հանդերձ, ինչն ավագ դեկավարությանը հնարավորություն կտա վերանայելու և վերահսկելու նախագծի ընթացքը:

Այս փուլի գործունեությունը մեկնարկում է փոխհամաձայնեցված փաստաթղթի ձևակերպումով, որում պաշտոնապես ամրակայվում են շահագործողի պահանջները ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների հար-

ցում<sup>157</sup>: Դրա հիմնան վրա ապա որոշակիացվում են առաջադրված պայմաններին համապատասխանող կարողությունները տրամադրելու հնարավոր ուղիները և նախնական հետազոտություններ անցկացվում առ այն, թե նշված կարողություններն ինչպես են իրենց դրսերելու մարտական գործողությունների ընթացքում, գոյություն ունեն արդյոք ցանկալի տեխնոլոգիաները, որքան կլինի նախագծի սպասավոր տևողությունը, ընդհանուր արժեքը և այլն: Այս ժամանակամիջոցում կարելի է դիտարկել նաև վերոնշյալ ցուցանիշների միջև փոխազդումների քննարկման հնարավորությունը: Այսուհետև այս բոլոր պատկերացումները վերլուծվում և գնահատվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կոճատվում ավելի հեշտ կառավարելի քանակի: Վաղ փուլերում տարվող աշխատանքները գերազանցապես գեկուցագրերի տեսք ունեն: Դրանք հիմնաված են տեխնիկական ու ռազմական գնահատականներ պարունակող եզրակացությունների և փորձագիտական կարծիքների վրա, որոնք ներկայացնում են կապալառուները կամ շահագրծողներն ու նախագծային թիմը: Գնահատման գործին կարող են օժանդակել նաև կիրառական հետազոտություններն ու համընդգրկուն օպերացիոն վերլուծությունը, ինչպես նաև տեխնոլոգիական ռեսուրսների ներգրավումը: Վատահ լինելու համար, որ գերադասելի լուծումն ապահովում է զնի համեմատ որակի գերակայության բարձր ցուցանիշ, կարևոր է վերլուծել և գնահատել հնարավոր լուծումների բազմապիսի տարրերակները և խրախուսել առեղծագրքածականություն ու երևակայություն ցուցաբերող մուտքումները: Անհրաժեշտ է նաև զուգահեռաբար նկատի առնել ձեռքբերումային հնարավոր ռազմավարությունները, քանի որ դրանք ևս կարևոր գործոններ են գերադասելի տարրերակի ընտրության գործում:

Այսօրինակ ուսումնասիրությունները, որոնք հնարավոր է տեղի ունենան աստիճանական ճշգրտումների, մանրամասնումների և կատարելազգործումների մի քանի հաջորդական փուլով, թույլ են տալիս նախագծային թիմին նեղացնել այն կանխադրույթները, որոնք հավանորեն պիտի հանդեցնեն ռազմական կարողություններում առկա պակասությունների լրացմանը, և ի վերջո, հասնել միակ տեխնիկական տարրերակի ընտրությանը<sup>158</sup>: Վերջինս պետք է

<sup>157</sup> Ինչպես ավելի կադ քննարկվել է, շահագործողի պահանջները պետք է ձևակերպեն այն, ինչն առաջնահերթ կարևորություն ունի վերջնական օգոպործողի համար: Ուստի որպես կանոն՝ դրանք պետք է ընդունեն գործառական պահանջների տեսք (պետք է սահմանեն, թե ինչ է արվելու, այլ ոչ թե ինչպես): Ըստ որում՝ դրանցից յուրաքանչյուրը պետք է օժնված լինի համապատասխան չափանիշներով (օրինակ որչափ, որտեղ, որքան ժամանակ): Դրանք ձեռքբերում ային հետագա գործունեությունը չպետք է ուղղողդեն տեխնիկական կոնկրետ պահանջները բավարարելու ուղարկ կամ խոշունքություն վիճակի համապատասխան տարրերակների դիտարկված հնարավորությունը:

<sup>158</sup> Բարյ և բանկ նախագծերի իրականացման ընթացքում կարող է, օրինակ, տեղին լինել ավելի մասնաւուն համակարգային մոդելավորման և վերլուծության անցկացումը, կիրառական հետազոտությունների և տեխնոլոգիական աշխատանքների կատարումը կամ տեխնիկական փորձարկության ցուցաբան նախագծերի մշակումը։ Պետք է տանել բավականաշափ ծավալի և մակրամասնության աշխատանք նրա համար, որ ձեռքբերումային թիմը համոզված լինի իր կայացրած որոշությունը և նրանում, որ ոհսկերը

ասպարեզի իշնի իբրև եղածների մեջ հնարավորինս համակշռված փոխգիշումային տարրերակ: Որպես այդպիսին՝ այն կարող է շահագործողի սկզբնական պահանջների մի մասը փոփոխելու կարիք օգագ: Օրինակ՝ դա կարող է լինել այն դեպքերում, երբ կատարողական ցուցանիշներում առաջարրված չափազանց բարձր պահանջները ֆինանսական տեսանկյունից անմատչելի են դարձնում ողջ նախագիծը: Այս բոլոր հարցերի շուրջ պետք է բանակցել շահագործողի հետ և փոխհամաձայնեցնել դրանք:

Հնարավոր մատակարարների հետ կապ հաստատելու հենքն ապահովելու համար հենց այս փուլում է, որ առաջարրված պահանջներին անհրաժեշտ է հաղորդել ավելի տեխնիկական բնույթ: Սովորաբար դա արվում է համակարգային մանրամասն հատկորշման միջոցով: Այն պետք է լինի մի հատկակ և միանալի փաստարույթ և պարունակի բավարար չափով տեղեկություններ, որպեսզի հնարավորություն տա մատակարարներին ներկայացնելու իրենց առաջարկները: Ինչևէ, ճիշտ այնպես, ինչպես շահագործողի պահանջները չպետք է ներկայացված լինեն այնպես, որ ապագա ձեռքբերումը տանեն մեկ ուղղությամբ, այնպես էլ այս փուլում առաջարրված տեխնիկական պահանջները չպետք է սահմանափակեն հնարավոր մատակարարների սեփական առաջարկները ուղղված ռազմական կարողություններում առկա պակասությունները լրացնելուն: Ինչպես շահագործողի, այնպես էլ տեխնիկական պահանջները պիտի արձանագրեն, թե ինչ է պետք անել, այլ ոչ թե՝ ինչպես, և ձևակերպեն այն հիմքերը, որոնք ընդունելի են դարձնում այդ պահանջները:

Դասնանք ավելի վաղ բերված օրինակին, որում եշվում էր, որ օրիային պաշտպանության անհատական շարժական համակարգի ապագա շահագործողները ձևակերպել են պահանջների մի խումբ, որը ներառում է պաշտպանության ենթակա տարածքի մակերեսը և երաշխիքների որոշակի մակարդակ թիրախների տրված խմբի ոչնչացումն ապահովելու նպատակով: Տեխնիկական պահանջները կարող են նաև սահմանել, թե շահագործողի այս պահանջներն ինչպես պետք է չափվեն, ինչպես պետք է կիրառվեն տեխնիկական չափանիշները (օրինակ ISO, Mil-Std), ինչպես պետք է կատարվի դրանց փորձարկումը, ինչպես պետք է ապացուցվի, որ առաջարկը համապատասխանում է շահագործողի պահանջներին և այլն: Ինչպես հետևում է «համակարգային հատկորշում» եզրույթից, պահանջները պետք է ձևակերպվեն ամբողջ համակարգի մակարդակում, այլ ոչ՝ ենթահամակարգերի (ռադիոտեղորոշումային համակարգեր, հրթիռային կայաններ, օպերատիվ կառավարման համակարգեր և այլն): Այսիսկ տեխնիկական պահանջների արձանագրումը չպետք է պարտադրի տեխնիկական ցուցանիշներ (ռադարների օգագության գոտի, հրթիռների մահարեր ազդեցություն և այլն), քանի որ դրանք մատակարարներ կատարեն լընթանալ կրնկրեստ պահանջները բավարարելու ուղղվ: Այս արգելվը երկու պատճառ ունի: Առաջինը՝ այն փորձառությունն ու գիտելիքը, որը ցանկալի է տեխնիկական ցուցանիշների հարցում անհրաժեշտ փոխգի-

ջումներ կատարելու և դրանով իսկ որակ/զին հարաբերակցության հնարավոր առավելագույն գործակցին հասնելու համար, առավել չափով ունեն մատակարարները, այլ ոչ թե պաշտպանական հաստատությունը։ Երկրորդը՝ եթե ընդհանուր համակարգը չգործի ինչպես հարկն է, շատ դժվար կլինի մատակարարին պատասխանատվության կանչելը, քանի որ նա ստիպված է եղել ընդունել խիստ որոշակի տեխնիկական ցուցանիշների պարտադրանքը և հնարավորություն չի ունեցել իր հայեցողությունը բանեցնելու դրանց մշակման գործում։

### **Ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների ձեռքբերում**

Գործունեության այս ոլորտի բովանդակությունը կախված է նախագծի բնույթից և ընտրված ձեռքբերումային ռազմավարությունից։ Այն կարող է, օրինակ, մասսամբ կամ ամբողջությամբ ընդգրկել գիտատեխնիկական նախագծային մշակումներ (համակարգի պահանջներին համապատասխան նոր ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների տեսակների ստեղծում), ռազմատեխնիկայի արտադրություն կամ ծառայությունների մատուցման ծրագրերի մշակում և ստեղծում, Ք/ՌՆԱ ապրանքների գնում, ստացում, ստուգողական փորձարկումներ նախքան ընդունումը։ Այս ոլորտը ևս կարող է բաժանվել նախագծային երկու կամ ավելի փուլերի։ Դրա անհրաժեշտությունը կարող է ծագել այն դեպքում, եթե նախագիծը բավականին բարդ է, ուստի մի կողմից դրա ուսկերի նվազեցման գործում ավելի օգտակար է ցուցաբերել աստիճանական մոտեցում, մյուս կողմից՝ ողջամտությունը պահանջում է ներմուծել ժամանակային նոր շրջափուլեր (արդյունքների գնահատման սանդղակներով հանդերձ) նախագիծը վերանայելու և փոփոխելու հավելյալ հնարավորությունների ստեղծման համար։

Ինչպիսին էլ լինի ձեռքբերման այս կամ այն նախագիծը, այս ոլորտի կարեռագույն գործը մատակարարի ընտրությունն է։ Որոշ նախագիծեր ի սկզբանե սահմանափակված կլինեն միայն մեկ մատակարարի հնարավորությամբ։ Սակայն շատ դեպքերում հավանական մատակարարների ցանկը բավականին մեծ կլինի, և դրանց ընտրությունը կկատարվի որոշակի մրցութային հիմունքով։ Ապագա մատակարարներին անհրաժեշտ կլինի տրամադրել ռազմական ոլորտի պահանջունքների տեխնիկական նկարագրությունը, ինչը կարող է արվել հայտամրցույթի մասնակցելու պաշտոնական հրավերի կամ առաջարկների հայցի առաքման միջոցով։ Ստացված պահաջարկներն այսուհետև պետք է վերլուծվեն և գնահատվեն, մատակարարը ընտրվի, պայմանագիրը՝ ստորագրվի (տես՝ վերը՝ «Մրցակցային ձեռքբերում» բաժինը)։ Գործունեության այս ոլորտը պետք է ավարտվի սպառագինության համակարգի կողմից պայմանագրով նախատեսված և դրա չափանիշներին համապատասխանող ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների ստացմանը և ընդունմամբ։

## **Ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների շահագործում**

Գործունեության այս ոլորտը հաճախ կլանում է նախագծի ընդհանուր ռեսուրսների մեծագույն մասը, ինչը պարզողով կերպով ի ցույց է դնում նախագծի վաղ փուլերում ամբողջական կենսաշրջանի վերլուծության անհրաժեշտությունը, մասնավորապես՝ համրնիանուր ծախրի տեսանկյունից: Նախագծի այս փուլում ռազմատեխնիկան և (կամ) ծառայությունները ռազմական կազմակերպության կողմից դրվում են շահագործնան: Զեռքբերման մենեջմենթի համատեքստում այս փուլի գործունեությունը կարող է ներառել ծառայությունների շահագործումը, պահեստանասերի և սպառման ապրանքների գնումն ու գործածումը, ռազմատեխնիկայի տեխնիկական սպասարկումը (ինչը մասամբ կամ ամբողջությամբ կարող է ընդգրկվել պայմանագրով նախատեսված ծառայությունների մեջ): Կարող է պահանջվել նաև հուսալիության ցուցադրում ըստ ընդունման չափանիշների, ինչը սովորաբար արվում է այն ռազմատեխնիկայի դեպքում, որը հատուկ մշակվել է ըստ առաջադրված պահանջների:

Գործունեության այս ոլորտի վճռորոշ մյուս կողմը պահանջմունքների փոփոխություններին գուգմանը արդիականացնումն է: Հարմարության համար արդիականացման փաթեթները կարող են դիտվել որպես ավելի փոքր նախագծեր՝ իրենց սեփական կանոններով: Դրանց մենեջմենթը պետք է իրագործվի ճիշտ այնպես, ինչպես ձեռքբերման ընդհանուր նախագծինը:

## **Ռազմատեխնիկայի դուրսգրում և ծառայությունների դադարեցում**

Գործունեության վերջնական փուլը վերաբերում է նախագծի ավարտին և գործ ունի տվյալ նախագծով ձեռք բերված ռազմատեխնիկայի դուրսգրման և ծառայությունների դադարեցման հետ: Վերջինս իրականացվում է համեմատարար պարզ և ընթանում է նախագծի պայմանագրով նախատեսված դրույթների համաձայն: Ռազմատեխնիկայի դուրսգրումը ևս համեմատարար պարզ գործ է, սակայն կարող է հավելյալ ծախսեր պահանջել (շրջակա միջավայրի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ հաճախ անհրաժեշտ է այն պատասխանատու կերպով իրագործել), իսկ երբեմն անգամ շահավետ լինել (օրինակ՝ ռազմատեխնիկայի, դրա բափունների կամ վերականգնված ու պիտանի պահեստամասերի վաճառք): Կրկին հիմնական խնդիրն այն է, որ բոլոր այս հնարավորությունները պետք է հաշվի առնվեն կանխավ և ընդգրկվեն ձեռքբերումային ընդհանուր ռազմակարության մեջ:

Այս փուլում օգտակար է նաև տալ ամբողջ նախագծի կատարման վերջնարդյունքի և դրա ձեռքբերման մենեջմենթի մատուցած դասերի գնահատականը (լավ գործավարության նշան է դրանք արձանագրելը նախագծի ընթացքին գուգահեռ, այլ ոչ՝ ավարտից հետո, եթե արդեն բավականին ժամանակ է անցել, ու հնարավոր է նաև փոխվել է անձնականը): «Քաղված դասերի» վերաբերյալ հիմնավոր և ողջամիտ գնահատականները կօժանդակեն ապա-

գա նախազօքերի արդյունավետ իրականացմանը և կկանխեն հետազայում նման սխալների կրկնությունը, կերաշխավորեն ձեռքբերման գործնթացների բազմակողմանիությունն ու համապատասխանությունը տվյալ պահի չափանիշներին ու պահանջներին, ինչպես նաև զգալի նպաստ կրերեն լավագույն փորձի կուտակման և մշակման գործում։ Այս գործի հաջողության համար անկասկած կարևոր է, որ ավագ դեկավարությունը խրախուսի ազնվության մքնուրությունը, որում մեղավորությունը չի բարդվում առանձին անհատների վրա։

### **Եզրակացություն**

Վերոնշյալ ընդարձակ ոլորտների գործունեության իրականացման նպատակով կառուցվում են ձեռքբերման տարաբնույթ բոլորաշրջաններ։ Տարբեր պետություններ ու անում են տարբեր ձևերով՝ կախված առկա նախազօքերի բնույթից և դրանց կառավարման և վերահսկողության առջև դրված ձևական պահանջներից։ Ինչևէ, գոյություն ունի երկու ընդհանուր դիտողություն, որոնք արժե հատուկ նշել։ Առաջինն այն է, որ վերը շարադրված բննարկման մեծագույն մասը վերաբերում էր ձեռքբերման բոլորաշրջանի վաղ փուլերին։ Բազմից շեշտվել է, որ նախազօքի վաղ փուլերում կայացված որոշումները հետազում զգալի և շարունակական ազդեցություն են ունենալու, ուստի այդ որոշումների իսկապես հիմնավորվածության հարցում երաշխիքներ ստանալու նպատակով արված ներդրումները կօգնեն նվազեցնելու նախազօքի հետ կապված ռիսկերը և կմեծացնեն դրա հաջող իրականացման հավանականությունը։ Այսպիսով չափազանց կարևոր է, որ ձեռքբերման բոլորաշրջանները ներառեն լավ սահմանված և բավարար ռեսուրսներով ապահովված առաջնային փուլեր։ Եվ երկրորդ՝ ձեռքբերումային բոլորաշրջանների մշակման անհրաժեշտությունը հիմնավորված է ոչ միայն բարդ նախազօքերի դեպքում։ Չնայած ձեռքբերումային շրջափուլերը պարզ նախազօքերի դեպքում կարող են կարճեցվել, միևնույն է դրանց հիմնական սկզբունքները վավեր են բոլոր նախազօքերի համար, իսկ դրանց պահանջած աշխատանքային կարգապահությունը միշտ օգտակար։

Վերջապես, պետք է նշել, որ ձեռքբերումային բոլորաշրջանի տարբեր փուլերում տարբեր հմտություններ են պահանջվում։ Վաղ փուլերը, օրինակ, կենտրոնանում են մասնավոր կարիքներին համապատասխանող ճիշտ լուծումներ գտնելու վրա, մինչդեռ ուշ փուլերն ավելի շատ գրաղվում են նախազօքի արդյունավետ մատակարարման մենեջմենթով։ Ասվածից հետևում է, որ ձեռքբերումային թիմի կազմը կենաշրջանի ընթացքում կարող է փոփոխություններ կրել։ Դա փաստ է, որը պետք է հաշվի առնվի կանխավ՝ նախազօքի պլանավորման ժամանակ։

### **Նախազօքի վերատուգում**

Ձեռքբերումային բոլորաշրջանների նպատակներից են մենեջմենթի վերադաս մարմնին նախագիծը ժամանակ առ ժամանակ վերանայելու հնարա-

Վորույրուններ տրամադրելը և դրանց հիման վրա ապագա ընթացքի վերաբերյալ որոշումներ կայացնելը: Նախագծի վերանայման նպատակը ոչ թե նախագծի ամենօրյա ընթացքին առանց անհրաժեշտության միջանտելու հնարավորության ընձեռումն է ավագ կառավարիչներին, այլ նրանց բավարար վստահություն ներշնչելն առ այն, որ պաշտպանական ընդհանուր ծրագիրն ու դրա առանձին նախագծերը ֆինանսավես մատչելի են և իրենց իրականացնանան ամբողջ կենսաշրջանում կապահովեն որակի գերակայությունը արթերի նկատմամբ: Զեռքբերման բոլորաշրջանները, այսպիսով, նախատեսում են ժամանակային հարմար պահեր, երբ մենքնենք ավագ անձնակազմը կարող է համոզվել, որ նախագծի յուրաքանչյուր փուլի նպատակներին հասնելու համար արված գործը անհրաժեշտ մակարդակով է կատարվել և ապա կարող է հետագա փուլերի համար կամ ուղենիշներ սահմանել, կամ սահմանափակել դրանց որոշ կողմերը: Եթե նախագիծն ինչ-որ փուլի ավարտից հետո դեռ բարձր ռիսկեր է պարունակում, վերատուզողները կարող են պահանջել այն մասնակիորեն (անգամ՝ ամբողջությամբ) կրկնել կամ հավելյալ աշխատանք կատարել՝ լրացնելու նախապես ներկայացված վերլուծությունները:

Ասվածից հետևում է, որ վերատուզումը պաշտպանական կազմակերպության ներսում տեղի ունեցող գործընթաց է: Այն տարանջատված է նախագծի պարբերական վերանայումներից, որոնք (որպես արդյունավետ մենքնենքնիք բաղադրատարրեր) տեղի են ունենաւ ձեռքբերումային թիմի և մատակարարի միջև: Նախագծերի մշակման անհրաժեշտության և դրանց արժեքի շուրջ հանաձայնություն ստեղծելու նպատակով դրանք պետք է վերասուզվեն նախագծի մասնակից գրեթե բոլոր կողմերի պաշտոնական ներկայացուցիչների կողմից: Նշվածից բխում է, որ անհրաժեշտ է ստեղծել մշտական ավագ հանձնաժողով, որն օժտված կլինի պաշտպանական ընդհանուր ծրագրի վերահսկման լիազորություններով: Հանձնաժողովի կազմը կարող է փոխվել, սակայն այն պետք է ներառի պաշտպանական հաստատության ֆինանսական ծառայության ավագ պաշտոնյաների, ձեռքբերումային և շահագործող հանրույթների կազմից ընտրված ավագ ներկայացուցիչների և պլանավորողների: Նախագծի առաջընթացի մշտադիտարկումից բացի՝ այս հանձնաժողովի այարտականությունների մեջ պետք է մտնի նաև առանձին նախագծերի բոլորակումն արտոնելու վերաբերյալ որոշումների համաձայնեցումը:

Նախագիծը շարունակելն արտոնելուց բացի գոյություն չունեն վերատուզում իրականացնելու համար ժամանակային սահմանված փուլեր: Ի թիվս այլ գործոնների դա կախված է նաև կիրառվող ձեռքբերումային բոլորաշրջանից, նախագծի մեծությունից ու բարությունից, ինչպես նաև պաշտպանական հաստատության զարգացման ընդհանուր մակարդակից: Չնայած ձեռքբերումային բոլորաշրջանի յուրաքանչյուր փուլի ավարտը վերահսկողության իրականացման համար ինքնըստինքյան բնական պահ է, պարտադիր չէ, որ բոլոր փուլերն ավարտվեն պաշտոնական վերատուզմամբ: Դրա իրականացումը կանոնակարգելու համար անհրաժեշտ է սահմանել հստակ սկզբունքներ:

Նմանապես՝ չկան նաև սահմանված պահանջներ առ այն, թե ինչը պետք է վերստուգվի: Այս հարցում ևս անհրաժեշտ է սահմանել և հաստատել որոշակի ընթացակարգեր: Որոշ պահանջները բխում են վերստուգողների պարտականություններից կապված պաշտպանական ընդհանուր ծրագրի հետ: Դրանցից են, օրինակ, մատչելիության նկատառումները կամ պաշտպանական ոլորտի այլ առաջնահերթությունների ֆոնին նախագծի պահանջմունքները շարունակաբար հիմնավորելու խնդիրները: Որոշ պահանջները կապված կլինեն առանձին նախագծերի հետ: Դրանք կարող են պարտադրել ցույց տալ, որ նախագծի ոիսկերը ձևակերպված են, իսկ դրանց մեղմացմանն ուղղված միջոցները ձեռնարկված, կամ որ ձեռքբերումային ռազմավարությունը որակ/զին հարաբերակցության տեսանկյունից արդյունավետ է, նախագծի իրականացման պլանը համապատասխանության մեջ է արդյունավետ աշխատանքային պրակտիկայի հետ և այլն: Վերստուգման այս երկու ուղղությունները (արտաքին և ներքին) մատնանշում են, որ թե՛ ձեռքբերումային թիմը և թե՛ պաշտպանության ոլորտի ավելի լայն պլանավորում իրականացնող համրույթը պետք է ներգրավված լինեն վերստուգման նախապատրաստական աշխատանքներում:

## Եզրափակիչ նկատառումներ

Այս գլխում քննարկվեցին պաշտպանական ոլորտում ձեռքբերման գործընթացների կառավարման մաս կազմող մի շարք խնդիրներ: Դիտարկվեցին նաև այնպիսի մերոդական առաջարկներ, որոնց կիրառությամբ կարելի է մեծացնել նախագծերի հաջողության հետաքորությունները: Տարբեր պետություններ այս մերոդները տարբեր կերպ են ներդրել: Ձեռքբերման խնդիրներում պետական մոտեցումներին պաշտոնական տեսք հաղորդելով զգալի առավելություններ է ընձեռում, քանի որ դա հնարավորություն է տալիս ընտրելու տվյալ պետության պայմաններին առավել համապատասխանող սինթմաներ՝ վերածելով դրանք ձեռքբերումային կանոնների և ուղենիշային ձեռնարկների: Դա կերաշխավորի մոտեցումների հետևողականությունը և կոյուրացնի առանձին նախագծերից քաղվող դասերի արձանագրումը, ինչն աշխատանքային լավագույն պրակտիկայի նշակման հիմքերից է:

Այս գլխի գլխավոր ուղերձները կարելի է ամփոփել հետևյալ կետերում:

- Պաշտպանական ձեռքբերումը ենթադրում է շատ ավելին, քան շահագրողողի պահանջմունքների բավարարմանն ուղղված ռազմատեխնիկայի և (կամ) ծառայությունների պարզ գնումը: Այն գործունեության բարդ ձև է, որը պետք է հաշվի առնի ձեռքբերման առանձին նախագծի կենսաշրջանի բոլոր փուլերը:
- Էական նշանակություն ունի առանձին նախագծերի մանրակրկիտ ուսումնասիրությունը դրանց ապագա գործարկման առավել արդյունավետ ուղիների երևակման նպատակով:
- Պաշտպանական նախագծերի մենեջմենքը կարող է դյուրացվել, եթե

- դրանց ամբողջական կենսաշրջանը բաժանվի առանձին փուլերի:
- Նախագծի նախնական փուլերում (հատկապես նրանցում, որտեղ սահմանում են, թե ինչ պետք է ձեռք բերվի) ներդրումներ կատարելը շահեկան արդյունքներ է գրանցում դրանց հետագա փուլերում:
  - Քանի որ ձեռքբերումը ներառում է որակ/գին հարաբերակցության հնարավոր առավելագույն ցուցանիշն ապահովելու ունակ լուծումների փնտրությունը, այն չպետք է սահմանափակվի շահագործողի կողմից պահանջնունների տեխնիկական հատկորոշիչների խիստ որոշակի նկարագրություններով:
  - Նախագծերի հետ կապված ոխսկերն անխուսափելի են, սակայն կարող են նախատեսվել համապատասխան պլանավորմամբ:

## Լրացուցիչ գրականություն

Համացանցում հասանելի է անզերենով երկու համակողմանի սկզբնաղբյուր: Միացյալ Թագավորության պաշտպանության նախարարության «Զեռքբերումների իրականացման ձևաչափը»<sup>159</sup> կարելի է գտնել [www.aof.mod.uk/index.htm](http://www.aof.mod.uk/index.htm) հասցեում, իսկ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության Ռազմական ձեռքբերումների համալսարանի կողմից հրատարակված Ռազմական ձեռքբերումների ուղեցույցը <https://akss.dau.mil/dag/welcome.asp> հասցեում: Երկուսն էլ ունեն հարմար միջերես ձեռքբերմանն առնչվող խնդիրները հեշտորեն ուսումնասիրելու համար, ինչպես նաև որոնման համակողմանի համակարգ:

<sup>159</sup> Սույն գլուխը նախապատրաստելու ընթացքում Միացյալ Թագավորությունը սկսել է «Զեռքբերումների իրականացման ձևաչափ» (Acquisition Operating Framework, AOF) մշակումը, որը կփոխարինի ներկայիս «Զեռքբերման մենեջմենթի համակարգին» (Acquisition Management System, AMS): Վերջինիս բովանդակությունն ամբողջությամբ կտեղափոխվի նոր ձևաչափ: Մինչև դրա ավարտը, ինչն ըստ երևույթին կտևի 12 ամիս, ձեռքբերման մենեջմենթի համակարգի բովանդակությունը կշարունակի հասանելի մասը [www.ams.mod.uk](http://www.ams.mod.uk) կայքում:

## Գլուխ 7

# Թափանցիկությունը պաշտպանության մեջեցմենքում

Ուիլեմ Ֆրեդերիք վան Էքելեն

## Ներածություն

Թափանցիկությունը և հաշվետվողականությունը ժողովրդավարության հիմքն են: Այս պահանջների կիրառությունը, սակայն, մեծապես տարբերվում է, հատկապես պաշտպանության և անվտանգության ոլորտներում: Պաշտպանական ոլորտը կառավարության մյուս ճյուղերից տարբերվում է ուժի կիրառման մեջխանությամբ և արհեստավարժ ռազմական հաստատության գոյությամբ, որը սեփական պատկերացումներն ունի պետական շահերի պաշտպանության լավագույն ձևերի վերաբերյալ: Վաղուց ի վեր լայն ճանաչում է գտել այն, որ քաղաքականությունն ավելի առաջնային է, քան ռազմական ոլորտը, սակայն այս երկուսի միջև ներդաշնակ հարաբերությունները պահանջում են վստահության որոշակի հաշվեկշիռ, որով պետական գործիչները ռազմավարական փաստաթղթերի և նամակատների համաձայնեցումից հետո ձեռնպահ են մնում ոլորտի միկրոմենեցմենթին խառնվելու փորձերից, իսկ զինվորականությունը պարտավորվում է հաշվետու լինել դրանց ներդրման ընթացքի վերաբերյալ: Սա հատկապես կարևոր է խաղաղապահ առաքելությունների վարման պարագայում, քանի որ հաղորդակցության արդի պայմանները դեկավարությանը տեղում հնարավորություն են տալիս հետևելու դաշտային հրամանատարների յուրաքանչյուր որոշմանը: Թափանցիկությունը կարևոր է նաև պաշտպանության մեջեցմենթի պակաս ակներև խնդիրների համար:

Պաշտպանությունը կառավարական այլ գերատեսչություններից տարբերվում է նաև իր շեշտված երկարաժամկետությամբ: Պլանավորումը պետք է հենվի 10-ամյա կամ ավելի մեծ ընթացականություն ենթադրող ծրագրերի վրա: Ընդ որում՝ այն միևնույն ժամանակ պետք է օժտված լինի բավարար ճկունությամբ, որպեսզի ռազմատեխնիկայի որոշակի միավորների ստաց-

ման գործում չնախատեսված զարգացումներին կամ ձգձգումներին ժամանակին արձագանքելու հնարավորություն ունենա: Բյուջետային որևէ այլ կազմակերպություն չունի կապիտալ ներդրումների և ընթացիկ ծախսերի հարաբերակցության այնպիսի մակարդակ, ինչպիսին ունի պաշտպանության ոլորտը, ուստի այս տեսանկյունից տվյալ ոլորտի գործունեությունը հիմնականում նմանվում է սովորական առևտրային ձեռնարկության գործունեությանը: Ուազմական և քաղաքացիական ոլորտների փոխարարելությունների ամենաբարդ խնդիրը միջոցների բաշխումն է, որոնք ուազմական կազմակերպության կողմից սովորաբար անբավարար են գնահատվում իրենց կարիքների պաշտպանական խնդիրների իրականացման համար: Պաշտպանության ոլորտի փինանսավորումը քննարկվում և վավերացվում է պետական պատկան մարմինների կողմից պետական բյուջեի մնացյալ ծախսերին զուգընթաց, ինչից հետևում է, որ զինված ուժերը ստիպված են մրցակցության մեջ մտնել մյուս նախարարությունների կամ գերատեսչությունների հետ: Ի վերջո՞ վերջնական որոշումը պատկանում է քաղաքական գործիչներին, և նրանց, այն է՝ նախարարությունների և խորհրդարանի վրա ել ընկնում է զինված ուժերի մարտունակության մակարդակի ողջ պատասխանատվությունը:

1960-ականների սկզբներին Միացյալ Նահանգների պաշտպանության նախարար Ռոբերտ Մար Նամարան իմֆ դրես մի մեխանիզմի, որն ստացավ *Պլանավորման, ծրագրման և բյուջետավորման համակարգ* անվանումը (PPBS): Այն ապահովում է ուազմական օպերացիաների և բյուջետավորման փոխարարձ կապը:

Մար Նամարայի մտահղացումն այն էր, որ եթե իր փորձագետ-պլանավորողները կարողանան ապացուցել որևէ սպառազինության համակարգի անհրաժեշտությունը, PPBS-ն կկարողանա զինված ուժերն ապահովել դրանվ: PPBS-ն նախատեսված էր իրք այնպիսի համակարգ, որը կօգներ պաշտպանության նախարարին որոշումներ ընդունելու ազգային պաշտպանության որոշակի խնդիրների և նպատակների իրականացման մրցակցող ծրագրերի միջև ռեսուրսների պատշաճ և արդյունավետ տեղաբաշխման հարցերում: Դրա զիսավոր նպատակն էր առկա բյուջետային փինանսավորման սահմանափակումների շրջանակներում ուազմական հրամանատարության ապահովել զինված ուժերի, ուազմատեխնիկայի և օժանդակության օպտիմալ կազմով:

Իրք համակարգ՝ PPBS-ն անշուշտ ուներ թերություններ ու առավելություններ: Այն, սակայն, մինչ օրս արժեքավոր գործիք է բյուջետային նախագծերի հիմնավորման գործում, քանի որ դրանով նախատեսված մեխանիզմները բույլ են տալիս պահանջվող ապառազինությունների, ուազմատեխնիկայի և ծառայությունների նմուշների քանակի ու որակի տեսանկյունից առավել մանրակրկիտ կերպով վերլուծել և գնահատել այդ նախագծերը, ինչպես նաև մտածված կերպով բաշխել առկա ռեսուրսները ենթալով դրված նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ փինանսավորման մակարդակից: Պլանավորման ընթացքի պարտին այդ համակարգի օգնութ-

յամբ կարելի է գնահատել ստացված արդյունքն ըստ ծախսվող միջոցների արդյունավետության: Այս իմաստով՝ խորհրդարանի և հանրային կարծիքի համար համակարգն ապահովում է քափանցիկության և հաշվետվողականության որոշակի մակարդակ:

Հարկ է նշել, որ Մաք Նամարան որոշակի առավելություն ուներ այն իմաստով, որ նրա պաշտոնավարման ժամանակահատվածում պաշտպանական բյուջեն զնալով աճում էր, ինչը բոլով էր տալիս նրան պաշտպանել առաջնահերթ ուսումնական գնումների բոլոր հաստատված ծրագրերը: Լինում են տարիներ, երբ պաշտպանության բյուջեները չեն աճում, այլ հակառակը՝ կրճատվում են: Այդ իրավիճակում PPBS-ն ծգուում է կազմել չփինանսավորվող առաջնահերթությունների ցանկեր, որոնք կարող են իրագործվել միայն այն դեպքում, երբ կառավարության այլ ծրագրերը սառեցվում կամ հետաձգվում են, կամ գտնվում են անհրաժեշտ արտաքյուջետային ֆինանսական միջոցներ, որոնք հնարավոր են հատկացնել դրանց: Եվրոպական այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գերմանիան և Ռումինիան, ևս ունեն պաշտպանության ոլորտի բյուջետավորման նման փորձառություն: պաշտպանական որոշ ծրագրեր այդ երկրներում իրագործվել են բյուջեի հնարավորություններից կամ պլանավորումից դուրս:

Պաշտպանության շտարի ղեկավարի կարևոր խնդիրն է կազմել անփոփ (կոնսոլիդացված) պլան, որը հաշվի առնելով ֆինանսավորման առկա կամ սպասվող մակարդակը, կներառի զինված ուժերի բոլոր պահանջնունքներն ու կարիքները: Նա իրականացնում է ուսումնական կազմակերպության որպես մեկ ամբողջության պլանավորումը: Նա պետք է կարողանա արդարացի քայլին հանել համակարգի բոլոր տարրերին՝ միաժամանակ չխուսափելով ծանր որոշումներ ընդունելուց: Անշուշտ, դա նրա ամենաբարդ և ամենաանշնորհակալ պարտականություններից մեկն է, հատկապես երբ կրճատումներն անխուսափելի են: Դրանից հետո նա պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի հետին պլան մղված այն ծրագրերի վրա, որոնցից կարելի է հրաժարվել առանց պաշտպանության համակարգին նշանակալի վճար պատճառելու: Սովորաբար, նման որոշումները մշտական քննարկումների և վեճերի առարկա են, քանի որ մեկի կողմից որպես երկրորդական գնահատվող պահանջը և արդյունքում դրա կրճատումը մյուսի համար կարող է լինել հնարավորությունների անընդունելի կորուստ:

Քանի որ պաշտպանության ոլորտի գործունեությունն իր բնույթով երկարաժամկետ է, դրա պլանավորումը պետք է հիմնվի պետության ուսումնավարական շահերը սահմանող և վերջիններիս պաշտպանությունն ու բարելավման ուղիները նախանշող փոխհամաձայնեցված փաստաթղթերի վրա: Իդեալական պայմաններում այդ փաստաթղթերը (որոնք սովորաբար կրում են «Սպիտակ զեկույց» կամ «Պաշտպանական ակտ» անվանումները) պետք է մշակվեն տասնամյա ժամկետով, բայց միևնույն ժամանակ օրենսդրական յուրաքանչյուր պարբերաշրջանի (նոր խորհրդարանի կազմավորման) սկզբում

նաև նախատեսեն թարմացումների և փոփոխությունների հնարավորություն։ Դրանք պետք է սահմանեն զինված ուժերի կառուցվածքը և դրանց խնդիրներն ու նպատակները, իսկ գործունեության շարունակականությունը և դրա փոփոխածայնության շարունակական ամբողջական իրականացումն ապահովելու նպատակով բյուջետային ռեսուրսների բաշխումը պետք է իրականացվի բազմամյա պլանավորման միջոցով (առնվազն նախանշման մակարդակում)։ Նույն կարգով, դրանք պետք է ներառեն պետության միջազգային պարտավորությունները, ինչպես նաև միջազգային խաղաղապահ առաքելություններում երկրի մասնակցության չափանիշները։

Ըստ եռթյան՝ պաշտպանական և անվտանգության ոլորտներում պատախանատվությունն ու հաշվետվողականությունը պետք է իրագործվեն պետական բոլոր գերատեսչությունների համար ընդհանուր սկզբունքների համաձայն։ Դրա համար մասնավորապես հարկավոր է բյուջետային միջոցների իրացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվության ներկայացում։ Այստեղ, սակայն, կան որոշակի ակնհայտ բացառություններ։ Չնայած բյուջենով պետք է նախատեսվեն անհրաժեշտ ծախսեր պետական հետախուզական մարմինների համար դրանց մանրամասները հարկ է գաղտնի պահել, ինչն էլ ավելի է կարևորվում հաշվի առնելով ներքին և արտաքին անվտանգության ոլորտների շարունակական մերձեցումը, ինչը գլխավորապես պայմանավորված է ահաբեկչական խմբավորումների և կազմակերպված հանգագործության ի հայտ գալով և ահազնացմամբ։ Ներկայումս պետությունների մեծ մասը կանգնած է դժվարին երկլենտրանքի առջև, այն է անձի ազատությունների և հասարակական անվտանգության պաշտպանության արդյունավետ համատեղումը, ինչի հաջող իրագործումն էլ պայմանավորում է արդարադատության իրականացման աստիճանը և պետական իշխանությունների գործունեության ընթացքում թափանցիկության սկզբունքի պահպանումը։

Քաղաքական մակարդակում հաշվետվողականությունն իրականացվում է պետական իշխանության օրենսդիր ճյուղի խորհրդարանի հետ հարաբերություններում, ֆինանսական մակարդակում՝ պետական առողջապահության պալատի (կամ պետական առողջապահության գործակալության, իսկ ներքին մակարդակում՝ պաշտպանության նախարարության շրջանակներում։ Մի շարք երկրներում այժմ գործում է հանրային տեղեկատվության վերաբերյալ օրենք, որի համաձայն՝ առանձին քաղաքացիները և, հատկապես, զանգվածային լրատվության միջոցներն իրավունք ունեն պահանջելու և ստանալու քաղաքական որոշումների և դրանց ընդունման պատճառների վերաբերյալ տեղեկատվություն։ Մրանք կարևոր հավելումներ են այն գրավոր և բանավոր հարցադրումներին, որոնք խորհրդարանականներն իրավունք ունեն բարձրացնելու, և ավարտուն տեսքի են բերում խորհրդարանական ժողովրդավարության տարրական սկզբունքների ցանկը։ Կառավարությունները պարտավոր են ներկայացնել, բացատրել և հիմնավորել իրենց քաղաքականությունն ու ծրագրերը։ Նրանք պետք է հանրությանը բաց ներկայացնեն իրենց նպա-

տակներն ու մտադրությունները, բացատրեն և հիմնավորեն դրանք հանրային բանավեճերում՝ լինի դա խորհրդարանում թե զանգվածային լրատվության մեջ, ինչի միջոցով է միայն հնարավոր գնահատել առաջնահերթությունները և մշակել բույլատրելի այլընտրանքներ: Որքան բարձր լինի բափանցիկության և հաշվետվողականության աստիճանը, այնքան ավելին կլինի ռազմական ոլորտում հանրության աջակցության մակարդակը:

Ռազմական կազմակերպության և հասարակության փոխհարաբերությունների կարևորագույն տարրերից է որոշակի հաստատված ընթացակարգերի առկայությունը, հատկապես եթե խնդիրը վերաբերում է խորհրդարանական վերահսկողությանը: Մասնակից երկու կողմերն էլ պետք է հստակ գիտակցեն, թե օրենքով ինչ բնույթի տեղեկատվություն կարող են տրամադրել կամ ստանալ, և թե խորհրդարանական հանձնաժողովներն ինչպես կարող են դրա հետ վարվել: ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում բյուջեային և օրենսդրական ոլորտները գտնվում են հանրության սեռուն վերահսկողության ներքո, սակայն եթե խոսքը վերաբերում է քաղաքական հարցերին, հանրային քննարկման մակարդակը տարրեր երկրներում դեռ մեծ տարրերություններ է արձանագրում:

## Օրենքի իշխանություն

Օրենքի իշխանության սկզբունքի կիրառությունը ներկայում դարձել է այն կարևորագույն չափանիշներից մեկը, որը զնահատում է այս կամ այն պետության ժողովրդավարության մակարդակը և նրա համապատասխանությունը ՆԱՏՕ-ի կամ Եվրոպական Միության պես միջազգային կառույցներին անդամակցելու անհրաժեշտ պահանջներին: Հասկանալի է, որ օրենսդրությունն ինքնաստիճանի կարևոր է, սակայն ավելի կարևոր է, թե ինչպես է այն կիրառվում: Ինքնակալական (ավտոկրատ) պետական համակարգերում ևս գոյություն ունի որոշակի օրենսդրություն, սակայն դրա օրինակարգության (լեգիտիմության) աստիճանը պլյուրալիստական ժողովրդավարություն ունեցող պետությունների օրենսդրությունների համեմատությամբ զրո է կամ շատ ցածր: Օրենքի «գերը» կամ այլ կերպ՝ հիմնական գործառույթը քաղաքացու անվտանգության, ունեցվածքի և մարդու իրավունքների պաշտպանությունն է: Այն հնարավորություն է տալիս խաղաղ ճանապարհով լուծելու վիճելի խնդիրները և սահմանափակում է քաղաքական իշխանության օգտագործումը պետական իշխանությանը և կառավարական այլ մարմիններին օրենքի առջև պատասխանատու դարձնելու միջոցով: Օրենքի իշխանության լիարժեք համակարգի տարրերը հետևյալն են.

- Դատական անկախի համակարգ,
- Մարդու իրավունքների պաշտպանության անկախի հաստատություններ,
- Պետական իշխանության օրենքով և (կամ) սահմանադրությամբ ամրագրված լիազորություններ,
- Ազատ և արդար ընտրություններ,

- Քաղաքական իշխանությանը հասնելու և այն կիրառելու ուղիների թափանցիկություն և վերահսկելիություն,
- Օրենքի միջոցով ճշգրտորեն սահմանվող լիազորություններով գործող ոստիկանություն և կալանավայրեր,
- Օրենքի շրջանակներում գործող զինված ուժեր և անվտանգության ծառայություններ,
- Բնակչության մեծամասնության համար ֆինանսավես հասանելի և բանիմաց փաստաբանների օգնությամբ ելք դեպի արդարադատության համակարգ, արդարադատության իրականացմանը հասնելու խոշնդուտների չափից ավելի բարձր գանձումների և տուրքերի, ինչպես նաև դատարանում գործերի ըննության ճգճգումների բացակայություն<sup>160</sup>:

Ի հավելումն այս ընդհանուր տարրերի Յորիս Վոորհուվեն (Նիդերլանդների պաշտպանության նախկին նախարար, այժմ՝ դասախոս և Պետական խորհրդի անդամ) առանձնացնում է նաև բավարարման ենթակա ութ այլ գործառության պահանջմեր.

- Բոլոր օրենքները պետք է հավասարապես կիրառվեն բոլոր քաղաքացիների նկատմամբ՝ առանց բացառության, բացառվում է անձանց հանդեպ որևէ խորականություն, որը պայմանավորված է օրենքի հետ առնչություն չունեցող այս կամ այն հատկանիշներով խմբերին պատկանելու փասով,
- Արդար դատավարության իրավունքը երաշխավորված է բոլորի համար,
- Բացակայում է կամայական ազատազրկում (այն պետք է իրականացվի բացառապես օրինական հիմքով), ինչպես նաև կալանքի տակ գտնվող և (կամ) ազատազրկված անձանց խոշտանգումները և դժուան, անմարդկային վերաբերմունքը,
- Բոլոր օրենքները բաց են և իրապարակային, յուրաքանչյուր օրենք հասանելի է, և քաղաքացիներն ու նրանց իրավական օգնականները կարող են դրանք ազատորեն վերստուգել,
- Ջրեական իրավունքին առնչվող օրենքների հետադարձ ազդեցությունը բացառված է,
- Դատական իշխանությունը պետք է լինի պրոֆեսիոնալ, անկախ և անկողմնակալ,
- Կառավարման մարմինների լիազորությունները որոշվում են օրենքով, նրանց վարչեցողության կանոնները, որոշումները և սեփական լիազորությունների կատարումը և սահմանվում են օրենքով,
- Իրավապահ բոլոր գերատեսչությունների ապահովված են իրենց ուղղակի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ միջոցներով:

<sup>160</sup> Sie u Joris Voorhoeve, *From War to the Rule of Law. Peace Building after Violent Conflicts*, Scientific Council for Government Policy/WRR/(Amsterdam: Amsterdam University Press, 2007), 91-92:

## Խորհրդարանները, պաշտպանական ոլորտի քաղաքականությունը և ռազմական նոր խնդիրները

### Ռազմական օպերացիաներ

Սառը պատրազմի ավարտից հետո հավաքական պաշտպանությունը դադարեց գերակա լինելոց: Ուշադրության կենտրոնում հայտնվեցին կամ ներքին և արտաքին անվտանգության ոլորտների նոր ձևավորվող կապերին առնչվող խնդիրները, կաթմ խաղաղապահ առաքելությունների առաջադրած այսահանգները: Վերջիններիս մասնակցելու վերաբերյալ որոշումների կայացումն ավելի քաղաքական երանգ ձեռք բերեց, իսկ ռազմական մասնագիտությունը ոչ միայն դարձավ ավելի վտանգավոր, այլև քազմադիմ՝ քարդ և դժվարին: Բայց անառ երկրներում ձեռնարկված օպերացիաներից ի վեր զինված ուժերը ստիպված եղան իրենց վրա վերցնել քազմաթիվ նոր գործառույթներ սկսած դիվանագիտությունից ու միջնորդությունից, ավարտած վարչական ոլորտով ու վերակառուցողական ծրագրերին մասնակցությամբ: Այս ամենը նոր պահանջներ դրեց զինված ուժերի առջև՝ կապված մարտական պատրաստության խնդիրների և համատեղ ռազմական գործողություններում նրանց կարողությունների հետ: Ինչպես առանձին պետության սահմաններից ներս, այնպես էլ համատեղ գործողությունների իրականացման տարածաշրջաններում անհրաժեշտ էր ստեղծել մենեջմենտի նոր կառույցներ, որոնք կվարողանային ապահովել մեծ թվով նորեկ դերակատարների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) գործունեության համակարգումը:

Եվրախորհրդարանի պատվերով Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնը (DCAF) վերլուծել է քազմաթիվ խորհրդարանների մասնակցությունը տվյալ պետության կողմից միջազգային խաղաղապահ առաքելություններում ներգրավվելու վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում և առանձնացրել է որոշակի մոդելներ ու առավել արդյունավետ ձևաչափեր<sup>161</sup>: Մասնավորապես, վերլուծությունն ի հայտ է բերում օրենսդրական այն նորմերը, որոնք կանոնակարգում են այլ պետությունների տարածքում սեփական զինված ուժերի միավորների տեղաբաշխման նպատակով հատկացվող ֆինանսական միջոցների առանձ-

<sup>161</sup> Տե՛ս Hans Born, Alex Dowling, Teodora Fuior, and Suzanna Gavrescu, *Parliamentary Oversight and Civilian and Military ESDP Missions; The European and National Levels*, EP/EXPOL/B/2006/38 PE 348.610 of October 2007: Մասնավորապես՝ զեկույցում վելուծության են Ենթարկված Անվտանգության և պաշտպանության Եվրոպական քաղաքականության (European Security and Defence Policy, ESDP) շորու առաքելություններ *EUFOR Althea, EUFOR DRC, EUPM BiH, EUBAM Rafah*: Զեկույցը քննարկվել է Եվրախորհրդարանի Անվտանգության և պաշտպանության Ենթահանձնաժողովի (SEDE) կողմից 2008 թ. փետրվարի 11-ի աշխատանքային խորհրդակցության ընթացքում:

**նացումը:** Այդ նորմերը կարգավորում են ինչպես ֆինանսական սահմանափակումները, այնպես էլ քանակական (օրինակ՝ Իսպանիայի խաղաղապահ կոնտինենտալ առավելագույն բվարանակը ներկայում 3000 զինծառայող է, Ֆինլանդիային՝ 2000, իսկ Լիտվային՝ 420) կամ աշխարհագրական (այն տարածաշրջանները, որտեղ բույլատրված է մարտական գործողությունների իրականացումը): Խորհրդարանները ևս պետք է պահանջնեն այս կամ այն ռազմական գործողության իրականացման ընթացքում ծախսված բյուջետային միջոցների վերաբերյալ ամբողջական հաշվետվություն, ինչպես նաև գործողության արդյունքների համային գնահատական: Նման պահանջները պետք է ներկայացվեն նաև ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի կողմից:

Լուրջ փոխտիտություն է կրել նաև ռազմական մասնագիտության էությունը: Այն դարձել է ավելի փասիգավոր, ավելի ծանր (տնից և անզամ սեփական երկրից բացակայելու ժամկետների առումով) և ավելի բազմադեմ ու բարդ, քանի որ զինծառայողները ներկայում ստիպված են գործ ունենալ նոր պարտականությունների մի ամբողջ համայինի հետ, որոնք, բացի բուն մարտական գործողությունների վարումից, նախատեսում են նաև մասնակցություն կայունության վերականգնման միջոցառումներում և վերականգնողական ծրագրերում: Դա նշանակում է, որ պաշտպանության նախարարությունը պետք է ավելի շատ ժամանակ հատկացնի պարտականությունների ընդլայնված ցանկի յուրացման նպատակով մարտական պատրաստությանը, ինչպես նաև զինծառայողների շրջանում այդ առաքելությունների (որոնք իրականացվելու են երկրից հետո, անձանոթ տեղամբում և տևելու են այնքան ժամանակ, քանի դեռ չի արձանագրվել շոշափելի արդյունք) նպատակների և իրականացման ձևերի վերաբերյալ բացատրական աշխատանքների անցկացմանը: Առանձահատուկ մոտեցում են պահանջում նաև զինծառայողներին իրենց ընտանիքների, ազգականների և ընկերների հետ շփման հնարավորությունների տրամադրման, ինչպես նաև տուն վերադառնալուց հետո նրանց հոգեբանական ռեարիլիտացիայի հետ կապված հարցերը: Որքան զինված ուժերն ավելի հաճախ են հանդես գալիս որպես «պաշտպաններ» խաղաղապահ առաքելություններում, այնքան նրանց անձի ավտանգությունն ավելի մեծ ուշադրություն է պահանջում: Ընդհանուր առմամբ մեր պետությունների բնակչությունը ընդունել է այն փաստը, որ Իրաքում և Աֆղանստանում իրականացվող առաքելություններն անխուսափելիորեն կարող են հանգեցնել դժբախտ պատահարների, սակայն յուրաքանչյուր նոր զոհի հետ միասին նրանց մոտ ցանկություն է առաջանում ավելին իմանալ այդ գործողությունների նպատակի և պատճառաբանվածության մասին, և թե արդյոք ընդհանուր ջանքերով մասնակցությունը համաշափ է բաշխված ներգրավված բոլոր երկրների միջև:

Պաշտպանության ոլորտը նաև մեծապես բաղադրականացվել է: Սառը պատերազմի ընթացքում, երբ հավաքական պաշտպանությունը պետությունների թիվ մեկ խնդիրն էր, գլխավոր դերը պատկանում էր զինված ուժերին, սակայն ներկայումս, երբ ռազմական գործունեությունները հիմնական տեսակը

խաղաղապահ առաքելություններին մասնակցելն է, քաղաքական բաղադրիչը կտրուկ աճել է: Սա արտահայտվում է նաև լրատվամիջոցների հետ շփումներում նոր չափականության ի հայտ գալով: 2003 թվականին Իրաքի տարածքում անցկացվող ռազմական օպերացիայի ընթացքում զինված ուժերին կցված են եղել նաև բազմաթիվ լրագրողներ, որոնք գործել են ռազմական վերահսկողության պայմաններում, սակայն հետագայում՝ պարտիզանական պայքարի և ավտոշարասյունների ռմբակոծումների ու պայթեցումների փուլում, այդ նույն լրագրողներն ավելի մեծ ազատություն են ստացել երկրի տարածքով մեկ իդեալ տեղաշարժերում՝ հաճախ գործելով սեփական նախաձեռնությամբ և անգամ կյանքի համար չափազանց վտանգավոր իրավիճակներում: Այդ ընթացքում նրանք ձեռք են բերել հակամարտության բնույթի և կիրառվող մեթոդների, զինծառայողների կողմից իրենց պարտականությունների կատարման վերաբերյալ սեփական տպագրություններ և պատկերացումներ: Այսպիսով՝ մասնակից երկրների բնակչության տրամադրությունները և այդ առաքելություններին նրանց տված աջակցությունը մեծապես կախված է հենց ԶԼՄ-ների հաղորդած տեղեկատվությունից, քանի որ չպետք է մոռանալ, որ այն, ինչ տեղի է ունենում այսօր, հենց նույն երեկո անմիջապես հայտնվում է մեր հեռուստաէկրաններին: Այնպես որ, տարվող քաղաքականության ուղղությունների նկատմամբ կատարված մակարդակի պահպանան իմաստով լրատվամիջոցների և նրանց գործուղված բրակիցների հետ շփումների թափանցիկությունը, կապված ինչպես դրական, այնպես էլ բացասական իրադարձությունների հետ, նոր կարևորություն է ստանում:

### **Պաշտպանական գործառույթների մասնավորեցումը**

Ժամանակակից որոշ միտումներ, մասնավորապես՝ նախկինում պաշտպանական ոլորտի գործունեության մի շարք հիմնական ուղղությունների մասնավորեցումը կամ հանձնարարումը այլ գործակալությունների, զգալիորեն ավելացրել են թափանցիկության վերաբերյալ ընդհանուր պահանջների անորոշությունը: Զինված ուժերի ընդհանուր կրծատման արդյունքում մարտունակության հետ կապված խնդիրները հայտնվել են հիմնական ուշադրության կենտրոնում: Դա հանգեցրել է հաճախ այն պատկերացմանը, թե մարտական պայմաններում կարիք չկա անընդհատ ապահովելու ռազմական կազմակերպության բոլոր գործառույթները, և որ միջոցների տնտեսման նպատակով դրանց որոշակի հատվածը կարելի է հանձնարարել մասնավոր ընկերությունների: Դա առնչվում է ոչ միայն մքերային ու նյութատեխնիկական ապահովման, նորոգման ու սպասարկման ոլորտներին, այլև անվտանգության ծառայություններ մասուցող մասնավոր ընկերություններին: Նմանատիպ երևույթներ կարող են նկատվել նաև հանրային գործունեության այլ ոլորտներում, եթե վարչական ապարատի կրծատման ուղղված քաղաքական որոշումները մեծամասմբ հանգեցնում են նոր կատարողական կառույցների ձևավորմանը կամ պայմանագրային հիմքով խորհրդատվական

ծառայությունների ստացման անհրաժեշտությանը: Պաշտպանության ոլորտում գործառույթների մասնավորեցումն ընդգրկում է մթերային և նյութատեխնիկական ապահովման, նորոգման և սպասարկման ոլորտներից մինչև անվտանգության և հսկողության ծառայություններ մատուցող մասնավոր ընկերություններն ընկած ողջ տիրույթը: Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնիվ կենտրոնը (DCAF) այդ խնդիրների վերաբերյալ ծավալուն հետազոտություն է իրականացրել: Մասնավորապես, քննության են առնվել բացասական արդյունքի հանգեցրած, ուստիև սխալ որոշումները<sup>162</sup>: Գործնական փորձը ցույց է տալիս, որ դրա պատասխանատվությունը պետք է կրի ռազմական կազմակերպությունը: Հավանական կոռուպցիայի իմաստով խնդիրը երկու կողմ ունի, որոնք պետք է քննության ենթարկվեն: Մի կողմից որևէ ձեռնարկության հետ պայմանագրի կնքումը կարող է լինել անարդար մրցակցության արդյունք, երբ մի կազմակերպությունն ի սկզբանե առավելություն է ունեցել մյուս մասնակիցների նկատմամբ, մյուս կողմից՝ պայմանագրի կատարման համար ընտրված ձեռնարկությունն ինքը կարող է կոռուպցիոն աշխատանք որդեգրել իր գործունեության իրականացման ընթացքում:

### **Օրենքի կատարման մարտահրավերները**

Մի շարք խորհրդարանական ժողովրդավարությունների խոշորագույն թերությունը օրենսդրության և դրա կատարման միջև եղած խզումն է: Կառավարություններն օրենքի նախագծեր են ներկայացնում, խորհրդարանները շտկում, բարելավում և վավերացնում են դրանք, սակայն շատ քերն են որևէ ուշադրություն դարձնում գործնականում դրանց կատարմանը արդյուր ցանկալի արդյունքը ստացվե՞լ է, կամ եթե ոչ, ապա ինչո՞ւ: Նիդերլանդների խորհրդարանը մայիսյան նատաշրջանի չորեքշաբթի օրերից մեկը տրամադրում է բյուջեում հայտարարագրված միջոցառումների և նպատակների իրագործման համար հատկացված ֆինանսական ծախսերի քննությանը և վերլուծությանը, ինչը ստացել է «մասացի օր» անվանումը, քանի որ այդ օրը բացահայտվում և արձանագրվում են բազմաթիվ թերություններ ու խախտումներ: Սա ցույց է տալիս, թե այդքան զարգացած և խճճված տնտեսության պայմաններում իրականում որքան բարդ է բյուջեի պատշաճ պլանավորումը: Շատ ավելի դժվար է կանխավ գնահատել օրենսդրական նորմերի և պահանջների երկարաժամկետ ազդեցությունը: Այդ իսկ պատճառով հարկավոր է մշտական վերլուծել և միջոցներ ձեռնարկել բացահայտված թերությունների շտկման և իրավիճակի բարելավման ուղղությամբ: Նմանատիպ միջոցների անհրաժեշտությունն աճում է պայմանավորված նաև քաղաքական տարրեր կուսակցությունների միջև մրցակցության առկայությամբ, քանի որ դրանք յուրաքանչյուր աղաղակող սկանդալից կամ միջադիմացից հետո պահանջում են նոր ստուգումներ իրականացնել և միջոցներ ձեռնարկել վերահսկողության

<sup>162</sup> Fred Schreier and Marina Caparini, *Privatising Security: Law, Practice and Governance of Private Military and Security Companies*, Occasional paper No. 6 (Geneva: DCAF, 2005):

խստացման ուղղությամբ։ Այս ամենը երբեմն կարող է ծագել մեկ հրապարակումից։ Յանկայի է, որ նման խնդիրները լուծվեն խորքային վերլուծությունների արդյունքում և առանց աճապարության, քանի որ շարքային քաղաքացին ի վերջո ավելի շահգրգուված է նրանում, որ լուծումները լինեն հավասարակշռված, այսինքն՝ բյուրոկրատական ապարատի կողմից հնարավորինս նվազագույն միջամտությունների ենթակա։ Մասնագիտորեն այդ խնդիրների շրջանակում ներգրավված կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների ինքնակարգավորումն ապահովող հիմքերի ստեղծումը կարող է լուծման ինեալական տարրերակ լինել։

## **Խորհրդարանները և գնումները**

Պաշտպանական ոլորտի բյուջեի իրացման խնդրահարույց հարցերից մեկն այն պահանջն է, որ ռազմատեխնիկան լինի դիմացկուն և երկարավայաց (հաճախ՝ մինչև 40 տարվա պիտանիության ռեսուրսով)։ Դա նշանակում է, որ նոր գնումները մեծապես ազդում են զինված ուժերի մարտունակության ապագա մակարդակի վրա, և այդ հնաստով անհրաժեշտ է, որ ռազմատեխնիկան ունենա զարգացման որոշակի ներուժ, այսինքն՝ ընթացիկ կառուցվածքային բարելավումների և արդիականացմանն ուղղված թարմացումների հնարավորություն այն ժամանակ, եթե դրա պիտանիության ժամկետի՝ «կյանքի տևողության» մոտ կեսն արդեն անցել է։ Հավասարապես կարևոր է նաև այլընտրանքային տարրերակների համեմատությամբ պիտանիության ժամկետների զնահատումը։ Այստեղ է, ահա, որ որոշումների ընդունման բափանցիկությունը դառնում է հատկապես կարևոր, քանի որ հարկ է բացահայտել գննան ենթակա նոր ռազմատեխնիկայի ընդհանուր արժեքը ներառյալ համապատասխան ենթակառուցվածքների արդիականացման ծախսերը, պահեստամասերի ձեռքբերումը, անձնակազմի և վերապատրաստման գինը։ Նոր ռազմատեխնիկայի զուտ ձեռքբերումային արժեքը հաշվարկելը բավարար չէ, պեսք է նաև որոշել, թե ով է իրականացնելու այդ հաշվարկը։ Այն չի կարելի թողնել ռազմական կազմակերպության այն ստորաբաժանմանը միայն, որն այդ նոր սպառազինության կարիքն ունի. անկախ մարմնի այլնոտրանքային կարծիքը շափազանց կարևոր է այս գործում։

Ռազմական տեխնիկայի երկարակեցության մյուս հետևանքը երկրի պաշտպանական բյուջեի վրա կատարված տեխնիկական ընտրության ազդեցությունն է։ Վերջինս շատ ավելին է, եթե նախատեսվում են մեծաքանակ ձեռքբերումներ, որոնց ստացման և վճարման ժամկետը ոչ թե մեկ տարուց պակաս է, այլ մեկ տասնամյակ կամ ավելին։ Այդ դեպքում խորհրդարանը պետք է շափազանց ուշադիր լինի ննանատիպ նոր գնումների նպատակով միջոցների հատկացման հարցերում։ Ոչ հեռու անցյալում եղել են դեպքեր, եթե, օրինակ, Գերմանիայում կամ Ռումինիայում առանձին պաշտպանական ծրագրերի արժեքը գերազանցել է հաջորդող տարիների բյուջեների հնարավորությունները։

Պաշտպանական գնումները երբեք չեն եղել միանվագ որոշումներ և միշտ էլ իրականացվել են մի քանի փուլով: Պետության ռազմավարական հայեցակարգի կամ նմանատիպ փաստաթղթի մշակումից սկսած անհրաժեշտ է ձևակերպել զննված ուժերի կարիքները և առանձին ստորաբաժանումների կարիքներից առանձնացնել կարևորագույնները դրանք հայտարարելով որպես առաջնահերթ: Դրանից հետո պետք է սահմանել բյուջետային այն պարամետրերը, որոնք անհրաժեշտ են տվյալ նախագիծն իր ողջ ընթացքում ապահովելու համար: Այնուհետև պետք է վերլուծել շուկան տեսնելու, թե արդյոք գրյուրյուն ունի պահանջվող տեխնիկական պարամետրերով պատրաստի ռազմատեխնիկա, կամ թե արդյոք ճոտ ապագայում ննանը մշակվելու և (կամ) եղած մողելները նողիփիկացվելու են: Հաջորդիվ նախնական կապեր են հաստատվում հետաքրքրված մատակարարների հետ, վերլուծության են ենթարկվում նրանց առաջարկները, և կազմվում է հնարավոր այլընտրանքային տարբերակների վերջնացուցակը: Ապա ընտրված պոտենցիալ մատակարարների հետ բանակցություններ են վարդում ապագա պայմանագրի դրույթների՝ արժեքի, առարման ժամկետների, փոխհատուցման մեխանիզմների և այնի շուրջ, որոնց արդյունքում էլ որոշվում է այն ընկերությունը, որի հետ պիտի տարվեն ավելի ստույգ և մանրամասն քննարկումներ: Այս քայլերից յուրաքանչյուրը պետք է լինի թափանցիկ և ենթարկվի խորհրդարանական վերասուլցման:

Զինված ուժերի կարիքների որոշումը այնպիսի մի գործընթացի արդյունք է, որի ընթացքում հաշվի են առնվում ինչպես նախկին փորձը և ռազմավարական ու մարտավարական դրույթյունը, այնպես էլ ռազմական տեխնոլոգիաների ոլորտում նոր մշակումները և ավելին պոտենցիալ հակառակորդի հնարավորությունները: Ոչ շատ հեռու անցյալում այդ գործընթաց ներառվեցին նաև այնպիսի նոր գործիքներ, ինչպիսիք են, օրինակ, օպերատիվ վերլուծությունն ու ռազմական խաղերը: Գործընթացը սովորաբար մեկնարկում է զննված ուժերի շահագրգուված գերատեսչությունների այն շտաբներում, որոնք իրականացնում են պլանավորման և քաղաքականության մշակման աշխատանքները: Զինված ուժերի ողջ մակարդակով հավաքական պլանավորման իրագործման անհրաժեշտությունը, սակայն, ընդհանուր առմանք ավելացնում է այդ հարցում պաշտպանության նախարարության ապարատի դերը: Անցյալում ռազմական կարիքների սահմանման գործընթացի թերություններից մեկը ռազմական կազմակերպության առանձին կառույցների միջև շփումների և փոխարքած կապերի անբավարար աստիճանն էր: Դրանց մի մասը կարող էր գրաղվել այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են օպերատիվ գործունեությունը, վերլուծական և հետազոտական աշխատանքը, տեխնիկան, տեխնոլոգիան և ձեռքբերումները: Ուստի պարզ է, որ թափանցիկությունը ներքին մակարդակում նույնական կարևոր է, որքան արտաքինում:

ՆԱՏՕ-ի պաշտպանական պլանավորման գործընթացի մեծագույն առավելությունն այն է, որ Միացյալ ուժերի գլխավոր հրամանատարը ձևակերպում

Ե զինված ուժերի հեռանկարային ծրագրերը, որոնք ուղենիշ են պետական պլանավորման այնպիսի համակարգի համար, որն ուղղված կինհի դաշինքի անդամ երկրների հետ համատեղ պաշտպանության կազմակերպման նախատակին: Ներկայում այդ խնդիրը դեռ չի կորցրել իր արդիականությունը, սակայն վերջերս ՆԱՏՕ-ի օրակարգում գերակշռում է աշխարհի որոշ երկրներում ճգնաժամային իրավիճակների լուծմանը մասնակցելու խնդիրների հանդեպ ընտրողական մուտքեցումը դաշինքի ներքում և դրանից դուրս հանգեցնելով այսպես կոչված «քարի կամքի կողմից հաջողացների» ձևագործությունը: Պաշտպանական քաղաքականությունը ոչ միայն դարձել է անվտանգության ընդհանուր քաղաքականության տարրերից մեկը, այլև կորցրել է իր կարևոր միավորող քաղաքիչներից մեկը, քանի որ ներկայում չկա որոշակիություն խաղաղապահ համատեղ գործողություններին մասնակցելու կամ չմասնակցելու և կամ ուժ կողմից մասնակցելու առումով: Արյունքում ցանկափ զարգացում չի ստացել նաև ստանդարտացման քաղաքականությունը ուղղված ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ռազմատեխնիկայի միավորների փոխհամատեղելիության ապահովմանը: Միևնույն ժամանակ, ներկայում առաջին պլան միանգամայն նոր պահանջները, կապված այլ պետության գործերին ռազմական միջամտության և հակառակորդի հանդեպ ասիմետրիկ պատերազմավարության հետ, զգալիորեն բարդացրել են պայազա կարիքների քանակական կողմի որոշման խնդիրը: Ուղղական միջավայրում այժմ չափազանց նողայիկ են դարձել այնպիսի բառեր, ինչպիսիք են ճկունությունը և շարժունությունը, որոնք, սակայն, շատ հեղիերուկ են. դրանք դժվար է ձևակերպել առարկայական պահանջների լեզվով, հետևաբար և բացատրել ու մանրամասնորեն հիմնավորել: Այստեղ շատ բան կախված է յուրաքանչյուր առանձին պետության հավակնությունների աստիճանից, ինչպես նաև տվյալ երկրի անկախության և տարածքային ամբողջականության պաշտպանության հետ անմիջական կապ չունեցող համատեղ գործողությունների պատասխանատվության մի մասն իր ուսերին վերցնելու պատրաստականությունից: Բացի այդ, ահարեւէշտրյան սպառնալիքի աճը փոփոխություն է առաջ բերել պաշտպանական քաղաքականության երկու ուղղություններում: Առաջին՝ ներքին և արտաքին անվտանգության խնդիրները սկսել են դիտարկվել մեկ ընդհանուր համատեքստում, և երկրորդ՝ զինված ուժերի փոխակերպման գործընթացում հիմնական շեշտադրումը շեղվել է դեպի պատերազմավարության գերժամանակակից և բարձրտեխնոլոգիական միջոցներով ապահովումը: Անմիջապես մարտական գործողությունների վայրում իրենց խնդիրները կատարող զինվորները մշտապես վուանքի են ենթարկում իրենց կյանքը և պաշտպանության կարիք ունեն ականներից ու պայքուցիկ սարքերից: Նորագույն փորձառության լույսի ներքո (մասնավորապես կապված ռազմատեխնիկայի մեծ ծանրաբեռնվածությունների և մաշվելու արագության հետ) բազմաթիվ երկրներ ստիպված են եղել լրջորեն վերանայել ռազմական գնումների իրենց ծրագրերը:

## Պաշտպանական գնումների տիպական հաջորդականությունը

Ուզմական գնումների վերաբերյալ որոշումների կայացման գործում խորհրդարանական ներգրավվածության աստիճանը տարբեր երկրներում տարբեր է: Գերմանիան, օրինակ, բյուջեի ստուգումն ու վավերացումն իրականացնում է ամենամանրազնին կերպով տող առ տող: Նիդերլանդներում գործում է ստանդարտ ընթացակարգ, որը սկզբից մինչև վերջ հաջորդարար քննում է ռազմական գնումների բոլոր փուլերը: Խորհրդարանի հետ առաջին շփումը տեղի է ունենում, երբ ընդհանուր առմամբ ձևակերպված են օպերատիվ կարիքները անհրաժեշտ ռազմատեխնիկայի տեսակները, փոխարինման ենթակա հիմ ռազմատեխնիկայի թվաքանակը, ծրագրի գնահատվող արժեքը և այն, թե ծախսերն ըստ տարիների ինչպես են բաշխվելու:

Խորհրդարանի կողմից այդ փաստաբույրն ստանալուց և «Փայտություն ընդունելուց» հետո (ինչը նշանակում է, որ այն չի մերժվել) սկսվում է հաջորդ փուլը՝ փաստաբույրի բազմաթիվ կետերի նախապատրաստական ուսումնասիրությունը: Օպերատիվ պահանջմունքները պետք է փոխադրվեն տեխնիկական հատկորոշիչների լեզվի: Պետք է ուսումնասիրվի շուկան և կազմվի բոլոր հնարավոր մատակարարների սպառիչ ցուցակը: Եթե մոտ ապագայի կտրվածքով չկա անհրաժեշտ հատկորոշումով ռազմատեխնիկայի ոչ մի հնարավոր տարրերակ, պետք է կազմվեն մշակումային ծրագրեր արտադրական ձեռնարկությունների հետ՝ ներգրավելով, եթե հնարավոր է, նմանատիպ ռազմատեխնիկայի ձեռքբերմամբ հետաքրքրված այլ երկրների ևս:

Երրորդ քայլը հետաքրքրված մատակարարների կողմից տրամադրված տեղեկատվության մանրամասն ուսումնասիրությունն է՝ արդյոք դրանք համապատասխանո՞ւմ են ներկայացված պահանջմունքներին և ցուցանիշներին, կամ արդյոք առաջարկո՞ւմ են վերջիններիս այլմտրանքային լուծումների տարրերակներ, օգտագործվո՞ւմ է արդյոք դրանց արտադրած ռազմատեխնիկան այլ երկրներում, և ինչպիսի՞ն է վերջիններիս փորձառությունը դրա հնարավորությունների, որակի և պիտանիության հարցում, հնարավո՞ր է դրա համատեղ արտադրություն, թե՞ ոչ, հնարավո՞ր են արդյոք օֆսեթային (փոխառության) պայմանավորվածություններ և այլն: Այս ամենի ուսումնասիրությունը պետք է հանգեցնի ռազմատեխնիկայի հնարավոր մատակարարների թեկնածուների վերջնացուցակի կազմմանը:

Չորրորդ փուլը վերաբերում է կայացված պայմանավորվածությունների հիման վրա ձեռքբերման գործընթացի նախապատրաստությանը, որը երբեմն կարող է ուղեկցվել առաջարկվող ռազմատեխնիկայի առանձին նմուշների դաշտային փորձարկումներով: Սպառազինության հարցերով վարչությունն այնուհետև պետք է անց կացնի առաջարկվող ռազմատեխնիկայի բազմաշափանիշ համեմատություն: Եթե որոշ առաջարկներ համապատասխանում են ներկայացված չափանիշներին, պետք է համեմատության ներքարկվեն այլ տարրեր ևս, ինչպիսիք են մարտական արդյունավետության և անձնակազմի համար դրա անվտանգության սանրդակները: Էկոնոմիկայի նախարարութ-

յունը միաժամանակ պետք է քննարկի առաջարկվող նմուշների համատեղ արտադրության, և, եթե անհրաժեշտ է, ձեռքբերման ծրագրից դրւու փոխառության հնարավորություններին վերաբերող հարցերը։ Ժամանակի ընթացքում խորհրդարաններն ավելացնում են վերջիններիս առկայության վերաբերյալ իրենց պահանջները և պնդում, որ արտասահմանյան ռազմատեխնիկայի ձեռքբերման վրա ծախսված յուրաքանչյուր դոլար կամ եվրո փոխառությունի, այն է դրա դիմաց հավասարաթեք կամ անգամ ավելի մեծ գումարի պայմանագրեր կազմվեն սեփական երկրի արտադրական (հիմնականում՝ պաշտպանական) ձեռնարկությունների հետ։ Այս փուլում տեղեկատվության մի մասը կարող է և գաղտնի պահպել, հատկապես եթե այն վերաբերում է զինամթերքի տեխնիկական և մարտական ցուցանիշներին։ Ինչևէ, գաղտնիությունը ևս չայտնությունը է չափազանցությունների հասնի, քանի որ խորհրդարանականներին անհրաժեշտ տեղեկատվության մեծ մասը հասանելի է ռազմական գործի վերաբերյալ մասնագիտական պարբերականների և գրականության միջոցով։ Եթե լուսաբանման խևապես լուրջ կարիք կա, կարող են կազմակերպել գաղտնի լուրմներ։

Վերջին փուլ՝ որոշման ընդունումը, ենթակա է ակտիվ լրբինգի, որը ներգրավում է զանգվածային լրատվամիջոցները, խորհրդարանականներին և փորձագիտական խմբերին։ Որոշումներ կայացնող պաշտոնյաները հրավիրվում են այցելելու ձեռնարկություններ կամ մասնակցելու հասարակական ըննարկումների։ Սա նաև այն փուլն է, որում յուրաքանչյուրը պետք է չափազանց գույշ լինի, որպեսզի գերծ մնա այնպիսի նվերներ կամ ծառայություններ ընդունելուց, որոնք կարող են դիտվել որպես ազբեցություն իրենց որոշումների կայացման վրա կամ կաշառը։ Տարբեր երկրներում գործում են տարբեր կանոններ, ըստ որոնց կարգավորվում է վերջնական պայմանագրեր ստորագրելու (ինչին հաճախ նախորդում է մտադրությունների վերաբերյալ համաձայնագիրը) լիազորությունների տրամադրումը։ Նիդերլանդներում, օրինակ, մինչև 5 միլիոն եվրո արժողությամբ պայմանագրերը բողոքվում են համապատասխան ռազմատեխնիկայի ձեռքբերմանը հետաքրքրված գերատեսչություններին։ Մինչև 25 միլիոն եվրոյի պայմանագրերը պետք է ներառվեն պաշտպանական ընդհանուր պլանում, որը պաշտպանության նախարարը որպես զինված ուժերի պլանավորման գլխավոր պատասխանատու, ըննության և վավերացման նպատակով ներկայացնում է խորհրդարանին։ 25-100 միլիոն եվրո արժողությամբ պայմանագրերը, եթե ի սկզբան չեն որակվում որպես «քաղաքականապես զգայուն», ենթակա են վավերացման խորհրդարանի պաշտպանության հարցերով հանձնաժողովի կողմից, սակայն դրանց հետագա կենսագործումը հանձնարկվում է զինված ուժերի համապատասխան գերատեսչություններին։ Ավելի մեծ արժողությամբ պայմանագրերը պետք է խորհրդարանի կողմից հավանության արժանանան նախքան ստորագրումը, իսկ 250 միլիոն եվրո և ավելի արժողությամբ ծրագրերը նախքան խորհրդարանին ներկայացվելու պետք է վավերացվեն կառավարության (նախարարների ամբողջ կարինետի) կողմից։

Ուազմական գնումների ընթացակարգերի՝ վերը նկարագրված տիպական հաջորդականությունը կիրարկվում է միայն ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրներում։ Դրանց փորձը ցույց է տալիս, որ օրենդրության վերահսկողության դաշտում իրավիճակը քիչ թե շատ բարփոր է, սակայն գործադիր մարմնի վերահսկողության առումով առկա են մի շարք խնդիրներ։ Միայն Գերմանիայում, Նիդերլանդներում, Նորվեգիայում, Լեհաստանում և Միացյալ Թագավորությունում է, որ որոշակի նվազագույն շեմը գերազանցող արժողությամբ գնումների մասին որոշումների ընդունման դեպքում պաշտպանության նախարարը պարտավոր է համապատասխան տեղեկատվություն ներկայացնել պաշտպանության հարցերով հանձնաժողովին։ Նշված բոլոր երկրներում, բացառությամբ Միացյալ Թագավորության, առանց խորհրդարանի նախնական համաձայնության չի կարող վերջնական պայմանագիր կնքվել։ Պաշտպանության հարցերով հանձնաժողովների ներգրավումը նոր ուազմատեխնիկայի կարիքների որոշման գործում օրենսդրության նախատեսված է Կանադայում, Չեխիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Նիդերլանդներում։ Չեխիայի, Նորվեգիայի և Նիդերլանդների օրենսդրությունները նախատեսում են նաև խորհրդարանական հանձնաժողովների մասնակցությունը մատակարարների ներկայացրած առաջարկների համեմատության և ուղմատեխնիկայի ապագա գնումների առավել հավանական ընկերությունների ընտրության գործընթացներին։ Միայն Չեխիայում և Նիդերլանդներում է, որ խորհրդարանները ներգրավված են նաև օֆիսերային պայմանավորվածությունների քննարկման և գնահատման գործում<sup>163</sup>։

Ուազմական ձեռքբերումների նկատմամբ խորհրդարանական վերականգնության որակը սերտորեն կապված է նաև որակյալ մասնագիտական աշխատակազմի առկայության հետ։ Խորհրդարանները հազվադեպ են սեփական նախաձեռնությամբ հետաքննություններ սկսում պաշտոնական տեսակետները ստուգելու կամ վերանայելու նպատակով։ Շատ ավելի հաճախ կազմակերպվում են պարզապես խորհրդարանական լսումներ։ Միայն Ֆրանսիայի և Գերմանիայի խորհրդարաններն են, որ մարդկանց են գործուղում համապատասխան հետազոտական կենտրոններ՝ պաշտպանության խնդիրներով հատուկ գրադիտերությամբ պատգամավորներին այդ հարցերում փորձագիտական օժանդակություն ցուցաբերելու նպատակով<sup>164</sup>։

<sup>163</sup> Տե՛ս Willem F. van Eekelen, *Democratic Control of Armed Forces – The National and International Parliamentary Dimension*, Occasional Papers No. 2 (Geneva: DCAF, 2002) և Willem F. van Eekelen, *The Parliamentary Dimension of Defence Procurement: Requirements, Production, Cooperation and Acquisition*, Occasional Papers No. 5 (Geneva: DCAF, 2005)։ Երկու գեկույցն ել կարելի է ազատորեն ներբեռնել [www.dcaf.ch](http://www.dcaf.ch) կայքից։ Առաջինը ներկայացնում է խորհրդարանական արձագանքները հարցաշարերին։ Տպագրությունից ի վեր կարող են ձևավորված լինել նաև խորհրդարանական այլ ձևաչափեր։

<sup>164</sup> Տե՛ս Van Eekelen, *The Parliamentary Dimension of Defence Procurement*, 13-14։

## Միջազգային ձևաչափեր, տեղեկատվության աղբյուրներ և փորձառություն

Քանի որ խոհրդարաններում հաճախ չկան պաշտպանության և անվտանգության ոլորտի հաստիքային աշխատակիցներ, նրանք գլխավորապես հիմնվում են անկախ կառույցների, փորձագիտական խմբերի և հասրակական կազմակերպությունների կողմից իրականացվող նշտարիտարկման և վերլուծությունների վրա: Միջազգային ասպարեզում բարձր հեղինակություն ունի Ստոկհոլմի Խաղաղության հիմնախնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի (SIRPI) կողմից իրատարակվող ամենամյա *SIPRI Yearbook on Armaments, Disarmament and International Security* (Սպառազինման, գինարակման և միջազգային անվտանգության տարեգիրք) պարբերականը, որը կարևորագույն գործիք է համարվում ռազմական ծախսերի, զինամթերքի արտադրության և գենքի միջազգային փոխադրումների վերահսկողության հարցերում: Նոյեմբեր են Լուսողնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի (IISS) կողմից թողարկվող “*Military Balance*” և “*The Strategic Survey*” պարբերականները: Եվրախորհրդի շրջանակներում գործում է ԵՄ Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որը գտնվում է Փարիզում և իրատարակում է “*Chaillot Papers*” և “*Occasional Papers*” ազդեցիկ մատենաշարերը, որոնցում քննարկվում են Եվրոպական «Ընդհանուր արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության» (CFSP) տարբեր հարցեր: Փարիզյան ինստիտուտը կազմակերպում է նաև Եվրոպայի հետազոտական կազմակերպությունների ղեկավարների «Սիուրյան դրությունը» խորագրով ամենամյա հանդիպումներ Արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով Եվրամիության գերազույն հանձնակատար Խավիեր Սոլանայի հետ<sup>165</sup>: ԶՈՒԺՎ ժննի կենտրոնն ընդլայնել է զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության իր սկզբնական գործառույթը՝ ընդգրկելով նաև անվտանգության ոլորտի բարեփոխումների և արդյունավետ կառավարման խնդիրները: Խորհրդարանականների համար թողարկվող իր տեղեկատուում և զինված ուժերի կազմակերպական հարցերին նվիրված նյութերի ժողովածուում մեծ տեղ է հատկացված գենք-գինամթերքի գննան ընթացքում բափանցիկության և հաշվետվողականության հարցերին: Հասարակական կազմակերպություններից հիշատակության են արժանի “Transparency International” և “SaferWorld” կազմակերպությունները:

2003 թվականին Եվրախորհրդին կից ստեղծվել է Եվրոպական պաշտպանության գործակալությունը (EDA), որի գործունեությունը հետամուտ է հետևյալ նպատակների իրագործմանը.

- Օժանդակել ԵՄ անդամ պետությունների զինված ուժերի միջոցների և կարողությունների զարգացման ոլորտում առկա խնդիրների սահ-

<sup>165</sup> Տե՛ս Burkard Scmitt, *European Arms Cooperation, Core Documents*, Chaillot Papers No. 59 (Paris: ISS, April 2003) և Burkard Scmitt, *The European Union and Armaments. Getting a Bigger Bang for the Euro*, Chaillot Papers No. 63 (Paris: ISS, August 2003):

մանման ուղղված գործունեությանը և նրանց պարտավորությունների կատարման գնահատմանը,

- Առաջ մնել օպերատիվ կարիքների փոխհամաձայնեցման գործընթացը և աջակցել գնումների արդյունավետ ու փոխհամատեղելի ընթացակարգերի ներմուծմանը,
- Առաջարկել բազմակողմ նախագծեր, երաշխավորել դրանց համաձայնեցումը և իրականացել կոնկրետ ծրագրերի մեջնէջնենքը,
- Օժանդակել պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում հետազոտական գործունեությանը, համաձայնեցնել և պահանավորել համատեղ աշխատանքների իրականացումը և ուսումնասիրել ապագա օպերատիվ կարիքների բավարարմանն ուղղված տեխնոլոգիական առաջարկներն ու լուծումները,
- Մասնակցություն ունենալ պաշտպանական ոլորտի արտադրական և տեխնոլոգիական բազայի հզորացմանը նպաստող ցանկացած օգտակար միջոցառումների որոշմանը և, անհրաժեշտության դեպքում, այդպիսիների ներդրմանն ուղղված գործունեությանը, ինչպես նաև ռազմական ծախսերի արդյունավետության բարելավման ուղղությամբ կատարվող քայլերին<sup>166</sup>:

Իր գործունեության երեք տարիների ընթացքում EDA-ն որոշ դրական արդյունքներ է արձանագրել: Ընթրիվ ԵՄ պետությունների պաշտպանական ծրագրերի և համապատասխան հայտանրույթների վերաբերյալ տեղեկատվական նյութերի իրավարարակման եվրոպական պաշտպանական շուկայի գործունեությունը որոշակիորեն աշխատացել է, սակայն միջազգային մակարդակում այդ հայտանրույթների կազմակերպումը դիմուն շատ սահմանափակ կիրառություն ունի: Բացի այդ, EDA-ն ԵՄ անդամ պետություններին առաջարկել է հաստատել կամավոր վարչեցողության մշակված կանոնագիրը, որը նպաստակ ունի մեղմելու Եվրոպական Միության կազմակորման համաձայնագրի 296-րդ հոդվածի ազդեցությունը<sup>167</sup>: Յավոր, գիտահետազոտական ուղղությամբ EDA-ի գործունեությունը գրեթե անպատճ եղավ: Նախքան իր գործունեության ընդհատումը EDA-ի նախորդը՝ Սպառազինությունների արևմտաեվրոպական միավորումը, ուներ 300 միլիոն եվրո արժողությամբ ընթացիկ ծրագրեր, որոնցից ոչ մեկը ավարտին չհասցվեց և շարունակություն չունեցավ: EDA-ի համատեղ ներդրումային ծրագիրը նախատեսում էր ընդամենը 54 միլիոն եվրո ընդհանուր գումարի ներարկում: Սինչդեռ դրա գործունեության արդյունքը եղավ դժգոհության ընդհանուր աճը՝ կազմած մուավոր սեփական

<sup>166</sup> Տե՛ս Willem F. van Eekelen, *From Words to Deeds. The Continuing Debate on European Security* (Brussels/Geneva: CEPS/DCAF, 2006) և մասնավորապես Գլուխ 7. “Towards an EU Armaments Agency.”

<sup>167</sup> 296-րդ հոդվածն անջատում է ռազմարդյունաբերական արտադրանքը ԵՄ ներքին շուկայի կանոնակարգումից, այսինքն՝ եթե խոսքը ռազմական գույքի արտադրության և առևտիք մասին է, այն ԵՄ անդամ պետություններին փաստացի իրավունք է տալիս գործելու բացառապես ըստ իրենց ազգային շահի – Ծ. Թ.:

նուրբյան իրավունքների պաշտպանության ոլորտի նոր կանոնների հետ:

Եվրահանձնաժողովը հանձնակատարներ Ֆերհոյգենի և Մար Քրիվիի նախաձեռնությամբ երկու հանձնարարական է իրավարակել: Մեկը պիտի կարգավորի շուկայի այն հատվածը, որն ընկած չէ 296-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների տիրույթում, իսկ մյուսը հեշտացնի ԵՄ երկրների միջև տրանսպորտային հաղորդակցությունը: Հանձնաժողովը բազմից շեշտել է, որ անհապաղ պետք է վերակազմակերպել եվրոպական ռազմարդյունաբերական շուկան, եթե այն ցանկանում է գոյատևել գորալիզացիայի պայմաններում: Հետաքրքիր է հմանալ, թե ինչպես է Եվրախորհրդարանը գործ ունենալու այս իրահանգների հետ: Որոշ երկրներ, ներառյալ Ֆրանսիան և Սիրիայի Թագավորությունը, արդեն վիճարկում են Եվրախորհրդարանի (ինչպես նաև Եվրահանձնաժողովի) իրավասությունը այնպիսի միջազետական խնդիրներ կարգավորելու գործում, ինչպիսիք են Ընդհանուր արտարին և անվտանգության քաղաքականությունը (CFSP) և Եվրոպայի անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը (ESDP): Գերազույն հանձնակատար Խավիեր Սոլանան մշտապես զեկուցում և տեղեկություններ է հաղորդում Խորհրդարանին, սակայն այս հարցերի շուրջ բանավեճերը շարունակում են նույր նկատառումներ պահանջել: Իրավիճակը կարող էր միանգամայն այլ լինել, եթե Եվրահանձնաժողովն այդ հանձնարարականները ժամանակին ներկայացրած լիներ որպես նախազծեր: Ամստերդամի պայմանագրով՝ Արևմտաեվրոպական միության (WEU) գոյության դադարեցումից և դրա գործառույթները ԵՄ-ին փոխանցելուց հետո Արևմտաեվրոպական միության ասամբլեան մնացել է այդ կառույցի միակ գործող մարմինը: Ասամբլեայի զեկույցները շարունակում են կատարվել բարձր որակով, սակայն Եվրախորհրդի հետ երկխոսության բացակայությունը Ասամբլեային դրել է ինչ-որ իմաստով մեկուսացած և անորոշ կացության մեջ: Որպես հետևանք՝ Ընդհանուր արտարին քաղաքականության և անվտանգության քաղաքականության, ինչպես նաև Եվրոպայի անվտանգության և պաշտպանության քաղաքականության խորհրդարանական վերահսկողությունը Եվրախորհրդարանի կողմից գտնվում են սաղմնային վիճակում: Դա բնական հարց է առաջացնում՝ Եվրոպական քաղաքականությունն այդ ոլորտներում առհասարակ վերահսկվո՞ւմ է, թե՞ ոչ:

## Կոռուպցիա

Ամերիկյան քաղաքագետ Ջոզեֆ Նայը (Joseph Nye) կոռուպցիան սահմանում է որպես՝ վարք, որը շեղվում է հասարակական դերի շրջանակներում ամրագրված սովորական պարտականություններից հանուն մասնավոր նյութական շահի կամ դիրքի ձեռքբերման, կամ խախտում է կանոնները շահադիտական նպատակներով որոշակի ազդեցությունների գործադրման համար: Նման վարքը ներառում է կաշառակերությունը, հովանավորչությունը և պե-

տական միջոցների ապօրինի սեփականացումը<sup>168</sup>:

Կոռուպցիան կապված է և պետական պաշտոնում ծառայողական վար-վեցողության կանոնները, և լայնորեն ընդունված բարոյական չգրված նոր-մերը խախտելու հետ: Այդ նորմերից մի քանիսը, ինչպիսին է, օրինակ, կու-սակցությունների ֆինանսավորման արգելվը, ձևավորվում և փոփոխվում են ժամանակի ընթացքում: Մյուս կողմից կոռուպցիան կարելի է դիտարկել նաև շուկայական տնտեսության տեսանկյունից և սահմանել այն որպես փողի փոխանակում որոշումների (ակտիվների) հետ, որոնք մասնավոր դերակա-տարմերը ցանկանում են ձեռք բերել (պահանջարկ), իսկ հասարակական գործակալները պատրաստ են վաճառելու (առաջարկ) այնպես, որ խոսա-փեն քրեական հետապնդումից (պարտավորություն): Եթրորդ նոտեցումը շեշ-տր զնում է հանրային շահի վրա և կոռուպցիան դիտարկում է որպես շեղող վարքի տեսակ, որը հանրային շահը ստորադասում է մասնավոր օգուտին: Կո-ռուպցիան ծաղկում է անտեղ, որտեղ հասարակական երիկան այլասերված է, որտեղ չկան հանրային շահի հետապնդման և պաշտպանության հատուկ կանոններ, և որտեղ հասարակական կամ մասնավոր գործունեությունը չեն կարգավորվում այնպիսի նորմերով, որոնք կապահովագրեին պատշաճ ըն-թացակարգերն ու ազնվորյունը<sup>169</sup>:

Կոռուպցիան անդապգային, կարելի է ասել՝ անգամ համաշխարհա-յին երևոյթ է և բարնված սպառնալիք իրավակարգ կառավարման և օրեն-քի իշխանության նկատմամբ: Այն հասարակական նպատակների համար առանձնացված դրանական միջոցներն ուղղորդում է մասնավոր անձանց գրպանը և լրջորեն աղճատում կառավարության պաշտոնյաների կողմից իրենց պարտականությունների կատարումը, նրանց ամենօրյա գործողություններն ու որոշումները: Կոռուպցիան հաճախ կապվում է սարքավորում-ների գնորդների, ինչպես նաև ձեռնարկության, կազմակերպության կամ պե-տության զարգացման համար օգնություն կամ օժանդակություն ստացողների հետ: Կոռուպցիոն վարքը և քայլերը տարածում ունեն նաև մատակարարնե-րի և դուռը կազմակերպությունների շրջանում հանդիսանալով վերջիններին լուրջ թերություններից մեկը: Կոռուպցիայի կանխարգելումը համարվում է բո-լոր պետությունների, հասարակական հաստատությունների և մասնավոր ըն-կերպությունների պարտականությունը: Կոռուպցիայի դեմ ՍԱԿ-ի 2003թ. կոն-վենցիան ստորագրել է 140 պետությունների կողմից և ուժի մեջ մտել դրան-ցից 30-ի կողմից վավերացվելուց հետո: Այն կանոնակարգում է կոռուպցիայի միջոցով ձեռք բերված ակտիվների վերադարձը և փոխհաստուցումը, սակայն ակներևաբար դրա հաջողությունն ու արդյունավետությունն ի վերջո կախ-ված են նրանից, թե Կոնվենցիայի դրույթներն ու պահանջները որքան վճա-

<sup>168</sup> Joseph S. Nye, "Corruption and Political Development: A Cost-Benefit Analysis," *The American Political Science Review* 61, no. 2 (June 1967), 417-427:

<sup>169</sup> Sie u Yves Mény and Luís de Souza, "Corruption. Political and Public Aspects," հետևյալ ձեռնարկում՝ *International Encyclopedia of the Social & Behavioral Sciences*, ed. Neil J. Smelser u Paul B. Baltes (Oxford: Elsevier, 2001), 2824–30:

կանորեն կկիրարկվեն ստորագրած պետությունների և նրանց դատական համակարգերի կողմից:

Առևտրի միջազգային կազմակերպությանն անդամակցող երկրների նախարարների համաժողովի ընթացքում, որը տեղի է ունեցել 2001 թ. նոյեմբերին Դոհայում, պատվիրակներն ընդունել են, որ անհրաժեշտ է ստորագրել բազմակողմ համաձայնագիր պետական գնումների ընթացքում բափանցիկության ապահովման մասին պահանջների կատարման անհրաժեշտության վերաբերյալ: Համաժողովի մասնակիցները պայմանագրովել են, որ այդ հարցով բանակցությունները կարունակվեն 2003 թ. Կանկունի (Մեքսիկա) համաժողովից հետո, «քանակցությունների ձևաչափերի շուրջ բացահայտ փոխհամաձայնությամբ կայացված որոշումների հիման վրա»: Ընդ որում՝ զարգացող երկրներից համաժողովին մասնակցող պատվիրակները այնպես են, որ այդ բանակցությունները չպետք է սահմանափակեն երկրների իրավունքները պետական գնումների իրականացման ընթացքում սեփական արտադրողին և արտադրանքին նախապատվությունը տալու հարցում: Այդուհանդերձ, Կանկունի համաժողովում բանակցությունների մեջնարկի վերաբերյալ որևէ համաձայնության գալ այդպես էլ չի հաջողվել, իսկ հարցը տեղափոխվել է Ընդհանուր խորհուրդ: Վերջինս 2004 թ. օգոստոսին որոշում է ընդունել առ այն, որ քանի որ սույն խնդիրը չի ներառվելու Դոհայի համաժողովի աշխատանքային օրակարգում, այդ հարցով բանակցությունները Դոհայի համաժողովի փուլում տեղի չեն ունենա: Կառավարական գնումներում բափանցիկության ապահովման աշխատանքային խումբը, որը կազմակրովել է 1996 թվականին, այս որոշման ընդունումից ի վեր մատնված է անգործության:

Արդյունավետ կառավարումը ենթադրում է որոշումների կայացման գործնթացում բափանցիկություն և կոռուպցիայի հնարավորինս նվազագույն մակարդակ: Այս երկու հասկացությունները հանդես են զայխ միանաբար և փոխկապակցված, քայլ հոմանիշներ չեն: Նախքան Եվրոպական տնտեսական համագործակցության մեջնարկը Եվրոպայի հյուսիսում ընդհանրական կարծիք էր ձևավորվել, թե Զիթենյաց սահմանից այս կողմ (Եվրոպայի հարավի այն երկրներում, որտեղ ծիրենիներ են աճեցնում) հարկերի վճարման և առհասարակ վարվեցողության կանոնների իմաստով միանգամայն այլ նորմեր են գործում: Դա նշանակում է, որ որոշ երկրներում կոռուպցիան ավելի խորն է արմատավորված, քան մյուսներում, և որ դրանցում նորմալ է համարվում որոշ ծառայությունների դիմաց վճարելը, անգամ եթե դրանք տվյալ պաշտոնատար անձի ծառայողական ուղղակի պարտականություններն են: Վարչեցողության կանոնների այս տարրերություններն առավել ակնառու դարձան ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի ընդլայնման ընթացքում: Նախքան Եվրոպական Միություն Արևելյան Եվրոպայի որոշ երկրների մուտք գործելը Եվրահանձնաժողովը եզրակացություն հրապարակեց, որ կոռուպցիան արմատավորված է Լեհաստանում և լուրջ խնդիր է Հատվածայում ու Չեխիայում: ԵՄ Ռումինիայի մուտքի ընթացակարգը կարող էր առհասարակ չելյալ համարվել երկրում արդարա-

դատության իրականացման թերությունների պատճառով։ Տուգանքից խուսափել փորձելու նպատակով ցածր վճարվող ճանապարհային ոստիկանին կաշառելը տարածված երևոյթ է բազմաթիվ երկրներում։

Կոռուպցիայի համար պարարտ հող կարող է գոյանալ ցանկացած հաստատությունում (լինի այն կառավարական կամ ոչ), որում իրագործվում են ապրանքների և ծառայությունների մեծածավալ գնումներ։ Այն կարող է իրականացվել պայմանագրային վճարումներից ապօրինի մասնաբաժին հանելու, «կոմիսիոն» գանձումների, թղթաքանության մեջ բացակայող հավելավճարների, պայմանագրի շրջանակներից որուս «քարեհած վերաբերմունք» (արձակուրդային ճանապարհորդությունների կամ մատուցվող այլ ծառայությունների), քաղաքական կուսակցություններին փոխանցվող նվիրատվությունների կամ ուղղակի կաշառքների տեսքով, որոնք հետամուտ են մեծ ազդեցություն ունեցող պաշտոնատար անձանց որոշումների վրա ներգործելուն։ Մեծամասշտար կոռուպցիան կարող է հաճախ տեղ գտնել անուղղակի ձևով՝ գործակալների կամ միջնորդ անձանց ներգրավմամբ, քանի որ դա բույլ է տալիս խուսափել մատակարարի և գնորդի ուղղակի շփումներից։ Ձեռքբերման գործընթացի վրա ազդելու ճանապարհների փնտրություն մարդկային նախաձեռնողականությունն ու հնարամտությունը, օրենքի և անօրինականության շեմին քայլերի ձեռնարկումը սահմաններ չունեն։ Ուստի անհրաժշտ են հստակ կանոններ, որոնք կահմանեն, թե ինչն է կարելի, և ինչը՝ ոչ, և որտեղ պետք է որոշումներ ընդունող պետական պաշտոնյաները գտնեն իրենց և մատակարարների միջև հարաբերությունների սահմանները։

Չկա որևէ ուղղակի ցուցանիշ առ այն, որ պաշտպանության ոլորտում գործող անձինք ավելի են հակված կոռուպցիայի, քան կառավարական այլ գերատեսչություններում աշխատողները, սակայն հարկ է հաշվի առնել, որ պաշտպանական բյուջեները հաճախ այնքան մեծ են և այնքան շատ մարդ են ներառում, որ կոռուպցիան դառնում է ավելի հաճախադեպ։ Մանր կոռուպցիան (փոքր չափի կաշառքների վճարումը) առավել տարածված է ոստիկանության հետ շփումներում, քան պաշտպանության համակարգում, քանի որ հենց ոստիկանության աշխատակիցներն են ավելի սերտ շփումներ ունենում հասարակ քաղաքացիների հետ։ Պաշտպանական կառույցի գործունեության միակ ոլորտը, որում պաշտոնյաներն ու քաղաքացիները միմյանց հետ շփնդան մեջ են մտնում, պարտադիր գորակուն է։ Ուստի կոռուպցիոն վտանգներն այստեղ հիմնականում պայմանավորված են տարկետումներ ստանալու, քանակից ազատվելու կամ առավել նախընտրելի վայրում ծառայությունն անցկացնելու նպատակով քաղաքացիների կողմից իրականացվող գործողություններով։ Ինչ վերաբերում է պաշտպանության ոլորտին, ապա այստեղ կոռուպցիոն ռիսկեր գոյանում են այն դեպքում, եթե պաշտոնյաներն իրենց պարտականություններից դուրս սկսում են անօրինական տնտեսական գործունեություն ծավալել վաճառելով ռազմական ունեցվածքը անձնական օգուտ ստանալու նպատակով։ Միևնույն ժամանակ, ի տարրերություն ձեռք-

բերմամբ զբաղվող կառավարական այլ գերատեսչությունների իրենց որոշ գործընկերների պաշտպանության ոլորտի անձնակազմն այդքան հեշտորեն չի կարող խարդախել ուազմատեխնիկայի որակի և դիմացկունության ցուցանիշների հարցերում, քանի որ դրանք հաճախ կյանքի և մահու հարց են: Ավելին՝ աշխարհի մի շարք երկրների պաշտպանության նախարարություններին կից գնումների հարցերով զբաղվող գերատեսչությունների կազմում ներառված են հատուկ վերահսկիչ ծառայություններ, որոնք մասնագնին քննում են ձեռքբերման ամեն փուլի յուրաքանչյուր քայլ: Որպեսզի այդ ծառայությունները կարողանան աշխատել արդյունավետ և սեփական աշխատավիցների պաշտոնեական առաջընթացի վրա առանց հնարավոր ճնշումների, դրանք պետք է անկախ կարգավիճակ ունենան և դուրս լինեն հրամանատարական աստիճանակարգից:

Ուազմական ոլորտում կոռուպցիան առավել չափով վերաբերում է ուազմարդյունաբերական ձեռնարկությունների վարած լորրիստական գործունեությանը, որոնց գոյությունն իսկ կախված է խոշոր պայմանագրերի ձեռքբերումից: Նման պայմանագրերը չափազանց քիչ են և հազվագյուտ, ուստի շատ դեպքերում դրանց ձեռքբերումը որակվում է որպես «գարի գործարք»: Արևասարակ բոլոր դեպքերում նման պայմանագրերը արդյունք են մեծ ներդրումներ պահանջող և բազմամյա նորարարական գիտահետազոտական աշխատանքի ու մշակումների: Այնպես որ զարամանալի չէ, որ ննան մրցակցության պայմաններում խաղաղությունները չափազանց բարձր են, և շուկայում այս կամ այն արտադրանքի առաջխաղացման նպատակով կիրառվում են պայքարի ազրեսիվ մեթոդներ, այդ թվում՝ նաև քաղաքական մակարդակում: Մրցակցությունը հատկապես դաժան է, եթե միևնույն պահանջարկը կարող է բավարարել մի քանի ընկերություն: Այդ դեպքում վերջնական որոշման վրա սկսում են ազդել հավելյալ գործուններ, որոնց թվում տեղ են գտնում նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են քաղաքական նպատակահարմարությունը և այլն<sup>170</sup>:

Արդարության համար մղվող այս պայքարում ինչպես պիտի իրենց դրսնորեն քաղաքական առաջնորդներն ու խորհրդարանականները: Պարզ է, որ ճիշտ որոշում կայացնելու համար խորհրդարանականներն ու պետության առաջնորդները հնարավորինս շատ տեղեկությունների կարիք ունեն, սակայն միևնույն ժամանակ նրանք պիտի կարողանան խուսափել մրցակից կողմերից որևէ մեկի անհարկի ազդեցությունից: Հայտամրցությունների անցկացման առնվազն սկզբնական փուլում բոլոր հավանական մատակարարների նկատ-

<sup>170</sup> “Transparency International”-ը իրավագիորեն նշում է, որ պաշտպանական պայմանագրերի կեսից ավելին ստորագրվում է առանց նախնական մրցակցության, ինչը, որպես կանոն, նշանակում է, որ գնորդը չի ունենում հնարավոր լավագույն գործարքը: Անշուշտ, մրցակցությունը բարելավում է թափանցիկությունը, սակայն որոշակի կասկածներ են ժամանակակից մասին, թե արդյոյք միայն դա բավարար է կոռուպցիայի նվազեցման համար: Ավելին՝ որոշ պետություններ պաշտպանության ոլորտի հավաքական պլանավորման ժամանակ աշակցում են սեփական արտադրողին դա համարելով վերջիններիս գոյատևման համար անհրաժեշտ քայլ:

մամբ պետք է կիրառվեն միևնույն չափանիշներն ու մոտեցումները։ Ընդ որում՝ պաշտպանական գերատեսչության քաղաքական ղեկավարությունը պետք է խուսափի մատակարարների գործակալների հետ ուղղակի շփումից, սակայն զնումների հարցում պատասխանատու նախարարը կամ պետական քարտուղարը պետք է հնարավորություն ունենա այցելելու արտադրական ձեռնարկություններ պայմանով, որ դա արվում է բոլոր կարևոր մատակարարների պարագայում։ Խորհրդարանականներն ավելի ազատ են իրենց շփումներում, սակայն այստեղ ևս խելամիտ չէ արտադրական ձեռնարկություններ ինքնուրույն այցելելը։ Կաշառման փորձերով հիյ անցանկալի իրավիճակներից խուսափելու համար ավելի լավ է այդ այցելությունները կազմակերպել խորհրդարանների պաշտպանության հարցերով հանձնաժողովների պատվիրակությունների կազմում, իսկ եթե խոսքը վերաբերում է պատգամավորի անհատական այցելությանը, ապա նրան պետք է ուղեկցեն այլ կուսակցությունների ռազմական ներկայացուցիչներ։

Այն երկրներում, որտեղ խորհրդարանական ընտրություններն անցկացվում են մեծամասնական սկզբունքով (այլ ոչ կուսակցական ցուցակներով), խորհրդարանականները ձգուում են հետապնդելու սեփական ընտրատարածքի և, որպես հետևանք, այդ տարածքներում գործող խոշոր և կարևոր արտադրական ձեռնարկությունների շահերը։ ԱՄՆ-ում նմանատիպ լորրիստական գործունեության արդյունքը պաշտպանության ոլորտի ծախսներին վերաբերող օրենքում առանձին հավելվածների ներմուծումն էր։ Ուրիշ պետություններում այդ ազրեցությունը կարող է նաև միջնորդավորված ընույթ լրիւ։ Լորրիստական նման ճնշումներին (որոնք մշտապես միտված են աշխատատեղերի պահպանմանը) դիմակայելու հնարավորություն ստանալու համար պաշտպանության նախարարներն ու նրանց ավագ խորհրդականները պետք է մանրազնին կերպով քննեն լուծման գերադասելի տարբերակների որակական ու արժեքային կողմերը՝ նախքան դրանք խորհրդարանի վավերացմանը ներկայացնեն։

Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է տարվի թե՛ անհատական, թե՛ ամբողջ կազմակերպության մակարդակով։ Անձնական մակարդակում քարոյականությունը կարելի է ձևավորել կրթության և դաստիարակչական աշխատանքի միջոցով, որն արժեքային անհրաժեշտ համակարգը կսերմանի դեռևս աշխատանքային գործունեության վաղ փուլերում։ Կազմակերպությունները և խոշոր ձեռնարկությունները պետք է ձևակերպեն վարկեցողության սեփական կանոններ, որոնք հստակորեն կսահմանեն, թե պաշտոնատար անձինք՝ ինչ կարող են սպասել կամ ընդունել հետաքրքրության մատակարարներից մի բաժակ սո՞ւրճ, թերև ճաշկերո՞ւյթ, Նոր տարվա նվե՞ր, թե՞ առհասարակ ոչինչ։ Կարևոր առաջնքաց է արձանագրվել ոստիկանական էքիվայի վարվեցողության կանոնակարգերի մշակման գործում<sup>171</sup>։ Այն այնու է դառնա ու-

<sup>171</sup> Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (2001)10 հանձնարարականների հավելված հաստատված 2001 թ. սեպտեմբերի 19-ին։ Կանոնագրքի 19-րդ պարագագում ասված է. «Ոստիկանությունը, առանց գաղտնիությունը խախտելու,

տիկանության ակադեմիաների կրթական ծրագրերի մի խոշոր մաս, որպեսզի յուրաքանչյուր առանձին սպա կարողանա խորապես ընկալել արժեքային դատողությունների և որոշումների հետ կապված խնդիրները: Պատրաստության ընթացքում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի վարժանքներ, որոնք մոդելավորում են որոշակի ռեալ իրավիճակներ, որոնցում նրանք ստիպված են լինելու որոշումներ կայացնել բարոյական բարդ երկնտրանքի պայմաններում: Այս համատեքստում տեղին է դիտարկել հետևյալ օրինակը: Դիցուք, ոստիկանության բաժանմունքի դեկանակար տարածքի ընդայնման նպատակով մտադրվել է կառուցել հավելյալ շինություն: Միևնույն ժամանակ, նրա կինը ցանկանում է վերանորոգել իր խոհանոցը: Հարց է ծագում՝ ճիշտ է արդյոք այս երկու առաջադրանքների համար վարձակալել միևնույն կապալառու ընկերությունը: Մարդկանց մեծամասնությունը բացասական պատասխան կտա, քանի որ կասկածներ կառաջանան խոհանոցի վերանորոգման համար կապալառուի կողմից առաջարկված արժեքի հարցում: Այստեղ, սակայն, դատողություններ ներմուծենք նոր տարր: Երկու պատվերների կատարման համար էլ կապալառու ընկերությունը պետք է անվտանգության ծառայություններից համապատասխան բույլտվություն ստանա, իսկ դա ունեցող ընկերություն, դժբախտաբար, տարածքում մեկն է: Փոխո՞ւմ է արդյոք այս հանգամանքը վերև արտահայտված բացասական կարծիքը, և եթե այն՝, ապա ինչ կանխարգելիք միջոցներ պետք է կիրառվեն կոռուպցիոն կապերում հնարավոր մեղադրանքներից խոսափելու համար: Իհարկե, նորմալ հանգամանքներում այս երկու պատվերների համար հայտամղցույթները կանցկացվեին սահմանված ընթացակարգերի համաձայն: Այս խիստ որոշակի օրինակի վրա հիմնված մոտեցման ամբողջ ինաստը ցույց տալն էր, որ մարդկանց մեծամասնությունը իրական բարդություններն սկսում է գիտակցել միայն այն դեպքում, եթե նրանց ներկայացվող տրամաբանական մանրամասն վերլուծությունն ընթանում է լավ և գատ վարքի սահմանագծով, իսկ դա նշանակում է, որ նման մոտեցումը կարելի է կիրառել նաև պաշտպանության ոլորտի մասնագետների վերապատրաստման գործում:

## Ամփոփիչ նկատառումներ

Անցումը հավաքական պաշտպանությունից դեպի խաղաղապահ առաքելությունների իրականացում մեծ ազդեցություն է ունեցել պաշտպանության և անվտանգության խնդիրների նկատմամբ ցուցաբերվող մոտեցումների

պետքէ միշտ պատրաստակամ լինի հասարակությանն իրգործունեության վերաբերյալ անկողմանակալ տեղեկատվություն հաղորդելու: Անհրաժեշտ է մասնագիտական ուղենիշներ սահմանել լրատվական դաշտի հետ հարաբերությունների համար: 20-րդ պարագրաֆում ասված է. «Իրավապահ մարմնները պետք է արդյունավետ միջոցների տիրապետեն իրենց աշխատակազմերի միասնական և պատշաճ գործունեությունն ապահովելու համար»: Կանոնագիրքը, սակայն, չի սահմանում «միասնական» հասկացությունը և ոչ էլ որևէ կերպ հիշատակում է կոռուպցիան: Այս հարցերի լրամշակումը թողնված է ոստիկանության առանձին մարմիններին:

**Վիա:** Երկու գործոն կա, որոնց զապող ազդեցությունը դրական արդյունքների է հանգեցրել: Առաջինը ներքին և արտաքին անվտանգության պահպանական առնչողությունը է ահարեւկության, կազմակերպված հանցավորության և անօրինական ներգաղթի ահազնացման: Երկրորդն այն փաստի ընդունումն է, որ նախքան վերակառուցման և զարգացման աշխատանքներին անցնելը պայագայում հաջողություն գրանցելու համար անհրաժեշտ է պահպետի անվտանգության և կայունության նվազագույն մակարդակ: Առավել խնդրահարույց է այս կամ այս պետության տարածքում իրականացվող խաղաղապահ առաքելություններին մասնակցելու վերաբերյալ առանձին պետությունների կայացրած որոշումների ընտրողական բնույթը: Ուսկային գործողությունների մասնակցելու հարցում վատ պատրաստվածության հետևանքով Աֆղանստանում տեղակայված Ավտանգության աջակցության միջազգային ուժերի (ISAF) համալրման խնդիրը հայտնվել է դժվարին կացություն մեջ: Ինչն ավելի վատ է՝ զինված ստորաբաժանումների տրամադրման տարաբնույթ նախապայմանները լրջագույն գլխացավանք են միասնական հրամանատարության համար, որոնք պարտավոր են գործել «ահմանափակ ռեսուրսների մեջնօքների» բելազրանքի ներքո: Չնայած այն հանգանանքին, որ յուրաքանչյուր միջազգային օպերացիային ՆԱՏՕ-ի կամ ԵՄ-ի անդամ բոլոր պետությունների մասնակցությունը պարտադիր չէ, անհրաժեշտ է պլանավորման որոշակի սցենարի առկայություն, որը թույլ կտա ապահովել այն կամ այլ տարածաշրջանում ծագող ճգնաժամային իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստականությունը: Լիսարոնի համաձայնագիրը կարող էր դա երաշխավորել ԵՄ-ի մակարդակով, իսկ ՆԱՏՕ-ի՝ Բուխարեստի գագարաժողովից հետո Սիացյալ Նահանգների նոր վարչակարգի աջակցությամբ կարելի էր ձևակերպել Դաշինքի ռազմավարության նոր հայեցակարգ:

Առանձին պետությունների մակարդակով այս կամ այն համատեղ օպերացիային մասնակցելու վերաբերյալ որոշման կայացումը կպահանջի ավելի մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք այդ պետության հասարակության և օրենսդիր իշխանության հետ: Դա իր հերթին ենթադրում է խնդրին վերաբերող քավարար տեղեկատվության առկայություն և խորհրդարանական համապատասխան հանձնաժողովների հետ քննարկումների անցկացում: Ներկա դրությամբ Եվրոպայի մի շարք երկրներ դրան հասնելու համար դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու: Այդ պետությունների մեծամասնությունը բյուջետային և օրենսդրական գործունեության մեջ արդյունավետ ընթացակարգեր է կիրառում, սակայն մի շարք խորհրդարաններ չեն մասնակցում քաղաքական որոշումների ընդունմանը: Միևնույն ժամանակ, իրավիճակի վերաբերյալ հաճախակի գեկույցների և մամուլի ասուլիսների միջոցով քավարար տեղեկատվության տրամադրումը էապես կնպաստի հասարակական կարծիքի նախապատրաստմանը նրան, որ ռազմական գործությունների մեծամասնությունը, հնարավոր է, շատ ավելի մեծ ժամանակ

ու միջոցներ պահանջի, և հավանաբար՝ ի սկզբանե սպասվածից ավելի մեծ թվով կյանքեր խի:

Եվ վերջապես, միջազգային հանրությունը պետք է կարողանա ավելի բարձր մակարդակով համակարգել աշխարհի այս կամ այն տարածաշրջանում ծագող ճգնաժամային իրավիճակների մեջեցմենքում ներգրավված կառավարական և հասարակական կազմակերպությունների ողջ բազմության գործունեությունը: Ներկայիս մերողները դրանց վրա ծախսված միջոցների առումով բոլորովին էլ ամենաարդյունավետը չեն, և զարմանալի չեն, որ հաճախ հաճգեցնում են միջոցների վատևման առումով քննադատության: ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն պետք է արդիականացնեն իրենց ռազմավարական հայեցակարգերը, որոնք վերջին անգամ վերանայվել են համապատասխանաբար՝ 1999 և 2003 թվականներին: Եվրամիությունը մշակել է Անվտանգության ոլորտի բարեփոխումների սեփական հայեցակարգ, սակայն ոչ ՆԱՏՕ-ն, ոչ էլ ՄԱԿ-ը այդպիսիք չունեն: Իրարի և Աֆղանստանի փորձը ցույց է տալիս, որ ռազմական գործողությունների փուլի ավարտից հետո իրավիճակի կայունացման, վերականգնման և զարգացման, ինչպես նաև անվտանգության ոլորտի բարեփոխումների սկսվող ծրագրերը պետք է մշակված և պատրաստ լինեն նախօրոր ռազմական միջամտության առաջին իսկ փուլի սկզբում<sup>172</sup>: Այդ փուլերը չպետք է դիտվեն որպես հաջորդական գործողությունների շղթա, այլ ի սկզբանե ներկայության լինեն համապարփակ մոտեցումների ծրագրային փաթեթում: Հակառակ դեպքում՝ մեր ջանքերը դատապարտված են միայն ժամանակավոր ազթեցություններ գործելու, իսկ ճգնաժամերը նորից ու նորից ծագելու: Այս նոր և համապարփակ մոտեցումը, որն ի մի է բերում անվտանգության համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ բոլոր ճյուղերը՝ ոստիկանությունն ու գինված ուժերը, արդարադատությունը, վերակառուցման և հետագա զարգացմանն ուղղված միջոցառումները, պետք է արտացոլվի մեր երկրների կառավարությունների և խորհրդարանների գործունեության մեջ: Միայն այդ կերպ է հնարավոր կազմակերպել և ապահովել պաշտպանական հաստատությունների շարունակական աջակցությունը:

<sup>172</sup> Տարածում գտած մեկ այլ ձևակերպում՝ «3D-երի սկզբունքը», որտեղ D-երը վերաբերում են «պաշտպանություն», «դիվանագիտություն» և «զարգացում» հասկացություններին (անգլերեն՝ Defence, Diplomacy, Development): Այս համատեքստում «պաշտպանություն» եզրը վերաբերում է հակամարտության փուլում ռազմական միջամտությանը, իսկ «դիվանագիտությունը»՝ բանակցությունների, կայունության հաստատման և արդյունավետ կառավարման համար հիմքերի ստեղծման ավելի լայն ոլորտին: Հետաքրքրված ընթերցողն այս հասկացություններին ավելի մանրամասն կարող է ծանրաթանալ հետևյալ աշխատության մեջ. Robbert Gabriëlse, “A 3D Approach to Security and Development,” *Connections: The Quarterly Journal* 6, no. 2 (Summer 2007): 67-73:

## Հեղինակների մասին

### Հարի Բուկուր-Մարկու (Hari Bucur-Marcu)

Դոկտոր Հարի Բուկուր-Մարկուն Բուխարեստում (Ռումինիա) ՆԱՏՕ-ի հետազոտական կենտրոնի գիտական խորհրդատու է և Ռումինիայի արտաքին գործերի նախարարություն խորհրդական։ Իր 30-ամյա ռազմական կենսագրության ընթացքում նա մասնագիտացել է պաշտպանության ոլորտի պլանավորման խնդիրներում, տարբեր պաշտոններ է զբաղեցրել ՆԱՏՕ-ում կամ ՆԱՏՕ-ի հետ կապված կազմակերպություններում։ Վերջին հինգ տարիների ընթացքում դոկտոր Բուկուր-Մարկուն ներգրավված է եղել պաշտպանական և անվտանգության հարցերով կրթական և վերապատրաստման ծրագրերում, ինչպես նաև պաշտպանական հաստատության կազմակերպմանն առնչվող հետազոտություններում։

### Ֆիլիպ Ֆլուրի (Philip Fluri)

Դոկտոր Ֆիլիպ Ֆլուրին Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի (DCAF/ԶՈՒԺՎ) փոխտնօրենն է և DCAF-ի Բյուսելի գրասենյակի գործադիր տնօրենը։ 1991 թ.-ից աշխատում է Ըստացարիայի պաշտպանության նախարարությունում՝ իրու միջազգային անվտանգության հարցերով փորձագետ։ Դոկտոր Ֆլուրին մի շարք պաշտոններ է զբաղեցրել Պաշտպանական քաղաքականության գլխավոր քարտուղարությունում և Գլխավոր շտաբում։ 1995-1996 թթ. Զեշնիայում ԵԱՀԿ Ազակցության խմբի կազմում աշխատել է որպես նարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերով փորձագետ, իսկ 1996 թ. կատարել է Ղարաբաղյան հակամարտության հարցերով ԵԱՀԿ գործող նախազահի անձնական ներկայացուցչի պարտականությունները։ 1998 թ. նշանակվել է Պաշտպանության և անվտանգության քաղաքականության գլխավոր քարտուղարության քաղաքացիական-ռազմական հարաբերությունների հարցերով համակարգողի պաշտոնին։

### Գերդ Ֆրորաթ (Gerd Frorath)

Գերդ Ֆրորաթը Գերմանիայի ռազմածովային ուժերի առաջին կարգի կապիտան է, այժմ պաշտոնաթող։ Զրադիմ է անվտանգության և տնտեսության ոլորտների փոխհարաբերությունների հարցերով անկախ խորհրդատվությամբ։ Ռազմական 40-ամյա անթերի կարիերայի ընթացքում կապիտան Ֆրորաթը զբաղեցրել է տարաբնույթ դեկավար պաշտոններ՝ եղել է ԳՖՀ ռազմական բյուջեի բաժնի ղեկավար, զինված ուժերի գլխավոր հրամանատարի ֆինանսական խորհրդատու և հաշվապահական, վերլուծական ու ֆինանսական ծառայության ղեկավար։ Աշխատել է ՆԱՏՕ-ում և միջազգային այլ կազմակերպություններում, ներգրավված է եղել ինչպես ռազմական գործողություններին առնչվող, այնպես էլ ֆինանսական/առողջապահության

խնդիրներում: Գերդ Ֆրուարի հարուստ փորձառությունը նրան թույլ է տվել նշանակալի մասնակցություն ունենալ միջազգային գործունեության ասպարեզում, հիմնականում նախկին ԽՍՀՄ տարածքում, Հարավարևելյան Եվրոպայում և Աֆրիկայում:

### **Էնթոնի Լորենս (Anthony Lawrence)**

Էնթոնի Լորենսը Տալլինի (Էստոնիա) Պաշտպանական հետազոտությունների միջազգային կենտրոնի ավագ գիտաշխատող է և Տարտուի (Էստոնիա) Բալթյան պաշտպանական բոլեղի բարձրագույն իրամանատարական անձնակազմի պատրաստության ղեկավար շտարի անդամ: Նախկինում աշխատակցել է Միացյալ Թագավորության պաշտպանության նախարարության հետ գոտուների, ռազմավարության և պլանավորման խնդիրներում: Եղել է Էստոնիայի պաշտպանության նախարարության գնումների բաժանմունքի խորհրդատու:

### **Ուիլեմ Ֆ. վան Էքելեն (Willem F. van Eekelen)**

Դոկտոր Ուիլեմ Ֆ. վան Էքելենն իր գործունեությունն սկսել է որպես Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության աշխատակից: 1977 թ. ընտրվել է երկրի խորհրդարանի պատգամավոր և պետական ծառայության անցել որպես պաշտպանության հարցերով պետքարտուղար, Եվրոպայի հարցերով պետքարտուղար, ապա՝ պաշտպանության նախարար: 1989-1994 թթ. եղել է Արևմտաեվրոպական միության գլխավոր քարտուղար, իսկ հետագայում, 8 տարի շարունակ, Նիդերլանդների խորհրդարանի սենատոր: Նա Ստոկհոլմի Խաղաղության հիմնախնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի (SIRPI) և Եվրոպայի անվտանգության հետազոտությունների կենտրոնի (CESS) տնօրենների խորհրդի և DCAF-ի փորձագիտական կոմիտեի անդամ է, Նիդերլանդների Եվրախնտեգրման հարցերով փորձագիտական կոմիտեի աշխատակից:

### **Վալերի Ռատչև (Valeri Ratchev)**

Վալերի Ռատչևը դիվանագետ է և քոշակառու գնդապետ: Նա արդի ազգային և միջազգային անվտանգության խնդիրների, պաշտպանության ոլորտի փոխակերպման և ուժային կառույցի պլանավորման, քաղաքացիական-ռազմական հարաբերությունների և ճգնաժամային իրավիճակների կառավարման ճանաչված փորձագետ է: Այդ խնդիրներին առնչվող բազմաթիվ հողվածների հեղինակ է: Դասախոսել է Բուլղարիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում: Դեսպան Ռատչևը ներգրավված է եղել Ուկրաինայում, Մոլդովայում, Հայաստանում, Ինդոնեզիայում, Նեպալում և այլ երկրներում իրականացվող որոշ միջազգային ծրագրերում: Վերջին շրջանում նա զբաղվում է այնպիսի հարցերով, ինչպիսիք են պաշտպանական ոլորտի երկարաժամկետ գարգարման ծրագրերում ռազմաքաղաքական իրավիճակի տարրեր մոդել-

ների կիրառությունը, կարողությունների վրա հիմնված պլանավորման ներդրումը և Բուլղարիայի պաշտպանության նախարարության «միավորված» կառուցվածքի մշակումը:

### **Տոդր Տագարև (Todor Tagarev)**

Դոկտոր Տոդր Տագարևը Բուլղարիայի Գիտությունների ակադեմիայի ավագ գիտաշխատող է, Ազգային անվտանգության և պաշտպանական հետազոտությունների կենտրոնի ղեկավարը: Միաժամանակ հանդիսանում է DCAF-ի պաշտպանության ղորտի մենեջմենթի ուղղությամբ լիիրավ ավագ գիտաշխատող, ինչպես նաև Ռուսականայի պաշտպանության նախարարության և զիսավոր շտարի խորհրդատու: Նախկինում ծառայել է որպես Բուլղարիայի պաշտպանության նախարարության պաշտպանության ղորտի պլանավորման և սպառազինությունների ռազմավարության գծով ղեկավար: Դոկտոր Տագարևը ղեկավարել է նաև Սոֆիայի Գ. Ս. Ռակովսկու անվան Ռազմական ակադեմիայի պաշտպանության ղորտի և զինված ուժերի մենեջմենթի ֆակուլտետը: Այժմ ղոկտոր Տագարևը «Տեղեկատվություն և անվտանգություն» (<http://infosec.procon.bg>) միջազգային պարբերականի զիսավոր խմբագիրն է:

### **Ջեք Թրեդենիք (Jack Treddenick)**

Դոկտոր Ջեք Թրեդենիքը Գարմիշ-Պարբենիքի համանական (Գերմանիա) Զորգ Մարշալի անվան Անվտանգության հարցերի եվրոպական հետազոտական կենտրոնի տեղեկատվական աջակցության և հատուկ նախագծերի տնօրենն է և պաշտպանության էկոնոմիկայի պրոֆեսոր: Նախկինում քազմաքիվ տարիներ աշխատել և դասավանդել է Կանադայի Թագավորական ռազմական քոլեջի քաղաքական տնտեսության քաժանմունքում: Աշխատել է Արերդինի համալսարանում (Շոտլանդիա) որպես պաշտպանական հետազոտությունների գծով հրավիրյալ գիտաշխատող, և ՆԱՏՕ-ի Պաշտպանական քոլեջում (Հռում) որպես գիտական ղեկավար: Դոկտոր Թրեդենիքի ներկայիս ուսումնասիրությունները և հրապարակումները վերաբերում են միջազգային անվտանգությանը և պաշտպանության էկոնոմիկային, մասնավորապես պաշտպանության մենեջմենթի, պաշտպանական հատվածի փոխակերպման գործընթացների և կայունության վերահստատման օպերացիաների խնդիրներին:

Բոլոր իրավունքները պահպանված են: Ոչ սույն հրատարակությունը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերաբռնդել, պահել տեղեկատվության որոնման համակարգում կամ որևէ այլ միջոցով կամ ձևով (Ելեկտրոնային, մեխանիկական, պատճենման, ձայնագրման կամ այլ) փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժննի կենտրոնի նախնական բույլսվության:

Սույն հրատարակությունը շրջանառության մեջ է դրված պայմանով, որ այն չի կարող վաճառքի կամ այլ միջոցներով տրվել օգտագործման (ազատ կամ վարձույթով), իրացվել կամ որևէ այլ կերպ տարածվել առանց հրատարակչի նախնական համաձայնության, տպագրված բնօրինակից տարբեր որևէ այլ շապիկով կամ կազմով և առանց հաջորդ հրատարակչի վրա դրված նմանատիպ պահանջների՝ ներառյալ սույն պահանջները:

*Defence Management: An Introduction* (Geneva. Geneva Centre for the Democratic Control of Armed Forces, 2009) / Խմբագրությամբ՝ Հարի Բուկոր Մարկոոի,  
Ֆիլիպ Ֆլորիի և Տոմոր Տագարիի – 280 էջ, 25 գծապատկեր, 1 աղյուսակ:  
«Անվտանգության և պաշտպանության մենեջմենթ» մատենաշար, թիվ 1  
Բնօրինակը՝ անգլերեն, Ժնև, 2009

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժննի կենտրոն

<www.dcaf.ch>  
P.O.Box 1360, CH-1211 Geneva 1, Switzerland

Procon Ltd., Sofia

<www.procon.bg>

Էլ. հասցե՝ office@procon.bg

Շապիկի ձևավորումը՝ Խրիստո Բլիզնաշկի (Hristo Bliznashki)

Հայերեն թարգմանությունը պատրաստվել և տպագրվել է

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ

Թարգմանիչ՝ Անահիտ Բորիկյան

Հայերենի խմբագիր՝ Անահիտ Բրուտյան

Տպաքանակը՝ 400 օրինակ

Զնաշափոր՝ 16 x 23

**ISBN 978-92-9222-089-1**

**ISBN 978-954-90121-9-4**

**ISBN 978-92-9234-182-4**



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում: